# ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
# ՊՈԵԶԻԱ

32(56)
Ժ-21

# ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԻԱՆ

(ՏԵՂԵԿԱՏՈՒ)

1368 Հ52791

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1967

32И (083)
Ժ 21

22918

Современная Турция

(Справочник)

(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван, 1967

1—11—5



# ՆԱԽԱԲԱՆ

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Ասիայի ժողովուրդների ինստիտուտի Մերձավոր ու Միջին արևելքի երկրների բաժնի աշխատողների և այլ մասնագետների կողմից նախապատրաստված ներկա աշխատության նպատակն է սովետական ընթերցողին հիմնական տեղեկություններ տալ ժամանակակից Թուրքիայի բնական պայմանների, բնակչության, լեզվի, կրոնի, պետական կառուցվածքի, պատմության, տնտեսության, զինված ուժերի, քաղաքական կուսակցությունների, բանվորական շարժման, հասարակական կազմակերպությունների և կուլտուրական կյանքի բազմազան կողմերի մասին։ Քանի որ վիճակագրական նյութերի հրապարակումը Թուրքիայում չափազանց ուշանում է, տեղեկատուում բերված փաստական տվյալները, իբրև կանոն, արտացոլում են 1963 թվականը։

Հոդվածների հեղինակներն են՝ Ա. Ա. Բաբաևը («Գրականությունը», «Մամուլը և ռադիոն»), Ե. Ա. Բեչյանը («Կրոնը»), Պ. Մ. Բոչկարևը («Զինված ուժերը»), Վ. Ի. Դանիլովը («Հասարակական կազմակերպությունները»), Բ. Մ. Դանցիգը («Տնտեսությունը։ Ընդհանուր բնութագիրը»), Յու. Ա. Լին («Լուսավորությունը», «Երաժշտությունը», «Սպորտը»), Կ. Մ. Լյուբիմովը («Թուրքերեն լեզուն»), Ն. Գ. Կիրեևը («Առողջապահությունը», «Կինոն», «Սպորտը»), Ռ. Պ. Կոռնիենկոն («Քաղաքական կուսակցությունները», «Բանվոր դասակարգը և արհմիությունները»), Մ. Ա. Հասրաթյանը («Նորագույն պատմության ակնարկը», «Բնակչությունը»),

Պ. Պ. Մոիսեևը («Ագրարային հարցը և գյուղատնտեսությունը»), Ա. Մ. Շամսուտդինովը («Նորագույն պատմության ակնարկը»), Ա. Ա. Ջաֆարովը («Հասարակական կազմակերպությունները»), Յու. Ն. Ռոզալիեվը («Արդյունաբերությունը»), Վ. Պ. Սմիռնովը («Արտաքին առևտուրը»), Դ. Ի. Վդովիչենկոն («Ներքին առևտուրը»), Վ. Տ. Վեսելովը («Տրանսպորտ և կապը»), Ա. Ս. Տվերիտինովը («Դրամադարանները», «Արխիվները», «Թանգարանները», «Գիտական կազմակերպություններն ու ընկերությունները»), Ա. Զ. Տրոֆիմովը («Թատրոնը», «Երաժշտությունը», «Առողջապահությունը», «Կրոնը»), Վ. Վ. Ցիբուլսկին («Ֆիզիկա-աշխարհագրական ակնարկը», «Բնակչությունը», «Օրացույցները»), Ե. Ի. Ուրազովան («Ֆինանսները»), Լ. Ա. Օհանատակյան («Պետական կառուցվածքը»)։ «Նորագույն պատմության ակնարկը» բաժնում օգտագործված են Ռ. Պ. Կոնդակչյանի նյութերը։

Հավելվածները կազմված են Ն. Գ. Կիրեևի գլխավորությամբ։

Ընդհանուր քարտեզի կոնսուլտանտն է Մ. Ա. Հասրաթյանը, անտեսականինը՝ Պ. Պ. Մոիսեևը։

# ԵՐԿԻՐԸ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

## ՖԻԶԻԿԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Թուրքիան տեղավորված է հս. լ. 36 և 42 աստիճանների ու արևելյան երկ. 26 և 45 աստիճանների միջև։ Նրա մակերեսը 767119 քառ. կմ է։ Արևմուտքից արևելք երկիրը տարածված է 1600 կմ, հյուսիսից հարավ՝ 500 կմ։

Թուրքիայի մեծ մասը գտնվում է Ասիայում, և միայն նրա տարածության մոտ 3%-ն է գտնվում Եվրոպայում, կազմելով Եվրոպական Թուրքիա կամ Արևելյան Թրակիա։

Ասիական Թուրքիան բաղկացած է Փոքրասիական կամ Անատոլիական թերակղզուց, որն արևելքում վերջանում է Իսքենդերուն (Ալեքսանդրետտա) միջերկրածովյան նավահանգիստը Տրապիզոն սևծովյան նավահանգստի հետ միացնող պայմանական գծով, Հայկական-քրդական լեռնաշխարհից և Սիրիա-Միջագետքյան սարահարթից։

Թուրքիայի ցամաքային սահմանների երկարությունը 2631,5 կմ է։ Արևմուտքում նա սահմանակից է Բուլղարիային (200 կմ) և Հունաստանին (204 կմ), հյուսիս-արևելքում՝ ՍՍՀՄ-ին (590,5 կմ), արևելքում՝ Իրանին (470 կմ), հարավում՝ Իրաքին (378 կմ) և Սիրիային (789 կմ)։

Ծովային առափնյա գծի ընդհանուր երկարությունը 7126 կմ է։

Հյուսիսում Թուրքիայի ափերը ողողում են Սև ծովի, արևմուտքում՝ Էգեյան ծովի և հարավում՝ Միջերկրական ծովի ջրերը։ Էգեյան ծովի Փոքրասիական առափնյա գծի երկարությունը ափերի չափազանց կտրտվածության պատճառով երեք անգամ գերազանցում է ուղիղ գիծ կազմող ամենակարճ

երկարությունը և հավասար է 2250 կմ-ի։ Անատոլիական թերակղզու հարավային ափերը լեռնոտ են և չնչտակիորեն գահավիժում են դեպի ծովը։ Այստեղ միայն երեք մեծ ծովածոցեր կան. Անթալիայինը, Մերսինինը և Իսքենդերունինը։

Թուրքիայի եվրոպական և ասիական մասերն իրարից բաժանված են Բոսֆոր և Դարդանել նեղուցներով, ինչպես նաև Մարմարի ծովով, որոնք և կազմում են Սև ծովից դեպի Էգեյան անցնող ծովային ճանապարհը։

Բոսֆորի նեղուցի (Կարադենիզ բողազիի կամ Բողազիչիի) լայնությունը 700-ից մինչև 3 հազար մետր է, խորությունը 50-ից մինչև 120 մետր։ Բոսֆորի ափերը զառիթափ են և բարձր, որոնք թույլ են տալիս ոչ մեծ նավերին կառանվել նրա գրեթե ողջ երկարությամբ։ Բոսֆորի հարավային մասում եվրոպական մայր ցամաքի մեջ խորանում է Ոսկեղջյուր (Խալիչ) գեղատեսիլ ծովախորշը, որի ափերին փռված է աշխարհի ամենագեղեցիկ քաղաքներից մեկը՝ Ստամբուլը։ Ծովածոցի մի ափից մյուսն են ձգվում երկու կամուրջներ՝ հինը (Աթաթյուրքի կամուրջը) և նորը (Ղալաթիա կամուրջը). վերջինս կանգնած է երկաթյա պոնտոնների վրա. Ղալաթիա կամուրջի կենտրոնական մասը՝ 27,4 մետր երկարությամբ, բացվում է նավերի անցնելու համար։

Դարդանելի նեղուցը (Չանաքկալե բողազին) միացնում է Էգեյան և Մարմարի ծովերը։ Նրա երկարությունը մոտ 60 կմ է, լայնությունը՝ 1,2-ից մինչև 5 կմ, խորությունը՝ 40-ից մինչև 100 մետր։ Դարդանելը լավ ծովախորշեր չունի։ Սակայն ինչպես Բոսֆորը, այնպես էլ Դարդանելը նավերին թույլ են տալիս պատսպարվել Էգեյան, Մարմարի և Սև ծովերի փոթորիկներից։

Մարմարի ծովի (Մարմարա դենիզի) մակերեսը 11472 քառ. կմ է, առավելագույն խորությունը՝ 1560 մետր, ամենամեծ երկարությունը՝ 282 կմ, ամենամեծ լայնությունը՝ 79 կմ։ Մարմարի ծովի ամենամեծ ծոցը՝ Իզմիթի ծոցը, խորանում է ցամաքի մեջ 60 կմ, Մուդանիի (Գեմլիքի) ծոցը՝ 35 կմ։



Սևծովյան նեղուցները առևտրա-տնտեսական և ռազմա-ստրատեգիական կարևոր նշանակություն ունեն։ Նրանք հատկապես կարևոր են սևծովյան և միջերկրածովյան պետությունների համար, որոնք ոչ միայն նեղուցների միջոցով մշտական կապ են պահպանում Միջերկրական ծովի հետ, այլև կենսականորեն շահագրգռված են Սև ծովի երկրների անվտանգության պահպանմամբ։

Ռ ե լ ի ե ֆ ը։ Իր մակերևույթի կառուցվածքով Թուրքիայի տերիտորիան չափազանց բազմազան է։ Այն բավականին կտրտված, հակադրություններով հարուստ երկիր է։ Բարձրադիր համապարփակ լեռնային դանգվածը, որը բռնել է գրեթե ողջ Փոքր Ասիան, պսակված է հրաբխային գագաթներով և լեռնաշղթաների շարքերով, որոնք լայնական ու երկայնական ուղղություններով ձգվում են հարյուրավոր կիլոմետրեր։

Անկենդան լեռնաշղթաների ու գագաթների կողքին, որոնք հասնում են մշտնջենական ձյան սահմաններին, երկրում կան՝ մերթ իրենց գեղեցկությամբ ու բուսական ծածկի հարստությամբ աչք շլացնող, մերթ մռայլությամբ, լքվածությամբ ու անպտուղ լերկությամբ թախիծ առաջացնող բազմաթիվ գեղատեսիլ ցածրավայրեր, հովիտներ, սարահարթեր։ Անպտուղ անապատների նման զուգորդումը փարթամ բուսականություն ունեցող օազիսների հետ ստեղծում է լանդշաֆտի արտակարգ բազմազանություն։

Երկրի ռելիեֆի առանձնահատկություններից մեկն այն է, որ հյուսիսից և հարավից այն կարծես սեղմված է երկու հսկա լեռնաշղթաների միջև, որոնց արտաքին կողմերը մեծ մասամբ միանգամից գահավիժում են մինչև ծովային ափերը։ Թուրքիայի հյուսիսում ձգվում են Պոնտական լեռները, որոնք հզոր պատի նման վեր են խոյացել ասիական Թուրքիայի արևելյան մասի գրեթե ուղղաձիգ սևծովյան ափերի երկայնքով։

Եվրոպական Թուրքիայի սևծովյան ափերի երկայնքով տարածված է համեմատաբար ոչ մեծ Իսթրանջա լեռնաշղթան։

Պոնտական լեռները բաժանվում են երկու մասի՝ արևմտյանի և արևելյանի։ Նրանց բաժանման գոտին ընկած է Ղըզըլ-Իրմաղ և Եշիլ-Իրմաղ գետերի միջև ընկած շրջանում։ Արևմտյան մասն ավելի հին է. այն հիմնականում կազմված է նստվածքային ապարներից, այն դեպքում, երբ արևելյանը ծածկված է հրաբխային ապարների հաստ շերտով։

Պոնտական լեռների արևելյան մասի միջին բարձրությունը հավասար է 2500 մետրի, իսկ առանձին գագաթները, օրինակ, Կաչկար լեռը (3937 մ) հասնում է մշտնջենական ձյան սահմանին։ Կենտրոնական մասում, Ղըզըլ-Իրմաղ և Եշիլ-Իրմաղ գետերի միջև ընկած տարածությունում, զանգվածի բարձրությունն իջնում է մինչև 1000—1200 մետրի, իսկ ամենաբարձր լեռները հազիվ են հասնում 2000 մետրի։ Արևմուտքում, Բոլու-Թոսիայի շրջանում, լեռների միջին բարձրությունը կրկին փոքր-ինչ ավելանում է և մի շարք տեղերում հասնում մինչև 2500 մետրի։

Զանգվածի լայնությունը տարբեր է։ Այսպես, Քաստամոնուի շրջանում այն հասնում է 250 կմ-ի այն դեպքում, երբ Տրապիզոնի շրջանում հազիվ 100—120 կմ է։

Հյուսիսային Անատոլիայի էռոզիացվող խոր կիրճերի գահավիժող հյուսիսային լանջերով հոսող բազմաթիվ գետերը գրեթե ողջ սևծովյան առափնյա մասում ստեղծել են 5—10 կմ լայնության ողողակային (ալյուվիալ) ծագում ունեցող լողափային գոտիներ, իսկ Եշիլ-Իրմաղ, Ղըզըլ-Իրմաղ և Սաքարիա գետերի գետաբերանների մոտ՝ մինչև 75 կմ-անոց գոտիներ։

Թուրքիայի հարավում ընկած լեռնային սիստեմը բաղկացած է Կարիա-Լիկիական (Արևմտյան) Տավրոսից, Կիլիկիական (Կենտրոնական) Տավրոսից և Գլխավոր հայկական (Արևելյան) Տավրոսից։

Կարիա-Լիկիական Տավրոսն ընկած է Անատոլիական թերակղզու հարավ-արևմտյան անկյունում։ Դա Փոքր Ասիայի երկրաբանական ամենահին զանգվածներից մեկն է, որ կազմված է գնձաքարերից (գնեյսներից) և բյուրեղյա թերթաքարերից, ավազներից ու կրից։ Միջերկրածովյան առափնյա զանգվածի հարավային և արևմտյան լանջերը տեղ-տեղ շեշտակի գահավիժում են դեպի ծովը, տեղ-տեղ կտրտված են խոր և լայն հովիտներով, որոնցով հոսում են լեռնային գետերը։ Այդ գետերի գետաբերանները մեծ մասամբ վերջանում են ողողակային լողափերով։



Կիլիկիական Տավրոսը (հայտնի է նաև «Թորոսներ» անունով) կիսաօղակով պարփակում է Կենտրոնական Անատոլիայի հարավային մասը։ Այդ լեռնաշղթան սկսվում է Աքշեհիր, Բեյշեհիր ու Էգրիդիր լճերի և Սուլթանդաղ լեռնաշղթայի շրջանում, որի առանձին լեռնագագաթների բարձրությունն անցնում է 2500 մետրից։ Սկզբում Կիլիկիական Տավրոսն ունի հարավ-արևելյան ուղղություն, այնուհետև, մոտենալով Միջերկրական ծովի ափերին, շեշտակիորեն թեքվում է դեպի հյուսիս-արևելք և շարունակում է այդ ուղղությամբ կազմել ծայրային պատնեշ ընդհուպ մինչև անցումը Անտիտավրոս։ Որքան դեպի արևելք է հեռանում, լեռնային զանգվածն աստիճանաբար բարձրանում է, իսկ նրա առանձին գագաթներն անցնում են 4500 մետրից։ Կիլիկիական Տավրոսն իր ամբողջ երկարությամբ միայն մեկ տեղ է հատվում նեղ կիրճով (հայտնի է «Կիլիկիական դարպասներ» անունով), որը հնուց ի վեր ունի հսկայական տնտեսական և ստրատեգիական նշանակություն։ Կիլիկիական դարպասներով մարտերով անցել են Ալեքսանդր Մակեդոնացու զորքերը, խաչակիրների ջոկատները և այլք։ Այդ լերկ, նեղ կիրճի լանջերը ծածկված են բազմաթիվ բերդերով, միջնադարյան հուշարձաններով, որոնց մի մասը պահպանվել է մինչև մեր օրերը։ Ներկայումս այստեղից անցնում են Բաղդադի երկաթուղին և խճուղին, որոնք Ադանայի հարթավայրը միացնում են Կենտրոնական Անատոլիայի բարձրավանդակի հետ։

Արևելյան մասում Կիլիկիական Տավրոսը միանում է Անտիտավրոսին, որը ձգվում է դեպի հյուսիս-արևելք՝ դեպի Հայկական լեռնաշխարհի միջին մասը։ Ավելի հարավ, գրեթե Անտիտավրոսին զուգահեռ, ձգվում է Գլխավոր հայկական Տավրոսը, որն արևելքում կիսաօղակաձև կարծես եզե-

բում է Հայկական լեռնաշխարհի հարավային սահմանները։ Առավելագույն բարձրության Գլխավոր Հայկական Տավրոսը հասնում է իր արևելյան մասում, Վանա լճից հարավ։ Այստեղ կան մի քանի գագաթներ, օրինակ Ղարադաղը (3650 մ) և Առնոսդաղը (3550 մ), որոնք տարին բոլոր ծածկված են ձյունով։ Լեռների արևելյան մասում ձյունը տարվա մեծ մասը չի հալչում. այն սնուցում է բազմաթիվ գետերի, որոնք հովհարանման թափվում են այդ մարզի ամենախոշոր գետերը՝ Տիգրիսն ու Եփրատը։

Լեռնագրական (օրոգրաֆիական) տեսակետից չափազանց մեծ հետաքրքրություն է ներկայացնում Արևմտյան Անատոլիայի շրջանը։ Այստեղ մոտենում են Փոքր Ասիայի երկու հիմնական լեռնային աղեղները՝ Հարավայինը և Հյուսիսայինը։

Շրջանի արևմտյան մասը խիստ կտրտված է բազմաթիվ լեռնաշարքերով առավելապես ընդլայնական ուղղությամբ՝ ընդհանուր բարձրացմամբ արևմուտքից դեպի արևելք։ Լեռնաշարքերն այստեղ հերթագայվում են խոր, դեպի Էգեյան ծովը լայն բացված գետահովիտներով։

Հյուսիսում, Բիգա թերակղզու շրջանում, անդեզիտային, չափազանց հողմնահարված բլրապատ բարձունքների շարքերով սկսվում է Միզիական լեռնային զանգվածը։ Նրա գլխավոր գագաթն է Ուլուդաղը կամ փոքր Օլիմպոսը (2493 մ), որը կազմված է հիմնականում գրանիտներից և բյուրեղային շերտավոր թերթաքարերից։

Արևմտյան Անատոլիայի լեռներն Արևելքում ձուլվում են ողջ Փոքր Ասիան բռնող միաձույլ զանգվածի հետ։ Այդ հնագույն զանգվածը Կենտրոնական Անատոլիայում կազմում է հսկայական, միջին հաշվով 800 մետր բարձրության վրա գտնվող գոգավորություն, որը բոլոր կողմերից եզրվում է լեռնաշղթաներով։ Գոգավորության հատակն իրենից ներկայացնում է լայնարձակ սարահարթ, որն աստիճանաբար բարձրանում է հյուսիսից դեպի հարավ և արևմուտքից դեպի արևելք։ Այն ծածկված է երրորդական շրջանի տարիքի փխրուն, գերազանցապես նստվածքային ապարներով (կրա-



քար, կավ, գիպս, ավազ), որոնց տակ թաղված են ավելի հին ապարներ։ Սարահարթը շատ տեղերում կտրտված է լեռնային ծալքերով, որոնք հաջորդվում են բազմաթիվ ոչ խոր, բաց իջվածքներով։ Այս ամենը թեթևակի խախտում է սարահարթի հարթավայրային բնույթը։

Ամենաընդարձակ իջվածքը գտնվում է բարձրավանդակի հարավային մասում, անտիկ Լիկաոնիայում։ Այն իրենից ներկայացնում է աղուտային կիսաանապատ՝ մասամբ բնապատկերով։ Այդ շրջանը երկրում ամենաանկենդանն է։ Իջվածքի հյուսիսային շրջանում տարածվում է լայնածավալ, ոչ խոր, աղի Թուզ լիճը։

Սարահարթի հարավ-արևելյան, առավել բարձր մասում հառնում են մեկուսացված հրաբխային լեռներ։ Դրանք ասես հենց բնության կողմից են այստեղ դրված, պաշտպանելու համար Կիլիկիական դարպասի մուտքը, որ Կոնիայի կիսաանապատը կապում է մշտադալար Ադանա-Մերսինյան ցածրավայրի հետ։ Հրաբխային լեռների մեջ ամենաբարձրը Էրջիյասն է (3916 մետր)։

Միջին Ղըզըլ-Իրմաքի շրջանում, Անկարայի մոտ, ցածրավայրի հարավային լանջերի համեմատությամբ բնապատկերը փոքր-ինչ աշխուժանում է։ Անտառները, թփուտները, այգիների անկյունները, մշակված դաշտերը և կանաչ մարգագետինները հաջորդում են այստեղ լերկ ու կիզիչ արևի ճառագայթների տակ խանձված լեռնալանջերին։

Արևելյան Թուրքիան բաժանվում է երկու, իրարից խիստ տարբերվող շրջանների։ Նրանցից առաջինն իր մեջ է առնում Հայ-քրդական լեռնաշխարհը, որը տարածվում է Անատոլիական թերակղզուց դեպի արևելք, մինչև ՍՍՀՄ-ի և Իրանի սահմանները, երկրորդը՝ Սիրիա-Միջագետքյան տափարակն է։

Հայ-քրդական լեռնաշխարհի ռելիեֆում լայնորեն ներկայացված են հրաբխային գմբեթներն ու ձագարները։ Պոնտոսյան լեռների և Հայկական (Արևելյան) Տավրոսի միջև ձգվում են Հյուսիսային և Ներքին լեռնաշղթաները։ Նրանց

միջև բավականին մեծ բարձրության վրա կազմավորվել են շատ հովիտներ և բարձրավանդակներ, որոնք կարևոր դեր են խաղում շրջանի տնտեսական կյանքում։

Ներքին Տավրոսի արևելքում բարձրանում է Արարատի հսկայական հրաբխային զանգվածը, որը վեր է խոյանում երկու կոների նման, որոնք կոչվում են «Մեծ Արարատ» («Բյույուկ Աղրի») և «Փոքր Արարատ» («Քյուչյուկ Աղրի»)։ Մեծ Արարատի բարձրությունն է 5156 մետր, Փոքրինը՝ 3925 մետր։ Այդ կոների միջև ընկած է Սարդար-Բուլաղի թամբարդը՝ 2688 մետր բարձրությամբ։ Մեծ Արարատի գագաթը ծածկված է մշտնջենական ձյան հզոր գլխարկով։ Զանգվածի լանջերը զառիթափ են և գրեթե զուրկ բուսականությունից. լեռնային գետեր չկան. միայն հարավում, նրա ստորոտում, հոսում է մի փոքրիկ գետակ (Արաքսի վտակը), որ սկիզբ է առնում 2241 մետր բարձրության վրա գտնվող Բալըքգյոլ լճից։

Հայկական (Արևելյան) Տավրոսում է գտնվում հրաբխային Նեմրութ (2910 մ) գագաթը, որի լանջերը կազմում են լեռնաշղթայի հարավ-արևմտյան սահմանը։ Մի ժամանակ Նեմրութը մոտավորապես 4500 մետր բարձրություն ուներ։ Հրաբխային կրկնակի գործողության հետևանքով գագաթում առաջանում է հսկայական խառնարան՝ կլոր ձևի ավելի քան 8 կիլոմետր տրամագծով։ Նա երկու երրորդով լցված է հրաբխային ծագում ունեցող պինդ զանգվածով, իսկ նրա արևմտյան մասում ընկած է քաղցրաջուր լիճը՝ 6 կմ երկարությամբ և 2 կմ լայնությամբ։ Այդ տիպի լճերի մեջ դա աշխարհում մեծագույններից մեկն է։

Վան (Թուրքիա) և Ռեզայե (Իրան) լճերի միջև տարածվում է միջօրեականային ուղղության և հրաբխային ծագում ունեցող մի բարձրալեռ զանգված։ Նրա բարձրությունը գրեթե ամբողջ երկայնքով 2500 մետր է։

Հայկական (Արևելյան) Տավրոսից հարավ գտնվում է Սիրիա-Միջագետքյան տափաստանի հյուսիս-արևմտյան մասը։ Թուրքիայի այդ մասի մակերևույթը իրենից ներկայացնում է մի հարթավայր, որն աստիճանաբար ցածրանում է



հյուսիսից դեպի հարավ (800 մետրից մինչև 400 մետր)։ Այդ շրջանի արևելյան, առավել լեռնային մասը խիստ կտրտված է բազմաթիվ լեռնային գետերով, որոնք հովհարանման թափվում են Տիգրիս գետը։

*Օգտակար հանածոները*։ Թուրքիայի ընդերքը հարուստ է օգտակար հանածոներով։ Իրենց պաշարներով ու նշանակությամբ հատկապես աչքի են ընկնում քրոմի, պղնձի և մանգանի հանքաքարերը, նավթը, ածուխը, մարմարը, հղկաքարը։ Լեգիրացվող և սև մետաղների հանքաքարերից Թուրքիայի համար ամենակարևոր նշանակություն ունեն քրոմիտը, երկաթի և մանգանի հանքաքարերը, գունավորներից՝ պղնձինն ու արճիճ-ցինկինը։

**Քրոմիտ:** Քրոմիտի հանքաքարի պաշարներով (մոտ 60 միլիոն տոննա) Թուրքիան կապիտալիստական աշխարհում երկրորդ տեղն է գրավում։ Քրոմիտի հանքաքարի ամենանշանակալի հանքավայրերն ու հանույթը կենտրոնացված են երկրի արևելքում, Գուլեման բնակավայրի մոտ։ Այստեղ հանքանյութը գտնվում է մակերևույթին մոտ, 4—5 մետր խորության վրա։ Քրոմիտի հանքաքարի և հանույթի խոշոր շրջան կա նաև Կարիա-Լիկիական Տավրոսի արևմտյան մասում (Ֆեթհիյե, Դալամանդարա, Ալդյումկյու և այլն)։ Քրոմիտի հանքավայրեր են հանդիպում նաև այլ շրջաններում։

**Երկաթ:** Երկաթահանքի պաշարները մեծ չեն։ Ամենահայտնի հանքավայրը գտնվում է Դիվրիգիում (Սվազի վիլայեթ)։

**Մանգան:** Այս մետաղի հանքավայրեր հայտնաբերվել են ավելի քան 60 վայրերում, հիմնականում Արևմտյան և Հարավային Անատոլիայում, ինչպես նաև Սև ծովի առափնյա շրջաններում։

**Վոլֆրամ:** Ուլուդաղ լեռան վրա հայտնաբերված են վոլֆրամի աշխարհի ամենահարուստ հանքավայրերը (մոտավորապես 5 միլիոն տոննա հանքաքար, 8 տոկոս վոլֆրամի օքսիդի պարունակությամբ)։

**Պղինձ:** Երկրում հաշվվում է պղնձի մինչև 100 հանքավայր։ Դրանցից խոշորագույնները գտնվում են Էրգանիում

(Էլյազըղից հարավ) Քուվարսխանայում ու Մուրղուլայում (Արդվինի վիլայեթ)։ Պղնձի պարունակությունը հանքաքարում կազմում է 2—8 տոկոս. պղնձի հանքաքարի ընդհանուր պաշարները, մոտավոր հաշվումներով, կազմում են 40 միլիոն տոննա։

**Արճիճ ու ցինկ:** Թուրքիայում ամենից շատ տարածված է սֆալերիտը (ցինկի խառը հանքաքարը), որը ցինկից բացի պարունակում է նաև բավականին արծաթ և այլ մետաղների խառնուրդներ։ Սֆալերիտի հանքավայրերը 200-ից ավելի են, որոնք կենտրոնացած են չորս գոտիներում. Բալըքեսիր, Ղըզըլ-Իրմաքի հովիտ, Սև ծովի արևելյան ծովափ և Թորոսներ։

Հիշատակության են արժանի նաև **կոբալտի** հանքավայրերը՝ Մուղլա վիլայեթում, **մոլիբդենինը**՝ Բուրսայի, Դիրմանդարի և Չեսկինի մոտ, **ուրանինը**՝ Էդրեմիտի շրջանում։

**Քարածուխ** կա Հյուսիս-արևմտյան Անատոլիայում, Սև ծովի ափերին։ Նրա պաշարները հաշվվում են 1,5—2 միլիարդ տոննա (կապիտալիստական երկրների ընդհանուր պաշարների 0,05 տոկոսից էլ պակաս)։ Քարածխի հանքաշերտերը տարածվում են մոտ 200 կմ-ի վրա՝ Էրեգլիից մինչև Արիֆիեբու։ Քարածխի ավազանի լայնությունը որոշ տեղերում հասնում է 10 կմ-ի (Էրեգլի, Զոնգուլդակ), իսկ այլ տեղերում՝ ընդամենը 3—5 կմ-ի (Ամասրա)։ Կան բարձր կալորիական ածուխներ, մինչև 8 հազար կալորիա ջերմատվության կարողությամբ և ածուխներ, որոնց կալորիականությունը հազիվ է հասնում 4 հազարի։ Ածխի զգալի մասը կոքսացվում է։

**Գորշ ածուխ:** Գորշ ածխի (լիգնիտի) հանքավայրեր հանդիպում են Թուրքիայի շատ շրջաններում։ Առավել հզոր հանքավայրերը գտնվում են Արևմտյան Անատոլիայում։ Լիգնիտների ընդհանուր պաշարը մոտավորապես 1,5 միլիարդ տոննա է։

**Նավթ:** Հայտնաբերված է երկրի տարբեր շրջաններում՝ Վանա լճի մոտակայքում, Իսքենդերունի, Ղազիանթեպի,



Մարդինի և Ռամանի շրջանում։ Առավել հայտնի են Ռամանդաղ լեռների շրջանի հանքավայրերը։

**Բորացիտ:** Հայտնաբերված է Բալըքեսիր վիլայեթում, Բանդըրմիից 62 կմ դեպի հարավ, Սուլթանչայիր գյուղում. այստեղ մոտ 100 մետր խորության վրա գտնվում են բորացիտային հանքաշերտերը՝ 30—35 մետր հզորությամբ։ Բորացիտը կիրառվում է բորաթթվի, արծնի, լուցկու արտադրության մեջ։

**Ծծումբ:** Ծծմբի հանքավայրերը հիմնականում կենտրոնացած են Իսպարտա վիլայեթում և Այդըն վիլայեթի արևելյան մասում, Բուլդան գյուղի շրջանում. բացի այդ, ծծումբ հանդիպում է նաև Կայսերի և Աղրի վիլայեթներում։ Քեչիբորլուի (Իսպարտայի վիլայեթ) ծծմբաքարը 40—45 տոկոս ծծումբ է պարունակում։ Ծծմբի ընդհանուր պաշարը Քեչիբորլուում 7 միլիոն տոննա է։

**Մարմար:** Մարմարի հանքավայրերը հիմնականում գտնվում են Արևմտյան Թուրքիայում։ Սպիտակ մարմարի մեծ պաշարներ կան Մարմարա ծովի կղզիներում, հատկապես Մարմարա կղզում։ Գունավոր մարմարի հանքավայրեր հանդիպում են Աֆիոն-Կարահիսարից հարավ-արևմուտք, Սանդըքլըից 8 կմ-ի վրա։

**Աղ:** Թուրքիան լճային աղի և քարաղի զգալի պաշարներ ունի։ Աղի հարուստ պաշարներ կան Թուզ լճում։ Աղ կա նաև Սվազի վիլայեթի բազմաթիվ մանր լճերում։ Քարաղի հանքավայրերը գլխավորապես տեղավորված են Չանքըրըի վիլայեթում, ինչպես նաև Ղըզըլ-Իրմաք գետի վերին հոսանքի շրջանում։

Կ լ ի մ ա ն մերձարևադարձային է։ Սակայն Փոքր Ասիայի լեռնային, չափազանց կտրտված ռելիեֆը պայմանավորում է կլիմայական շրջանների մեծ բազմազանություն և հակադրություն, որն հատկապես արտահայտվում է ջերմաստիճանային պայմաններով, տեղումների բաշխմամբ և այլն։

Թուրքիան որոշակիորեն բաժանված է կլիմայական հինգ շրջանների։

**Միջերկրածովային մարզի** կլիման բնութագրվում է պարզ,

չոր ամառով՝ անձրևային, մեղմ ձմեռով։ Այն ընդգրկում է Էգեյան և Միջերկրական ծովերի առափնյա, համեմատաբար նեղ շերտը և միայն երկրի հարավ-արևելքում տարածվում է խորքերը՝ մինչև 300—400 կմ, ընդգրկելով Խաթայ, Ղազիայնթափ, Ուրֆա վիլայեթները։

Էգեյան ծովի առափնյա շրջանի ռելիեֆը, որտեղ լեռնաշղթաները հերթագայվում են խոր, դեպի ծովը բացվող գետահովիտներով, նույնպես հնարավորություն է ստեղծում այդ տիպի կլիմայի տարածմանը՝ միջլեռնային գոգավորություններով դեպի երկրի խորքը մինչև 150—200 կիլոմետր։

Ձմռանը այստեղ թափվում է տարեկան տեղումների մեծ մասը (որոշ տեղերում, օրինակ, Անթալիայում, մինչև 75%-ը)։ Ձմեռային ամիսների միջին ջերմաստիճանը, իբրև կանոն, զրոյից ցած չի իջնում։ Աշնանը և գարնանը այս մարզում շատ տաք է։

**Սևծովյան մարզն** աչքի է ընկնում չափավոր տաք կլիմայով՝ մեծ խոնավությամբ, համեմատաբար հավասարաչափ թափվող տեղումներով, չոգ ամառով և ցուրտ ձմեռով։ Ցածրադիր վայրերում ձյունը կայուն ծածկույթ չի կազմում, հատկապես մարզի արևելյան մասում։ Լեռնագագաթներին ձյան ծածկույթը պահպանվում է տարվա մեծ մասը։ Մարզի արևելքում, Ռիզեի վիլայեթում, թափվում են ամենաշատ տեղումները (առանձին տարիների մոտ 3 հազար մմ)։

**Կենտրոնական Անատոլիայում** տիրապետում է չոր, կոնտինենտալ կլիման, որը բացատրվում է նրանով, որ այդ բարձրադիր մարզը շրջապատված է բարձր լեռներով։ Կենտրոնական Անատոլիայում, չնայած ծովի մոտիկությանը, գրեթե չի զգացվում նրա ազդեցությունը։ Այստեղ համեմատաբար երկարատև և ցուրտ ձմեռ է լինում, կարճատև ու անձրևային գարուն, երկարատև չոր ու տոթ ամառ և կարճատև չոր, տաք աշուն։ Տեղումների քանակը սարահարթի կենտրոնին մոտենալու համեմատ աստիճանաբար նվազում է 650-ից մինչև 350 մմ։ Ամենից շատ տեղումներ թափվում են ձմռանը և հորդառատ անձրևների ձևով՝ գարնանը։ Սարահարթի կենտրոնական մասից դեպի արևելք կլիման




ԹՈՒՐՔԻԱ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏԵԶ
80 0 80 160 կմ
Ս Ե Վ Ծ Ո Վ
Մ Ի Ջ Ե Ր Կ Ր Ա Կ Ա Ն Ծ Ո Վ
ԱՆԿԱՐԱ
Կոնիա
Դիարբեքիր
Էրզրում
Տրապիզոն
Սամսուն
Մերսին
Ադանա
Մալաթիա
Ուրֆա
Մոսուլ
ԵՐԵՎԱՆ
Կիպրոս կղ.
Նիկոսիա
Պետական սահմանները
Պետությունների մայրաքաղաքները
ՍՍՀՄ միութենական հանրապետությունների մայրաքաղաքները
Քաղաքները ըստ բնակչության
ԱՆԿԱՐԱ 600 հազ. բնակչից ավելի
Կայսերի 100 հազ-ից մինչև 600 հազ. բնակիչ
Մերսին 50 հազ-ից մինչև 100 հազ. բնակիչ
Անթալիա 50 հազ-ից պակաս բնակիչ
Երկաթուղիներ
Օդանավակայաններ
Նավահանգիստներ
3937 Բարձրությունների նշումը մետրերով
Աղուտներ
Ճահիճներ






ցանում է ավելի կոնտինենտալ, իսկ դեպի արևմուտք՝ ավելի ու ավելի ուժեղ է զգացվում ծովի ազդեցությունը։

Ձյան ծածկույթը սարահարթում աննշան է, չնայած առանձին տեղամասերում այն պահպանվում է երկու-երեք ամսվա ընթացքում։ Լեռների գագաթներին ձյունը պահպանվում է մինչև ամառվա կեսերը։

Կոնիայի կիսաանապատը, որը տեղավորված է Անատոլիական սարահարթի կենտրոնում, Թուզ լճի շրջանում, Թուրքիայի ամենաչորային շրջանն է։ Այստեղ միջին հաշվով թափվում են 350 մմ տեղումներ, իսկ առանձին տեղերում՝ 200 մմ։

Հայկական լեռնաշխարհում աչքի են ընկնում մի խումբ կլիմայական ինքնուրույն շրջաններ, որոնք իրենցից ներկայացնում են իբրև բորեալ և ցուրտ կլիմաների տարատեսակություններ։ Այսպես, Կարս-Էրզրումի սարահարթի վրա բորեալ կլիմա է. տարվա ամենացուրտ ամսվա միջին ջերմաստիճանը —3° է, իսկ ամենատաք ամսվանը՝ +10°։ Այդ հատկանիշներով է բնորոշվում նաև Սվազի կլիման։

Ծովի ազդեցությունը, չնայած նրա մոտիկությանը, գրեթե չի զգացվում բարձր լեռների արգելիչ գործողության պատճառով։ Ձմեռն այստեղ ցուրտ է, ձյունածածկույթը սովորաբար մնում է հինգ-վեց ամիս։ Առավելագույն ջերմաստիճանների բացարձակ ամպլիտուդը ավելի քան 70° է (—35-ից մինչև +35°)։ Գարունը կարճ է, սովորաբար գիշերային շախտաներով, որոնք տևում են մինչև մայիս։ Տեղումների մեծ մասը բաժին է ընկնում գարնանը։ Ամառը տաք է, պարզ, չոր ու կարճ (երկու, երկուսուկես ամիս)։ Էրզրումում, օրինակ, ապրիլից մինչև հունիս հաշվվում է մինչև 20 թուխպ օր, բայց հուլիսից մինչև հոկտեմբեր թուխպ օրեր բոլորովին չեն լինում։ Սեպտեմբերին արդեն սկսվում են գիշերային շախտաները։

Արևելյան Թրակիան ամբողջությամբ ունի տաք կլիմա։ Թերակղզու կենտրոնական մասը շրջապատված է [illegible], որի հետևանքով այդ տեղերում ծովի ազդե[illegible]



ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека

նշան է։ Այստեղ գերիշխող հյուսիս-արևելյան քամիները բարձրացնում են կլիմայի կոնտինենտալությունը։

Սամսունի շրջանն աչքի է ընկնում նրանով, որ ամառը չոր է, ձմեռն ու աշունը՝ համեմատաբար խոնավ։ Այսպես, տեղումների միջին քանակությունը հունիսին ընդամենը 300 մմ է։ Ամառը Սամսունում տևում է մայիսից մինչև օգոստոս. սեպտեմբերից սկսվում են անձրևները։ Տարվա ընթացքում Սամսունում շուրջ 100 անձրևային օր է լինում։ Այստեղ տեղացող ձյան քանակը տարբեր է։ Ամենից ավելի ձյունախառն օրեր լինում են հունվարին և փետրվարին։ Միջին հաշվով տարեկան տասը ձյունախառն օր է լինում։ Սովորաբար ձյունը գետինը չծածկած՝ հալչում է, բայց առանձին տարիների ձյան ծածկույթը պահպանվում է մոտ մեկ ամիս։ Երբեմն ձմեռներն այնքան ցուրտ են լինում, որ սառչում է Բոսֆորը (օրինակ, 1860 և 1892 թվականներին)։ Ձյան շերտի հաստությունը 1860 թվականին երկու մետրից ավելի էր։

Գետերը։ Թուրքիայի գրեթե բոլոր գետերը լեռնային բնույթ ունեն. նրանց վրա շատ ջրվեժներ ու սահանքներ կան։ Խիստ արագահոսության պատճառով դրանք գրեթե չեն սառչում նույնիսկ բարձր լեռնային շրջաններում։ Գետերն հիմնականում սակավաջուր են. դրանց երկարությունը մեծ չէ, դրանցից ամենախոշորները ավելի նեղ և ծանծաղ են, քան իրենց երկարությամբ դրանց հավասար Եվրոպայի գետերը։ Թուրքիայի գետերը մեծ քանակությամբ նստվածքներ են բերում, որոնք ջրափակոցներ են առաջացնում գլխավորապես գետաբերանների շրջանում։ Ջրի մակարդակը չափազանց փոփոխական է։

Ջրային ռեժիմի տեսակետից գետերը բաժանվում են մի քանի տեսակների։

Թուրքիայի արևմտյան և կենտրոնական մասում ամենից հաճախ հանդիպում են միջերկրածովյան տիպի գետեր։ Նրանք սկիզբ են առնում միջին բարձրության լեռներից։ Առավելագույն մակարդակը (հեղեղումը) դիտվում է աշնանը և ձմռանը. տարվա այդ ժամանակներին գետանցները վտան-



գավոր են, ավերիչ հեղեղումներով հաճախ հսկայական վնաս են հասցնում գյուղատնտեսությանը. ամռանը դրանք չափազանց ծանծաղում են։

Թուրքիայի գրեթե բոլոր խոշոր գետերը սկիզբ են առնում երկրի արևելքում, բարձր լեռնային շրջաններում (Եփրատ, Տիգրիս, Քուռ, Արաքս, Ղըզըլ-Իրմաք և այլն)։ Սրանք դասվում են լեռնային-կոնտինենտալ տիպին, չնայած նրանց որոշ վտակներ ալպիական բնույթ ունեն։ Այդ շրջանի գետերի մեծ մասը առավելապես խառը սնուցում ունի (ձնահալոցային, անձրևային, սառցադաշտային)։ Նրանց հուները վերին հոսանքներում ունեն ջրվեժներ, սահանքներ և խոր կանյոններ (խնձահովիտներ)։ Արևելյան Թուրքիայի սահմաններից դուրս, նախակովկասի հարթավայրերում (Քուռ, Արաքս), Սիրիա-Միջագետքի տափաստաններում (Եփրատ, Տիգրիս), Կենտրոնական Անատոլիայի սարահարթում (Ղըզըլ-Իրմաք) գետերի հոսանքն ավելի հանդարտ է դառնում։

Արևելյան Թուրքիայի մի շարք ոչ մեծ գետերը (Բոխտան, Մեծ Զաբ և այլն) ջրային ռեժիմի տեսակետից ալպիական տիպի են։ Նրանք սնվում են գլխավորապես Հարավ-արևելյան Թուրքիայի բարձր լեռնային մարզի սառցադաշտերով և ձյունով։ Ի տարբերություն Թուրքիայի մյուս գետերի, այս գետերին հատուկ են ամառային հեղեղումները և ձմեռային նվազումները։

Թուրքիայի բոլոր գետերը կարելի է բաժանել երկու խմբի. ծովերը թափվող և ներքին ջրամբարները (լճերը) թափվող կամ ճահիճներում, ավազուտներում ու ստորերկրյա խզեցվածքներում կորչող գետեր։

Սև ծովի ավազանը գետերի թվով ամենահարուստն է։ Նրան են թափվում ավելի քան 500 գետեր, որոնց շարքում կան համեմատաբար խոշորները. Ղըզըլ-Իրմաքը (1151 կմ), Սաքարիան (790 կմ), Իշիլ-Իրմաքը (416 կմ), Ճորոխը (368 կմ)։ Թուրքիայի Սևծովյան շրջանի արևելյան մասի գետերի ռեժիմը, համեմատած Արևմտյան և Կենտրոնական Թուրքիայի գետերի ռեժիմի հետ, տարբերվում է սեզոնային փոքր տատանումներով։

Մարմարի ծովի ավազանին են պատկանում մի քանի գետեր, որոնք սկիզբ են առնում Ասիական Թուրքիայում։ Երկրի եվրոպական մասում Մարմարի ծովն են թափվում միայն երկու ոչ մեծ գետեր՝ մոտավորապես 50-ական կմ երկարությամբ։ Այդ ավազանի ամենամեծ գետը Սուսուրլուկն է (260 կմ)։ Ամառն այն սակավաջուր է և հեշտությամբ կարելի է անցնել ծանծաղուտներով, այն դեպքում, երբ դեկտեմբերին անցնում են պարոմներով։

Էգեյան ծովի ավազանի գետերի առանձնահատկությունն այն է, որ դրանք, գոյանալով համեմատաբար ոչ բարձր լեռների վրա, շատ են հասնում հարթավայրերը և այստեղ, ձնհալքի և հորդ անձրևների ժամանակ, լայն հոսքով, ոչ մեծ արագությամբ հոսում են դեպի ծով։ Այդ ժամանակ գետերը հաճախ դուրս են գալիս ափերից, ողողելով առափնյա հարթավայրերը։ Հեղեղումների լայնությունն առանձին տեղերում հասնում է 3—4 կմ-ի։ Այդ ավազանի ամենամեծ գետը Մարիցան է (400 կմ), որի ստորին հոսանքը գտնվում է Եվրոպական Թուրքիայում։

Թուրքիայի ասիական մասում Էգեյան ծովն են թափվում Մենդերես (140 կմ), Բաքիրչայ (120 կմ) և այլ գետեր։

Միջերկրածովյան ավազանին են պատկանում Անատոլիական Թերակղզու ավելի քան 100 լեռնային գետեր։ Դրանցից շատերը ամառը բոլորովին ցամաքում են։ Նրանց երկարությունը հազիվ է անցնում 10—15 կմ-ից և միայն մի քանիսն ունեն 100-ից մինչև 500 կմ և ավելի երկարություն։

Այդ ավազանի առավել խոշոր գետերն են՝ Սեյխանը (516 կմ), Ջեյխանը (474 կմ), Տարսուսը (150 կմ)։ Վարարման շրջանում նրանք դուրս են գալիս ափերից, տասնյակ կիլոմետրերի վրա հեղեղելով Ադանայի ցածրությունը։ Նույն բնույթի են նաև Գյոքսու (250 կմ) և Աքսու (150 կմ) գետերը։ Սրանցից առաջինը դելտա է կազմել Ինջեքում հրվանդանի մոտ, երկրորդը՝ Անթալյան ցածրությունում։

Հայկական լեռնաշխարհում են սկիզբ առնում Եփրատն ու Տիգրիսը, որոնք թափվում են Պարսից ծոցը և Կասպից



ծովը թափվող Քուռ և Արաքս լեռնա-կոնտինենտալ գետերը։

Եփրատի (2800 կմ) երկարության մեկ երրորդը հոսում է Թուրքիայի տերիտորիայում։ Գետն սկիզբ է առնում Աղբաբա լեռներից ավելի քան 3000 մետր բարձրության վրա և այստեղ կոչվում է Կարասու։ Էրզրում քաղաքից հյուսիս-արևմուտք, 800 մետր բարձրության վրա, այն միանում է իր ամենամեծ վտակին՝ Մուրատին (614 կմ), որն սկիզբ է առնում Վանա լճից հյուսիս-արևելք։ Այնուհետև Եփրատը հատում է Հայկական (Արևելյան) Տավրոսը, այստեղ կազմելով հսկայական ջրվեժներ, և անցնում է Սիրիա-Միջագետքյան հարթավայրը, ուր լեռնային բնույթը փոխում է կոնտինենտալի։ Իր ամբողջ մնացյալ ուղին այն անցնում է Թուրքիայի սահմաններից դուրս։

Տիգրիսը (1900 կմ) սկիզբ է առնում Էլյազըղ քաղաքից հարավ, Գյոլջուկ լճից, ծովի մակերևույթից 1155 մետր բարձրության վրա։ Իջնելով Դիարբեքիր քաղաքի մոտ, այն 650 մետր բարձրության վրա թեքվում է դեպի արևելք և, հասնելով մինչև Բոխտան գետի (226 կմ) հետ խառնվելու վայրին, Վանա լճից հարավ, թեքվում է դեպի հարավ և Իրաքի տերիտորիայով հոսում դեպի Պարսից ծոց։ Տիգրիսի երկարությունը Թուրքիայում 452 կմ է։

Քուռը (1279 կմ) սկիզբ է առնում Ալլահյուեքբեր լեռներից, որոնք ծովի մակերևույթից 3111 մետր բարձրություն ունեն։ Թուրքիայի տերիտորիայով Քուռը հոսում է գլխավորապես նեղ ու խոր կիրճերով մոտ 150 կմ երկարությամբ։ Մնացած ամբողջ տարածությունն այն անցնում է ՍՍՀՄ տերիտորիայով։

Արաքսը (914 կմ) սկիզբ է առնում Բինգյոլի լեռներից (3250 մ)։ Ընդունելով մի շարք վտակներ, Արաքսն ուղղվում է դեպի արևելք և անցնելով 340 կմ, հասնում է սովետա-թուրքական սահմանին, որտեղ միանում է Ախուրյան (Արևմտյան Արփաչայ, 136 կմ) վտակին։

Լճերը։ Լճերն զբաղեցնում են Թուրքիայի տերիտորիայի մոտ 8,5 հազար քառ. կմ տարածությունը, որը կազ-

մում է երկրի ամբողջ մակերևույթի 1,1 տոկոսը։ Թուրքիայի հարուստ երկրաբանական պատմությունը և կլիմայական առանձնահատկությունները պայմանավորել են ծագումով և ռեժիմով տարբեր լճերի առկայությունը՝ խառնարանային և կարստային, լեռնային և լագունային, տեկտոնիկ և պատվարա-հրաբխային, քաղցր ու աղի, սառչող և չսառչող, հոսող և փակ։

Երկրի արևելքում աչքի է ընկնում պատվարա-հրաբխային լճերի մի խումբ, որի մեջ ամենամեծը Վանն է։ Այստեղ էլ հենց գտնվում են խառնարանային տիպի մի քանի լճեր, որոնցից ամենահայտնին Նեմրութն է։ Տեկտոնիկ (շպրտված) տիպի լճերի խումբը կենտրոնացած է լեռնային խիստ կտրտված Կարիա-Լիկիական և Կիլիկիական Տավրոսների գոտում։ Նրանցից ամենախոշորները Բեյշեհիրն ու Էգրիդիրն են։

Անատոլիական սարահարթի կենտրոնական մասում է գտնվում աղի լճերի մի խումբ։ Նրանցից ամենախոշորը Թուզն է։ Թուրքիայի հյուսիս-արևմտյան մասում մի քանի լագունային լճեր կան (Ապոլլոնիա, Մանյաս և ուրիշներ)։

Հ ո ղ ե ր ը։ Թուրքիայի երկրաբանական հարուստ անցյալը, մակերևույթի խիստ կտրտվածությունը և կլիմայի մեծ կոնտրաստը կարևոր պայման հանդիսացան քիմիական ու ֆիզիկական կազմով բազմազան հողերի կազմավորման գործում։

Թուրքիայում գերազանցապես լեռնային հողեր են (նրա մակերևույթի 80 տոկոսն են կազմում). դրանք ձևավորվում են հիմնականում պինդ ապարներից, պարունակում են շատ խիճ և ունեն չզարգացած պրոֆիլ։ Հողագործության համար պիտանի է միայն դրանց մի մասը. այնտեղ գլխավորապես աճում է մարգագետնային բուսականություն. նրանց փոքր մասը ծածկված է անտառներով։

Թուրքիայի լեռնային հողերն ըստ ուղղաձիգ գոտու բուսականության և հողակազմական ապարների կազմի բաժանվում են մի քանի տեսակների։

**Լեռնա-մարգագետնային հողերը** լայնորեն տարածված



են բարձր լեռնային մարզերում։ Լեռնա-մարգագետնային հողերի ստորին սահմաններն անցնում են Թուրքիայի ծովամերձ մարզերում ծովի մակերևույթից 600—1800 մետր բարձրության վրա, իսկ կենտրոնական շրջաններում՝ 2000—2100 մետր բարձրության վրա։ Ամռանը լեռնա-մարգագետնային հողերի խոտածածկը հիանալի արոտավայր է։

**Լեռնա-անտառային հողերը** տարածված են Սև ծովի առափնյա լանջերին, Արևմտյան Անատոլիայի, Միջերկրական ծովի առափնյա լանջերին և Գլխավոր հայկական Տավրոսի լանջերին։

**Լեռնա-տափաստանային հողերը** ցայտուն արտահայտված են Հայկական լեռնաշխարհի, Գլխավոր հայկական Տավրոսի և այլ լեռնային շրջանների լեռնա-տափաստանային գոտու ստորին մասում։ Դրանք հիմնականում լեռնային-շագանակագույն հողեր են։

Հարթավայրերի և նախալեռնային շրջանների հողերը բազմազան տեսակներ ու մեծ զանգվածներով սփռված են գետահովիտներում, ծովափնյա շրջաններում, սարահարթերի հարթ տեղամասերում, լեռնալանջերի փեշերին։ Այդ տեղերում սովորաբար կենտրոնացված են հողագործական կուլտուրաները։ Հարթավայրային հողերի ընդհանուր տարածությունը կազմում է Թուրքիայի ամբողջ մակերևույթի մոտ 20 տոկոսը, բայց նրանց տնտեսական նշանակությունը հսկայական է։ Հատկապես մեծ նշանակություն ունեն Գեդիզ, Բյույուկ Մենդերես, Քյուչյուկ Մենդերես, Ղզըլ-Իրմաք, Եշիլ-Իրմաք, Սաքարիա, Սուրլուկ, Տիգրիս, Եփրատ, Արաքս, Ճորոխ և այլ գետերի հովիտների ողողակային հողերը։

Հարթավայրերի և նախալեռների հողերի մեջ աչքի են ընկնում կարմրահողերը, գորշ հողերը, սևահողերը, շագանակագույն հողերը, մոխրագույն հողերը և աղուտները։

Մերձարևադարձային խոնավ անտառների **կարմրահողերը** գլխավորապես տարածված են Սև ծովի ափերին։

**Գորշ հողերը** գերազանցապես տարածված են Արևմտյան Անատոլիայի տափաստանային և նախալեռնային շրջաննե-

րում, Սև ծովի ափերի երկարությամբ և մասամբ էլ Միջերկրական ծովի ափերին։

Կարմրահողերի և գորշ հողերի վրա աճեցնում են հատիկավոր, լոբազգի կուլտուրաներ, որոշ տեղերում կարտոֆիլ և շաքարի ճակնդեղ, մշակում են խաղող, տնկում պտղատու այգիներ։

**Սևահողերը** Թուրքիայում շատ քիչ են։ Դրանք հանդիպում են Եվրոպական Թուրքիայում և առանձին ոչ մեծ կղզիներով՝ Անատոլիայի հյուսիս-արևելյան մասում, ինչպես նաև Հյուսիս-արևմտյան Անատոլիայի միջլեռնային հովիտներում, Սարըքըշ և Սուսուրլուկ գետերի շրջանում։

**Շագանակագույն հողերը** տարածված են Թուրքիայի հարթավայրային մասում, սարահարթերում և Կենտրոնական ու Արևելյան Անատոլիայի միջլեռնային գոգավորություններում։ Մալաթիայի, Երզնկայի և Ղարսի վիլայեթներում մանր հատիկավոր շագանակագույն հողերի վրա տեղ-տեղ զարգացած է ինտենսիվ ջրովի երկրագործություն, աճում են բրինձ և բամբակ։ Շագանակագույն հողերն օգտագործվում են միայն իբրև արոտավայրեր։

**Մոխրագույն հողերը** առավելապես տարածված են Կենտրոնական Անատոլիայի հարավային, հարթավայրային մասում, Թուզ լճից արևմուտք ու հարավ, ինչպես նաև Վանա լճի արևելյան ափերին։ Այդ հողերը ձևավորվում են կիսաանապատային տիպի աղքատ բուսական ծածկույթի տակ։ Աղի լճերի ափերին և փակ գոգավորություններում դրանք զուգակցված են աղուտների հետ։ Մոխրագույն հողերը հիմնականում օգտագործվում են իբրև արոտավայրեր, իսկ Վանա լճի շրջանում, ոռոգման առկայության դեպքում՝ հողագործության նպատակով։

**Աղուտներն ու աղալները** մեծ զանգվածներով հանդիպում են Թուզ լճի արևմտյան ու հարավային ափերին, Կոնիական հարթավայրում, Սվազի վիլայեթում և էլի ինչ-որ այլ շրջաններում։ Դրանց փոքրիկ զանգվածները հանդիպում են շագանակագույն հողերի մեջ և գետերի հովիտներում, ողողակային հողերի միջև։



*Բ ո ւ ս ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն ը։* Թուրքիայում վայրի աճող և կուլտուրական բույսերի բազմազան շատ տեսակներ կան։ Նրա բուսական ծածկույթի հարստությունը պայմանավորված է ինչպես ֆիզիկա-աշխարհագրական պայմանների բազմազանությամբ (ռելիեֆի չափազանց կտրտվածությունը, կլիմայական շրջանների հակասականությունը, հողային ծածկի բարդությունն ու խայտաբղետությունը, ջրային ռեսուրսների ոչ համաչափ բաշխումը և այլն), այնպես էլ այդ երկրի ժողովուրդների նյութական կուլտուրայի զարգացման պատմական պայմաններով։ Թուրքիայի ֆլորան բաղկացած է 6500-ից ավելի տեսակներից և կարող է համեմատվել միայն Կովկասի բուսաբանական գանձերի հետ։ Երկրում հազվագյուտ շատ բույսեր կան։ Օրինակ, Արևմտյան Անատոլիայում աճում են հնդկական սոսիներ, լիբանանյան մայրիներ։

Փոքր Ասիայի բուսականության առանձնահատկությունը վայրի աճող և կուլտուրական շատ տեսակների մեկուսացման մեջ է, որը տեղանքի այս կամ այն շրջանին տալիս է անհատական բուսաբանական բնույթ։ Մեկուսացումն առանձնապես ցայտուն է աչքի ընկնում երկրի լեռնային շրջաններում։

Թուրքիայում կարելի է առանձնացնել երկու խոշոր բուսական գոտիներ. ծովամերձ և ներքին։ Ծովամերձ գոտու առափնյա մասը հիմնականում կուլտուրական գոտի է, որն օգտագործվում է ցանքսերի, այգիների ու բանջարանոցների համար։ Դրանից հետո գալիս են անտառներն ու թփուտները։ Օդի բարձր խոնավությունը և համաչափ տեղումները ամբողջ տարվա ընթացքում Սև ծովի առափնյա շրջաններում նպաստում են այստեղ փայտամշակման բուսականության զարգացմանը, որը ներկայացված է սաղարթավոր անտառներով։

Սևծովյան բուսական գոտու արևելյան մասն ավելի լավ է պաշտպանված սառը քամիներից և ավելի շատ է ապահովված տեղումներով։ Տրապիզոնից արևելք լավ տարածվել են ցիտրուսային կուլտուրաները (նարինջ, կիտրոն, ման-

դարին) և թեյը։ Այդ քաղաքից արևմուտք տարածված են կաղինի մացառները։ Տրապիզոնի և Սամսունի շրջանում լայնորեն մշակվում է ծխախոտ։

Միջերկրածովյան ֆլորան տարածված է Մարմարի, Էգեյան և Միջերկրական ծովերի առափնյա շրջաններում։ Տաք և չոր ամառը, տաք և անձրևային ձմեռը՝ շատ բույսերի համար ձմեռային վեգետացիոն շրջանով, պայմանավորել են մշտադալար կամ միայն կարճ ժամանակով տերևաթափ եղող բարձրահասակ ծառերի և թփուտների գոյությունը։

Մարմարի ծովի ափերի համար հատկանշական են նոճին, արծաթափայլ եղևնին, կարմրածառը, շագանակենին, մագնոլիան, դափնու ծառը։ Այստեղ հանդիպում են հզոր առանձնացած ընկուզենիներ և ձիթենու անտառներ։ Բլուրների լանջերին փռվել են լայնատարած խաղողի և մրգատու այգիներ, բոստաններ։

Էգեյան ծովի առափնյա մարզի հյուսիսային մասը հարուստ է թավ բարձրաբերձ խառն անտառներով, որտեղ գերազանցապես սաղարթավոր ծառատեսակներն են։ Ավելի հարավում աճում են սաղարթավոր ծառեր, իսկ էլ ավելի հարավում՝ փշատերևները։ Այդ մարզի գետերի հովիտները դրեթե ամբողջությամբ մշակվում են։ Այսպես, Բաքիրչայ գետի հովիտը ձիթենիների կենտրոն է, Գեդիզի հովիտը՝ խաղողագործության, Բյույուկ Մենդերեսի և Քյուչյուկ Մենդերեսի հովիտներում գլխավորապես մշակվում է թուզ, բամբակ, ծխախոտ։

Միջերկրական ծովի ափերին մշակում են խաղող, ցիտրուսներ, ծխախոտ, բոստանային կուլտուրաներ։ Լեռնատորոսներում աճում են նուռը, դեղձը, իսկ ավելի բարձրում ձգվում են մայրու և գիհենու անտառները, որոնք աստիճանաբար անցնում են մերձալպիական և ալպիական արոտավայրերի։

Բուսական աշխարհի բազմազանությամբ աչքի են ընկնում Անթալիայի և Ադանա-Մերսինյան ցածրությունները։ Անթալիայի ցածրությունում մշակվում է նարինջ, կիտրոն, մանդարին, թուզ, նուռ, ինչպես նաև լոբազգիներ, բամ-



բակ, բրինձ, ծխախոտ. այստեղ նոր կուլտուրա է կաուչուկատու գվայուլը։ Ադանա-Մերսինյան ցածրությունում մշակվում են երկրի կուլտուրական բույսերից շատերը և, առաջին հերթին, բամբակ, խուրմա, ցիտրուսներ, խաղող և բոստանային շատ կուլտուրաներ։

Ներքին Թուրքիայի բուսական գոտին հիմնականում իրենից ներկայացնում է համատարած տափաստան, տեղ-տեղ հանդիպում են թփուտներ և փոքրիկ անտառներ։ Հողագործությունն այստեղ օազիսային բնույթ է կրում։ Առավելապես տարածված են ցորենը, գարին, տարեկանը։ Կենտրոնական Անատոլիայի հարավ-արևմտյան մասում լայնորեն տարածված է բարձր լեռնային ափիոնի կակաչը, բամբակը, ջրովի խաղողագործությունը։

Հայկական-բրդական լեռնաշխարհը հիմնականում ծածկված է մարգագետիններով և քարքարոտ տափաստաններով։ Անտառներ պահպանվել են միայն Անտիտավրոսի վրա և մասամբ էլ Գլխավոր Հայկական Տավրոսի վրա։

Անտառների հիմնական ծառատեսակները կաղնին և մայրին են։ Կուլտուրական բույսերն աճում են հովիտներում։ Հացահատիկային կուլտուրաներից մշակվում են գարի, ցորեն, տարեկան և, հատկապես, կորեկ։ Այգեգործությունը զարգացած է միայն քաղաքների շուրջը։

Հարավ-արևելյան Թուրքիան, չնչին բացառությամբ, իրենից ներկայացնում է կիսաանապատ, որը ծածկված է օշինդրով և հատիկային տիպի բուսականությամբ։ Ամբողջությամբ վերցրած մարզն անտառազուրկ է և միայն հյուսիսային մասում, հազար մետրից ոչ պակաս բարձրության վրա, հանդիպում են փոքրիկ անտառներ։ Հողագործությունը թույլ է զարգացած։ Գետերի հովիտներում աճեցվում են բրինձ, բամբակ, լեռնալանջերին՝ ծխախոտ։ Ղազիայնթափի շրջանը հայտնի է պիստակով, Մարդինինը՝ նշով, Ուրֆայինը՝ նռով։

Կենդանական աշխարհը։ Թուրքիայի տեսակային կազմը նույնատիպ չէ, որը բացատրվում է երկրի

առանձին շրջանների միանգամայն բազմազան աշխարհագրական պայմաններով։

Լեռնային ֆաունայի առավել հատկանշական ներկայացուցիչները վայրի ոչխարներն են (ասիական մուֆլոնները), ազնիվ եղջերուները, այծյամները, վիթերը, անտիլոպները, վայրի ավանակները (օնագրները), խոզերը և քարայծերը։ Գիշատիչներից Թուրքիայում ապրում են հովազները, լուսանները (ճահճային և տափաստանային), շերտավոր բորենին, գայլը, քարային և անտառային կզաքիսը, փորսուղը, ժանտաքիսը և, հատկապես, շնագայլը։ Կենդանիների այնպիսի լայնորեն տարածված տեսակներ, ինչպես գայլը, աղվեսը, նապաստակը, Փոքր Ասիայում ունեն իրենց տեղական ենթատեսակները։

Չափազանց բազմազան է թռչունների աշխարհը։ Խոշոր գիշատիչ թռչուններից կան արծիվներ, գառնանգղեր, մորաճուռակներ, բազեներ, ուրուրներ, շահեններ։ Հանդիպում են կկուներ, փայտփորիկներ, կեռնեխներ, արտույտներ, տոխակներ, երաշտահավեր, ծիծեռնակներ։ Կենտրոնական Անատոլիայում ամենուրեք հանդիպում են սպիտակ արագիլներ։

Հյուսիսից, հարավից և արևմուտքից Թուրքիայի ափերը ողողող ծովերի իխտիոֆաունան ներկայացված է ամենաբազմազան տեսակներով։

## ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

*Բնակչության թիվը և խտությունը*։ Թուրքիայի ներքին գործերի մինիստրության տվյալների համաձայն, երկրի բնակչությունը հանրապետության հռչակման պահին (1923 թ.) 12532 հազար մարդ էր։ Դրանից հետո Թուրքիայում անց են կացվել բնակչության յոթ պաշտոնական մարդահամարներ (աղյուսակ 1)։



Աղյուսակ 1

Բնակչության աճն ու խտությունը

| Թիվը | Բնակչությունը հազար մարդ | Խտությունը (բնակչության թիվը 1 քառ. կմ-ի վրա) |
|---|---|---|
| 1927 | 13648 | 18 |
| 1935 | 16158 | 21 |
| 1940 | 17820* | 23 |
| 1945 | 18790 | 24 |
| 1950 | 20947 | 27 |
| 1955 | 24112 | 30 |
| 1960 | 27755 | 36 |

* 1940 թվականից սկսած մարդահամարը հաշվի է առնում Հաթայի բնակչությունը, որը 1939 թվականին միացվեց Թուրքիային։

1923 թվականից մինչև 1960 թվականը Թուրքիայի բնակչությունն աճել է 15223 հազար մարդով, այսինքն, մոտավորապես 122 տոկոսով։ Դա արդյունք է բնական աճի, իմիգրացիայի (գլխավորապես Հունաստանից ու Բուլղարիայից), 1939 թվականին 390 հազար բնակչություն ունեցող Ալեքսանդրետի սանջակը (Հաթայ) Թուրքիային միացնելու[1]։

Բնակչության թվով (1965 թվականին մոտավորապես 31 մլն մարդ) Թուրքիան Մերձավոր և Միջին արևելքի երկրների մեջ առաջին տեղն է գրավում։ Տարեկան աճը կազմում է մոտավորապես 3 տոկոս։

Երկրի բնակչությունը բաշխված է ծայրահեղ անհավասար։ Առավելապես խիտ են բնակեցված Մարմարի և Սև

[1] Թվական տվյալների այսպիսի արագ աճի մեջ որոշ դեր, հավանաբար, խաղացել է այն հանգամանքը, որ առաջին մարդահամարները շատ ճիշտ չէին և բնակչության ինչ-որ մաս մնացել էր հաշվառումից դուրս։

ծովի առափնյա շրջանները, այնուհետև Էգեյան ծովին հարող շրջանները և Արևմտյան Թուրքիայի մնացած մասը։ Բնակչությունն առավելագույն խիտ է Ստամբուլի վիլայեթի եվրոպական մասում. այստեղ 1 քառ. կմ-ի վրա ապրում է ավելի քան 300 մարդ։ Նվազագույն խտություն ունեն Թուրքիայի հարավ-արևելյան վիլայեթները (Հակյարի, Վան, Սիիրդ, Մուշ)։

**Գյուղական և քաղաքային բնակչությունը։** Թուրքիայի քաղաքային բնակչությունն աճում է գյուղականից արագ։

1960 թվականի մարդահամարով Թուրքիայում 75 հազար մարդուց ավելի բնակիչ ունեցող 15 քաղաք կար, որոնցում ապրող բնակչության ընդհանուր թիվը կազմում էր մոտավորապես 4,1 միլիոն կամ երկրի ազգաբնակչության 14 տոկոսից ավելին։ Բոլոր քաղաքներում և քաղաքատիպ ավաններում ապրում էր ավելի քան 8825 հազար մարդ այսինքն՝ երկրի բնակչության 31 տոկոսից ավելին։

Թուրքիայում 100 հազար մարդուց ավելի բնակիչ ունեցող ինը քաղաք կա. Ստամբուլը (1720 հազար), Անկարան (646 հազար), Իզմիրը (371 հազար), Ադանան (230 հազար), Բուրսան (154 հազար), Էսքիշեհիրը (153 հազար), Ղազիայնթափը (125 հազար), Կոնիան (123 հազար), Կայսերին (103 հազար)։

Անկարան Անատոլիայի ամենահին քաղաքներից մեկն է։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո Անկարան դարձավ ազգային-ազատագրական պայքարի կենտրոնը։ 1923 թվականի հոկտեմբերի 13-ին այն հռչակվեց Թուրքիայի մայրաքաղաք։ Այդ ժամանակաշրջանից սկսվում է քաղաքի արագ աճը։ 1927 թվականին այնտեղ ապրում էր 75 հազար մարդ, 1940 թվականին՝ 156 հազար, 1945 թվականին՝ 227 հազար, 1955 թվականին՝ 453 հազար մարդ։ Բնակչության թվով Անկարան Ստամբուլից հետո Թուրքիայի երկրորդ քաղաքն է։

Հանրապետության հռչակվելուց ի վեր Անկարայում կառուցվել են մի շարք ժամանակակից բնակելի և կառա-



վարական շենքեր, գիտական հիմնարկներ, ստադիոն, ձիարշավարան, օդանավակայան և այլն։ Անկարայի կենտրոնը համեմատաբար բարեկարգ և կանաչապատ է։

Անկարան խոշոր երկաթուղային հանգույց է, արդյունաբերական և կուլտուրական կենտրոն։ Քաղաքում գտնվում են ռազմական, տեքստիլ, ցեմենտի, սննդի և արդյունաբերության այլ ճյուղերի ձեռնարկություններ, կա երկու համալսարան, կոնսերվատորիա և օպերային թատրոն։ Պահպանվել են հունա-հռոմեական և բյուզանդական ճարտարապետության հուշարձաններ։ Այդպիսի հուշարձաններից մեկը Օգոստոսի տաճարն է։

Ստամբուլը Թուրքիայի ամենախոշոր քաղաքը և կարևորագույն նավահանգիստն է, որ տեղավորված է Բոսֆորի ափերին։ Քաղաքը տարածված է երեք թերակղզիների վրա, որոնցից երկուսը գտնվում են եվրոպական մասում։ Ստամբուլը երկրի խոշորագույն արդյունաբերական, առևտրական և կուլտուրական կենտրոնն է։ Այստեղ շատ են ուսումնական հաստատությունները, այդ թվում՝ երկու համալսարան։ Քաղաքում և նրա ծայրամասերում կենտրոնացած են սննդի (ալրաղաց, պահածոների, սպիրտի, օղու և այլն), տեքստիլ (բամբակյա գործվածքեղենի, բրդյա, արհեստամի, մետաքսի) արդյունաբերության ձեռնարկությունները։ Կան նաև մեքենաշինության, նավաշինության, քիմիական արդյունաբերության, շինանյութերի արդյունաբերության ձեռնարկություններ։

Ստամբուլը կարևորագույն տրանսպորտային հանգույց է. նրա միջով է անցնում Կենտրոնական Եվրոպան Փոքր Ասիայի և Արևելքի հետ կապող երկաթուղային մագիստրալը։

Բոսֆորի ափին գեղատեսիլ վայրերում ձգվում են արվարձանները, հյուպատոսությունների շքեղ ամառային ռեզիդենցիաներով և խոշոր բուրժուազիայի վիլլաներով։

Ստամբուլում շատ կան հնության հուշարձաններ, տաճարներ, մզկիթներ։ Բյուզանդական դարաշրջանի հիասքանչ ճարտարապետական հուշարձանը Սոֆիայի տաճարն

է (Այա Սոֆիան)։ Թուրքական հուշարձաններից առանձնապես հայտնի են Սուլեյմանիե և Բայազիդ II-ի մզկիթները։

Թուրքական քաղաքներն աչքի են ընկնում կառուցումների կուտակվածությամբ։ Քաղաքների մեծ մասը կառուցված է լեռնային տեղանքում, սովորաբար թեքության վրա։ Փողոցները նեղ են, ծռմռված, ունեն շեշտակի դարիվայրներ ու դարիվերներ։ Տների համար հատկանշական են պատշգամբները՝ սովորաբար երկրորդ հարկում։

Շատ քաղաքներում պահպանվել են բերդերի պարիսպները և միջնադարյան աշտարակների մնացորդները, որոնք ինչ-որ ժամանակներ բնակիչներին պաշտպանել են հարձակումներից։ Կամաց-կամաց քաղաքները դուրս եկան բերդապարիսպների սահմաններից և տարածվեցին դրանցից այն կողմ։ Քաղաքի այն մասը, որը տեղավորված է բերդապարիսպի ներսում, կոչվում է հին քաղաք։

Քաղաքները, իբրև կանոն, անբարեկարգ են։ Նրանցից միայն մի քանիսն ունեն կենտրոնական կոյուղի և մոտավորապես 70 տոկոսը՝ կենտրոնական ջրմուղ։ Սակայն այդ քաղաքներում էլ կոյուղի և ջրմուղ գոյություն ունի միայն աննշան թվով տների համար։ Բնակավայրերի մեծ մասում չկա էլեկտրական լուսավորություն։ Ոչ բոլոր քաղաքներն ունեն ստացիոնար կինո և թատրոն։

Երկրի բնակավայրերը գերազանցապես փայտաշեն, կավաշեն կամ քարե տներով են։ Միայն ամենախոշոր քաղաքներում է, որ շենքերը մեծ մասամբ կառուցում են աղյուսից կամ երկաթբետոնից։

Փայտաշեն տներ ամենից հաճախ հանդիպում են Սև ծովի ափերին, Պոնտական լեռների հարավային լանջերին և Արևելյան Թուրքիայի անտառապատ շրջաններում։ Փայտաշեն տների տանիքները ծածկվում են տախտակներով կամ կավարով (դրանկայով)։

Կենտրոնական Թուրքիայում, որտեղ չկան անտառներ և հեշտ մշակվող քարեր, տները, որպես կանոն, կառուցում են սամանից կամ չտաշված քարից։

Թուրքիայի հարավում, հատկապես Միջերկրական ծո-



վի առափնյա շրջաններում, տները կառուցվում են հեշտությամբ մշակման ենթակա քարերից։

Թուրքիայի բնակչության գրեթե երկու երրորդը բնակվում է գյուղերում, որոնց ընդհանուր թիվն անցնում է 40 հազարից։

**Ազգային կազմը։** Մինչև առաջին համաշխարհային պատերազմը Թուրքիան բազմազգ պետություն էր։ Ժամանակակից Թուրքիայում բնակչության էթնիկական կազմն ավելի միատարր է։

Պաշտոնական վիճակագրությունը բնակչության ազգային կազմի մասին հավաստի տվյալներ չի պարունակում, նշելով միայն լեզվական խմբերի մասին տվյալները։ Օրինակ, թուրք են հաշվում Թուրքիայի բոլոր այն քաղաքացիներին, որոնք իբրև մայրենի լեզու են ընդունել թուրքերենը։ Բնականաբար, նման պայմաններում չի կարելի լեզվական պատկանելությունը նույնացնել ազգայինի հետ։

**Թուրքեր**՝ երկրի հիմնական ազգաբնակչությունը, պատկանում են թյուրքական ժողովուրդների փոքրասիական ենթախմբին։ Գրեթե բոլոր թուրքերն ապրում են Թուրքիայում (1960 թ. 25,2 միլիոն)։ Միայն նրանց աննշան մասն է ապրում Հունաստանում, Բուլղարիայում, Իրաքում և մի քանի այլ երկրներում։ Իրենց հավատով թուրքերը սուննիթական ուղղության մահմեդականներ են։

Թուրքիայում թուրքեր են համարում չերքեզների զգալի մասին, որոնց թիվը XIX դարի վերջին 450 հազարից ավելի էր։ 1960 թվականի մարդահամարի տվյալներով, չերքեզները ընդամենը 63 հազար են։ Ավելին, որոշ ազգեր, որոնք խոսում են թյուրքական խմբի լեզուներով, թուրքական բոլոր մարդահամարների ժամանակ հաշվվել են իբրև թուրքեր։ Մասնավորապես թուրքմենները, որոնք անցյալ դարի կեսերին կազմում էին Փոքր Ասիայի ազգաբնակչության 15 տոկոսը, թուրքական վիճակագրությամբ չեն հիշատակվում։

Թուրքիայի ազգային փոքրամասնությունների՝ քրդերի,

արաբների, հայերի, լազերի մասին հարկ է խոսել առանձին։

Քրդերը Հայկական Տավրոսի և Զագրոսի արևելյան շրջանները ընդգրկող մարզում ու Քրդստան կոչվող երկրամասում ապրող ամենահին ժողովուրդներից են։ Քրդստանի հյուսիս-արևմտյան մասը գտնվում է Թուրքիայի տերիտորիայում, արևելյանը՝ Իրանի (այն ընդգրկում է Ուրմիա լճի շրջանը և տարածվում է իրանական Ադրբեջանից դեպի հարավ), հարավայինը՝ հիմնականում Հյուսիս-արևմտյան Իրաքի տերիտորիայում է։

Քրդերի ընդհանուր թիվը կազմում է 5—6 միլիոն։ Թուրքիայում, 1960 թվականի մարդահամարի տվյալներով, ապրում են 1,85 միլիոն քրդեր[1]։

Քրդերի լեզուն պատկանում է հնդեվրոպական լեզուների իրանական խմբին։ Այն մի քանի բարբառ ունի։ Թուրքական Քրդստանի սահմաններում առավել տարածված են քուրմանջի և զազա ցեղերի բարբառները։

Թուրքիայի կառավարող շրջանների ռեակցիոն քաղաքականության ազգային փոքրամասնությունների նկատմամբ քուրդ ժողովրդի բազմաթիվ ապստամբությունների[2] պատճառ է դարձել։ Չնայած այն բանին, որ այդ ապստամբությունները դաժանորեն ճնշվել են, քուրդ ժողովրդի ավելի ու ավելի լայն շրջանները առավել համառ ձևով են առաջ քաշում ազգային անկախության պահանջը։

Ազգային փոքրամասնությունների մեջ իրենց թվով երկրորդը **արաբներն են**, որոնց թիվը կազմում է մոտավորապես 350 հազար մարդ։ Նրանք հիմնականում բնակվում են հարավ-արևելյան վիլայեթներում։

Հայերը Անդրկովկասի և Անատոլիայի հնագույն ժողովուրդներից են։ Զավթելով Հայաստանի արևմտյան մասը,

1 Մի շարք արտասահմանյան և սովետական հեղինակների հաշվարկներով Թուրքիայում բնակվում են մոտ 3 միլիոն քրդեր։

2 Առավել խոշոր ապստամբությունները տեղի ունեցան 1925, 1930, 1937 թվականներին։ Այդ ապստամբությունները իրենց նպատակներին էին ցանկանում ծառայեցնել իմպերիալիստները։



թուրք-օսմանները սկսեցին ամեն տեսակի հալածանքների ենթարկել հայերին, որոնք քրիստոնեություն են դավանում։ Ջարդերին զուգահեռ, թուրքական իշխանությունները հայերին բռնի վերաբնակեցնում էին Օսմանյան կայսրության տարբեր շրջանները։ Շատ հայեր, ցանկանալով փրկվել թուրքական կամայականություններից, գաղթում էին արտասահման։ Այս և այլ պատճառների հետևանքով ավելի քան 2 միլիոն հայերից, որ ապրում էին Թուրքիայում մինչև առաջին համաշխարհային պատերազմը, ներկայումս այդ երկրում մնացել է, պաշտոնական տվյալներով, մոտավորապես 53 հազար մարդ (1960 թ.)։ Սակայն հարկ է հիշել, որ հայերը, ինչպես և մյուս ազգային փոքրամասնությունները, հաճախ թաքցնում են իրենց ազգային պատկանելությունը։

Լազերը (էթնիկական խումբ է) բնակվում են գլխավորապես Սև ծովի հարավային մասի առափնյա շրջանում, հին Կոլխիդայի մասն հանդիսացող և Լազիստան (լազերի երկիր) կոչվող տերիտորիայում։ Լազերը հիմնականում ապրում են Արտվինի, Ռիզեի և Տրապիզոնի վիլայեթներում, ինչպես նաև Գյումուշհանե, Սամսուն, Սինոպ վիլայեթներում։

Իսլամացման քաղաքականության հետևանքով, որ դարերի ընթացքում վարել են թուրքական կառավարությունները, շատ լազեր ընդունել են մահմեդականություն։ Լազերի մեծ մասը գիտե թուրքերեն, բայց նրանց հեշտությամբ կարելի է տարբերել յուրահատուկ առոգանությամբ։ Լազերի գյուղերում մայրենի լեզուն տարածված է ավելի լայն, քան քաղաքներում։

Լազերի ընդհանուր թիվը Թուրքիայում անցյալ դարի վերջին 140 հազարից ավելի էր, 1960 թվականին, պաշտոնական վիճակագրության տվյալներով՝ ընդամենը 22 հազար։

Նշված ազգերից բացի երկրում ապրում են հույներ (65 հազար մարդ), վրացիներ (33 հազար), հրեաներ (60 հազար) և ուրիշներ։

Դասակարգային և արհեստակցական կազմը։ Թուրքական կառավարող շրջանները թուրքական հասարակության դասակարգային կազմի մասին տվյալներ չեն հրապարակում։ Ավելին, միայն վերջերս, բանվորական շարժման աճի կապակցությամբ, նրանք դադարեցին երկրում դասակարգերի առկայությունը ժխտելուց։

Դեմոգրաֆիական մարդահամարի տվյալների և պետական-պլանային կազմակերպության նյութերի համաձայն, 1961 թվականին աշխատանքային տարիքի բնակչության հետևյալ արհեստակցական խմբերը կային։

| | Հազար մարդ | Տոկոսը ամբողջից |
|---|---|---|
| Գյուղատնտեսության մեջ զբաղվածներ . . . | 9734 | 75.9 |
| այդ թվում՝ գյուղատնտ. բանվորներ . . . | 900 | |
| Արդյունաբերության մեջ (վերամշակող, լեռնահանքային և շինարարական) զբաղվածներ . | 1036 | 8.1 |
| այդ թվում՝ վարձու բանվորներ . . . . | 857 | |
| Առևտրի, տրանսպորտի և սպասարկման այլ ոլորտներում զբաղվածներ (ազատ մասնագիտության տերերի հետ միասին) . . . | 1246 | 9.8 |
| այդ թվում՝ վարձու բանվորներ . . . . | 607 | |
| Անորոշ զբաղմունքի տեր մարդիկ . . . . | 800 | 6,2 |
| Ընդամենը | 12806 | 100 |

Քաղաքային և գյուղական պրոլետարիատը ներկայումս կազմում է 2,6 միլիոն մարդ (640 հազար բանվորներ զբաղված են վերամշակող արդյունաբերության մեջ, 52 հազար՝ լեռնահանքայինի մեջ, 165 հազար՝ շինարարության մեջ, 200 հազար՝ տրանսպորտում և կապի ձեռնարկություններում, 900 հազար՝ գյուղատնտեսության մեջ, 600 հազար՝ նյութական արտադրության մյուս ոլորտներում և սպասարկման բնագավառում), կամ երկրի ամբողջ ինքնագործ բնակչության 20 տոկոսը։ Եթե հաշվի առնենք գյուղի հարյուր հազարավոր կիսապրոլետարներին, ապա վարձու աշխատանքի բանակը գրեթե կկրկնապատկվի։

Թուրքիայի պրոլետարիատը ձևավորվում է սնանկացող գյուղացիության, արհեստավորների, մանր առևտրականների



և քաղաքի ու գյուղի այլ կիսապրոլետարական խավերի շարքերից։ Անդրադառնալով Թուրքիայի պրոլետարիատի որակական կազմին, չի կարելի չնշել, որ նրա մեջ որակավորում չունեցողները զգալի թիվ են կազմում։ Այսպես, 857 հազար արդյունաբերական բանվորներից միայն 315 հազարն (36,7 տոկոսը) էր դասվում որակյալների կատեգորիային, իսկ մնացած 542 հազարը օգտագործվում էր օժանդակ և օգնող աշխատանքներում։ Առաջին կատեգորիային են պատկանում, իբրև կանոն, «ժառանգական» պրոլետարները, երկրորդին՝ վերջերս գյուղից եկած և երկար ժամանակ նրա հետ կապերը պահպանող բանվորները։

Գյուղի բնակչությունը դասակարգային տեսանկյունից բաժանվում է հետևյալ սոցիալական խմբերի (տոկոսներով).

| | |
|---|---|
| Հողազուրկ գյուղացիներ (բատրակներ և վարձակալողներ) . . . . . . . . | 16,7 |
| Չքավորներ . . . . . . . . . | 51,5 |
| Միջակներ . . . . . . . . . | 18,0 |
| Կուլակներ . . . . . . . . . | 11,2 |
| Կալվածատերեր . . . . . . . . | 2,6 |

Գյուղացիությունը ժամանակակից Թուրքիայի ամենաբազմամարդ դասակարգն է և պրոլետարիատի գլխավոր դաշնակիցը։ Հողազուրկ և սակավահող գյուղացիությունը կազմում է գյուղի բնակչության մեծամասնությունը։ Նրանք վարձակալում են հողը խոշոր հողատերերից կամ աշխատում նրանց մոտ իբրև բատրակներ։ Եղած տվյալների համաձայն, բոլոր գյուղացիների 10 տոկոսն աշխատում է իբրև գյուղատնտեսական բանվոր, իսկ 15 տոկոսը իր եկամուտները լրացնում է կողմնակի աշխատանքով։ Հետևապես, բոլոր գյուղացիների մեկ քառորդը (հողազուրկները և չքավորները) իրենց գոյությունը լրիվ կամ մասնակի չափով պահպանում են սեփական աշխատանքային ուժը վաճառելու հաշվին։

Միջակին չքավորից տարբերում են ոչ միայն ավելի մեծ մշակվող հողակտորով, այլև մեկ-երկու գլուխ բանող անասունների՝ կովի, գործիքների (ամենից շատ՝ երկաթյա

գումանի) ամբողջությամբ։ Միջակը Թուրքիայում, իբրև կանոն, կիրառում է միայն իր ընտանիքի անդամների անձնական աշխատանքը։

Կուլակները (գյուղական բուրժուազիան), որոնք տիրապետում են բոլոր գյուղական տնտեսությունների ավելի քան 10 տոկոսը (մոտ 350 հազար տուն), լայնորեն կիրառում են վարձու բանվորական աշխատանքը։ Կուլակության տեսակարար կշիռը և նրա տնտեսական դերը թուրքական գյուղում անընդհատ աճում է։

Կալվածատերերը խոշոր հողատերերն են, որոնք անձնական մասնակցություն չեն ցուցաբերում աշխատանքում և հիմնականում ապրում են հողից ստացվող եկամուտներով, որոնք նրանք ստանում են վարձակալող գյուղացիներին կամ գյուղատնտեսական բանվորներին շահագործելու միջոցով։ Կալվածատեր-կիսաֆեոդալները, որոնք պահպանել են իրենց ազդեցությունն ու իշխանությունը, քանի դեռ գոյություն ունի տնտեսական հետամնացությունը, հանդես են գալիս որևէ վերափոխման դեմ։ Կալվածատեր-կապիտալիստները վարում են ժամանակակից ֆերմերային տնտեսություն և հաճախ վարձու աշխատանքի շահագործումից ստացված կապիտալի մի մասը ներդնում են արդյունաբերության մեջ։

Շահագործողական դասակարգերի թվին է պատկանում նաև ազգային բուրժուազիան, որը բաժանվում է խոշորի, միջինի և մանրի։ Խոշոր բուրժուազիան հազար խոշոր կամերսանտ-արտահանողներն ու ներմուծողներն են, որոնք իրենց ձեռքում են պահում Թուրքիայի արտաքին առևտուրը, հազար խոշոր արդյունաբերողներն ու հանքավայրերի տերերը, հինգ հարյուր բանկիրները և հինգ հարյուր կապիտալիստները, որոնք սեփականացրել են երկրի ապահովագրության գործը։ Այդպիսով, ընդամենը, երեք հազար խոշոր կապիտալիստներ, որոնք դաշն կնքած երկու հազար խոշոր կալվածատերերի հետ, վերահսկողություն են սահմանել Թուրքիայի քաղաքական և տնտեսական կյանքի վրա։



Միջին և մանր բուրժուազիան իրենից ներկայացնում է բուրժուազիայի առավել հայրենասիրական մասը։

Տիրող դասակարգերին է ծառայում վճարովի պաշտոնյաների, բարձրաստիճան սպայության և պաշտոնեության ծառայողների խումբ։ Առաջադեմ մտավորականությունը, արտահայտելով ժողովրդական մասսաների շահերը, ավելի ու ավելի սուր է դնում սոցիալ-տնտեսական ռադիկալ վերակառուցումների, օտարերկրյա կախումից երկրի ազատագրման անհրաժեշտության հարցը։

## ԹՈՒՐՔԵՐԵՆ ԼԵԶՈՒՆ

Թուրքերեն լեզուն դասվում է թյուրքական լեզուների խմբին, որոնք միավորված են քերականական կառուցվածքի որոշակի միասնությամբ և բառակազմի մեծ մասի ընդհանրությամբ։ Թուրքերեն է խոսում Թուրքիայի բնակչության ճնշող մեծամասնությունը։

*Գրական լեզուն և բարբառները։* Թուրքերեն լեզվում մի շարք բարբառներ և խոսվածքներ կան։ Օրինակ, երկրի հարավում խոսում են ոչ այնպես, ինչպես հյուսիսում։ Արևմտյան շրջանների լեզուն շափազանց տարբերվում է կենտրոնական մարզերի լեզվից և հատկապես՝ արևելյան վիլայեթների լեզվից։ Սակայն երկրում լուսավորության ու կուլտուրայի զարգացմամբ տեղական խոսվածքները, առաջին հերթին քաղաքներում, աստիճանաբար մոտենում են գրական լեզվին։

Թուրքերեն գրական լեզվի հիմքում ընկած է ստամբուլյան խոսվածքը։ Մայրաքաղաքն Անկարա փոխադրելուց հետո (1923 թվական) գրական լեզվի վրա սկսեց զգացվել Անկարայի բարբառի ազդեցությունը։

*Այբուբենը։* Մի քանի դար շարունակ թուրքերն օգտվում էին արաբական այբուբենից։ 1928 թվականի վերջին Թուրքիայի ազգային մեծ ժողովը օրենք ընդունեց այն լատինականացված այբուբենով փոխարինելու մասին։ 1930

թվականից նոր այբուբենը պարտադիր դարձավ բոլոր թուրքերի համար։

Գիրը։ Ժամանակակից թուրքերեն գրերի հիմքում ընկած է հնչյունաբանական սկզբունքը, այսինքն՝ բառերը գրվում են այնպես, ինչպես արտասանվում են։ Այդ պատճառով էլ վերջավորությունների բաղաձայնները, որոնք արտասանության ժամանակ խլանում են, գրվում են նույնպես խուլ, բայց նման բառերի վերջում հոլովների ձայնավոր վերջավորությունների ավելացման ժամանակ խլացված բաղաձայնը դառնում է ձայնեղ։

Հնչյունաբանությունը։ Թուրքերենի ամենագլխավոր հնչյունաբանական օրենքները ձայնավորների ներդաշնակության և բաղաձայնների առնմանման օրենքներն են։

Ձայնավորների ներդաշնակության օրենքի համաձայն թուրքերեն այն բառերին, որոնք վերջանում են կոշտ ձայնավորով, կարելի է ավելացնել իրենց կազմում միայն կոշտ ձայնավորներ ունեցող ածանցներ, իսկ այն բառերին, որոնք վերջանում են փափուկ ձայնավորներով՝ իրենց կազմում միայն փափուկ ձայնավորներ ունեցող ածանցներ։ Բաղաձայնների առնմանման օրենքի համաձայն ձայնեղ բաղաձայններով վերջացող բառերին կարելի է ավելացնել ածանցների միայն ձայնեղ վարիանտները, իսկ այն բառերին, որոնք վերջանում են խուլ բաղաձայններով՝ խուլ վարիանտները։

Այն բառերի արտասանության ժամանակ, որոնց սկզբում երկու բաղաձայն կա իրար ետևից, երբեմն այդ բաղաձայնների միջև գրվում է ձայնավոր հնչյուն կամ ձայնավոր հնչյունը գրվում է բառասկզբում։

Շեշտը թուրքերեն բառերում, իբրև կանոն, ընկնում է վերջին վանկի վրա։ Սակայն թուրքերեն շեշտը այնքան էլ ուժեղ չէ, ինչպես ռուսերենում, և այդ պատճառով էլ բոլոր վանկերն արտասանվում են հստակ։

Բառապաշարը։ Թուրքերեն գրական լեզվի բառային կազմը չափազանց հարուստ է։ Բացի մաքուր թուրքերենից, այստեղ շատ են արդեն հաստատուն կերպով մուտք գործած օտար բառերը, օրինակ, արաբերենից ու պարսկերենից, որ թուրքերեն լեզվին են անցել դարերի ընթացքում մահմեդական կրոնի, բարձր զարգացած արաբական գրության և հարուստ պարսկական գրականության ազդեցության տակ։ Քիչ թվով բառեր չեն փոխառնված եվրոպական լեզուներից, հատկապես ֆրանսերենից, որը Թուրքիայում շատ տարածված էր։ Թուրքերեն լեզվի մեջ են մտել որոշ հունական բառեր՝ շնորհիվ երկու հարևան ժողովուրդների պատմական երկարատև շփումների, իտալական բառեր՝ բազմադարյան առևտրի հետևանքով, գերմաներենից՝ գերմանական արդյունաբերական կապիտալի Թուրքիա ներթափանցելու և երկաթուղիներ կառուցելու կապակցությամբ, անգլերենից՝ առևտրական հարաբերությունների, սպորտի և տեխնիկայի զարգացման շնորհիվ։



Բացի այդ, թուրքերեն լեզու են թափանցել ալբաներեն, ռումիներեն, հունգարերեն և բուլղարերեն բառեր, այդ լեզուներով խոսող ժողովուրդների հետ թուրքերի երկարատև կապերի պատճառով։

Թուրքերեն լեզվում կան նաև ռուսերեն բառեր, օրինակ. sovjet—սովետ, bolsevik—բոլշևիկ, komsomol—կոմսոմոլ, kolhoz—կոլխոզ, semaver—սամովար (ինքնաեռ), kapuska—կապուստա (կաղամբ)—ռուսական կամ նրանից պատրաստված ուտեստեղեն, telatin—կաշու տեսակ, step, istep—ստեպ (տափաստան), put—փութ և այլն։

Բառակազմությունը։ Թուրքերենը պատկանում է ագլյուտինատիվ (կցական) լեզուների խմբին։ «Ագլյուտինացիա» բառը ծագում է լատիներեն «agglutinare» բառից, որ նշանակում է «կցել»։ Ագլյուտինացիա է կոչվում բառափոխության այն ձևը, երբ անփոփոխ մնացող բառին ավելացվում են որոշակի քերականական նշանակություններ ունեցող ածանցներ. ev—տուն, eve—դեպի տուն, evden—տանից, evde—տան մեջ, evimiz—մեր տունը, evimizde—մեր տանը, evler—տներ, evlerimizde—մեր տներում։ Միշտ նույն ձևով են կազմվում նաև նոր բառերը։

balik—ձուկ, balikçi—ձկնորս, balikçilik—ձկնորսություն։

Թուրքերեն լեզվի ագլյուտինատիվ բնույթը հնարավորություն է տալիս հեշտությամբ նոր բառեր կազմել։ Նրանք ստեղծվում են բազմաթիվ ածանցների օգնությամբ։

**Խոսքի մասերը**։ Թուրքերեն լեզվում կան հետևյալ խոսքի մասերը. գոյական անուն, ածական, թվական, դերանուն, բայ, դերբայ, մոդալ բառեր, մասնիկներ, կապեր, ձայնարկություններ, ետադրություններ։

Գոյականը, ածականը և դերբայն իրենց ձևով իրարից չեն տարբերվում. նրանց մոտ, իբրև կանոն, բացակայում են ձևաբանական տվյալները։ Շատ գոյականներ կարող են օգտագործվել նաև իբրև ածականներ, արտահայտելով այլ առարկայի հատկանիշ։ Որոշ ածականներ կարող են կատարել դերբայի ֆունկցիա. երբեմն ածականները կարող են օգտագործվել նաև իբրև գոյականներ, միաժամանակ արտահայտելով և՛ առարկայի հատկանիշը, և՛ հենց ինքը՝ առարկան։

Ձևաբանական տեսակետից Թուրքերեն լեզվում տարբեր խոսքի մասեր են հանդիսանում բայը և անունը ընդհանրապես։ Սակայն նրանց մեջ էլ մեծ տարբերություն չկա, քանի որ խոնարհում և հոլովում քերականական կատեգորիաները հավասարապես հատուկ են թե՛ բային և թե՛ անվանը։ Բացի այդ, գոյություն ունեն այսպես կոչված բայական անուններ, որոնք միաժամանակ ունեն և՛ բայական, և՛ անվանային հատկանիշներ։

Թուրքերեն լեզվում թվականները լինում են՝ քանակական, դասական, անջատական (ըստ երկուսի) և բազմապատկական (տասնյակներ, հարյուրյակներ, հազարյակներ)։ Վերջին երեք ձևերը կազմվում են քանակական թվականներից, նրանց որոշակի ածանցներ միացնելով։

**Քերականության որոշ կանոնները**։ Թուրքերեն լեզվում նախադասության առանձնահատկությունն այն է, որ ստորոգյալը, իբրև կանոն, նախադասության վերջում է դրվում։ Յուրաքանչյուր ստորոգյալ, անվանական թե բայական, սովորաբար ստորոգելիական մասնիկ ունի,



որը ցույց է տալիս ժամանակը, թիվը և դեմքը։ Ստորոգելիական մասնիկներն աղատում են անձնական դերանուններ գործածելու անհրաժեշտությունից։

Որոշիչը, որպես կանոն, նախորդում է իր որոշյալին։ Լրացումը սովորաբար նախորդում է լրացյալին։

Թուրքերեն լեզվում վեց հոլով կա. հիմնական, սեռական, տրական, հայցական, տեղական և ելակետային։ Գոյականների և դերանունների հոլովումը կատարվում է հոլովական մասնիկների միացմամբ։

Ածականները վերջավորություն չունեն և այդ պատճառով էլ չեն համաձայնեցվում գոյականների հետ ո՛չ թվով, ո՛չ հոլովով, ո՛չ էլ սեռով։

Քանակական թվականները գոյականների փոփոխություններ չեն պահանջում։

Թուրքերեն լեզվում շատ քիչ կան համաբերական ածականներ, և նրանց պակասը լրացվում է գոյական անունների կապակցման հատուկ կանոններով։

## ԿՐՈՆԸ

Թուրքիայի Հանրապետության հիմնական բնակչությունը մահմեդականներ են։ 1960 թվականի մարդահամարի տվյալներով, նրանք կազմում են ամբողջ բնակչության 99 տոկոսը։

**Մահմեդական կրոնը** (**իսլամը**) առաջացել է Արաբիայում մ. թ. VII դարի սկզբներին։ Հետագա երկու դարերի ընթացքում Ասիայում, Աֆրիկայում և Եվրոպայում կատարված արաբական զավթումների կապակցությամբ այն լայն տարածում է գտել տարբեր ժողովուրդների մոտ։ Ժամանակակից Թուրքիայի տերիտորիայում իսլամն սկսեց տարածվել Անատոլիան սելջուկների կողմից գրավվելուց հետո՝ XI դարի վերջերին։ Սելջուկների պետության մեջ և Օսմանյան կայսրությունում իսլամը հանդիսացել է առավելապես տիրակալների և նրանց ժառանգորդների կրոնը։

Իսկ Անատոլիայի հիմնական բնակչությունը (հույներ, հայեր և ասորիներ) շարունակել է դավանել քրիստոնեությունը։ Իսլամն ընդունել է բնակչության այն մասը, որը բռնի թուրքացվել է (օրինակ, լազերը)։ Ոչ թուրքական, ոչ մահմեդական բնակչության դաժանորեն ոչնչացման քաղաքականությունը, որը կիրառվում էր սուլթանների կողմից XIX և XX դարերում, ինչպես նաև ազգային փոքրամասնություններին Թուրքիայից արտաքսելը հասցրեցին ոչ մահմեդական ազգաբնակչության գրեթե լիակատար անհետացմանը երկրից։

Իսլամը պատկանում է մոնոթեիստական (միաստվածային) կրոնների թվին։ Իսլամի հիմնական դավանանքն իր արտահայտությունն է գտել մահմեդական խոստովանության հետևյալ ֆորմուլայում. «Ալլահից բացի այլ աստված չկա, և Մահմեդը Ալլահի առաքյալն է»։ Այսպիսով, յուրաքանչյուր մահմեդական միայն աստծուն՝ Ալլահին, հավատալու հետ միաժամանակ ճանաչում է Մահմեդին, որը համարվում է իսլամի հիմնադիրը, մեծագույն և ժամանակի տեսանկյունից վերջին մարգարեն։ Չափազանց խիստ, բայց արդարացի Ալլահի հավատի հետ են կապվում մահմեդականների պատկերացումները աշխարհի վերջի, ահեղ դատաստանի և մարդկանց անդրշիրիմյան կյանքի մասին։

Մահմեդին համարելով մարգարե, մահմեդականներն ընդունում են հին հրեական (բիբլիական) և որոշ հին արաբական մարգարեներին, իբրև նրա նախորդների, իսկ ավետարանային Հիսուս Քրիստոսին՝ իբրև Մահմեդի անմիջական և առավել նշանավոր նախորդի։

Մահմեդական կրոնական գրականության մեջ ամենահեղինակավոր ստեղծագործությունը Ղուրանն է։ Այդ գիրքը (ավանդության համաձայն նրա մեջ են մտել Մահմեդի քարոզներն ու խորհուրդները) մահմեդականներն ընդունում են իբրև աստվածային հայտնագործության արդյունք, աստվածային խոսք, որ Ալլահը հանձնել է իր առաքյալին։ Ղուրանը բաղկացած է 114 սուրահներից (գլուխներից), իսկ յուրաքանչյուր սուրահ բաղկացած է այաթներից (բանաստեղծություններից)։ Առաջին սուրահը՝ «Ֆաթիհան», որը բաղկացած է յոթ բանաստեղծություններից, մահմեդականների կրոնական պաշտամունքի և կենցաղի մեջ ամենաշատ տարածված, ամենից հաճախ արտասանվող աղոթքն է։ Առաջներում Ղուրանը կարդալ և ուսումնասիրել թույլ էր տրվում միայն նրա արաբական բնագրից. այդ գրքի թարգմանությունները այլ լեզուների դիտվում էր իբրև սրբապղծություն։



Մահմեդական կրոնական գրականության մյուս ստեղծագործությունը սուննան է։ Այդ անվան տակ հայտնի են պատմվածքների ժողովածուները՝ հադիսները. յուրաքանչյուր հադիս պարունակում է մարգարե Մահմեդի որևէ արարքի նկարագրությունը, նրա կյանքի որևէ դեպք կամ ինչ-որ հարցի մասին նրան վերագրվող դատողությունն ու ասածը։ Մահմեդականների մեծ մասը սուննան համարում է սուրբ։ Այն մահմեդականներին, որոնք ընդունում են Ղուրանի և սուննայի սուրբ լինելը, անվանում են **սուննիթներ**. նրանք կազմում են իսլամի հիմնական, անաղարտ հավատի ուղղությունը։ Մյուս ուղղության կողմնակիցներին, որոնք ընդունում են Ղուրանի աստվածային անկեղծությունը, բայց ունեն իրենց հատուկ սուրբ ավանդությունը (սուննայի փոխարեն) և մահմեդականների մեջ կազմում են փոքրամասնություն, անվանում են **շիիթներ**։

Թուրքիայի մահմեդականների մեծ մասը պատկանում է իսլամի սուննիթական ուղղությանը։

Սուննիթները բաժանվում են չորս մազհաբների, այսինքն՝ աստվածաբանական-իրավաբանական դպրոցների կամ ճյուղերի, որոնք առաջացել են դեռևս միջին դարերում։ Բոլոր մազհաբները համարվում են հավասարապես ուղղահավատներ։ Նրանց միջև եղած տարբերությունները շատ աննշան են, դրանք վերաբերում են մահմեդական իրավունքի (շարիաթի) հիմնական դրույթների գործնական կիրառմանը, ինչպես նաև կրոնական պաշտամունքին ու կենցաղին։ Մազհաբների հիմնադիրների անուններով էլ

նրանց հետևորդները կոչվում են հանիֆիթներ, շաֆիիթներ, մալիկիթներ և հանբալիթներ։ Հանիֆիթները կազմում են թուրքական բնակչության հիմնական մասը։ Շաֆիիթների թվին են պատկանում Արևելյան Անատոլիայի որոշ շրջանների (Սիիրդ, Մուշ, Վան) թուրքերը, ինչպես նաև քրդերն ու արաբները. կան փոքր թվով մալիկիթներ և հանբալիթներ։

Բոլոր մահմեդականները պարտավոր են կատարել կրոնական ծեսերը։ Նախ և առաջ յուրաքանչյուր մահմեդական, 14 տարեկան դառնալուց հետո, եթե հոգեկան խանգարումներ չունի և չի տառապում ծանր հիվանդություններով (օրինակ, անդամալուծություն), պետք է օրը հինգ անգամ աղոթի՝ արևածագից առաջ, կեսօրին, մայրամուտից առաջ և հետո և գիշերվա սկզբին։ Այս աղոթքների համար մզկիթ գնալը պարտադիր չէ։ Աղոթել թույլատրվում է տանը, բակում, հրապարակում, ճանապարհի մոտ, ցանկացած մաքուր տեղում։ Աղոթքը բաղկացած է խստորեն հաստատված աղոթքային ֆորմուլների, «Ղուրան»-ի սուրահի, այլ սուրահների հատվածներից ու մարմնի համապատասխան շարժումներ կատարելուց (ձեռքերի վեր բարձրացում, մինչև գոտին և գետին խոնարհվելը և այլն)։ Աղոթքին նախորդում է լվացումը, որը հիմնականում արտահայտվում է երեսը, ոտքերը մինչև կոճերը և ձեռքերը մինչև արմունկները մաքուր ջրով լվանալու մեջ կամ էլ մարմնի այդ մասերի սրբումը մաքուր ավազով, եթե հնարավոր չէ ջուր գտնել. թույլ է տրվում նաև լվացման իմիտացիա։

Այն բնակավայրերում, ուր մզկիթ կա, յուրաքանչյուր հերթական աղոթքից առաջ կարելի է լսել ազանը, այսինքն՝ աղոթքի կոչը։ Ազանը, որ բաղկացած է սովորույթով հաստատված մի քանի ֆրազներից, մինարեթից կամ այլ բարձրադիր վայրից արտասանում է մզկիթի հատուկ ծառայողը՝ մուեզինը կամ ազանչին։ 1932 թվականին թուրքական կառավարությունն արգելեց արաբերեն լեզվով ազան արտասանելը և պարտադրեց ազանն արտասանել միայն թուրքե-



րեն։ 1950 թվականին թուրքական պառլամենտը վերացրեց այդ արգելքը։

Ուրբաթ օրերին՝ շաբաթական տոներին, մզկիթներում տեղի են ունենում կեսօրյա ժամասացություններ. սովորաբար դրանք ավարտվում են քարոզներով։ Ուրբաթօրյա աղոթքների ժամանակ խորհուրդ է տրվում ներկա լինել յուրաքանչյուր չափահաս մահմեդականի (բացառություն է արվում այն անձանց նկատմամբ, ովքեր մզկիթից հեռու են ապրում կամ չունեն կանոնավոր շորեր ու կարգին կոշիկներ)։ Աշխատանքը և ցանկացած այլ զբաղմունքը ուրբաթ օրերին չի դիտվում իբրև մեղք։

Ռամազանի ընթացքում,— մահմեդական լուսնային տարվա իններորդ ամիսը,— մահմեդականները լուսաբացից մինչ մութն ընկնելը պաս են պահում։ Պասն արտահայտվում է ուտելիքներից, խմիչքներից, ծխելուց և այլն, բոլորովին հրաժարվելու մեջ։ Այն ամենը, ինչ արգելվում է ցերեկը, թույլատրվում է գիշերը։ Պաս պահելուց ազատվում են երեխաները, հիվանդները, հղի կանայք, կերակրող մայրերը և ճանապարհորդները։

Մահմեդականների պարտականություններից մեկն էլ հաջն է՝ Մեքքա և Մեդինա սուրբ քաղաքները ուխտի գնալը մահմեդական լուսնային տարվա վերջին, տասներկուերորդ ամսին (զու-էլ-հիջջեին)։ Հաջը պարտավոր է կատարել, թեկուզ կյանքում մեկ անգամ, յուրաքանչյուր առողջ, ապահովված մահմեդական։ Ուխտ կատարողը ձեռք է բերում պատվավոր հաջի (ուխտագնաց) տիտղոսը։ Ուխտագնացությունը Թուրքիայից Արաբիա, որ անհնար էր դարձել թուրքական տիրապետության դեմ 1916 թվականի արաբների ապստամբությունից հետո, վերսկսվեց 1926 թվականից։

Ավելի մատչելի է թուրքական սրբերի և ժողովրդական պատմական գործիչների գերեզման-դամբարանների (թյուրբեների) ուխտագնացությունը. այդ գործիչների պաշտամունքը վաղուց ի վեր տարածված է ժողովրդի մեջ։ Հանրապետության հռչակումից հետո շատ թյուրբեներ փակվեցին, որն, իհարկե, այդ պաշտամունքին վերջ չդրեց։ 1950 թվականից

դեմոկրատական կուսակցության կառավարության ժամանակաշրջանում թյուրբեներն սկսեցին բացվել այցելուների համար, ձևականորեն իբրև թանգարաններ և ճարտարապետական հուշարձաններ։

Թուրքական մահմեդականների ուխտագնացության ամենահայտնի վայրերն են՝ Աբու-Այյուբա Անսարիի (որը համարվում է արաբ մարգարե Մահմեդի ժամանակակից) թյուրբեն Ստամբուլում, Ոսկեղջյուրի ափին, Հաջի Բեկթաշի (իր անունը կրող դավանիչների միաբանության հիմնադիրը) թյուրբեն, Կիրշահիրից 60 կմ հարավ, էմիր Օսմանի (թուրքական սուլթանների դինաստիայի հիմնադիրը) թյուրբեն Բուրսայում։

Մահմեդական-սուննիթների ամենամեծ տոնը կուրբան-բայրամն է կամ բյույուք բայրամը, զու-էլ-հիջե ամսվա տասներորդ օրը։ Դա զոհաբերման տոնն է։

Յուրաքանչյուր մահմեդական այդ օրը պարտավոր է տնային որևէ անասուն մորթել, որի միսն օգտագործվում է ննջի համար։ Սովորաբար մորթում են ոչխար կամ խոյ։ Մատաղացու անասունի մարմնի ամենալավ մասերից մեկը և մորթին հավատացյալը տալիս է մոլլային, իսկ մնացած միսով պատրաստում է տոնական ճաշեր։ Ընդ որում, խորհուրդ է տրվում մատաղի մսի մի քանի կտոր բաժանել աղքատ մահմեդականներին կամ կերակրել որևէ ոչ ունևորի։

Շաքյար-բայրամ կամ քյուչյուկ-բայրամ տոնը, որ գալիս է շևալի 1-ին, ազդարարում է հյուծիչ մեկ ամսվա պասի ավարտը։ Հավատացյալները ձգտում են հնարավորության սահմաններում զանազան ուրախություններով իրենց փոխհատուցել պասի ծանր ու տխուր օրերի համար։

Մյուս տոները քիչ ժողովրդական են։ Նրանցից մեկը՝ մավլիդը, Մահմեդ մարգարեի ծննդյան օրն է (ռաբի ալ-ավվալի 11-ը և 12-ը) և միրաջը (ռաջաբի 27-ը), որը կապված է դեպի երկինք Մահմեդի ճանապարհորդության հրաշալի առասպելի հետ։ Բացի այդ, մուհարրեմի 10-ին նշվում է աշուրիայի օրը Կերբելիի տակ մղված մարտում Հյուսեինի (Ալի չորրորդ «արդարամիտ» խալիֆի որդու) զոհվելուն ի հի-



շատակ, իսկ ռամազանի 27-ը «կանխորոշման գիշերն» է (կադր). մահմեդական ավանդության համաձայն, այդ գիշեր տրվել էր Ղուրանը։ Գոյություն ունեն նաև մի քանի տոներ և տարեդարձներ, որոնք նշվում են միայն կրոնական հին ավանդությունները պահպանող հոգևորականության և առավել մոլեռանդ մահմեդականների կողմից։ Ընտանեկան տոն է համարվում այն օրը, երբ ընտանիքի հասունության հասած տղային թլպատում են։

Մահմեդական հոգևոր միաբանությունները կամ դերվիշների եղբայրությունները Օսմանյան կայսրությունում մեծ քաղաքական ազդեցություն և ոչ նվազ հասարակական նշանակություն ունեին։ Այդ միաբանությունների անդամները՝ դերվիշները (ճգնավորները), ապրում էին վանքերում (թեքքեներում) և ենթարկվում էին իրենց վանահայրերին ու հոգևոր ղեկավարներին։ Բացի այդ, շատ կային նաև թափառական դերվիշներ, որոնք աղքատության մեջ ապրում էին ողորմությամբ։ Նստակյաց դերվիշների գոյության նյութական հիմքն իրենց թեքքեներում հանդիսանում էր անշարժ ունեցվածքը (վակուֆները), որ նրանց էին նվիրաբերել սուլթանները և խոշոր հողատերերը։

1925 թվականի սեպտեմբերին Թուրքական կառավարությունը ցրեց մահմեդական բոլոր հոգևոր միաբանությունները, իսկ բոլոր թեքքեների ունեցվածքը բռնագրավվեց հօգուտ պետության։ Դրանից հետո դերվիշների կազմակերպությունները կարող էին գոյություն ունենալ միայն ոչ պաշտոնական ձևով։

Առավել ճանաչում է ստացել մևլևի դերվիշական միաբանությունը։ Նրա հիմնադրումը կապում են պոետ-միստիկ Ջելալեդդին Ռումիի (1207—1273) անվան հետ։ Այդ միաբանության կենտրոնական թեքքեն գտնվում էր Կոնիա քաղաքում։ Այստեղ էլ ապրում էին «պարող» կամ «պտտվող» դերվիշները, որոնք մեծաթիվ հանդիսականներ էին հավաքում։ Միաբանության ցրումից հետո մևլևիները կարող էին հավաքվել միայն գաղտնի։

Մյուս հեղինակավոր միաբանությունը՝ նաքշբանդիյան,

նույնպես ցրվեց 1925 թվականին, բայց նրա որոշ անդամներ շարունակում էին կրոնական պրոպագանդան։

Թիջանի միաբանության անդամները, միաբանություն, որն առաջացել է Հյուսիսային Աֆրիկայում XVIII դարի վերջերին, Թուրքիայում հայտնվեցին մի թունիսեցի վտարանդու գործունեության հետևանքով։ Թիջանիները հանդես էին գալիս լաիցիզմի[1] քաղաքականության դեմ, կրքոտությամբ ձգտում էին կրոնական պաշտամունքի մեջ արաբերեն լեզվի վերականգնմանը, պայքարում էին դպրոցներում կրոնական առարկաների դասավանդում մտցնելու համար։ Այսպես, 1949 թվականի փետրվարին այդ միաբանության երկու կողմնակիցներ թուրքական Մեջլիսի նիստի ժամանակ, գտնվելով ժողովրդի համար նախատեսված տեղերում, սկսեցին արաբերեն լեզվով բարձրաձայն արտասանել աղոթք։ Ցուցադրական ելույթներ տեղի ունեցան Անատոլիայի մի շարք մզկիթներում։

1950 թվականից, երբ իշխանության գլուխ կանգնեց դեմոկրատական կուսակցությունը, զգալիորեն աշխուժացավ կղերական ուժերի ռեակցիոն գործունեությունը։ 1951 թվականին տեղի ունեցան թիջանիների ելույթներ՝ ընդդեմ Աթաթուրքի հիշատակի հավերժացման, որին նրանք համարում էին լաիցիզմի քաղաքականության գլխավոր մեղավորը։ Այսպես, նույն թվականի փետրվարին այլանդակվեց Կիրշեհիրում դրված Աթաթուրքի մարմարե կիսանդրին։ Հունիսին ոմն Թիջանի փորձում էր ջարդել Աթաթուրքի արձանը Անկարայում։

Թուրքիայում պահպանվել են ծայրահեղ շիիթյան աղանդների՝ **ալի-իլահի** և **նուսայրիի** հետևորդները։ Շիիզմի հիմնական հոսանքի կողմնակիցներ Թուրքիայում գրեթե չկան։

Շիիթյան ալի-իլահի աղանդի հիմնական դավանանքն է՝ հավատը Ալիի՝ չորրորդ խալիֆի և շիիթյան առաջին իմամի աստվածայնությանը։ Ալիին համարելով «հավիտենական ճշմարտության» մարմնացումը, այդ աղանդավորականները

[1] Լաիցիզմ՝ թուրքական պետության աշխարհիկ բնույթի ընդունումը։



իրենք իրենց անվանում են ահլ-ի-հակկ՝ «ճշմարտության մարդիկ»։ Թուրքիայում նրանք հայտնի են նաև իբրև «ղզըլբաշներ»։ Երբեմն ղզըլբաշներին շփոթում են նուսայրիթների կամ ալավիթների հետ, որոնք իրականում կազմում են հատուկ աղանդ։

Երկարատև հետապնդումները, որոնց ենթարկվեց ալի-իլահիի աղանդը սուլթանական իշխանությունների և սուննիթյան հոգևորականության կողմից, հարկադրեցին նրան ստեղծել պարփակ և գաղտնի կազմակերպություն։ Այդ նույն պատճառով էլ այն իր հավատի ուսմունքի պրոպագանդա էր անում միայն գաղտնի և միանգամայն սահմանափակ չափերով։

Ալի-իլահի ուսմունքի մեջ Ալին հանդես է գալիս աստվածային հայտնության խորհուրդն արտահայտողի դերում։ Բոլոր մարգարեները (այդ թվում նաև Մահմեդը, Հիսուս Քրիստոսը և Մովսեսը) այդ հայտնագործությունը ստացել են Ալիի միջնորդությամբ։ Ալի-իլահի կրոնական պաշտամունքի մեջ շոշափելի է քրիստոնեության ազդեցությունը, և հնարավոր է, նաև ավելի վաղ, հին արևելյան կրոնների ազդեցությունը։ Օրինակ, աղանդավորականները ժամասացության ժամանակ ճաշակում են հաց ու գինի։

Թուրքիայում ալի-իլահիի հետևորդներ կան քրդերի և յուրյուկների (թյուրքալեզու քոչվորներ) մեջ։ Ալի-իլահիի աղանդում հաշվվում է մոտ մեկ միլիոն մարդ։ Նրա գերագույն ղեկավարը (չելեբը) ապրում է Հոբիարում (Սվազից 55 կմ հյուսիս-արևելք)։

Նուսայրիթների ուսմունքով Ալին, մարմնավորելով աստվածուն, մտնում է երրորդության կազմի մեջ Մահմեդի և Սալման ալ-Ֆարիսիի՝ Մահմեդի գործակիցներից մեկի հետ։ Նուսայրիթական երրորդության ուսմունքի մեջ երևում է հին հնդկական և քրիստոնեական կրոնական պատկերացումների ազդեցությունը։ Առավել ակնառու է զգացվում քրիստոնեության ազդեցությունը նուսայրիթների կրոնական պաշտամունքի մեջ։ Ժամասացության ժամանակ նուսայրիթները ճաշակում են հաց ու գինի և հատվածներ լսում աստվածա-

շնչից, որ կարդում է նրանց սրբազանը։ Նրանք տոնում են նաև մի քանի քրիստոնեական տոներ։

Նուսայրիթները միավորված են գաղտնի կազմակերպություններում, որոնք ձևավորվել են թուրքական իշխանությունների և մահմեդական հոգևորականության հետապնդման պայմաններում։ Իրենց ղեկավարներ և ուսուցանողներ հանդես են գալիս կազմակերպության «ձեռնադրված» անդամները, որոնք համարվում են, թե գիտեն հավատի ուսմունքի ճշմարտացի իմաստը։ Այդ արտոնյալ փոքրամասնության ներկայացուցիչները տիրապետող են շարքային նուսայրիթների վրա։

Նուսայրիթական աղանդի անդամներ են հանդիսանում գլխավորապես արաբները Կիլիկիայում և Խաթայ վիլայեթում։ Նրանց ընդհանուր թիվը Թուրքիայում 80 հազարից չի անցնում։

Քրիստոնյաները Թուրքիայում մոտ 200 հազար հոգի են։ Նրանք պատկանում են տարբեր եկեղեցիների՝ ուղղափառ, հայ գրիգոր-լուսավորչականներ, կաթոլիկներ, բողոքականներ, հակոբիտներ և ունիաթներ։

**Ուղղափառները** կազմում են ամենախոշոր կրոնական փոքրամասնությունը Թուրքիայում. նրանք մոտ 100 հազար հոգի են։ Ուղղափառություն դավանում են առավելապես հույները և բուլղարները։ Հունական ուղղափառ եկեղեցու գլուխ է կանգնած Կոնստանդնուպոլսյան «տիեզերական» պատրիարքը, որն ապրում է Ստամբուլում։ Հնուց եկող ավանդությամբ՝ պատրիարքը սերտ կապեր է պահպանում Հունաստանի հետ և վարում է հելլենոֆիլ քաղաքականություն։ Այդ կապակցությամբ 1921 թվականին փորձ կատարվեց Կայսերիում կազմակերպել թուրքական ուղղափառության պատրիարքարանի նման ինչ-որ մի բան, քեմալականների կողմնակից էֆտիմիոսի գլխավորությամբ։ Այդ փորձը հաջողություն չունեցավ։

**Հայ գրիգոր-լուսավորչականները** հանդիսանում են քրիստոնեական հատուկ եկեղեցու անդամներ, եկեղեցի, որը ծագել է Հայաստանում մ. թ. IV դարում։ Նրա գլուխ է կանգնած



Ամենայն հայոց կաթողիկոսը (նրա աթոռանիստը էջմիածնումն է, Երևանից 18 կմ-ի վրա)։

Թուրքիայում 60 հազար հայ գրիգոր-լուսավորչականներ կան։ Նրանք ենթակա են երեք պատրիարքների, որոնք ապրում են Ստամբուլում, Սիսում և Աղթամարում։ Այդ պատրիարքներն ընդունում են էջմիածնի կաթողիկոսի գերագույն իշխանությունը։ Հայ գրիգոր-լուսավորչականությունը մեկն է մոնոֆիզիտ եկեղեցիներից, որոնք ուղղափառ եկեղեցուց տարբերվում են Հիսուս Քրիստոսի մասին ուսմունքի հարցում։ Մոնոֆիզիտներն ընդունում են նրան միայն որպես աստվածային էակ, իսկ ուղղափառները հավատում են նրան իբրև աստված-մարդու։ Գրիգոր-լուսավորչականների պաշտամունքի և ծեսերի մեջ նշանակալի տարբերություններ չկան ուղղափառ եկեղեցուց։ Հայ գրիգոր-լուսավորչականների ժամասացության սուրբ գրքերը գրված են հայերեն լեզվով։ Այդ լեզվով էլ նրանք կատարում են ժամասացությունը։

**Կաթոլիկներ** հիմնականում հանդիպում են հայերի մեջ, ինչպես նաև լևանտինցիների մոտ։ Թուրքիայում մոտավորապես 30 հազար կաթոլիկներ կան, նրանցից 11 հազարից ավելին հայեր են։

**Բողոքականների**, այսինքն՝ լյութերական և մի քանի այլ բողոքական եկեղեցիների, ինչպես նաև զանազան աղանդների անդամների թվին են պատկանում առավելապես եվրոպացիները, ամերիկացիները և մասամբ էլ լևանտինցիները։ Նրանց թիվը 5 հազարից ավելի է։

**Ունիաթները** քրիստոնյաներ են, որոնք ընդունում են Հռոմի պապի գերագույն իշխանությունը, բայց կազմում են հատուկ եկեղեցի իրենց պաշտամունքով և ծեսերով։ Ունիաթները գերազանցապես հույներ են։ Նրանց ընդհանուր թիվը մոտ 5 հազար է։

**Հակոբիտները կամ սիրիո-հակոբիտները** հատուկ մոնոֆիզիտ եկեղեցի են կազմում, որի գլուխ կանգնած է պատրիարքը. նրա աթոռանիստը Մարդին քաղաքում է։ Հակոբիտների մեծ մասն ապրում է Իրաքում և Սիրիայում։ Թուր-

քիայում նրանց կարելի է հանդիպել Դիարբեքիրի և Ուրֆայի բնակչության մեջ։

Կրոնական մյուս փոքրամասնություններից Թուրքիայում հիշատակության են արժանի հուդայականները և եզիդները։

Հուդայականները կամ խարայզականները (միայն տեղական հրեաները) հատուկ կրոնական համայնք են կազմում, որի գլուխ է կանգնած գլխավոր ռաբբին, որն ապրում է Ստամբուլում։ Թուրքական հրեաների ճնշող մեծամասնությունը պատկանում է հուդայականության հիմնական, օրթոդոքս ուղղությանը։ Թորայից և հին կտակարանի այլ մասերից բացի, իրենց սուրբ գրքի հետ միասին նրանք ընդունում են նաև Թալմուդը, նշում իրենց ավանդական կրոնական տոները և պահում պասերը. կրոնական պաշտամունքը կատարում են սինագոգներում։ Օրթոդոքս հուդայականներից բացի կան աննշան թվով կարաիմների և ուրիշ այլ հուդայական աղանդներ։

Հուդայականների ընդհանուր թիվը Թուրքիայում մոտավորապես 60 հազար է։ Նրանցից մոտ 34 հազարը բնակվում է Ստամբուլում և նրա ծայրամասերում, մնացածները՝ Արևելյան Թուրքիայի այլ բնակավայրերում, ինչպես նաև Իզմիրում և Բուրսայում։

**Եզիդները** (նրանց անվանում են սատանայի երկրպագուներ) կազմում են չափազանց պարփակված կրոնական կազմակերպություն, որի անդամները ձգտում են գաղտնի պահել իրենց հավատը։ Եզիդների կրոնը ծագում է հին իրանական հավատից, ինչպես նաև պարունակում է քրիստոնեության և իսլամի ազդեցության հետքեր։ Սատանայի պաշտամունքին, որին մեծարում են սիրամարգի տեսքով, եզիդները միացնում են արևի պաշտամունքը։ Ունենալով իրենց սուրբ գրքերը, նրանք Բիբլիան և Ղուրանը նույնպես ընդունում են իբրև սուրբ գրքեր, իսկ Հիսուս Քրիստոսին համարում են աստված։

Եզիդների գլխավոր սրբատեղին, որտեղ նրանք ուխտագնացության են գալիս, գտնվում է Մոսուլի շրջանում, Իրաքում։ Եզիդների կրոնը տարածված է առավելապես քրդերի մեջ։ Եզիդների ընդհանուր թիվը Թուրքիայում մոտ 43 հազար է։

# ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թուրքիան կապիտալիստական երկիր է, սակայն գյուղում բավականին ակնառու կերպով երևում են ֆեոդալիզմի մնացուկները։

Մինչև հանրապետության հռչակելը Թուրքիան արևմտյան տերությունների կիսագաղութն էր. արտասահմանյան բանկին (օսմանյան) էր պատկանում էմիսիայի մենաշնորհային իրավունքը. օտարերկրյա ընկերությունների ձեռքում էին գտնվում լեռնարդյունահանման և վերամշակման արդյունաբերությունը, կոմունալ ձեռնարկությունները, ֆինանսները, երկաթուղային տրանսպորտը, ափամերձ նավագնացությունը, նավահանգիստները։ Երկիրը խճճված էր ստրկական պայմանների փոխառություններով։ Օսմանյան կայսրության տերիտորիայի վրա մի շարք արևմտյան տերությունների հպատակներ օգտվում էին կապիտուլյացիայի իրավունքներից, որը նրանց ազատում էր թուրքական օրենսդրությունից, հարկերից և այլն. դա օտարերկրացիներին արտոնյալ վիճակի մեջ էր դնում թուրքական ձեռնարկատերերի համեմատությամբ։

Սակայն գյուղատնտեսության ասպարեզում դրությունն այլ էր, քանի որ Օսմանյան կայսրության օրենսդրությամբ օտարերկրացիները կարող էին հողային սեփականություն ունենալ միայն մի պայմանով, եթե նրանք ենթարկվեին թուրքական օրենսդրությանը և նրանց վրա չտարածվեին կապիտուլյացիայի օրենքները։ Այդ պատճառով էլ գրեթե ողջ հողը թուրքերի ձեռքում էր, ընդ որում տիրապետում էր խո-

շոր հողատիրությունը, որը զուգորդվում էր մանր գյուղացիական հողօգտագործման հետ։

Լոզանի հաշտության պայմանագրով, 1923 թվականին Թուրքիան հասավ կապիտուլյացիաների վերացմանը։ Սակայն կոնցեսիոն պայմանագրերը, ինչպես նաև փոխառությունները, որ կնքվել էին մինչև 1914 թվականը սուլթանական կառավարության կողմից, մնացին ուժի մեջ։

Մոտավորապես 15 տարվա ընթացքում (1923—1938 թթ.) հանրապետության կառավարությունը ետ գնեց գրեթե բոլոր օտարերկրյա ձեռնարկությունները, երկաթուղիները, կառամատույցներն ու դոկերը, իրեն վերապահելով թղթադրամների թողարկման մենաշնորհային իրավունքը։ Արդյունքն այն եղավ, որ երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին օտարերկրյա կապիտալի դիրքերը զգալիորեն թուլացան։ 1944 թվականին լրիվ մարվեց օսմանյան պարտքը, որի գոյացման սկիզբը դրվել էր 1854 թվականից։

Թուրքիայի տնտեսական ընդհանուր հետամնացությունը, արդյունաբերական ապրանքների արտադրության փոքր ծավալը, կախվածությունը ներմուծումից, ներքին շուկայի նեղությունը, ռազմական կարիքները պայմանավորեցին պետական կապիտալի ակտիվ մասնակցությունը տնտեսության կարևոր ճյուղերի ստեղծմանը, երկաթուղիների, նավահանգիստների, արդյունաբերական ձեռնարկությունների կառուցմանը, ազգային բանկերի և ապահովագրական ընկերությունների հիմնադրմանը։ Պետական կապիտալիզմի այդ քաղաքականությունը, որը էտատիզմ[1] անունն է ստացել, մեծ դեր խաղաց Թուրքիայի տնտեսական դրության ամրապնդման գործում։ Թուրքիայում կապիտալիզմի թուլության պայմաններում, պետության անմիջական մասնակցությունը արդյունաբերության, բանկերի, տրանսպորտի ստեղծմանը արագացնում էր երկրի տնտեսական զարգացումը։ Պետությունը կարծես թե հանդես էր գալիս կուտակման պրոցեսն

[1] Ֆրանսերեն état — պետություն բառից. Թուրքերեն՝ դևլեթչիլիկ։



արագացնողի դերում։ Էտատիստական քաղաքականության կիրառումը թուրքական բուրժուազիային ազատում էր միջոցների ներդրումից տնտեսության այնպիսի բնագավառներում, որոնք սկզբնական շրջանում բարձր շահույթներ չէին խոստանում և, դրա հետ մեկտեղ, պահանջում էին կապիտալի երկարաժամկետ մեռցնում։

Պետական կապիտալիզմի հատկանշական գիծը Թուրքիայում այն է, որ ծնվել և զարգացել էր այնպիսի մի երկրում, որը անկախություն էր հասել իմպերիալիզմի դարաշրջանում, կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի առաջին էտապում և ուղղված էր տնտեսական ու քաղաքական անկախության ամրապնդմանը։ Հետպատերազմյան տարիներին նկատվում էր, գլխավորապես ամերիկյան մոնոպոլիաների և տեղական բուրժուազիայի որոշակի շրջանների ճնշման տակ, էտատիստական քաղաքականության թուլացում, մասնավոր կապիտալի դերի ուժեղացում։ Սակայն պետությունը շարունակում է խաղալ չափազանց կարևոր դեր երկրի տնտեսական կյանքում, և դա Թուրքիայում կապիտալիզմի զարգացման հիմնական առանձնահատկությունն է։

Երկրի տնտեսության մեջ պետական-կապիտալիստական սեկտորի նշանակության մասին են վկայում հետևյալ տվյալները։ 1960 թվականի հունվարի 1-ի դրությամբ պետական տնտեսական կազմակերպությունները իրենց բալանսում ունեին 11 մլրդ լիրա հիմնական և 25,8 մլրդ շրջանառու կապիտալ։ Պետության այլ միջոցների հետ միասին էտատիստական սեկտորի ունեցվածքի արժեքը գնահատվում էր 50 մլրդ լիրա։ Այդ նույն ժամանակ մասնավոր սեկտորի կապիտալը գնահատվում էր միայն 10 մլրդ լիրա։

Պետության ձեռքում են գտնվում ամբողջ երկաթուղային տրանսպորտը, կապի միջոցները, ծովային տրանսպորտի կեսից ավելին, բանկերի վճարված կապիտալների և ռեզերվների մինչև 75 տոկոսը, բանկային բոլոր ավանդների (դեպոզիտների) 40 տոկոսը։ Վերամշակող արդյունաբերության բանվորների 698 հազար ընդհանուր թվից պետական սեկտորում աշխատում է 22 տոկոսը, բայց այնտեղ թողարկվել

է արդյունաբերության արտադրանքի (ըստ արժեքի) մոտ 49 տոկոսը։ Լեռնարդյունաբերության մեջ պետության դերն է՛լ ավելի մեծ է՝ ամբողջ արտադրանքի 75 տոկոսը։

Պետությանն են պատկանում ամենախոշոր ֆաբրիկաները ու գործարանները, հանքահորերն ու հանքավայրերը։ Այն ժամանակ, երբ 10-ից ավելի բանվոր ունեցող մասնավոր ձեռնարկություններում միջին հաշվով 67 բանվոր կա, պետական ձեռնարկություններում միջին թվով աշխատում է 575 մարդ։ Պաշտոնական տվյալների համաձայն, պետական սեկտորի 220 ձեռնարկություններում թողարկվում է այնքան արտադրանք (ըստ արժեքի), որքան 2 200 մասնավոր խոշոր ձեռնարկություններում։

Լուրջ, չնայած ոչ վճռական, դեր է խաղում պետությունը նաև գյուղատնտեսության ասպարեզում։ 1963 թվականին նրան էին պատկանում 23 կալվածք 321 հազար հեկտար մշակովի հողատարածությամբ, անտառները, ոռոգման կայանները և անասնացեղի բարելավման կետերը։ Պետության ձեռքին է գտնվում գյուղատնտեսության վարկավորումը (գյուղատնտեսական բանկի և նրա հետ կապված վարկավորման կոոպերացիայի սիստեմի միջոցով)։ Գյուղատնտեսական մթերքների պետական վարչության միջոցով է կատարվում գյուղատնտեսական մթերքների գների, գնումների, արտահանության ու ներմուծման կարգավորումը։ Պետությունը մասնակցում է զանազան ձեռնարկումների՝ գյուղատնտեսական մեքենաների ու սարքերի, ինչպես նաև քիմիկատների արտադրության ասպարեզում։ Վերջապես, այն առաջատար դեր է խաղում ոռոգիչ և մելիորատիվ կառուցվածքների շինարարության մեջ։

Կարևոր դիրքեր է զբաղեցնում պետական սեկտորը նաև երկրի առևտրական կյանքում։ Գյուղատնտեսական մթերքների վարչությունից բացի առևտրի ոլորտներում գործում են նաև պետական Սումերբանկի ենթակայության տակ գտնվող բամբակի մաքրման և գնման վարչությունն ու գնման և իրացման վարչությունը, որոնք կառավարության անունից իրականացնում են զանազան հումքերի գնումը, այդ բանկի ձեռնարկությունների թողարկած ապրանքների մեծածախ և մանրածախ վաճառքը։ Մեկ այլ պետական բանկի՝ Էթիբանկի վերահսկողության տակ է գտնվում ածուխի վաճառքի վարչությունը։ Պետության ձեռքում է գտնվում նաև գյուղատնտեսական մեքենաների, ծխախոտի, ոգելից խմիչքների, վառոդի, շաքարի, թեյի իրացումը, անասունների և ձկան գնումը, ձկնամթերքների և մսամթերքների թողարկումն ու վաճառքը։



Վերջապես, պետական սեկտորը տիրապետում է ֆինանսական գործունեության ոլորտում, որտեղ, համաձայն պետական պլանային կազմակերպության տվյալների, նրա միջոցով է իրականացվում բոլոր գործարքների 60 տոկոսը։

Եվ, այնուամենայնիվ, սխալ կլիներ թերագնահատել մասնավոր ձեռնարկատիրության դերը և այն էլ՝ ոչ միայն գյուղատնտեսության բնագավառում, որտեղ այն գերիշխող տեղ է գրավում, այլև տնտեսական գործունեության մյուս բնագավառներում։ Այսպես, եթե 1950 թվականին մասնավոր սեկտորի բաժինը կազմում էր թողարկված արդյունաբերական արտադրանքի արժեքի 42 տոկոսը, ապա 1961 թվականին այն բարձրացավ մինչև 51 տոկոսի։ Բանն այն է, որ պետությունը ոչ միայն չի կպչում մասնավոր ձեռնարկության շահերին, այլև ամեն կերպ աջակցում է նրան։ Եթե մինչև պատերազմը պետական բանկերը չէին մասնակցում մասնավոր ձեռնարկությունների ֆինանսավորմանը, ապա ներկայումս նրանք հաճույքով միավորվում են մասնավոր կապիտալի հետ։ Որոշ տվյալների համաձայն, պետության ընդհանուր ներդրումները խառը ընկերությունների մեջ անցնում է 2 միլիարդ լիրայից։

Ետպատերազմյան տարիներին, ի տարբերություն նախապատերազմյան ժամանակաշրջանի, ուժեղացել են օտարերկրյա կապիտալի դիրքերը, կապիտալ, որը երկիր է ներթափանցում «օգնության», «նվիրատվության», վարկերի, փոխառությունների, ինչպես նաև մասնավոր ներդրումների (ճիշտ է, զգալիորեն պակաս աստիճանով) ձևով։

«Տրումենի դոկտրինան», «Մարշալի պլանը» և մյուս

համաձայնագրերն ԱՄՆ-ի հետ հանդիսացան այն ուղիները, որոնցով Թուրքիա ներխուժեց դոլարային օժանդակությունը։ Սկսած 1947 թվականից մինչև 1963 թվականը ամերիկյան «օգնությունը» Թուրքիային փոխառությունների, վարկերի և «նվիրատվությունների» միջոցով կազմել է 4 352 միլիոն դոլար, որից 2 488 միլիոնը (57 տոկոսից ավելին) իրենցից ներկայացնում էին սպառազինության, ամունիցիայի և հանդերձանքի ձևով 500 հազարանոց բանակին տրվող զուտ ռազմական հատուցումներ։ Մնացած 1 864 միլիոն դոլարը հանդիսացել է տնտեսական օգնություն։ 1963 թվականի հուլիսի 1-ի տվյալներով այդ գումարը բաշխվել է հետևյալ կերպ. «նվիրատվություններ»՝ 886,8 միլիոն դոլար, վարկեր՝ 155 միլիոն, տեխնիկական համագործակցություն՝ 44,7 միլիոն, գյուղատնտեսական մթերքների հատկացում՝ 548,4 միլիոն, զարգացման փոխառության ֆոնդ՝ 212,1 միլիոն, այլ՝ 17 միլիոն դոլար։

Այն գումարները, որոնք ստացվում են իբրև «նվիրատվություններ» և գյուղատնտեսական «օգնություն» Թուրքիային տրված ամերիկյան ապրանքների իրացումից, չեն կոնվերտացվում վալյուտայի, այլ թուրքական լիրաներով մտցվում են հատուկ հաշվի մեջ (այսպես կոչված էկվիվալենտային ֆոնդը), որը գտնվում է ամերիկյան տնտեսական համագործակցության վարչության տրամադրության տակ. վերջինս դրանք այս կամ այն նպատակների (և ժամկետներով) վրա ծախսում է իր հայեցողությամբ։ Այդ հաշիվը բացելուց մինչև 1964 թվականի հունվարի 1-ը ռազմական կարիքների համար թուրքական կառավարությանն է հանձնվել ընդամենը 2 957 միլիոն լիրա, պետական սեկտորին՝ 1 269 միլիոն լիրա, մասնավոր սեկտորին՝ 272 միլիոն լիրա (այդ թվում՝ արդյունաբերական բանկի զարգացման գծով՝ 240 միլիոն), իսկ ընդամենը՝ 4 498 միլիոն լիրա։

Ամերիկյան մոնոպոլիաները «օգնություն» ցույց տալու ճանապարհով վերահսկում են երկրի քաղաքական և տնտեսական կյանքը, պահանջելով, մասնավորապես, Թուրքական գյուղերում հսկայական հատկացումներ կատարել ՆԱՏՕ-ին ենթակա բանակի պահպանման վրա։



Օտարերկրյա, առաջին հերթին ամերիկյան, մոնոպոլիաների ճնշման տակ թուրքական կառավարությունը 1951—1954 թվականներին հրատարակեց օրենքներ, որոնք ուղղված էին օտարերկրյա կապիտալի գործունեության խրախուսմանը, այդ թվում՝ նավթահանքերի հետախուզման և շահագործման պետական մենաշնորհը վերացնող և այդ բնագավառը օտարերկրյա կապիտալի մուտքը թույլատրող օրենքը։ 1957 թվականին և 1962 թվականին համաձայնագրեր կնքվեցին ԱՄՆ-ի և ԳՖՀ-ի հետ այդ երկրների մասնավոր ներդրողներին արտոնություններ և երաշխիքներ շնորհելու մասին։

1964 թվականի հունվարի 1-ի տվյալներով օտարերկրյա կապիտալիստներին թույլ է տրվել թուրքական տնտեսության մեջ ներդնել 1 126 միլիոն լիրա։ Բայց այդ գումարից փաստորեն ներդրվել է միայն 280 միլիոն լիրան, այսինքն մոտավորապես 25 տոկոսը։ Ընդհանրապես օտարերկրյա ներդրումները արդյունաբերության մեջ տնտեսության այդ ճյուղի բոլոր կապիտալ ներդրումների 2 տոկոսից չեն անցնում։ Ամերիկյան մոնոպոլիաների ներդրումները 1963 թվականի վերջին կազմեցին 107 միլիոն դոլար։

Արևմտյան մոնոպոլիաները ձեռնպահ են մնում Թուրքիայի բացահայտորեն ոչ կայուն տնտեսության մեջ ներդրումներից. այդ տնտեսությունը հսկայական վալյուտային դժվարություններ է կրում, որը խոչընդոտում է ոչ միայն շահույթն արտասահման փոխադրելուն, այլև անհրաժեշտ գույք գնելուն։ Թուրքիայում կատարվող ներդրումների նկատմամբ օտարերկրյա մասնավոր կապիտալի ունեցած զուսպ վերաբերմունքի մեջ ոչ փոքր դեր է խաղում նաև երկրի քաղաքական իրադրությունը։

Միաժամանակ, տնտեսության առանձին ճյուղերում, որտեղ շահույթն առավելապես բարձր է ապահովված, օտարերկրյա կապիտալին է պատկանում վերևում նշված 2 տոկոսից զգալիորեն ավելին։ Առաջին հերթին դա վերա-

բերում է նավթի վերամշակմանը, ներմուծմանը, արտահանմանը և պահպանմանը, որոնք գրված են «Բրիտիշ պետրոլիում», «Շելլ», «Սոքոնի Մոբիլ-օյլ», «Քալտեքս» նավթային խոշորագույն կոնցեռնների վերահսկողության տակ։ Այդ ընկերությունները Թուրքիայի տերիտորիայում կառուցել են երկու խոշոր նավթավերամշակման գործարան և, օգտագործելով տեղական օրենսդրությունը, խեղդում են Թուրքիայի երիտասարդ նավթային արդյունաբերությունը։

Օտարերկրյա մոնոպոլիաները վերահսկում են տրակտորի հավաքման և ավտոհավաքման գործարանները, բոլոր երեք ավտոդողերի գործարանները, կառուցում են մետալուրգիական կոմբինատ, քիմիկո-դեղորայքների արդյունաբերության մի շարք ձեռնարկություններ։

Թուրքիայի տնտեսական զարգացման տենդենցը պարզելու համար նպատակահարմար է կանգ առնել այնպիսի ընդհանրացված ցուցանիշի վրա, ինչպիսին ազգային եկամուտն է (աղյուսակ 2)։

Աղյուսակ 2

Թուրքիայի ազգային եկամտի դինամիկան
(1938 թ.—100)

| Ցուցանիշները | 1927թ. | 1938թ. | 1945թ. | 1950թ. | 1961թ. |
|---|---|---|---|---|---|
| Ընդհանուր ծավալի ինդեքսը | 53 | 100 | 77 | 121 | 226 |
| Բնակչության մեկ շնչին ընկնող եկամտի ինդեքսը | 67 | 100 | 69 | 101 | 125 |

Չնայած 1961 թվականին 1927 թվականի համեմատությամբ ազգային եկամուտը աճել է ավելի քան չորս անգամ, բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտն այդ նույն ժամանակամիջոցում ավելացել է երկու անգամից էլ պակաս։ Իսկ եթե ելակետ վերցնենք 1938 թվականի ցուցանիշները, ապա 1961 թվականին, այսինքն՝ մոտավորապես քառորդ



դար հետո, բնակչության մեկ շնչին ընկնող ռեալ եկամուտն ավելացել է միայն 25 տոկոսով։ Թուրքիան բնակչության մեկ շնչին ընկնող ազգային եկամտով մնում է շատ ցածր մակարդակ ունեցող երկիր. օրինակ, 1960 թվականին ազգային եկամուտը կազմել է 198 դոլլար, այն ժամանակ, երբ Հունաստանում այն հավասար է եղել 341 դոլլարի, Իտալիայում՝ 545, Ֆրանսիայում՝ 1148, Անգլիայում՝ 1276, Շվեյցարիայում՝ 1460 դոլլարի[1]։

Տնտեսական զարգացման տենդենցներին ծանոթանալու համար անհրաժեշտ է նաև ուսումնասիրել ազգային եկամտի աղբյուրները և նրանց աստիճանական զարգացումը հանրապետության տարիներին (աղյուսակ 3)։

Աղյուսակ 3

Թուրքիայի ազգային եկամտի աղբյուրները,
արժեքի տոկոսը

| Բնագավառները | 1927թ. | 1938թ. | 1948թ. | 1961թ. | 1963թ. |
|---|---|---|---|---|---|
| Գյուղատնտեսություն | 67 | 47,5 | 53,2 | 40,8 | 40,2 |
| Արդյունաբերություն | 10 | 12,5 | 10,4 | 17,3 | 17,7 |
| Շինարարություն | — | 0,4 | 0,3 | 5,6 | 5,6 |
| Առևտուր | — | 10,0 | 10,9 | 9,1 | 9,3 |
| Տրանսպորտ | — | 5,9 | 4,6 | 6,8 | 6,8 |
| Այլ | 23 | 23,7 | 20,6 | 20,4 | 20,4 |

Բերված տվյալները ցույց են տալիս, որ 1927 թվականի համեմատությամբ, երբ գյուղատնտեսության եկամուտները կազմում էին 67 տոկոսը, իսկ արդյունաբերությանը՝ միայն 10 տոկոսը, ազգային եկամտում տեղի է ունեցել արդյունաբերության բաժնի չուրջ ավելացում և նվազել է գյու-

[1] Չնայած, ինչպես և զարգացած կապիտալիստական երկրում, ազգային եկամտի մասին տվյալները բացահայտորեն բարձրացված են և մեթոդոլոգիական տեսակետից սխալ, որովհետև նրանց մեջ են մտցվում մի շարք կրկնվող հոդվածներ (ծառայությունների արժեքը և այլն), սակայն տարիների վերաբերյալ հրապարակվող տվյալները միանգամայն համադրելի են իրար նկատմամբ։

ղատնտեսության տեսակարար կշիռը։ Այդ փոփոխությունները ավելի ակնառու կդառնան, եթե գյուղատնտեսության, արդյունաբերության ու շինարարության հարաբերությունը արտահայտենք ընդհանուր պրոդուկտով (աղյուսակ 4)։

Աղյուսակ 4

Թուրքական տնտեսության հիմնական ճյուղերի արտադրանքի արժեքը
(ընթացիկ գներով)

| Բնագավառները | 1938 թ. | | 1948 թ. | | 1961 թ. | | 1962 թ. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | միլիոն լիրա | տոկոս | միլիոն լիրա | տոկոս | միլիոն լիրա | տոկոս | միլիոն լիրա | տոկոս |
| Գյուղատնտեսություն | 775,0 | 73,5 | 4691,4 | 79,5 | 19052 | 65,5 | 22045 | 65,5 |
| Արդյունաբերություն | 204,4 | 19,2 | 926,3 | 15,7 | 7525 | 25,0 | 8399 | 25,3 |
| Շինարարություն | 76,7 | 7,3 | 280,3 | 4,8 | 2866 | 9,5 | 3087 | 9,2 |
| Ընդամենը | 1056,1 | 100,0 | 5898,0 | 100,0 | 29443 | 100,0 | 35531 | 100,0 |

Այսպիսով, առկա են կառուցվածքային անվերապահ տեղաշարժերը։ Եվ չնայած Թուրքիան շարունակում է մնալ ագրարային երկիր, նրա ագրարային-ինդուստրիալ դառնալու տենդենցը երևում է հստակորեն։ Դա տեղի է ունենում այն պատճառով, որ արդյունաբերության զարգացման տեմպերը փոքր-ինչ առաջ են անցնում գյուղատնտեսության զարգացման տեմպերից։ Օրինակ, գյուղատնտեսական արտադրանքի ծավալը 1962 թվականին, 1948—1952 թվականների համեմատությամբ, աճել է 1,7 անգամ, իսկ արդյունաբերությանը՝ 2,8 անգամ։

Թուրքական կառավարության տնտեսական քաղաքականությունը իր կենտրոնացված արտահայտությունն ստացավ տնտեսական զարգացման 1963—1967 թվականների



հնգամյա պլանում, որը նախատեսում է ամենամյա կապիտալ ներդրումներ ազգային համախառն արտադրանքի 15 տոկոսի ծավալով (1950—1960 թվականների 12 տոկոսի դիմաց) և այդ հիմքի վրա ազգային եկամտի տարեկան 7 տոկոս աճի ապահովում (այդ թվում վերամշակող արդյունաբերությունը՝ 11,5 տոկոսով, լեռնահանքայինը՝ 8,7 և գյուղատնտեսությունը՝ 4,7 տոկոսով)։ Սակայն 1963 և 1964 թվականների համար պլանավորված զարգացման տեմպերին չհասան։ Հիմնական պատճառը ֆինանսական միջոցների պակասն էր։

Թուրքիայի ծանր ֆինանսական դրությունը հարկադրեց մի շարք արևմտյան տերությունների 1962 թվականին կազմակերպել կոնսորցիում Թուրքիային օգնություն ցույց տալու համար. նրա մեջ մտան 13 պետություններ՝ ԱՄՆ-ը, Անգլիան, Կանադան, ընդհանուր շուկայի վեց երկրները, Ճապոնիան, Շվեյցարիան, Ավստրիան և Նորվեգիան։ Այն դեպքում, երբ Թուրքիան շահագրգռված է նախ և առաջ իր տնտեսությունը զարգացնելու համար միջոցներ ստանալ, կոնսորցիումն այլ նպատակներ է հետապնդում։ Կոնսորցիումի մասնակից երկրները, ծանոթանալով հնգամյա պլանի հետ, չափազանց պարզորոշ կերպով նշեցին, որ Թուրքիան միջոցներ կստանա միայն այն բանից հետո, երբ կոնսորցիումը համաձայնություն կտա այս կամ այն բնագավառի կամ օբյեկտի մեջ կատարվելիք ներդրումներ։ Միաժամանակ կոնսորցիումը նշեց օտարերկրյա կապիտալ ներդրումների մասին օրենքի փոփոխության անհրաժեշտությունը՝ օտարերկրյա մասնավոր կապիտալին նոր արտոնություններ և առավելություններ տալու իմաստով։ Դրա հետ մեկտեղ կոնսորցիումը պահանջեց, որպեսզի տրամադրվող գումարներն առաջին հերթին ուղղվեն արտաքին պարտքերի և դրանց տոկոսների մարմանը, որպեսզի Թուրքիան երկիր թողնի կոնսորցիումի մասնակիցներից կազմված հանձնաժողով՝ տրվող միջոցների ծախսին հետևելու համար։ Այս բոլորը խիստ հիշեցնում են կապիտուլյացիաների ժամանակները։

Ամբողջությամբ վերցրած, Թուրքիայի տնտեսության զարգացումը հետպատերազմյան տարիներին փոքր-ինչ արագացել է։ Սակայն զարգացման տեմպերն այնքան բարձր չեն, որպեսզի նշանակալիորեն կրճատեն Թուրքիայի և Արևմուտքի կապիտալիստական երկրների մակարդակների միջև եղած ճեղքվածքը։

## ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

*Ագրարային հարաբերությունները*։ Ագրարային հարցի կարևորությունը Թուրքիայում որոշվում է գյուղացիության դերով, որը կազմում է բնակչության մեծամասնությունը (մոտ 68 տոկոսը) և ստեղծում է ազգային արդյունքի հիմնական մասը։

Թուրքիայում հավաստի տվյալներ չկան երկրի հողային ֆոնդի ըստ սեփականատերերի կատեգորիաների բաշխման մասին։ 1950 թվականի գյուղատնտեսական հաշվառումը և 1952 թվականի հողօգտագործման պայմանների մասին անկետային ուսումնասիրությունը ընդգրկեցին միայն մշակովի հողերը (վարելահողեր, ցել, խաղողի և պտղատու այգիներ)։ 1952 թվականից հետո մշակովի հողատարածությունները աճեցին 30 տոկոսով, ավելացավ նաև հողագործական տնտեսությունների թիվը։ Հետևաբար, այդ նյութերը խիստ հնացած են։

Միաժամանակ, բազմաթիվ անուղղակի ցուցանիշներ հնարավորություն են տալիս ի հայտ բերել Թուրքիայի հողատիրության բավականին ճիշտ պատկերը։

1962 թվականի ագրարային ռեֆորմի պրեամբուլայում հայտնվում էր, օրինակ, որ խոշոր սեփականատերերը (գյուղական բնակչության 9 տոկոսը) զավթել են մշակովի հողերի ավելի քան 50 տոկոսը, իսկ կիսապրոլետար-գյուղացիներին և մանր սեփականատերերին (62 տոկոս) բաժին է մնացել միայն հողային տարածությունների 18 տոկոսը։ Գյուղական մնացած ընտանիքների (միջին և կուլա-



կային խավերը) 29 տոկոսի ձեռքում գտնվում է երկրի մշակովի հողային ֆոնդի 32 տոկոսը։

Ինչպես և նախկինում, լավագույն հողերի մեծ մասը պատկանում է կալվածատերերին։ Որոշ տվյալների համաձայն, նրանց ձեռքում կենտրոնացած է մշակովի հողային տարածությունների երկու հինգերորդից ավելին։ Բացի այդ, կալվածատերերին են պատկանում խոպան, խամ հողերի, արոտավայրերի և այլ հողատարածությունների հսկայական հողակտորներ։

Խոշոր հողատիրությանը հարում են կուլակային տնտեսությունները։ Նրանց է պատկանում բոլոր մշակովի հողատարածությունների մոտավորապես մեկ քառորդը։

Գյուղացիական հողատիրությունը, որը զբաղեցնում է մշակովի հողատարածությունների մեկ երրորդից էլ պակաս, բաղկացած է հազարավոր մանր հողակտորներից (պարցելներից)։ 1962 թվականի «Թուրքական ամենամյա տեղեկատուի» բերած տվյալների համաձայն 3 միլիոն գյուղացիական տնտեսություններից կես միլիոնը չուներ ոչ մի թիզ հող, իսկ 1 077 հազար գյուղացիական ընտանիքներ ունեին 0,1-ից մինչև 3 հեկտար հողակտորներ։ Այդ գյուղացիները, որ կազմում են թուրքական գյուղի բնակչության 35,9 տոկոսը, սեփականատիրական իրավունքով ունեն զբաղեցրած հողի միայն 8 տոկոսը։

Մասնավոր հողատիրությունը ժամանակակից թուրքական գյուղում հետևյալ պատկերն է ներկայացնում (աղյուսակ 5)։

Թվերը վկայում են, որ աշխատավոր գյուղացիության 2 095 հազար ընտանիքների (գյուղական չքավորությունը և միջակները) կամ գյուղական բնակչության 69,8 տոկոսին պատկանում է սեփականատիրական հողի 28 տոկոսը, իսկ 405 հազար կալվածատերերի և կուլակների, այսինքն՝ բոլոր տնտեսությունների 13,5 տոկոսին, իբրև սեփականություն պատկանում է երկրի հողային ֆոնդի 72 տոկոսը։ գյուղացիական ընտանիքների 16,7 տոկոսն ընդհանրապես հողազուրկ է։ Այսպիսով, ամեն տեսակի կասկածից վեր է

մի կողմից խոշոր հողային սեփականատերերի տիրապետող դիրքը, իսկ մյուս կողմից՝ աշխատավորական հիմնական զանգվածի հողազրկությունը կամ սակավահողությունը։

Մասնավոր հողատիրության կողքին Թուրքիայում գնալով լայնորեն տարածված են հողային սեփականատիրության այլ ձևեր ևս։ Դեռ վաղուց խոշոր հողատեր է պետությունը, որին գործնականում պատկանում են բոլոր անտառները (մոտ 10 միլիոն հեկտար), մշակման համար պիտանի հողերի մի մասը (մոտ 5 միլիոն հեկտար), ինչպես նաև արոտավայրերը։

Աղյուսակ 3

**Հողատիրությունը Թուրքիայում 60-ական թվականների սկզբներին**

| Հողակտորի չափը, հեկտարներով | Գյուղատնտեսական բնակչության կատեգորիան | Տնտեսությունների թիվը, հազարներով | Տոկոսը, ընդհանուրից | Հողային սեփականությունը, միլիոն հեկտար | Տոկոսը, ընդհանուրից |
|---|---|---|---|---|---|
| — | Հողազուրկ գյուղացիներ—բատրակներ և արենդայով վերցնողներ | 500 | 16,7 | — | |
| 0,1— 5,0 | Չքավորներ | 1555 | 51,8 | 3,3 | 13 |
| 5,1—10,0 | Միջակներ | 540 | 18,0 | 3,8 | 15 |
| 10,1—30,0 | Կուլակներ | 339 | 11,3 | 7,3 | 29 |
| 30,1 և ավելի | Կալվածատերեր | 66 | 2,2 | 10,9 | 43 |
| | Ընդամենը | 3000 | 100,0 | 25,3 | 100 |

Վարելահողերի մի մասը պետությունը վարձակալության է տալիս գյուղացիներին, իսկ մյուսի վրա ստեղծված են պետական կապիտալիստական ֆերմաներ, որոնք կոչված են առաջավոր ագրոկուլտուրան ներդնելու խոշոր կալվածատիրական և կուլակային տնտեսությունների մեջ։



1963 թվականին գոյություն ունեին այդպիսի 23 կալվածքներ 321 հազար հեկտար հողատարածությամբ։ Պետական հողային սեփականության մի մասն էլ ընդհանրապես չի օգտագործվում։

Իբրև ֆեոդալական հարաբերությունների մնացորդ գնալով շարունակում է գոյություն ունենալ համայնքային հողատիրությունը, գլխավորապես այն շրջաններում, որտեղ ապրանքային տնտեսությունը քիչ է զարգացած։ Վերջնականապես վերացված չէ նաև վակուֆային հողատիրությունը (մահմեդական եկեղեցու սեփականությունը)։

Թուրքիայում հողօգտագործման բնութագրման ժամանակ չի կարելի չհիշել նրա ձևերի բազմազանությունը, որը պայմանավորված է մի կողմից արտադրության ֆեոդալական եղանակի բազմաթիվ մնացորդներով, և մյուս կողմից՝ կապիտալիստական հարաբերություններով։ Ժամանակակից թուրքական գյուղում կարելի է հանդիպել կիսանատուրալ և մանրապրանքային գյուղացիական տնտեսությունների, վարձակալների և հողակտոր ունեցող հողագործական բանվորների տնտեսությունների, որտեղ լայնորեն կիրառվում է ժամանակակից տեխնիկան և շահագործվում է վարձու բանվորական ուժը։ Կապիտալիզմը հաստատորեն ամրապնդել է իր դիրքերը՝ իբրև տնտեսապես առաջատար կացութաձև։

Թուրքիայի պայմաններում, որտեղ խոշոր սեփականատերերի կողքին գոյություն ունեն միլիոնավոր հողազուրկ և սակավահող գյուղացիներ, լայնորեն տարածված է հողի վարձակալությունը։ Բոլոր գյուղացիների մոտ մեկ երրորդը այս կամ այն ձևով 1958 թվականին դիմել էր վարձակալության։ Վարձակալական հարաբերությունների առավել տարածված ձևը նատուրալ բնավարձակալությունն է, որի ժամանակ գյուղացին իբրև վարձակալման արժեք տալիս է հողատիրոջը նատուրալ ձևով բերքի մեկ քառորդից մինչև երեք քառորդը։

Բնավարձակալությունը, նայած վարձակալողի առա-

ցած բերքի չափին, բաժանվում է մի քանի տեսակների։

Դրանցից կարևորներն են.

1) յարըջիլիկը (թուրքերեն «յարըմ»— կես բառից) մի եղանակ է, որի ժամանակ կալվածատերը՝ «յարըջին», օգտագործում է սեփական գույքը և անասունը։ Հողային սեփականատերը (կալվածատերը կամ կուլակը) տալիս է հողը և սերմացուն։ Ստացված բերքը, իբրև կանոն, կիսում են հավասարապես։ Յարըջիլիկը կիսաֆեոդալական հարաբերությունների հիմնական ձևն է ժամանակակից Թուրքիայում։

2) օրտակչիլիկը («օրտակ»—մաս բառից է) մի սիստեմ է, որի ժամանակ անմիջական արտադրողը հավաքած բերքից ստանում է իր բաժինը տիրոջ հետ պայմանավորվածության համաձայն։ Վարձակալության արժեքը փոխվում է՝ կապված մի շարք պայմանների հետ (դաշտի բերքատվությունից և տեղից, բանվորական ուժի առկայությունից, կուլտուրայի եկամտաբերությունից և գյուղացու ծառայության տարիքից)։ Սովորաբար վարձակալող գյուղացու բաժինը կազմում է բերքի մեկ երրորդը։

3) մարաբաշիլիկը («մարաբա»—քառորդ բառից) մի սիստեմ է, որի ժամանակ գյուղացին արտադրության մեջ դնում է միայն աշխատանքը (սեփականը և իր ընտանիքի անդամներինը)։ Հողատերը տալիս է ոչ միայն հողը, սերմացուն, այլ և գույքն ու բանող անասունը, դրա դիմաց ստանալով բերքի երեք քառորդը։ Իրենց գոյավիճակով մարաբաշները մոտենում են բատրակներին, որոնք վարձը ստանում են բնամթերքով։

Բնավարձակալության տարբերակները գյուղացիության պրոլետարացման զանազան աստիճանն են։

Թուրքիայում մինչև օրս էլ չկա վարձակալական օրենսդրություն։ Ոչ մի գրավոր համաձայնագիր գոյություն չունի, և կալվածատերը տարվա ցանկացած պահին այս կամ այն պատրվակով կարող է քշել հողից իր համար անցանկալի վարձակալին։

Ամբողջ երկրի մասշտաբով վերցրած, հողը ծառայագրման վարձակալության տակը արդեն չի հանդիսանում



անմիջական արտադրողի կալվածատիրական շահագործման հիմնական ձև։ Բնավարձակալները ներկայումս բոլոր գյուղացիների 25 տոկոսից չեն անցնում։ Հետ որում մանր գյուղացիական վարձակալության կողքին ավելի ու ավելի է իր համար ճանապարհ հարթում կապիտալիստական վարձակալությունը։ Կապիտալիստական նորմաների և հարաբերությունների կազմավորումը հեշտացել է նրանով, որ թուրքական կառավարությունը նպաստում է կալվածատիրական տնտեսությունների փոխադրմանը կապիտալիստական զարգացման ուղու վրա։ Այդ բանին է ծառայել պետական-կապիտալիստական միջոցառումների համրագումարը, միջոցառումներ, որոնք անց են կացվել հանրապետության առաջին տարիներից ի վեր։ Անհրաժեշտ է նշել, որ Թուրքիայում կալվածատերերի՝ կապիտալիստական ֆերմերներ դառնալու համար պետական-կապիտալիստական ամեն տեսակի միջոցառումները ավելի են անհամեմատ ավելի շատ բան, քան բուն ագրարային ռեֆորմները։

Պետական վերահսկողությունը գյուղատնտեսության նկատմամբ իրականացվում է հողագործության և անասնապահության մեթոդների վրա գների կարգավորման ձևի միջոցով, արտադրողներին պետական վարկ տալու միջոցով և գյուղատնտեսական ապրանքներ արտահանողներին փոխհատուցում տալով, գյուղատնտեսությանը մեքենաներ մատակարարելով, պետական սեկտորին տրվող հատկացումները ավելացնելով և այլն։ Այդ բոլոր միջոցառումներն ամրապնդեցին սակ խոշոր տնտեսությունների տնտեսական հզորությունը և չվերացրեցին, այլ ավելի խորացրեցին սոցիալական հակասությունները թուրքական գյուղում։

Գյուղատնտեսության պետական կարգավորման սիստեմում լուրջ տեղ է գրավում կառավարության վարկային քաղաքականությունը, որն իրականացվում է պետական բանկերի (գլխավորապես գյուղատնտեսական բանկի միջոցով) և կոոպերատիվ ընկերությունների միջոցով։ Կազմակերպված վարկերի գլխավոր նպատակն է կալվածատերերին և կուլակներին աջակցել կապիտալով, որն ան-

հրաժեշտ է կապիտալիստական արտադրության ինտենսիֆիկացման համար։

Գյուղատնտեսական բանկի հիմնական խնդիրն է վարկեր տրամադրել գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը ընդլայնելու և նրա վաճառքը հեշտացնելու համար։ Գործառնությունները բանկն իրականացնում է իր ունեցած ֆիլիալների և բաժանմունքների (1964 թվականին դրանց թիվը 660 էր) և իր վերահսկողության տակ գործող վարկային ու վաճառքային կոոպերատիվների միջոցով։ Որպես կանոն, վարկը տրվում է մեկ տարով կամ նույնիսկ մեկ սեզոնով։ Միջին ժամկետային վարկերը (մինչև 5 տարով) կազմում են ընդհանուր գումարի սոսկ տասներորդ մասը, իսկ երկարատև վարկերը (մինչև 20 տարով)՝ ավելի փոքր մասը (5—6 տոկոսը)։ Այդ բանկի կողմից տրված վարկերի գումարը 1950 թվականի 412 միլիոն լիրայից 1960 թվականին բարձրացել է 2 392 միլիոնի։ 1960 թվականի պետական հեղաշրջումից հետո վարկավորման ծավալը նկատելիորեն ընկավ, քանի որ բանկի միջոցների զգալի մասը գերխոտորական պարտքերից էր կազմված։ 1960—1961 թվականներին օրենքներ ընդունվեցին գյուղացիների պարտքերի ժամկետները երկարացնելու մասին։

Պետությունը ոչ միայն սահմանում և կարգավորում է գները, այլև զբաղվում է հացահատիկի և գյուղատնտեսական այլ ապրանքների գնումով։ Այդ օպերացիաների իրականացման համար դեռևս 1938 թվականին ստեղծվեց պետական կազմակերպություն՝ 30 միլիոն լիրա կապիտալով (հետագայում կապիտալը մեծացավ ու հասավ 600 միլիոն լիրայի), «Երկրագործության ապրանքների վարչություն» անվամբ։

Կառավարությունը գնում է նաև հումք արդյունաբերության համար։ Օրինակ, հատուկ հիմնարկություն («Փամուկ սաթըն ալմա վե չիրչիր ֆաբրիկալարը մյուէսսեսի») ստեղծվեց Սումերբանկին կից, որն արտադրողներից գնում է բամբակ և այլ հումք պետական տեքստիլ ֆաբրիկաների համար։



Այս կամ այն կուլտուրաների խթանման համար երկրագործներին տրվում են նպաստներ և դոտացիաներ։ Ծխախոտագործները որոշակի պարգև են ստանում ծխախոտի մոնոպոլիային կամ ծխախոտ արտահանողների միությանը հանձնված յուրաքանչյուր կիլոգրամ պրոդուկտի համար, իսկ բամբակ արտադրողին երաշխավորում են նրանց արտադրանքի նվազագույն գինը։

Ջեմալ Գյուրսելի կառավարությունը, որ երկիրը ղեկավարում էր 1960 թվականի մայիսից մինչև 1961 թվականի նոյեմբերը, իր քաղաքականությամբ կալվածատերերին առավելություն չէր տալիս, ինչպես այդ եղել էր Մենդերեսի օրոք։ Մասնավորապես նա սառեցրեց 1959 թվականի գնման գների մակարդակը։ Կալվածատերերն ու կուլակներն այդ պայմաններում գերադասում էին իրենց հացը արտահանել ազատ շուկաները, քան թե վաճառել պետությանը։ Բանակին և խոշոր քաղաքների ազգաբնակչությանը մատակարարելու համար թուրքական իշխանությունները հարկադրված եղան ներմուծել ամերիկյան ցորեն։ Ինենյուի կոալիցիոն կառավարությունները գնման գների բարձրացման կուրս վերցրեցին, դրանով իսկ պաշտպանելով գյուղի խոշոր ապրանքարտադրողների շահերը։

Գյուղատնտեսության պետական տնտեսական «կարգավորման» կարևոր լծակ է խոշոր ձեռնարկատերերին մեքենաներ և վառելիք մատակարարելը։ Այդ նպատակով 1944 թվականին ստեղծվեց հատուկ պետական հիմնարկություն՝ գյուղատնտեսության մեքենայացման գերատեսչություն։ Մեքենաների ներմուծմանը և երկրի ներսում դրանց վաճառքի հետ մեկտեղ, գերատեսչությունն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում ամեն տեսակի արդյունաբերական ու առևտրական հիմնարկների կազմակերպման գործին, որոնք կապված են գյուղատնտեսական միջոցների, մեքենաների, պարարտանյութերի արտադրության կամ դրանց վաճառքի հետ։ Գերատեսչությունը Անկարայի տրակտորահավաքման արհեստանոցների, Քյութահյայի ազոտային պարարտանյութերի գործարանի և մի շարք այլ ձեռնարկու-

թյունների բաժնետերն է։ Նրա սեփականությունն է Ադաբազարի գործարանը, որտեղ, ամերիկյան «Ֆորդ մոտորս ընկերություն» ֆիրմայի հետ պայմանավորվածությամբ, իրականացվում է «Ֆորձոն Դեկստա» տրակտորների հավաքումը։ Գերատեսչությունը սերտորեն կապված է ամերիկյան և արևմտաեվրոպական շատ ֆիրմաների հետ, որոնք մասնագիտանում են գյուղատնտեսական մեքենաներ և պարարտանյութեր արտահանելով։ Այդ գերատեսչության միջոցով Թուրքական կառավարությունը, համաձայն «Մարշալի պլանի» ամերիկյան «օգնության» և սեփական միջոցների հատկացումների հաշվին, 50-ական թվականներին ներմուծեց շատ տրակտորներ և այլ գյուղատնտեսական մեքենաներ։ Տրակտորների թիվը Թուրքական գյուղում աճեց 1948 թվականի 1,7 հազարից մինչև 49,4 հազարի՝ 1963 թվականին, կոմբայններինը՝ համապատասխանորեն՝ 286-ից մինչև 6 հազարի։ Սակայն Թուրքական կառավարությունը գյուղատնտեսական տեխնիկան չի ապահովել պահեստամասերով. այդ պատճառով էլ հազարավոր մեքենաներ շարքից դուրս են եկել։

Չնայած գյուղատնտեսության մեջ կիրառվող մեքենաների պարկը մի քանի անգամ ավելացել է, Թուրքիայի գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածությունը շարունակում է մնալ շատ ցածր։ Տրակտորներով վարում են ամբողջ ցանքատարածությունների սոսկ 16 տոկոսը։ Մեքենաները մատչելի են միայն կալվածատերերին և կուլակներին ու կենտրոնացված են Արևմտյան Անատոլիայում և Ադանա-Մերսինյան ցածրությունում, այսինքն՝ կապիտալիստական հարաբերությունների առավել զարգացած շրջաններում։ Չքավորների աշխատանքի հիմնական գործիքները, նախկինի նման, կարասապանը (փայտե արոր), մանգաղը և բերնաշեն կալսիչն են։

1963—1967 թվականների տնտեսության զարգացման հնգամյա պլանի համաձայն 59,6 մլրդ լիրա համախառն (պետական և մասնավոր) կապիտալ ներդրումներից 11,3 միլիարդը նախատեսված է օգտագործել գյուղատնտեսու-



թյան մեջ։ Գյուղատնտեսության զարգացման հնգամյա ծրագրի հիմնական խնդիրներն այսպիսին են՝ արտադրության ծավալն այդ ժամանակամիջոցում ավելացնել 25,6 տոկոսով. ժողովրդի աճող պահանջները բավարարել սննդամթերքով, իսկ արդյունաբերությունը՝ հումքով. ավելացնել գյուղատնտեսական ապրանքների արտահանությունը, նպատակ ունենալով միջոցներ կուտակել երկրի ինդուստրացման համար. բարելավել հողօգտագործման սարքավորման ցանքատարածությունների ընդարձակման և առավել արժեքավոր կուլտուրաներ ցանելու միջոցով։ Սակայն այդ պլանի փաստացի կատարումը կասկածի տակ է դրվում։

Հետպատերազմյան տարիներին զգալիորեն ակտիվացել է գյուղատնտեսական կոոպերացիայի գործունեությունը, որը կարևոր տեղ է բռնել երկրի ագրարային հարաբերությունների սիստեմի մեջ։ Նշենք, որ կոոպերատիվ շարժումը Թուրքիայում ծագել ու զարգացել է ոչ տարերայնորեն, այլ զգալիորեն կազմակերպվել և ուղղություն է ստացել կառավարության կողմից։

Կոոպերատիվ կազմակերպությունների հիմնական տեսակները Թուրքական գյուղում՝ վարկայինն ու վաճառահանությունն են։ Առավել մեծ զարգացում են ստացել վարկային ընկերությունները, որոնց թիվը 1964 թվականին 1939 թվականի համեմատությամբ մոտավորապես աճեց 3 անգամ (556-ից մինչև 1630), իսկ նրանցում եղած անդամների թիվը՝ ինը անգամ (114 հազարից մինչև 1016 հազար)։ Սակայն այսօր էլ գյուղի բնակիչների մոտավորապես 65 տոկոսը կապված չէ վարկային կոոպերատիվների հետ։ Կոոպերատիվներում տնօրինում են կալվածատերերն ու կուլակները, որոնք ստանում են վարկերի հիմնական բաժինը և հաճախ այդ միջոցներն օգտագործում են վաշխառուական գործարքների համար։ Վարկային կոոպերատիվը զգալի տարածում է գտել միայն բարձր ապրանքային կուլտուրաների արտադրության գոտիներում։ Եթե Իզմիրի, Մանիսայի, Բուրսայի վիլայեթներից յուրաքան-

չյուրում գոյություն ունեն մի քանի տասնյակ կոոպերատիվներ, սակայն Թուրքիայի արևելքում այդպիսիք գրեթե չկան։

Գյուղատնտեսական կոոպերացիայի երկրորդ տիպը տեխնիկական և արդյունաբերական կուլտուրաների (բամբակ, ծխախոտ, թեյ, չամիչ, կաղին և այլն) վաճառքի ընկերություններն են։ Այդ կոոպերատիվների նպատակն է աջակցել կապիտալիստական տնտեսությունների տնտեսական ամրապնդմանը՝ իրենց արտադրանքի կենտրոնացված վաճառքի ճանապարհով, նրանց օգնել մեքենաներով և գյուղատնտեսական մթերքների վերամշակմամբ։ 1964 թվականին Թուրքիայում 246 վաճառքի կոոպերատիվներ կային։ Ի տարբերություն վարկային ընկերությունների, նրանք միավորում են գրեթե բացառապես կուլակներին և կալվածատերերին, որոնք զբաղվում են կուլտուրաների արտադրությամբ։ Այդ պատճառով էլ դրանց անդամների թիվը մեծ չէ (մոտավորապես 160 հազար կամ գյուղացիական տնտեսությունների 5,3 տոկոսը)։

Վաճառքային կոոպերատիվները միավորվում են ռեգիոնալ (տեղական) միությունների («բիրլիկների»), որոնք իրավունք ունեն վարելու գյուղատնտեսական ապրանքների մեկ կամ մի քանի տեսակների գնման և արտահանման գործարքներ։ Մի քանի ռեգիոնալ միություններ (դրանք Թուրքիայում ընդամենը 18-ն են) իրենցից ներկայացնում են շատ խոշոր կապիտալիստական ձեռնարկություններ։ Օրինակ, «Իզմիր թարիմ սաթըշ կոոպերատիֆլերի բիրլիգի» (կրճատ՝ «Թարիշ») վաճառքային կոոպերատիվների միությունը միավորում է բամբակի, չամիչի, թզի և ձիթապտղի վաճառահանման ավելի քան 100 ընկերություն։ Նրա գործունեությունը տարածվում է ամբողջ Էգեյան տնտեսական շրջանի վրա։ «Թարիշն» ունի իր սեփական չամիչ պատրաստող ձեռնարկությունները, բամբակազտիչ, յուղի և գինու գործարանները։

Վաճառահանման կոոպերատիվների խոշոր միավորումներ են բամբակի «Չուկոբիրլիկ» միությունը, որի մեջ միա-



վորված են Ադանա-Մերսինյան ցածրության խոշոր հողատերերը, և «Ֆինդըքբիրլիկ» կաղին արտադրողների միությունը, որը գործում է Սև ծովի առափնյա շրջանում։

Թուրքիայի գյուղատնտեսության մեջ պետական-կապիտալիստական տենդենցների ուժեղացման արտահայտություններից մեկը պետության նշանակալի դերն է տնտեսության այդ բնագավառում կատարվող կապիտալ ներդրումների ֆինանսավորման մեջ։ Ճիշտ է, գյուղատնտեսության զարգացման նպատակով կատարվող պետական ներդրումները, իբրև կանոն, չեն գերազանցում տնտեսության այդ բնագավառում կատարվող կապիտալ ներդրումների ընդհանուր գումարի մեկ քառորդը, այնուամենայնիվ որոշ բնագավառներում (իռիգացիայի և մելիորացիայի զարգացում, գյուղատնտեսական գործիքների և հանքային պարարտանյութեր թողարկող ձեռնարկությունների կառուցում և այլն) պետական սեկտորը գրավում է առաջատար դիրքեր։

Պետական-կապիտալիստական «կարգավորման» թվարկված միջոցառումները մեծ դեր խաղացին խոշոր կապիտալիստական տնտեսությունների առաջացման և աճի մեջ, գլխավորապես Արևմտյան Անատոլիայում և Ադանա-Մերսինյան ցածրությունում, այսինքն՝ արտահանման կուլտուրաների արտադրության հիմնական շրջաններում։ Միաժամանակ դրանք հանգեցրին գյուղացիության ունեցվածքային անհավասարության և սոցիալական շերտավորման խորացմանը։ Օրինակ, ինքնին բարիք ներկայացնելով հանդերձ, մեքենան Թուրքիայի պայմաններում վերածվեց մանր գյուղացիության ունեզրկման և սնանկացման նոր հզոր զենքի։ Չէ՞ որ եթե կալվածատերը նախկինում իր տնտեսությունը չէր վարում, այլ հողը վարձակալությամբ հանձնում էր գյուղացիներին, ապա մեքենա ձեռք բերելով, նախապես նրանց վռնդում էր հողից։ Ընդամենը հետպատերազմյան տարիներին հողից վռնդվել է ավելի քան 250 հազար վարձակալ-գյուղացի։

Գյուղացիության հարաճուն պաուպերիզացիայի (աղքատացման) հետևանքով արագորեն աճում է ագրարային

գերբնակչությունը, որը Թուրքիայում իսկական սոցիալական աղետի չափեր է ընդունում։ Պետական պլանային կազմակերպության տվյալներով 9,7 միլիոն մարդ գյուղական աշխատունակ բնակչությունից 3,5 միլիոնը հանդիսանում են թաքնված գործազուրկներ։ Նույնիսկ գյուղատնտեսական աշխատանքների սեզոնի ժամանակ էլ մոտ մեկ միլիոն մարդ չունի իր մշտական զբաղմունքը։

Ամեն տարի մոտավորապես 300 հազար գյուղացիներ լքում են գյուղը և գնում արդյունաբերական-առևտրական կենտրոններ։ Տնտեսական զարգացման հեռանկարային պլանը, հաշվի առնելով մինչև 1977 թվականը գյուղական բնակչության նվազումը մինչև 57 տոկոսի, մի շարք միջոցառումներ է նախատեսում, որոնք ապահովելու են գյուղատնտեսությունից ազատված բանվորական ուժի զբաղվածությունը՝ արդյունաբերության, առևտրի մեջ, տրանսպորտում և այլուր աշխատանքային տեղերի ընդլայնման ճանապարհով։ Միաժամանակ կամպանիա է տարվում գյուղացիներին գյուղում պահելու համար։ Բայց այդ պլանները իսկական ուտոպիա են։

Գյուղատնտեսության մեջ ավելի ու ավելի լայնորեն է կիրառվում վարձու աշխատանքը։ Եթե 30-ական թվականների սկզբներին Թուրքիայում հաշվվում էին 200—250 հազար գյուղատնտեսական բանվորներ, ապա 1950 թվականին դրանց թիվը հասնում էր 600 հազարի, իսկ 1960 թվականին՝ արդեն 900 հազարի։

Թուրքիայում, ինչպես նաև, ի միջի այլոց, Ասիայի թույլ զարգացած մյուս երկրներում, ավելի տարածված է սեզոնային բանվորական ուժի (օրավարձայիններ, շաբաթական և ամսական աշխատողներ) վարձումը, քան թե մշտական բատրակների վարձումը։ Հողագործական բանվորների առաջացման հիմնական կենտրոններն են սևծովյան առափնյա և Կենտրոնական Անատոլիայի խիտ բնակեցված շրջանները, իսկ սեզոնայինների հոսքի գլխավոր շրջաններն են Արևմտյան և Հարավային Անատոլիան։ Այդպիսով, բանվորական ուժի տեղաշարժը կատարվում է կապիտալիզմի



առավել թույլ զարգացած բնակավայրերից դեպի առավել ուժեղ զարգացած շրջանները։

Կապիտալիստական արտադրության կենտրոնացումը, որը կատարվում է գյուղացիական մանր հողակտորների կուլ գնալու և բնավարձակալներին հողից վռնդելու միջոցով, բարդացրեցին դասակարգային հարաբերությունները գյուղում և ավելի սուր դրեցին ռադիկալ ագրարային բարեփոխության անհրաժեշտության հարցը։

Առաջին տարին չէ, որ ագրարային հարցը գտնվում է Թուրքիայի քաղաքական և տնտեսական կյանքի կենտրոնում։ Կառավարող շրջանները ագրարային բարեփոխումների մեջ տեսնում են բուրժուական հիմքերի վրա արտադրողական ուժերի զարգացման նախադրյալներ ստեղծելու միջոցը միայն։ Բացի այդ, ագրարային բարեփոխումները նպատակ ունեն հաշտեցնել գյուղը, կալվածատերերի հողի մի մասը գյուղացիներին տալ «վերևից», որպեսզի նրանք չվերցնեն ամբողջ հողը «ներքևից»։

1945 թվականի հողային ռեֆորմը բոլորովին ձեռք չտվեց կալվածատերերի քաղաքական տիրապետության նյութական հիմքերին և չլուծեց ժամանակակից Թուրքիայի հիմնական պրոբլեմը՝ հողազրկության և սակավահողության պրոբլեմը։ Ընդամենը 1947 թվականից մինչև 1960 թվականի մայիսը ետգնման պայմանով գյուղացիներին հանձնվեց մոտ 1,8 միլիոն հեկտար հող՝ նախկինում չօգտագործվող պետական և տիրազուրկ հողերից։ Այդ ոչ հարմարավետ հողերը, որոնց մշակման համար պահանջվում էին հսկայական աշխատանք և միջոցներ, տրամադրվեցին 365 հազար գյուղացիական ընտանիքների։ Մինչդեռ այն գյուղացիների թիվը, որ հողի կարիք է զգում, այսօր էլ գերազանցում է ողջ գյուղական ազգաբնակչության երկու երրորդը։

1960 թվականի ռազմական հեղաշրջումից հետո ագրարային բարեփոխումները դարձյալ օրակարգի հարց դարձան իբրև գլխավոր ուղենիշ տնտեսական անկախության հասնելու ճանապարհին։ Երիտասարդ սպաները, հատկապես նրանց այն մասը, որը մտնում էր Թուրքեշի խմբի մեջ, անմիջապես

իշխանության գլուխ անցնելուց հետո արտահայտվեցին հողային ռեֆորմի անհրաժեշտության և ֆեոդալիզմի մնացորդների վերացման օգտին։ Գյուղացիական պրոբլեմին շատ տեղ հատկացրին թուրքական թերթերն ու ամսագրերը։ Բայց բանակի ղեկավարները, որոնք 18 ամիս գտնվում էին իշխանության գլուխ, այդ ուղղությամբ գրեթե ոչ մի գործնական քայլ չկատարեցին։

Իսմեթ Ինոնյուի առաջին կոալիցիոն կառավարությունը, որ իշխանության գլուխ կանգնեց 1961 թվականի հոկտեմբերի 16-ի ընդհանուր ընտրություններից հետո, իր ծրագրում խոստացավ նախապատրաստել «օրինագիծ հողային ռեֆորմի մասին այնպես, որպեսզի այն համապատասխանի սահմանադրության, տնտեսական և գյուղատնտեսական կառուցվածքին»։ Սակայն այդ խոստումը չկատարվեց։

Ագրարային բարեփոխումների անհրաժեշտությունն ընդունվում է գրեթե ամենուրեք։ Սակայն տարբեր կուսակցերն ու սոցիալական խավերը բոլորովին միևնույն իմաստը չեն դնում այդ հասկացողության մեջ։ Գոյություն ունեցող ներկա պայմաններում ագրարային պրոբլեմի արդարացի լուծումը չափազանց դժվարանում է։

Գ յ ո ւ ղ ա տ ն տ ե ս ո ւ թ յ ա ն  կ ա ռ ո ւ ց վ ա ծ ք ը։ Պատերազմից հետո թուրքական հողագործությունը հասավ որոշ հաջողությունների, որի մասին վկայում են առաջին հերթին երկրի հողային ֆոնդի օգտագործման հարցում կատարված տեղաշարժերը։ Մշակովի տարածությունները, այսինքն՝ ցանքսերի և ցելի տակ գտնվող հողերը, 1964 թվականին կազմեցին մոտավորապես 24 միլիոն հեկտար, 1950 թվականի 14,5 միլիոն հեկտարի փոխարեն, այլ խոսքերով, մշակովի հողատարածությունները 14 տարում աճեցին 65 տոկոսով։ Պտղատու և խաղողի այգիների և ձիթենու տնկիների տարածությունն այդ նույն ժամանակամիջոցում աճեց 50 տոկոսով։ Մշակովի հողերի ընդհանուր աճը, որը հավասար է 9340 հազար հեկտարի, կազմում է երկրի ամբողջ տերիտորիայի 12 տոկոսը. 1965 թվականին մշակվել է տերիտորիայի 32,5 տոկոսը՝ 1950 թվականի 20,6 տոկոսի դիմաց։



Արդյունավետ հողերի տարածությունն աճել է գրեթե բացառապես մարգագետիններն ու արոտավայրերը վարելու հաշվին, որոնք նշված տարիներին կրճատվել են 9140 հազար հեկտարով (24 տոկոսով), որը տնտեսության էքստենսիվ վարման պայմաններում վնաս հասցրեց անասնապահությանը։ Ճահիճների, լճերի չորացման և նոր հողերի իրացման հաշվին օգտակար հողատարածությունն ավելացել է միայն 360 հազար հեկտարով։

Սննդամթերքի և տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունների ավելացումը պայմանավորված է շատ պատճառներով։ Քաղաքների աճը, ճանապարհների ցանցի բարելավումը, քաղաքում և գյուղում կապիտալիզմի զարգացումը բարձրացրին գյուղատնտեսության ապրանքայնությունը և խթան հանդիսացան գյուղատնտեսական արտադրության ընդլայնման համար։ Դրան նպաստեց նաև տրակտորների և գյուղատնտեսական այլ մեքենաների կիրառումը։ Բացի այդ, երկրի բնակչությունը 1950 թվականից մինչև 1965 թվականը 20,9 միլիոն մարդուց աճել է մինչև 31 միլիոնի, այսինքն՝ 48,3 տոկոսով։ Էքստենսիվ տնտեսության պայմաններում աճող բնակչությանը սննդամթերքով ապահովել հնարավոր էր միայն հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունների ավելացումով։ Տեխնիկական և այլ կուլտուրաների ցանքատարածությունների աճի վրա անշուշտ ազդել է տեղական արդյունաբերության զարգացումը, գլխավորապես նրա այնպիսի ճյուղերինը, ինչպես բամբակյա գործվածքեղենինը, շաքարինը, ծխախոտինը, պահածոներինը, ալյուրի օղանը։

Սկսած 50-ական թվականների վերջերից ետպատերազմյան բոլոր տարիներին ցանքատարածությունների աճը դադարեց։ Դա բացատրվում է նրանով, որ նոր հողերի իրացումը, որոնք չէին պահանջում զգալի կապիտալ ներդրումներ, հիմնականում ավարտված է։ Այդ պայմաններում երկրի առջև ծառանում է տնտեսության ինտենսիվացման խնդիրը, հողագործության կուլտուրայի բարձրացումը։

Ցանքատարածությունների ավելացման և հողի մշակ-

ման բարելավումը կալվածատիրական և մասամբ էլ կուլակային տնտեսություններում հանգեցրին ցորենի և այլ մթերային կուլտուրաների բերքի ավելացմանը։ Հացահատիկի և անդային լոբեղենի արտադրությունը նախապատերազմյան տարիների համեմատությամբ միջին հաշվով ավելացավ երկու անգամ։ Փոքր-ինչ ավելացել է նաև բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքը։ Դա բարելավեց մըթերքի բալանսը երկրում, բայց չհասցրեց պրոբլեմի վերջնական լուծմանը։ Բնակչության սննդամթերքով ապահովվածությամբ Թուրքիան գրավում է վերջին տեղերից մեկը Եվրոպայում։ Մի երկիր, որի բնակչության երեք քառորդը զբաղված է գյուղատնտեսության մեջ, չի կարողանում իրեն ապահովել սննդամթերքով և անընդհատ հարկադրված է օգնության հայցով դիմել ուրիշ պետությունների։ Սննդամըթերքի ներմուծումը շարունակվելու է այսուհետև ևս. Հընգամյա պլանով նախատեսվում է տարեկան 500 հազար տոննա ցորենի և 55 հազար տոննա ճարպերի ներմուծում։ Մինչդեռ, Թուրքական տնտեսագետների հաշվարկումներով, ռացիոնալ օգտագործման դեպքում երկրի հողերը ի վիճակի են կերակրելու 50 միլիոնից ոչ պակաս մարդ։

**Բուսաբուծությունը** գյուղատնտեսական արտադրության գլխավոր ոլորտն է։ Նրանում առաջատար դերը կատարում են հացահատիկային կուլտուրաները (ցանքատարածությունների մոտավորապես 85 տոկոսը), առավելապես ցորենն ու գարին, ինչպես նաև եգիպտացորենը, տարեկանը, վարսակը և բրինձը։

Ցորեն աճեցնում են շատ վիլայեթներում, բայց գլխավորապես՝ Կենտրոնական (Կոնիայի, Սվազի, Անկարայի, Յոզգատի, Չորումի վիլայեթներ) և Արևելյան Անատոլիայում (Էրզրումի, Դիարբեքիրի և Ուրֆայի վիլայեթներ)։ Կենտրոնական Անատոլիային բաժին է ընկնում այդ կուլտուրայի բոլոր ցանքատարածությունների 50 տոկոսից ավելին։ Մեծ մասամբ կատարվում է ցորենի աշնանացանը։ Բարձըր լեռնային շրջաններում տարածված են գարնանացան տեսակները։ Ցորենի միջին բերքատվությունը հեկտարից



10—12 ցենտներ է։ Ցորենի պահանջը Թուրքիայում հասնում է տարեկան 9—10 միլիոն տոննայի, իսկ ստացվում է, իբրև կանոն, ավելի քիչ։ Պակասը ծածկվում է ներմուծման հաշվին։

Գարին տարածված է ամենուրեք. օգտագործվում է իբրև սննդի և կերային կուլտուրա. նրա մի մասը գնում է գարեջրի պատրաստման համար։ Գարու արտադրության հիմնական շրջաններն են Կոնիայի, Անկարայի, Չորումի, Սվազի և Էրզրումի վիլայեթները։ Միջին բերքատվությունը հեկտարից 11—12 ցենտներ է։

Եգիպտացորենը գերազանցապես աճեցվում է Սև ծովի առափնյա շրջաններում, որտեղ այն հանդիսանում է տեղական գյուղական բնակչության հիմնական սննդամթերքը։ Կոջաէլիի և Սամսունի վիլայեթները տալիս են ստացվող ամբողջ եգիպտացորենի երեք հինգերորդը։ Նրա արտադրությունն անընդհատ աճում է։ Միջին բերքատվությունը հեկտարից 11—13 ցենտներ է։ Եգիպտացորենի մի փոքր մասն արտահանվում է։

Տարեկանը մշակվում է այն հողերի վրա, որոնք պիտանի չեն ցորեն աճեցնելու համար։ Ամենից շատ տարեկանի ցանքսեր կան Կենտրոնական Անատոլիայի հարավարևելյան մասում (Կայսերիի, Կոնիայի, Նիգդեի և Կիրշեհիրի վիլայեթներ) և Հայկական լեռնաշխարհում (Էրզրումի և Վանի վիլայեթներ)։

Վարսակը Թուրքիայի գյուղատնտեսության մեջ էական դեր չի խաղում։ Վարսակի ցանքսեր հանդիպում են գլխավորապես Կենտրոնական Անատոլիայում (Քյութահյայի, Էսքիշեհիրի, Աֆիոն-Կարահիսարի, Անկարայի վիլայեթներ) և Ադանա-Մերսինյան ցածրությունում, որտեղ վարսակն աճեցնում են իբրև աշնանացան կուլտուրա. վարսակի բերքահավաքից հետո բամբակ են ցանում։

Բրինձը Թուրքական գյուղատնտեսության մեջ մեծ նշանակություն չունի և գերազանցապես տարածված է Մարաշի, Ադանայի, Դիարբեքիրի, Խաթայի, Էդիրնեի վիլայեթներում։ Ադանայի և Դիարբեքիրի շրջաններում գտնվում են

բրնձի խոշոր պլանտացիաներ, որտեղ աշխատում են հազարավոր բատրակներ։

Հացահատիկային մյուս կուլտուրաները (կորեկը, հաճարը, փաթաթիլի սերմերը) անհամեմատ ավելի քիչ են տարածված։ Դրանց ցանքատարածությունները 200—250 հազար հեկտարից ավելի չեն. տարեկան բերքը տատանվում է 200 հազարից մինչև 250 հազար տոննայի միջև։

Հացահատիկային կուլտուրաներից հետո կարևոր տեղ են գրավում ընդեղենները, որոնք բաժանվում են երկու խմբի՝ սննդամթերային և անասնակերային։ Սննդամթերային ընդեղեններից Թուրքիայում մշակում են լոբի, սիսեռ, ոսպ և բակլա։ Կերային ընդեղեններին են պատկանում գուլուլը, կովառվույտը, ինչպես նաև առվույտը, կորնգանը և լյուպինը։ Ընդամենը բոլոր ընդեղենային կուլտուրաների տակ է զբաղված բոլոր ցանքատարածությունների 3,8 տոկոսը, բայց նրանց դերը երկրի բնակչության սննդի և անասնակերի բալանսի մեջ զգալի է։ Լոբին հիմնականում աճեցնում են Սև ծովի առափնյա արևելյան վիլայեթներում (Տրապիզոն և Սամսուն), ոսպը՝ Ներքին Անատոլիայում և նրան հարող մարզերում (բոլորից շատ Տոկաթի վիլայեթում), բակլան՝ արևմուտքում (գլխավորապես Բալըքեսիրի վիլայեթում), սիսեռը՝ երկրի հարավ-արևմուտքում։

Բանջարանոցային և բոստանային կուլտուրաները տարեցտարի ավելի ու ավելի լայն տարածում են գտնում հատկապես խոշոր քաղաքներին մոտ շրջաններում։ Դրանց շարքում անհրաժեշտ է հիշատակել կարտոֆիլը, սոխը, սխտորը, վարունգը, սեխը, ձմերուկը, դդումը, զանազան արմատապտուղները։

Կարտոֆիլը համեմատաբար նոր կուլտուրա է Թուրքիայի համար. առաջին անգամ այն սկսել են մշակել XIX դարի վերջերին Ակովլայի ցածրությունում (Սաքարիա գետի հովիտ), որտեղ ստեղծված է կարտոֆիլի փորձնական կայան։ Ներկայումս ոչ մեծ քանակությամբ այն մշակվում է ամբողջ երկրում։ Արտադրության հիմնական շրջաններն են՝ Կոնիայի, Էրզրումի, Կայսերիի, Նիգդեի, Աֆարագարի վի-



լայեթները։ 1963 թվականին բնակչության յուրաքանչյուր շնչին ընկել է միջին հաշվով 39 կգ կարտոֆիլ (1938 թվականի 10 կգ-ի դիմաց)։

Ավելի քան 50 հազար հեկտարի վրա ցանում են սոխ. նրա բերքը կազմում է 350—400 հազար տոննա։ Սխտորի տակ օգտագործվում է մինչև 10 հազար հեկտար. նրա բերքը կազմում է 40 հազար տոննայից ավելի։

Վարունգը տարածված է առավելապես Սև և Միջերկրական ծովերի առափնյա շրջաններում։ Սեխի և ձմերուկի բերքը հասնում է տարեկան երկու միլիոն տոննայի։

Տեխնիկական կուլտուրաները մշակում են համեմատաբար ոչ մեծ հողատարածությունների վրա (բոլոր ցանքերի մոտ 10 տոկոսը), բայց նրանց դերը երկրի տնտեսության մեջ մեծ է, քանի որ դրանք արդյունաբերությունը ապահովում են հումքով և արտահանման մեջ մեծ բաժին են կազմում։ Այդ խմբում առաջատար տեղ են գրավում ծխախոտը, բամբակը, շաքարի ճակնդեղը և ափիոնի կակաչը։

Ծխախոտի մշակումը Թուրքիայում հաշվվում է 17-րդ դարի սկզբից։ Ներկայումս մշակում են ծխախոտի երեք տեսակ՝ գլանակի, ծխամորճի և ղալյանի (թոմբակ)։ Հիմնական պլանտացիաները տեղաբաշխված են՝ Էգեյան շըրջանում (ամբողջ ծխախոտի կեսը), սևծովյան առափնյա շրջաններում (քառորդը) և Մարմարա ծովի ափերին (ծխախոտի մեկ հինգերորդ մասը)։ Ծխախոտագործությամբ են զբաղվում մոտավորապես 200 հազար ընտանիքներ։

Ծխախոտի գնման, պատրաստման և ծխախոտային արտադրանքի վաճառքի մենաշնորհը պատկանում է պետությանը։ Ծխախոտի վաճառքից ստացված եկամուտները պետական բյուջեի կարևոր հոդվածն են հանդիսանում։ Երկրում օգտագործվում է 30—35 հազար տոննա, իսկ մնացածը (70—80 հազար տոննա) արտահանվում է։ Համաշխարհային շուկայում հատկապես ճանաչում են գտել ծխախոտի սամսունյան և տրապիզոնյան տեսակները։

Թուրքիայում բամբակ մշակում են շատ վաղ ժամանակներից, բայց լայն մասշտաբով այն սկսեցին մշակել

միայն առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին։ Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը բամբակի ցանքատարածությունները հասնում էին 250 հազար հեկտարի, իսկ բամբակաթելը կազմում էր միջին հաշվով 50 հազար տոննա։ Պատերազմից հետո բամբակի նշանակությունը զգալիորեն աճեց, ընդ որում ոչ միայն աճեցին ցանքատարածությունները, այլև բարելավվեցին տեսակները։ Ներկայումս ցանքատարածությունների 95 տոկոսը զբաղեցնում են «ակալա» տիպի բամբակենու ամերիկյան տեսակները։ Տեղական բամբակենու («երլի») ցանքերը պահպանվել են միայն նախալեռնային շրջանում. բերքն այնտեղ օգտագործում են հենց գյուղացիների պահանջների բավարարման համար։ Բամբակագործության գլխավոր շրջաններն են՝ Ադանա-Մերսինյան ցածրությունն ու Խաթայի վիլայեթը (այս շրջանը տալիս է Թուրքիայի ամբողջ բամբակի հումքի մինչև 50 տոկոսը), Էգեյան շրջանը և Իզմիրի հովիտը (Ղարսի վիլայեթ)։

Շաքարի ճակնդեղը հումքով ապահովում է տեղական շաքարի գործարանները։ 1934—1938 թվականներին այդ կուլտուրայի ցանքերը կազմում էին ընդամենը 34 հազար հեկտար, որտեղից ստացվում էր միջին հաշվով 400 հազար տոննա։ Պատերազմից հետո շաքարի 13 նոր գործարան կառուցելու կապակցությամբ ճակնդեղի ցանքատարածությունները ավելացան հինգ անգամ, իսկ բերքը՝ մոտավորապես յոթ անգամ։ Ճակնդեղ արտադրողները միավորված են վաճառքի կոոպերատիվների մեջ (դրանք 16-ն են), որոնք ունեն մոտ 200 հազար անդամ։ Բերքատվության բարձրացման համար շաքարի գործարանները պայմանագրային կարգով վերցնում են ճակնդեղը գյուղացիներից, նրանց ապահովում են տեսակավոր սերմերով։

Քունջութը հնագույն ձիթատու կուլտուրա է։ Տարածված է գլխավորապես Ադանայի, Իչելի, Անթալիայի, Մուղլայի, Իզմիրի, Բալըքեսիրի, Էդիրնեի վիլայեթներում։ Քունջութի սերմերից ստացվում է ձեթ, որն օգտագործվում է սննդի նպատակով, հրուշակեղենի (հալվա, կոնֆետներ, մեղրա-



բլիթներ) և օճառի արտադրության մեջ։ Ձեթի և սերմերի մի մասն արտահանվում է։ Քունջութի տակ է դրված մոտ 80 հազար հեկտար, հավաքում են 40—50 հազար տոննա սերմ։

Վուշը Թուրքիայի համար հիմնականում ձիթատու կուլտուրա է։ Ցանքատարածությունները մոտավորապես 47 հազար հեկտար են, ստացվում է մոտավորապես 15 հազար տոննա սերմ, հավաքվում է 4,5 հազար տոննա թել (1962 թվական)։

Կանեփը ոչ մեծ տարածությամբ հանդիպում է Անատոլիայի շատ շրջաններում, ամենից հաճախ Քաստամոնուի, Չանկըրըի, Բալըքեսիրի, Այդընի վիլայեթներում։ Դրա թելից պատրաստում են ճոպաններ, պարաններ, պարկի կտոր և կոշտ կտորեղեն։

Ափիոնի կակաչը արտահանության կարևոր կուլտուրա է։ Արտադրության շրջաններն են՝ Աֆիոն-Կարահիսարի, Քյութահիայի, Իսպարտայի, Ամասիայի, Տոկաթի, Իզմիրի, Մանիսայի, Այդընի, Բալըքեսիրի, Մալաթիայի վիլայեթները։

Անիսոնը մշակում են ամենուրեք, ավելի հաճախ՝ իբրև բանջարանոցային կուլտուրա։ Բերքի հիմնական մասը արտահանվում է իբրև հումք պարֆյումերային արդյունաբերության համար։ Անիսոնի պտուղներն օգտագործում են անիսոնի օղու՝ «ռակիի» պատրաստման համար։

Վարդի կուլտուրան Անատոլիա է բերվել մուհաջիրների (Բուլղարիայից վերաբնակեցված թուրքեր) կողմից։ Կարճ ժամանակում այն տարածվեց գրեթե ամբողջ Անատոլիայում։ Ներկայումս վարդերը (նրանց թերթերից պատրաստվում է վարդի յուղ) աճեցվում են Իսպարտայի, Բուրդուրի, Այդընի և Դենիզլիի վիլայեթներում։

Թեյի առաջին պլանտացիաները հիմնադրվեցին Սև ծովի առափնյա շրջանի արևելյան մասում։ 1963 թվականին թեյի պլանտացիաները կազմում էին 15,9 հազար հեկտար, 1950 թվականի 3 հազար հեկտարի դիմաց։ Թեյի կանաչ տերևի բերքն ավելացավ այդ նույն ժամանակաշրջանում 0,9 հազարից մինչև 37,5 հազար տոննա։

Չափազանց զգալի դեր է խաղում պտղաբուծությունը։ Այդ ճյուղի արտադրանքը, տեխնիկական կուլտուրաների հետ միասին, կազմում է թուրքական արտահանության հիմքը։

Խաղողի պլանտացիաները կազմում են 794 հազար հեկտար (1963 թվականի), որը Թուրքիային խաղող աճեցնող երկրների շարքում դնում է առաջին տեղերից մեկում։ Արևմտյան Անատոլիան հռչակված է անկորիզ խաղողով, որի մեծ մասը չորացվում է։ Կենտրոնական Անատոլիայում աճեցնում են գինու խաղողների տեսակներ, Արևելյանում և Հարավ-արևելյանում՝ սեղանի և այլ գինիների տեսակներ։ Թարմ խաղողի բերքը կազմում է մոտավորապես 2,5—3 միլիոն տոննա։ Չամիչի համաշխարհային արտահանության մեջ Թուրքիայի բաժինը մեկ հինգերորդն է կազմում։

Կարևոր տեղ է գրավում ձիթենին (զեյթունը)։ Ձիթապտղի տնկիների տարածությամբ (մոտավորապես 600 հազար հեկտար), Իսպանիայից և Իտալիայից հետո Թուրքիան երրորդ տեղում է։ Ձիթենու անտառները տարածված են Անատոլիայի ողջ արևմտյան և հարավային առափնյա շրջաններում։ Տնկիներ հանդիպում են նաև Խաթայ, Ղազիայնթափ և Չորում վիլայեթներում։ Ձիթապտղի բերքը, որ կազմում է 300—500 հազար տոննա, գնում է գլխավորապես ձեթի արտադրության, ինչպես նաև աղ դնելու համար։

Թզի (ժանտաթզենու) տնկիները Թուրքիայում 200 հազար հեկտար են։ Գլխավոր արտադրող շրջանը Արևմտյան Անատոլիան է։ Թուզը չորացնում և մեծ մասամբ արտահանում են։ Չորացրած թզի տարեկան արտադրությունը 30—35 հազար տոննա է։

Կաղինի անտառները ձգվում են ողջ սևծովյան առափնյա շրջանում, հյուսիսից պատելով Պոնտական լեռնալանջերը։ Կաղինի բոլոր տնկիների մոտավորապես կեսը (48,9 տոկոսը) բաժին է ընկնում Կիրեսունի վիլայեթին, 23,3 տոկոսը՝ Օրդուին, 16,1 տոկոսը՝ Տրապիզոնին, մնացած 11,7



տոկոսը՝ Բոլուի, Կոջաելիի, Ռիզեի և Զոնգուլդակի վիլայեթներին։ Թուրքիային բաժին է ընկնում աշխարհում հավաքվող կաղինի կեսից ավելին։ Բերքը տատանվում է 60 հազարից մինչև 130 հազար տոննայի միջև։

Ցիտրուսային ծառերն աճեցվում են գլխավորապես Միջերկրական ծովի առափնյա գոտում (Մերսինի, Ալանիայի, Ֆինիկեի, Անթալիայի շրջանները) և Սև ծովի առափնյա արևելյան անկյունում (Ռիզե-Խոպա շրջանը)։ Երկրում հավաքվում է մեկ միլիարդից ավելի նարինջ, 300—400 միլիոն մանդարին, 600—700 միլիոն կիտրոն։

Ամենուրեք աճեցվում են խնձորներ (մոտ 200 հազար տոննա), դեղձ (մոտ 100 հազար տոննա), սերկևիլ, ընկույզ, պիստակ (գլխավորապես Ղազիայնթափի վիլայեթում), ծիրան (հատկապես Բուրսայի վիլայեթում), սալոր, կեռաս և այլն։

**Անասնապահություն:** Լեռնային արոտավայրերի առատությունը և երկրագործության օազիսային տիպը Թուրքիայում լայն նախադրյալներ են ստեղծում անասնապահության զարգացման համար։ Սակայն տարբեր գյուղատնտեսական շրջանների համար այդ բնագավառի նշանակությունը բոլորովին էլ միևնույն չէ. Սև ծովի առափնյա շրջաններում, Էգեյան տնտեսական գոտում և երկրի հարավում գերակշռում է երկրագործությունը, Կենտրոնական Անատոլիայում երկրագործությունը հավասար զուգորդվում է անասնապահությամբ, իսկ երկրի արևելքում հիմնական բնագավառը անասնապահությունն է։ Մթերատու անասունների գլխաքանակի մասին տվյալները բերված են 6-րդ աղյուսակում։

1964 թվականի սկզբի դրությամբ անասունների ընդհանուր գլխաքանակն անցավ 75 միլիոնից։ Բնակչության մեկ շնչին ընկնող անասուններով Թուրքիան առաջին տեղերից մեկն է գրավում եվրոպական երկրների շարքում, բայց կաթի և յուղի ստացումով զբաղեցնում է վերջին տեղերից մեկը։

Գլխաքանակի մեջ գերակշռում են մանր եղջերավոր

անասունները, մի երևույթ, որը հատկանշական է միջերկրածովյան ավազանի երկրների համար, որտեղ անասնապահությունը համարվում է չոր տափաստաններին և լեռնային արոտավայրերին։ Խոշոր եղջերավոր անասունները հիմնականում քաշող են, մթերային կաթնատու անասունները քիչ են (կաթնատու կովերն ու գոմեշները միայն 30 տոկոսն են կազմում, մնացածները՝ բանող անասուններ են)։ Անասնակեր ձմեռվա համար միանգամայն անբավարար են կուտակում (10 միլիոն տոննա անհրաժեշտ 16 միլիոն տոննայի փոխարեն), և դաժան, ձյունաշատ ձմեռներին անասունները սատկում են կերապակասությունից ու ցրտերից։

Աղյուսակ 6

**Անասունների գլխաքանակը**
*(հազար գլուխ)*

| | 1940 թ. | 1950 թ. | 1963 թ. |
|---|---|---|---|
| Խոշոր եղջերավոր անասուններ | 10706 | 11148 | 13816 |
| Ոչխարներ | 26272 | 23083 | 32279 |
| Այծեր | 16896 | 18543 | 21505 |
| Այդ թվում՝ անգորական | 5501 | 3966 | 5587 |
| Ձիեր | 898 | 1140 | 1171 |
| Ջորիներ | 70 | 109 | 205 |
| Ավանակներ | 1413 | 1633 | 1888 |
| Ուղտեր | 109 | 110 | 48 |

Անասնաբուժական ծառայությունը նույնքան վատ է դրված, որքան որ 20—30 տարի առաջ էր։ Մեկ անասնաբույժին ընկնում է 80 հազար գլուխ անասուն, այն դեպքում, երբ Բելգիայում և Դանիայում ընկնում է 5 հազար գլուխ, իսկ Շվեյցարիայում՝ նույնիսկ 3 հազար գլուխ։

Անասնաբուծության վրա անբարենպաստ ազդեցություն է գործում մարգագետինների և արոտավայրերի տարածությունների կրճատումը։ Անասնակերի և արոտավայրերի պրոբլեմը, անասունների հիվանդությունների դեմ պայքարը, նոր բարձր մթերատու անասնացեղերի բուծումը,



անասնաբուծության մթերքների որակի բարձրացումը՝ ահա այն հիմնական խնդիրները, որոնց հետ անընդհատ առընչվում է Թուրքիայի անասնաբուծությունը։

Մթերքների արտադրանքը տատանվում է հետևյալ սահմաններում. կաթը՝ 4—4,2 միլիոն տոննա (բնակչության յուրաքանչյուր շնչին 130 կգ), միսը՝ մոտ 200 հազար տոննա, բուրդը (ոչխարի)՝ 34—40 հազար տոննա, բուրդը (անգորյան այծերի)՝ 6—7 հազար տոննա։ Անասունների և անասնապահական մթերքների մի մասը ցածր գնողունակության պատճառով արտահանման է գնում, կազմելով թուրքական արտահանության 10 տոկոսը (իր արժեքով)։

Սև և Մարմարա ծովերի առափնյա շրջաններում զարգացած է թռչնաբուծությունը։ Տնային թռչունների (գլխավորապես հավեր) ընդհանուր թիվը հասնում է 27 միլիոնի, տարեկան ձվատվությունը կազմում է 1,1—1,3 մլրդ հատ։

Թուրքիայի գյուղատնտեսության հնագույն բնագավառներից մեկը շերամապահությունն է։ 60 հազար ընտանիքներ, որոնք շերամորդ են բազմացնում, 1963 թվականին ստացան 1,9 հազար տոննա բոժոժ։ Կապիտալիստական երկրներից արհեստական թելերից պատրաստված էժանագին կտորների ներմուծումը սնանկացնում է թուրքական շերամապահներին և այդ բնագավառը հասցնում է անկման։

Մեղվապահությունն առավել լայն զարգացում է ստացել Էգեյան և Մարմարա ծովերի շրջաններում (Մուղլայի և Բալըքեսիրի վիլայեթներում), Հյուսիս-արևելյան Անատոլիայում (Կարսի և Էրզրումի վիլայեթներում), Ներքին Անատոլիայում (Անկարայի վիլայեթ) և միջերկրածովյան ավազանում (Անթալիայի վիլայեթ)։ Երկրում եղած 1,4 միլիոն փեթակները տարեկան տալիս են մոտ 10 հազար տոննա մեղր և հազար տոննա մեղրամոմ։ Գյուղատնտեսական բանկը վարկավորման միջոցով ձգտում է զարգացնել այդ բնագավառը։

**Ձկնորսությունը** Թուրքիայում արդյունաբերական մեծ նշանակություն չունի, չնայած երկրի ափերը ողողող ջրերը հարուստ են ձկներով։ Ծովային ձկների արդյունաբերական

որսը, որ տարեկան հասնում է 120—130 հազար տոննայի, կատարվում է Նեղուցների, Իզմիրի ծոցի և Սև ծովի արևելյան մասի առափնյա շրջաններում։ Դա պոտենցիալ հնարավորություններից չափազանց ցածր է։ Ձկան որսը ներքին ջրամբարներից նույնպես աննշան է։ Ձկների մի մասն արտահանվում է։ Գոյություն ունեն ձկան պահածոների ոչ մեծ գործարաններ, որոնք տեղավորված են Սամսունում, Գելիբոլուում և Մարմարա կղզու վրա։ Ձկան միջին սպառումը բնակչության մեկ շնչի հաշվով կազմում է տարեկան 2 կգ։

**Անտառային տնտեսություն։** Անտառներն ու թփուտները գրավում են 10 524 հազար հեկտար տարածություն կամ ամբողջ տերիտորիայի 13,5 տոկոսը։ Գործնականում բոլոր անտառները պետության ձեռքում են գտնվում, որը դրանք ղեկավարում է անտառների գլխավոր դիրեկցիայի միջոցով։ Դրանք հիմնականում կենտրոնացած են առափնյա վիլայեթների լեռնային շրջաններում և բռնում են դրանց տերիտորիայի մինչև 25 տոկոսը։ Անատոլիայի հարավում անտառային խոշոր զանգվածներ կան Անթալիայի (585 հազար հեկտար), Ադանայի (473 հազար հեկտար), Իչելի (442 հազար հեկտար) և Մուղլայի (429 հազար հեկտար) վիլայեթներում, հյուսիսում՝ Բոլուի (402 հազար հեկտար), Կոջաելիի (270 հազար հեկտար), Քաստամոնուի (253 հազար հեկտար) և Զոնգուլդակի (243 հազար հեկտար) վիլայեթներում։ Կենտրոնական և Արևելյան Անատոլիաները անտառներով աղքատ են։

Երկրում բացակայում է անտառային հարստությունների ռացիոնալ օգտագործումը. անտառները գազանաբար կտրատվում են. անտառապահպանությունը վատ է դրված, որի պատճառով ամեն տարի հրդեհներից կորչում են տասնյակ հազարավոր հեկտարներով անտառներ։ Այսպես, 1945 թվականից մինչև 1959 թվականը տեղի են ունեցել ավելի քան 13 հազար հրդեհներ, որոնց ժամանակ այրվել են 275 հազար հեկտար տարածությամբ անտառներ, ոչնչացվել է 7,5 միլիոն խորանարդ մետր շինարարական անտառանյութ



և 32 միլիոն խորանարդ մետր վառելափայտացու անտառ։ Մեծ վնաս է հասցնում անտառներն իբրև արոտավայրեր օգտագործելը։

Անտառային տնտեսության արտադրանքներն են՝ շինափայտը՝ 1,4 միլիոն խորանարդ մետր, հանքահորերի ամրացման համար անտառանյութը՝ 0,18 միլիոն, վառելափայտը՝ մոտավորապես 6 միլիոն խորանարդ մետր։ Բացի այդ 14 660 անտառային գյուղերի բնակիչներն օգտագործում են մի քանի միլիոն խորանարդ մետր, որը ոչ մի վիճակագրությամբ չի արտահայտվում։ Ընդունված է, որ անտառային արտադրանքը տարեկան ամբողջությամբ հասնում է 15 միլիոն խորանարդ մետրի, այն ժամանակ, երբ առանց անտառային տնտեսությանը վնասելու կարելի է կտրատել միայն 7—8 միլիոն խորանարդ մետր։

Անտառների հետ սերտորեն կապված է **որսորդությունը**։ Արդյունաբերական նպատակով գլխավորապես կատարվում են նապաստակների որս (տարեկան 500—600 հազար մորթի), աղվեսների որս (20—30 հազար մորթի), քարաբնակ կզաքիսի որս (8—10 հազար մորթի), փորսուղների որս (16—18 հազար մորթի) և ջրասամույրների որս։ Մի քանի տասնյակ հազար մորթիներ տարեկան արտահանվում է ԱՄՆ, ԳՖՀ, Ֆրանսիա և Անգլիա։ Միաժամանակ Թուրքիան այդ երկրներից ներմուծում է մշակված մորթեղեն։

## ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքիայի արդյունաբերությունն իրենից ներկայացնում է տնտեսության արագ զարգացող բնագավառ։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո արդյունաբերության զարգացումն զգալիորեն արագացել է։ Եթե 1938-ից մինչև 1951 թվականը երկրի արդյունաբերական արտադրանքի ինդեքսն ավելացել էր երկու անգամ, ապա 1953—1963 թվականներին այն ավելացավ մոտավորապես երկու և կես անգամ։ Որոշ տարիների Թուրքիայի արդյու-

նաբերական արտադրանքի աճը կազմեց 9—10 տոկոս։ 1948—1963 թվականներին Թուրքիայի արդյունաբերության զարգացման տվյալները բերված են 7-րդ աղյուսակում։

Աղյուսակ 7

Արդյունաբերական արտադրանքի ինդեքսը
(1948 թ.=100)

| Արդյունաբերության բնագավառը | 1953 թ. | 1960 թ. | 1962 թ. | 1963 թ. |
|---|---|---|---|---|
| Արդյունահանող . . . . . | 178 | 191 | 204 | 191 |
| Վերամշակող . . . . . | 172 | 279 | 337 | 442 |
| Էլեկտրաէներգիայի արտադրությունը | 177 | 390 | 504 | 587 |
| Ընդհանուր ինդեքսը | 168 | 256 | 282 | 303 |

Արդյունաբերական արտադրության ինդեքսի ընդհանուր աճը չի կարող քողարկել Թուրքիայի արդյունաբերական զարգացման շարունակաբար հետ մնալը երկրի աճող պահանջներից, ճգնաժամային երևույթներից, ինչպես նաև առանձին տարիների առանձին ճյուղերում գործնական ակտիվության անկումներից։ Դրա հետ մեկտեղ արդյունաբերությունը զարգանում է որոշակի չափով ոչ թե ազգային, այլ օտարերկրյա կապիտալի գործունեության հետևանքով և, այդպիսով, արտացոլում է իմպերիալիստական մոնոպոլիաներից երկրի կախվածության ուժեղացման ընդհանուր տենդենցը։

Երկրի համախառն արտադրանքի մեջ արդյունաբերության տեսակարար կշիռը 25 տոկոսից փոքր-ինչ բարձր է։ Արդյունաբերության մեջ կատարվող կապիտալ ներդրումների ընդհանուր գումարի 40 տոկոսը պատկանում է պետությանը։ Օտարերկրյա ներդրումների տեսակարար կշիռը ընդհանուր գումարում 2 տոկոսից չի անցնում։

1960 թվականի մայիսի պետական հեղաշրջումից հետո օտարերկրյա կապիտալ ներդրումները Թուրքիայի արդյունաբերության մեջ **փոքր-ինչ ուժեղացան**։ 1961 թվականի սեպտեմբերին որոշում ընդունվեց օտարերկրյա կապիտալը



խրախուսելու կոմիտե ստեղծելու մասին, որը պետք է զբաղվեր օտարերկրյա կապիտալները երկիր բերելու երաշխավորագրեր մշակելով, կոորդինացներ ստացված օգնությունը, հավանության տար արտասահմանյան այս կամ այն տեսակի ներդրմանը և այլն։

Արևմտյան մոնոպոլիաներին հետաքրքրող հիմնական բնագավառներն են քիմիական, ռետինի, սննդի և կերամիկական արդյունաբերությունները։ Կապիտալ ներդրումների ընդհանուր գումարի 38 տոկոսը պատկանում է ամերիկյան, 21 տոկոսը՝ շվեյցարական, 14-ը՝ հոլանդական, 11-ը՝ արևմտագերմանական ընկերություններին։ Թուրքական արդյունաբերության մեջ ներդրված է ընդամենը արտասահմանյան 16 երկրների կապիտալ։

Մեջլիսի մշակած և հաստատած 1963—1967 թվականների տնտեսական զարգացման հնգամյա պլանը նախատեսում է խոշոր կապիտալ ներդրումներ արդյունաբերության բոլոր բնագավառներում։ Հինգ տարում նախատեսվում է վերամշակող արդյունաբերության մեջ ներդնել 10 մլրդ լիրա, էներգետիկայի զարգացման մեջ՝ 5,1 մլրդ, արդյունահանության մեջ՝ 3,2 մլրդ լիրա։ Տնտեսության զարգացման համար հնգամյա պլանով նախատեսված ընդհանուր գումարներից արդյունաբերության նշված բնագավառներում պլանավորվում է կատարել բոլոր միջոցների (մասնավոր և պետական) 30 տոկոսից ավելի ներդրում։ Պլանով նախատեսված են արդյունաբերական արտադրության զարգացման բարձր տեմպեր (արդյունահանող արդյունաբերության գծով՝ տարեկան 11,5 տոկոս, վերամշակող արդյունաբերության գծով՝ 12,8 տոկոս)։ Պլանով նախատեսվում է նաև զգալի միջոցների հոսք (բոլոր հատկացումների մոտ 25 տոկոսը) արտասահմանից (մոտավորապես 15 միլիարդ լիրա)։

Սակայն հնգամյա պլանի կատարման առաջին տարիները (1963—1964) արդյունաբերության բնագավառում ցույց տվեցին, որ պլանավորված տեմպերը իրականացվում են ընդամենը կիսով չափ միայն։ Թուրքական մամուլն այդ

երեւույթը բացատրում է արդյունաբերությունը ֆինանսավորելու համար միջոցների բացակայությամբ, մասնավոր և օտարերկրյա կապիտալների թույլ հոսքով դեպի խոշոր արդյունաբերություն, թուրքական ներքին շուկայում իմպերիալիստական մոնոպոլիաների մրցակցությամբ։

Արդյունաբերության մեջ պետական կապիտալ ներդրումների պլանները կատարվում են գլխավորապես Համաշխարհային բանկի և Էքզիմբանկի կողմից։

Երկրի արդյունաբերական խոշոր կենտրոններն են Ստամբուլը, Անկարան, Իզմիրը, Բուրսան։ 1963 թվականի տվյալներով 38581 ընդհանուր արդյունաբերական ձեռնարկություններից 10141-ը գտնվում է Ստամբուլում, 5471-ը՝ Անկարայում, 3329-ը՝ Իզմիրում և 1475-ը՝ Բուրսայում։ Պաշտոնական տվյալների համաձայն, Ստամբուլում կենտրոնացված է Թուրքիայի ամբողջ արդյունաբերական բանվորների մոտ 20 տոկոսը, Իզմիրում՝ 12, Զոնգուլդակում՝ 8, Անկարայում՝ 5 տոկոսը։ Ամբողջությամբ վերցրած, Թուրքիայի արևմտյան շրջաններում, ուր արդյունաբերությունն առավել զարգացած է, կենտրոնացած է բոլոր բանվորների մոտավորապես 60 տոկոսը։

Վերամշակող արդյունաբերությունը տալիս է ամբողջ արդյունաբերական արտադրանքի 80 տոկոսից ավելին, արդյունահանող արդյունաբերությունը՝ 11 տոկոսը, էլեկտրաէներգետիկան՝ 8—9 տոկոսը։ Թուրքական վերամշակող արդյունաբերության առավել զարգացած ճյուղերը՝ տեքստիլ, սննդա-համի, քիմիական և շինանյութերի արդյունաբերությունները միասին վերցրած տալիս են ամբողջ արտադրանքի մինչև երեք քառորդը (ըստ արժեքի)։ Արդյունաբերական արտադրության ընդհանուր մակարդակը ամբողջությամբ վերցրած միանգամայն անբավարար է, և երկիրը շատ ապրանքների գծով իր պահանջները բավարարում է արտասահմանից ներմուծելու շնորհիվ։ Բնակչության մեկ շնչին ընկնող շատ ապրանքների արտադրությամբ Թուրքիան եվրոպական տերությունների շարքում վերջին տեղերից մեկն է գրավում։ Բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի



հիմնական տեսակները 1963 թվականին միջին հաշվով կազմել են.

| | |
|---|---|
| Էլեկտրաէներգիա . . . . . . | 126 կվտ. ժամ |
| Քարածուխ . . . . . . . . | 225 կգ |
| Գորշ ածուխ . . . . . . . | 162 » |
| Նավթ (հում) . . . . . . | 24 » |
| Չուգուն և երկաթահալվածք . . . . | 7 » |
| Պողպատ . . . . . . . . | 11 » |
| Ցեմենտ . . . . . . . . | 91 » |
| Թուղթ և ստվարաթուղթ . . . . . | 3 » |
| Շաքար . . . . . . . . | 14 » |
| Բամբակյա գործվածքներ . . . | 18 մ |
| Բրդյա գործվածքներ . . . . | 0,5 » |

Բերված թվերը 4—5 անգամ գերազանցում են նախապատերազմյան ցուցանիշները։

Էլեկտրաէներգիա։ Էլեկտրաէներգիայի արտադրությունը Թուրքիայում երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին աճեց մոտավորապես երկու անգամ, 1946 թվականից մինչև 1950 թվականը՝ ավելի քան 40 տոկոսով, իսկ 1950-ից մինչև 1963 թվականը՝ գրեթե հինգ անգամ (790 միլիոն կիլովատ ժամից մինչև 3784 միլիոն կվտ ժամ)։ Նկատելիորեն ավելացել է հիդրոէներգիայի արտադրությունը հիդրոկայաններում, որոնց մեծ մասը շարք մտավ 50—60-ական թվականներին։ 1963 թվականին դրանք տալիս էին ամբողջ էլեկտրաէներգիայի գրեթե կեսը, մինչդեռ 1950 թվականին նրանց բաժինը կազմել էր միայն 4 տոկոս։

1962 թվականի տեղեկություններով, արտադրված ամբողջ էլեկտրաէներգիայի 73,2 տոկոսը օգտագործվել է արդյունաբերության մեջ, մնացածը ծախսվել է կենցաղային կարիքների վրա։ Նույն այդ տվյալներով, երկրի 35600 գյուղերից էլեկտրականություն ունեին միայն 234-ը, իսկ 940 գավառային կենտրոններից՝ 61-ը։ Ամբողջությամբ վերցրած, թուրքական մամուլի վկայությամբ, երկրի բնակչության 70 տոկոսը չի օգտվում էլեկտրաէներգիայից։

Ամենախոշոր ջերմաէլեկտրակենտրոնը (որը տարեկան 600 միլիոն կվտ. ժամ էլեկտրաէներգիա է արտադրում) գըտնըվում է Զաթալաղզիում (Զոնգուլդակից 15 կմ արևելք)։ Կայանը կառուցված է 1948 թվականին, 1953 թվականին ընդլայնվել է անգլիական «Մետրոպոլիտեն—Վիկկերս» ֆիրմայի կողմից։ Բարձր լարվածության գծով (322 կմ երկարությամբ) էլեկտրաէներգիան տրվում է Ստամբուլին։ Խոշոր ջերմակայաններ են կառուցված նաև Տունչբիլեքում (տարեկան 300 միլիոն կվտ.ժամ) և Սոմայում (տարեկան 200 միլիոն կվտ.ժամ), որոնք կառուցվեցին Էթիբանկի վարկերի օգնությամբ, որ ստացվել էին արևմտագերմանական, ամերիկյան և անգլիական ֆիրմաներից։ Խոշոր գէսեր են կառուցվել Սեյհան (տարեկան 284 միլիոն կվտ.ժամ) և Սաքարիա (տարեկան 412 միլիոն կվտ.ժամ) գետերի վրա։ Արևմտագերմանական և ամերիկյան ընկերություններն իրականացնում են մի շարք հիդրոէլեկտրակայանների կառուցումը. բացի այդ, նրանք հետախուզական աշխատանքներ են տանում նոր գէսերի կառուցման համար։ Նախագծվում է խոշոր հիդրոկայանի շինարարություն Եփրատ գետի վրա (Քեբան գյուղում)։

Բնակչության մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի արտադրությունն աճել է հետևյալ կերպ. 1950 թվականին՝ 33 կվտ.ժամ, 1956 թվականին՝ 60, 1960 թվականին՝ 100, 1963 թվականին՝ 126 կվտ.ժամ։

**Արդյունահանող արդյունաբերությունը** բավական լայն զարգացում է ստացել, չնայած երկրի օգտակար հանածոները դեռևս թույլ են ուսումնասիրված։ Արդյունահանող արդյունաբերության մեջ աշխատում է 66 հազարից ավելի բանվոր ու ծառայող, որոնց 90 տոկոսից ավելին աշխատում է պետական ձեռնարկություններում։ Այս բնագավառը հումքի որոշ տեսակներից ապահովում է ԱՄՆ-ի և արևմտաեվրոպական երկրների արդյունաբերությունը, ինչպես նաև բավարարում է բուն Թուրքիայի պահանջների մի մասը։

Օգտակար հանածոների հիմնական մասն արդյունահանվում է Էթիբանկի ձեռնարկություններում, որը մինչև 1957 թվականը գործում էր իրեն ենթակա յոթ կազմակերպությունների՝ «Էրեգլիի քարածխի հանքերի», «Արևմուտքի լիգնիտների հանքերի», «Դիվրիգիի երկաթահանքերի», «Թուրքական պղնձի», «Արևելքի քրոմիտների», «Քեչիբորլուի ծծմբի հանքերի», «Ածխի խրացման ընկերության» միջոցով։



Պետական սեկտորի տեսակարար կշիռն արդյունահանող արդյունաբերության մեջ բավական մեծ է։ Թուրքիայի զարգացման հնգամյա պլանը կազմողների տեղեկությունների համաձայն, պետական սեկտորը տալիս է արդյունահանող արդյունաբերության արտադրանքի 75 տոկոսն ըստ ծավալի և 82 տոկոսն ըստ արժեքի։ Քարածխի, պղնձի, ծծմբի և աղի հանույթն ամբողջությամբ վերահսկվում է պետության կողմից։ Բացի այդ, պետական կազմակերպությունները տալիս են քրոմիտի հանքաքարի 41 տոկոսը, ցինկի 17 տոկոսը, երկաթահանքի 47 տոկոսը, գորշ.ածխի 71 տոկոսը, նավթի 51 տոկոսը և արճճի 75 տոկոսը։

Մասնավոր կապիտալը վերահսկում է մանգանի հանքաքարի, հանքային ջրերի, փրփրաքարի, զմռնիտի քարի և անտիմոնի արտադրությունն ամբողջությամբ։ Թուրքական և օտարերկրյա մասնավոր կապիտալի դերն արդյունահանող արդյունաբերության մեջ անշեղորեն աճում է, չնայած մասնավոր ու պետական սեկտորների կապիտալ ներդրումների ընդհանուր գումարների հարաբերությունները մնում են 1:10-ի սահմաններում։

**Քարածուխն** արդյունահանվում է Զոնգուլդակի ածխային ավազանում, որը տարածվում է Էրեգլիից մինչև Ամասրի։ Ընդամենը այնտեղ հաշվվում է մոտ 40 ածխահոր, ուր աշխատում են ավելի քան 40 հազար բանվորներ։ Ածխի հանույթն ամբողջապես վերահսկվում է պետության կողմից։ 1957 թվականի սեպտեմբերին քարածխային արդյունաբերությունը տրվեց նոր ստեղծված պետական, «Թուրքիայի քարածխի արդյունահանման ընկերության» («Թյուրքիե քյոմյուր իշլեթմելերի կուրումու») ենթակայությանը, որի կապիտալը կազմում է 750 միլիոն լիրա։

1963 թվականին արդյունահանվել է 6,8 միլիոն տոննա քարածուխ։ Սակայն արդյունաբերության աճի կապակցությամբ զգացվում է ածխի խրոնիկական պակաս։ Հնգամյա պլանը նախատեսում է 1967 թվականին նրա հանույթն ավելացնել 22 տոկոսով։

Գորշ ածխի (լիգնիտի) արդյունահանումը կատարվում է հիմնականում Տունչբիլակում, Դեգիրմիսազում և Սոմայում (պետական սեկտոր)։ Ածխահորերում զբաղված է 270 ծառայող և 6100 բանվոր։ 1963 թվականին գորշ ածխի հանույթը կազմել է 4,8 միլիոն տոննա։ Հին ձեռնարկությունների մոդեռնիզացման և նորերի կառուցման շնորհիվ գորշ ածխի հանույթը վերջին տարիներին զգալիորեն ավելացավ։ Այնուամենայնիվ, ձեռք բերված ծավալը (տարեկան 4,5 միլիոն տոննա) չի բավարարում երկրի աճող պահանջները։

Անշեղորեն բարձրանում է մասնավոր սեկտորի ձեռնարկությունների տեսակարար կշիռը։ 1946 թվականին դրանք արդյունահանել են գորշ ածխի 15 տոկոսը, 1950 թվականին՝ 19 տոկոսը, 1963 թվականին՝ 25 տոկոսից ավելին։

**Նավթի** հետազոտումը Թուրքիայում սկսվել է շատ վաղուց։ Դեռևս 1922 թվականին, ազգային-ազատագրական շարժման տարիներին, սովետական կառավարությունը մասնագետ ուղարկեց, որը հետազոտական աշխատանքներ կատարեց Արևելյան Անատոլիայի շրջաններում։ Ստացվեցին դրական արդյունքներ։ Սակայն գործնականում նավթի պաշարները մնացին չհետազոտված։ Միայն նախապատերազմյան տարիներին, երբ Թուրքիայում ստեղծվեց օգտակար հանածոների հետազոտության ինստիտուտ, սկսվեցին սիստեմատիկ հետազոտական աշխատանքները։

Մինչև 1954 թվականը նավթի հետախուզումն ու հանույթը հանդիսանում էր պետական մենաշնորհ։ 1954 թվականին օրենք ընդունվեց նավթի մասին, ըստ որի օտարերկրյա ընկերություններին թույլ է տրվում նավթային հանքավայրերի հետախուզություն և հանույթ կատարել։ 1963 թվականին հետազոտական աշխատանքներ էին կատարում թուրքական



2 և օտարերկրյա 14 ընկերություններ. վերջիններիս թվում են այնպիսի նավթային մոնոպոլիաներ, ինչպես «Կալտեքսը», «Շելլը», «Սոկոնի վակուումը»։ 1963 թվականին արդյունահանվել է 745 հազար տոննա նավթ։

«Շելլ», «Բրիտիշ պետրոլեում», ինչպես նաև ամերիկյան «Սոկոնի Մոբիլ Օյլ» ընկերությունները տարեկան 3,2 միլիոն տոննա հում նավթի հզորությամբ խոշոր նավթամշակման գործարաններ կառուցեցին Մերսինում, ամերիկյան «Կալտեքս» ընկերությունը (բաժնետոմսերի 49 տոկոսը) և թուրքական «Թյուրքիե պետրոլարի Ա. Օ.» ընկերությունը (51 տոկոս)՝ Իզմիրում. վերջին ձեռնարկության հզորությունը տարեկան 1 միլիոն տոննա հում նավթ է։

1963 թվականի տվյալներով, Թուրքիայի նավթամշակման գործարաններում վերամշակվել է 3377,8 հազար տոննա հայրենական և բերովի նավթ, այդ թվում Բաթմանի գործարանում՝ 532,5 հազար տոննա, Իզմիթում՝ 888,9 հազար, Մերսինում՝ 1956,4 հազար տոննա։

Թուրքիայի նավթի շահագործման հիմնական աշխատանքները կատարում է «Թյուրքիե պետրոլարի Ա. Օ.» պետական ընկերությունը, որին պատկանում են Սիիրթի վիլայեթի (Ռամանե, Գարզան, Ջելիկլի, Գերմիկ) նավթահանքերը, ինչպես նաև Բաթմանի նավթամշակման գործարանը, որը կառուցվել է 1955 թվականին։ Նրա հզորությունն է տարեկան 580 հազար տոննա հում նավթ։ Նավթահանքերի շրջաններից դեպի գործարան նավթամուղ կա։

Ազգային նավթային ընկերությունը լրիվ բավարարում է երկրի արևելյան շրջանների նավթի ու նավթամթերքների պահանջները։

Աճում է նավթի հանույթը «Մոբիլ Օյլ» և «Շելլ» ընկերությունների ձեռնարկություններում։

**Երկաթահանք** հիմնականում արդյունահանվում է Դիվրիգիի շրջանում (Սվազի և Էրզրումի միջև), պետական հանքախորշերում. հանքաքարը գալիս է Կարաբյուքի մետալուրգիական կոմբինատ։ Առավել խոշոր մասնավոր ընկերություններն են. «Դյումերս թիջարեթ Թ. Ա. Օ.»-ն, «Յուղ Կոյ-

յունչուղեմիր մաղնեզարի Լ.—Գ. Շ.ս-ն, «Արքթաշ Ա. Շ.ս-ն և «Մանթաշ Թ. Ա. Շ.ս-ն։ 1963 թվականին հանույթը կազմեց 749 հազար տոննա. դրա կեսը ավել էին պետությանը պատկանող հանքավայրերը։ Մասնավոր ֆիրմաների կողմից արդյունահանվող գրեթե ողջ հանքաքարը արտահանվում է Հոլանդիա, Արևմտյան Գերմանիա, Իսպանիա։

**Քրոմի հանքաքարի** հանույթով Թուրքիան աշխարհում առաջին տեղերից մեկն է գրավում (1963 թվականին 444 հազար տոննա)։ Հանքաքարի մոտ 60 տոկոսը տալիս է Գյուլեմանի շրջանը, 18 տոկոսը՝ Բուրսայի վիլայեթը, 10 տոկոսը՝ Էսքիշեհիրի վիլայեթը, մնացածը՝ Ֆեթհիեի շրջանը։ Հանույթն ու արտահանությունը հիմնականում իրականացնում են մասնավոր ընկերությունները։

Հումքի այդ տեսակի սպառումը ամբողջովին կախված է արտաքին շուկայի կոնյունկտուրայից։ Հանույթի աճից որոշ ժամանակ անց անկայման վրա է հասնում կտրուկ անկումը։ 1958 թվականից քրոմի հանույթի արդյունաբերությունը ճգնաժամ է ապրում, քանի որ ԱՄՆ-ում և մի շարք այլ երկրներում գոյություն ունեն քրոմի զգալի ստրատեգիական պաշարներ։ Թերթերի խոստովանությամբ, քրոմի արդյունահանությունը 500 տոկոսով գերազանցում է Թուրքիայի արտահանության հնարավորությունները։

1964 թվականի հունվարին Թուրքիան ԱՄՆ-ից 7 միլիոն լիրա վարկ ստացավ քրոմի արտահանման համար։ Սակայն այդ միջոցառումն առայժմ շոշափելի արդյունքներ չի տվել։

**Պղնձի հանքաքարն** արդյունահանվում է բացառապես Էրգանիում, Մուրգուլում և Կվարսխանում գտնվող էթիբանկի ձեռնարկությունների միջոցով։ Էրգանիի և Մուրգուլի պղնձահանքերը զգալիորեն ընդարձակված են և հագեցված նոր ներմուծված սարքավորումներով։ Հանքաքարը պարունակում է ոսկու (մեկ տոննային 12—15 գրամ) և արծաթի (տոննային 150—200 գրամ) խառնուրդ։ Սև պղնձի արտադրությունը 1963 թվականին կազմել է 25 հազար տոննա։ Թուրքիայում արդյունահանվող պղնձի մեծ մասն արտահանվում է արտասահմանյան երկրներ։



**Մանգանի հանքաքարի** շահագործումը կատարվում է բացառապես մասնավոր ընկերությունների միջոցով Անկարայի, Դենիզլիի, Սամսունի, Զոնգուլդակի, Բալըքեսիրի, Ռիզեի, Յոզգատի և Թեքիրդաղի շրջաններում։ Գրեթե ողջ հանքաքարն արտահանվում է։ Մանգանի հանքաքարի հանույթը տատանվում է զգալի սահմաններում. 1950 թվականին այն կազմել է 32 հազար տոննա, 1955 թվականին՝ 50 հազար, 1960 թվականին՝ 42 հազար, 1963 թվականին՝ 20 հազար տոննա։

**Մագնեզիտ** արդյունահանում են մասնավոր ֆիրմաները հիմնականում Աֆիոն-Կարահիսարի, Էսքիշեհիրի, Անկարայի և Ֆեթհիեի շրջաններում։ Մագնեզիտ մեծ քանակությամբ հանդիպում է քրոմի հանքաշերտերում, բայց նրա անջատումը քրոմի հանքաքարից Թուրքիայում կազմակերպված չէ։ Մագնեզիտի տարեկան արդյունահանությունը, որ մինչև 1961 թվականը կազմում էր 1—2 հազար տոննա, այնուհետև ավելացավ մինչև 18—20 հազար տոննայի։

**Վոլֆրամ։** Արևմտագերմանական Կրուպպ ֆիրման էթիբանկի հետ միասին կազմակերպել է վոլֆրամի հանույթը Ուլուդաղ լեռան շրջանում։ Հանույթն աննշան է։

**Արճիճ** արդյունահանվում է առավելապես Քեբանում (Էլյազըղ վիլայեթում), Բալղարդաղում (Մերսինի շրջան) և Բալյեում. արտադրանքի 75 տոկոսը տալիս են էթիբանկի ձեռնարկությունները։

**Ոսկի և արծաթ** փոքր քանակությամբ պարունակվում է Բալղարդաղի արճիճի հանքաքարում (1 տոննա հանքաքարի մեջ 10 գրամ ոսկի և 250 գրամ արծաթ) և Քեբանում (400 գրամ արծաթ 1 տոննա հանքաքարի մեջ)։ Ոսկի պարունակվում է նաև Էրգանիի պղնձահանքի մեջ։ Տարեկան ոսկու հանույթը կազմում է 300 կգ, արծաթինը՝ 18 տոննա։

**Ծծումբ** արդյունահանվում է Քեչիբորլուում (Իսպարտայի վիլայեթ), էթիբանկի ձեռնարկություններում, որտեղ աշխատում է մոտ 350 բանվոր։ Տարեկան արտադրությունը 19,4 հազար տոննա է (1963 թվականին)։

Բացի այդ, Թուրքիայում արդյունահանվում է սնդիկ

(Իզմիրի և Քյութահիայի շրջանում, 1963 թվականին՝ 103 տոննա), անտիմոն (Բալըքեսիրի և Թուրհալի մոտակայքում, 1961 թվականին՝ 2,5 հազար տոննա), բորացիտ (1963 թվականին՝ 88 հազար տոննա), թերթաքարեր (արջասպ), 1963 թվականին՝ 97 հազար տոննա, գմանիտ (1963 թվականին՝ 10,6 հազար տոննա), ալբեստ (1963 թվականին՝ 0,4 հազար տոննա), փրփրաքար (1963 թվականին՝ 0,2 հազար տոննա), աղ (տարեկան 500 հազար տոննա)։

Վ ե ր ա մ շ ա կ ո ղ  ա ր դ յ ո ւ ն ա բ ե ր ո ւ թ յ ո ւ ն ն  առանձնապես արագ սկսեց զարգանալ վերջին տարիներին։ 1963 թվականին 1953 թվականի համեմատությամբ արտադրության ինդեքսն ավելացավ 2,8 անգամ։

1963 թվականի տվյալներով վերամշակող արդյունաբերության արտադրանքի 40 տոկոսից ավելին (ըստ արժեքի) տվել են սննդի արդյունաբերության ձեռնարկությունները (ներառյալ նաև ծխախոտինը), 29 տոկոսը՝ հագուստ և տեքստիլ արտադրող ձեռնարկությունները, 6 տոկոսը՝ մետաղամշակմանը և միայն մոտավորապես 3,5 տոկոսը՝ մեքենաշինության արդյունաբերությունը։

**Տեքստիլ արդյունաբերություն։** Այս բնագավառում աշխատող բանվորների թիվը 1949 թվականից մինչև 1958 թվականը աճել է երեք անգամ (54,7 հազարից մինչև 168,6 հազար)։ Արտադրության ընդլայնումը գնում էր հիմնականում մասնավոր սեկտորի ձեռնարկությունների հաշվին։

Բամբակյա գործվածքի արդյունաբերության մեջ հաշվվում է 1350 հազար իլիկ և 25 հազար դազգահ։ Տարեկան արտադրվում է 500—550 միլիոն մետր գործվածք, այդ թվից 150—160 միլիոն մետրը տալիս են պետական ֆաբրիկաները։ Բրդյա գործվածք թողարկող ձեռնարկություններն ունեն մոտ 300 հազար իլիկ և 3,5 հազար դազգահ։ Տարեկան արտադրանքը գնահատվում է 20—25 միլիոն մետրի սահմաններում, որից 80 տոկոսից ավելին թողարկում են մասնավոր սեկտորի ձեռնարկությունները։

Թուրքիայի բամբակյա գործվածքի արդյունաբերության պետական սեկտորը տնօրինում է իլիկների և դազգահների



մոտավորապես 30 տոկոսը և տալիս է բոլոր տեսակի գործվածքեղենի մինչև 30 տոկոսը։ Ձեռքի հաստոցներով թողարկվում է ամբողջ արտադրանքի 15 տոկոսը։

Կայսերիում, Նազիլլիում, Բաքըրքյոյում, Էրեգլիում, Իզմիրում, Երզնկայում, Ադանայում, Դենիզլիում և Մալաթիայում են գտնվում սումերբանկի խոշոր բամբակագործական ձեռնարկությունները։

Կայսերիի կոմբինատը (կառուցվել է 1935 թվականին Սովետական Միության օգնությամբ), որն ունի 33 հազար իլիկ և հազարից ավելի դազգահ, Ադանայի բրդի ֆաբրիկայի հետ միասին (11,4 հազար իլիկ և 216 դազգահ) միավորված է մի՝ «Կայսերի վա Ադանա պամուկլու սանայի մյուեսսեսեսի» ընկերության մեջ, իսկ Նազիլլիի կոմբինատը (նույնպես սովետական վարկերի հաշվին է կառուցվել), որը հագեցված է 29,8 հազար իլիկներով և 768 դազգահներով, Խալքապընարի տեքստիլ ֆաբրիկայի հետ միասին (140 դազգահ) միավորված է մի՝ «Նազիլլի բասմա սանայի մյուեսսեսեսի» ընկերության մեջ։

Բաքըրքյոյի (19904 իլիկ, 450 դազգահ), Էրեգլիի (24016 իլիկ, 382 դազգահ) և Մալաթիայի (25200 իլիկ, 438 դազգահ) ֆաբրիկաները թողարկում են բրդի գործվածք. Իզմիրի կոմբինատը (32644 իլիկ, 585 դազգահ) սարքավորված է նորագույն ավտոմատ հաստոցներով և տարեկան կարող է թողարկել 28 միլիոն մետր բամբակյա գործվածք։ Դենիզլիի (15080 իլիկ) և Ադանայի (11204 իլիկ) ֆաբրիկաները թողարկում են մանվածք՝ իրենց հետ կապված տեքստիլ ձեռնարկությունների և մանր արտադրողների համար։

Մասնավոր սեկտորի խոշոր բամբակագործական ֆաբրիկաների թվին են պատկանում Կոչ քաղաքի կոմբինատը (10400 իլիկ, 500 դազգահ, ներկման ցեխ), որ աշխատում է ավելի քան 2,5 հազար բանվոր, հզորությունը տարեկան 23—25 միլիոն մետր է. Բաքըրքյոյի «Բոզկուրտ» կոմբինատը, որը կառուցված է «Թուրքիայի արդյունաբերական զարգացման բանկի» վարկերի օգնությամբ Վեհբի Կոչի և Պենայ ընտանիքի կողմից (աշխատում է հազարից ավելի բանվոր,

հզորությամբ՝ տարեկան 1200 տոննա մանվածք և մինչև 20 միլիոն մետր գործվածք)։ Ադանի ֆաբրիկան (19800 իլիկ, 384 դազգահ)։ Անթաքիայի «Ակիչ» ֆաբրիկան (10 հազար իլիկ, 300 ավտոմատ դազգահ) թողարկում է մանվածք, գործվածք, ինչպես նաև բամբակի ձեթ. աշխատում է մոտավորապես հազար բանվոր։ Բացի այդ, մասնավոր ֆաբրիկաներ տեղավորված են Դենիզլիում, Մարաշում, Սամսունում, Ադանայում և այլ քաղաքներում։

Առավել խոշոր բրդի գործվածքային ֆաբրիկաները պատկանում են սումերբանկին և միավորված են «Սումերբանկ յունլու սանայի միուեսսեսի» և «Սումերբանկ մերինոս յունլու սանայի միուեսսեսի» ընկերությունների մեջ։ Բանկի գրեթե բոլոր ձեռնարկությունները վերջին ժամանակներս մոդեռնիզացվել են։ Ստորև թվարկված են հիմնական ձեռնարկությունները։ Բուրսայի ֆաբրիկան (38 հազար իլիկ, 256 դազգահ) տարեկան թողարկում է մոտավորապես 0,5 միլիոն մետր մերինոսի բրդի գործվածք և 1,2 հազար տոննա մանվածք, այստեղ աշխատում է 3200 բանվոր. Հերեկեի ֆաբրիկան (3 հազար իլիկ, 100 դազգահ) տարեկան թողարկում է 800 հազար մետր գործվածք և ավելի քան 200 տոննա մանվածք, այստեղ աշխատում են հազարից ավելի բանվորներ. Դաֆտերդարի ֆաբրիկան (10 հազար իլիկ, 263 դազգահ), տարեկան տալիս է ավելի քան 2,5 միլիոն մետր գործվածք և 2,3 հազար տոննա մանվածք, այստեղ աշխատում են 2655 բանվորներ. Բյունյանի ֆաբրիկան (1,1 հազար իլիկ, 30 դազգահ) թողարկում է մոտ 0,5 միլիոն մետր գործվածք և 500 տոննա մանվածք, այստեղ աշխատում է 350 բանվոր. Իսպարտայի ֆաբրիկան (808 իլիկ, 50 դազգահ) տալիս է 25 հազար մետր գործվածք, 400 տոննա մանվածք, աշխատում են 200 բանվորներ։

Խոշորագույն մետաքսագործվածքային ձեռնարկությունները գտնվում են Ստամբուլում և Բուրսայում։ Բուրսայում գտնվող գործնական բանկին պատկանող գործարանը մոդեռնացվել և ընդլայնվել է. այնտեղ աշխատում է մոտ 860 բանվոր։



Զգալիորեն ընդլայնվել է արհեստական մետաքսաթելի գործարանը Գեմլիկեում (պատկանում է սումերբանկին)։ Այն թողարկում է մինչև 400 հազար մետր արհեստական մետաքս, 150 տոննա բուրդ, 20 տոննա ցելոֆան։ Արևմտագերմանական և ամերիկյան ընկերությունները մտադրվել են թուրքական ընկերությունների հետ միասին կառուցել նեյլոնի արտադրության ձեռնարկություն Փենդիքեում (Ստամբուլ) և Բուրսայում։ Թուրքա-պակիստանյան ֆաբրիկան Տաշքյոպրյուում տարեկան կարող է արտադրել 500 տոննա պարան և 5 միլիոն մետր ճոպան։

Տեքստիլ ապրանքների գծով երկրի կարիքները գրեթե լրիվին ծածկվում են տեղական արտադրանքի կտորեղենով (բացառությամբ բարձր որակի կտորեղենից)։

Սննդի արդյունաբերությունը տալիս է վերամշակող արդյունաբերության համախառն արտադրանքի մեկ երրորդից ավելին։ 1961 թվականի տվյալներով այդ բնագավառում (ներառյալ նաև խմիչքների արտադրությունը) աշխատում էին 110,8 հազար մարդ և գրանցված է 1160 ֆիրմա, որոնք ունեն մոտավորապես 500 միլիոն լիրա հիմնական կապիտալ և տարեկան տալիս են 2,83 մլրդ լիրայի արտադրանք։ Սննդի արդյունաբերությունը ներկայացված է մսի և ձկան ընկերության ձեռնարկություններով, ձեթի, կաթի փոշու գործարաններով, պահածոների ձեռնարկություններով, մակարոնի և շաքարի գործարաններով և այլն։

Շաքարի արդյունաբերությունը մինչև 50-ական թվականների սկիզբը ներկայացված էր 4 գործարաններով, որոնք տարեկան արտադրում էին 140 տոննա շաքար։ 1953 թվականից հետո կառուցվեցին ևս 13 գործարաններ։ Այդ գործարանները կառուցվեցին հիմնականում օտարերկրյա ընկերությունների վարկերով. այդ ընկերություններն իրականացնում էին սարքավորումների մատակարարումն ու մոնտաժը։

Գործարանները տեղավորված են Ալփուլլուում, Անկարայում, Քաստամոնուում, Էսքիշեհիրում, Թուրհալում, Ուշակում, Ադապազարում, Ամասիայում, Կոնիայում, Քյութահիայում, Սուսուրլուկում, Բուրդուրում, Էրզրումում, Երզնկայում,

Էլյազըղում, Մալաթիայում և Կայսերիում։ Գրեթե բոլոր շաքարի գործարանները պատկանում են ազգայնացված ընկերություններին, որոնք վերահսկվում են շաքարի գործարանների միանաշնորհային ակցիոներական ընկերության կողմից. դրա կապիտալի 66,8 տոկոսը պատկանում է պետությանը։

Շաքարի եփման սեզոնում շաքարի գործարաններում աշխատում է ավելի քան 20 հազար բանվոր։ Շաքարի տարեկան արտադրությունը տատանվում է ըստ տարիների։ 1963 թվականին այն կազմեց 473 հազար տոննա։

Արտադրանքի մի մասն արտահանվում է. 1962 թվականին արտահանվել է 164 հազար տոննա։ Նախագծեր կան ևս մի քանի շաքարի գործարան կառուցելու համար։

Թուրքիայում կան մոտ 16 հազար գյուղական ալրաղացներ, որոնք տարեկան աղում են 5—6 միլիոն տոննա հացահատիկ և 300 գլանային աղացներ՝ մոտավորապես 2,2 միլիոն տոննա հզորությամբ։ Ալրաղաց արդյունաբերության ամբողջ արտադրական հզորությունը կազմում է 7,6 միլիոն տոննա։

Ձեթ արտադրող արդյունաբերությունը տարեկան տալիս է մինչև 165 հազար տոննա (1962 թվական)։ Հումք են հանդիսանում ձիթենին (զեյթուն), բամբակի, արևածաղկի, կակաչի և քունջութի սերմերը։

Թուրքիան արտահանում է ձիթատու սերմեր և պատրաստի ձեթ։ Արդյունաբերության այդ բնագավառում նշանակալի տեղ է գրավում «Թուրյաղ» ընկերությունը և «Թարիշ» առևտրական կոոպերատիվների միավորումը, որոնց պատկանում են ձեթի և օճառի ձեռնարկությունները։ «Թարիշը» Իզմիրում կառուցել է խոշոր ձեթի կոմբինատներ, որտեղ պատրաստվում են նաև օճառ ու գլիցերին։

Բաքըրքյոյի մարգարինի գործարանը, որ պատկանում է «Յունիլըվեր-իշ-Թյուրք լ-դ Շ.» ընկերությանը (անգլո-հոլանդական-թուրքական կապիտալ) տարեկան արտադրում է մինչև 40 հազար տոննա մարգարին։

**Մսի-ձկան արդյունաբերություն։** Երկրում կան զգալի թվով սպանդանոցներ, միսը վերամշակելու և մսից պատրաստուկներ պատրաստելու ձեռնարկություններ։ Սակայն մսի հիմնական մասը պատրաստվում է սպանդանոցներից դուրս (1963 թվականի տվյալներով՝ 60 տոկոսից ավելին)։ Մսի ընդհանուր արտադրությունը Թուրքիայում տարեկան կազմում է 150—200 հազար տոննա, այդ թվում մոտ 100 հազար տոննա ոչխարի միս։



«Էթ վե բալըկ քուրումու» պետական ընկերությունը, որը հիմնադրվել է 1953 թվականին, տարեկան մթերում է մոտավորապես 20 հազար տոննա միս։ Նրան են պատկանում լավ սարքավորված մսի կոմբինատները Էրզրումում, Անկարայում, Կոնիայում, Ուրֆայում, Էլյազըղում, Կայսերիում, Սամսունում, Զեյթինբուրնուում և սառնարանները՝ Հայդարփաշայում, Կայսերիում, Իսքենդերունում և Էրեգլիում։ Կոմբինատները նախատեսված են խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների, ինչպես նաև թռչունների վերամշակման համար։ Արտադրանքի զգալի մասը գնում է բանակի կարիքների բավարարմանը։ Կոմբինատների արտադրական հզորությունն է՝ օրական (8 ժամ աշխատելու հաշվով) մինչև 2 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասունի և ավելի քան 20 հազար ոչխարի վերամշակում։

Ընկերությունն ունի ձկան պահածոների երկու գործարաններ և տարայի արտադրության գործարան, ինչպես նաև ձկան խոշոր սառնարաններ Տրապիզոնում, Սամսունում, Սինոպում, Զոնգուլդակում, Մարմարա ծովի կղզիների վրա, Չանաքկալեում, Չեշմեում և Բեշիկթաշում։ Զեյթինբուրնուի ձկան վերամշակման կոմբինատը տարեկան տալիս է 15—20 միլիոն տուփ պահածո։ Հենց այստեղ էլ գործում է թիթեղյա տուփերի արտադրության գործարանը։ Տրապիզոնում գործում է ձկան յուղի և ձկնալյուրի արտադրության գործարան։

Թուրքիայում արտադրվում է 4 միլիոն տոննա կաթ, որի մի մասն օգտագործվում է պանրի, յուղի, կաթի փոշու պատրաստման համար։ Երկրում գործում է պաստերիզացված կաթի չորս գործարան, որոնցից կարևոր նշանակություն ունի «Աթաթյուրք Օրման չիֆթլիքի»-ին պատկանող Անկարայի գործարանը։ Արդյունաբերական եղանակով տա-

բեկյան արտադրվում է 61 հազար տոննա բրինձա, 11,4 հազար տոննա քաշարա պանիր, 5,2 հազար տոննա կարագ, 6,7 հազար տոննա պաստերիզացված կաթ և 0,5 հազար տոննա կաթի փոշի։

1960 թվականի տվյալներով երկրում կային պահածոների արդյունաբերության 44 ձեռնարկություններ։ Մրգերի և բանջարեղենի կոնսերվացման ձեռնարկությունների արտադրական հզորությունը կազմում է 37 հազար տոննա, ձկանը՝ 12,3 հազար տոննա։ Բայց այդ հզորությունը միանգամայն ոչ լրիվ է օգտագործվում։

Սպիրտի, օղու, գինու, ինչպես նաև ծխախոտի ու ծխախոտա-արդյունքների արտադրությունը պետական մենաշնորհ է հանդիսանում։ Պետական մենաշնորհի վարչությունը թուրքական օղի՝ «ռաքի» արտադրող 4 գործարան ունի. ձեռնարկությունների հզորությունը տարեկան 9 միլիոն լիտր է։ Էսքիշեհիրի և Թուրհալի գործարանները, որ աշխատում են շաքարի արտադրության մնացորդների բազայի վրա, տարեկան թողարկում են մոտ 20 միլիոն լիտր սպիրտ։ Խաղողի գինի (տարեկան մոտ 15 միլիոն լիտր) պատրաստվում է 81 ձեռնարկություններում, որոնցից 9-ը պատկանում են պետական մենաշնորհի վարչությանը, 2-ը՝ ցուցադրական տնտեսություններին և 70-ը՝ առանձին անձնավորությունների։ Արտադրանքի կեսը տալիս են մասնավոր անձանց ձեռնարկությունները։ Զգալի քանակությամբ գինի արտահանվում է ԳՖՀ, Անգլիա, Շվեդիա և Դանիա։ Պետական մենաշնորհի վարչությանը պատկանում է գարեջրի երկու գործարան (Ստամբուլում և Անկարայում) տարեկան 19 միլիոն լիտր գարեջրի արտադրողականությամբ։ 1962 թվականին Թուրքիայում արտադրվել է 33,7 միլիոն լիտր գարեջուր։ Սպիրտ-օղու արդյունաբերության բանվորների թիվը հասնում է 7,2 հազարի։

Զգալի զարգացման է հասել ծխախոտի արդյունաբերությունը։ Պետական մենաշնորհի վարչությանն ունի ծխախոտի նախնական վերամշակման 80 ձեռնարկություն և 350 պահեստ, ինչպես նաև սիգարետի 6 ֆաբրիկաներ



(Ստամբուլում, Իզմիրում, Ադանայում, Սամսունում, Մալաթիայում և Բիթլիսում), որոնց արտադրողականությունը տարեկան 26 հազար տոննա է։

**Կաշվի-կոշիկի արդյունաբերություն։** Կաշվի դաբաղման, քաղաքացիական և զինվորական կոշկեղենի արտադրության ամենախոշոր ձեռնարկությունը Ստամբուլում (Բեյկոզ) պատկանում է պետությանը. այնտեղ տարեկան արտադրվում է մինչև 1,2 միլիոն զույգ կոշիկ։ Ստամբուլում գործում են նաև ռետինե կոշիկների երկու գործարաններ (մասնավոր կապիտալ), որոնք թողարկում են մինչև մեկ միլիոն զույգ։ Ընդամենը կաշվի-կոշիկի արդյունաբերության մեջ հարյուրավոր մասնավոր ձեռնարկություններ կան, որոնք տեղավորված են հիմնականում Ստամբուլում, Իզմիրում և Բուրսայում։ Բանվորների թիվը այս բնագավառում հասնում է 20 հազարի։

**Լուցկու արտադրությունն** իրականացվում է Բյույուքդերեում և Իստինիեում գտնվող պետական գործարաններում, որոնք տարեկան թողարկում են մինչև 300 միլիոն տուփ։

**Ցեմենտի արդյունաբերություն։** 1953 թվականից Թուրքիայում իրականացվում է ցեմենտի հին գործարանների վերասարքավորման և նորերի կառուցման ծրագիր, այդ գործարաններն ընդգրկում են 23 ձեռնարկություններ։ 1964 թվականի կեսերին շարք մտան 18 ձեռնարկություններ, որոնցից Զեյթինբուռնուի, Սվազի, Դարըջայի և Անկարայի գործարանները վերակառուցվել էին։ Ստորև բերվում է գործող ձեռնարկությունների տարեկան հզորությունը 1963 թվականի տվյալներով (հազար տոննաներով)։

| | | | |
|---|---|---|---|
| Դարըջա | 300 | Բալըքեսիր | 45 |
| Զեյթինբուռնու | 220 | Փինարհիսար | 55 |
| Բարթըն | 220 | Թարսուս | 75 |
| Կարտալ | 240 | Էլյազըղ | 85 |
| Անկարա | 120 | Կոնիա | 150 |
| Սվազ | 200 | Ադանա | 150 |
| Իզմիր | 150 | Աֆիոն-Կարահիսար | 85 |
| Էսքիշեհիր | 150 | Նիգդե | 85 |
| Չորում | 85 | Սյոքե | 55 |

Գործող գործարանների արտադրական հզորությունը տարեկան 2,7 միլիոն տոննա ցեմենտ է։ 1963 թվականին Թուրքիայում արտադրվել է 2780,2 հազար տոննա ցեմենտ, որից ներմուծվել է ընդամենը 91 հազար տոննա։

«Ցեմենտի արդյունաբերության համաթուրքական ընկերությունը», որը ստեղծվել է 1953 թվականին պետական (բաժնետոմսերի 89,8 տոկոս) և մասնավոր կապիտալի (10,2 տոկոս) մասնակցությամբ, գործնականում երկրի ցեմենտի արտադրությունը և վաճառքը դարձրել է իր մենաշնորհը։ Ցեմենտի նոր գործարանների կառուցումը և հների վերակառուցումը կատարվում էր այդ ընկերության վերահսկողության ներքո, արևմտագերմանական, իտալական և ֆրանսիական ֆիրմաների անմիջական մասնակցությամբ, որոնք տվել էին վարկեր ու սարքավորում։ Զգալի միջոցներ ստացվեցին նաև «Մարշալի պլանի» ֆոնդից և Թուրքիայի արդյունաբերական զարգացման բանկից։

Աղյուսի և կղմինդրի արտադրությունը կենտրոնացված է հիմնականում Էսքիշեհիրում (11 ձեռնարկություն), Քյութահիայում (8 գործարան) և Իզմիրում (6)։ Ընդամենը Թուրքիայում 80-ից ավելի աղյուսի գործարաններ և կերամիկական ձեռնարկություններ կան, որոնք տարեկան տալիս են մոտ 120 միլիոն հատ աղյուս և կղմինդր, լրիվ բավարարելով երկրի պահանջները։ Հրակայուն աղյուս պատրաստվում է Ֆիլյոսի գործարանում, որը պատկանում է սումերբանկին (Թուրքիայի ամենախոշոր աղյուսի ձեռնարկությունը)։ Հզորությունը տարեկան 28,8 հազար տոննա աղյուս է։

Ճենապակյա-հախճապակյա ամանեղենը պատրաստվում է Ստամբուլի Էջզաչիբաշի ֆիրմայի ֆաբրիկայում և Ստամբուլի, Չանաքկալեի ու Ցարըմջայի՝ սումերբանկին պատկանող ձեռնարկություններում, ինչպես նաև Թուզլայի (Ստամբուլ) հախճապակյա ֆաբրիկայում, որը պատկանում է տարերկրյա կապիտալին։ Կոնիայում մասնավոր միջոցներով կառուցվել է գիպսի գործարան։

Ապակու արդյունաբերությունը գրեթե ամբողջությամբ (99 տոկոսով) գտնվում է գործնական բանկի ձեռքում։ Նը-



րան են պատկանում Փաշաբախչայում և Չայիրովայում (Ստամբուլի մոտ) գտնվող խոշոր գործարանները, ինչպես նաև մի շարք ավելի մանրերը։ Փաշաբախչայի գործարանի հզորությունը տարեկան մոտ 40 հազար տոննա ապակի և ապակյա առարկաներ է, որը ծածկում է Թուրքիայի պահանջների 50 տոկոսը։ Այնտեղ աշխատում են մոտ 2 հազար բանվորներ և 200 ինժեներա-տեխնիկական աշխատողներ ու ծառայողներ։

Չայիրովայի գործարանը խոշորագույնն է Մերձավոր արևելքում, կառուցված է ՍՍՀՄ տեխնիկական օժանդակությամբ. նրա արտադրանքը Թուրքիայում ամբողջովին բավարարում է պատուհանի ապակու պահանջները (գործարանի հզորությունը տարեկան 7,5 միլիոն քառակուսի մետր է)։

1963 թվականին Թուրքիայում պատրաստվել են 15,6 հազար տոննա շշեր, 5,9 հազար տոննա ապակյա իրեր և 4,9 միլիոն քառակուսի մետր պատուհանի ապակի։

Զարգանում է նաև **անտառամշակման արդյունաբերությունը**, չնայած երկիրը շարունակում է ներմուծել անտառանյութ։ Թուրքիայում հաշվվում են 200-ից ավելի անտառամշակման և մոտ 200 կահույքի ձեռնարկություններ։ Ստամբուլում կա 45 անտառամշակման և 91 կահույքի ձեռնարկություն, Իզմիրում (համապատասխանորեն) 47 և 36, Անկարայում՝ 4 և 30, Էսքիշեհիրում՝ 14 և 3։ Կահույքի արդյունաբերության մեջ զբաղված է մոտ 10 հազար բանվոր։

**Քիմիական արդյունաբերությունը** ներկայացված է ներկերի, թթուների, արհեստական պարարտանյութերի, կաուչուկի արտադրության և այլ ձեռնարկություններով։ Արտադրանքի 70 տոկոսը տալիս են մասնավոր սեկտորի ձեռնարկությունները։ Քիմիական արդյունաբերության արտադրանքների զգալի մասը ներմուծվում է արտասահմանից։

Արհեստական պարարտանյութերի արտադրությունը միայն չնչին չափով է ապահովում երկրագործության պահանջները։ 1954 թվականին սկսեց գործել Իսքենդերունի

սուպերֆոսֆատի գործարանը (նախագծային հզորությունն է տարեկան 100 հազար տոննա), իսկ 1962 թվականին՝ Քյութահյայի ազոտային պարարտանյութերի գործարանը (հզորությունն է՝ 60 հազար տոննա ամոնիումի սուլֆատ, 50 հազար տոննա ազոտային պարարտանյութեր, 6 հազար տոննա ծծմբաթթու)։ Արևմտագերմանական «Բադիշե ունդ սոդա ֆաբրիկ» ընկերությունը մատակարարել է սարքավորում, տեխնիկական դոկումենտացիա և կատարել է ձեռնարկության մոնտաժը։ Կարաբյուքի մետալուրգիական կոմբինատի մնացուկների բազայի վրա գործում է սուպերֆոսֆատի արտադրության երրորդ գործարանը. նրա հզորությունը կազմում է տարեկան 33 հազար տոննա։

Թուրքիայում գործում է դեղորայք արտադրող մոտ 100 ձեռնարկություն։ Աչքի ընկնող տեղ է գրավում Էջզաջըբաշիի ֆիրման, որը խոշոր ձեռնարկություններ ունի Ստամբուլում և Իզմիրում։

Կարտալում (Ստամբուլ) գործում է գյուղատնտեսության համար թունաքիմիկատներ արտադրող գործարանը։ Գործարանը կառուցել է «Ագրո-Մերկ Ջիրա մյուչադալե իլյաչլարը Տ.» թուրքա-արևմտագերմանական ընկերությունը, գործարանի հզորությունն է՝ տարեկան 7—8 հազար տոննա քիմիկատներ։

Երկրում, գլխավորապես Ստամբուլում, հաշվվում է ռետինի արդյունաբերության 196 ձեռնարկություն, որի 75 տոկոսը ռետինե կոշիկներ է պատրաստում։ Արտադրական հզորությունը տարեկան 24,4 միլիոն զույգ կոշիկներ և 6,6 տոննա այլ իրեր է։

1962 թվականին Իզմիթում և Ադաբազարում սկսեցին գործել ավտոդողեր և ավտոկամերաներ թողարկող գործարաններ։ Գործարանները պատկանում են «Թյուրք Փիրելլի Ա. Տ.» թուրք-իտալական ընկերությանը (հզորությունը տարեկան 240 հազար ավտոդող) և «Գուդյիր Տ.» ամերիկա-թուրքական ընկերությանը (հզորությունը տարեկան 159 հազար ավտոդող և 110 հազար ավտոկամերա)։ 1964 թվականին շարք մտավ Ադաբազարի ավտոդողերի գործարանը, որը



պատկանում է ամերիկյան «Յունայտեդ Ստեյտս Ռոյալ կոմպանի»-ին։ Այդ գործին մասնակցում են նաև գործնական բանկը, մուլտիմիլիոնատեր Վեհբի Կոչը և այլ կապիտալիստներ։ Ներկայումս կառուցվում են երեք գործարաններ, որոնց ընդհանուր արտադրողականությունը տարեկան 460 հազար ավտոդող և ավտոկամերա է։ 1963 թվականին Թուրքիայում թողարկվել է մոտ 100 հազար ավտոդող և ավտոկամերա։

Թուրքիայում գործում են պլաստմասսայից իրեր պատրաստող մի շարք մանր ձեռնարկություններ. դրանք ամբողջապես աշխատում են ներմուծվող հումքի վրա. կենտրոնացված են առավելապես Ստամբուլում։

Կարաբյուքի մետալուրգիական կոմբինատի պղնձաձուլական գործարանի մնացուկների բազայի վրա Մուրգուլում գործում են ծծմբաթթու պատրաստող արտադրամասեր։ Բացի այդ, Կարաբյուքի կոմբինատում պատրաստվում է նավթալին, ամոնիումի սուլֆատ, քարածխի ձյութ, կաուստիկ սոդա։ Արտադրությունը չի բավարարում երկրի պահանջները։

**Թղթի-ցելյուլոզի արդյունաբերությունը** կենտրոնացված է Իզմիթում, որտեղ կառուցված են թղթի հինգ ֆաբրիկաներ, ինչպես նաև քլորի լուծույթ և փայտանյութից, փալասներից ու ծղոտից թղթի զանգված պատրաստող ձեռնարկություն։ Ձեռնարկություններում աշխատում է 5,3 հազար բանվոր և 456 ծառայող։

Բացի այդ, երկրում գործում են 7 փոքր թղթի ֆաբրիկաներ, որոնք մակուլատուրա են վերամշակում։

Թուրքիայի թղթի պահանջները կազմում են տարեկան 200 հազար տոննա. նախատեսվում էր հայրենական արտադրությամբ դրանք բավարարել 1965 թվականին։

**Մետալուրգիական արդյունաբերություն։** Հիմնական արտադրանքը տալիս են Կարաբյուքի կոմբինատը, որը թողարկում է պրոֆիլային երկաթ, թերթավոր պողպատ, լարեր, ձևավոր պողպատ և այլն, ինչպես նաև Ղրըխկալեի պողպատաձուլական (ռազմական) գործարանը։ Թուրքիայի համար առավել կարևոր նշանակություն ունի Կարաբյուքի մետալուր-

քիական կոմբինատը, որը միավորում է երեք կոքսային մարտկոց, երեք դոմնային վառարան, չորս մարտենյան վառարան, գլանման հաստոց, լարերի և մեխերի պատրաստման արտադրամասեր, ամբողջական մետաղե խողովակների գործարան, ծծմբաթթվի և սուպերֆոսֆատի գործարան։ Բացի այդ, կոմբինատն ունի էլեկտրակայան։ 1963 թվականին կոմբինատը տվել է 1056 տոննա կոքս, 210,5 հազար տոննա չուգուն, 331,3 հազար տոննա պողպատ, 215 հազար տոննա գլանվածք, 23,8 հազար տոննա խողովակ, 24 հազար տոննա ծծմբաթթու, 16 հազար տոննա սուպերֆոսֆատ։ Կոմբինատում աշխատում են 56 ինժեներներ, 170 տեխնիկներ, 400 հոգի ղեկավարող անձնակազմ, 6500 բանվորներ։

«Բորու սանայի Ա. Շ.» արևմտագերմանական-թուրքական ընկերությունը, որը տարեկան 50 հազար տոննա եռակցված խողովակներ հզորությամբ գործարան է կառուցել Իզմիթում, երկրի պահանջները բավարարում է միայն մեկ երրորդով։ Հնգամյա պլանի համաձայն նախատեսվում է Իզմիթի գործարանն ընդլայնել և մոդեռնացնել։

Ամերիկյան և արևմտագերմանական կապիտալի օգնությամբ Իզմիրում կառուցվել է «Մեթաշ» («Մետալուրժի ֆաբրիկասի Տ. Ա. Շ.») ընկերության ոչ մեծ մետալուրգիական կոմբինատը, տարեկան 60 հազար տոննա ձևավոր ձուլվածքի հզորությամբ։

1965 թվականի սկզբներին շարք մտավ Էրեգլիի մետալուրգիական կոմբինատի առաջին հերթը, որը պատկանում է մասնավոր կապիտալին. կոմբինատի նախնական հզորությունը տարեկան 268 հազար տոննա պողպատ է (հետագայում հասցվելու է տարեկան մինչև 1 միլիոն տոննայի)։ Ենթադրվում է, որ նրա շինարարության ավարտից հետո սև մետաղների ներմուծումը կհասցվի նվազագույնի։

Գունավոր մետալուրգիան ներկայացված է երկու պղնձաձուլական գործարաններով Էրգանիում և Մուրգուլում (25 հազար տոննա սև պղինձ են տալիս), էլեկտրոլիտային եղանակով պղինձ ձուլող Սամսունի պղնձաձուլական գործարանով, որը պատկանում է «Եթիբանկ էլեկտրոլիտիկ բաքըր վա



մամուլլարի Ա. Շ.» ընկերությանը (հզորությունն է 6,5 հազար տոննա մաքուր պղինձ և դրանից ստացվող արտադրանք), և արճճի ձուլման երկու գործարաններով Սամսունում, որոնք կարող են տալ մինչև 13 հազար տոննա արտադրանք։

Մետալուրգիական արդյունաբերության մեջ կան նաև մի շարք մանր ձեռնարկություններ։ Ամբողջությամբ վերցրած այդ բնագավառը չի բավարարում երկրի պահանջները։

**Մեքենաշինության արդյունաբերությունը** ներկայացված է մի քանի խոշոր ձեռնարկություններով և ավելի քան երկու հարյուր մանրերով ու միջիններով։ Այդ բնագավառում զբաղված է մոտ 30 հազար բանվոր, ընդ որում նրանց մեկ հինգերորդ մասն աշխատում է պետական սեկտորի ձեռնարկություններում։ Պետությանն են պատկանում Սիվասի շոգեքարշանորոգման և վագոնաշինական գործարանները՝ Անկարայի, Էսքիշեհիրի և Ադափազարիի խոշոր վագոնանորոգման դեպոները, ինչպես նաև 43 ավելի փոքր դեպոներ և մոտ 30 վագոնանորոգման արհեստանոցներ։ Սակայն շարժական կազմի կապիտալ վերանորոգում կատարվում է միայն վերոհիշյալ չորս քաղաքներում։

Տրակտորների և մեքենաների հավաքումը իրականացվում է Անկարայի տրակտորահավաքման գործարանում (ամերիկյան և թուրքական կապիտալ), որի հզորությունն է 1,5—2 հազար մեքենա տարեկան. մեքենաների մասերի 75 տոկոսն ստացվում է արտասահմանից։ Գործարանը թողարկում է նաև գյուղատնտեսական գույք. պահեստամասեր, ճանապարհային մեքենաներ և մի շարք այլ իրեր։ Տրակտորների հավաքումը կազմակերպված է նաև Ադափազարիի ռազմական գործարանում, որը պատկանում է մեքենայական և քիմիական արդյունաբերության ընկերությանը. ձեռնարկության հզորությունն է տարեկան 3 հազար տրակտոր։ Այստեղ էլ հենց կատարվում է տրակտորների վերանորոգումը։ Գյուղատնտեսական մեքենաներ (կուլտիվատորներ, գութաններ, սրսկիչ մեքենաներ և այլն) պատրաստվում են Ադափազարիի գործարաններում։

1964 թվականին շարունակվում էր ավտոմեքենաների հավաքման և զանազան մեքենաների ու գործիքների արտադրության մի շարք ձեռնարկությունների շինարարությունը (ամերիկյան, անգլիական և ճապոնական կապիտալով)։

Ավտոմեքենաների հավաքման գործարան աշխատում է Իզմիրում. այն պատկանում է «Օթոմոբիլ սանայի Ա. Շ.» ընկերությանը, որը հիմնադրել է Վեհբի Կոչը՝ ամերիկյան կապիտալի մասնակցությամբ։ Գործարանը կարող է տարեկան հավաքել մինչև 5 հազար ավտոմեքենա, սակայն իրական արտադրանքը զգալիորեն պակաս է։ 1963 թվականին թուրքական ապրանքների տեսակարար կշիռը բեռնատար մեքենաների հավաքման գործում կազմում էր ընդամենը 35 տոկոս, իսկ մարդատար մեքենաների հավաքման գործում՝ 25 տոկոս։ Ավտոմեքենաների արտադրությունը կազմել է՝ «Պիկապ» բեռնատար մեքենաներ՝ 2,2 հազար, ջիպեր և մարդատար ավտոմեքենաներ՝ 1,7 հազար։ 1964 թվականին կարգավորվեց 3,5 և 7-տոննանոց բեռնատար մեքենաների հավաքումը։

Ավտոհավաքման մեկ գործարան էլ գտնվում է Թուզլայում (Ստամբուլի մոտ)։ Այն թողարկում է բեռնատար ավտոմեքենաներ և ջիպեր։

Երկրի բոլոր վիլայեթների կենտրոններում գոյություն ունեն ավտոնորոգման արհեստանոցներ. դրանցից առավել խոշորները կենտրոնացած են Ստամբուլում, Անկարայում, Իզմիրում, Տրապիզոնում, Էսքիշեհիրում, Ադանայում և Սամսունում։

Բորնովի (Իզմիր) տրանսֆորմատորների գործարանը, որը հիմնադրել է Էթիբանկը՝ ֆրանսիական կապիտալի մասնակցությամբ, 1963 թվականին թողարկել է 498 տրանսֆորմատոր 150 հազար կվտ ընդհանուր հզորությամբ։ 1964 թվականին արտադրությունը պետք է հասներ հազար տրանսֆորմատորի՝ 275 հազար կվտ ընդհանուր հզորությամբ։

Նուրի Յուզի մեքենաշինական գործարանը Բորնովում պատրաստում է 5—11 ձիաուժ հզորությամբ էլեկտրաշարժիչներ։ Գործարանը սարքավորված է ավստրիական հաստոցներով, ունի տեխնիկայի վերջին խոսքով հագեցված ձուլման արտադրամաս։ Գործարանի նախագծային հզորությունն է տարեկան 1,5 հազար շարժիչ (Թուրքիայի 2 հազար պահանջի դիմաց)։



Ջալալ Դեմիրգյուրեշն Իզմիրում կառուցել է սեփական կոնստրուկցիայի «Սյումեր» բամբակազտիչ մեքենաների պատրաստման գործարան. դրանք տարածում են գտել ոչ միայն Թուրքիայում, այլև Միջին ու Մերձավոր Արևելքի այլ երկրներում։ Գործարանն իրացրել է էլեկտրաշարժիչների թողարկումը։

Նավաշինական գործարանները հիմնականում կենտրոնացված են Ստամբուլում։ Այստեղ կառուցվում են մինչև 6 հազար տոննա ջրատարողություն ունեցող նավեր։

Թվարկվածներից բացի մեքենաշինական արդյունաբերության ձեռնարկությունները տարեկան թողարկում են հետևյալ ապրանքները (1960 թվականի տվյալներով, հազար հատ).

| | | | |
|---|---|---|---|
| Դիզելային շարժիչներ | 3,5 | Խառատային հաստոցներ | 0,2 |
| Բամբակազտիչ մեքենաներ | 1,0 | Սառնարաններ (հավաքում) | 7,5 |
| Մանող մեքենաներ | 0,7 | Լվացքի մեքենաներ (հավաքում) | 4,3 |
| Հաշվիչ մեքենաներ | 0,1 | Փոշեծծիչներ (հավաքում) | 6,0 |
| Դուլպայի մեքենաներ | 0,2 | Կարի մեքենաներ (հավաքում) | 62,1 |
| Կենտրոնախույս պոմպեր | 0,7 | Հաշվիչ և գրամեքենաներ (հավաքում) | 8,7 |
| Մոտոպոմպեր | 0,4 | Կշեռքներ բոլոր տեսակների (հավաքում) | 35,0 |
| Ոռոգման պոմպեր | 0,3 | | |
| Ձեռքի պոմպեր | 7,7 | | |
| Ամբարձիչներ | 0,4 | | |
| Երկաթուղային հաստոցներ | 0,07 | | |

1960 թվականի տվյալների համաձայն, էլեկտրամեքենաների և էլեկտրական սարքերի արտադրությունը բնութագրվում էր հետևյալ տվյալներով (հազար հատ).

| | |
|---|---|
| Էլեկտրաշարժիչներ | 10,9 |
| Տրանսֆորմատորներ | 0,4 |
| Ռադիոհաղորդիչներ | 0,5 |
| Փողոցային լուսավորության լամպեր | 10,0 |
| Էլեկտրալամպեր | 7000,0 |
| Վենտիլյատորներ | 2,1 |
| Ակումուլյատորներ | 144,0 |

| | |
|---|---|
| Հեռախոսային մարտկոցներ | 150,0 |
| Էլեկտրամարտկոցներ | 302,0 |
| Էլեկտրական արդուկներ | 37,5 |
| Էլեկտրական վառարաններ | 50,5 |
| Թագիքոլգոնեքիչներ | 339,5 |
| Էլեկտրական նվագարկիչ | 41,9 |
| Էլեկտրական թավաներ | 44,2 |
| Էլեկտրական ինքնաեռներ | 35,5 |

Թուրքիայի **ռազմական արդյունաբերությունը** կենտրոնացած է 1950 թվականին հիմնադրված «Մաքինա վա քիմյա էնդուստրի քուրումու» պետական ընկերության ձեռքում։ Հիմնական ձեռնարկությունները գտնվում են Անկարայում (փամփուշտների գործարան, ռազմական պատվերներ կատարող փայտամշակման ֆաբրիկա, ավիացիոն շարժիչների և ինքնաթիռների հավաքման գործարաններ, հրացանի գործարան), Էլմադաղում (վառոդի գործարան), Կայսերիում (պարկուճի գործարան), Կըրքկալեում (վառոդի գործարան և այլ ձեռնարկություններ)։ Ռազմական գործարանները կառուցվել են գլխավորապես արևմտագերմանական ֆիրմաների կողմից, որոնք աշխատում են նաև նրանց ընդլայնման վրա։

Թուրքական ռազմական գործարանները թողարկում են հրացաններ, միջին տրամաչափի հրանոթներ, ականանետներ, գնդամթերք, ինքնաթիռներ (տարեկան 100 ինքնաթիռ՝ ուսումնական ու հետախուզական), քիմիական պրեպարատ և այլն։ Բացի այդ, ընկերությունը թողարկում է քիմիական պատրաստանյութեր, գյուղատնտեսական վնասատուների դեմ թույների փոշեցրիչներ, որսորդական հրացաններ։

## ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ

Տրանսպորտը Թուրքիայի տնտեսության առավել զարգացած բնագավառն է։ Նրա զգալի մասը գտնվում է պետության ձեռքում։

Կապիտալ ներդրումների չափերով տրանսպորտն առաջին տեղերից մեկն է գրավում[1]։ Խոշոր հատկացումները,

[1] 1963 թվականին 3513.7 միլիոն լիրա կապիտալ ներդրումների ընդհանուր գումարից տրանսպորտի համար հատկացվել է 1298 միլիոնը։



որոնք կատարվում են պետական բյուջեով և արևմտյան տերությունների «օգնությամբ» խճուղիների ընդլայնման, օդանավակայանների կառուցման, նավահանգիստների վերակառուցման և ծովային նավատորմի ավելացման համար իրականացվում են ոչ այնքան Թուրքիայի ներքին տնտեսական զարգացման նպատակով, որքան նրան ՆԱՏՕ և ՍԵՆՏՕ ագրեսիվ խմբավորումների մեջ ներքաշած իմպերիալիստական պետությունների շահերից ելնելով։

*Երկաթուղային տրանսպորտ*։ Երկաթուղիների շինարարությունը Թուրքիայում սկսվել է XIX դարի կեսերից։ Այն գլխավորապես կապված է եղել անգլիական, ֆրանսիական և գերմանական իմպերիալիստների ռազմա-ստրատեգիական պլանների հետ Մերձավոր ու Միջին Արևելքում, ինչպես նաև Հարավային Ասիայում։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին երկաթուղիների երկարությունը Թուրքիայում կազմել է 3931 կմ։ Դրանք բոլորը պատկանում էին գերմանական, ֆրանսիական և անգլիական մոնոպոլիաներին։

Թուրքական հանրապետության ստեղծման ժամանակ 4188 կիլոմետր երկաթուղիներից պետության ձեռքին էր գտնվում արդեն 1620 կիլոմետրը, այդ թվում և Կարսի երկաթուղին[1], որը Թուրքիային հանձնվեց սովետական կառավարության կողմից 1921 թվականի մարտի 16-ի համաձայնագրով։

Հետագա ժամանակաշրջանում հանրապետական Թուրքիայի կառավարությունը վերականգնում է առաջին համաշխարհային պատերազմի շրջանում ավերված երկաթուղային տնտեսությունը, օտարերկրացիներից հետ է գնում երկաթուղիները, ինչպես նաև կառուցում նորերը։ Այդպիսով, երկրորդ համաշխարհային պատերազմի վերջին Թուրքիայի եր-

[1] Կարսի երկաթուղին բաղկացած է երկու տեղամասերից՝ Արփաչայ—Սարիղամիշ (123 կմ), որը կառուցված է ռուսական կառավարության կողմից 1890—1896 թվականներին, և Սարիղամիշ—Էրզրում—Քյոփրյուքյոյ (նեղգիծ՝ 232 կմ), որը կառուցվել է ռուսական զորքերի կողմից 1914—1916 թվականներին։

կաթուղիների երկարությունը հասավ 7585 կմ-ի, որից 7185 կմ-ը պատկանում էր պետությանը։ Պատերազմից հետո, մինչև 1964 թվականը երկրում կառուցվել է ընդամենը 473 կիլոմետր երկաթուղի։ Այսպիսով, երկաթուղիների ընդհանուր երկարությունը 1964 թվականի սկզբին կազմել է 8058 կմ (տե՛ս Հավելված 1. «Թուրքիայի երկաթուղիները և նրանց երկարությունը»)։

Երկաթուղիների հագեցվածությամբ Թուրքիան զիջում է իրեն սահմանակից կապիտալիստական երկրներին[1]։

Երկաթուղային տրանսպորտը սպասարկում է գլխավորապես ներքին ապրանքաշրջանառությանը։ Հիմնական բեռներն են՝ քարածուխը, երկաթահանքը, քրոմի հանքաքարը, անտառանյութը, ցեմենտը և գյուղատնտեսական մթերքները։

Երկաթուղիների բեռնաշրջանառությունը բնութագրվում է 8-րդ աղյուսակի տվյալներով։

Աղյուսակ 8

Երկաթուղիների բեռնաշրջանառությունը

| Տարիները | Միլիոն տ/կմ | Միլիոն ուղևոր | Միջին վազքը՝ 1 տոննայով |
|---|---|---|---|
| 1956 | 4439 | 67,5 | 321 |
| 1961 | 3707 | 86,4 | 336 |
| 1962 | 3490 | 83,5 | 328 |

Երկաթուղիները կտրում են երկիրը արևմուտքից-արևելք և հյուսիսից-հարավ, այդպիսով ապահովելով բեռների փոխադրման հնարավորությունը ցանկացած ուղղություններով։ Նրանք ունեն ելք դեպի Թուրքիան շրջապատող բոլոր ծովերը։ Երկաթուղիների հագեցվածությամբ երկրի արևմտյան

[1] Թուրքիայում 100 քառ. կմ-ին ընկնում է 1040 մետր երկաթուղի, իսկ 1000 բնակչին՝ 290 մետր ուղիներ, Սիրիայում (համապատասխանաբար) 455 և 168 մետր, Իրաքում՝ 376 և 236 մետր, Իրանում՝ 213 և 164 մետր։



մասն առավել բարենպաստ դրության մեջ է գտնվում։ Իսկ հյուսիսում և հարավում միայն երկուական կետեր կան, որտեղ երկաթուղիները դուրս են գալիս ծովափ (Սամսունը և Զոնգուլդակը Սև ծովի ափին, Իսքենդերունը և Մերսինը՝ Միջերկրական ծովի ափին), այս Մարմարի և էգեյան ծովերի ափերին երկաթուղիները հասնում են հինգ կետում (Իզմիր, Բանդըրմա, Մուդանյա, Իզմիթ, Ստամբուլ)։ Միաժամանակ մի շարք խոշոր ընկած շրջաններ (հատկապես արևելյան մասում) մնում են երկաթուղային ճանապարհներից հեռու։ Երկաթուղիներով կապված չեն ինչպես Սև, այնպես էլ Միջերկրական ծովերի նավահանգիստները (բացառությամբ Մերսին-Իսքենդերուն տեղամասի)։

Արևմուտքից դեպի արևելք ընկած ուղղությամբ անցնում են երկու հիմնական մայրուղիները՝ Իզմիր—Աֆիոն-Կարահիսար—Ադանա—Դիարբեքիր—Կուրթալան և հույն-թուրքական սահմանը՝ Ստամբուլ—Անկարա—Սվազ—Կարս—Արփաչայ (սովետա-թուրքական սահմանի վրա)։ Առաջին գիծը կազմում է նախկին Բաղդադի ճանապարհի մի մասը, որը Թուրքիան կապում է եվրոպական երկրների, նրա հարավ-արևելյան հարևանների հետ։

Հյուսիսից դեպի հարավ Թուրքիայի տերիտորիան կտրում են չորս գծեր՝ Բանդըրմա—Բալըքեսիր—Իզմիր—Այդն. Ադափազարի—էսքիշեհիր—Բուրդուր. Զոնգուլդակ—Իրմաղ—Բողազքյոպրյու—Ուլուքըշլա—Մերսին. Սամսուն—Չեթինքայա—Իսքենդերուն։

Թուրքիան երկաթուղային հաղորդակցություն ունի Հունաստանի, Բուլղարիայի (Հունաստանի տերիտորիայի վրայով), Սիրիայի, Իրաքի և Սովետական Միության հետ։ Ներկայումս կատարվում է երկաթուղային ճանապարհի շինարարություն Վան քաղաքից դեպի Իրանի սահմանը։ Իրանն իր կողմից ևս երկաթուղի է կառուցում դեպի Թուրքիայի սահմանը Կոթուր քաղաքի ուղղությամբ։

Կանոնավոր միջազգային հաղորդակցություն իրականացվում է. արևմտյան ուղղությամբ՝ Ստամբուլից Սալոնիկի վրայով Բելգրադ, Տրիեստ մինչև Փարիզ. Հարավային

և հարավ-արևելյան ուղղությամբ՝ Իսլահիեից Հալեպ և Նուսայբինի ու Մոսուլի վրայով Բաղդադ։

Թուրքիայի երկաթուղիները միաուղի են. տեխնիկա-տնտեսական տեսակետից դրանք սակավ էֆեկտավոր են. Թողարկման և փոխադրման կարողությունները փոքր են։ Երկաթուղային գնացքները, իբրև կանոն, կարճ և քիչ տոննաժով են։ Նման դրությունը բացատրվում է առաջին հերթին ուղիների չափազանց բարդ պրոֆիլով։ Երկաթուղիները հսկայական քանակությամբ թունելներ, կամուրջներ, կտրուկ դարձումներ, զառիվերներ և զառիվայրեր ունեն։ Ուղիների բացարձակ մեծամասնությունը եվրոպական գծային (կոլեյա) լայնություն ունի (1435 մմ)։ Առանձին տեղամասերում (ընդամենը 340 կմ) գոյություն ունի նեղքիծ (1050 և 750 մմ լայնությամբ) երկաթուղի. Կարսի երկաթուղու Կարս—Արփաչայ հատվածը (70 կմ) ռուսական գծի լայնություն ունի (1524 մմ)[1]։ Գրեթե ամենուրեք դրված են մետաղյա շպալներ. բացառություն է կազմում Կարսի նահանգի մի մասը, որը կառուցված էր Ռուսաստանի կողմից։ Էլեկտրիֆիկացված երկաթուղիները Թուրքիայում ընդամենը 28 կիլոմետր են։

1964 թվականին Թուրքիայում կար 275 շոգեքարշ, 67 ջերմաքարշ (դիզելային), 3 էլեկտրաքարշ և 56 դրեզին։ Բոլոր այդ մեքենաները գնված են արտասահմանում։ Ապրանքատար վագոնների շինարարությունը և վերանորոգումը կատարվում է Անկարայի, Էսքիշեհիրի, Սիվասի և Ադաբազարի վագոնաշինական գործարաններում, այնտեղ յուրացվում է նոր լոկոմոտիվների հավաքումը բերովի դետալներից և մարդատար վագոնների արտադրությունը։ 1964 թվականին երկրում կար 1237 մարդատար, 15941 ապրանքատար, 2196 ծառայական վագոն։ Չեն բավարարում ցիստեռնները, սառնարանները և հանքաքար փոխադրելու վագոնները։ Վագոն-ննջարանները պետական երկաթուղի-

[1] 1961 թվականին ավարտվեց Կարս—Սարիղամիշ հատվածի գծի փոխադրումը եվրոպական գծի երկաթուղու լայնքի։



ների վարչությունը վարձակալում է «Վագոն-Լի» ընկերությունից։ Երկաթուղային տրանսպորտի անձնակազմը 66595 մարդ է։

*Ջրային տրանսպորտը*։ Թուրքիան դասվում է ծովային տերությունների շարքը, քանի որ նրա սահմանները երեք կողմից ողողում են Սև, Մարմարա, Էգեյան և Միջերկրական ծովերի ջրերը. Նրա տերիտորիան կտրում են Բոսֆորի և Դարդանելի նեղուցները, որոնք միջազգային տրանսպորտային նշանակություն ունեն։ Բացի այդ, Թուրքիայում կան մի քանի բավականին խոշոր լճեր և գետեր, որոնք հեռանկարային տեսակետից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ներքին տրանսպորտի զարգացման համար։

Թուրքական ծովային՝ շոգեով աշխատող նավատորմը ստեղծվել է XIX դարի կեսերին։ 1844 թվականին ստեղծվել է առաջին պետական նավագնացության «Ֆեվայիդի Օսմանիե» ընկերությունը (երկու շոգենավերով), որն զբաղվում էր փոխադրումներով Բոսֆորում և Մարմարա ծովում։ Հետագայում ստեղծվեցին տասնյակ սակավաջոր մասնավոր ազգային և օտարերկրյա ընկերություններ. առաջին համաշխարհային պատերազմի սկզբին դրանց թիվը հասնում էր մոտ 230-ի։

20-ական թվականներին Թուրքիայի հանրապետական կառավարությունը ձեռնամուխ եղավ ազգային առևտրական նավատորմի ստեղծմանը։ Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը կառավարությունն օտարերկրացիներից հետ գնեց ծովային տրանսպորտին սպասարկող բոլոր ձեռնարկությունները։ Թուրքական կառավարության ստեղծած «Նավագնացության բանկը» («Դենիզջիլիկ բանկասի») իր ձեռքում կենտրոնացրեց նավահանգստային տնտեսությունը, նավաշինությունը, նավանորոգումը և այլն։

Հետպատերազմյան տարիներին ծովային տրանսպորտի բեռնատարողությունն ավելացավ գրեթե երեք անգամ և 1963 թվականի սկզբին կազմեց 714304 տոննա։

Մասնավոր ազգային ընկերություններին է պատկա-

նում 125 նավ (311-ից) 330 հազար տոննա ջրածավալով. նրանց ձեռքում է գտնվում ծովային փոխադրումների, գլխավորապես առափնյա փոխադրումների, մոտ կեսը։

Թուրքական առևտրական նավատորմը համալրվում է հիմնականում արտասահմանում կատարվող գնումների միջոցով։ Ներկայումս Թուրքիան ի վիճակի է սեփական ուժերով լրիվին բավարարելու ինչպես առափնյա, այնպես էլ ներմուծման-արտահանման փոխադրումները։ Սակայն, օտարերկրյա ընկերությունների հետ (գլխավորապես ամերիկյան) ունեցած համաձայնագրերի պայմանների համաձայն, նա փոխադրման մեծ ծախսեր է կրում. որոշ տվյալների համաձայն, Թուրքիան օտարերկրյա նավերի վարձման համար տարեկան վճարում է մինչև 225 միլիոն լիրա։

Տարիքային կազմով Թուրքիայի առևտրական նավատորմը շատ հին է[1]։ Այդ պատճառով դեռևս 1950 թվականին թուրքական կառավարությունը հատուկ օրենքով արգելեց արտասահմանում գնել 25 տարուց հին ապրանքատար նավեր, 16 տարուց հին տանկերներ։ Հետագայում արգելվեց գնել 16 տարուց հին ապրանքային նավեր, 12 տարուց հին՝ դիզելային նավեր, իսկ տանկերներ՝ 8 տարեկանից հին։

Ժամանակակից խոշորագույն թուրքական նավերի մեծ մասը պատկանում է «Ծովագնացության բանկին»։ Դրանց թվում են «Անկարա», «Ադանա», «Իստամբուլ», «Կարադենիզ», «Ակդենիզ», «Մարմարա», «Էգե» բարձր կարգի մարդատար նավերը, որոնք աշխատում են միջազգային գծերում։

Մասնավոր նավատիրությունը հիմնականում ներկայացվում է վեց ծովային ընկերություններով։ Մասնավոր նավատերերի տրամադրության տակ կան ինչպես ժամանակակից խոշոր ապրանքատար նավեր, այնպես էլ նախորդ դարի 80-ական թվականներին կառուցված նավեր։

[1] Հատուկ հանձնաժողովը, որը 1958 թվականին ստուգել է առևտրական նավատորմի վիճակը, հաղորդել է, որ ուսումնասիրված 2730 նավերից 1319-ը (այսինքն 48 տոկոսը) լողում են 75 և ավելի տարի։ Նավերի երեք հինգերորդը գերազանցել է իր շահագործման տևողությունը։



Առափնյա փոխադրումների մեծ մասն իրականացվում է մանր առագաստանավերով, որոնց տարողությունը 50—70 տոննա է։ Առափնյա երկաթուղիների բացակայությունը ըզգալիորեն բարձրացնում է առափնյա փոխադրումների նշանակությունը։

Թուրքիան շատ ջանքեր է գործադրում իր նավաշինական արդյունաբերությունն ստեղծելու համար, այդ բնագավառի մեջ ներդնելով զգալի միջոցներ։ Սակայն դա գրեթե ամբողջովին կախված է օտարերկրյա մատակարարումներից։ Թուրքական նավաշինարանները կառուցում են առավելապես մանր նավեր, որոնք նախատեսվում են առափնյա նավարկումների համար։

Թուրքիայի 56 ծովային նավահանգիստներից համեմատաբար լավ սարքավորված են միայն յոթը. Ստամբուլը, Իզմիրը, Իսքենդերունը, Մերսինը, Սամսունը, Հայդարփաշան, Տրապիզոնը։

Գետային բեռնափոխադրումները տեղական նշանակություն ունեն. դրանք իրականացվում են լաստատարման միջոցով կամ տիկերներից սարքված լաստերով գետերի, գլխավորապես Տիգրիսի և Եփրատի հոսանքն ի վար բեռներ փոխադրելով։

Մի քանի մոտորանավեր են աշխատում Վանա լճի վրա. դրանք փոխադրում են ուղևորներ և բեռներ։ Ներկայումս կառուցվում է երկաթուղային պարոմ, որը Տաթվան քաղաքը կմիացնի Վանի հետ։ Թուրքիայի արևմտյան մասում եղած բազմաթիվ լճերը թույլ են օգտագործվում։ Մանր մոտորանավերով կանոնավոր նավարկություն իրականացվում է Էգրիդիր լճի վրա, որի ափին է գտնվում համանուն առողջարանը։

Ավտոմոբիլային տրանսպորտը կարևոր դեր է խաղում երկրի տնտեսական կյանքում։ Բոլոր խճուղային և տեղական ճանապարհների երկարությունը կազմում է 105540 կմ, որից ավտոմոբիլային տրանսպորտի համար կարող է օգտագործվել 59 հազար կիլոմետր. ճանապարհների մոտ 35 տոկոսն անմիջականորեն պետու-

թյան տնօրինության տակ է գտնվում։ Որոշ մայրուղիներ ասֆալտապատ են (ընդամենը 8066 կմ) և ապահովված ժամանակակից սպասարկման կայաններով։ Ճանապարհների մեծ մասը վերանորոգման կարիք ունի և կարող է օգտագործվել միայն ամառ ժամանակ։ Տարվա բոլոր ժամանակներին օգտագործելու համար պիտանի են միայն 38 հազար կիլոմետր ճանապարհներ։ 1962 թվականին Թուրքիայի խճուղային ճանապարհներով կատարված փոխադրումները կազմել են 14,6 միլիոն ուղևոր-կիլոմետր և 9,3 միլիոն տոննա-կիլոմետր։

Բոլոր կարևոր ծովային նավահանգիստները՝ Տրապիզոնը, Սամսունը, Սինոպը, Զոնգուլդակը, Ստամբուլը, Բանդրման, Չանաքկալեն, Թեքիրդաղը, Անթալիան, Մերսինը, Իսքենդերունը ավտոճանապարհներով կապված են երկրի ներքին շրջանների հետ։ Թուրքիայի սևծովյան առափնյա գոտով ձգվում է Այանջիկից մինչև Խոպա բոլոր նավահանգստային քաղաքները միացնող ճանապարհը։ Լավ վիճակում է գտնվում Էդիրնեն Անկարայի հետ միացնող և այնուհետև Ադանայի վրայով դեպի Իսքենդերուն գնացող մայրուղին։ Մի շարք մայրուղիներ սևծովյան նավահանգիստները կապում են միջերկրածովյան նավահանգիստների հետ. դրանց թվում առաջին հերթին հարկ է նշել Տրապիզոն, Իսքենդերուն և Սինոպ-Մերսին ճանապարհները, որոնք իրար են կապում երկրի արևմտյան և արևելյան մասերը։

Արևմուտքում Թուրքիայի ավտոճանապարհների ցանցը կապվում է Բուլղարիայի և Հունաստանի ճանապարհների հետ, հարավ-արևելքում՝ Սիրիայի և Իրաքի, արևելքում՝ Իրանի հետ։ Սովետական Միության հետ Թուրքիան ավտոճանապարհային կապ չունի։

Լեռնային ռելիեֆի պատճառով երկրի ավտոճանապարհները հսկայական քանակությամբ տեխնիկական կառուցվածքներ ունեն։ Երբեմն դարձումների շառավիղն այնքան փոքր է, որ ճանապարհները պիտանի չեն մեծ տոննաժի մեքենաների համար։ Թուրքիայի ճանապարհները տուժում են հաճախակի թափվող տեղատարափ անձրևներից, ձյան



նստվածքներից և երկրաշարժերից։ Այդ բոլորը զգալիորեն թանկացնում և դժվարացնում է նրանց շահագործումը և սպասարկումը։ Մի շարք ճանապարհներ անցնում են լեռնանցքներով՝ 2—3 հազար մետր բարձրության վրա։ Առավել հայտնի են հետևյալ լեռնանցքները. երկրի հյուսիսային մասում՝ Սողանլըի լեռնանցքը (2075 մետր) Բայբուրթ—Օֆ ճանապարհի վրա, Շեյթանդաղի լեռնանցքը (3000 մետր) Ռիզե—Իսպիր ճանապարհի վրա, Յալնըզդամի լեռնանցքը (2650 մետր) Արտվին—Արդահան ճանապարհի վրա, Թահիրյան կիրճը (2475 մետր) Էրզրում—Աղրի ճանապարհի վրա, Կոպդաղ լեռնանցքը (2390 մետր) Բայբուրթ—Աշքալե ճանապարհի վրա. հարավում՝ Բակլըճ լեռնանցքը (1175 մետր) Բուրդուր—Անթալիա ճանապարհի վրա, Կիլիկիական դարպասը (1275 մետր) Տարսուս—Պոզանտի ճանապարհի վրա, Արսլանբողազ լեռնանցքը (1125 մետր) Կըրըկխան—Օսմանիե ճանապարհի վրա։

Ճանապարհները գտնվում են խճուղիների գլխավոր վարչության[1] տնօրինության տակ, որը ենթարկվում է հասարակական աշխատանքների մինիստրությանը։ Անեկս տրանսպորտի գործունեության նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է երթևեկությունը կարգավորող ոստիկանության միջոցով։

Երկրի ավտոպարկը (չհաշված ռազմական գերատեսչության մեքենաները) 1961 թվականին կազմում էր 63 հազար բեռնատար մեքենա, 64 հազար մարդատար ավտոմեքենա և ավտոբուս, 4 հազար քարշակ, 11 հազար մոտոցիկլ։ Մասնավոր սեփականատերերի ձեռքին է գտնվում 52381 մեքենա։

Առայժմ նման մեծ դեր են խաղում սայլերով և քարավաններով կատարվող փոխադրումները։ Գյուղական վայրերում գրեթե բոլոր գյուղատնտեսական ապրանքները փոխադրում են սայլերով, իսկ երկրի արևելյան շրջաննե-

[1] Վարչությունը ստեղծվել է 1950 թվականի մարտի 1-ին։

բում լայնորեն կիրառվում են քարավանային փոխադրումները։

*Օ դ ա յ ի ն   տ ր ա ն ս պ ո ր տ ։* Կանոնավոր քաղաքացիական օդային հաղորդակցություն Թուրքիայում սկսվել է 1927 թվականին։ Այդ տարի ֆրանսիացիները բացեցին Ստամբուլ—Փարիզ օդային գիծը, իսկ իտալացիները՝ Ստամբուլ—Պիրեյ։

Թուրքական առաջին օդային մարդատար գիծը, որը կապում էր Անկարան, Էսքիշեհիրը և Ստամբուլը, ստեղծվեց 1933 թվականին, Թուրքիայի օդային հանապարհների վարչության կողմից։ 1935 թվականին Թուրքիայի պրեզիդենտ Քեմալ Աթաթյուրքի նախաձեռնությամբ հիմնադրվում է «Թյուրք-քուշու» թուրքական օդանավագնացության ընկերությունը։ Քաղաքացիական ավիացիայի կադրերի նախապատրաստման գործում զգալի օգնություն ցույց տվեցին սովետական մասնագետները։

Թուրքական քաղաքացիական ավիացիան ղեկավարում է «Թյուրք խավա յոլլարի» խառն ընկերությունը, որին մասնակցում են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ազգային և օտարերկրյա կապիտալները։

1964 թվականին «Թյուրք խավա յոլլարի»-ի տրամադրության տակ էին գտնվում 16 ինքնաթիռներ, այդ թվում 6-ը՝ «ԴՍ—3» տիպի, 6-ը՝ «Բ—27» տիպի և 4-ը՝ «Վայքաունթ» տիպի։ Այդ բոլոր ինքնաթիռներն էլ առավելապես պտուտակավոր են և փոքր բեռնատարողությամբ։

Երկրի ներսում թուրքական քաղաքացիական նավատորմն ապահովում է օդային կապը 26 քաղաքների միջև։ Սակայն օդանավակայանների մի մասը կարող է օգտագործվել միայն ամառ ժամանակ, այդ պատճառով էլ քաղաքացիական նավատորմը կանոնավոր երթուղիներով ապահովում է երկրի 18 քաղաքներ[1]։

[1] Անկարա, Ստամբուլ, Բուրսա, Բանդըրմա, Բալըքեսիր, Իզմիր, Անթալիա, Ադանա, Կայսերի, Մալաթիա, Դիարբեքիր, Վան, Սվազ, Էլյազըղ, Էրզրում, Երզնկա, Տրապիզոն, Սամսուն։



1962 թվականին քաղաքացիական օդային նավատորմը փոխադրել է 75100 ուղևոր։ Օդային տրանսպորտն աշխատում է վնասով։ 1963 թվականին «Թյուրք խավա յոլլարի» ընկերությունը 26 միլիոն լիրա գումարի վնաս է կրել։ 1959 թվականից այդ ընկերությունը կազմակերպել է միջազգային գծեր։ Դրանցից կարևորներն են Ստամբուլ—Աթենք—Հռոմ, Անկարա—Ադանա—Բեյրութ, Անկարա—Թել-Ավիվ, Ստամբուլ—Վիեննա—Մայնի-Ֆրանկֆուրտ—Բրյուսել գծերը։

Թուրքիայի հետ կանոնավոր հաղորդակցություն են իրականացնում միջազգային ավիաընկերությունները. ֆրանսիական «Էր Ֆրանս»-ը, Սկանդինավյան «ՍԱՍ»-ը, անգլիական «ԲՕԷԿ»-ը և բելգիական «Սաբենա»-ն։ Միջազգային գծերի համար օգտագործվում են երեք օդանավակայաններ, որոնք կարող են ընդունել ժամանակակից ռեակտիվ ինքնաթիռներ։ Անկարայինը (Էսենբողա), Ստամբուլինը (Եշիլքյոյ) և Ադանայինը։

Սեփական ինքնաթիռաշինություն Թուրքիան չունի։ Իսկ վերանորոգման բազան ի վիճակի է ապահովել միայն պտուտակավոր ինքնաթիռների ընթացիկ և միջին նորոգումը։

*Խ ո ղ ո վ ա կ ա մ ո ւ ղ   տ ր ա ն ս պ ո ր տ ը* ժամանակակից Թուրքիայում թույլ է զարգացած, չնայած այն օգտագործվել է հնուց ի վեր Ստամբուլին, Անկարային, Իզմիրին և այլ խոշոր քաղաքներին խմելու ջուր մատակարարելու համար։ Որոշ քաղաքներում գործում է գազամուղը։ Վերջին տարիներս Թուրքիայում սկսվել է նավթամուղերի շինարարությունը։ Ռամանդաղի շրջանում (Արևելյան Թուրքիա) կառուցված է 25 կիլոմետր երկարությամբ նավթամուղ, որը նավթի հանույթի շրջանը միացրել է Բատմանի նավթավերամշակման գործարանի հետ։

Թուրքիայի տերիտորիայում նավթամուղերի կառուցման զգալի աշխատանքներ են կատարում ՆԱՏՕ և ՍԵՆՏՕ ռազմական բլոկները։ Իզմիթի ծոցի շրջանում գտնվող խոշոր ռազմական օդանավակայանը Իզմիթ նավահանգստի հետ է միացած բազմաերակ խողովակամուղով, որով նրան

մատակարարում են վառելանյութ և քսայուղ։ 1961 թվականին ավարտվեց նավթամուղերի առաջին շինարարությունը. դրանք Իսքենդերունը Անթալիա նավահանգստի վրայով միացնում են էքիբչահիրի ռազմա-օդային բազայի հետ։ 1963 թվականին սկսվեց նոր նավթամուղի շինարարությունը, որը Արևմտյան Բաթմանի և Մարդինի շրջանի նոր հայտնագործված նավթահանքերը միացնում է Իսքենդերունի հետ։ 550 կիլոմետրանոց տրասայի վրա տեղակայվել են երեք պոմպակայաններ։ Շինարարությունը նախագծված է 2,5 տարվա համար։

Կ ա պ ն ամբողջությամբ գտնվում է պետության ձեռքում։ Փոստային բաժանմունքներ գոյություն ունեն բոլոր քաղաքներում, ինչպես նաև երկրի խոշոր բնակավայրերում։ Դրանց թիվը մոտ 2 հազար է։ 1962 թվականին փոստային գրասենյակները ներքին և արտաքին ցանցով առաքել են մոտ 265 միլիոն թղթակցություն։

Թուրքիայի հեռագրական գծերի երկարությունը 60-ական թվականներին հասավ գրեթե 160 հազար կիլոմետրի։ Չնայած դրան, Թուրքիայի հեռագրատներն աշխատում են մեծ լարվածությամբ և բոլորովին չեն բավարարում երկրի պահանջները (երկրի բնակավայրերի 90 տոկոսը չունի փոստ-հեռագրական կայան)։

Հեռախոսային կապը նույնպես թույլ է զարգացած։ 1962 թվականին երկրում կար 192,5 հազար հեռախոսային ապարատ։ 1963 թվականին հաշվվում էր միջքաղաքային հեռախոսային կապի 837 կետ և 595 կետ տեղական գծերով խոսելու համար։ Հեռախոսային կաբել անց է կացված 37,6 հազար կիլոմետր։ Հնգամյա պլանով նախատեսվում է մինչև 1967 թվականի սկիզբը աբոնենտների թիվը կրկնապատկել։ Ուղիղ հեռախոսային կապ Սովետական Միության հետ Թուրքիան չունի։

Թուրքիայում գործում են 32 ռադիոկայաններ, սակայն նրանցից միայն երկուսը կարող են (Անկարայում և Ստամբուլում) հաղորդումներ տալ ամբողջ երկրի համար։ Մյուս բոլորը, իբրև կանոն, կարճալիք են, և դրանք կարելի է ընդունել 200—300 կիլոմետրից ոչ հեռու. Նրանք սպասարկում են առավելապես փոստային բաժանմունքներին։ Բացի այդ, ռադիոկայաններ կան բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատություններում, որոնք օգտագործվում են ուսումնական նպատակներով։



1962 թվականի վերջին Թուրքիայում հաշվվում էր 1659332 ռադիոբարձրախոս և ռադիոընդունիչ։ «Թուրքիայի ձայն» ռադիոկայանը հաղորդումներ է տալիս 12 լեզուներով։

Քաղաքացիական հեռուստատեսություն երկրում չկա։ Ստամբուլի տեխնիկական համալսարանում կա փորձնական կայան, որի հաղորդումներն ընդունում են մոտ հազար հեռուստացույցներ։

## ՆԵՐՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Մ ե ծ ա ծ ա խ և մ ա ն ր ա ծ ա խ ա ռ և տ ու ր ը։ Թուրքիայի ներքին առևտրի վիճակի վրա անմիջականորեն ներգործում են երկրի տնտեսական հետամնացությունը, արդյունաբերական տեսակետից ոչ զարգացած լինելը, գյուղատնտեսական արտադրության ցածր մակարդակը։ Մեծածախ և մանրածախ առևտուրը գտնվում է թուրքական պետական և մասնավոր կապիտալի ձեռքում և մասնակիորեն, որոշ ապրանքների գծով, վերահսկվում է օտարերկրյա կապիտալի կողմից։ Վերջինիս դերը ներքին առևտրի մեջ մեծանում է այն կապակցությամբ, որ թուրքական կառավարության քաղաքականությունը խրախուսում է օտարերկրյա կապիտալ ներդրումները, կապիտալիստական տերությունների հետ տնտեսական և առևտրական կապերի ընդլայնումը։

1962 թվականի ժողովրդագրական (դեմոգրաֆիական) մարդահամարը ցույց տվեց, որ Թուրքիայում առևտրի ծառայությունների ոլորտում զբաղված է 1246 հազար մարդ, որը կազմում է աշխատունակ բնակչության 9,8 տոկոսը։

Ներքին առևտուրը կարգավորվում է առևտրական կոդեքսով (1958 թվականին փոփոխված), որի կատարմանը հետևում է առևտրի մինիստրությունը։ Կոդեքսը առևտրական գործունեությունը բնորոշում է իբրև կոմերսիոն ձեռնարկության, ֆաբրիկայի շահագործում շահույթ ստանալու նպատակով։ Այն նախատեսում է բաժնետիրական ընկերությունների կոմերսիոն մասնավոր ընկերությունների և կոոպերատիվ միավորումների կազմավորման ու ցրման պայմանները, հաշվետվությունների ձևերը։ Կոդեքսի այն դրույթը, որ բաժնետիրական ընկերություն ստեղծելու համար անհրաժեշտ է 500 հազար լիրայից ոչ պակաս կապիտալ ունենալ, ցույց է տալիս պետության դիտավորությունը՝ օրենսդրական ակտերի միջոցով նպաստել առևտրական կապիտալի կոնցենտրացման պրոցեսին, որն ուժեղանում է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։

Ետպատերազմյան տարիներին ներքին առևտուրը որոշակի զարգացում է ապրել, որը կապված է գյուղատնտեսական և արդյունաբերական արտադրության որոշ աճի հետ։

Թուրքիայի առավել զարգացած արդյունաբերական և առևտրական շրջաններն են Ստամբուլի շրջանը, որ մտնում է Մարմարի ծովի աշխարհագրական շրջանի[1] մեջ, և Իզմիրի շրջանը, որ մտնում է Էգեյան աշխարհագրական շրջանի մեջ։ Այդ երկուսի կենտրոններն էլ ծովային նավահանգիստներ են։ Ստամբուլի վրայով է անցնում բոլոր ներմուծվող ապրանքների 70 տոկոսը. Իզմիրն առաջին տեղն է գրավում արտահանության (40 տոկոսը) և երկրորդը (9—15 տոկոսը)՝ ներմուծման մեջ։

Ներքին մեծածախ առևտուրը հիմնական տնտեսական շրջանների միջև իրականացվում է ցամաքային և ծովային փոխադրումների օգնությամբ։ Իսկ գետային փոխադրումնե-

[1] Թուրքիայի տերիտորիան բաժանվում է յոթ աշխարհագրական շրջանների (Սևծովյան, Մարմարի ծովի, Էգեյան, Միջերկրածովյան, Կենտրոնական, Արևելյան և Հարավ-արևելյան Անատոլիա), որոնք համընկնում են վերջին 40 տարիների ընթացքում ձևավորված տնտեսական շրջանների հետ։



րը, գետերի լեռնային բնույթի պատճառով, չափազանց սահմանափակ են և փաստորեն նշանակություն չունեն։ Փոքր չափերով փոխադրումներ են կատարվում Վանա լճի վրայով։

Երկաթուղիներով բեռները փոխադրվում են դանդաղ և բարձր տարիֆներով։ 40—50 կիլոմետր տարածության վրա երկաթուղով բեռներ փոխադրելու համար պահանջվում է 5—8 ժամ, իսկ 150—275 կիլոմետրի վրա՝ 30 օր, չհաշված բեռնման օրը։

Ետպատերազմյան տարիներին երկրի ներսում կատարված առևտրական փոխադրումների մեջ շատ կարևոր դեր սկսեց խաղալ ավտոմոբիլային տրանսպորտը, իսկ առափնյա շրջանների առևտրական փոխանակումների մեջ՝ ծովային նավատորմը։ Եթե մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը երկաթուղիները փոխադրում էին բոլոր բեռների ավելի քան երեք քառորդը, ապա 1961 թվականին նրանց բաժինը կազմեց բեռների փոխադրման միայն 47,1 տոկոսը։ Համապատասխանաբար անռելս տրանսպորտի տեսակարար կշիռը բարձրացել է 10—12-ից մինչև 51,4 տոկոսը։

Առևտուրը Թուրքիայում սերտորեն կապված է խոշոր կապիտալիստական արտադրության սպասարկման հետ արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ, կիսաֆեոդալական շահագործման մեթոդները կիրառող կալվածատիրական տնտեսության հետ, ինչպես նաև միջին և մանր գյուղացիական ու արհեստավորական արտադրության հետ։

Երկրի տնտեսության մեջ գյուղատնտեսության գերիշխող դերը կանխորոշում է առևտրական կապիտալի սերտ կապը կալվածատիրական տնտեսության հետ։

Առևտրական կապիտալի կոնցենտրացման և կենտրոնացման պրոցեսը տեղի է ունենում պետության ակտիվ մասնակցությամբ, որը գործում է իր տնտեսական կազմակերպությունների և բանկերի միջոցով։ Առևտրի մեջ այդ պրոցեսի արագացման մասին է խոսում պետական

բանկերի մասնակցության աճը առևտրական խոշոր ընկերություններում։ Ի դեմս պետական տնտեսական կազմակերպությունների, պետությունը հանդես է գալիս ներքին շուկայում իբրև խոշոր առևտրական, հումքի և սննդամթերքի գնորդ և արդյունաբերական ապրանքներ ու սննդամթերքներ վաճառող։ Պետական սեկտորում է արտադրվում բոլոր արդյունաբերական ապրանքների մինչև 50 տոկոսը և արդյունահանվում է լեռնահանքային հումքի 75 տոկոսը։

Թուրքիայի հնագույն տնտեսական կազմակերպություններից մեկը, Սումերբանկը, ղեկավարում է բամբակի գնման և մաքրման վարչության գործունեությունը, որը գնում է բամբակ և այլ հումք պետական տեքստիլ ֆաբրիկաների համար. վարչության կապիտալը 10 միլիոն լիրա է։ Մյուս պետական կազմակերպությունը, որը վերահսկվում է Սումերբանկի կողմից, գնումների և իրացման վարչությունն է (սումերբանկ ալըմ վե սաթըմ մյուեսսեսեսի) 25 միլիոն լիրա կապիտալով, որն իրականացնում է զանազան հումքի գնումը և բամբակյա, բրդյա ու վիսկոզե կտորեղենի (Սումերբանկի ֆաբրիկաների թողարկած) վաճառքը (մեծածախ ու մանրածախ) 220 մասնագիտացված խանութների միջոցով, որոնք գտնվում են երկրի ավելի քան 70 քաղաքներում։

Մյուս պետական տնտեսական կազմակերպությունները նույնպես իրենց գնման կամ վաճառահանման միավորումներն ունեն։ Օրինակ, ածխարդյունահանման վարչությանը պատկանում է «Վաճառքի և վաճառահանման վարչություն» առևտրական միավորումը, որն ածուխ է վաճառում արդյունաբերական ձեռնարկություններին (առաջին հերթին) և բնակչությանը։

Գյուղատնտեսական մթերքների հետ գործ ունեցող ամենանշանակալի պետական կազմակերպությունը հանդիսանում է երկրագործության պրոդուկտների վարչությունը։ Այն գնում է հացը գյուղացիներից, արտահանում հացահատիկը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ներմուծում է սննդամթերք։ Վարչությունն ունի պահեստներ և ալրաղացներ, որոնք կարող են պահեստավորել ավելի քան 35 միլիոն տոննա հացահատիկ։



Պետական ձեռնարկությունների թողարկած գյուղատնտեսական մեքենաները, սարքավորումները ու հանքային պարարտանյութերը վաճառում է (առավելապես կալվածատիրական և կուլակային տնտեսություններին) գյուղատնտեսության մեքենայացման պետական վարչությունը, բացի այդ, իրականացնում է ամերիկյան և եվրոպական ֆիրմաների գյուղատնտեսական սարքավորումների և պարարտանյութերի վաճառահանման կոմիսիոն պատվերները։

Պետությունն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում սննդամթերքների արտադրության և վաճառքի հարցերում։ Մսի և ձկան արդյունաբերության վարչությունը, որը հիմնադրվել է 1953 թվականին, իրականացնում է անասունների գնումը, ինչպես նաև մսի և ձկան ապրանքների արտադրությունն ու վաճառքը։ Վարչությունը խոշոր քաղաքներում ունի իր սառնարանները, մսի կոմբինատները, ինչպես նաև իր խանութները՝ ձկան և մսի ապրանքների (պահածոներ, երշիկ, սուջուխ, ասկրալյուր) մանրածախ վաճառքի համար։ Սակայն վարչության դերը մսի և ձկան ապրանքների վաճառքի մեջ դեռևս մեծ չէ։ Վարչության ձկան տնտեսությունը չունի անհրաժեշտ նյութա-տեխնիկական բազա. ձկան մեծ մասը (որսի մինչև 70 տոկոսը) վաճառվում է թարմ վիճակում։

Պետությանն է պատկանում նաև երկրում ծխախոտի ապրանքների, ալկոհոլային խմիչքների, աղի, վառոդի, շաքարի, թեյի վաճառքի մենաշնորհը։

Առևտրական կապիտալի կոնցենտրացիայի պրոցեսն իր արտացոլումն է գտել նաև այն բանում, որ խոշոր մասնավոր առևտրական կապիտալը վաճառահանման գործակալություններ բացելու միջոցով ավելի ու ավելի է ներթափանցում մանրածախ վաճառքի մեջ։ «Քոչ Թիջարեթ Ա. Շ.», «Էքսպորտ-իմպորտ Ճուղուրովա», «Շաքարային բանկ», «Մաթաչ Թիջարեթ» առևտրական ֆիրմաները գործակալությունների զարգացած ցանց ունեն կենտրոնատեղերի, շինանյութերի, գյու-

ղատնտեսական մեքենաների վաճառքի համար, որոնց մի-ջոցով նրանք իրենց ձեռքն են գցել առևտրի այդ կարևոր բնագավառները։

Տնտեսության մեջ օտարերկրյա կապիտալի թափանցու-մը, օտարերկրյա ներդրումների քաղաքականության խրա-խուսումը թուրքական տնտեսության համար, այդ թվում նաև առևտրի համար, արդեն բերել են բացասական հետե-վանքներ։ Մինչև 1962 թվականը ներքին շուկային նավթա-մթերքներ մատակարարելու գործում կարևոր դեր էր խա-ղում պետության կողմից վերահսկվող «Թյուրքիշ պետրոլ-լարի Ա. Օ.» ընկերությունը, որը լիովին բավարարում էր երկրի արևելյան շրջանների պահանջները։ Այդ ընկերու-թյան արտադրած նավթամթերքների վաճառահանումն իրա-կանացնում է «Պետրոլ Օֆիս» պետական ընկերությունը։ Սա-կայն, 1962 թվականին երկու նավթամշակման գործարաննե-րի շարք մտնելուց հետո, որոնք կառուցել էին ամերիկյան և անգլիական նավթային ընկերությունները, «Թյուրքիշ պետրոլլարի Ա. Օ.» ընկերության դրությունը ներքին շուկա-յում զգալիորեն վատացավ։ Օտարերկրյա նավթային մոնո-պոլիաների մրցակցությունը, մոնոպոլիաներ, որոնք վերա-մշակում են բերովի նավթ, լուրջ դժվարությունների հանգեց-րեց սեփական՝ թուրքական նավթամթերքների վաճառահան-ման հարցում։ Ստեղծված իրադրության քննարկումը մեջլիսում ոչ մի արդյունքի չհանգեցրեց, քանի որ ոչ կառավա-րությունը, ոչ էլ դեպուտատները չհամարձակվեցին փոխել նավթի մասին 1954 թվականին ընդունած որոշումը և պաշ-տպանել թուրքական նավթամթերքների նախընտրելի վաճառքը։

Օտարերկրյա մոնոպոլիաները վերահսկողություն են իրականացնում նաև դեղորայքի և սննդամթերքների որոշ տեսակների (մարգարին)[1] վաճառահանման վրա։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ներքին առևտրի աճի կապակցությամբ Թուրքիայում ավելացել է

[1] Անգլո-հոլանդական «Յունիլեվեր» ընկերությունը Ստամբուլում կառուցել է մարգարին թողարկող գործարան, որը մինչև օրս էլ մնում է այդ տի-պի միակ ձեռնարկությունը Թուրքիայում։



առևտրական պալատների թիվը, որոնք առաջին հերթին միա-վորում են խոշոր վաճառականությանը։ Միայն երեք քա-ղաքներում՝ Ստամբուլում, Անկարայում և Իզմիրում, գոյու-թյուն ունեն առանձին արդյունաբերական և առևտրական պալատներ։ Առևտրական պալատների գերակշռությունն անուղղակի ձևով վկայում է, որ արդյունաբերական կապի-տալի նկատմամբ առևտրական կապիտալը գերիշխող դիրք է գրավում։ Թուրքիայում գոյություն ունեն ընդամենը 129 առևտրական և առևտրա-արդյունաբերական պալատներ, որոնք բորսայի հետ մեկտեղ միավորված են առևտրական արդյունաբերական պալատների և բորսայի միության մեջ, որը մեծ ազդեցություն ունի թուրքական կառավարության տնտեսական քաղաքականության վրա։ Միությունն ունի իր հատուկ օրգանը՝ «Թյուրքիե իքթիսադ գազեթեսի» օրա-թերթը։

Գյուղատնտեսական ապրանքների մեծածախ առևտրի մեջ ավելի ու ավելի նշանակություն են ստանում առևտրա-կան բորսաները, որոնք տեղավորված են երկրի 23 քաղաք-ներում։ Հիմնական առևտրական բորսաները, որոնցում իրա-կանացվում են առավել շատ թվով գործարքներ, տեղավոր-ված են Ստամբուլում (ցորեն, տարեկան, գարի, եգիպտա-ցորեն, բուրդ, կենդանի անասուն, բանջարեղեն, կաշիներ), Իզմիրում (չամիչ, թուզ, ցիտրուսներ, բամբակ, ծխախոտ, ձիթապտղի յուղ, ձիթատու կուլտուրաների սերմեր), Անկա-րայում (ցորեն, գարի, ալյուր, տիֆտիկ, կաշիներ, անասուն), Կոնիայում (ցորեն, գարի, տարեկան, բուրդ, կաշիներ, անա-սուն), Ադանայում (բամբակ, քունջութ, գարի) Տրապիզո-նում, Գիրեսունում և Օրդուում (կաղին), Ղարսում (կենդանի անասուն)։ 1950-ից մինչև 1963 թվականը Թուրքիայի բոր-սաներում կնքված գործարքների գումարը ավելացել է վեց անգամ, իսկ ապրանքային արտադրանքի ծավալը՝ միայն 74 տոկոսով։ Գործարքների գումարի և ապրանքային արտա-դրանքի ծավալի միջև նման անհամապատասխանությունը ինֆլյացիայի չափազանց արագ աճի ցուցանիշ էր։ Գործարք-ները առևտրական բորսաներում տեղի են ունենում, իբրև

կանոն, ապրանքային օրինակներով։ Վճարումը հիմնականում կատարվում է կանխիկ։

Այնպիսի խոշոր առևտրական-տնտեսական կենտրոններ, ինչպես Ստամբուլն ու Իզմիրն են, հանդիսանում են Անատոլիա գնացող արդյունաբերական ապրանքների հիմնական տեսակների և Անատոլիայից ստացվող գյուղատնտեսական ապրանքների գործարքների վայր։ Ստամբուլում են գտնվում ավելի քան 700 մեծածախ ֆիրմաներ, որոնք կապված են Անատոլիայի առևտրական կենտրոնների հետ։

Ապրանքային գործարքների ծավալով Թուրքիայի գլխավոր ապրանքային բորսաները բաշխվում են հետևյալ կերպ (միջին ամսական տվյալներով, 1963 թվականին)՝ Ստամբուլը 149,9 միլիոն լիրա, Իզմիրը՝ 72 միլիոն, Անկարան՝ 24,3 միլիոն, Օրդուն՝ 17,1 միլիոն լիրա։ Այլ բորսաներում միջին ամսական գործարքները 10 միլիոն լիրայից չեն անցնում։ Ստամբուլն առաջին տեղն է գրավում նաև անասունների գործարքներով՝ 18,6 միլիոն լիրա (միջին ամսական տվյալներ) նրանից հետո գալիս է Կարսը՝ 1,8 միլիոն լիրա։

Ստամբուլում է գտնվում երկրում միակ ֆոնդային բորսան, որտեղ վաճառվում են պետական փոխառություններ, բանկային բաժնետոմսեր և այլ արժեթղթեր։

Արդյունաբերական, սննդամթերքի և գյուղատնտեսական մթերքների լայն մանրածախ առևտուր են կատարում բազմաթիվ կրպակներ, խանութներ, խորտկարաններ, սրճարաններ, ռեստորաններ։ Խոշոր քաղաքներում, սովորաբար հին շուկաների շրջաններում, արհեստավորական և տնայնագործական իրերի առևտուր է կատարվում։

Քաղաքները Թուրքիայում, ինչպես Արևելքի երկրների մեծ մասում, բաժանված են հին և նոր մասերի։ Նոր մասերում տեղավորված են ժամանակակից խոշոր առևտրական հիմնարկները, այն դեպքում, երբ հներում գերազանցապես մանրերն են։

Թուրքիայում խիստ զարգացած է մանր առևտրական ցանցը, որը զբաղեցնում է բազմաթիվ ոչ մեծ խանութներն



ու կրպակները, որոնք վաճառում են արդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքներ, թուրքական արհեստագործական իրեր։ Ունենալով ոչ մեծ միջոցներ, այդպիսի առևտրական հիմնարկները զրկված են արտադրության միջոցների առքմանն ու վաճառքին անցնելու հնարավորություններից, մի բան, որն ի վիճակի են անել միայն բանկերի հետ կապված խոշոր առևտրական ֆիրմաները։ Թուրքիայում չկան նաև եվրոպական տիպի մեծ ունիվերսալ խանութներ։

Ապրանքաշրջանառության ծավալը առևտրական ցանցում, բացառությամբ սակավաթիվ խոշոր մասնագիտացված խանութների Ստամբուլում, Անկարայում և Իզմիրում, մեծ չէ։

Մանրածախ առևտրի ցանցի տեղաբաշխման մասին Թուրքիայի գյուղական վայրերում և քաղաքներում տեղեկություններ չեն հրապարակվել։ 1960 թվականի մարդահամարի տվյալներով, երկրում հաշվվում էին 422,5 հազար խոշոր, միջին և մանր մանրածախ առևտրականներ, որոնք զբաղված են առևտրի և սպասարկման ոլորտում։ Առևտրական հաստատությունների ճնշող մեծամասնությունը (այդպիսիք 1956 թվականին երկրում հաշվվում էր մոտ 91 հազար[1]) իրենից ներկայացնում է մանր ընտանեկան ձեռնարկություն, որը չի օգտագործում վարձու բանվորական ուժ։ Վարձու աշխատանքով բանվորների թիվը՝ խոշոր և միջին առևտրական ձեռնարկություններում, 1960 թվականի տվյալների համաձայն, կազմում էր մոտավորապես 400 հազար մարդ։

Չնայած ամբողջ բնակչության մոտ 30 տոկոսը ապրում է քաղաքներում, այնտեղ կենտրոնացված է մանրածախ առևտրի ձեռնարկությունների մոտավորապես կեսը։ Քաղաքներում կան ամբողջ փողոցներ, որտեղ տեղավորված են կոշիկեղեն, ոսկերչական ապրանքներ, նպարեղեն և այլ ապրանքներ վաճառող խանութներ։

Առևտրական շատ ձեռնարկություններ գտնվում են շուկաների շրջանում և կապված են ինչպես քաղաքի, այնպես էլ

[1] Նրանցից 52,1 հազարը զբաղվում էր սննդամթերքի վաճառքով, 21,6 հազարը՝ հագուստի, 2,8 հազարը՝ կահույքի, մնացածները՝ դեղորայքի, տնտեսական և այլ ապրանքների վաճառքով։

նրա ծայրամասերի սպասարկման հետ: Սովորաբար այդ թաղամասերում տեղավորված են մանրածախ խանութները, որոնք վաճառում են կոոպերատիվ միությունների արտադրանքը՝ կոշիկեղեն, ամանեղեն և այլ ապրանքներ, որ ավելի ցածր գներով են վաճառահանվում, քան առևտրական փողոցների վրա գտնվող խոշոր խանութներում:

Գյուղական վայրերում սովորաբար գործում են մանր խանութներ, կրպակներ, սրճարաններ:

Թուրքիայում գյուղական առևտրի զարգացմանը խոչընդոտում են գյուղացիների ցածր գնողականությունը, վաշխառուների բանի ազդեցությունը, տրանսպորտային մեծ դժվարությունները: Գյուղացիական տնտեսությունների ցածր եկամտաբերությունը (տարեկան 106 դոլլար մեկ մարդուն), տնտեսություններ, որոնց ճնշող մեծամասնությունը հողազուրկ է, խոչընդոտում է մանրածախ առևտրի զարգացմանը գյուղում, ներքին շուկայի տարողության ընդլայնմանը, որն անհրաժեշտ է արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության աճի համար: 1961 թվականին Թուրքիայի պահեստներում կար մինչև 40 միլիոն մետր չվաճառված բամբակյա գործվածք, որը նախատեսված էր Անատոլիայի գյուղական շրջանների համար: Երկրի ներքին շրջանների հետ կապված մեծածախ առևտրականները գանգատվում են այն բանի կապակցությամբ, որ «Անատոլիան քիչ է գնում»: Ապրանքակուտակումը պատճառ հանդիսացավ բազում առևտրականների և ֆիրմաների սնանկացման:

Կենտրոնական և Արևելյան Անատոլիայում չափազանց տարածված է ապրանքների (կտորեղեն, խոհանոցային իրեր) վաճառքը թափառաշրջիկ վաճառականների միջոցով:

Ինչպես քաղաքներում, այդ թվում և խոշոր, այնպես էլ գյուղերում տեղի է ունենում շուկայական առևտուր: Եթե քաղաքներում շուկաներն առանձնացված են ըստ վաճառվող ապրանքների տեսակների և իրենց նշանակության (օրինակ, Ստամբուլում գոյություն ունեն «ձկան շուկա», «կանաչեղենի շուկա»), ապա գյուղերում դրանք խառը բնույթի են:



Քաղաքներում դեռևս պահպանվել են ծածկած շուկաների հին շենքերը, որտեղ առաջներում վաճառվում էին արհեստավորական համքարությունների՝ էսնաֆների ապրանքները: Ստամբուլի փակ շուկայում («կապալը-չարշը») հարյուրավոր կրպակներ կան, որոնք վաճառահանում են արհեստագործական իրեր, կտորեղեն, գորգեր, տնտեսական ապրանքներ: Պարբերաբար միջազգային տոնավաճառներ են կազմակերպվում Իզմիրում, տոնավաճառ-ցուցահանդեսներ՝ Ստամբուլում:

Թուրքիայում մի քանի քաղաքների կամ նույնիսկ վիլայեթների մասշտաբով առավել խոշոր շուկաներ կազմակերպելու հակում կա: Այդ տեղական «կենտրոնական» շուկաներն առևտրական կենտրոնի դեր են խաղում մոտակա շրջանների համար: Օրինակ, Արևելյան Անատոլիայի տոնավաճառը, որը բացվում է օգոստոսի 10-ին և շարունակվում է 10 օր, գրավում է Սամսունի, Օրդուի, Տոկաթի, Սվասի մանր և միջին առևտրականներին: Տոնավաճառի են գալիս ցորեն, գարի, բանջարեղեն, մրգեր, անասուն, անասնապահության մթերքներ վաճառող գյուղացիները: Հենց այստեղ էլ մեծածախ առևտրականները գնում են ապրանքներ, որոնք ուղարկվում են Ստամբուլ և երկրի այլ շրջանները:

Կենտրոնական և Արևելյան Անատոլիայի յայլաների շրջանում կազմակերպվում են սեզոնային շուկաներ, դա կատարվում է չորս ամիս շարունակ, սովորաբար յուրաքանչյուր հինգշաբթի: Այդ շուկաներում վաճառվում են անասնապահական մթերքներ, բուրդ, կենդանի անասուն:

Վաճառահանելով գյուղատնտեսական արտադրանքը, գյուղացիները հանդիպում են ինչպես ֆինանսական, այնպես էլ տրանսպորտային մեծ դժվարությունների: Առևտրական կենտրոններից հեռու ընկած շրջաններում նրանք զրկված են իրենց արտադրանքն անմիջականորեն վաճառքի համար շուկա հասցնելու հնարավորությունից: Գյուղացիները լիակատար կախման մեջ են գտնվում գնորդներից, որոնք կանխավճար տալով՝ լրիվ կախման մեջ են դնում գյուղացիներին և ստիպում, որ նրանք սեփական արտադրանքը մի-

այն իրենց վաճառեն։ Գնորդները կապված են խոշոր մեծածախ առևտրականների հետ, որոնք բնակվում են սպառողական կենտրոններում։ Գյուղացիներին նման կանխավճարային առուծախի մեջ է գցում մշտական վախը, որ ապրանքը կարող է չվաճառվել, և իրենք կարող են ընկնել առավել ծանր դրության մեջ։

Թուրքիայում գոյություն ունեն վաճառահանման գյուղատնտեսական կոոպերատիվներ և «Թարըշ» տիպի մեծ կոոպերատիվ միավորումներ Իզմիրում, «Չուկոբիրլիկ» տիպի՝ Ադանայի շրջանում, «Ֆիսկոբիրլիկ»՝ Գիրեսունում, որոնք ներգրավում են գերազանցապես պտղատու և տեխնիկական կուլտուրաների շրջանների տնտեսությունները։ Դրանցից ոմանք, հատկապես «Թարըշը» (չամիչի, թզի, բամբակի և ձիթապտղի յուղի վաճառահանման Իզմիրի միավորումը), հանդիսանում են խոշոր արտահանող առևտրա-արդյունաբերական ֆիրմաներ։ «Թարըշը» ոչ միայն պահեստներ ունի, այլև արդյունաբերական ձեռնարկություններ՝ ձիթապտղի և բամբակի յուղ արտադրող գործարաններ. այդ արտադրանքն արտահանվում է։

Վաճառահանման կոոպերատիվների մեջ, որոնք նպաստում են գնորդների դուրս մղմանը, ընդգրկված է գյուղացիական տնտեսությունների ոչ մեծ մասը միայն։ Գյուղացիության ճնշող մեծամասնությունը կոոպերատիվներից դուրս է մնում և մշտական լրացուցիչ շահագործման է ենթարկվում գնորդների և հանձնակատարի կողմից, որոնք կապված են տեղական և օտարերկրյա մեծածախ ֆիրմաների հետ։ Մեծ թվով միջնորդների (գնորդ, հանձնակատար) առկայությունը, որոնցից յուրաքանչյուրը ձգտում է հարստանալ ի հաշիվ գյուղացու, գյուղատնտեսական ապրանքների մանրածախ գների բարձրացման պատճառներից մեկն է։

Առևտրական կապիտալի կոնցենտրացման պրոցեսը ընդգրկել է և մանրածախ առևտուրը։ Այն արտահայտվել է բազմակրպակային սրահներ ունեցող առաջին խոշոր ֆիրմաների կազմավորման մեջ։ Օրինակ, Ստամբուլի, «Միգրոս»



ֆիրման, որը հիմնադրվել է մունիցիպալիտետի և շվեյցարական կապիտալի մասնակցությամբ, վարում է զգալի մասշտաբների մեծածախ և մանրածախ առևտուր։ «Միգրոսն» ունի հատուկ մեքենա-ֆուրգոններ, որոնք պանրի, սուրճի, թեյի և այլ սննդամթերքների վաճառք են կատարում։ Չնայած արհեստավորների և մանր առևտրականների Ստամբուլի միավորման բողոքներին, «Միգրոս» ֆիրման իր համար ապահովեց մի շարք ներմուծվող սննդամթերքների վաճառքի արտոնություն։ «Միգրոս» ֆիրմայի գործունեությունը Ստամբուլում և «Սննդամթերքների ընկերությունը» Անկարայում, որը հիմնադրված է թուրքական ազգային բանկերի և մի շարք վաճառահանման կոոպերատիվային միավորումների մասնակցությամբ, հասցրեց հարյուրավոր մանր կրպակատերերի սնանկացման։

Առևտրի ֆինանսավորումը։ Գրեթե բոլոր թուրքական բանկերն էլ ֆինանսավորում են առևտրական գործարքներ. առևտրական վարկերը կազմում են բանկերի տված բոլոր վարկերի ընդհանուր ծավալի մոտ 70 տոկոսը (1962 թվականին)։ Այնուամենայնիվ, ներքին առևտրի ֆինանսավորման հարցում Թուրքիան մեծ դժվարություններ է կրում։ Այդ բացատրվում է, առաջին հերթին, արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության ցածր մակարդակով։ Երկրի միլիտարիզացումը և դրանից առաջացած ինֆլյացիան նոր դժվարություններ ստեղծեցին ներքին ապրանքաշրջանառության զարգացման գործում։

1957 թվականից թուրքական կառավարությունը ինֆլյացիայի աճի կապակցությամբ բանկային վարկերի վրա հսկողություն սահմանեց, բարձրացրեց հաշվառման տոկոսը։ 1958 թվականի օգոստոսին Մենդերեսի կառավարությունը ԱՄՆ-ի և արևմտաեվրոպական վարկատուների պահանջով, որոնք համաձայնվեցին Թուրքիային արտակարգ փոխառություն տալ 359 միլիոն դոլլար գումարով, հարկադրված եղավ բանկային վարկից բաց թողնելու գործում մտցնել էլ ավելի խիստ սահմանափակումներ։ Այսպես կոչված ստաբիլիզացիայի քաղաքականությունը, որն սկսել է վարել Թուրքիան,

ավելացրեց դժվարությունները շուկայում, առաջ բերեց շատ մանր և միջին առևտրական ֆիրմաների սնանկացում։ 1954 թվականի դեկտեմբերի վերջին 1450 ստամբուլյան ֆիրմաներ հայտարարեցին իրենց անվճարունակության մասին։ «Ստաբիլիզացիայի քաղաքականությունը» ուղեկցվում էր արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության կրճատմամբ, տասնյակ հազարավոր մանր գործարանատերերի ու առևտրականների քայքայմամբ, սննդամթերքի և արդյունաբերական ապրանքների գների բարձրացմամբ։

Բայար-Մենդերեսի կլիկի տապալումից հետո Թուրքիայի ներքին առևտրում դրական բարելավումներ տեղի չունեցան։ Բանկերն ի վիճակի չեն բավարարելու վարկերով ոչ միայն մանր, այլև միջին ու խոշոր առևտրական ձեռնարկությունները։ Մի շարք առևտրական բանկեր (օրինակ, «Իշ բանկասի»-ն) վարկեր է տալիս միայն արտահանման գործարքներ կատարող ֆիրմաներին։ Համանման վարկային քաղաքականություն են վարում նաև Թուրքիայի օտարերկրյա բանկերը։ Առևտրական վարկերը, իբրև կանոն, կարճ ժամկետային բնույթ են կրում, որը մեծ դժվարություններ է առաջացնում երկարաժամկետ առևտրական գործարքներ իրականացնելու հարցում։ Օրինակ, 1964 թվականին կանխիկ վճարումները ապրանքի դիմաց հասցվեցին նվազագույնի. դրա հետևանքով սղոցանյութերի, խողովակների, մեխերի, փաթեթավորման կոշտ թղթի, էլեկտրաապրանքների, երկաթի ջարդոնի, շինարարական երկաթի և կաշիների գործարքների ծավալը նվազեց 20—30 տոկոսով։

Զգալիորեն վատ է մանր առևտրականների և արհեստավորների դրությունը, որոնց թիվը, ընտանիքների հետ միասին, կազմում է 1,5 միլիոն։ Արհեստավորների և առևտրականների միության մեջ մտնում են 187,8 հազար արհեստավորական և առևտրական հիմնարկներ, այդ թվում՝ 62,8 հազար արդյունաբերական, 70,6 հազար առևտրական ու տնայնագործական և 54,4 հազար տուրիզմի հետ կապված ձեռնարկություն։ Միայն մանր առևտրականների և արհեստավորների մեծ մասը (81713) միավորված է 156



վարկային կոոպերատիվ ընկերությունների մեջ, որոնց կապիտալը 1962 թվականին կազմել է 30,7 միլիոն լիրա։ Վարկերը արհեստավորներին և առևտրականներին՝ վարկային կոոպերատիվների անդամներին, տրվում են սահմանափակ գումարով և շատ բարձր տոկոսներով։ Եթե «Ժողովրդական բանկը» վարկային կոոպերատիվներին վարկեր տալիս է տարեկան 9 տոկոսի հաշվով, ապա վերջիններս իրենց անդամներին փոխատվություններ են տալիս 22,95 տոկոսի հաշվով։ Մանր առևտրականների և արհեստավորների համար վարկերի կապալատուական պայմանները խոչընդոտում են կապիտալի կուտակմանը նրանց ձեռքում և ձեռնարկությունների ընդլայնմանը։

Էլ ավելի ծանր է վարկային կոոպերատիվների մեջ չընդգրկված առևտրականների և արհեստավորների վիճակը։ Նրանք հարկադրված են յոլա գնալ սեփական միջոցներով կամ էլ խոշոր մեծածախ-առևտրականի լծի տակ մտնել։

Առևտրական կապիտալը, որը Թուրքիայում զարգացել է վերջին ժամանակներս, չի հրաժարվել իր ստորին ձևերից։ Արևելյան և Հարավ-արևելյան Անատոլիայում խոշոր առևտրա-տնտեսական կենտրոններից և տրանսպորտային հանգույցներից առավել հեռու գտնվող շրջաններում տիրապետում են գյուղական գնորդներն ու վաշխառուները, որոնք իրացնում են արհեստավորական և մանր գյուղացիական տնտեսությունների ապրանքները։

Առևտրական կապիտալի ստորին ձևերի տիրապետող դերը Թուրքիայում պայմանավորված է նրանով, որ գյուղատնտեսության մեջ մանր արտադրության դուրս մղման պրոցեսը խոշորի կողմից տեղի է ունենում չափազանց դանդաղ։ Շարունակում են գոյություն ունենալ տնային արտադրությունը, գյուղացիական արհեստները։ Գյուղական բնակչության մոտ 17 տոկոսը զբաղվում է չուլհակությամբ, գորգերի արտադրությամբ, մետաղագործությամբ և այլն։ Առևտրի զարգացմանը խոչընդոտում է նաև լայն տրանսպորտային ցանցի բացակայությունը, հատկապես Արևելյան

Անատոլիայի լեռնային շրջաններում, որը դժվարացնում է գյուղատնտեսական մթերքների ապրանքային փոխադրումը։ Ձմռանը շատ շրջաններ փաստորեն կտրված են արտաքին աշխարհից։

Արտադրության հետամնացությունը ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ արդյունաբերության մեջ պայմանավորում է ընդհանուր հետամնացությունը, առևտրական կապիտալի արխաիկ ձևերը։ Թուրքիայում նկատվում է առևտրի հին ձևերի զուգորդում նորերի հետ, որը վկայում է կապիտալիզմի անբավարար զարգացման մասին։

## ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Արտաքին առևտուրը կարևոր դեր է խաղում Թուրքիայի տնտեսության մեջ։ Արդյունաբերության թույլ զարգացումը կանխորոշում է երկրի ուժգին կախվածությունը լայն նոմենկլատուրային արդյունաբերական ապրանքների, հատկապես մեքենաների և սարքավորումների, ներմուծումից։ Արտադրողական ուժերի չափազանց ցածր աճը գյուղատնտեսության մեջ, բնակչության համեմատաբար արագ աճի պայմաններում, հանգեցրեց սննդամթերքի բալանսի զգալի վատացման և սննդամթերքի շատ տեսակների ներմուծումից երկրի կախվածության մեծացման։ Միևնույն ժամանակ, գյուղատնտեսական արտադրության և լեռնահանքային արդյունաբերության շատ տեսակների գծով արտահանության պատմականորեն ձևավորված ուղղության հետևանքով Թուրքիան զգալիորեն կախված է մեծ քանակությամբ սեփական ապրանքների արտահանությունից։ Մասնավորապես Թուրքիան արտահանում է երկրի արտադրած ծխախոտի, բամբակի մոտավորապես կեսը, չամիչի ճնշող մեծամասնությունը, ինչպես նաև չոր մրգեր և ընկույզներ։ Արտահանության է գնում գրեթե ամբողջ քրոմի հանքաքարը և այլն։ Արտահանությունից Թուրքիան ստանում է վալյուտային բոլոր մուտքերի 90 տոկոսը։



*Արտաքին առևտրական քաղաքականությունը։* Թուրքիայի ժամանակակից արտաքին առևտրական քաղաքականության հիմքերը դրվեցին դեռևս մինչպատերազմյան ժամանակաշրջանում։ Երկրում ստեղծվող ազգային արդյունաբերությանը օտարերկրյա մրցակցության կործանարար հետևանքներից պաշտպանելու, ինչպես նաև վալյուտա-ֆինանսական դրությունը առողջացնելու ձգտումը կառավարությանը հարկադրեցին կանգնել պրոտեկցիոնիստական քաղաքականության վրա և խիստ վերահսկողություն մտցնել արտաքին առևտրի նկատմամբ։ Արտաքին առևտրի բնագավառում կառավարական վերահսկողության և կարգավորման շատ կարևորագույն ձևեր և մեթոդներ, որոնք մտցվում էին դեռևս մինչպատերազմյան ժամանակներից, պահպանել են իրենց ուժը նաև ներկայումս։ Արտաքին առևտրի կարգավորման կարևորագույն միջոցներն են՝ լիցենզիոն սիստեմը, քվոտաների և կոնտինգենտների սահմանումը, մաքսային հարկադրումը, ինչպես նաև վալյուտային վերահսկողությունը։ Արտաքին առևտրի կառավարական վերահսկողությունը և կարգավորումը կազմում են երկրում անցկացվող պետական-կապիտալիստական ողջ համընդհանուր միջոցառումների կարևորագույն մասը, որոնք իրականացվում էին տիրող դասակարգերի՝ կալվածատերերի և կապիտալիստների շահերից ելնելով։

50—60-ական թվականների ընթացքում երկրի արտաքին առևտրական քաղաքականությունը մեկ անգամ չէ, որ կրել է զգալի փոփոխություններ, որոնք պայմանավորված էին, մի կողմից, արտաքին քաղաքականության գործոններով, մյուս կողմից՝ ներքին տնտեսական բնույթի մի շարք պատճառներով։

1950 թվականին Մենդերեսի կառավարության՝ իշխանության գլուխ անցնելը նշանավորվեց օտարերկրյա մոնոպոլիստական կապիտալին և, առաջին հերթին, ԱՄՆ-ին երկրի ենթարկման պրոցեսի ուժեղացմամբ։ Այդ պրոցեսն իր արտացոլումը գտավ նաև արտաքին առևտրի բնագավառի վրա։

1950 թվականի սկզբներին Թուրքիան մտավ Եվրոպական վճարումների միության մեջ, որի մասնակից երկրների արտաքին առևտուրը պետք է իրականացվեր բազմակողմանի հիմքերի վրա՝ քանակական սահմանափակումների աստիճանական վերացման (առևտրի «լիբերալացում») պայմաններում։ Ներմուծման «լիբերալացման» քաղաքականությունը, որը հակասում է երկրի ազգային շահերին, իմպերիալիստական պետություններին հնարավորություն տվեց զգալիորեն ավելացնել իրենց ապրանքների մատակարարումը Թուրքական շուկային։ Դրա հետևանքով արտաքին առևտրի բալանսի դեֆիցիտը խիստ ավելացավ (1950 թվականի 62,2 միլիոն լիրայից մինչև 540,4 միլիոն լիրա 1952 թվականին), որը կործանարար ազդեցություն ունեցավ երկրի ընդհանուր վալյուտա-ֆինանսական դրության վրա։ Դա հարկադրեց Թուրքիային ներմուծումը սահմանափակող մի շարք միջոցառումներ ձեռնարկել։

Միաժամանակ ինֆլյացիայի աճը, որը զգալի չափով պայմանավորված է ագրեսիվ ռազմական խմբավորումների մեջ Թուրքիայի մասնակցության կապակցությամբ աճող ռազմական ծախսերի հետ, առաջ բերեց գների կտրուկ բարձրացում երկրում, և թուրքական շատ ապրանքների արտահանությունը համաշխարհային գներով գործնականորեն անհնար դարձավ։ Դրա հետևանքով Թուրքիան, սկսած 1953 թվականից կանգնեց արտահանման պարգևատրումներ տալու ուղու վրա։ Այդ պարգևատրումները բաժանվում էին երկու տեսակների՝ ա) պարգևներ գնման և արտահանման գների միջև եղած տարբերության ձևով. բ) պարգևներ, որոնք սահմանվում են գնի տոկոսներից. պարգևի չափը կախված էր վճարման վալյուտայից։ Արևմուտքի կապիտալիստական երկրներ կատարվող արտահանության զարգացման համար դոլլարային և ստեռլինգյան գոտու երկրները, ինչպես նաև Եվրոպական վճարումների միության անդամ-երկրները կատարվող ապրանքների արտահանման դեպքում արտահանման պարգևներ սահմանվեցին ավելի բարձր



մակարդակի վրա, քան այն երկրները, որոնց հետ կնքված էին կլիրինգային համաձայնագրեր։

Արտահանության պարգևների վճարման համար միջոցների աղբյուր են հանդիսանում մի շարք ներմուծվող ապրանքներից ստացվող գումարները։ Սակայն գործնականում պարգևների մեծ մասը վճարվել է պետական բյուջեի հաշվին, այսինքն, վերջին հաշվով՝ հարկ վճարող լայն զանգվածների հաշվին։

Արտահանության ավելացման համար օգտագործվել են նաև դոտացիաները, որոնք վճարվում էին բամբակի, հացահատիկի և գյուղատնտեսական այլ մթերքների արտահանության ժամանակ։ Կողմնորոշվելով դեպի կալվածատիրական-կուլակային վերնախավի ամրապնդումը, Մենդերեսի կառավարությունը երկրում վարում էր գյուղատնտեսական արտադրության գնման բարձր խրախուսելի գների քաղաքականություն, որոնք զգալիորեն գերազանցում էին համաշխարհային շուկայի գների մակարդակը։ Դրա հետևանքով թուրքական կառավարությունը գյուղատնտեսական արտադրանքի առանձին տեսակների արտահանության ժամանակ հարկադրված էր լինում պետական բյուջեից դոտացիաներ վճարել, որոնցով ծածկվում էին գնման և արտահանման գների մեջ գոյություն ունեցող տարբերության պատճառով առաջացած վնասները։

Արտահանությունն արագացնելու նպատակով կիրառվող այլ միջոցների շարքում էր նաև արտահանողներին վալյուտային եկամուտների մի մասին տնօրինելու իրավունք տալը՝ անհրաժեշտ ապրանքների ներմուծման համար։

Ներմուծումը սահմանափակելու և արտահանությունը զարգացնելու միջոցառումների հետ միաժամանակ երկրի վալյուտա-ֆինանսական դրությունը բարելավելու նպատակով Մենդերեսի կաբինետը ուժեղացրեց վերահսկողությունը ներմուծվող և արտահանվող ապրանքների գների վրա։

Բայց բոլոր այդ միջոցառումներն անկարող էին բարելավել երկրի արտաքին առևտրի վիճակը։ Առևտրական բա-

լանսը նախկինի նման մնում էր դեֆիցիտային, որը մեծապես հետևանք էր առևտրի մեջ դեպի կապիտալիստական պետությունները Թուրքիայի կողմնորոշման։ Առևտրական պարտքերի ամենամեծ բաժինը, ընդ որում, ընկնում էր ԱՄՆ-ին և «Եվրոպական վճարումների միության» երկրներին։ 1958 թվականի օգոստոսի վերջին Թուրքիայի բացասական սալդոն «Եվրոպական վճարումների միությունում» հասավ 476 միլիոն դոլարի կամ 1,3 միլիարդ լիրայի։

«Եվրոպական վճարումների միության» շրջանակներում պարտքերը մարելու համար Թուրքիան հարկադրված էր, սկսած 1953 թվականից, կանգնել «Եվրոպական վճարումների միության» անդամ-երկրների հետ մեծ թվով երկկողմանի համաձայնագրեր կնքելու ուղու վրա։ Համաձայն նշված համաձայնագրերի, Թուրքիան պարտավորվում էր այդ երկրներին առաքել իր արտահանության ապրանքների մի մասը՝ պարտքերի վճարման համար։ Պարտքերի մարման համար նախատեսվում էր երկրի արտահանության մոտ 42 տոկոսը։

Թուրքիան փորձում էր ստեղծված իրադրությունից ելքը գտնել նաև նոր օտարերկրյա փոխառությունների մեջ։ 1958 թվականի հուլիսի 31-ին Փարիզում համաձայնագիր կնքվեց, որի համաձայն Թուրքիային տրամադրվում էր «ստաբիլիզացման» փոխառություն 359 միլիոն դոլար գումարով, որից 234 միլիոն դոլարը տալիս էր ԱՄՆ-ը, 100 միլիոնը՝ «Եվրոպայի տնտեսական համագործակցության կազմակերպությունը» և 25 միլիոնը՝ Միջազգային վալյուտային ֆոնդը։ Բացի այդ, համաձայնություն էր ձեռք բերվել ԱՄՆ-ին և «Եվրոպայի տնտեսական համագործակցության կազմակերպության» մեջ մտնող երկրներին 448 միլիոն դոլար գումարով վճարումների հետաձգման մասին։ Սակայն արևմտյան երկրները փոխառություն տրամադրել էին այն պայմանով, որպեսզի վերանայվի վալյուտային կուրսը, վարկային ռեստրիկցիաներ (սահմանափակում) մտցվի և կրճատվի կապիտալ ներդրումների ծավալը։



Կատարելով այն պայմանները, որոնց համապատասխան արևմտյան տերությունները համաձայնվել էին փոխառություններ տրամադրել, ինչպես նաև հաշվի առնելով շատ ապրանքների արտահանության խիստ կրճատումը, թուրքական կառավարությունը 1958 թվականին մի շարք միջոցառումներ անցկացրեց, որոնք զգալի փոփոխություններ մտցրեցին երկրի արտաքին առևտրական գործարքների և վալյուտային ռեժիմի կարգավորման պրակտիկայում։

1958 թվականի օգոստոսի 4-ին արտահանության պարգևների փոխարեն մտցվեց վալյուտային պարգևների սիստեմ, որոնք բոլոր ապրանքների գծով վճարվում էին լիրայի պաշտոնական կուրսին համապատասխան[1]։ Պարգևների չափերը դիֆերենցված էին ըստ արտահանվող ապրանքի տեսակների և կազմում էին 2,1—2,8 և 6,2 լիրա։ Համապատասխանորեն, ելնելով դոլարի պարիտետից, պարգևներ էին սահմանվել նաև այլ վալյուտաների համար։ Պարգևները պետք է վճարվեին վալյուտային կարգավորման հատուկ ֆոնդից, որն ստեղծված է Թուրքիայի կենտրոնական բանկում։ Այդ ֆոնդի միջոցները ստեղծվում էին վալյուտայի վաճառքից բանկերի ստացած պարգևների հաշվին։

1958 թվականի օգոստոսի 25-ին մտցվեց արտահանություն-ներմուծման նոր ռեժիմ, որն արտաքին առևտրի կարգավորման պրակտիկայում մի շարք փոփոխություններ մտցրեց։ Մասնավորապես, արտահանության բնագավառում վերացվեց նախկինում կիրառվող այն սիստեմը, որի համաձայն թուրքական արտահանողներին արգելվում էր մի շարք ապրանքներ (օրինակ, մանր հում կաշի, կոպտոն, կաղին) արտահանել կլիրինգային համաձայնություններ ունեցող երկրներ, եթե նախապես նույն ապրանքների այդքան իսկ քանակություն չի արտահանվել «Եվրոպական վճարումների միության» երկրները և ազատ առևտրի երկրները։ Միաժա-

[1] Մինչև 1960 թվականի օգոստոսը պաշտոնական կուրսով 2,8 լիրան կազմում էր 1 դոլար։

մանակ պահպանվեցին կոնտինգենտավորման սիստեմը և «Եվրոպական վճարումների միության» անդամ չհանդիսացող երկրների կամ ազատ վալյուտայի երկրների նկատմամբ արտահանության լիցենզիաների տրամադրման պարտադիր լինելը։

Ներմուծման բնագավառում վերացվեցին նախկինում գոյություն ունեցող ցուցակները (նախկինում բոլոր ներմուծվող ապրանքները բաժանված էին ըստ ցուցակների)։ Ապառիկ վճարումներով ներմուծված ապրանքների դիմաց լիցենզիաներ տանալիս, արտոնություններ տրվեցին այն ներմուծողներին, որոնք ապրանքները ներմուծում էին կանխիկ վճարումներով։ Ներմուծումը պետք է իրականացվեր առևտրի մինիստրության որոշումներով և հրահանգներով հաստատված բլանկներով։ Ինչպես «Եվրոպական վճարումների միության» երկրներ և ազատ վալյուտայի երկրներ, այնպես էլ կլիրինգային համաձայնության երկրներ արտահանելիս, ապրանքների գների վրա վերահսկողության հիմքում դրված է Թուրքական ապրանքների արտահանության գների համապատասխանությունը համաշխարհային շուկայի գներին։ Այսպիսով, նախկինում գոյություն ունեցող պրակտիկան, ըստ որի Թուրքական ապրանքների վրա արտահանման գներ նշանակում էին՝ ելնելով ներմուծող երկրից, վերացվեց։ Ներմուծման ապրանքների գների վրա վերահսկողության հիմքում դրվեց այն սկզբունքը, որի համաձայն ներմուծումը պետք է կատարվեր համաշխարհային շուկայի առավել նպատակահարմար գներին համապատասխան։

Այդ բոլոր միջոցառումների շնորհիվ Թուրքական կառավարությունը հույս ուներ ապահովել իր ապրանքների արտահանությունը համաշխարհային գներով և, այսպիսով, վերացնել արտաքին առևտրի ասպարեզում երկար տարիներ կրած դժվարությունները։ Սակայն շուտով պարզ դարձավ, որ դրանք ի վիճակի չեն ինչ-որ նշանակալի չափով բարելավել երկրի արտաքին առևտրի վիճակը։

Արտաքին շուկաներում իր արտահանման մի շարք ապրանքների վաճառահանման չթուլացող դժվարությունների ազդեցության տակ Թուրքական կառավարությունը 1959 թվականին հարկադրված եղավ բարձրացնել վալյուտային պարգևների չափերը, որոնք նշանակվել էին 1958 թվականի օգոստոսի 4-ին։ Արտաքին առևտրի կարգավորման հարցերն ավելի օպերատիվ լուծելու համար ընդլայնվեցին առևտրի մինիստրության իրավունքները։ Դրա հետ մեկտեղ վերացվեց արտահանման և ներմուծման գների վերահսկման սիստեմը և նրա փոխարեն մտցվեց այդ գների պարտադիր գրանցումը։ Արդյունքը եղավ այն, որ վերացվեցին արտահանության ձևակերպման ժամկետների որոշ ձևականությունները, և Թուրքական արտահանողներին փոքր-ինչ ավելի շատ ինքնուրույնություն տրվեց արտահանության գների որոշման հարցում։ Միաժամանակ, կատարելով ԱՄՆ-ից և «Եվրոպայի տնտեսական համագործակցության կազմակերպության» երկրներից 1958 թվականին ստացած վարկերի կապակցությամբ ստանձնած պարտավորությունները, Թուրքիան 1959 թվականին կրկին կանգնեց ներմուծման «լիբերալացման» ուղու վրա։

1960 թվականի ռազմական հեղաշրջումից հետո ստեղծված կառավարությունը փոքր-ինչ կրճատեց ներմուծումը, ինչպես նաև որոշ փոփոխություններ մտցրեց արտաքին առևտրի ռեժիմի մեջ։ Կարևոր միջոցառումներից էին վալյուտային պարգևատրումների վերացումը 1960 թվականի օգոստոսին և Թուրքական լիրայի պաշտոնական դևալվացիայի անցկացումը։ Սակայն ներմուծման ասպարեզում Թուրքիայի նոր կառավարությունը շարունակեց իրականացնել «լիբերալացման» քաղաքականություն, ըստ որում «լիբերալացված» ապրանքների ցուցակը զգալիորեն ընդլայնվեց։ Բնական է, որ նմանօրինակ քաղաքականությունը չէր կարող բացասաբար չանդրադառնալ երկրի արտաքին առևտրի վիճակի և վալյուտա-ֆինանսական դրության վրա։

1961—1963 թվականներին երկրի արտաքին տնտեսական քաղաքականությունը փոփոխություններ չի կրել։ Թուր-

քիան, նախկինի նման, շարունակում էր կողմնորոշվել դեպի արևմուտքի կապիտալիստական երկրները։ Նմանօրինակ քաղաքականության տրամաբանական արդյունքը հանդիսացավ հենց 1963 թվականի սեպտեմբերի 12-ի համաձայնագիրը, որի ստորագրումով Թուրքիան միացավ Եվրոպական տնտեսական համագործակցությանը։

Թուրքիայի որոշումը՝ մտնել «ընդհանուր շուկա», բացատրվում է ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական բնույթի մի շարք գործոններով։ «Ընդհանուր շուկայի» կազմավորումը թուրքական տնտեսության առաջ, ինչպես նաև թույլ զարգացած մյուս երկրների տնտեսությունների առաջ ոչ քիչ թվով լուրջ պրոբլեմներ դրեց։ Թվական սահմանափակումների վերացումը և մաքսային վճարների իջեցումը «ընդհանուր շուկայի» երկրների փոխադարձ առևտրի մեջ, մրցակցելու ունակության տեսակետից, լուրջ հարված հասցրին թուրքական ապրանքներին՝ նշված երկրների շուկաներում։ Դա Թուրքիայի առջև բացեց իր արտահանության ապրանքների շատ տեսակների, մասնավորապես նրա արտահանության հիմքը կազմող գյուղատնտեսական մթերքների, ավանդական շուկաների կորստյան հեռանկար։ Բացի այդ, «ընդհանուր շուկայի» շատ անդամներ, առաջին հերթին Ֆրանսիան և Իտալիան, ինչպես նաև Աֆրիկայի «միավորված» երկրները և հետագայում այդ խմբավորմանը միացած Հունաստանը, իրենք են հանդես գալիս իբրև գյուղատնտեսական ապրանքներ արտահանողներ։

Բնական է, որ թուրքական արտահանության հեռանկարները դեպի «ընդհանուր շուկայի» երկրները, որոնք հանդիսանում են կարևորագույն կոնտրագենտներ Թուրքիայի արտաքին առևտրի մեջ (1962 թվականին «ընդհանուր շուկայի» երկրներին բաժին էր ընկնում թուրքական արտահանության 40,4 տոկոսը և ներմուծման՝ 30,4 տոկոսը), չէին կարող չհուզել թուրքական հասարակայնության լայն շրջաններին։ Ուղիների որոնման մեջ, որոնք կարող էին չեզոքացնել «ընդհանուր շուկայի» իմպերիալիստական քաղաքականության գաղութարարական էությունը, Թուրքիայի



առջև բաց էր և այժմ էլ շարունակում է բաց մնալ մեկ ուղի, որը բխում է ազգի արմատական շահերից։ Այդ ուղին փոխադարձաբար շահավետ տնտեսական կապերի զարգացումն է սոցիալիզմի երկրների հետ։

Երկիրը մտցնելով «ընդհանուր շուկայի» մեջ, Թուրքիայի կառավարող շրջանները հույս ունեին ընդլայնել արտահանությունն Արևմտյան Եվրոպա և իմպերիալիստական երկրներից ստանալ «օգնության» ավելացում։ Բացի այդ, Թուրքիայի «ընդհանուր շուկա» մտնելու հարցում բոլորովին էլ երկրորդական դեր չէին խաղում քաղաքական նկատառումները։

Սակայն 1963 թվականի սեպտեմբերին կնքված համաձայնագրի պայմանները փոքր-ինչ սառեցրին «ընդհանուր շուկայի» խանդավառ կողմնակիցներին Թուրքիայում։ Այդպիսի պայմաններից մեկն էր Թուրքիայի համար տասներկուամյա անցման ժամանակաշրջանի սահմանումը, որն իր հերթին բաժանված է երեք փուլերի։ Առաջին, «նախապատրաստական» փուլի ժամկետը սահմանված է հինգ տարի։ Այդ ժամանակամիջոցում երկիրը պետք է իր տնտեսության զարգացումը ապահովի մինչև այնպիսի աստիճան, որը նրան հնարավորություն կտար «Եվրոպական տնտեսական համագործակցության» շրջանակներում առևտրի բնագավառում հասնել անհրաժեշտ մրցակցային ունակության։ Գիտակցելով, որ այդ պահանջի կատարումը նման ժամկետում կասկածելի է, «ընդհանուր շուկայի» մասնակիցները վերապահություն արեցին առաջին փուլը մինչև ինը տարի երկարաձգելու հնարավորության մասին։ Իրենց հերթին «ընդհանուր շուկայի» երկրները համաձայնվեցին Թուրքիային առևտրական նախապատվություն տալ ծխախոտի, կաղինի, չամիչի և թուզի արտահանության համար։

Երկրորդ փուլի ընթացքում պետք է աստիճանաբար սահմանվեն ընդհանուր մաքսային տարիֆներ Թուրքիայի և «Եվրոպական տնտեսական համագործակցության» միջև. բացի այդ, քննարկված են միջոցառումներ ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականության կիրառման գծով։ Եվ

*միայն երրորդ փուլի ընթացքում կորոշվեն մաքսային միության գլուխները Թուրքիայի վրա տարածելու հարցերը, որոնց համաձայն նախատեսվում է մաքսային արգելքների վերացում «Եվրոպական տնտեսական համագործակցության» մասնակիցների միջև առևտրի ժամանակ։*

*Հետևաբար, ինչպես արդարացիորեն նշում է թուրքական մամուլը, Թուրքիան առայժմ սոսկ իբրև «թեկնածու» է ընդունված միավորման անդամների շարքում։*

*Թուրքական կարևորագույն ապրանքների սահմանված կոնտինգենտները «ընդհանուր շուկայի» երկրներն արտահանելու համար պայծառ հույսերի հիմքեր չեն տալիս։ Այնքան էլ հուսալի չէին նաև Թուրքիայի ֆինանսական բանակցությունները «ընդհանուր շուկայի» երկրների հետ, որոնք նախորդեցին իմպերիալիստական պետությունների տնտեսական պարփակված այդ խմբավորմանը նրա միանալուն։ Թուրքիայի ներկայացուցիչներին մեծ դժվարությամբ հաջողվեց ստանալ «Եվրոպական տնտեսական համագործակցության» անդամների համաձայնությունը տնտեսական զարգացման նպատակով Թուրքիայի խնդրած 400 միլիոնի դիմաց վարկեր տրամադրել 175 միլիոն դոլլար գումարով։*

*«Ընդհանուր շուկայի» մեջ Թուրքիայի ընդգրկվելու հետևանքով երկրի տնտեսության գլխին կախված լուրջ վտանգը հարաճուն անհանգստություն է առաջացնում թուրքական հասարակայնության լայն շրջաններում։ Գլխավոր վտանգը, հայտարարել է թուրքական պրոֆեսոր Ուստյունելը, այն է, որ Թուրքիայի տնտեսական զարգացումը դեռևս չի ավարտվել, և այն, որ «վեցյակի» զարգացման մակարդակը շատ ավելի բարձր է Թուրքիայի զարգացման մակարդակից։ Զարգացման մակարդակների և արդյունաբերական հզորության միջև գոյություն ունեցող հսկայական տարբերությունները «ընդհանուր շուկային» Թուրքիայի լիակատար միանալու դեպքում շուռ է գալու թուրքական ազգային տնտեսության դեմ։*

*Ապրանքաշրջանառության զարգացումը և առևտրական բալանսի վիճակը։* *Թուրքիայի*



*արտաքին առևտրի զարգացումը նախապատերազմյան տարիներին բնութագրվում էր վերին աստիճանի անհավասարաչափությամբ և անկայունությամբ։ Դա բացատրվում է երկրի արտահանման ռեսուրսների տատանումներով, որ զգալիորեն պայմանավորված է բերքի վիճակով, մյուս կողմից՝ արտահանման ապրանքների շատ տեսակների վաճառահանման դժվարություններից արտաքին շուկաներում, մասնավորապես նրա մրցակցունակության ցածր մակարդակից, ինչպես նաև մի շարք այլ գործոններից։ Դա իր հերթին շատ բանով է ազդել ներմուծման ծավալի վրա։*

*Ստորև բերված են ապրանքաշրջանառության դինամիկայի տվյալները 1950—1963 թվականներին (միլիոն լիրաներով).*

| | Շրջանառություն | Ներմուծում | Արտահանություն | Սալդո |
|---|---|---|---|---|
| 1950 թ. | 1537,4 | 799,8 | 737,6 | —62,2 |
| 1955 թ. | 2270,8 | 1393,4 | 877,4 | —516,0 |
| 1960 թ. | 3934,9 | 2213,7 | 1721,2 | —492,5 |
| 1961 թ. | 7705,8 | 4585,1 | 3120,7 | —1464,4 |
| 1962 թ. | 9030,5 | 5599,8 | 3430,7 | —2169,1 |
| 1963 թ. | 9528,9 | 6216,1 | 3312,8 | —2903,3 |

*Թուրքիայի արտաքին առևտրի շրջանառության զգալի աճը, որ վկայակոչվում է այս տվյալներով, իրականության մեջ սակայն պայմանավորված է եղել ոչ այնքան արտահանության և ներմուծության զարգացմամբ, որքան լիրայի ինֆլյացիոն արժեզրկմամբ, ինչպես թուրքական հումքի, հատկապես ստրատեգիական, այնպես էլ արտահանվող ապրանքների շատ տեսակների գների սպեկուլյացիոն բարձրացմամբ։ Ուժգին աճը, սկսած 1960 թվականից, բացատրվում է նախ և առաջ թուրքական լիրայի դևալվա-*

ցիայով (1960 թվականի օգոստոսին) և դրա համաձայն էլ՝ տվյալների վերահաշվարկումով ըստ նոր կուրսի[1]:

Թուրքիայի արտաքին առևտրի հատկանշական գիծը առևտրական բալանսի սիստեմատիկ անհավասարակշռվածությունն է։ Միայն 1957-ից մինչև 1963 թվականը ներառյալ առևտրական բալանսի դեֆիցիտի ընդհանուր գումարը կազմել է 7689,9 միլիոն լիրա (1109,8 միլիոն դոլլար)։ Արտաքին առևտրի դեֆիցիտը գոյանում է կապիտալիստական երկրների, հատկապես ԱՄՆ-ի, ԳՖՀ-ի և Անգլիայի հետ Թուրքիայի առևտրի հետևանքով։ Այսպես, 1963 թվականին Թուրքիայի առևտրի դեֆիցիտը միայն նշված երեք երկրների հետ հասնում էր 2109,6 միլիոն լիրայի կամ երկրի արտաքին առևտրի բալանսի դեֆիցիտի ընդհանուր գումարի 72,6 տոկոսին։

Թուրքիայի արտաքին առևտրի բալանսի խրոնիկ դեֆիցիտը հանդիսացել է երկրի վճարային բալանսի անհավասարակշռվածության կարևորագույն պատճառներից մեկը, որը, սկսած 1947 թվականից, նույնպես մեծ դեֆիցիտով էր փակվում։

Ուշադրություն է գրավում այն փաստը, որ համաձայն Թուրքիայի արտաքին առևտրի զարգացման 1963—1967 թվականների ծրագրումների, որոնք կատարվել են այս հնգամյակում երկրի տնտեսական զարգացման ընդունված ծրագրին համապատասխան, Թուրքիայի արտաքին առևտրի հատկանշական գիծը, առաջվա նման, կլինի առևտրական բալանսի զգալի անհավասարակշռվածությունը։ Այդ պատճառով էլ երկրի վճարային բալանսի դեֆիցիտը, համաձայն Թուրքիայի ֆինանսների մինիստրի հայտարարության, առաջիկա հնգամյակում կհասնի խոշոր չափերի, մասնավորապես

[1] Թուրքիայի արտաքին առևտրի շրջանառության իսկական չափերը եղել են՝ 1957 թվականին՝ 742,3 միլիոն դոլլար, 1959 թվականին՝ 823,7 միլիոն, 1960 թվականին՝ 788,9 միլիոն, 1961 թվականին՝ 856,2 միլիոն, 1962 թվականին՝ 1003,4 միլիոն, 1963 թվականին՝ 1058,8 միլիոն, 1964 թվականին՝ 948 միլիոն դոլլար։



1965 թվականին այն պետք է կազմեր 236 միլիոն դոլլար, 1966 թվականին՝ 248 միլիոն, 1967 թվականին՝ 247 միլիոն դոլլար։

*Արտահանություն*։ Արտահանության ավելացումը և արտահանության ռեսուրսների ընդլայնումը Թուրքիայի տնտեսական զարգացման կենսական հարցերն են։

Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ռեսուրսների ավելացման համար անցկացվեցին ցանքատարածությունների ընդարձակելու միջոցառումներ, տարվում էր ոռոգման կառուցվածքների շինարարություն, խրախուսվում էին մեքենայացման, մելիորացիայի, սելեկցիայի և այլ աշխատանքներ։ Սակայն այդ բնագավառում Թուրքիան որևէ էական արդյունքի չկարողացավ հասնել։

Դրա հետ մեկտեղ 60-ական թվականներին թուրքական արտահանության նոմենկլատուրայում որոշ նոր ապրանքներ են ի հայտ եկել՝ շաքար, ցեմենտ, բամբակյա գործվածքեղեն և մի շարք այլ ապրանքներ։ Ճիշտ է, նշված ապրանքների արտահանությունը մեծ չէ, և երկրի ընդհանուր արտահանության մեջ էական նշանակություն դրանք չունեն։

Արտահանման կարևորագույն ապրանքը ծխախոտն է, որը մշտապես (բացառությամբ մի քանի տարիների) թուրքական արտահանության մեջ առաջին տեղն է գրավում։ Ծխախոտի արտահանման զարգացումը բնութագրվում է ծայրահեղ անհավասարակշռվածությամբ, որը պայմանավորված էր այդ կուլտուրայի հավաքման գործում եղած լուրջ տատանումներով և հունական ծխախոտի, ինչպես նաև աֆրիկյան մայրցամաքի երկրների ծխախոտի հարաճուն մրցակցությամբ, երկրներ, որտեղ արևմտա-եվրոպական պետությունները ընդլայնել են իրենց գնումները։ Հիմնական ներմուծողը ԱՄՆ-ն է, որի բաժինը կազմում է թուրքական ծխախոտի ներմուծման մինչև 50 տոկոսը, ինչպես նաև ԳՖՀ-ը։

Թուրքական արտահանության մեջ երկրորդ տեղը գրավում են մրգերը և ընկույզները։ Ապրանքների այդ խմբի մեջ առաջնակարգ տեղ է պատկանում կաղինին (պնդուկ). Թուրքիային բաժին է ընկնում կապիտալիստական աշխարհում

հավաքած կաղինի 70—75 տոկոսը։ Արտահանության մեջ մեծ դեր է խաղում չամիչը, որի գծով երկրի արտահանության հնարավորությունները հետպատերազմյան տարիներին աճեցին և գնահատվում են 80—100 հազար տոննա։ Այլ չոր մրգերից ու ընկույզներից, որ արտահանում է Թուրքիան, հարկ է հիշատակել չորացրած թուզը, ընկույզը և պիստակը։

Երրորդ տեղում է բամբակը, որի արտահանությունը տարեցտարի աճում է։

Անասնապահական մթերքներից Թուրքիան արտահանում է կենդանի անասուն, բուրդ, փետուր, մազ, հում կաշի. սրանց բաժին է ընկնում երկրի արտահանության ընդհանուր արժեքի 10—12 տոկոսը։

Թուրքիայի արտահանության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում հանքաքարերը, մասնավորապես քրոմի և մանգանի հանքաքարերը։ Ընդհուպ մինչև 1957 թվականը հանքաքարերի արտահանությունն աճում էր։ 1957 թվականին այն կազմում էր 1122,6 հազար տոննա, 1950 թվականի 384,9 հազար տոննայի դիմաց. դրան համապատասխան էլ հանքաքարի տեսակարար կշիռը երկրի ընդհանուր արտահանության մեջ հասավ 8,6 տոկոսի, 1950 թվականի 4,5 տոկոսի դիմաց։ Հետագա տարիներին վաճառահանման պայմանների շեշտակի վատացման պատճառով, որոնք կապված էին ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պատճառների հետ, հանքաքարերի արտահանությունը շեշտակի կրճատվեց՝ 1960 թվականին այն կազմեց 732,1 հազար տոննա, 1961 թվականին՝ 686,2 հազար, 1962 թվականին՝ 558,5 հազար և 1963 թվականին՝ 249,9 հազար տոննա։ Հանքաքարերի բաժինը 1963 թվականին կազմել է երկրի արտահանության ընդհանուր արժեքի միայն 1,7 տոկոսը։

Մինչև 1967 թվականը նախատեսվում է երկու անգամ ավելացնել կենդանի անասունների և բրդի արտահանությունը, յոթնիցս անգամ՝ խաղողինը, ավելի քան հինգ անգամ՝ դեղձինը։ Այդ նույն ժամանակ թուրքական արտահանության ավանդական տեսակների գծով (ծխախոտ, չոր մրգեր և բամբակ) մեծ աճ չի նախատեսվում։ Նախատեսվում է որոշ չափով ընդլայնել արդյունաբերական ապրանքների արտահանությունը և դրանց տեսակարար կշիռը երկրի ընդհանուր արտահանության մեջ բարձրացնել մինչև 23,7 տոկոս (այդ թվում 5,7 տոկոսը պետք է կազմի չհանահանքային արդյունաբերության ապրանքները), այսօրվա 10 տոկոսի փոխարեն։



Ն ե ր մ ու ծ ու մ։ Արտահանության հետ կապված դժվարությունները, արտաքին պարտքերի աճը և դրա հետևանքը հանդիսացող Թուրքիայի վալյուտա-ֆինանսական լարված դրությունը առաջ բերեցին թուրքական ներմուծման ոչ հաստատուն վիճակ և դրա վրա կառավարական վերահսկողության ուժեղացման անհրաժեշտություն։

Թուրքիան առևտրական բալանսի դեֆիցիտի կրճատման համար ձգտում էր, մի կողմից, ներմուծել առաջին հերթին արտադրական նշանակության չափազանց անհրաժեշտ արդյունաբերական ապրանքներ (մեքենաներ, սարքավորում, հումք և այլն), իսկ մյուս կողմից՝ սահմանափակել սպառողական ապրանքների ներմուծումը։ Այդ քաղաքականությունը որոշակի չափով իր անդրադարձումը գտավ ներմուծման կառուցվածքում։ Թուրքական ներմուծության կառուցվածքի որոշ փոփոխությունները ևս պայմանավորված էին այն նույն պրոցեսներով, որոնք տեղի ունեցան երկրի տնտեսության մեջ։

Թուրքական ներմուծության առաջատար հոդվածը մեքենաներն ու սարքավորումն էր։ Նախապատերազմյան ժամանակաշրջանի հետ համեմատած՝ մեքենաների և սարքավորման ներմուծությունը հետպատերազմյան տարիներին զգալիորեն ավելացավ. դա բացատրվում է արդյունաբերական նոր ձեռնարկությունների կառուցմամբ և հների մոդեռնացումով, տրանսպորտի զարգացմամբ, գյուղատնտեսության մեքենայացումով և այլն։ 1950—1963 թվականներին մեքենաներն ու սարքավորումները կազմեցին թուրքական ներմուծության 30—44 տոկոսը (ըստ արժեքի)։

60-ական թվականներին կապիտալիստական երկրներին բաժին էր ընկել մեքենաների և սարքավորումների 80 տոկոսից ավելին, ըստ որում մեծ մասը՝ ԳՖՀ-ի, ԱՄՆ-ի և Իտա-

լիայի բաժինն էր։ Սոցիալիստական երկրներից 60-ական թվականներին Թուրքիային մեքենաներ ու սարքավորումներ են մատակարարել ԳԴՀ-ը, Չեխոսլովակիան, Լեհաստանը, ՍՍՀՄ-ը, Հունգարիան, Բուլղարիան և Ռումինիան։

Թուրքական ներմուծության մեջ երկրորդ տեղը գրավում են նավթը և նավթամթերքը (1960 թվականին՝ 9,4 տոկոս)։ Ընդ որում, դիզելային վառելիքը կազմել է նավթի և նավթամթերքի ընդհանուր ներմուծության 40—44 տոկոսը, բենզինը՝ 25—28 տոկոսը, նավթը՝ 24—26 տոկոսը. բացի այդ, Թուրքիան ներմուծել է մազութ և մեքենայի յուղեր։ 60-ական թվականներին երկրում նավթի վերամշակման արդյունաբերության զգալի զարգացման կապակցությամբ այդ խմբի ապրանքների ներմուծման կառուցվածքը չափազանց էական փոփոխություններ կրեց. օրինակ, 1963 թվականին ներմուծված հեղուկ վառելանյութի և յուղերի 90,6 տոկոսը բաժին էր ընկնում հում նավթին։ Նավթի և նավթամթերքի կարևորագույն մատակարարողներն են ԱՄՆ-ը, Սաուդյան Արաբիան և Անգլիան։

Երրորդ տեղում են սև մետաղները և դրանցից պատրաստված արտադրանքը։ 1963 թվականին դրանց բաժին էր ընկնում երկրի ներմուծության ընդհանուր արժեքի 9,4 տոկոսը։ Սև մետաղները ներմուծվում էին հիմնականում ԳՖՀ-ից, Ֆրանսիայից, Անգլիայից և Իտալիայից։ Սոցիալիստական երկրներից 60-ական թվականներին սև մետաղների ամենամեծ առաքումներ կատարել են ՍՍՀՄ-ը և Չեխոսլովակիան։

Աճում է կաուչուկի և դրանից պատրաստված իրերի, քիմիական ապրանքների ու ներկերի ներմուծությունը։ Այդ նույն ժամանակ դեղանյութերի և դեղորայքի ներմուծումը կրճատվեց, որը կապված էր տեղական դեղանյութերի արդյունաբերության զարգացման, ինչպես նաև երկրի վալյուտային դժվարությունների հետ։

Ավելացավ թղթի, ստվարաթղթի, ցելյուլոզի, բրդի, մանվածքի և կտորեղենի ներմուծումը։ Կրճատվեց կերամիկայի,



ապակու և դրանից պատրաստված իրերի, փայտի և անտառանյութի ներմուծումը։

Թուրքիան ներմուծում է զգալի քանակությամբ հացահատիկ, ինչպես նաև սուրճ, թեյ և համեմունք։ Հացահատիկի ներմուծումն աճում է տարեցտարի, ըստ որում, դրա ճնշող մեծամասնությունը ստացվում է ԱՄՆ-ից՝ այսպես կոչված գյուղատնտեսական ավելցուկների մատակարարման մասին «480-րդ օրենքի» հիման վրա։

**Արտաքին առևտրի աշխարհագրական տեղաբաշխումը։** Թուրքիան առևտուր է անում երկրների մի մեծ խմբի հետ։ Սակայն նրա հիմնական կոնտրագենտը ԱՄՆ-ը, ԳՖՀ-ը, Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան են. 1963 թվականին նրանց բաժինը կազմել է թուրքական ներմուծության 66,9 տոկոսը և արտահանության 59,3 տոկոսը (1950 թվականին՝ 62,2 և 61,1 տոկոսը)։

Հետպատերազմյան տարիներին Թուրքիայի արտաքին առևտրում առաջին տեղը գրավում է ԱՄՆ-ը։ 1947 թվականին ԱՄՆ-ի տեսակարար կշիռը թուրքական ներմուծման մեջ հասավ 33,3 տոկոսի, իսկ արտահանության մեջ՝ 23,5 տոկոսի, 1938 թվականի համապատասխանաբար՝ 10,4 և 12,2 տոկոսների փոխարեն։ Հետագա տարիներին, այլ երկրների, մասնավորապես ԳՖՀ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի հետ Թուրքիայի առևտրի ընդլայնման կապակցությամբ, ԱՄՆ-ի տեսակարար կշիռը Թուրքիայի արտաքին առևտրում կրճատվեց և կազմեց՝ 1950 թվականին՝ ներմուծման մեջ 24,5 տոկոս, արտահանության մեջ՝ 16,9 տոկոս, իսկ 1960 թվականին՝ համապատասխանաբար 24,6 տոկոս և 17,0 տոկոս։ 1963 թվականին ԱՄՆ-ին բաժին է ընկել թուրքական ներմուծության 30,6 տոկոսը և արտահանության 13,5 տոկոսը։

Թուրքիայի արտաքին առևտրում ԱՄՆ-ի մոնոպոլիստական կապիտալի դիրքերի ամրապնդման գործում կարևոր դեր է խաղում Թուրքիային ամերիկյան «օգնությունը» տրամադրելը, ինչպես նաև վարկերի տրամադրումը արտահանման-ներ-

մուծման բանկի և վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի գծով։

ԱՄՆ-ը Թուրքիայից ներմուծում է ծխախոտ, քրոմի և պղնձի հանքաքար, բուրդ, հում կաշի, ցիտրուսներ, կաղին, դաբաղանյութ, բորացիտ։ Ամերիկյան արտահանության հիմնական ապրանքներն են՝ մեքենաներ և սարքավորում, նավթ ու նավթամթերք։ Այլ ապրանքների շարքում հարկ է նշել հացահատիկային կուլտուրաները, մերինոսի բուրդը, դեղանյութային ապրանքները, ավտոմեքենայի համար ռետինը։

Թուրքիայի արտաքին առևտրում երկրորդ տեղը պատկանում է ԳՖՀ-ին։ 1963 թվականին նրա բաժինը կազմել է թուրքական ներմուծման մեջ 15,1 տոկոս և արտահանության մեջ՝ 16,8 տոկոս։ Դեպի Թուրքիա արևմտագերմանական արտահանության կարևորագույն հոդվածը մեքենաները և սարքավորումներն են, որոնց բաժինը 60-ական թվականներին հասել է ԳՖՀ-ից ֆիրմաների բոլոր առաքումների ամբողջ արժեքի մինչև կեսը։ ԳՖՀ-ի կողմից Թուրքիա ուղարկվող այլ ապրանքների մեջ հարկ է նշել սև մետաղները, գեղորայքը, ներկերը, ավտոդողերը։ Թուրքիայից ԳՖՀ-ը ներմուծում է ծխախոտ, կաղին, պղինձ, բամբակ, քրոմի հանքաքար, մրգեր և մի քանի այլ ապրանքներ։

Թուրքիայի արտաքին առևտրում երրորդ տեղը գրավում է Անգլիան, որի բաժինը 1963 թվականին եղել է թուրքական ներմուծման 11,2 տոկոսը և արտահանության 12,8 տոկոսը։ Թուրքիա կատարված անգլիական արտահանության ապրանքների մեջ առաջատար դեր են խաղում մեքենաներն ու սարքավորումները, նավթամթերքը, կաուչուկը և դրանից պատրաստված արտադրանքը, ավտոմեքենաները, տրակտորները և դրանց պահեստամասերը, սև մետաղները, քիմիական ապրանքները և դեղանյութերը, մերինոսի բուրդը։ Թուրքիայից Անգլիան ներմուծում է անգորյան բուրդ, խաղող, չամիչ, կաղին, բամբակ, պղինձ, ծխախոտ, քրոմի հանքաքար և այլ ապրանքներ։

Թուրքական շուկայում իրենց գործունեությունը զգալիորեն ակտիվացրել են իտալական մոնոպոլիաները։ Թուր-



քական արտաքին առևտրում Իտալիան հաստատուն կերպով մնում է չորրորդ տեղում։ 1963 թվականին նրան բաժին է ընկել թուրքական ներմուծման 5,1 տոկոսը և արտահանության 11,8 տոկոսը։ Իտալիան Թուրքիային մատակարարում է մեքենաներ և սարքավորում, սև մետաղներ, կաուչուկից պատրաստված իրեր, նավթամթերք, սինթետիկ թել, պարարտանյութեր և այլն։ Թուրքիայից Իտալիայի ներմուծած ապրանքների շարքում հարկ է հիշատակել բամբակը, ծխախոտը, ձուկը, չամիչը, երկաթահանքը։

Թուրքիայի արտաքին առևտրում հինգերորդ տեղը պատկանում է Ֆրանսիային։ 1963 թվականին նրա բաժինը կազմել է թուրքական ներմուծության 4,9 տոկոսը և արտահանության 4,4 տոկոսը։ Ֆրանսիան Թուրքիային տալիս է մեքենաներ և սարքավորում, սև մետաղներ, ավտոդողեր, դեղանյութեր, սինթետիկ թել, պարարտանյութեր և մի քանի այլ ապրանքներ, իսկ գնում է բամբակ, կաղին, քրոմի հանքաքար, չամիչ, անգորյան բուրդ, թուզ, ափիոն։

Կապիտալիստական մյուս երկրներից Թուրքիայի արտաքին առևտրում առավել կարևոր դիրքեր են գրավում Բելգիան, Շվեյցարիան, Հոլանդիան, Ավստրիան, Շվեդիան, Ճապոնիան։ Սակայն, ամբողջությամբ վերցրած, այդ երկրների հետ առևտրի ծավալը մեծ չէ։

Թուրքիան առևտուր է կատարում նաև ՍՍՀՄ-ի, Չեխոսլովակիայի, ԳԴՀ-ի, Հունգարիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի և Հարավսլավիայի հետ։ Թուրքիայի առևտուրը սոցիալիստական երկրների հետ ընդհուպ մինչև 1957 թվականը աճում էր դանդաղորեն, բայց անշեղ կերպով։ 1957 թվականին Թուրքիայի ապրանքաշրջանառությունը նրանց հետ կազմեց 380,3 միլիոն լիրա 1950 թվականի 117 միլիոն լիրայի դիմաց։ 1957 թվականին սոցիալիստական երկրների բաժինը կազմել է թուրքական ներմուծման 16,7 տոկոսը և արտահանության 19,8 տոկոսը։ Սակայն, սկսած 1958 թվականից, ապրանքաշրջանառության չափն այս երկրների հետ սկսեց կրճատվել։ 1958 թվականին այն կրճատվեց մինչև 328,4 միլիոն լիրայի կամ նախորդ տարվա

համեմատությամբ՝ 13,7 տոկոսով։ 1962 թվականին սոցիալիստական երկրների տեսակարար կշիռը թուրքական ներմուծության մեջ իջավ մինչև 5,7 տոկոսի, իսկ արտահանության մեջ՝ մինչև 7,8 տոկոսի։ 1963 թվականին նկատվեց ապրանքաշրջանառության որոշ աճ սոցիալիստական երկրների հետ. նրանց բաժին էր ընկնում Թուրքիայի ներմուծության 7,9 տոկոսը և արտահանության 10,1 տոկոսը։

Թուրքիայի արտաքին առևտրում սոցիալիստական երկրներից առաջին տեղը պատկանում է Չեխոսլովակիային (1963 թվականին կատարել է Թուրքիայի ներմուծության 2 տոկոսը և արտահանության 2,6 տոկոսը)։ Նա Թուրքիա է արտահանում մեքենաներ և սարքավորում, ապրանքներ, սև մետաղներ, հախճապակյա և ճենապակյա արտադրանք, թուղթ և այլ ապրանքներ։ Չեխոսլովակիա կատարած թուրքական արտահանության կարևոր հոդվածներն են բամբակը, ծխախոտը, կաշինը, կոպտոնը, պղինձը։

Երկրորդ տեղում ընթանում է Սովետական Միությունը (1963 թվականին թուրքական արտահանության 1,3 տոկոսը և ներմուծման 2 տոկոսը)։ ՍՍՀՄ-ը Թուրքիային տալիս է մեքենաներ և սարքավորում, նավթամթերք, սև մետաղների գլանվածք, քիմիական նյութեր, ներկեր, փայտ և անտառանյութ, թուղթ, կուլտուր-կենցաղային գործածության ապրանքներ։ Թուրքիայից Սովետական Միությունը ներմուծում է հում կաշի, ծխախոտ, կենդանի անասուն, բուրդ և մի քանի այլ ապրանքներ։

Թուրքիայի արտաքին առևտուրը սոցիալիստական երկրների հետ (բացառությամբ ԳԴՀ-ի) հիմնված է առևտրի և վճարումների մասին միջպետական համաձայնագրերի վրա, որոնք նախատեսում են ազգի համար առավել նպաստավոր սկզբունքների կիրառում և հաշվարկների կլիրինգային ձևը։ Այդ սկզբունքի կիրառումը Թուրքիային հնարավորություն է տալիս իր արտահանության ավանդական ապրանքների դիմաց ստանալ տնտեսության զարգացման համար անհրաժեշտ մեքենաներ, սարքավորում և արդյունա-



բերական արտադրանքի այլ տեսակներ՝ առանց խիստ դեֆիցիտային ազատ վալյուտայի ծախսումների։

## ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

Ետպատերազմյան ամբողջ ժամանակամիջոցում Թուրքիան դուրս չի գալիս ֆինանսական ճգնաժամի վիճակից, որը ծնունդ է, առաջին հերթին, իր տնտեսության համար ուժից վեր ռազմական ծախսերի բեռի։

Պետական բյուջեի խրոնիկ դեֆիցիտը, ինֆլյացիան, հարկային բեռի ուժեղացում, իմպերիալիստական պետություններից և, առաջին հերթին, ԱՄՆ-ից ֆինանսական հարաճուն կախվածություն, տնտեսության հիմնական ճյուղերի ֆինանսավորման համար միջոցների սուր պակաս՝ այսպիսին են ժամանակակից Թուրքիայի ֆինանսական դրության առավել հատկանշական գծերը։

*Պետական բյուջեն։* Թուրքիայի պետական բյուջեի սիստեմը բաղկացած է կենտրոնական բյուջեից և նրան հարող 14 այսպես կոչված միավորված բյուջեներից[1], ինչպես նաև տեղական կառավարման օրգանների (վիլայեթների, մունիցիպալիտետների, գյուղական վարչությունների) բյուջեներից։ 1963—1964 ֆինանսական տարում կենտրոնական բյուջեի եկամուտները կազմեցին բոլոր պետական միջոցների 77 տոկոսը, միավորված բյուջեներինը՝ 16 տոկոսը, տեղական բյուջեներինը՝ 7 տոկոսը։ Պետական բյուջեի սիստեմի միջոցով վերաբաշխվում է երկրի ազգային եկամտի ավելի քան 20 տոկոսը։

[1] Միավորված բյուջեների մեջ ձևավորվում են խնայբանկերի, ռադիոյի, ծովագնացության, օդային հաղորդակցությունների, գանձարանային մոնոպոլիաների, պետական կալվածքների, անտառների, նավթի վարչությունների, ինչպես նաև չորս համալսարանների և մի շարք այլ պետական հիմնարկների և ծառայությունների եկամուտներն ու ծախսերը։ Միավորված բյուջեների մեծ մասը մշտապես դոտացիա է ստանում կենտրոնական բյուջեից, հիմնականում ֆինանսների մինիստրության միջոցով, միաժամանակ միավորված բյուջեի եկամուտների մի մասը (օրինակ, գանձարանային մոնոպոլիաներինը) մտնում է կենտրոնական բյուջեի մեջ։

Պետական բյուջեի հատկանշական գիծը նրա անընդհատ աճն է, որն զգալիորեն առաջ է անցնում նյութական արտադրության աճից։ Միայն կենտրոնական բյուջեն 1950 թվականի 1,8 մլրդ լիրայից 1960 թվականին աճել է մինչև 7,6 մլրդ և 1965 թվականին՝ մինչև 14,4 մլրդ լիրայի։ Դա հետևանք է ապրանքների գների և ապրուստի արժեքի ինֆլյացիոն բարձրացման, ինչպես նաև ՆԱՏՕ և ՍԵՆՏՕ իմպերիալիստական խմբավորումներին մասնակցելու կապակցությամբ Թուրքիայի վերցրած պարտավորությունների պատճառով կատարվող ուղղակի և անուղղակի ռազմական հատկացումների մեծացման։ Պաշտոնական տվյալները հնարավորություն չեն տալիս ճշգրիտ կերպով որոշել բյուջեով անցնող ռազմական հատկացումների չափը։ Ազգային պաշտպանության մինիստրության ռազմական ուղղակի ծախսերը կազմում են միջին հաշվով կենտրոնական բյուջեի 25 տոկոսը։ Ռազմական հատկացումների մի մասն անցնում է բյուջեի այլ հոդվածներով։ Բացի այդ, բյուջեի կապիտալային մասից, որին տարեկան ընկնում է պետական բյուջետային միջոցների միջին հաշվով 35 տոկոսը, ֆինանսավորվում է ռազմա-ստրատեգիական օբյեկտների՝ ճանապարհների, նավահանգիստների, օդանավակայանների և այլ կառուցվածքների շինարարությունը։ Այդ նպատակի համար կատարվող հատկացումների մեծ մասը կատարվում է ֆինանսների մինիստրության միջոցով։

Վերոհիշյալ ծախսերը, որոնց անհրաժեշտ է ավելացնել նաև պետական պարտքի ամորտիզացիոն գումարները, քանի որ դրանք զգալի չափերով գոյացել են կառավարության ռազմական վառնումների պատճառով, կլանում են բյուջետային միջոցների առյուծի բաժինը։ Այսպես, համաձայն 1965/66 ֆինանսական տարվա կենտրոնական բյուջեի նախահաշվի, ֆինանսների մինիստրությանը հատկացվել է 5430 միլիոն լիրա, ազգային պաշտպանության մինիստրությանը՝ 3005 միլիոն, ներքին գործերի, արդարադատության մինիստրություններին և ժանդարմերիայի ու պետական անվտանգության վարչություններին՝ 991 միլիոն լիրա, որը



կազմում է երկրի բյուջետային բոլոր ծախսերի 60 տոկոսը։

Միաժամանակ բյուջեի միջոցով նյութական արտադրության ընագավառների ֆինանսավորումը մնում է աննշան. համապատասխան մինիստրություններին տրվող հատկացումների ընդհանուր գումարը չի անցնում բոլոր ծախսերի 10 տոկոսից։ Օրինակ, 1965—66 ֆինանսական տարվա բյուջեի նախագծով նախատեսվում է հասարակական աշխատանքների մինիստրության գծով հատկացումներ կատարել 676 միլիոն լիրա գումարով, գյուղատնտեսության մինիստրության գծով՝ 598 միլիոն, արդյունաբերության մինիստրության գծով՝ 107 միլիոն լիրա։

Միանգամայն անբավարար են նաև լուսավորությանը և առողջապահությանը հատկացվող պետական ծախսերը։ 1965/66 ֆինանսական տարում այդ նպատակների վրա նախատեսվում էր ծախսել համապատասխանաբար՝ 2182 միլիոն և 591 միլիոն լիրա։

Իշխանության տեղական օրգանների միջոցների ճնշող մասը գնում է կառավարման ապարատի պահպանման համար, իսկ սոցիալ-տնտեսական նպատակների համար կատարվող հատկացումները աննշան են։

Բյուջետային ֆինանսավորման մեթոդները 50-ական թվականների վերջերին— 60-ական թվականների սկզբներին կատարվում է ինչպես օրդինարային (սովորական), այնպես էլ էքստրաօրդինարային (արտակարգ) մուտքերի ած, ըստ որում վերջիններիս բաժինն անընդհատ մեծանում է. եթե 1958—1961 թվականներին արտակարգ մուտքերի տեսակարար կշիռը կազմել է միջին հաշվով 19 տոկոս, ապա 1964/65 ֆինանսական տարում այն հասավ 23 տոկոսի։ Սովորական մուտքերի մեջ գլխավոր տեղը (մոտ 85 տոկոսը) գրավում են ուղղակի և անուղղակի հարկերը. պետական ունեցվածքների և ձեռնարկությունների հարկերի դերն աննշան է (10—12 տոկոս)։ Առաջատար տեղ են գրավում հարկերը նաև տեղական բյուջեները կատարվող մուտքերի մեջ։

Թուրքական հարկային սիստեմի հիմնական օղակը

ապրանքների և ծառայությունների անուղղակի հարկադրումն է։ Ակցիզների, մաքսերի, գանձումների թիվը, որ կատարվում է կենտրոնական և տեղական իշխանությունների կողմից, 30-ից անցնում է. նրանց բաժինը կազմում է միջին հաշվով կենտրոնական բյուջեի բոլոր հարկային մուտքերի մոտ 65 տոկոսը և տեղական բյուջեի եկամուտների 50 տոկոսից ավելին։

Անուղղակի հարկերի մեջ բացարձակ մեծամասնություն են կազմում ազգային արդյունաբերության արտադրած և արտասահմանից ներմուծված ապրանքների օգտագործման վրա դրված հարկերը։ Միաժամանակ մաքսային գանձումներից ստացվող եկամուտները տարածվում են բոլոր հարկերի 10 տոկոսի սահմաններում, որը զգալիորեն պակաս է, քան Ասիայի զարգացող երկրների մեծ մասում։ Մաքսային գանձումների դերի անկումը Թուրքական պետության եկամուտների մեջ (XX դարի սկզբում դրանք տալիս էին բոլոր անուղղակի հարկերի կեսը, իսկ մինչև 1934 թվականը՝ մեկ երրորդը) կապված է ազգային թեթև արդյունաբերության զարգացման հետ, որը լիովին բավարարում է ներքին շուկան այնպիսի ապրանքներով, որոնք առաջներում ներմուծվում էին (կտորեղեն, շաքար, ապակի և այլն)։ Թուրքիայի ներկայիս ներմուծման հիմքը կազմող արտադրության միջոցները հարկադրվում են կամ չափազանց ցածր դրույքներով, կամ էլ բոլորովին չեն հարկադրվում։ Բացի այդ, մաքսեր չեն գանձվում նաև այն ապրանքներից, որոնք ԱՄՆ-ը Թուրքիա է արտահանում իբրև օգնություն։

Ակցիզների և ապրանքների օգտագործման հարկերի դրույքներն անընդհատ աճում են։ Հատկապես բարձր է լայն սպառման ապրանքների հարկադրումը։ Միևնույն ապրանքը կամ ծառայության տեսակը հարկադրվում է, իբրև կանոն, մի քանի ակցիզների և հարկադրումների միջոցով։ Հետևանքը լինում է այն, որ լայն սպառման ապրանքների մեծ մասի վրա դրված անուղղակի հարկերի տեսակարար



կշիռը 50—60 տոկոսով գերազանցում է նրանց մանրածախ գները։

Ուղղակի հարկերի մեջ, որոնք գանձվում են կենտրոնական բյուջե, կարևոր տեղ է գրավում եկամտահարկը (բոլոր մուտքերի 80 տոկոսից ավելին)։ Եկամտահարկ վճարողների հիմնական զանգվածը բանվորներն ու ծառայողներն են. աշխատավարձից և ռոճիկից կատարվող ետպահումները գանձարանին տալիս են եկամտահարկի ամբողջ մուտքի 65 տոկոսից ավելին։ Բանվորների և ծառայողների համար եկամտահարկից ազատվելու մինիմումը շատ ցածր է, և Թուրքիայի բանվոր դասակարգը պահանջում է բարձրացնել այն։ Կապիտալիստները եկամտահարկ են վճարում իրենց տված հայտարարությունների հիման վրա. ընդսմին, Թուրքիայում, ինչպես նաև բուրժուական մյուս պետություններում, առևտրական գաղտնապահությունն ամենաբարենպաստ հնարավորություններ է ընձեռում ստացվող շահույթի իրական չափերի նվազեցման և հարկադրումից խուսափելու համար։ Եկամուտների ու շահույթների հարկադրման դրույքները տատանվում են 10—68 տոկոսի սահմաններում։ Կառավարող շրջանները առանձնապես հովանավորում են առավել խոշոր կապիտալը. եկամտահարկի դրույքը 285 հազարից մինչև մեկ միլիոն լիրա եկամուտ ունեցողների համար նախատեսված է 68 տոկոս, իսկ մեկ միլիոնից ավել եկամուտ ունեցողների համար՝ 60 տոկոս։

Թուրքիայի առանձնահատկությունն այն է, որ գյուղատնտեսությունից ստացված եկամուտներն ազատվում էին եկամտահարկից։ Միայն 1961 թվականին ընդունվեց խոշոր կալվածատիրական ու կուլակային տնտեսությունների վրա եկամտահարկի տարածման օրենք։ Սակայն փաստորեն տարբեր պատրվակներով դա չի կենսագործվել։ 1963 թվականին ֆինանսական օրգաններին հաջողվեց հողատերերից գանձել միայն մոտ 30 միլիոն լիրա՝ պլանավորված 100 միլիոնի դիմաց։

Ընկերությունների հարկը գանձվում է մասնավոր բաժնետիրական ընկերություններից և կոոպերատիվներից՝

եկամուտների 15 տոկոսի, իսկ պետականներից՝ 35 տոկոսի չափով։ Ընկերությունների ցածր հարկադրումը, հատկապես մասնավորների նկատմամբ, այն միջոցառումներից մեկն է, որն ընդունված է Թուրքիայում բուռն կերպով զարգացող կապիտալիստական ձեռնարկատիրության բաժնետիրական և կոոպերատիվ ձևերի խթանման համար։

Եթե ուղղակի հարկերը, որոնք մտնում են կենտրոնական բյուջե, իրենց համար իբրև աղբյուր ունեն եկամուտն ու աշխատավարձը և իրենց բնույթով հանդիսանում են կապիտալիստական, ապա տեղական իշխանությունների օգտին գանձվող ուղղակի հարկերը (ունեցվածքային և ըստ շնչերի) դեռևս պահպանում են կիսաֆեոդալական գծերը։ Առավել արխաիկ են գյուղական իշխանությունների կողմից գանձվող, այսպես կոչված սալմա և իմեջե հարկերը, որոնք տալիս են գյուղական իշխանությունների եկամուտների մոտ 60 տոկոսը։ Սալման ըստ տան հարկ է. նրա մեկ երրորդը գյուղացիները մարում են բնավարձի ձևով (բերքի որոշակի մասը իշխանությանը հանձնելու կամ աշխատելու միջոցով)։ Իմեջեն ըստ շնչերի աշխատանքային պարտականության կատարումն է, որ պարտադիր է գյուղերում բնակվող բոլոր տղամարդկանց համար և կապված է շինարարական կամ վերանորոգման աշխատանքների հետ։

Պետական կալվածքներից և ձեռնարկություններից բյուջե մտնող եկամուտներն աննշան են. դրանց բաժինը կենտրոնական բյուջեում 6 տոկոսից, իսկ տեղական բյուջեների մեջ՝ 10 տոկոսից չի անցնում։ Մասամբ այդ բացատրվում է նրանով, որ պետական արդյունաբերական ձեռնարկությունների շահույթները մտնում են Սումերբանկի և Էթիբանկի հաշիվների մեջ։ Պետական բյուջեի մեջ են մտնում միայն պետական անտառների, հողերի օգտագործումից ստացված եկամուտները, պետական երկաթուղիների, կապի և որոշ այլ ձեռնարկությունների շահագործումից ստացված եկամտի մի մասը։

Ամբողջությամբ վերցրած, թուրքական պետության սովորական եկամուտները չեն ծածկում նրա հարաճուն ծախ-



սերը։ Բյուջետային դեֆիցիտը խրոնիկ բնույթ է կրում և տարեցտարի ավելանում է։ Այսպես, եթե կենտրոնական և միավորված բյուջեների դեֆիցիտը 1950 թվականին կազմել է 156 միլիոն լիրա, ապա 1962 թվականին այն հասավ 1704 միլիոնի։ Կանոնավոր ձևով դեֆիցիտներ են առաջանում նաև տեղական օրգանների, առաջին հերթին Ստամբուլի, Անկարայի, Իզմիրի մունիցիպալիտետների բյուջեներում։

Խրոնիկ դեֆիցիտը ծածկելու համար միջոցների աղբյուրներ որոնելը Թուրքիայի ամենասուր պրոբլեմն է։ Ամենակարևոր աղբյուրը ամերիկյան «էկվիվալենտային հաշվի» միջոցներն են։ 1956—1961 թվականներին այդ միջոցներով միջին հաշվով ծածկվել է կենտրոնական և միավորված բյուջեների դեֆիցիտի 45 տոկոսը, իսկ 60-ական թվականներին՝ մոտ 80 տոկոսը։ Բացի այդ, գանձատունը լայնորեն օգտվում է կենտրոնական բանկի վարկերից և ավանսներից, պետական հիմնարկների և մասնավոր անձանց մեջ հարկադիր կերպով այսպես կոչված խնայողական բոների (դրամանիշների) տարածումից և այլն։

Ինչպես պետական բյուջեի, այնպես էլ պետական սեկտորի և ձեռնարկությունների խրոնիկ դեֆիցիտը, որի կեսից ավելին մարվում էր փոխառությունների օգնությամբ, հետևանք է ներքին և արտաքին պետական պարտքի հսկայական աճի։

9-րդ աղյուսակում տվյալներ են բերված հետպատերազմյան տարիների (1946—1964 թվականներ) Թուրքիայի պետական պարտքի դինամիկայի և կառուցվածքի մասին։

Օտարերկրյա մասնավոր ֆիրմաներին ունեցած պարտքերը հաշվի առնելով, պետական պարտքի ընդհանուր գումարը 1964 թվականի վերջին անցավ 22 մլրդ լիրայից, որը կազմեց ազգային համախառն եկամտի 42 տոկոսը։ 1946 թվականից մինչև 1964 թվականը պետական պարտքի գումարը համադրելի գներով աճեց ավելի քան չորս անգամ։

Նշանակալիորեն ավելացավ թուրքական պետության արտաքին պարտքը, որին զգալիորեն նպաստեցին 1946 և 1960 թվականներին անցկացված լիրայի դեվալվացիան դոլլարի նկատմամբ։

Թուրքիայի արտաքին պետական պարտքն առաջացավ հիմնականում նրա կառավարող շրջանների կողմից ԱՄՆ-ից և այլ կապիտալիստական երկրներից, ինչպես նաև միջազգային վարկային կազմակերպություններից ստացված «օգնությամբ», ինչպես, օրինակ՝ «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկից», «Միջազգային վալյուտային ֆոնդից», «Եվրոպական վճարային միությունից», իսկ սկսած 1963 թվականից՝ նաև կոնսորցիումից[1]։

Աղյուսակ 9

Թուրքիայի պետական պարտքը

| Տարիներ | Երկարատև պարտքը | | Ընթացիկ պարտքը | | Ամբողջ պետական պարտքը | Այդ թվում՝ արտաքինը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | միլիոն լիրա | տոկոս | միլիոն լիրա | տոկոս | միլիոն լիրա | միլիոն լիրա | տոկոս |
| 1946 | 1123 | 58 | 801 | 42 | 1924 | 707 | 37 |
| 1950 | 1455 | 57 | 1111 | 43 | 2566 | 775 | 29 |
| 1955 | 1751 | 49 | 1773 | 51 | 3524 | 969 | 28 |
| 1960 | 5937 | 54 | 5975 | 46 | 11912 | 5071 | 46 |
| 1964 | 18249 | 84 | 3533 | 16 | 21782 | 8172 | 37 |

ԱՄՆ-ից և այլ իմպերիալիստական տերություններից ստացած «օգնության» չափերով Թուրքիան Մերձավոր և Միջին արևելքի երկրների մեջ առաջին տեղն է բռնում։ 1945 թվականից մինչև 1963 թվականը Թուրքիան ստացել է ավելի քան 4,5 միլիարդ դոլլար ռազմական և տնտեսական «օգնություն»։ 1962 թվականի վերջին ԱՄՆ-ի կողմից ապրանքային մատակարարումների և անվերադարձ նվիրատվության հաշվին Թուրքիային տրված տնտեսական «օգնության» գումարը կազմել է 959 միլիոն դոլլար կամ ամբողջ տնտեսական «օգնության» 43 տոկոսը։ Մնացած միջոցները տրվել են իբրև վարկ՝ տարեկան 2,5-ից մինչև 6 տոկոսով։

[1] Կոնսորցիումը ստեղծվեց 1962 թվականին, 1963—1967 թվականներին Թուրքիայի տնտեսական զարգացման պլանի ֆինանսավորման համար։ Նրա անդամներն են ԱՄՆ-ը, արևմտաեվրոպական իմպերիալիստական երկրներից՝ «Ընդհանուր շուկայի» անդամները, ինչպես նաև «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը», «Միջազգային վալյուտային ֆոնդը», «Եվրոպական վճարային միությունը»։



Թուրքիայի արտաքին պարտքի ընդհանուր գումարը 1964 թվականի վերջին, տոկոսների հետ միասին, կազմեց 1559 միլիոն դոլլար։ Չնայած այդ պարտքի վերջնական մարումը նախատեսված է մինչև 2014 թվականը, գումարի մոտ կեսը (800 միլիոն դոլլար) Թուրքիան պետք է վճարի մինչև 1970 թվականը։ Արտաքին պարտքի մարման գծով կատարվող վճարումները 1964 թվականին կազմեցին 165 միլիոն դոլլար, 1965 թվականին դրանք հասնելու էին 216 միլիոնի։ Մինչդեռ կոնսորցիումից Թուրքիայի ստացած վարկերի ընդհանուր գումարը 1963 թվականին կազմեց 169 միլիոն դոլլար, իսկ 1964 թվականին 150 միլիոնից չի անցել։ Այլ խոսքով, երկրին տրվող օտարերկրյա փոխառական կապիտալի հատկացումները մոտավորապես համազոր են օտարերկրյա պարտքերի մարման գծով նրա կատարած վճարումներին։

Վարկա-բանկային սիստեմը։ Ետպատերազմյան ժամանակաշրջանում տեղի է ունենում բանկային սիստեմի ամրապնդում, կապիտալի կուտակման ուժեղացում, բանկերի բաժանմունքների թվի աճ։ Բանկային սիստեմի համահավաք բալանսի դինամիկան ետպատերազմյան ժամանակաշրջանում այսպիսին է եղել (բացառությամբ, կրկնակի հաշվից խուսափելու համար, կենտրոնական բանկի բալանսի). 1949 թվականին՝ 2,5 մլրդ, 1955 թվականին՝ 9,7 մլրդ, 1960 թվականին՝ 21,7 մլրդ, 1963 թվականին՝ 26,1 մլրդ լիրա։ Համադրելի գներով թուրքական բանկերի համահավաք բալանսի գումարը 1963 թվականին գերազանցել է 1949 թվականի մակարդակը ութ անգամ։ Միաժամանակ բաժանմունքների թիվը 1949 թվականի 517-ից 1964

թվականի վերջին հասավ 1795-ի։ Փոխատվական կապիտալի զարգացումը Թուրքիայում զգալիորեն գերազանցում է արդյունաբերական կապիտալի զարգացումը։

Իր ռեսուրսների մոբիլիզացման մեթոդներով թուրքական բանկային սիստեմը հասել է զարգացած կապիտալիստական երկրների մակարդակին. ներգրավված միջոցները, որոնց հիմքը ավանդներն են, կազմում են նրա ռեսուրսների 80 տոկոսը, այն դեպքում, երբ սեփական միջոցները (վճարված կապիտալը և ռեզերվները)՝ միայն 20 տոկոսը։ Երկրի տնտեսական հետամնացությունը ի հայտ է գալիս այդ ռեսուրսների օգտագործման մեջ։ Թուրքական բանկերի մեծ մասի գլխավոր ակտիվ գործարքները մնում են փոխատվությունը և մուրհակների հաշվառումը, այն դեպքում, երբ «մասնակցությունը», այսինքն՝ ուրիշ ձեռնարկությունների բաժնետոմսերին տիրելը, հիմնադիր գործունեությունը, արժեթղթերի էմիսիան և նրանց տեղաբաշխումը փոխատվային կապիտալի շուկայում դեռևս շատ թույլ են զարգացած։

Կապիտալի պատկանելության տեսակետից Թուրքիայի վարկա-բանկային սիստեմը բաժանվում է հետևյալ խմբավորումների՝ պետական բանկեր, խառը, մասնավոր, օտարերկրյա մասնավոր բանկեր։

1965 թվականի մարտի դրությամբ գրանցված էր 47 բանկ, այդ թվում՝ 5 օտարերկրյա, որոնց բալանսների գումարը հազիվ կազմում է գործող բանկերի համահավաք բալանսի 4 տոկոսը։

Թուրքիայի բանկային սիստեմի հիմքը կազմում են պետական կամ պետության կողմից վերահսկվող ազգային բանկերը։ 1962 թվականին դրանց բաժին էր ընկնում երկրի բանկային սիստեմի ստացած պարտքերի 67 տոկոսը, պահանջների հիմնական հոդվածների 64 տոկոսը և շահույթի 63 տոկոսը։ Պետական և կիսապետական բանկերի միջոցով իրականացվում է պետական ձեռնարկությունների վարկավորումը, ինչպես նաև օգնություն է ցույց տրվում քաղաքային խոշոր բուրժուազիային և գյուղի կալվածատիրական-կուլակային խավին։



Պետական արդյունաբերական, տրանսպորտային, կոմունալ և այլ ձեռնարկությունների գործունեությանը վերահսկող խոշորագույն պետական բանկերին (էթիբանկ, սումերբանկ, ծովագնացության բանկ և այլն) բաժին է ընկնում «մասնակցության» հիմնական զանգվածը (1962 թվականին՝ 79 տոկոս)։ Բանկերի այդ խմբին տիրապետող դեր է պատկանում նաև հաշվառման-փոխատվության գործարքների բնագավառում (1962 թվականին՝ 65 տոկոս)։

Ազգային մասնավոր բանկերը վարկերով սպասարկում են, ըստ էության, միայն առևտրի ոլորտը (ներքին և արտաքին)։ «Մասնակցության» հետ կապված մասնավոր ազգային բանկերի գործարքների մասշտաբները աննշան են. դրա հետ մեկտեղ «մասնակցության» հիմնական մասն իրականացնում է խոշորագույն մասնավոր գործնական բանկը։

Ինչպես և Ասիայի թույլ զարգացած այլ երկրներում, օտարերկրյա բանկերի դերն արտադրության ֆինանսավորման հարցերում գործնականում զրոյի է հավասար. նրանք սահմանափակվում են ավանդների ներգրավմամբ և գլխավորապես արտաքին առևտրի վարկավորմամբ։

Պետությանը ֆինանսավորելու հարցում պետական ազգային բանկերի և մասնավոր բանկերի դերը գրեթե նույնն է, քանի որ օրենքով մասնավոր բանկերը պարտավոր են ձեռք բերել պետական փոխառությունների պարտատոմսեր և այլ պետական արժեթղթեր։ Ըստ որում, եթե 30-ական թվականներին մասնավոր բանկերի կողմից պետությանը ակտիվորեն ֆինանսավորելու մասին պահանջը առաջադեմ նշանակություն ուներ, քանի որ նպաստում էր երկրի ինդուստրացմանը, ամրապնդում նրա տնտեսությունը, ապա այժմ, երբ պետական ռեսուրսների մեծ մասը օգտագործվում է ոչ արտադրական՝ ռազմական նպատակների վրա, զգալի չափով հանգեցնում է տնտեսության սպասարկման համար անհրաժեշտ բանկային ռեսուրսների կրճատմանը։

Չնայած փոխատվական կապիտալի ակնհայտ ընդարձակմանը, նրա սուր պակաս է զգացվում։ Վարկերի հսկայական պահանջը պատճառ է փոխատվական տոկոսների

չափազանց բարձր մակարդակի, որը գանձվում է մասնավոր բանկերի միջոցով. այն կազմում է 18 տոկոս և ավելի, պաշտոնապես սահմանված 9—10 տոկոսի դրույքի դեպքում։ Վարկային ռեսուրսների պակասը և փոխատվային տոկոսների բարձր լինելը մանր և միջին բուրժուազիային գործնականորեն հնարավորություն չեն տալիս վարկեր ըստանալու։ Դրանցից առաջին հերթին օգտվում է խոշոր բուրժուազիան, հիմնականում առևտրական, որն սպեկուլյատիվ գործարքներից և ամեն տեսակի աֆյորաներից ստանում է բարձր շահույթ։

Թուրքիայի բանկային կապիտալի կառուցվածքը տիպական է հետամնաց ագրարային երկրի համար. բանկային ռեսուրսները օգտագործվում են գյուղատնտեսության վարկավորման և է՛լ ավելի մեծ չափերով՝ գյուղատնտեսական արտադրության մթերքով առևտրի վարկավորման համար արդյունաբերական վարկերի աննշան չափերի պայմաններում։ Այդ մասին են վկայում մասնավոր սեկտորին տրված բանկային վարկերի ըստ ճյուղային բաշխման մասին տվյալները (այստեղ չեն մտնում կենտրոնական բանկի վարկերը)։ 1964 թվականին վարկերի 61 տոկոսը գնացել է առևտրի բնագավառը, 20-ը՝ գյուղատնտեսության, 12-ը՝ բնակարանային շինարարության և միայն 3-ը՝ արդյունաբերության ու 2 տոկոսը՝ արհեստավորա-տնայնագործական արտադրությանը։

Իր գործունեության բնույթով Թուրքիայի բանկային սիստեմը բաղկացած է հետևյալ օղակներից. 1) էմիսիոն բանկ, 2) առևտրական բանկ, 3) մասնագիտացված բանկեր, 4) խնայողական դրամարկղներ, 5) քաղաքի և գյուղի մանր արտադրողների վարկային կոոպերատիվներ։

Իրենց ռեսուրսների մոբիլիզացման մեթոդներով Թուրքիայի բանկերի մեծ մասը ավանդային են։

Էմիսիոն բանկի ֆունկցիան իրականացնում է կենտրոնական բանկը (հիմնադրված է 1930 թվականին), որը վարում է նաև զանազան առևտրական գործարքները և, ամբողջությամբ վերցրած, վերահսկում է Թուրքիայի բանկային



սիստեմի վրա։ Էմիսիայի մենաշնորհային իրավունքից բացի կենտրոնական բանկը բոլոր գործարքները կատարում է ոսկու և արտասահմանյան վալյուտայի միջոցով։ Սեփական միջոցները (հիմնական և ռեզերվային կապիտալը) կազմում են կենտրոնական բանկի բոլոր ռեսուրսների մոտ մեկ տոկոսը։ Բանկի միջոցների գլխավոր աղբյուրը թղթադրամային էմիսիան է. նրան բաժին է ընկնում բոլոր պարտքերի կեսից ավելին։

Թղթադրամների չափից դուրս էմիսիան, որի աճը 50-ական թվականների երկրորդ կեսերին և 60-ական թվականների սկզբներին կազմել է տարեկան 6—12 տոկոս և, այդպիսով, զգալիորեն գերազանցել է արտադրության ու ապրանքաշրջանառության աճը, Թուրքիայում դարձավ ինֆլյացիոն պրոցեսի զարգացման կարևոր պատճառներից մեկը։ Դրա հետ միաժամանակ արտաքին առևտրի հաշվեկշռի դեֆիցիտի, արտաքին փոխառությունների մարման համար կատարվող վճարումների ավելացման հետևանքով տեղի է ունենում երկրի ոսկու և վալյուտայի պաշարների արտահոսք։ 60-ական թվականներին կենտրոնական բանկի ոսկով և վալյուտայով կատարվող գործարքների խրոնիկ պարտքի սալդոն չափազանց բարձրացավ. 1961 թվականին այն կազմում էր 349 միլիոն լիրա, 1962 թվականին՝ 543 միլիոն, 1963 թվականին՝ 800 միլիոն լիրա։ 1963 թվականի վերջին երկրի 91,6 տոննա ոսկու պաշարից միայն 19,1 տոննան էր ազատ, ոսկու մնացած մասը գրավ է դրված իմպերիալիստական տերությունների մոտ։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում զգալիորեն բարձրացավ կենտրոնական բանկի ավանդների դերը. 1964 թվականին նրանց բաժինը կազմել է պարտքերի միայն 6 տոկոսը, 50-ական թվականներին այն անցնում էր 20 տոկոսից։ 60-ական թվականներին տեղի է ունենում կենտրոնական բանկի ավանդների կառուցվածքի որակական փոփոխություն. եթե նախկինում դրանց մեծ մասը ձևավորվում էր ազգային և բանկային ռեսուրսների հաշվին, ապա 1963 թվականին ավանդների 50 տոկոսը գտնվում էր օտարերկրյա

ավանդատուների հաշիվներում։ Օտարերկրյա հաշիվների մեջ կենտրոնական բանկում ամենակարևոր նշանակություն ունի «էկվիվալենտային հաշիվը», որը, իբրև «նվերներ», ընդունում է ԱՄՆ-ից ներմուծվող ապրանքները Թուրքական շուկայում իրացնելիս ստացված լիրաները։ «Էկվիվալենտային» և օտարերկրյա այլ հաշիվների գրեթե բոլոր միջոցները ուղղվում են ռազմական միջոցառումների, ինչպես նաև տնտեսական այն օբյեկտների ֆինանսավորմանը, որոնցով շահագրգռված են ամերիկյան և այլ օտարերկրյա մոնոպոլիաները[1]։

Չնայած պետական հեղաշրջումից անմիջապես հետո, 1960 թվականի մայիսին, տեղի ունեցավ կենտրոնական բանկի հաշվային փոխատվական գործարքների չնչին կրճատում, հետագա տարիներին դրանք կրկին սկսեցին ընդլայնվել։ Սակայն, եթե նախկինում կենտրոնական բանկը վարկ տալիս էր հիմնականում պետական բանկերին և ընկերություններին, ապա 1961—1962 թվականներին պետական բանկերի և ձեռնարկությունների վարկավորումը չնչին կրճատվեց, իսկ գանձարանային բոների և մուրհակների հաշվառումը հասցվեց նվազագույնի։

Կենտրոնական բանկի հաշվային-փոխատվական բոլոր գործարքների մոտ կեսը բաժին է ընկնում մասնավոր սեկտորին։ Դրանց մեջ առաջին տեղում է գյուղատնտեսական մուրհակների հաշվառումը, երկրորդ տեղում՝ առևտրական մուրհակներինը։ Մասնավոր արդյունաբերության և արհեստների վարկավորումը կենտրոնական բանկի կողմից աննշան է։

Երկրում գործող 47 առևտրական բանկերից առաջատար դերը պատկանում է պետական կամ պետության կողմից

[1] 1964 թվականի սկզբի տվյալներով «էկվիվալենտային հաշվի» ապամեկուսացված 4498 միլիոն լիրա ընդհանուր գումարից միջոցների 68 տոկոսն առանձնացվել էր «ազգային պաշտպանության կարիքների» համար, 28 տոկոսը՝ պետական սեկտորի բանկերի և ձեռնարկությունների, 6 տոկոսը՝ մասնավոր սեկտորի ձեռնարկությունների (գլխավորապես Թուրքիայի արդյունաբերական զարգացման բանկի միջոցով) համար։



վերահսկվող յոթ բանկերին՝ գյուղատնտեսական բանկ, սումերբանկ, էթիբանկ, ծովագնացության բանկ, հողային վարկի բանկ, ժողովրդական բանկ, գավառային բանկ։ Յուրաքանչյուր բանկի գործունեության ոլորտը սահմանափակվում է տնտեսության որոշակի բնագավառով։

**Գյուղատնտեսական բանկը**՝ կենտրոնական բանկից հետո Թուրքիայի ամենախոշոր և ամենահին ազգային բանկային հաստատությունը (հիմնադրված է 1888 թվականին), վարկավորում է գյուղատնտեսությունը։ 1964 թվականին նրա բաժանմունքների թիվը հասնում էր 660-ի, 1954 թվականի 488-ի համեմատությամբ։ 1964 թվականի օգոստոսին օրենք ընդունվեց բանկի կապիտալը կրկնակի՝ 750 միլիոն լիրայից մինչև 1,5 միլիարդ լիրա ավելացնելու մասին։ Սակայն բանկը գործարքներ է կատարում գլխավորապես ներգրավված միջոցներով։ 1962 թվականին նրա ավանդները կազմում էին 3151 միլիոն լիրա, պարտավորությունները՝ 524 միլիոն, շրջանառության մեջ գտնվող փոխառությունները՝ 139 միլիոն լիրա։

Բանկի կողմից մասնավոր անձանց, պետական կազմակերպություններին և կոոպերատիվային տրված գյուղատնտեսական վարկերի չափերը 1950 թվականի 409 միլիոն լիրայից 1962 թվականին հասան մինչև 2412 միլիոնի։ Գյուղատնտեսական վարկերի հիմնական մասը (1962 թվականին՝ 83 տոկոսը) կարճաժամկետ (մինչև մեկ տարով) վարկերն են։

Պետական և մասնավոր այլ ընկերությունների հետ միասին (այդ թվում օտարերկրյա) գյուղատնտեսական բանկը նաև մի ամբողջ շարք ձեռնարկությունների բաժնետեր է։ Նա գործարքները վարում է սովորական առևտրական վարկավորմամբ։ Նրա առևտրական վարկերի գումարը 1962 թվականին կազմեց 1306 միլիոն լիրա։

**Սումերբանկը** (հիմնված է 1933 թվականին) ղեկավարում է պետական արդյունահանման արդյունաբերությունը։ Նրա վճարված կապիտալի և ռեզերվների գումարը 1964 թվականի վերջին հասել էր 588 միլիոն լիրայի, իսկ բաժանմունքների թիվը՝ 14-ի։

**Էթիբանկը** ֆինանսավորում է արդյունահանման և էներգիայի արդյունաբերության պետական ձեռնարկություններին և ղեկավարում է դրանք. նրա վճարված կապիտալը և ռեզերվները կազմում են 548 միլիոն լիրա, բաժանմունքների թիվը 12 է։

**Ծովագնացության բանկը** ղեկավարում է մարդատար և առևտրական նավատորմը։ Նրան են պատկանում նավակայանները, պահեստները և նավահանգստային այլ սարքավորումները։ Վճարված կապիտալը և ռեզերվները 502 միլիոն լիրա են։

Թվարկված երեք բանկերի ավանդային գործարքները համեմատաբար մեծ չեն (պարտքերի մոտ 20 տոկոսը էթիբանկում և սումերբանկում և 10 տոկոսից պակաս՝ ծովագնացության բանկում)։ Սրանց ռեսուրսների հիմքը կազմում է սեփական կապիտալը. 50-ական թվականներին դրանց ավելացան կենտրոնական բանկի և այլ պետական հիմնարկների վարկերը և ավանդները. կառավարության կողմից 1960 թվականին կենտրոնական բանկի նկատմամբ մատյանավորում մտցնելուց հետո այդ բանկերի ֆինանսական բազան զգալի չափով թուլացավ։

**Հողային վարկավորման բանկը** հողատերերի և կառուցումների գրավ վերցնելով քաղաքներում, վարկեր է տալիս մունիցիպալ իշխանություններին և մասնավոր անձանց։ Վճարված կապիտալը և ռեզերվները կազմում են 341 միլիոն լիրա. բանկը 59 բաժանմունք ունի։

**Ժողովրդական բանկը** վարկավորում է գլխավորապես տնայնագործներին և արհեստավորներին, որոնք միավորված են երաշխավորված վարկային կոոպերացիայի մեջ։ 1964 թվականին բանկի կապիտալը 150 միլիոն լիրայից մեծացավ մինչև 300 միլիոնի. ունի 67 բաժանմունք։

**Գավառական բանկը** (Անկարայում) վարկավորում է վիլայեթային իշխանություններին։ Բանկի կապիտալը կազմում է 406 միլիոն լիրա։

Մասնավոր ազգային բանկերի մեջ ամենախոշորը **Գործնական բանկն է**։ Նրա վճարված կապիտալը և ռեզերվները կազմում են 157 միլիոն լիրա. բաժանմունքների թիվը երկրում 1954 թվականի 164-ից 1964 թվականին հասավ 248-ի. այն իր գործակալություններն ունի արտասահմանում։ Չնայած ըստ իր ներքին ռեսուրսների չափերի գործնական բանկին չափազանց համեստ տեղ է հատկացված՝ երկրի բանկերի վճարված կապիտալների և ռեզերվների 4 տոկոսը միայն (1962 թվականի վերջին), բաժանմունքների լայն ցանցի շնորհիվ նա ներգրավված զգալի միջոցներ է տնօրինում. 1962 թվականին նրա բաժինը կազմում էր Թուրքիայի բոլոր բանկերի ավանդների 27 տոկոսը։



Գործնական բանկի հաշվային-փոխատվական գործարքների հիմնական մասը կապված է ներքին և արտաքին առևտրի վարկավորման հետ։ Այն ամենասերտ կապեր է պահպանում օտարերկրյա, հատկապես ամերիկյան և արևմտագերմանական առևտրական ֆիրմաների հետ։

50—60-ական թվականներին գործնական բանկը զգալիորեն ակտիվացրեց իր հիմնադիր գործունեությունը (պետական և մասնավոր, այդ թվում և օտարերկրյա, կապիտալի հետ միասին հանդես գալով իբրև մի շարք առևտրաարդյունաբերական ձեռնարկությունների և բանկերի բաժնետեր). 1962 թվականին նրան բաժին էր ընկնում Թուրքական բանկերի «մասնակցությունների» 10 տոկոսը։

**Շինարարական և վարկային բանկը** (կապիտալը 63 միլիոն լիրա է), **Ակբանկը** (39 միլիոն լիրա), **Անատոլիական բանկը** (31 միլիոն լիրա է) և **առևտրական բանկը** (33 միլիոն լիրա) հիմնականում զբաղված են առևտրի վարկավորմամբ և ավանդների ներգրավմամբ։

1963 թվականին Թուրքիայում գործում էր օտարերկրյա հինգ բանկ. «Բանկո դի Հռոմա», «Բանկա կոմերչիալե Իտալյանա», անգլո-ֆրանսիական օսմանյան և սալոնիկյան բանկերը, հոլանդական բանկը։ Սրանց վճարված կապիտալը և ռեզերվները հասնում էին 57 միլիոն լիրայի։ Օտարերկրյա բանկերը գործարքներ են կատարում հիմնականում ներգրավված միջոցներով, որոնք ավելի քան տասն անգամ գերազանցում են նրանց սեփական ռեսուրսները։ Նրանցից ամենախո-

Չ"րը օսմանյան բանկն է, որը հիմնվել է 1863 թվականին. Թուրքիայում ունի 46 բաժանմունք (օտարերկրյա բանկերի 59 բաժանմունքներից)։

1962 թվականին օտարերկրյա բանկերում էին տեղավորված բոլոր առևտրական ավանդների 9,3 տոկոսը և խնայողական ավանդների 6,4 տոկոսը։ Այդ բանկերում է պահում իր եկամուտը առավել ունևոր կլիենտուրան. 1962 թվականին խնայողական ավանդի միջին մեծությունը նրանց մոտ կազմում էր 4532 լիրա, այն դեպքում, երբ ազգային բանկերում այն չի անցնում 1100 լիրայից։

Օտարերկրյա բանկերի ակտիվ գործարքները կապված են գլխավորապես արտաքին առևտրի վարկավորման հետ։ Օտարերկրյա բանկերի միջոցներն օգտագործվում են նաև պետության ֆինանսավորման համար։

Ներգրավված հսկայական միջոցները, գործնական շրջաններում ունեցած ամուր կապերը, բազմաթիվ փոքր օտարերկրյա բանկերի համար ապահովում են առավելագույն բարձր շահույթի նորմա, որը 1962 թվականին կազմել է 33 տոկոս (թուրքական պետական բանկերում՝ 2,5 տոկոս, մասնավոր բանկերում՝ 8,5 տոկոս)։

Թուրքիայում գործում են նաև երեք խառը բանկեր, որոնք մասնագիտանում են մասնավոր արդյունաբերության և արտահանման վարկավորման մեջ։ Դրանցից առաջինը **Թուրքիայի արդյունաբերական զարգացման բանկն** է, որը հիմնադրված է 1950 թվականին, «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի», «Ամերիկյան տնտեսական համագործակցության վարչության» և գործնական բանկի գլխավորությամբ՝ թուրքական մի քանի մասնավոր բանկերի նախաձեռնությամբ։ 1951-ից մինչև 1962 թվականը արդյունաբերական զարգացման բանկը 544 մասնավոր ֆիրմաների վարկեր ավեց (գլխավորապես միջին ժամկետներով) 492 միլիոն լիրա գումարով։ Այդ վարկերի հիմնական մասը ստացան թեթև արդյունաբերության ձեռնարկությունները, սակայն զգացվում է արտադրամիջոցներ թողարկող արդյունաբերական ճյուղերի վարկավորումն ընդլայնելու տենդենց։ Այսպես,



եթե 1958 թվականի կեսերին մետալուրգիական, մետաղամշակման և մեքենաշինության արդյունաբերությունները ստացել են փոխառության միայն 13 տոկոսը, ապա 1962 թվականի վերջին դրանց բաժինն արդեն կազմում էր բոլոր վարկերի 25 տոկոսը։ Բանկն ավանդների գործարքներ չի կատարում։ Իր ռեսուրսների հիմնական մասը բանկը մոբիլիզացնում է օտարերկրյա աղբյուրներից («Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի» և ամերիկյան զարգացման փոխառության ֆոնդի վարկերից, «էկվիվալենտի հաշվի» միջոցներից)։

1963 թվականին Ստամբուլում հիմնադրվեց (գործնական բանկի և ամերիկյան զարգացման փոխառության ֆոնդի ակտիվ մասնակցությամբ) **արդյունաբերական ներդրումների և վարկերի բանկը** (նոմինալ կապիտալն է 40 միլիոն լիրա, մարվածը՝ 20 միլիոն)։ Նրա նպատակն է միջին ժամկետային վարկավորումը և մասնավոր սեկտորում արդյունաբերության հիմնադրումը։

Երրորդ խառը բանկը **ամերիկա-թուրքական արտաքին առևտրի բանկն** է, որը հիմնադրվել է 1964 թվականին Ստամբուլում։ Այն նպատակ է դրել զարգացնել արտահանությունը և արտահանության գծով աշխատող արդյունաբերությունը։ Բանկի կապիտալը 10 միլիոն լիրա է, որի 75 տոկոսը տրամադրել է գործնական բանկը, մնացածը՝ «Բանկ օֆ Ամերիկա»-ն։

Ետպատերազմյան ժամանակաշրջանում պետական գյուղատնտեսական և ժողովրդական բանկերի աջակցությամբ ակտիվ կերպով սկսեց զարգանալ վարկային կոոպերացիան։ Նրա օգնությամբ թուրքական բուրժուա-կալվածատիրական պետությունը ձգտում է իր ազդեցության տակ դնել քաղաքի և գյուղի մանր արտադրողներին և ամրապնդել կապիտալիստական տնտեսությունն իբրև գոյություն ունեցող կարգերի հիմք։

Հատկապես լայն մասշտաբներ ստացավ գյուղատնտեսական կոոպերացիայի[1] վարկային գործունեությունը։

[1] Տե՛ս՝ «Գյուղատնտեսությունը» բաժինը։

Արհեստակցական հրաշխավորված վարկային կոոպերացիան 1963 թվականին 86 հազար անդամների միավորում էր 183 կոոպերատիվ ընկերությունների մեջ, 1955 թվականի 28 հազար անդամների և 76 կոոպերատիվների համեմատությամբ։ Վարկային կոոպերացիան ընդգրկում է քաղաքներում բնակվող մանր առևտրականների, արհեստավորների և տնայնագործների 10 տոկոսից էլ պակասը։ Կոոպերատիվ ընկերությունների միջոցները ձևավորվում են հիմնականում ժողովրդական բանկի վարկերի հաշվին, որոնք 1963 թվականի վերջին հասան 464 միլիոն լիրայի։

Դրամաշրջանառություն։ 1916 թվականի ապրիլի 8-ի օրենքի համաձայն հիմնական դրամական միավորը Թուրքիայում համարվում է ոսկի ղուրուշը (Թուրքական ոսկի լիրան բաղկացած է 100 ղուրուշից, պարունակում է 6,615 գրամ մաքուր ոսկի, ղուրուշն ունի 40 փարա)։ Սակայն ոսկու շրջանառությունը Թուրքիայում փաստորեն դադարեց դեռևս առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ։ Այդ ժամանակ սկսված թուրքական թղթադրամների կուրսի անկման հետևանքով տեղի ունեցավ ղուրուշի խիստ արժեզրկում և իրական դրամական միավորը Հանրապետական Թուրքիայում աստիճանաբար դարձավ լիրան։ 1964 թվականի տվյալներով, շրջանառության մեջ գտնվող դրամական միջոցների 97 տոկոսը կազմում էին կենտրոնական բանկի բաց թողած թղթադրամները, 2 տոկոսը՝ արույրից և նիկելից պատրաստված դրամանիշները և մեկ տոկոսը՝ արծաթյա դրամները։

Շրջանառության մեջ են գտնվում 2, 5, 10, 50, 100, 500, 1000 լիրա արժեք ունեցող թղթադրամները, ինչպես նաև 1,2,5 և 10 լիրա մանր և 1, 2,5, 5,10, 25 և 50 ղուրուշ արժողության մետաղյա դրամները։

Թղթադրամների ավելի էմիսիան (բացթողումը) առաջ էր բերել դրամաշրջանառության լուրջ խանգարում արդեն երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին։ Թղթադրամների քանակն ավելացավ՝ 1938 թվականի 194 միլիոն լիրայից մինչև 881 միլիոն լիրա՝ 1945 թվականին։ Գյուղատնտեսական արտադրության անկման, ներքին և հատկա-



պես արտաքին առևտրի կրճատման պայմաններում, կենտրոնական բանկի էմիսիոն գործունեությունը առաջ բերեց ինֆլյացիա։ Հետագա հինգ տարիներին լրացուցիչ էմիսիան փաստորեն դադարեցված էր։ Սակայն 1950 թվականին դեմոկրատական կուսակցությունը իշխանության գլուխ կանգնելուց հետո, որն զգալիորեն ավելացրեց ռազմական ծախսերը պետական բյուջեի մեջ, լրացուցիչ էմիսիան պետական բանկերի և ձեռնարկությունների բյուջետային ֆինանսավորման կարևոր աղբյուրը դարձավ։ Դա հասցրեց ինֆլյացիայի զարգացմանը, որը հատկապես մեծ չափեր ընդունեց 50-ական թվականների երկրորդ կեսին։

Լիրայի ներքին արժեզրկման հետ միաժամանակ տեղի ունեցավ նաև նրա արտաքին արժեզրկում։ 1958 թվականի օգոստոսին դոլլարի համեմատությամբ լիրայի կուրսն իջեցվեց 3,3 անգամ։ Ինֆլյացիայի հետագա զարգացման դեմ կիրառված միջոցառումները, որոնք ձեռնարկվեցին 1960 թվականի մայիսի հեղաշրջումից հետո, նոր ռեժիմի գործիչների կողմից, արդյունավետ էին միայն սկզբնական շրջանում։ Ինչպես ցույց են տալիս պաշտոնական տվյալները, լրացուցիչ դրամական էմիսիայի տեմպերը մնում են բարձր. 1958 թվականին շրջանառության մեջ եղել է 3473 միլիոն լիրա թղթադրամ, 1959 թվականին՝ 3891 միլիոն, 1960 թվականին՝ 4452 միլիոն, 1961 թվականին՝ 4783 միլիոն, 1962 թվականին՝ 5122 միլիոն, 1963 թվականին՝ 5581 միլիոն, 1964 թվականի հոկտեմբերին՝ 6770 միլիոն լիրա։ Համապատասխանորեն բարձրացել էր նաև մեծածախ գների ինդեքսը. 1958 թվականին այն հասել էր 208-ի (1953 թվականին 100 էր), 1961 թվականին՝ 261-ի, 1962 թվականին՝ 269-ի, 1963 թվականին՝ 278-ի։

Տեղի է ունենում թուրքական վալյուտայի հետագա արտաքին արժեզրկում. 1963 թվականին պաշտոնական կուրսի պայմաններում 1 դոլլարը=9 լիրայի, սև շուկայում մեկ դոլլարին առաջարկում էին 13—15 լիրա։

Ինֆլյացիան ծայրահեղորեն բացասաբար է անդրադառ-

նում երկրի տնտեսության վրա, աշխատավորության վիճակի վրա։

Ինֆլյացիայի հետ կապված գների թանկացումը, ինչպես նաև ակցիզների և այլ անուղղակի հարկերի բարձրացումը հասցրեցին ապրուստի մինիմումի և աշխատավորների ու ծառայողների ռեալ աշխատավարձի ու ռոճիկի չափերի, քաղաքի և գյուղի մանր արտադրողների, ինտելիգենցիայի աշխատանքային եկամուտների միջև հսկայական ճեղքվածքի գոյացմանը։ Այսպես, բանվորների և ծառայողների աշխատավարձն ու ռոճիկը տատանվում են ամիսը 300—600 լիրայի միջև։ Առավել ցածր վարձատրվողներ Թուրքիայում համարվում են լեռնահանքային, տեքստիլ և սննդի արդյունաբերությունների բանվորները (ամիսը 300—350 լիրա), առավել բարձր վարձատրվող կատեգորիան բանկային սիստեմի և առևտրի ցանցի ծառայողներն են (միջին հաշվով ամիսը 600 լիրա)։ Չափազանց ցածր է ուսուցիչների աշխատավարձը (ամիսը մոտ 400 լիրա)։ Մինչդեռ չորս շնչից բաղկացած ընտանիքի ապրուստի մինիմումը այժմ ամսական 2,3 հազար լիրա է։

# ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Սուլթանական Թուրքիան, առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հանդես գալով Եռյակ միության պետությունների կողմում, պարտվեց։ 1918 թվականի հոկտեմբերի 30-ին Մուդրոս նավահանգստում ստորագրելով զինադադարի պայմանագիրը, նա հանձնվեց հաղթողների ողորմածությանը։ Մի քանի օրից հետո Անտանտի զորքերը օկուպացրին Դարդանելի ամրոցները, դեսանտ հանեցին Ստամբուլում, որը շուտով վերածվեց Սովետական Ռուսաստանի դեմ պայքարի ռազմական բազայի։ Դաշնակիցների ուժերը գրավեցին նաև Արևելյան Թրակիայի, Հարավային, Կենտրոնական և Արևմտյան Անատոլիայի տնտեսական ու քաղաքական կարևորագույն շրջանները։ 1919 թվականի սկզբին անգլիական, ֆրանսիական և իտալական զորքերի թիվը Թուրքիայում 107 հազարից անցնում էր։

Փարիզի հաշտության կոնֆերանսի որոշմամբ, 1919 թվականի մայիսի 15-ին անգլիական, ֆրանսիական և ամերիկյան ռազմանավերի պաշտպանությամբ Իզմիրում ափ հանվեցին հունական զորքեր, որոնք Անտանտի տերությունների ձեռքին ծառայում էին որպես զենք։ 1919 թվականի վերջին հունական զինվորների թիվը հասավ 100 հազարի։

Անտանտի տերությունները Ստամբուլում նշանակեցին իրենց գերագույն կոմիսարները, ցրեցին պատգամավորների պալատը, կատարեցին մասսայական ձերբակալություններ, մտցրեցին գրաքննություն, արգելեցին ժողովներն ու միտինգները։ Նրանք վերականգնեցին կապիտուլյացիայի ռեժիմը, որ վերացվել էր պատերազմի սկզբին, ու իրենց վերահսկողության տակ վերցրին բանկերը, գործարանները, հանքերը, երկաթուղիները և պետական հիմնարկները։

Սուլթան-խալիֆը և նրա կառավարությունը վերածվեցին անգլո-ֆրանսիական իմպերիալիստների հնազանդ ծառաների։

Չնայած այն խոր տարաձայնություններին, որ կային դաշնակիցների միջև Օսմանյան կայսրության ժառանգության բաժանման հարցում, նրանք համերաշխ էին Թուրքիայի հետագա տկարացման և նրա պետականության վերացման հարցում։ Այսպես, Փարիզի հաշտության կոնֆերանսում մշակված Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրի նախագծում նախատեսված էր՝ կենտրոնական Անատոլիայում սուլթանի գլխավորությամբ, բայց Անտանտի տերությունների փաստական վերահսկողությամբ պահպանել թուրքական մի փոքրիկ պետություն։

Բայց թուրք ժողովուրդը չէր հաշտվում իրեն ստրկացնելու և թուրքական պետականությունը ոչնչացնելու իմպերիալիստական պլանների հետ։ Նա միահամուռ կերպով զինված պայքարի ելավ օտարերկրյա զավթիչների դեմ։ Կարճ ժամանակում ամբողջ երկիրը բռնկվեց պարտիզանական պատերազմի բոցով։

Ազատագրական պայքարի հիմնական շարժիչ ուժը գյուղացիությունն էր, որը կազմում էր Թուրքիայի բնակչության ինը տասներորդը։ Դարեր շարունակ նա տառապել է ֆեոդալական շահագործումից, սուլթանական իշխանության բռնությունից ու կամայականությունից, իր վրա է կրել օտարերկրյա կապիտալիստների ծանր ճնշումը։

Այն ժամանակ Թուրքիայի բանվոր դասակարգը փոքրաթիվ էր, թույլ կազմակերպված, քաղաքականապես անփորձ։ Բացի այդ, նա կենտրոնացված էր գլխավորապես Ստամբուլում, Իզմիրում, Ադանայում, որոնք գտնվում էին օկուպանտների կրնկի տակ։ Այնուամենայնիվ, բանվորներն ակտիվորեն մասնակցում էին ազգային-ազատագրական պայքարին։ 1919—1920 թվականներին երկրի խոշոր քաղաքներում առաջացան կոմունիստական խմբեր, հեղափոխական արհմիություններ, երևան եկավ դեմոկրատական մամուլ։ Թուրքական



կոմունիստներն անմիջական մասնակցություն էին ցույց տալիս պարտիզանական շարժման կազմակերպմանը։ Նրանք պրոպագանդա էին մղում բնակչության մեջ՝ աշխատավորներին մոբիլիզացնելով իմպերիալիստական զավթիչների դեմ պայքարելու համար։

Թուրք ժողովրդի ազատագրական շարժումը գլխավորում էր Անատոլիայի ազգային առևտրական բուրժուազիան, որը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ուժեղացրել էր իր դիրքերը։ Ի տարբերություն կոմպրադորական բուրժուազիայի, որը օտարերկրյա կապիտալի գործակալն էր, ազգային բուրժուազիան շահագրգռված էր Թուրքիայի պետական անկախության և տերիտորիալ ամբողջականության պահպանմամբ։ Բացի այդ, նա ձգտում էր երկրում ամրապնդել իր տնտեսական և քաղաքական դիրքերը։ Կարևոր դեր էին խաղում թուրքական ինտելիգենցիան և սպայությունը։

Հակաիմպերիալիստական պայքարի մեջ մտան նաև Անատոլիայի լիբերալ կալվածատերերը, որոնց մեծ մասը կապված էր առևտրական բուրժուազիայի հետ։ Թուրքական պետականության վերացումը և Անատոլիայի անդամատումը կալվածատերերի համար ստեղծում էին իրենց հողային սեփականություններից զրկվելու ռեալ վտանգ։

Ազատագրական շարժումը գլխավորում էր աչքի ընկնող թուրք զորավար Մուստաֆա Քեմալ փաշան։ Թուրքական ազգային-ազատագրական շարժումը Մուստաֆա Քեմալի անունով կոչվեց քեմալական հեղափոխություն։

1919 թվականի հուլիսի 23-ից մինչև օգոստոսի 7-ը Էրզրումում Մուստաֆա Քեմալի ղեկավարությամբ տեղի ունեցավ Արևելյան Անատոլիայի իրավունքների պաշտպանության ընկերության կոնգրես։ Դրանից ավելի առաջ տեղի էին ունեցել Բալըքեսիրի, Այդնի, Ադանայի, Տրապիզոնի և ուրիշ քաղաքների բուրժուա-հայրենասիրական կազմակերպությունների համագումարներ։ Այդ կոնգրեսներում քննարկվել էր օկուպանտների դեմ պայքարի կազմակերպման հարցը։ 1919 թվականի սեպտեմբերի 4-ից 12-ը Սվազում տեղի ունեցավ Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանու-

թյան ընկերությունների համաթուրքական կոնգրես, որին մասնակցեցին Անատոլիայի գրեթե բոլոր վիլայեթների, ինչպես նաև Ստամբուլի պատվիրակները։ Չնայած մի քանի պատվիրակների դիմադրությանը, որոնք առաջարկում էին Անտանտի հետ համաձայնության գալ խաղաղ ճանապարհով (Թուրքիայի նկատմամբ ամերիկյան մանդատի հաստատմամբ), մշակվեց ազատագրական շարժման ծրագիր, ինչպես նաև հաստատվեց Անատոլիայի ու Թրակիայի իրավունքների պաշտպանության համաթուրքական ընկերության ստատուտ։ Կոնգրեսում ընտրվեց Ներկայացուցչական կոմիտե (Մուստաֆա Քեմալի նախագահությամբ), որը իր ձեռքը վերցրեց հակաիմպերիալիստական շարժման ղեկավարությունը։

1919 թվականի հոկտեմբերին Ներկայացուցչական կոմիտեի և սուլթանական կառավարության միջև համաձայնություն կայացվեց Ստամբուլում պառլամենտ հրավիրելու մասին։ Դաշնակիցները չխառնվեցին դրան, որովհետև նկատի ունեին դա օգտագործել հօգուտ իրենց շահերի։ Բայց նրանց հույսերը չարդարացան. 116 պատվիրակ (175-ից) կանգնեցին ազգային-ազատագրական շարժման կողմը։ 1920 թվականի հունվարի 28-ին պառլամենտն ընդունեց ազգային երդում[1], որը դարձավ անկախության համար պայքարի ծրագիր։

Այդ ժամանակ դաշնակիցները որոշեցին զենքի ուժով խեղդել ազատագրական շարժումը։ 1920 թվականի մարտի 16-ին Ստամբուլում ափ իջավ անգլիական ծովային հետևակը, որը գրավեց կառավարական կարևորագույն շենքերը, զորանոցները, փոստը, հեռագրատունը, ռազմական պահեստները։ Օկուպանտները ռազմական դրություն մտցրին քաղաքում և նրա շրջակայքում, ցրեցին պառլամենտը և, ձերբակալելով շատ պատգամավորների ու այլ ընկնող քաղաքական և հասարակական գործիչների, աքսորեցին Մալթա կղզին։ Ստամբուլն օկուպացնելու հետ միաժամանակ

[1] Ազգային երդման մեջ հռչակվում էր Թուրքիայի իրավունքը և ամբողջականությունը այն սահմաններում, որ գոյություն ունեին Մուդրոսի զինադադարի ստորագրման պահին։



դաշնակիցները հունական նոր զորքեր տեղափոխեցին Անատոլիա։

Այդ բոլորը ժողովրդական զայրույթի պոռթկում առաջացրեց։ Ամբողջ երկրում միտինգներ ու ցույցեր եղան՝ «Կորչե՛ն օկուպանտները», «Մա՛հ օկուպանտներին» լոզունգներով։ Ներկայացուցչական կոմիտեն հայտարարեց Անկարայում նոր պառլամենտ գումարելու մասին և դիմեց ժողովրդին՝ կոչ անելով միավորվել զավթիչների դեմ պայքարելու համար։

Պառլամենտում (Մեջլիս), որը ստացավ Թուրքիայի ազգային մեծ ժողով անունը, ընտրվեցին և նշանակվեցին 232 պատգամավոր. բացի այդ, 105 պատգամավոր ժամանեց Ստամբուլից։

Թուրքիայի ազգային մեծ ժողովը, որ բացվեց 1920 թվականի ապրիլի 23-ին, հայտարարեց Թուրքիայի անկախություն և ամբողջականություն և իրեն հռչակեց որպես միակ օրինական իշխանություն։ Կազմվեց կառավարություն Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ։

Թուրքիայի ազգային մեծ ժողովի կողմից երկրում բարձրացված հակաիմպերիալիստական կամպանիան օգնեց, որ ժողովուրդը համախմբվի օկուպանտների դեմ մղվող պայքարում, և արագացրեց կանոնավոր բանակի ստեղծումը։ Զորակոչվեց մի քանի հասակ, վերակազմավորվեցին կանոնավոր զորքերի մնացորդները և պարտիզանական ջոկատների մեծ մասը։

Զավթիչների դեմ մղված պայքարը որոշեց քեմալական բուրժուա-ազատագրական շարժման օբյեկտիվ հեղափոխական բովանդակությունը։ Այդ շարժումը հյուծեց համաշխարհային իմպերիալիզմի ուժերը և նպաստեց իմպերիալիստական ճնշումից Արևելքի ժողովուրդների ազատագրական պայքարի ուժեղացմանը։

Թուրքիայի ազգային մեծ ժողովը 1920 թվականի ապրիլի 26-ին սովետական կառավարությանը դիմեց մի նամակով, որում հայտարարում էր, թե Թուրքիան պարտավորվում է Սովետական Ռուսաստանի հետ համատեղ պայքարել իմպե-

րիալիստական կառավարությունների դեմ և հուսով է, որ
Սովետական Ռուսաստանը կաջակցի Թուրքիայի վրա հար-
ձակված իմպերիալիստական թշնամիների դեմ պայքարին։
Այդ հայտարարությունից հետո Սովետական Ռուսաստանը
բարեկամական հարաբերություններ հաստատեց Թուրքիայի
հետ։ ՌՍՖՍՀ-ի կառավարությունը աշխարհում առաջինը ճա-
նաչեց Թուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարությանը։

1920 թվականի հուլիսին Մոսկվա ժամանած Անկարայի
կառավարության պատվիրակությունը արտաքին գործերի մի-
նիստր Բեքիր Սամի բեյի գլխավորությամբ նույն թվականի
օգոստոսին Վ. Ի. Լենինին հանձնեց թուրքական ժողովրդի
ողջույնը և հույս ու վստահություն հայտնեց, որ սովետական
կառավարությունը Թուրքիային կօգնի անկախություն ձեռք
բերելու։

Բանակցությունների ընթացքում մշակվեց սովետա-
թուրքական բարեկամության պայմանագիր։ Սակայն Անտան-
տի տերությունների դրդիչ քաղաքականության հետևանքով,
որով ձգտում էին ամեն գնով խանգարել սովետա-թուրքական
մերձեցմանը, պայմանագիրը մնաց չստորագրված։

Օգտվելով հունական հարձակման հաջողությունից, 1920
թվականի օգոստոսի 10-ին Անտանտի տերությունները սուլ-
թանի վզին փաթաթեցին Սևրի հաշտության պայմանագիրը,
որը ամրապնդեց Թուրքիայի բաժանումն ու ստրկացումը։
Պայմանագրի պայմանների համաձայն նրա տերիտորիան
պակասեց չորս անգամ։ Թուրքիան փաստորեն զրկվեց սուվե-
րեն պետության իրավունքներից։

Թուրքիայի ազգային մեծ ժողովը պաշտոնապես հրա-
ժարվեց ճանաչել Սևրի պայմանագիրը և ժողովրդի ու հայ-
րենիքի շահերը վաճառած սուլթանական կառավարությունը
հայտարարեց տապալված։ Նա ընդունեց մի օրենք, որով ան-
վավեր հայտարարեց այն բոլոր պայմանագրերը, որոնք ստո-
րագրել էր սուլթանական կառավարությունը ուրիշ պետու-
թյունների հետ 1920 թվականի մարտի 16-ից, այսինքն՝
Ստամբուլի պաշտոնական օկուպացումից հետո։ Այդ պայ-



մաններում սուլթանը չհամարձակվեց վավերացնել Սևրի պայմանագիրը։

1920 թվականի սեպտեմբերին Անտանտի երկրներին հաջողվեց պատերազմ առաջացնել դաշնակցական Հայաստանի ու Թուրքիայի միջև, ըստ որում թուրքական բանակը, նրանց պլանների համաձայն, պետք է ընդհարվեր կարմիր բանակի հետ։

Սովետական կառավարության իմաստուն քաղաքականությունը ձախողեց այդ նենգ պլանները։ Սովետական Ռուսաստանի բարեկամական կապերը Թուրքիայի հետ սկսեցին ամրապնդվել։ Երկու երկրների միջև ավելի կայուն հարաբերություններ հաստատվեցին Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելուց հետո։ 1920 թվականի հոկտեմբերին Անկարա ժամանեց ՌՍՖՍՀ դիվանագիտական միսիան, իսկ դեկտեմբերին երկու կողմերը որոշում ընդունեցին Մոսկվայում անցկացնել սովետա-թուրքական կոնֆերանս։ 1921 թվականի փետրվարի 17-ին Մոսկվա ժամանեց թուրքական նոր պատգամավորություն, որի կազմում էր Սովետական Ռուսաստանում Թուրքիայի առաջին դեսպանը։

1921 թվականի մարտի 16-ին ՌՍՖՍՀ-ի և Թուրքիայի միջև ստորագրվեց բարեկամության և եղբայրության պայմանագիր, որը չեղյալ հայտարարեց նախկինում ցարական Ռուսաստանի և սուլթանական Թուրքիայի միջև կնքված անիրավահավասար համաձայնագրերը, և իրավահավասար բարեկամական հարաբերություններ հաստատեց Սովետական Ռուսաստանի ու Թուրքիայի միջև։

Միաժամանակ համաձայնագիր ստորագրվեց Թուրքիային ֆինանսական ձրի օգնություն (10 միլիոն ռուբլի ոսկով), ինչպես նաև զենքով ու ռազմամթերքով օգնություն ցույց տալու մասին։ Այդ համաձայնագրին համապատասխան սովետական կառավարությունը 1921—1922 թվականներին Թուրքիային տրամադրեց հրացաններ, գնդացիրներ, փամփուշտներ, թնդանոթներ, արկեր, ինչպես նաև ռազմական հանդերձանք ու ոսկի՝ ձուլակտորներով։ Վ. Ի. Լենինին Մուստաֆա Քեմալի ուղարկած նամակում արտահայտիչորեն նշվում

էր, որ «ՌՍՖՍՀ-ի հետ եղբայրական դաշինքը, որը Թուրքիայի
համար ամենաուժեղ հենարանն է անկախության համար
մղվող պայքարում, իրենից ներկայացնում է խոշոր գրավա-
կան ազատագրական մեծ նպատակներին հասնելու գործում»։
Մոսկվայի բանակցությունների զուգընթաց տեղի էր
ունենում Լոնդոնի կոնֆերանսը (1921 թվականի փետրվարի
28-ից մինչև մարտի 12-ը), որը գումարվել էր Սևրի պայմա-
նագիրը վերանայելու համար։ Անտանտի տերությունները
որոշ չափով մեղմացնելով նրա պայմանները, հույս ունեին
Թուրքիան ներգրավել հակասովետական կոալիցիայի մեջ և
ձախողել Մոսկվայի բանակցությունները։ Սակայն Լոնդոնի
կոնֆերանսն ավարտվեց լիակատար ձախողմամբ։

Այնուամենայնիվ, քեմալականների հետ Անտանտի տե-
րությունների սիրախաղը լուրջ սպառնալիք առեղծեց երկրի
ազգային-ազատագրական շարժման համար։ Այդ սպառնալի-
քը ավելի ուժեղ էր այն պատճառով, որ քեմալականների դե-
կավար շրջանների միջավայրում քիչ չէին հետադիմական
տարրերը, որոնք վախենում էին ժողովրդական մասսաների
հեղափոխական պայքարի զարգացումից։ Նրանց ճնշման
տակ թուրքական կառավարությունը 1921 թվականի հունվա-
րի սկզբին հարված հասցրեց կոմունիստական շարժմանը,
որը դնալով ավելի մեծ համակրանք էր նվաճել լայն մաս-
սաների մեջ։ 1921 թվականի հունվարի 29-ի գիշերը Տրա-
պիզոնում թուրքական ռեակցիայի գործակալները, իշխանու-
թյունների թողտվությամբ, դավադրաբար սպանեցին Մուստա-
ֆա Սուբխիին և կոմունիստական կուսակցության ու արհ-
միությունների ուրիշ ղեկավարների։ Իշխանությունները ձեր-
բակալեցին շատ կոմունիստների ու արհմիութենական ակ-
տիվիստների և արգելեցին կոմունիստական կուսակցության
գործունեությունը։

1921 թվականի մարտի 28-ին հունական հարյուր հազա-
րանոց բանակը անցավ գլխավոր հարձակման։ Ինյոնյու բնա-
կավայրի մոտ (Էսքիշեհիրից մոտավորապես 40 կիլոմետր
արևմուտք) սկսվեցին կատաղի կռիվներ, որոնք ավարտվեցին
թուրքական զորքերի հաղթանակով։ Սակայն դա դեռ վճռա-



կան հաղթանակ չէր ինտերվենտների նկատմամբ։ Հուլիսի
9-ին հունական օկուպանտներն անցան նոր հարձակման, որը
տևեց 15 օր։ Նրանք գրավեցին Էսքիշեհիրը, Քյոթահյան,
Աֆիոն-Կարահիսարը, որոնք երկու տարի շարունակ ծառա-
յում էին որպես ազատագրական պայքարի բազա։ Թուրքա-
կան զորքերը հակառակորդին մեծ դժվարությամբ կանգ-
նեցրին Անկարայից 50 կիլոմետր հեռավորության վրա։

1921 թվականի օգոստոսին հունական օկուպանտները
փորձեցին գրավել Անկարան։ Բայց այդ ժամանակ թուրքա-
կան կառավարությունը հասցրեց ընդհանուր զորահավաք
կատարել։ Գերագույն գլխավոր հրամանատար նշանակվեց
Մուստաֆա Քեմալը։ Նրան անսահմանափակ լիազորություն-
ներ տրվեցին։

Օգոստոսի 23-ին 100 կիլոմետրանոց ռազմաճակատում
սկսվեց Սաքարիայի ճակատամարտը։ Ժողովրդի հերոսու-
թյան և արիության շնորհիվ սեպտեմբերի 13-ին հակառա-
կորդի զորքերը շպրտվեցին Սաքարիա գետի ձախ ափը։

Թուրքիայի հակաիմպերիալիստական պայքարի հաջող
զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ նրա մեր-
ձեցումը սովետական հանրապետությունների հետ։ 1921
թվականի սեպտեմբերի 13-ին Կարսում Թուրքիայի և Անդրր-
կովկասի սովետական հանրապետությունների միջև կնքվեց
բարեկամության պայմանագիր։ Դա ամրապնդեց բարիդրա-
ցիական հարաբերությունները և Անդրկովկասի հանրապե-
տությունների ու Թուրքիայի միջև հաստատեց տնտեսական
ու կուլտուրական կապեր։ Դա հսկայական նշանակություն
ուներ Թուրքիայի համար, որովհետև նրան թույլ տվեց իր
զորքերը Արևելյան Անատոլիայից տեղափոխել Արևմտյան
ռազմաճակատ։

Երկրի ռազմական դրության ամրապնդմանը նպաստեց
նաև հակասությունների սրումը դաշնակիցների ճամբարում։
Սաքարիայի ճակատամարտից հետո Ֆրանսիայի և Իտալիայի
կառավարությունները հանգեցին այն համոզման, որ ան-
օգուտ է Թուրքիայի դեմ պատերազմը շարունակել։ 1921
թվականի օգոստոսին Անատոլիայից դուրս հանվեցին իտա-

լական զորքերը։ Հոկտեմբերի 20-ին Անկարայում ստորագրվեց ֆրանս-թուրքական պայմանագիր, ըստ որի Ֆրանսիան ճանաչեց Թուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարությունը և պարտավորվեց Կիլիկիայից էվակուացնել իր զորքերը։ Դրա հետ միաժամանակ ֆրանսիական իմպերիալիստները, հենվելով թուրքական ռեակցիայի վրա, փորձ արեցին Թուրքիան ներգրավել հակասովետական կոալիցիայի մեջ։ Սակայն Թուրքիայի ազգային մեծ ժողովի պատգամավորների մեծամասնությունը չդավաճանեց անկախության համար պայքարի և սովետական հանրապետությունների հետ բարեկամության սկզբունքներին։

1922 թվականի հունվարի 2-ին Անկարայում ստորագրվեց ուկրաինա-թուրքական բարեկամության և եղբայրության պայմանագիր, որը գրեթե նույնական էր Մոսկվայում ու Կարսում կնքված պայմանագրերին։ Ֆեոդալա-կղերական և կոմպրադորական շրջաններում եղած սովետա-թուրքական մերձեցման թշնամիները ծանր պարտություն կրեցին։

Հենվելով սովետական Ռուսաստանի բարեկամության և օգնության վրա, Թուրքիան գրեթե մեկ տարի ուժեղ չափով պատրաստվեց օկուպանտներին վճռական հարված հասցնելուն։

1922 թվականի օգոստոսին թուրքական զորքերը հարձակման անցան։ Աֆիոն-Կարահիսարի շրջանում ճեղքելով պաշտպանության գիծը, նրանք Դումլուփինարի մոտ ճակատամարտերում գրեթե ամբողջովին ջախջախեցին թշնամու գլխավոր ուժերը և գերի վերցրին հունական հրամանատարին՝ գեներալ Տրիկուպիսին։ 1922 թվականի սեպտեմբերի 9-ին թուրքական զորքերը գրավեցին Իզմիրը, իսկ սեպտեմբերի 17-ին՝ Բանդիրման, ընկճելով ինտերվենտների զորքերի հյուսիսային խումբը։

Հունական բանակի ջախջախումը վկայում էր Թուրքիայում Անտանտի տերությունների զավթողական քաղաքականության ձախողումը։

1922 թվականի հոկտեմբերի 11-ին թուրքական կառա-



վարությունը Մուդանում ստորագրեց զինադադարի պայմանագիր Անտանտի տերությունների հետ։

1922 թվականի նոյեմբերի 20-ին բացվեց Լոզանի հաշտության կոնֆերանսը։ 1923 թվականի հուլիսի 24-ին հաշտության պայմանագիր ստորագրվեց մի կողմից Թուրքիայի, մյուս կողմից՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Հունաստանի, Ռումինիայի, Հարավսլավիայի ու Ճապոնիայի միջև։

Լոզանի պայմանագիրը, ի տարբերություն Սևրի, ընդունում էր Թուրքիայի տերիտորիալ ամբողջականությունը և պետական անկախությունը։ Դաշնակիցների զորքերը էվակուացվեցին նեղուցների գոտուց և Ստամբուլից։ Ջնջյալ հայտարարվեցին կապիտուլյացիաները, օտարերկրացիների տնտեսական ու քաղաքական արտոնությունները։ Դրա հետ միասին պայմանագիրը չլուծեց թուրքական պետության համար կենսական նշանակություն ունեցող մի քանի կարևոր տնտեսական ու քաղաքական հարցեր։ Այսպես, նեղուցների մասին կոնվենցիան ոչ միայն խախտում էր Թուրքիայի սուվերենությունը, այլև սպառնալիք էր ստեղծում սևծովյան պետությունների, առաջին հերթին՝ Սովետական Միության անվտանգության համար։ Թուրքիան չկարողացավ վերացնել օտարերկրյա կապիտալից տնտեսական կախվածությունը և ամենից առաջ օսմանյան ռեժիմի ծանր ժառանգությունը՝ պետական պարտքը։ Նա իրավունք չուներ հինգ տարվա ընթացքում վերանայել մաքսերը։ Լոզանի կոնֆերանսը չորոշեց Իրաքի հետ սահմանները, որովհետև Մոսուլի հարցում տարաձայնություններ գոյություն ունեին Անգլիայի և Թուրքիայի միջև։

Հաշտության կոնֆերանսում իմպերիալիստների օգտին Թուրքիայի արած զիջումները թելադրված էին քեմալական հեղափոխության բուրժուական բնույթով։ Վախենալով ազատագրական շարժման հետագա զարգացումից, զանգվածային ուժերի պայքարի սրումից և սահմանազատումից, քեմալականները շարժման խնդիրները սահմանափակեցին՝ երկիրը օտարերկրյա տիրապետությունից ազատա-

գրելու, փտող կիսաֆեոդալական սուլթանական ռեժիմը վերացնելու և բուրժուական մի շարք ռեֆորմներ անցկացնելու համար պայքարի շրջանակներում։

Այսպիսով, Թուրքիայում 1918—1923 թվականներին տեղի ունեցած ազգային-ազատագրական շարժումը ավարտվեց պետական անկախության նվաճումով։ Թեոկրատական միապետության փլատակների վրա ստեղծվեց թուրքական սուվերեն ազգային պետություն, որ սահմանել էր ազգային երդումը 1920 թվականին։

Ազգային-ազատագրական պատերազմի ավարտվելուց հետո հակաիմպերիալիստական ճակատը քայքայվեց։ Տարբեր դասակարգերի ու խմբերի ներկայացուցիչների միջև պայքար սկսվեց Թուրքիայի զարգացման ուղիների հարցի շուրջը։

Աչքի ընկնող պետական ու քաղաքական գործիչները, որոնք արտահայտում էին ազգային բուրժուազիայի ու լիբերալ կալվածատերերի շահերը, Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ որոշեցին կազմակերպել քաղաքական կուսակցություն, որը պետք է քաղաքական ուժերը միավորեր՝ երկրում վերափոխումներ իրագործելու համար։

1923 թվականի ապրիլի 8-ին Մուստաֆա Քեմալը դեկլարացիա հրապարակեց՝ անկախության համար մղված պատերազմում մեծ դեր խաղացած «Իրավունքների պաշտպանության ընկերության» առաջին խմբի հիման վրա ժողովրդական կուսակցություն[1] կազմակերպելու մասին։ Ժողովրդական կուսակցությունը հռչակեց ինը սկզբունք, որոնք ուղղված էին ազգային պետության պաշտպանության և ամրապնդման, տնտեսական ինքնուրույնության նվաճման, ինչպես նաև սուլթանի իշխանության վերականգնման վտանգի դեմ պայքարի նպատակին։ Այդ սկզբունքները միաժամանակ ժողովրդական կուսակցության ծրագիրը հանդի-

[1] Այդ կուսակցության հիմնադիր համագումարը կայացավ 1923 թվականի սեպտեմբերի 9-ին։ Նրա նախագահ ընտրվեց Մուստաֆա Քեմալը։ Թուրքիան հանրապետություն հռչակվելուց հետո այդ կուսակցությունն սկսեց կոչվել Ժողովրդա-հանրապետական կուսակցություն (ԺՀԿ)։



ստացան Թուրքիայի ազգային մեծ ժողովի երկրորդ գումարման ընտրություններում, որոնք անցկացվեցին 1923 թվականի ամռանը։ Ժողովրդական կուսակցությունը լիակատար հաղթանակ տարավ օպոզիցիայի նկատմամբ, որը հանդես էր գալիս երկրում բուրժուական վերափոխումներ կատարելու դեմ։

Թուրքիայի ազգային մեծ ժողովի երկրորդ գումարման առաջին ակտերը, որոնք քաղաքական մեծ նշանակություն ունեին, Լոզանի պայմանագրի վավերացումն էր (1923 թվականի օգոստոսի 23-ին), Թուրքիան հանրապետություն հռչակելը (1923 թվականի հոկտեմբերի 29-ին), ռեակցիայի վտանգավոր օջախ դարձած խալիֆաթի վերացումը (1924 թվականի մարտի 3-ին)[1] և սահմանադրության ընդունումը (1924 թվականի ապրիլի 20-ին), որը ամրապնդեց կապիտալիզմի հիմնական սկզբունքը՝ արտադրության գործիքների ու միջոցների մասնավոր սեփականությունը։ Երկրում անցկացվեցին ռեֆորմներ, որոնք մեծ դեր խաղացին միջնադարյան հետամնացությունը վերացնելու գործում[2]։

Այդ ժամանակաշրջանում օտարերկրյա կապիտալիստ-

[1] Խալիֆաթը լիկվիդացնելու հետ միաժամանակ վերացվեց շարիաթի ու վակուֆների մինիստրությունը, ինչպես նաև որոշում ընդունվեց երկրի սահմաններից արտաքսել օսմանյան դինաստիայի անդամներին։ Դեռ հանրապետության հռչակելուց առաջ հրապարակվեց օրենք՝ մայրաքաղաքը Ստամբուլից Անկարա տեղափոխելու մասին։

[2] Մասնավորապես միասնական դարձվեց դպրոցական կրթությունը և փակվեցին կրոնական դպրոցները (1924 թ.), օրենք հրապարակվեց դերվիշական թեքքեները, զավիեները (վանքերը, կուսանոցները) փակելու և դերվիշական միաբանությունները արգելելու (1925 թ.), ինչպես նաև կրոնական (շարիաթական) դատարանները վերացնելու մասին (1926)։ Բացի այդ, ընդունվեցին օրենքներ, որոնցով արգելվեց թասակներ և հին ձևի այլ գլխարկներ ու հագուստ կրել (1925), կանանց արգելվեց չադրա ծածկել (1926), արաբական այբուբենը փոխարինվեց լատինականով (1928)։ Թուրք կանանց տրվեց ընտրական իրավունք և իրավունք՝ տղամարդկանց հետ հավասար մասնակցելու երկրի հասարակական, կուլտուրական և քաղաքական կյանքին (1930—1934)։ Օրենքներ ընդունվեցին քաղաքացիական, քրեական և առևտրական նոր օրենսգրքեր մտցնելու, ամուսնության, ազգանուններ մտցնելու մասին (1934) և այլն։

ների էին պատկանում բանկերը, արդյունաբերական և կոմունալ ձեռնարկությունները, երկաթուղիները, ծխախոտի մենաշնորհը, նավահանգստային կառույցները և երկրի բնական հարստությունները շահագործելու իրավունքի զանազան կոնցեսիաները։ Բացի այդ, հաշտության պայմանագրի համաձայն, Թուրքական կառավարությունը պարտավորվել էր արտասահմանյան վարկատուներին վճարել սուլթանի պարտքը, որը կազմում էր ավելի քան 86 միլիոն լիրա։ Այդ ծանր պարտավորությունը Թուրքիային կախման մեջ էր պահում իմպերիալիստական պետություններից։

Այդպիսի դժվարին պայմաններում սկսվեց երկրի տնտեսության վերականգնումն ու զարգացումը։ 1927 թվականին օրենք հրապարակվեց արդյունաբերությունը խրախուսելու մասին, որը թուրքական ձեռնարկատերերին տրամադրում էր մաքսային արտոնություններ, գործարաններ կառուցելու համար ձրի հողամաս ստանալու, ինչպես նաև հարկ վճարելուց ժամանակավորապես ազատվելու իրավունք։ Ձեռնարկատերերին վարկավորելու համար ստեղծվեցին լեռնարդյունաբերական և գործնական բանկեր։

Հինգ-վեց տարվա ընթացքում հիմնադրվեցին 69 արդյունաբերական ընկերություններ (22 միլիոն լիրայի կապիտալ), և գործարկվեցին 626 նոր և հին մանր ձեռնարկություններ[1], որոնք աշխատում էին ներքին շուկայի պահանջները բավարարելու համար։ Սկսեցին աշխատել պետական գործարաններն ու հանքահորերը։ Կառուցվեցին շաքարի գործարաններ և նոր երկաթուղիներ մոտ 400 կիլոմետր երկարությամբ։ Որոշ չափով ընդարձակվեցին ցանքատարածությունները, մեծացավ հացահատիկային և տեխնիկական կուլտուրաների բերքը, ավելացավ անասունների գլխաքանակը։ Աճեց արտահանումը։

Բայց, ամբողջությամբ վերցրած, կառավարության միջոցառումները 1923—1929 թվականներին չհանգեցին էկոնո-

[1] Այդ թվում 223 ալրաղաց, 58 օճառի և 116 փայտամշակման գործարան, 61 տեքստիլ ձեռնարկություն։



միկայի նշանակալի զարգացման և երկրում օտարերկրյա կապիտալի դիրքերի էական թուլացման։

Դա բացատրվում է նրանով, որ կապիտալիստները որևէ չարեցին սոցիալ-տնտեսական խոր վերափոխություններ կատարել և վախեցան ձեռք տալ իմպերիալիստական մոնոպոլիաների սեփականությանը։ Պաշտպանելով խոշոր հողատերերի շահերը, կապիտալիստները արմատական ագրարային ռեֆորմներ չկատարեցին։ Թուրքական կառավարությունը սահմանափակվեց ինտերվենտներին ակտիվորեն աջակցող ոչ թուրք ազգի կոմպրադորների որոշ մասի սեփականությունը, ինչպես և սուլթանի և ազգային-ազատագրական շարժման դեմ պայքարող մի շարք բարձրաստիճան անձանց, ֆեոդալների, շեյխերի սեփականությունը բռնագրավելով, ինչպես նաև վակուֆների հողերն ու ունեցվածքը պետությանը հանձնելով։

Ռեֆորմները չպաշտպանեցին ժողովրդական մասսաների դեմոկրատական ազատությունները և իրավունքները։ Այդ պատճառով երկրի վերածնման ծրագրի կիրառման ժամանակ քեմալականները, ինչպես որ անկախության համար մղած պատերազմի տարիներին, չկարողացան հենվել գյուղացիության, արհեստագործների, բանվորների վրա, որոնք պահանջում էին խորացնել հեղափոխությունը և կատարել դեմոկրատական վերափոխություններ։

Այն ժամանակ, երբ ազգային էկոնոմիկայի զարգացումը պահանջում էր մեծ կապիտալ ներդրումներ, խոշոր առևտրական բուրժուազիայի մի զգալի մասը չէր ուզում իր կապիտալը ներդնել արդյունաբերության մեջ, այլ շարունակում էր գործել առևտրի ու բանկային գործառնությունների ոլորտում, որտեղից բարձր շահույթներ էր ստանում։ Իսկ գործարար սկզբունքներով օտարերկրյա կապիտալը ներգրավելու փորձերը հաջողություն չունեցան, որովհետև իմպերիալիստական մոնոպոլիաները, որոնք շահագրգռված չէին թուրքական արդյունաբերության ստեղծմամբ, ձգտում էին Թուրքիան պահպանել իբրև ագրարային-հումքային կցորդ և իրենց ապրանքների վաճառահանման շուկա։

Օտարերկրյա կապիտալի ուժեղ դիրքերի պահպանման և գյուղատնտեսության մեջ կիսաֆեոդալական հարաբերությունների գերակշռության հետևանքով Թուրքիայի ազգային էկոնոմիկան շատ դանդաղ էր առաջ գնում և չհանգեցրեց երկիրը տնտեսական կախվածությունից ազատագրվելուն։ Թուրքիան ոչ միայն չվերացրեց դարավոր կիսագաղութային հետամնացությունը, այլև չկարողացավ հետևողականորեն պաշտպանել ազգային սուվերենությունը։

Բուրժուական վերափոխությունների ծրագիրը, չնայած նրա սահմանափակության ու մակերեսային բնույթին, առաջացրեց ֆեոդալա-կղերական և կոմպրադորական շրջանների դիմադրությունը։ Կողմնորոշվելով դեպի իմպերիալիստական տերությունները, այդ շրջանները կոնֆլիկտներ էին հրահրում՝ նպատակ ունենալով վատացնել Թուրքիայի բարեկամական հարաբերությունները Սովետական Ռուսաստանի հետ, դավադրություններ, անկարգություններ էին սարքում, որպեսզի ձախողեն ռեֆորմների անցկացումը կամ ի չիք դարձնեն դրանց արդյունքները։ Թուրքական ռեակցիայի հակաազգային քաղաքականությանն ամեն կերպ աջակցություն էր տալիս և խրախուսվում իմպերիալիստների կողմից, որոնք հույս ունեին վերականգնել կորցրած արտոնությունները։

1924 թվականի հոկտեմբերին օպոզիցիոն խմբերն առանձնացրին իրենց քաղաքական կազմակերպությունը՝ պրոգրեսիվ-հանրապետական կուսակցությունը։ Նրա մեջ մտան հանրապետության բոլոր հակառակորդները՝ թունդ ռեակցիոներներից սկսած մինչև ծայրահեղ նացիոնալիստները, որոնք ղեկավար պոստերից հանվել էին երիտթուրքերի ռեժիմի կործանումից հետո։ Նոր կուսակցության կազմակերպիչները բարձրաստիճան սպաներ էին՝ Քյազիմ Կարաբեքիր փաշան, Ռեֆեթ փաշան, Ալի Ֆուադ փաշան, ինչպես նաև ռեակցիոն տրամադրությամբ համակված քաղաքական գործիչներ Ռաուֆ բեյը, Բեքիր Սամի բեյը, Ադնան բեյը։

Իշխանության հասնելու համար մղված պայքարում պրոգրեսիվ-հանրապետական կուսակցությունը լայնորեն օգտագործում էր կրոնը։ Նա ձգտում էր բնակչության մեջ արթնացնել կրոնական ֆանատիզմը և այն ուղղել հանրապետության դեմ։ Այդ կուսակցության ծրագիրը հռչակում էր խալիֆաթի, կրոնական դպրոցների, դերվիշական վանքերի և սրբերի պաշտամունքի միաբանության վերականգնման գաղափարը՝ Պրոգրեսիվ հանրապետական կուսակցությունն արտահայտվում էր նաև արևմտյան պետությունների հետ վաղեմի «բարեկամության» վերածնման օգտին և պահանջում օտարերկրյա կապիտալը լայնորեն ներքաշել դեպի երկիր։ Շուտով այդ կուսակցությունը դարձավ հանրապետական կառավարության տապալմանը նախապատրաստվող բոլոր ռեակցիոն ուժերի ապաստարան ու հենարան։ Սակայն շատ թերթեր և հանդեսներ կամպանիա սկսեցին հանրապետության դեմ, խալիֆաթի, կրոնական դպրոցների, շարիաթական դատարանների վերականգնման համար։ Կուսակցության մի քանի անդամներ կապված էին այն քուրդ շեյխերի հետ, որոնք անգլիական իմպերիալիստների դրդմամբ ապստամբություն էին բարձրացրել 1925 թվականի փետրվարին[1]։



Քրդական ապստամբությունը ճնշելուց հետո թուրքական կառավարությունը կարգի պահպանման օրենքի հիման վրա 1925 թվականի հունիսին արգելեց պրոգրեսիվ-հանրապետական կուսակցության և մյուս այն ընկերությունների գործունեությունը, որոնք առաջացել էին իսլամի պաշտպանության դրոշի ներքո։ Կուսակցության անդամների մի մասը ձերբակալվեց և դատապարտվեց։ Իշխանությունները փակեցին նաև օպոզիցիոն թերթերն ու հանդեսները, այդ թվում «Թանին» թերթը, որի խմբագիր Հուսեյն Ջահիդը (Յալչին) ցմահ աքսորվեց Չորում։

Հակահանրապետական օպոզիցիայի դեմ մղած պայքարում քեմալականները (այդ թվում և Մուստաֆա Քեմալը) հետևողական չէին։ Խստորեն քննադատելով նրա գործունեությունը, քեմալականները միաժամանակ հույս ունեին համո-

[1] Քրդերը, որոնք Թուրքիայի բնակչության 9 տոկոսն էին կազմում, ազգային ոչ մի իրավունք չունեին։ Օգտվելով աշխատավորների իրավազրկությունից, շեյխերը ապստամբություն բարձրացրին, որպեսզի վերադարձնեն այն արտոնությունները, որ իրենցից խլել էր հանրապետությունը։

*գելու մեթոդներով օպոզիցիոներներին հարկադրել հրաժարվելու հանրապետության և բուրժուական վերափոխությունների դեմ պայքարից։ Դրանում արտահայտվում էր քեմալիզմի սոցիալական բազայի նեղությունը։*

*Օպոզիցիայի լիկվիդացումից հետո ֆեոդալա-կոմպրադորական շրջանները սկսեցին աստիճանաբար մերձենալ ժողովրդա-հանրապետական կուսակցության հետ։ Այդ մերձեցմանը նպաստում էր ինչպես թուրքական պետականության ամրապնդվելը, այնպես էլ արևմտաեվրոպական երկրների հետ նորմալ հարաբերությունների հաստատումը։*

*Ամբողջ կապիտալիստական աշխարհը ցնցած 1929—1933 թվականների տնտեսական ճգնաժամը և այնուհետև վրա հասած երկարատև դեպրեսիան կործանիչ ներգործություն ունեցան Թուրքիայի էկոնոմիկայի վրա։ Ճգնաժամից խիստ տուժեց գյուղատնտեսությունը։ Ագրարային Թուրքիան համաշխարհային շուկա էր հանում գլխավորապես գյուղատնտեսական մթերքներ, մանավանդ տեխնիկական և այգեգործության կուլտուրաներ։ Ճգնաժամի կապակցությամբ խիստ ընկան ծխախոտի, բամբակի, օպիումի կակաչի, թզի, չամիչի գները, ընկավ նաև լիրայի արժեքը։ Խիստ կրճատվեց արտաքին առևտրի ծավալը, նվազեցին հարկային մուտքերը։*

*Վալյուտային կրախից խուսափելու համար կառավարությունը խիստ կրճատեց օտարերկրյա ապրանքների ներմուծումը։ Դա նպաստեց երկրում լայն սպառման ապրանքների արտադրությանը։*

*Օտարերկրյա պետություններից Թուրքիայի էկոնոմիկայի կախվածությունը նվազեցնելու համար քեմալականները վերցրին հայրենական արդյունաբերության զարգացման կուրս։ Պետության միջոցներով և վերահսկողությամբ արդյունաբերական և կոմունալ ձեռնարկությունների, երկաթուղիների, օդային և ծովային տրանսպորտի շինարարության և շահագործման քաղաքականությունը ստացավ էտատիզմ, այսինքն՝ պետական կապիտալիզմ անունը։ Էտատիզմը (մասնավոր ձեռնարկատիրության հետ միաժամանակ) դարձավ*



*Թուրքիայի տնտեսական քաղաքականության կարևորագույն սկզբունքներից մեկը։ 1931 թվականին, ժողովրդա-հանրապետական կուսակցության III համագումարում, քեմալիզմի հիմնական սկզբունքները (էտատիզմ, հանրապետականություն, հեղափոխություն, ազգայնություն, լաիցիզմ և ժողովրդայնություն), այսպես կոչված վեց նետերը, մտցվեցին կուսակցության ծրագրի մեջ, իսկ 1937 թվականին՝ սահմանադրության մեջ և դարձան Թուրքական Հանրապետության խորհրդանշանը[1]։*

*Էտատիզմը առաջադիմական նշանակություն ուներ, որովհետև դա նպաստում էր երկրի տնտեսական զարգացմանը և օտարերկրյա կապիտալը դուրս մղելուն։ Պետությունը կառուցում էր առավելապես խոշոր ձեռնարկություններ, որոնց գործարկելը մասնավոր կապիտալի ուժից վեր էր։*

*10—15 տարվա ընթացքում կառուցվեցին տեքստիլ, կաշվի-կոշկեղենի, սննդի, քիմիական, արդյունահանման և ռազմական խոշոր (թուրքական մասշտաբով) ձեռնարկություններ։ Զգալիորեն զարգացավ նաև երկաթուղային շինարարությունը (մինչև 1939 թվականը գցվեց ավելի քան 3 հազար կմ երկաթուղի), ծովային ու օդային տրանսպորտը։ Պետությունը հետ գնեց օտարերկրյա կապիտալիստներին պատկանող երկաթուղիները, արդյունաբերական ու կոմունալ ձեռնարկությունները և չեղյալ համարեց կոնցեսիոն հին պայմանագրերը, որոնց գործողության ժամկետները լրանում էին։ Հիմնվեցին բանկեր, այդ թվում կենտրոնական հանրապետական բանկ՝ էմիսիայի (արժեթղթերի թողարկման) իրավունքով, Սումերբանկ, Էթիբանկ՝ պետական ձեռնարկությունները*

[1] Հանրապետականություն նշանակում էր հավատարմություն կառավարման հանրապետական ձևին, հեղափոխականություն նշանակում էր հավատարմություն անկախության համար պայքարի սկզբունքներին, ազգայնականություն՝ հավատարմություն թուրք ազգի մեծացման համար պայքարին, լաիցիզմ՝ կրոնը պետությունից անջատ լինելու սկզբունքի պաշտպանությունը, ժողովրդայնություն՝ դասակարգերի և դասակարգային պայքարի չճանաչում, «դեմոկրատիզմի» բազայի վրա «ժողովրդական սուվերենիտետի» իրագործում։

վարկավորելու, ինչպես և ուրիշ բանկային ու վարկատու հիմնարկներ՝ մասնավոր արդյունաբերությունը, առևտուրն ու արհեստները ֆինանսավորելու համար։

Ազգային արդյունաբերության (գերազանցապես վերամշակող) ստեղծումը նպաստեց երկրի էկոնոմիկայի ամրապնդմանը։ Թուրքիան հրաժարվեց օտարերկրյա շատ ապրանքների ներմուծումից։ Սակայն նա շարունակում էր արտասահմանից ներմուծել մեքենայական սարքավորում, պահեստամասեր և շատ ուրիշ նյութեր։

Չնայած արդյունաբերական զարգացման որոշ հաջողություններին, Թուրքիան մնում էր ագրարային երկիր՝ ֆեոդալիզմի ուժեղ մնացուկներով։ Վարելահողերի մեծ մասը պատկանում էր խոշոր կալվածատերերին, կուլակներին ու պետությանը։ Գյուղատնտեսությունը բարձրացնելու համար կառավարությունը ձեռք առավ մի շարք միջոցներ։ Նա կազմակերպեց գյուղատնտեսական կոոպերատիվներ, վարկային ընկերություններ, ընդլայնեց մեքենաների, այդ թվում տրակտորների, ներմուծումը, պայքար կազմակերպեց գյուղատնտեսական վնասատուների դեմ, ինչպես նաև ստեղծեց գյուղատնտեսական ուսումնական և գիտա-հետազոտական ինստիտուտներ և կազմակերպեց ցուցադրական տնտեսություններ։ Հողազուրկ և սակավահող գյուղացիներին պետական ֆոնդից բաժանվեց մի քանի հազար հեկտար հող, հրապարակվեց օրենք՝ կալվածատիրական հողերը ետ գնելու և գյուղացիներին վաճառելու մասին։

Պայմանագրի ժամկետը լրանալուց հետո կառավարությունը չեղյալ հայտարարեց ֆրանսիական իմպերիալիստներին պատկանող «Ռեժի» ծխախոտի կոնցեսիան և ծխախոտի թղթի մենաշնորհը։ Ծխախոտի պետական մենաշնորհի հաստատումը նպաստավոր կերպով անդրադարձավ թուրքական ծխախոտագործության զարգացման վրա։

Արևմտյան և Հարավային Անատոլիայում լայն զարգացում ստացավ կապիտալիստական հողագործությունը։ Կառավարությունն ամեն կերպ խրախուսում էր կալվածատիրական տնտեսությունները կապիտալիստական մեքենայացված



խոշոր տնտեսությունների վերածելը։ Գյուղատնտեսական մեքենաներ և վարձու աշխատանք գործադրող կալվածատիրական և կուլակային տնտեսությունների քանակի ավելացումը հանգեցրեց ցանքատարածությունների աճման և հացահատիկային ու տեխնիկական կուլտուրաների համախառն բերքի ավելացման։

Սակայն այդ բոլոր միջոցառումները, ագրարային հարցը լուծված չլինելու պատճառով, միանգամայն անբավարար գտնվեցին գյուղատնտեսությունը բարձրացնելու և կալվածատերերի ու կուլակների ճնշման տակ գտնվող գյուղացիների վիճակը բարելավելու համար։

Թուրք գյուղացիները դեռ քեմալական հեղափոխության ժամանակաշրջանում պահանջում էին վերջ տալ միջնադարյան հողային հարաբերություններին և հողը հանձնել նրանց, ովքեր մշակում են այն։ 1923 թվականի ամռանը Արևմտյան Անատոլիայում գյուղացիների ապստամբություն բռնկվեց այն հողերի համար, որ նրանց խոստացել էին անկախության համար պատերազմի ծանր տարիներին։ Կառավարությունը պաշարողական դրություն հայտարարեց Այդնի, Օդեմիշի, Դենիզլիի, Բուրդուրի, Աֆիոն-Կարահիսարի շրջաններում և կանոնավոր զորքերի պատժիչ ջոկատների օգնությամբ դաժանորեն ճնշեց ագրարային շարժումը։ 1923 թվականի հոկտեմբերի 18-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովը հրապարակեց օրենք «բանդիտիզմը» ճնշելու մասին, իշխանություններին անսահմանափակ իրավունքներ տալով գյուղացիների ելույթների դեմ պայքարելու համար։ Այդ օրենքի հիման վրա հարյուրավոր գյուղացիներ բանտ նետվեցին։

Այդ և հետագա գյուղացիական ելույթները վկայում էին կառավարության ագրարային քաղաքականությունից դժգոհության աճման մասին։ Այդ նույն բանի մասին էին ասում նաև քրդական ապստամբությունը և գյուղացիների բազմաթիվ ընդհարումները ոստիկանության և հարկահավաքների հետ, ինչպես նաև համայնքների հողերը կալվածատերերի կողմից յուրացվելու պատճառով նրանց դեմ մասսայաբար դատական գործ բացելը։

1925 թվականի փետրվարին Թուրքիայի ազգային մեծ ժողովը օրենք ընդունեց բնահարկը (աշարը) վերացնելու մասին, մի հարկ, որը գանձվում էր գյուղատնտեսական մթերքների համախառն բերքի 12,5 տոկոսի չափով։ Աշարան հավաքում էին կապալառուները, որոնք գյուղացիներից փաստորեն բռնագրավում էին բերքի 20—40 տոկոսը։ Աշարայի լիկվիդացումը պրոգրեսիվ միջոցառում էր, որը նպաստեց գյուղատնտեսության ապրանքային արտադրության աճմանը։

Գյուղացիական շարժման հետ միաժամանակ սկսվեց բանվոր դասակարգի գործադուլային պայքարը։

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին (1929—1933) աշխատավորների վիճակի խիստ վատացման հետևանքով ուժեղացավ գործադուլային շարժումը։ Առավել բնորոշ էին Անկարայի տպարանների աշխատողների, Ստամբուլի և Սամսունի ծխախոտագործների, Իզմիրի բեռնակիրների, նավանորոգման և շոգենավային ընկերությունների բանվորների գործադուլները։ Իշխանությունները զենք գործադրեցին Իզմիրի հինգ հազար բեռնակիրների դեմ։ Միայն 1931 թվականի ընթացքում նրանք երեք խոշոր դատական պրոցես կազմակերպեցին արհմիութենական և կոմունիստական գործիչների դեմ։ Արհմիությունները արգելվեցին, իսկ նրանց տպագիր օրգանները փակվեցին։ Կառավարությունը թույլատրեց ստեղծել այսպես կոչված բանվորական միություններ, որոնց ղեկավարներ նշանակում էր էկոնոմիկայի մինիստրությունը։

Բայց աշխատավորների պայքարը իրենց կենսապայմանների բարելավման համար աճում էր տարեցտարի։ 1936 թվականի հունիսին, վերջապես, ընդունվեց օրենք աշխատանքի մասին. դա նախատեսում էր ութժամյա աշխատանքային օր, որոշ արտոնություններ կանանց և երեխաներին, աշխատանքային պայմանագրերի կնքում և բանվորների հավաքագրման պետական բյուրոյի ստեղծում, ինչպես նաև նորմավորեց բանվորների արտաժամյա աշխատանքի ժամերն ու վարձատրությունը և այլն։ Դրա հետ միասին օրենքը բովանդակում էր այնպիսի հոդվածներ, որոնք ուղղված էին բանվորների



շահերի դեմ։ Այն արգելեց գործադուլներն ու լոկաուտները, ստեղծեց արբիտրաժային հանձնաժողովներ կոնֆլիկտները լուծելու համար, որը որպես կանոն, որոշումներ էր ընդունում ձեռնարկատիրոջ օգտին։ Օրենքը չէր տարածվում գյուղատնտեսական բանվորների, ինչպես նաև այն ձեռնարկությունների վրա, որոնք ունեին տասից պակաս բանվոր։ Չնայած այդ բոլորին, աշխատանքի մասին օրենքի ընդունումը բանվորների կարևոր հաղթանակը հանդիսացավ։ Այդ ժամանակից ի վեր թուրքական պրոլետարիատն ավելի եռանդով սկսեց պայքարել իր տնտեսական և քաղաքական իրավունքների ու շահերի համար։

1923—1939 թվականներին ամրապնդվեց Թուրքիայի արտաքին քաղաքական դրությունը, որին մեծ չափով նպաստեց Սովետական Միության բարեկամական քաղաքականությունը։ Իրագործելով խաղաղության ու բարեկամության լենինյան քաղաքականությունը, սովետական կառավարությունը 1925 թվականի դեկտեմբերի 17-ին Թուրքիայի հետ կնքեց բարեկամության ու չեզոքության պայմանագիր։ Այդ պայմանագիրն ստորագրվեց այն ժամանակ, երբ Անգլիան բացահայտորեն սպառնում էր Թուրքիային Մոսուլի համար պատերազմով, իսկ ֆաշիստական Իտալիան պատրաստվում էր նոր ինտերվենցիայի։

1927 թվականի մարտին Սովետական Միության և Թուրքիայի միջև կնքվեց պայմանագիր առևտրի ու ծովագնացության մասին, որը նպաստեց երկու երկրների միջև ապրանքաշրջանառության ընդլայնմանը։ 1929 թվականին Անկարայում ստորագրվեց արձանագրություն՝ 1925 թվականին կնքված բարեկամության և չեզոքության պայմանագիրը երկարաձգելու մասին։ Հետագայում սովետա-թուրքական պայմանագիրը երկարաձգվեց 1931 և 1935 թվականներին։

1930 թվականին Թուրքիայի արտաքին գործերի մինիստրը այցելեց Սովետական Միություն, իսկ 1931 թվականին՝ ՍՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարը՝ Թուրքիա։

Թուրքիայի ազգային էկոնոմիկայի զարգացման համար

մեծ նշանակություն ունեցավ Սովետական Միության անշահախնդիր օգնությունը։ 1932 թվականին, երբ Մոսկվա ժամանեց թուրքական կառավարական պատվիրակությունը պրեմիեր-մինիստր Իսմեթ փաշայի գլխավորությամբ, սովետական կառավարությունը Թուրքիային տրամադրեց երկարաժամկետ անտոկոս վարկ՝ 8 միլիոն դոլլար գումարով սովետական արտադրության նորագույն սարքավորում ձեռք բերելու համար։ Այդ վարկի հաշվին թուրքական կառավարությունը սովետական մասնագետների օգնությամբ կառուցեց երկու խոշոր տեքստիլ կոմբինատ՝ Կայսերիում և Նազիլլիում։ Սովետական կառավարությունը Թուրքիային օգնեց նաև որակյալ տեքստիլագործ բանվորներ պատրաստելու գործում, կազմակերպելով թուրք բանվորների ուսուցում՝ Մոսկվայում և Կայսերիում ստեղծված հատուկ դասընթացներում։ Վարկի հաշվին Սովետական Միությունը Թուրքիային տրամադրեց բեռնատար մեքենաներ, ավտոբուսներ, ավտոցիստեռններ, ինչպես նաև սարքավորում։

Սովետա-թուրքական բարեկամության ամրապնդմանը նպաստեց 1933 թվականին սովետական կառավարական պատվիրակության մեկնումը Թուրքիա։

Քաղաքական, տնտեսական և առևտրական հարաբերությունների ամրապնդման հետ միասին երկու երկրների միջև ընդլայնվեցին նաև կուլտուրական և գիտական կապերը։ Ակադեմիկոսներ Վ. Վ. Բարտոլդը, Ն. Յա. Մառը, Ն. Ն. Բուրդենկոն, Ի. Ի. Մեշչանինովը մասնակցեցին Թուրքիայում կայացած գիտական կոնգրեսներին, դասախոսություններ կարդացին ուսանողների համար։ Թուրքիա այցելեցին սովետական գրողներ, արտիստներ, ժուռնալիստներ, նկարիչներ, բժիշկներ և սպորտսմեններ։ Իր հերթին Սովետական Միություն ժամանեցին թուրք նշանավոր գրողներ, երաժիշտներ, ժուռնալիստներ, բժիշկներ, մանկավարժներ, սպորտսմեններ, ինչպես նաև գիտնականներ, որոնք մասնակցեցին ՍՍՀՄ-ում գումարված գիտական կոնգրեսներին։ Հետևաբար, ՍՍՀՄ-ի և Թուրքիայի սոցիալական սիստեմների տարբերու-



թյունը խոշընդոտ չհանդիսացավ բարեկամական և կուլտուր-տնտեսական կապերի հաջող զարգացմանը։

1926—1928 թվականներին նկատվեց Թուրքիայի մերձեցում արևմտաեվրոպական պետությունների հետ։ 1926 թվականին Մոսուլի կոնֆլիկտը լիկվիդացնելուց հետո Թուրքիայի և Անգլիայի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին, և սկսեցին ընդլայնվել առևտրական ու տնտեսական կապերը։ 1926 թվականին բարելավում սկսվեց նաև ֆրանկո-թուրքական հարաբերություններում։ 1927 թվականին վերականգնվեցին դիվանագիտական հարաբերությունները ԱՄՆ-ի և Թուրքիայի միջև։ 1928 թվականին կնքվեց իտալո-թուրքական պայմանագիր չեզոքության, հաշտարար պրոցեդուրայի և վճռելի հարցերը միջնորդ դատարանի միջոցով լուծելու մասին։ Իտալիայի և Անգլիայի հետ հարաբերությունների նորմալացումը նպաստեց Թուրքիայի և Հունաստանի միջև եղած թշնամության վերացմանը։ Ընդլայնվեցին Թուրքիայի կապերը Բալկանյան թերակղզու պետությունների հետ, ամրապնդվեցին նրա բարեկամական հարաբերությունները Աֆղանստանի և Իրանի հետ։

1932 թվականին Թուրքիան մտավ Ազգերի լիգայի մեջ, մի բան, որը արագացրեց նրան անգլո-ֆրանսիական արտաքին քաղաքականության ուղեծրի մեջ ներգրավելուն։ 1934 թվականին Թուրքիան դարձավ Բալկանյան անտանտի անդամ, որի մեջ մտնում էին նաև Հունաստանը, Հարավսլավիան և Ռումինիան։ Շուտով Բալկանյան անտանտը դարձավ անգլո-ֆրանս-գերմանական մրցակցության օբյեկտներից մեկը։ 1935 թվականին Թուրքիան միացավ անգլո-հունա-հարավսլավական «ջենտլմենական» համաձայնագրին, որն ուղղված էր Միջերկրական ծովի ավազանում ֆաշիստական Իտալիայի ուժեղացման դեմ։ Դա նրան է՛լ ավելի մոտեցրեց Անգլիային։

Հաշվի առնելով համաշխարհային պատերազմի ծագման վտանգը, թուրքական կառավարությունը, նպատակ ունենալով ապահովել իր տերիտորիայի անվտանգությունը, 1936 թվականին հասավ Մոնտրեում (Շվեյցարիա) միջազգային

կոնֆերանսի հրավիրման՝ նեղուցների մասին Լոզանի կոնվենցիան վերանայելու համար։ Կոնֆերանսը, որ տևեց 1936 թվականի հունիսի 22-ից մինչև հուլիսի 20-ը, ավարտվեց նեղուցների ռեժիմի մասին նոր կոնվենցիայով[1]։

Մոնտրեի կոնֆերանսը ցույց տվեց, որ Թուրքիայի կառավարող շրջանները ձգտում են իրենց երկրի բախտը կապել Անգլիայի ու Ֆրանսիայի քաղաքականության հետ։ Հենվելով անգլո-ֆրանսիական դիվանագիտության վրա, Թուրքական պատվիրակությունը փաստորեն գործում էր ի վնաս իր ազգային շահերի և սովետա-թուրքական բարեկամության։ Նա հանդես եկավ ընդդեմ սովետական պատվիրակության այն առաջարկի, որ արգելվի ոչ սևծովյան տերությունների ռազմանավերի անցումը նեղուցներով։

1937 թվականին Թուրքիան Իրանի, Աֆղանստանի և Իրաքի հետ ստորագրեց Սաադաբադի պայմանագիրը՝ չհարձակման մասին։ Անգլիական դիվանագիտությունը, որը ակտիվորեն մասնակցեց այդ պայմանագրի նախապատրաստմանը, ձգտում էր այն վերածել Մերձավոր ու Միջին արևելքում բրիտանական քաղաքականության զենքի։ Այդ նույն տարում Անգլիան Թուրքիային տրամադրեց 3 միլիոն ֆունտ ստեռլինգի փոխառություն, իսկ 1938 թվականին՝ 16 միլիոն ֆունտ ստեռլինգ[2]։ Քաղաքական մերձեցումը ամրապնդվեց տնտեսական օգնությամբ։

Երկամյա ծանր հիվանդությունից հետո, 1938 թվականի նոյեմբերին, վախճանվեց Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքը։ Հանրապետության պրեզիդենտ ընտրվեց Իսմեթ Ինենյուն, որը դեռ 1937 թվականին, 14 տարի մինիստրների խորհրդի նախագահի պաշտոնում լինելուց հետո, պաշտոնը թողել էր

[1] Կոնֆերանսին մասնակցում էին Լոզանի կոնվենցիան ստորագրած բոլոր պետությունները, բացառությամբ Իտալիայի. Իտալիան նոր կոնվենցիային միացավ 1938 թվականին։

[2] Այդ վարկի հաշվին Կարաբյուքում սկսվեց մետալուրգիական կոմբինատի կառուցումը, որն ավարտվեց երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին։



Աթաթյուրքի վարած քաղաքականության հետ համաձայն չլինելու պատճառով։ Ռեակցիոն ուժերի ճնշման տակ, որոնք իրենց գործունեությունն ակտիվացրին Աթաթյուրքի մահից հետո, տեղի ունեցավ Թուրքիայի հետագա մերձեցում իմպերիալիստական պետությունների, այդ թվում հիտլերյան Գերմանիայի հետ։

Գերմանական արդյունաբերողներն սկսեցին Թուրքիա թափանցել Հիտլերի իշխանության գլուխ անցնելուց էլ շատ առաջ։ Նրանք կառուցում էին էլեկտրակայաններ, ավիահավաքման գործարան, երկաթուղիներ, Թուրքիային տրամադրում մեքենաներ, հաստոցներ, ռելսեր, շոգեքարշեր, վագոններ, շինարարական սարքավորում և նյութեր։ Գերմանիայի դերն աճեց մանավանդ 1934—1939 թվականներին։ Գերմանիայի և Թուրքիայի միջև կնքվեցին առևտրական պայմանագրեր, որոնցում նախատեսված էին ապրանքների փոխանակում՝ կլիրինգի հիման վրա հաստատուն կերպով արձանագրված կոնտինգենտներով։ Երկրի արտաքին առևտրի մեջ 1938 թվականին ֆաշիստական Գերմանիան գրավում էր առաջին տեղը։ 1939 թվականին նրա բաժինը կազմում էր թուրքական արտահանության կեսից ավելին։

1938 թվականին Գերմանիան Թուրքիային տրամադրեց 150 միլիոն մարկ գումարի վարկ։ Բայց դա ռեալիզացիայի չենթարկվեց այն պատճառով, որ Գեբելսին, որը 1939 թվականի ապրիլին այցելել էր Անկարա, չհաջողվեց Թուրքիայի կառավարող շրջաններին համոզել հրաժարվելու դեպի Անգլիա և Ֆրանսիա կողմնորոշումից։

1939 թվականի մայիսի 12-ին Անգլիան և Թուրքիան ստորագրեցին նախնական համաձայնագիր՝ Միջերկրական ծովի շրջանում ագրեսիա կատարվելու դեպքում համատեղ գործելու մասին։ Մեկուկես ամսից հետո Թուրքիան այդպիսի համաձայնագիր կնքեց Ֆրանսիայի հետ, որը Անգլիայի ճնշման տակ Թուրքիային հանձնեց Ալեքսանդրետի սանջակը, որը 1921 թվականի համաձայնությամբ թողնված էր Սիրիայի կազմում։ Միաժամանակ Թուրքիան աշխատում էր չփչացնել հարաբերությունները Գերմանիայի հետ։

Սովետա-թուրքական հարաբերությունները վատացան։ Ոտնահարելով Աթաթյուրքի պատվիրանները, Թուրքիայի պետական գործիչները գնալով ավելի մեծ չափով էին ընկնում անգլո-ֆրանսիական և ամերիկյան իմպերիալիստների ազդեցության տակ, որոնք ձգտում էին հիտլերյան ագրեսիան ուղղել Սովետական Միության դեմ։ Այդ քաղաքականությունը հանգեցրեց այն բանին, որ Թուրքիան ենթարկվեց իմպերիալիստական տերությունների շահերին։

1939 թվականի սեպտեմբերի 1-ին ֆաշիստական Գերմանիան հարձակվեց Լեհաստանի վրա։ Սեպտեմբերի 3-ին Անգլիան և Ֆրանսիան հանդես եկան Գերմանիայի դեմ։ Սկսվեց երկրորդ համաշխարհային պատերազմը։ Պատերազմի սպառնալիքը տարածվեց Բալկանների ու Թուրքիայի վրա։ Ստեղծված իրադրության մեջ անգլո-ֆրանսիական իմպերիալիստները նորից փորձեցին կռվեցնել Սովետական Միությանը և Գերմանիային։ Դրա համար նրանք օգտագործեցին թուրքական կառավարությանը։

1939 թվականի սեպտեմբերի վերջին բանակցությունների համար Մոսկվա ժամանեց Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Շյուքրյու Սարաջօղլուն։ Նա առաջարկեց Սովետական Միության և Թուրքիայի միջև կնքել փոխադարձ օգնության պայմանագիր, որը ՍՍՀՄ-ին Թուրքիայի միջոցով կկապեր Անգլիայի ու Ֆրանսիայի հետ, որոնք գտնվում էին Գերմանիայի դեմ պատերազմի մեջ։ Սովետական կառավարությունը, որ վարում էր խիստ չեզոքության քաղաքականություն, մերժեց այդ առաջարկությունը։ Նա առաջ քաշեց հակընդդեմ նախագիծ, որը նախատեսում էր Թուրքիայի հետ կնքել փոխադարձ օգնության երկկողմանի համաձայնագիր, որը սահմանափակված լիներ Սև ծովի շրջանով ու նեղուցներով, նպատակ ունենալով կանխել սևծովյան նեղուցները պատերազմող տերությունների կողմից օգտագործելը։

Թուրքական կառավարությունը չհամաձայնվեց երկկողմանի համաձայնագիր կնքելուն։ Դա նշանակում է, որ նա չէր ուզում հիտլերյան ագրեսիայի սպառնալիքի հանդեպ ամրապնդել բարեկամական ու բարիդրացիական հարաբերությունները Սովետական Միության հետ։



1939 թվականի հոկտեմբերի 19-ին, Մոսկվայից Սարաջօղլուի մեկնելուց մեկ օր հետո, Թուրքիան փոխադարձ օգնության պայմանագիր ստորագրեց Անգլիայի և Ֆրանսիայի հետ։ Այդ պայմանագրով նա պարտավորվեց Միջերկրական ծովի գոտում եվրոպական տերության կողմից ագրեսիա կատարվելու դեպքում էֆեկտիվորեն համագործակցել Անգլիայի ու Ֆրանսիայի հետ և ամեն կերպ օգնել ու օժանդակել նրանց։

Այսպիսով, Թուրքիան հարեց անգլո-ֆրանսիական բլոկին։ Անգլիան և Ֆրանսիան պասիվ պատերազմ էին մղում Գերմանիայի դեմ, հույս ունենալով, թե գերմանացիները գլխավոր հարվածը կհասցնեն Սովետական Միությանը։ Բայց անգլո-ֆրանսիական իմպերիալիստների հաշիվները շուտով շրջվեցին։ Հիտլերը նախքան Սովետական Միության դեմ պատերազմ սկսելը, որոշեց ապահովել իր թիկունքը Արևմտյան Եվրոպայում ու Բալկաններում և օգտագործել այդ շրջանի տնտեսական ու մարդկային ռեսուրսները։ 1940 թվականին գրեթե ամբողջ Արևմտյան Եվրոպան գտնվում էր ֆաշիստական օկուպանտների լծի տակ։ 1941 թվականի գարնանը Գերմանիան օկուպացրեց Հարավսլավիան և Հունաստանը։ Բուլղարիան, Հունգարիայի և Ռումինիայի նման, դարձավ Գերմանիայի դաշնակիցը։ Ալբանիան դեռ 1939 թվականին զավթվել էր Իտալիայի կողմից։

Գերմանական սպառնալիքը կախված էր Թուրքիայի գլխին։ Դեռ 1940 թվականի փետրվարին այնտեղ ընդունվեց «Ազգի պաշտպանության մասին» օրենք, որը կառավարությանը արտակարգ լիազորություններ էր տալիս՝ երկրի էկոնոմիկան փոխադրելու ռազմական ռելսերի վրա և ստեղծելու պատերազմի ժամանակվա բանակներ։ Թուրքիան, Անգլիայի հետ միասին, սկսեց ամրացնել նեղուցները։

Սակայն ֆաշիստական զավթիչների ժամանակավոր հաջողությունները այնքան ներգործեցին թուրքական կառավարող շրջանների երևակայության վրա, որ նրանք հրաժարվե-

ցին կատարել անգլո-ֆրանս-թուրքական պայմանագրով փո-
խադարձ օգնության իրենց պարտավորությունները և սկսեցին
կողմնորոշվել դեպի Գերմանիան։

1941 թվականի հունիսի 18-ին Թուրքիան Գերմանիայի
հետ ստորագրեց բարեկամության և փոխադարձ օգնության
պայմանագիր։ Այդ պայմանագիրն անվտանգ դարձրեց հիտ-
լերյան Գերմանիայի բալկանյան թևը և նրան հնարավորու-
թյուն տվեց օգտվել Թուրքիայի նյութական ռեսուրսներից.
դա ՍՍՀՄ-ի դեմ ավազակային պատերազմի նախապատ-
րաստման վերջին, բայց էական օղակն էր։

Սովետական Միության դեմ Գերմանիայի ուխտադրուժ
հարձակումից հետո թուրքական կառավարությունը 1941
թվականի հունիսի 25-ին հայտարարեց իր չեզոքության մա-
սին։ Բայց այդ «չեզոքությունը» նրան չխանգարեց Թուրքիան
դարձնել Գերմանիայի չպատերազմող դաշնակից և օգնել նը-
րան ՍՍՀՄ-ի դեմ մղվող պատերազմում։ «Ռուսաստանի
ոչնչացումը,— ասում էր պրեմիեր-մինիստր Սարաջօղլուն,—
ֆյուրերի արխությունն է, որին հավասար բան կարող է կա-
տարվել հարյուրամյակի ընթացքում մեկ անգամ»։ Նույնպի-
սի հայտարարություններ արեցին Թուրքիայի մյուս նշանավոր
պետական ու ռազմական գործիչները։

Թուրքիան խախտեց նեղուցների մասին կոնվենցիան, որ
կնքվել էր 1936 թվականին Մոնտրեում։ Սովետական կա-
ռավարությունը Թուրքիայի կառավարությանը մի քանի ան-
գամ դեմարշ արեց նեղուցներով գերմանական և իտալական
ռազմանավեր անցնելու առթիվ, բայց թուրքական կառավա-
րությունը շարունակում էր աջակցել Գերմանիային։

Գերմանիայի համար թուրքական «չեզոքության» օգտա-
վետությունն առանձնապես աճեց Վոլգայի վրա հիտլերյան
հրոսակներին ջախջախելուց հետո։ Միաժամանակ այդ ջախ-
ջախումը ձախողեց թուրքական ռեակցիայի պատերազմական
պլանները և չափավորեց նրանց զավթողական ախորժակը։

Թուրքական կառավարող շրջանների ռեակցիոն արտա-
քին քաղաքական կուրսը նրանց ներքին հակաժողովրդական
քաղաքականության արտացոլումն էր, քաղաքականություն,



որի նպատակն էր կեղեքել աշխատավորական մասսաներին
հանուն բուրժուազիայի և կալվածատերերի հարստացման,
որոնք պատերազմի ժամանակվա պայմաններում միլիոններ
էին կուտակում։ Պատերազմի տարիներին երկրում երևան
եկան նոր գործարար-միլիոնատերեր, որոնք սերտորեն կապ-
ված էին կառավարության հետ և կործանարար ազդեցություն
էին գործում նրա վրա։

Տիրապետող դասակարգերի շահերի օգտին թուրքական
կառավարությունը «Ազգի պաշտպանության մասին» օրենքի
հիման վրա մտցրեց աշխատանքային պարհակ, մեծացրեց
աշխատանքային օրվա տևողությունը, վերացրեց հանգստի
օրը և արտաժամյա աշխատանքի դիմաց վարձատրությունը,
թույլատրեց երեխաների աշխատանքը հանքերում և ձեռնար-
կությունների գիշերային հերթափոխություններում։ Նա կազ-
մեց կոորդինացիոն ու վերահսկիչ հանձնաժողովներ, ստեղ-
ծեց ազգի պաշտպանության դատարաններ, կազմակերպեց
ռազմական էկոնոմիկայի բյուրո և հիմնեց արտահանման-
ներմուծման 36 միավորում, որոնց մեջ մտան այն բանկերն
ու խոշոր ֆիրմաները, որոնք զբաղվում էին բրնձի, պղնձի,
բամբակի, կաշվի, բրդի, ծխախոտի, մրգեղենի արտահա-
նությամբ, ինչպես նաև այն ֆիրմաները, որոնք ներմու-
ծում էին յուղեր, կտորեղեն և սարքավորում։ Այդ միավո-
րումները աշխույժ առևտուր էին անում ո՛չ միայն հիտլեր-
յան Գերմանիայի ու նրա դաշնակիցների, այլև Անգլիայի
ու ԱՄՆ-ի հետ։

Պատերազմի տարիներին Թուրքիան Գերմանիային և
նրա կամակատարներին խիստ դեֆիցիտային ստրատեգիա-
կան հումք և պարեն մատակարարողներից էր։ 1941—1942
թվականներին թուրքական արտահանության կեսից ավելին
բաժին էր ընկնում Գերմանիային։ Թուրքիան Գերմանիա և
հիտլերյան բլոկի մյուս երկրներն էր ուղարկում քրոմի և
երկաթի հանքաքար, պղինձ, բամբակ։ Հարստանալով այդ
մատակարարումների հաշվին, պատերազմի տարիներին նա
իր ոսկու պաշարը 26 տոննայից հասցրեց 135 տոննայի։

Տնտեսությունը ռազմական ռելսերին փոխադրելը խիստ վատացրեց երկրի առանց այդ էլ ծանր տնտեսական վիճակը։ Միլիոնանոց բանակի պահպանումը մեծացրեց ռազմական ծախսերը։

Թուրքական կառավարությունը բանակին սպասարկելու մեջ ներգրավեց էկոնոմիկայի բոլոր ճյուղերը, այդ թվում նաև այն ճյուղերը, որոնք աշխատում էին ներքին շուկայի համար։ Դա առաջացրեց երկրի տնտեսական կյանքի կազմալուծում։ Հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունների կրճատման և բերքատվության նվազման հետևանքով կտրուկ չափ պակասեց հացահատիկի համախառն բերքը, որը պարենային սուր ճգնաժամի պատճառ եղավ։ Հացի շուկայական գները խիստ բարձրացան։ Կառավարությունը հարկադրված եղավ խոշոր քաղաքներում մտցնել քարտային սիստեմ։ Բանվորների օրվա հացի փայաբաժինը սահմանվեց 300 գրամ, ապա նվազեց, հասնելով 150 գրամի։ Սննդամթերքների և լայն սպառման ապրանքների պակասության հետևանքով երկրում մեծացավ սպեկուլյացիան։

Այդ բոլորը հանգեցրեց աշխատավորական զանգվածների խիստ աղքատացման։ Բանվորական թաղամասերում մոլեգնում էր սովը։ Չափազանց մեծ ռազմական ծախսերի հետևանքով ավելացվեցին հարկերը, որոնք գանձելու համար իշխանությունը հաճախ դատաստան էր տեսնում բնակչության հետ։ 1942 թվականին օրենք հրապարակվեց կարողության վրա արտակարգ հարկ դնելու մասին։ Այդ օրենքն անմիջականորեն ուղղված էր ազգային փոքրամասնությունների դեմ և փաստորեն հանգեցնում էր նրանց սեփականության մասսայական բռնագրավման։ Հարկը չվճարելը պատրվակ բերելով, իշխանությունները բռնագրավում էին ազգային փոքրամասնությունների ունեցվածքը։ Կարողության հարկը կառավարությանը տվեց 320 միլիոն լիրա, այսինքն՝ 1942 թվականի պետական բյուջեի մեկ երրորդը։

1942 թվականին Թուրքական կառավարությունը բռնագրավեց գյուղացիների հացի պաշարները և մտցրեց գնման



ցածր գներով պետությանը պարտադիր կերպով հացի հանձնման (բերքի 20—50 տոկոսը) պարտավորությունները։

Պատերազմի տարիներին ընդունվեցին գործող օրենքներին նոր լրացումներ, որոնք սահմանափակում էին խոսքի, մամուլի ազատությունը, խախտում անձի անձեռնմխելիությունը։ Ոստիկանական ծառայության մասին օրենքը ոստիկանին իրավունք էր տալիս իր հայեցողությամբ կատարել ձերբակալություններ և, ձերբակալվածին ոչ մի մեղադրանք չներկայացնելով, նրան նախակալանավորում պահել անսահմանափակ ժամանակով։ Ոստիկանական շատ չինովնիկներ կատարելագործման դասընթացներ անցան Գերմանիայում։ Այնտեղից նրանք Թուրքիա տեղափոխեցին գեստապոյի «աշխատանքի» մեթոդները։

Վեց վիլայեթներում (Ստամբուլի, Չանաքկալեի, Կոջաէլիի, Էդիրնեի, Կիրկլարելիի, Թեքիրդաղի) մտցվեց պաշարողական դրություն, իսկ Արևելյան Անատոլիայում և Սովետական Միության սահմանակից վիլայեթներում՝ ռազմական դրություն։ Զինվորական իշխանությունները իրավունք ստացան, առանց դատական օրգանների սանկցիայի, հետաքննություն կատարել այն անձանց նկատմամբ, ովքեր մեղադրվում էին հակապետական գործունեության մեջ։

Դեռ 1941 թվականի աշնանը Թուրքական կառավարությունը սովետա-գերմանական ռազմաճակատ ուղարկեց մի պատվիրակություն՝ ռազմական ակադեմիայի պետ, գեներալ Ալի Ֆուադ Էրդենի գլխավորությամբ։ Թուրքական գեներալները ընդունեցին Հիտլերը, Ռիբենտրոպը, ցամաքային ուժերի գլխավոր հրամանատար ֆոն Բրաուխիչը և Գերմանիայի զինված ուժերի գերագույն հրամանատարության շտաբի պետ, գեներալ-ֆելդմարշալ Կեյտելը։ Անկարա վերադառնալով, գեներալ Էրդենը Ինոնյուին զեկուցում տվեց, որին ներկա էին կառավարության անդամները և գլխավոր շտաբի պետը։ Թուրքական գեներալների արած հիացական պատմությունները ռեակցիոն մամուլի էջերում հակասովետական պրոպագանդայի նյութ ծառայեցին։

Սովետական Միության մասին ամենաթշնամական հեր-

յուրանքներ էին տարածում պանթյուրքիստները[1] և այդտեղ էմիգրանտները, որոնք բացահայտորեն պահանջում էին, որ Թուրքիան ամենաարագ կերպով պատերազմի մեջ մտնի Գերմանիայի կողմում։ Հիտլերականները Թուրքիայում ստեղծել էին հատուկ բյուրո, որը ղեկավարում էր պանթյուրքական կազմակերպությունների՝ կուլտուրական միության, գրքասերների ընկերության, Թուրքստանի երիտասարդության միության, Թյուրք-կովկասյան ջիգային, բանակային սպաների ընկերության և այլն։

Պանթյուրքիստները հրատարակում էին բազմաթիվ թերթեր և հանդեսներ, որոնցում պրոպագանդում էին ռասիզմ և երիտասարդության գիտակցությունը թունավորում՝ անդուսպ պատերազմի ելնել իրենց հավատակիցների ու «արյունակից եղբայրների» «ազատագրության» համար։

Պանթյուրքիստների պատվիրակությունը, պաշտոնաթող գեներալ Էրքիլեթի գլխավորությամբ, 1941 թվականի սեպտեմբերին սովետա-գերմանական ռազմաճակատում, Հիտլերի ռազմակայանում այցելեց նրան։

1942 թվականի փետրվարին թուրքական իշխանությունները գեստապոյի գործակալների հետ միասին պրովոկացիոն նպատակներով Գերմանիայի դեսպան ֆոն Պապենի սպանության կեղծ փորձ սարքեցին։ Դատական պատասխանատվության կանչեցին Թուրքիայում ՍՍՀՄ առևտրական ներկայացուցչության և դեսպանության աշխատակիցներ, սովետական քաղաքացիներ Պավլովին և Կոռնիլովին։ Թուրքական իշխանությունները այդ դատավարությունն օգտագործեցին հակասովետական չարամիտ կամպանիա բորբոքելու համար[2]։

[1] Պանթյուրքիզմ — թուրքական բուրժուազիայի ռեակցիոն գաղափարախոսություն, որը նկատի է առնում թյուրքերի իշխանության տակ միավորել թյուրքերեն խոսող բոլոր ժողովուրդներին։

[2] Թուրքիայի հակասովետական քաղաքականությունը վերջ ի վերջո հանգեցրեց նրան, որ ՍՍՀՄ կառավարությունը 1945 թվականի մարտի 19-ին ցանկություն հայտնեց չեղյալ հայտարարել բարեկամության ու չեզոքության սովետա-թուրքական պայմանագիրը (1925 թ. դեկտեմբերի 17-ի) իր բոլոր հավելվածներով՝ 1935 թվականի նոյեմբերի 7-ի արձանագրությանը համապատասխան, որ նախատեսված է չեղյալ հայտարարելու կարգը։



Թուրքիայի կառավարող շրջանների պրոֆաշիստական քաղաքականությունը հակահարված էր ստանում երկրի առաջադեմ ուժերի կողմից։ 1943 թվականի մայիսին Ստամբուլում լույս տեսավ ժուռնալիստ Զ. Էրթեմի «Ամենամեծ վտանգը» բրոշյուրը։ Դրանում մերկացվում էին պանթյուրքիստների նպատակները, բացահայտվում էր նրանց պարագլուխների իսկական դեմքը, որոնք հանդիսանում էին գերմանական գործակալներ։ Այդ բրոշյուրը և նրան նվիրված հոդվածները, որ հրապարակել էր նշանավոր թուրք կին ժուռնալիստ Սաբիհա Սերթելը «Թան» թերթում, ուժեղ տպավորություն թողեցին հասարակական կարծիքի վրա և մեծ իրադարձություն եղան երկրի քաղաքական կյանքում։ Կառավարությունը շատ կերպով բռնագրավեց բրոշյուրը, ձերբակալեց նրա հեղինակին և ուժեղացրեց բնակչության դեմոկրատական խավի հետապնդումը։ Այսպես, Անկարայի ռազմական տրիբունալը խիստ դատավճիռ կայացրեց թուրքական հակաֆաշիստների նկատմամբ։ Դատապարտվածների թվում էին հայտնի առաջադեմ կին գրող Սուադ Դերվիշը, որի գրչին էր պատկանում «Ինչո՞ւ ես Սովետական Միության բարեկամն եմ» գրքույկը։

Հակաֆաշիստների դատավարության կապակցությամբ պանթյուրքիստների պարագլուխ Աթսըզը մի բաց նամակով դիմեց պրեմիեր-մինիստր Սարաջօղլուին, պահանջելով ուժեղացնել պայքարը պրոգրեսիվ ուժերի դեմ։ 1944 թվականի մայիսի 3-ին պանթյուրքիստները Անկարայում կազմակերպեցին ցույց, որի ժամանակ այրեցին առաջադեմ գրողների ստեղծագործությունները։

Պանթյուրքիստական ցույցերն ու ջարդերը բնակչության լայն խավերի մեջ բողոք առաջացրին։ Ժողովրդական մասսաները դժգոհություն էին հայտնում կառավարության քաղաքականությունից, որը խրախուսում էր ֆաշիստական ռեակցիային։ Հասարակական կարծիքի ճնշման տակ և

արտաքին քաղաքական իրադրության փոփոխման հետևանքով Թուրքական կառավարությունը որոշ միջոցառումներ ձեռնարկեց պանթյուրքիստների դեմ։ Նա փակեց պանթյուրքիստական մի քանի հրատարակություններ և պետական հիմնարկներից հեռացրեց այն անձանց, ովքեր ուժեղ չափով վարկաբեկվել էին իրենց պանթյուրքիստական գործունեության հետևանքով։ 23 պանթյուրքիստներ դատական պատասխանատվության ենթարկվեցին։ Սակայն մի տարի անց նրանք բոլորն էլ արդարացվեցին վճռաբեկ դատարանի կողմից և ազատ արձակվեցին։ Միևնույն ժամանակ հակաֆաշիստները դատապարտվեցին 16—25 տարվա բանտարկության։

Հիտլերյան հրոսակախմբերի նկատմամբ սովետական բանակի տարած հաղթանակները թույլ չտվեցին, որ իրագործվեն Թուրքական ռեակցիայի պլանները, ռեակցիա որ ցանկանում էր Թուրքիան քաշել Սովետական Միության դեմ պատերազմի մեջ։ Հաշվի առնելով Հիտլերյան բլոկի ջախջախման անխուսափելիությունը, ինչպես նաև ձգտելով ապագայում խուսափել արտաքին քաղաքական մեկուսացումից և ցանկանալով թուլացնել լայն հասարակայնության խիստ դժգոհությունը, Թուրքական կառավարությունը 1944 թվականի օգոստոսի 2-ին խզեց հարաբերությունները Գերմանիայի հետ։

Անգլո-ամերիկյան իմպերիալիստները իրենց էքսպանսիոնիստական պլանների իրականացման գործում մեծ նշանակություն տալով Թուրքիային, իրենց հերթին բոլոր միջոցները ձեռք առան նրան արտաքին քաղաքական մեկուսացվածությունից հանելու համար։ Դեռ 1942 թվականին ԱՄՆ-ը զենքը վարկով կամ կապալով տալու օրենքի հիման վրա Թուրքիային տրամադրեց ռազմական ինքնաթիռներ, ծանր հրետանի և այլ սպառազինություն՝ 35 միլիոն դոլլարի գումարով։ 1943 թվականի սկզբին Անգլիայի պրեմիեր-մինիստր Չերչիլը Ադանայում հանդիպեց Թուրքիայի պրեզիդենտի և պրեմիեր-մինիստրի, ինչպես նաև Թուրքական բանակի գլխավոր շտաբի պետի հետ։ Այդ հանդիպումից



հետո Անգլիան Թուրքիային մատակարարեց 20 միլիոն ֆունտ ստեռլինգ գումարի նորագույն զենք։

1943 թվականի վերջին Կահիրեում տեղի ունեցավ Ռուզվելտի ու Չերչիլի տեսակցությունը Իսմեթ Ինոնյուի հետ, որի ժամանակ քննարկվեց Բալկաններում մղվող պատերազմին Թուրքիայի մասնակցության հարցը։ Անգլո-ամերիկյան իմպերիալիստների ծրագրի համաձայն Թուրքական զորքերը պետք է Բալկանները մտնեին այն հաշվով, որպեսզի այնտեղ պահպանեին ռեակցիոն ռեժիմը և ջախջախեին ժողովրդա-ազատագրական շարժումը։ Սակայն այդ պլանները ձախողեց սովետական բանակը։ 1944 թվականի աշնանը բալկանյան պետությունների ժողովուրդները ազատագրվեցին հիտլերյան բռնատիրությունից։ Ամերիկա-անգլիական իմպերիալիստները կարողացան միայն Հունաստանում փրկել ռեակցիայի ռեժիմը։

Թուրքիան արտաքին քաղաքական մեկուսացվածությունից դուրս բերելու և նրան Միավորված ազգերի կազմակերպության անդամ դարձնելու համար ԱՄՆ-ը և Անգլիան Թուրքական կառավարությանը խորհուրդ տվեցին պատերազմի մեջ մտնել Գերմանիայի դեմ։ 1945 թվականի փետրվարին Թուրքիան պատերազմ հայտարարեց Գերմանիային ու Ճապոնիային։

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո արմատական փոփոխություններ տեղի ունեցան միջազգային իրադրության մեջ։ Դրանցից ամենագլխավորներն էին՝ սոցիալիզմի լագերի առաջացումն ու ամրապնդումը և կապիտալիզմի սիստեմի թուլացումը։

Հիտլերյան Գերմանիայի ջախջախումից հետո Թուրքական կառավարությունը, աշխատելով ժողովրդի ուշադրությունը շեղել դեմոկրատիայի համար պայքարից, մի քանի ձևական զիջումներ արեց. 1945 թվականի հունիսին նա հայտարարեց պատգամավորների «ազատ» ընտրություններ

Մեջլիսի թափուր տեղերի համար, թույլ տվեց «քննադատու-թյուն» մամուլում և նոր քաղաքական կուսակցությունների ստեղծում, ինչպես նաև ստեղծեց աշխատանքի մինիստրու-թյուն իբր թե բանվորներին չափից ավելի շահագործումից պաշտպանելու համար։ Գյուղացիներին հանգստացնելու հա-մար 1945 թվականին կառավարությունը հրապարակեց կիսատ-պատ հողային օրենք։

Սակայն այդ միջոցները չկարողացան վերացնել բնակ-չության լայն խավերի դժգոհությունը կառավարության ար-տաքին ու ներքին քաղաքականությունից։ Հարավ-արևելյան Եվրոպայում կատարված մեծ վերափոխությունների ազ-դեցության տակ երկրում սկսվեց դեմոկրատական շարժման վերելք, որն իր ազատության ու անկախության համար Թուրք ժողովրդի մղած պայքարի նոր էտապ էր։

Անվանի ժուռնալիստ Զ. Էրքմենը Ստամբուլում իր թեկ-նածությունն առաջադրելով Թուրքիայի ազգային մեծ ժո-ղովի պատգամավորների լրացուցիչ ընտրությունների ժամա-նակ, 1945 թվականի հունիսի 16-ին «Թան» թերթում տպագրեց ընտրական ծրագիր, որը արտացոլում էր Թուր-քիայի դեմոկրատական ուժերի ձգտումները։ Նրանում ասված էր. «Քեմալական հեղափոխությունը կանգ է առել կես ճանապարհին։ Այն շարունակելու համար անհրաժեշտ է ստեղծել դեմոկրատական ուժերի համախմբման կառավարու-թյուն ինչպես ժողովրդա-հեղափոխական կուսակցության ներկայացուցիչներից, այնպես էլ այն անձանցից, որոնք չեն մտնում այդ կուսակցության մեջ, բայց վայելում են ժողո-վրդական մասսաների վստահությունը։ Հեղափոխությունը շարունակելու համար անհրաժեշտ է ժողովրդական մաս-սաներին՝ բանվորներին ու գյուղացիներին, տրամադրել քա-ղաքական իրավունքներ, ինչպես նաև հնարավորություն տալ ստեղծելու արհմիություններ ու քաղաքական կուսակցու-թյուններ, մամուլի ազատություն տալ»։ Էրքմենի ընտրական ծրագիրը տագնապ առաջացրեց կառավարության մեջ։ Ուստի նա դատական գործ սկսեց Էրքմենի և «Թան» թերթի դեմ։



Այսպիսի պատկեր էին ներկայացնում Թուրքական Մեջլիսի «ազատ» ընտրությունները։

1945 թվականի հունիսին Զոնգուլդակի և քրոմի հանքերի հանքագործները պահանջեցին ավելացնել աշխատավարձը և բարելավել աշխատանքի պայմանները։ Ստամբուլի ծխախոտագործները 45 հազար բանվորների անունից աշ-խատանքի մինիստրից պահանջեցին կազմակերպել արհմիու-թյուններ։

Թուրք առաջավոր ինտելիգենցիան սկսեց հրատարակել «Գյունը», «Յենի դյունյա» դեմոկրատական թերթերը և «Գյոր-յուշլեր» հանդեսը։ Դրանց հրատարակմանը մասնակցում էին ժուռնալիստներ Մահմեդ Զեքերյա Սերթելը, Սաբիհա Սերթելը, Զ. Էրքմենը, գրողներ Սուադ Դերվիշը, Սաբահադ-դին Ալին[1]։ Սաբահադդին Ալիի հրատարակած «Մարկո փաշա» երգիծական հանդեսը սուր կերպով քննադատում էր պետական օրգաններում տիրապետող կաշառակերությունը։

Ժողովրդական մասսաների ճնշման տակ կառավարու-թյունը հարկադրված էր թույլ տալ երկրում կազմակերպելու չեզոք բանվորա-գյուղացիական կուսակցություններ և արհ-միություններ։ Նորից սկսեցին հրատարակվել դեմոկրատա-կան թերթերը («Սես», «Նուրլուս»), իսկ 1946 թվականի հու-նիսին կազմակերպվեցին սոցիալիստական և սոցիալիստա-կան բանվորա-գյուղացիական կուսակցությունները։

Արդյունաբերական կենտրոններում ստեղծվեցին արհ-միություններ։ Կարճ ժամանակամիջոցում դրանց թիվը հա-սավ 37-ի։ Արհմիությունները սկսեցին հրատարակել իրենց թերթը՝ «Սենդիկա» անունով և Ստամբուլում բացեցին ակումբ, որտեղ անց էին կացվում դասախոսություններ ու զրույցներ։

Այդ ամենը տագնապի մեջ գցեց կառավարող շրջան-ներին։ Դեմոկրատական շարժման դեմ պայքարելու համար Թուրքիայի ազգային մեծ ժողովը որոշում ընդունեց երկարա-

[1] 1948 թվականին թուրքական պահնորդությունը սպանեց Սաբահադ-դին Ալիին։

ձգել պաշարողական դրությունը Ստամբուլի, Էդիռնեի, Կիրկլարելիի, Թեքիրդաղի, Չանաքկալեի և Կոջաէլիի վիլայեթներում, որը գոյատևեց մինչև 1947 թվականի վերջը։ Այդ վիլայեթների զինվորական իշխանությունները 1946 թվականի դեկտեմբերի 16-ից արգելեցին սոցիալիստական բանվորագյուղացիական կուսակցության և սոցիալիստական կուսակցության պրոգրեսիվ արհմիությունների գործունեությունը, փակեցին դեմոկրատական թերթերը և ձերբակալեցին ավելի քան 400 մարդ, այդ թվում՝ երկու կուսակցությունների ու արհմիությունների ղեկավար աշխատողներին։ Ձերբակալվածները հանձնվեցին զինվորական տրիբունալի դատին՝ «կոմունիզմի տարածման» մեղադրանքով։

Երկրում դասակարգային հակասությունների սրումը և ժողովրդական մասսաների դժգոհության աճն օգտագործեցին ժողովրդա-հանրապետական կուսակցության օպոզիցիոն անդամները, որոնք պահանջեցին փոփոխել կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը, վերացնել սահմանադրությանը հակասող բոլոր օրենքները և հայտարարել միաստիճան ընտրություններ։ Այդ պահանջները մերժեց կուսակցության գլխավոր խորհուրդը. ավելին, կառավարության և գլխավոր խորհրդի քաղաքականությունը քննադատելու համար օպոզիցիոներները վտարվեցին կուսակցությունից։ Որպես բողոքի նշան, ժողովրդա-հանրապետական կուսակցության մի քանի անդամներ դուրս եկան նրա շարքերից։

1946 թվականի հունվարին ժողովրդա-հանրապետական կուսակցությունից վտարված անդամները հիմնեցին դեմոկրատական կուսակցություն, որը շուտով աչքի ընկնող տեղ գրավեց Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում։ Նոր կուսակցության ղեկավարության մեջ մտան պատերազմի ժամանակ հարստացած միլիոնատերեր, Ստամբուլի և Իզմիրի արտահանողներ ու ներմուծողներ, խոշոր կալվածատերեր։ Դեմոկրատական կուսակցությունը ժողովրդի դժգոհությունն օգտագործում էր պետական իշխանությունը գրավելու համար։ Իր ծրագրում նա պահանջում էր ազատության ապահովում, փոխադարձ հարգանք և երկրի տնտեսական շահերի



համաձայնեցում մասնավոր կապիտալի շահերի հետ, կուսակցությունների և արհմիությունների ստեղծում բանվորների, արդյունաբերողների և գյուղական տերերի համար, երկրի կառավարում դեմոկրատական սկզբունքներով և այլն։ Դեմոկրատական կուսակցությունն անհրաժեշտ էր համարում գործողության ազատություն տրամադրել մասնավոր կապիտալին, ինչպես նաև արգելք չհանդիսանալ օտարերկրյա կապիտալը երկիր ներթափանցելուն։ Դեմոկրատական կուսակցության ծրագիրը մյուս բոլոր հարցերում ոչնչով չէր տարբերվում ժողովրդա-հանրապետական կուսակցության ծրագրից։

1946 թվականին տեղի ունեցան Մեջլիսի և մունիցիպալիտետների ընտրությունները։ Թեև այդ ընտրություններում, օգտագործելով պետական ապարատի ամբողջ մեխանիզմը, ժողովրդա-հանրապետական կուսակցությունը հաղթանակի հասավ, բայց նրա հեղինակությունը ժողովրդի մեջ զգալիորեն ընկել էր։

Ընտրությունների արդյունքների մասին պաշտոնական տվյալները (465 պատգամավորական տեղերից 402-ը ստացավ ժողովրդա-հանրապետական կուսակցությունը) ընդհանուր վրդովմունք առաջացրին։ Ինչպես գրում էին թուրքական թերթերը, պրեզիդենտը ստացավ ավելի քան 50 հազար հեռագիր ու նամակ, որոնց հեղինակները պահանջում էին չեղյալ հայտարարել Մեջլիսի ընտրությունները։ Հուլիսի 25-ին բողոքի 40 հազարանոց միտինգ կայացավ Իզմիրում։ Բազմամարդ ցույցեր եղան Կոնիայում, Ադանայում, Բուրսայում, Բալըքեսիրում և մյուս քաղաքներում։ Առանձնապես հուժկու էր օգոստոսի 3-ին Անկարայում կայացած միտինգը։

1946 թվականի օգոստոսի 5-ին բացվեց նոր գումարման Մեջլիսի առաջին սեսիան։ Նորից պրեզիդենտ ընտրվեց Իսմեթ Ինոնյուն, Մեջլիսի նախագահ՝ Քյազիմ Կարաբեքիրը։ Նոր կառավարության ջանքերն ուղղված էին երկրում ռազմաոստիկանական ռեժիմի ամրապնդմանը։ Արտաքին քաղաքականության ասպարեզում կառավարությունը հույսը դրել էր Անգլիայի և ԱՄՆ-ի աջակցության վրա։

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ամերիկյան իմպերիալիզմն սկսեց մեծ հետաքրքրություն հանդես բերել Թուրքիայի նկատմամբ։ «Տրումենի դոկտրինան» նախատեսում էր ամերիկյան ռազմական բազաների ստեղծում Միջերկրական ծովի արևելյան մասում, աջակցություն Հունաստանում և Թուրքիայում ստեղծված ռեակցիոն ռեժիմներին, որպես ՍՍՀՄ-ի և ժողովրդական դեմոկրատիայի երկրների դեմ, ինչպես նաև Մերձավոր ու Միջին արևելքի երկրների ազգային-ազատագրական շարժումների դեմ ուղղված ամերիկյան իմպերիալիզմի ամրոցների։

1947 թվականի հուլիսի 12-ին ստորագրվեց ամերիկա-թուրքական համաձայնագիր՝ «Տրումենի դոկտրինայի» հիման վրա Թուրքիային ռազմական «օգնություն» ցույց տալու մասին։ Ըստ այդ համաձայնագրի Թուրքիան ստացավ 100 միլիոն դոլլարի ամերիկյան զենք, ինչպես նաև 10 միլիոն դոլլարի գումարով վարկ՝ ամերիկյան ռազմանյութեր ձեռք բերելու համար։ Դրանից հետո երկիրը հեղեղեցին ամերիկյան բազմաթիվ ռազմական, ռազմա-ծովային, ռազմա-օդային միսիաները, որոնք սկսեցին զբաղվել զինված ուժերի, նավահանգիստների, օդանավակայանների և մյուս օբյեկտների վիճակի ուսումնասիրությամբ։

«Տրումենի դոկտրինայի» հռչակումից հետո ուժեղացավ նաև ԱՄՆ-ի գաղափարական ներթափանցումը Թուրքիա։ Մինչև 1947 թվականը երկրում ԱՄՆ-ի պրոպագանդայի կենտրոնը ամերիկյան ինֆորմացիոն բյուրոն էր, որը հրատարակում էր բյուլետեն, ինչպես և ամերիկյան «Ռոբերտ քոլեջ» ուսումնական հաստատությունն էր Ստամբուլում և «Ամերիկյան քոլեջը» Իզմիրում և Ադանայում։ 1947 թվականին ԱՄՆ-ը ստեղծեց հատուկ պրոպագանդիստական ապարատ՝ միջազգային ինֆորմացիայի բյուրո, կապի թուրք-ամերիկյան ընկերություն, մամուլի բյուրո, որոնք սկսեցին թուրքական թերթերին ու ռադիոյին մատակարարել պրոպագանդիստական նյութեր՝ ուղղված «սառը պատերազմի» բորբոքման նպատակին։

Կոմունիզմի դեմ պայքարի անվան տակ թուրքական



կառավարող շրջանները սկսեցին ճնշել դեմոկրատական և հայրենասիրական տրամադրությունների ամեն մի արտահայտություն։ Հատուկ ճիգ էր գործադրում Հասան Սաքայի կառավարությունը, որ կազմվեց 1947 թվականի սեպտեմբերին։ 1948 թվականի հուլիսին նա ԱՄՆ-ի հետ կնքեց լրացուցիչ համաձայնագիր՝ «Մարշալի պլանի» շրջանակներում Թուրքիային տնտեսական «օգնություն» ցույց տալու մասին։

Ջանալով ճնշել ժողովրդի դժգոհությունը, կառավարությունն ստեղծեց կոմունիզմի դեմ պայքարի հանձնաժողով, որը բանտ նետեց երկրի հարյուրավոր առաջավոր մարդկանց։ Բանտարկվածների մեջ էին համալսարանների առաջադիմորեն տրամադրված պրոֆեսորներ ու դասախոսներ, որոնց թվում Պերթև Բորաթավը և Բեհիջե Բորանը։

1949 թվականի հունվարին Հասան Սաքայի կաբինետին փոխարինեց Գյունալթայի կառավարությունը, որը դպրոցներում մտցրեց կրոնական ուսուցում և համալսարաններում վերականգնեց աստվածաբանական ֆակուլտետները։ Բայց նրան չհաջողվեց վերածնել միջնադարյան մուսուլմանական խավարամոլության ոգին և ամրապնդել իր կուսակցության հեղինակությունը։

Մեջլիսի հերթական ընտրությունների ժամանակ, որ անցկացվեցին 1950 թվականի մայիսի 14-ին, ժողովրդա-հանրապետական կուսակցությունը, որը իշխանության գլուխ էր կանգնած 27 տարի շարունակ, դաժան պարտություն կրեց։ 487 պատգամավորական տեղերից նա ստացավ ընդամենը 69-ը։ Այդ կործանիչ հարվածը ցույց տվեց նրա արտաքին ու ներքին քաղաքականության սնանկությունը։ Դեմոկրատական կուսակցությունը լայն դեմագոգիայի, շանտաժի ու մասսաներին խաբելու ճանապարհով իր ձեռքը վերցրեց պետական իշխանությունը։

Նոր Մեջլիսը հանրապետության պրեզիդենտ ընտրեց Ջելյալ Բայարին, որը առաջ զբաղեցրել էր պրեմիեր-մինիստրի, առևտրի մինիստրի և էկոնոմիկայի մինիստրի պաշտոնները։ Խոշոր կալվածատեր Ադնան Մենդերեսի կազմած կա-

ռավարության մեջ մտան դեմոկրատական կուսակցության տասնվեց նշանավոր անդամներ։

Կառավարության ծրագիրը, որ սահմանափակեց էտատիզմի քաղաքականությունը, նկատի էր առնում լայնորեն օգտագործել օտարերկրյա կապիտալը, նպաստավոր պայմաններ ստեղծել մասնավոր կապիտալի գործունեության համար, կիրառել խնայողության ռեժիմ, իջեցնել գները, սահմանել իբր թե արդարացի հարկեր, պաշտպանել խոսքի և մամուլի ազատություն և, միաժամանակ, պայքարել ձախ հոսանքների դեմ։ Արտաքին քաղաքականության ասպարեզում Մենդերեսի կառավարությունն ամբողջովին կողմնորոշվում էր դեպի արևմտյան տերությունները։

Մենդերեսի կառավարության ներքին քաղաքականության հիմնական ուղղությունը հակակոմունիզմն էր, նացիոնալիզմի և կրոնական ֆանատիզմի վերածնումը։

Իշխանությունները առաջին հերթին հարձակվեցին խաղաղության կողմնակիցների ընկերության վրա։ Նրանք խաղաղության ու դեմոկրատիայի մարտիկներին մեղադրեցին «կոմունիզմ» տարածելու մեջ, ընկերության 22 ղեկավարների բանտ նետեցին և փակեցին «Բարիշ» («Խաղաղություն») թերթը։ Դատապարտյալների թվում էին ընկերության նախագահ Բեհիչե Բորանը և գլխավոր քարտուղար Ադնան Ջեմհիլը։

1951 թվականի նոյեմբերի վերջին Թուրքիայի ազգային մեծ ժողովն ընդունեց օրենք, որի համաձայն ընդհուպ մինչև մահապատիժ՝ դատապարտման էին ենթակա այն անձինք, ովքեր «պայքարում էին երկրում գոյություն ունեցող տնտեսական ու սոցիալական կարգերը վերացնելու համար»։ Այդ օրենքն ուղղված էր գլխավորապես Թուրքիայի կոմունիստական կուսակցության դեմ։ Մեջլիսը նաև օրենք ընդունեց, որը համալսարանների պրոֆեսորներին ու դասախոսներին արգելում էր զբաղվել քաղաքական գործունեությամբ, հանդես գալ քաղաքական դեկուցումներով և հոդվածներ հրապարակել մամուլում։ Իշխանությունները մի շարք դա-



տավարություններ կազմակերպեցին կոմունիստների և առաջադիմական ու դեմոկրատական մյուս ուժերի դեմ։

Հետապնդվում էին ազգային փոքրամասնությունները։ Իշխանություններն ամեն կերպ շովինիստական կամպանիա էին ծավալում հույների, ինչպես և Թուրքիայի մյուս քրիստոնյա ազգային փոքրամասնությունների դեմ։ Հակահունական կամպանիան ամենաբարձր շիկացման հասավ 1955 թվականի օգոստոս-սեպտեմբերին։ Սեպտեմբերի 6—7-ին Ստամբուլում և Իզմիրում տեղի ունեցան Մենդերեսի կառավարության կողմից կազմակերպված ջարդեր, որոնց հետևանքով ավերվեցին մեծ թվով հույների տներ, խանութներ, դպրոցներ և եկեղեցիներ։

Մենդերեսի կառավարությունը ուժեղ չափով վերածնում էր կրոնական ֆանատիզմը, դա քողարկելով մտքի ու հավատի ազատության կեղծ լոզունգով։ Դեռ իշխանության գլուխ անցնելուց առաջ դեմոկրատական կուսակցությունն իր նախընտրական ծրագրում ընդգծում էր երկրի կյանքում իսլամի դերն ուժեղացնելու իր մտադրությունը։ Այդ խոստումը, ի տարբերություն մյուս շատ խոստումների, չմոռացավ դեմոկրատական կուսակցության ղեկավարությունը։ Արդեն 1951 թվականին Անկարայի համալսարանում հիմնվեց աստվածաբանության ֆակուլտետ։ 1952 թվականին կառավարությունը կրոնի ուսուցում մտցրեց տարրական ու միջնակարգ դպրոցներում, ինչպես և գյուղական ինստիտուտներում։ Մի շարք քաղաքներում բացվեցին կրոնի առարկաների դասատուների և իմամների պատրաստման ուսումնարաններ։ Իշխանության հովանավորության շնորհիվ խիստ աճեց Մեքքա ուխտ գնացողների թիվը։ Տարեցտարի ավելացան կրոնի պահպանության ծախսերը։ Եթե 1955 թվականին կրոնական հաստատությունների կարիքների համար պետությունը հատկացրել էր 4 միլիոն լիրա, ապա հաջորդ տարում այդ կարիքներին հատկացումները հասան 17 միլիոնի։ Զգալի միջոցներ էին գնում մզկիթների վերականգնման և շինարարության վրա։ Հենց միայն Իզմիրի վիլայեթում 1959 թվականին կառուցվեց 120 մզկիթ։ Դեմոկրատական կուսակ-

ցության ղեկավարությունը կանոնավոր ռադիոհաղորդումների մեջ մտցրեց աղոթքներ և կրոնական թեմաներով զրույցներ։ 1959 թվականի ամռանը կառավարությունը Թուրքիա հրավիրեց ուրիշ երկրների մուսուլման հոգևորականների, որ նրանց ցույց տա իսլամի վերականգնման ուղղությամբ իր նվաճումները։

Ստանալով կառավարող կուսակցության այդքան արդյունավետ աջակցությունը, իր ուժն զգում էր նաև ռեակցիոն մուսուլմանական հոգևորականությունը։

1957 թվականին Իսպարտայում հայտնվեց ծերունի շեյխ Սաիդ Նուրսին, իրեն հայտարարեց մարգարե և սկսեց քարոզել, թե պետք է հրաժարվել եվրոպական զգեստից, կանայք պետք է չադրա ծածկեն, պետք է փակել աշխարհիկ ուսումնական հաստատությունները և այլն։ «Մարգարեն» օգտվում էր ո՛չ միայն հոգևորականների, այլև դեմոկրատական կուսակցության մի շարք պաշտոնական գործիչների ու իշխանությունների աջակցությունից։ Չսահմանափակվելով քարոզով, Սաիդ Նուրսին դիմեց կառավարությանը՝ առաջարկելով կնքել փոխադարձ օգտավետ քաղաքական դաշինք։

1957 թվականի ամռանը ռեակցիոն հոգևորականների ներկայացուցիչները Բուրսայում կազմակերպեցին հավատացյալների ցույց, լոզունգ հռչակելով պայքարել կրոնի իրավունքների վերականգնման համար։ 1959 թվականին Կոնիայում դերվիշական մեկի միաբանությունը անկարգություններ սարքեց։ Այդ նույն տարում Ակդենիզում ռեակցիոն մոլլաները հավատացյալներին կոչեցին «ուրացողների» դեմ, որի հետևանքով 14 մարդ վիրավորվեց։

Առաջադիմական ուղղության շատ թերթեր և հանդեսներ կրոնական աղանդներից ու միաբանություններից սկսեցին ստանալ նամակներ, որոնցում սպառնում էին դատաստան տեսնել «հավատուրացության» համար։ Երկրում երևան եկավ մեծ թվով կրոնական գրականություն, որը տարածվում էր բնակչության մեջ և կոչեր էր պարունակում ուժեղացնել կրոնի դերը, հրաժարվել լաիցիզմի սկզբունքից և նույնիսկ վերականգնել սուլթանությունը։ Այսպիսի գրականության



մեջ հաճախ քարոզվում էին նաև պանթյուրքիստական գաղափարներ։

Թուրք հոգևորականության ղեկավարներն ավելի ու ավելի հաստատակամորեն էին դնում երկրում խալիֆաթը վերականգնելու, իսլամը պետական կրոնի վերածելու հարցը։

Սակայն դեմոկրատական կուսակցության ռեակցիոն ներքին քաղաքականությունը չվախեցրեց երկրի առաջադեմ ուժերին։ Ստանալով ամբողջ աշխարհի դեմոկրատական հասարակայնության աջակցությունը, նրանք կարողացան բանտից ազատել տալ հրաշալի բանաստեղծ-հեղափոխական Նազիմ Հիքմեթին։

Ակտիվացավ բանվորական և արհմիութենական շարժումը։ Շատ քաղաքներում երևան եկան թռուցիկներ, որոնցում կոչ էր արվում կազմակերպել ՆԱՏՕ-ի մեջ Թուրքիայի մտնելու դեմ պայքարի համաժողովրդական ճակատ։ 1951 թվականի մայիսին տեղի ունեցավ Ստամբուլի տեքստիլագործների համագումար, որը կառավարությունից պահանջեց վճռական միջոցներ ձեռք առնել թանկության և գործազրկության դեմ (միայն Ստամբուլում և նրա արվարձաններում 1951 թվականի սկզբին կար մոտ 100 հազար գործազուրկ)։

1951—1956 թվականներին գործադուլ արեցին Անկարայի, Իզմիրի, Մերսինի, Իսքենդերունի և մյուս քաղաքների բանվորները։ Գործադուլավորները հասան իրենց կենսապայմանների բարելավման։ Ստամբուլի բանվորների արհմիության միավորման կոնֆերանսը, որ տեղի ունեցավ 1955 թվականին, պահանջեց թույլատրել ստեղծելու կառավարությունից անկախ արհմիություններ և գործադուլի իրավունք տալ։

Ուժեղացավ նաև գյուղացիական շարժումը։ 1950—1953 թվականներին ծավալվեց գյուղացիների և պատժիչ ջոկատների ընդհարումների ալիքը։ Ամենամեծ ընդհարումները տեղի ունեցան Անկարայի, Ղարսի, Ադանայի, Դենիզլիի, Իզմիրի և Բուրսայի վիլայեթներում։ Գյուղացիները խլում ու հերկում

էին կալվածատերերի հողերը, զենքով պաշտպանում իրենց իրավունքները։ Արձանագրվեցին կալվածատերերի անասունները լեռներ քշելու, հարկերը վճարելուց հրաժարվելու և կառավարության միջոցառումներին դիմադրելու հազարավոր դեպքեր։ Իշխանությունները ուժեղացրին պատիժները։ Թուրքիայի բանտերում 1950—1951 թվականներին տառապեցին ավելի քան 200 հազար գյուղացիներ, որոնք դատապարտվել էին հասարակական կարգը խանգարելու համար։

1953 թվականի հոկտեմբերին հակադեմոկրատական օրենքների հիման վրա տարբեր ժամկետներով բանտարկվեց 167 մարդ։ 1954 թվականին զինվորական տրիբունալը դատապարտեց խաղաղության ևս 17 կողմնակից, մեղադրելով հայրենիքին դավաճանելու մեջ։ Այդ նույն տարում լրացվեց մամուլի մասին օրենքը, որը արգելում էր հրապարակել ամեն մի հոդված, եթե այն անհանգստություն է առաջացնում բնակչության մեջ կամ վնաս է հասցնում պետության հեղինակությանը։

1954 թվականի մայիսին կայացան Մեջլիսի հերթական ընտրությունները։ Մեծ թվով ընտրողներ բոյկոտի ենթարկեցին ընտրությունները։ Դեմոկրատական կուսակցությունը, օգտագործելով իշխանության գլուխ իր գտնվելը, 541 մանդատից ստացավ 504-ը։ Այնուամենայնիվ, ընտրությունները ցույց տվեցին, որ կուսակցությունը կորցնում է իր ազդեցությունը ո՛չ միայն աշխատավորների, այլև մանր ու միջին բուրժուազիայի մեջ։

Իշխանության համար պայքարն ուժեղացրին բուրժուական կուսակցությունները, հատկապես ժողովրդա-հանրապետական կուսակցությունը։ Աշխատելով իրենց կողմը գրավել աշխատավորական մասսաներին, այսինքն՝ ընտրողների մեծամասնությանը, նրանք խիստ քննադատում էին առաջին անհրաժեշտության ապրանքների գների աճը, լուսավորության և առողջապահության գործի աղետալի վիճակը, պետական ապարատում և կառավարող կուսակցության վերնախավում բույն դրած կաշառակերությունը։ Օպոզիցիոն կուսակցությունները պահանջում էին Թուրքիայի ազգային մեծ ժողովում



մտցնել ներկայացուցչության համամասնական սիստեմ, հիմնել երկրորդ պալատ, համալսարանների ավտոնոմիայի և դատարանների անկախության ապահովում, գերագույն վճռաբեկ դատարանի ստեղծում, բանվորներին գործադուլ անելու իրավունք և այլն։

Դեմոկրատական կուսակցության հակաժողովրդական ներքին քաղաքականությունը թուլացրեց նրա դիրքերը երկրում և ուժեղացրեց օպոզիցիայի ազդեցությունը։ Այդ մասին էին վկայում Մեջլիսի արտահերթ ընտրությունները 1957 թվականին, որի ժամանակ կառավարող կուսակցությունն ստացավ ձայների 48 տոկոսը։ Սակայն մաժորիտար սիստեմը դեմոկրատական կուսակցության համար ապահովեց 424 դեպուտատական տեղ՝ 610-ից։ Դեմոկրատական կուսակցության ներքին ճգնաժամի վկայությունն էին նաև նրա նախկին անդամների կողմից կազմակերպված նոր կուսակցությունները (ազգային, գյուղացիական, ազատության), կուսակցության պառլամենտական ֆրակցիայի ներսում օպոզիցիայի առաջացումը, մինիստրների հրաժարականները և այլն։

1957 թվականի դեկտեմբերին կառավարությունն արգելեց 1957 թվականի ամռանը ստեղծված հայրենիքի կուսակցությունը, ձերբակալելով նրա 48 ղեկավար աշխատողների։ Կուսակցության ղեկավարն էր թուրքական բանվորական շարժման նշանավոր գործիչ Հիքմեթ Քիվիլջիմը։ Հայրենիքի կուսակցությունը հանդես էր գալիս ամերիկյան իմպերիալիզմի տիրապետության դեմ, հանուն Թուրքիայի անկախության։ Նա պահանջում էր ստեղծել ծանր ինդուստրիա, վերացնել ֆեոդալիզմի մնացուկները և օտարերկրյա կապիտալի տիրապետությունը, որը խոչընդոտ էր հանդիսանում երկրի տնտեսական առաջադիմության ճանապարհին։ Կուսակցությունը հանդես էր գալիս անհապաղ ագրարային ռեֆորմ անցկացնելու և գյուղացիներին հողով, սերմացուով և քարշող ուժով ձրի ապահովելու օգտին։ Նա պայքարում էր բանվորների աշխատանքի և կյանքի պայմանների բարելավման համար, անկախ արհմիությունների ստեղծման և աշխատանքային համաձայնագրերի կնքման, ինչպես նաև

աշխատանքի և ութժամյա աշխատանքային օրվա մասին օրենքը ամբողջ թուրք պրոլետարիատի վրա տարածելու համար։ Արտաքին քաղաքականության ասպարեզում հայրենիքի կուսակցությունը կանգնած էր բոլոր երկրների հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու կողմը։

Թուրքական իշխանությունները չկարողացան ռեակցիոն միջոցներով խլացնել ժողովրդի դժգոհությունը։ 1957—1960 թվականներին երկրով մեկ տարածվեց գործադուլների ալիքը, որը վկայում էր Թուրքիայի բանվոր դասակարգի գիտակցության և կազմակերպվածության աճման մասին։

1958 թվականի սեպտեմբերին Մենդերեսը հանդես եկավ այսպես կոչված հայրենական ճակատի ստեղծման պլանով, որի մեջ նախատեսվում էր ուժով ներգրավել բնակչության զանազան խավերը։ Դեմոկրատական կուսակցության ղեկավարությունը նկատի ուներ այդ կազմակերպությունը ձուլել կուսակցության հետ և այդպիսով ընդլայնել իր ազդեցությունը։ Սակայն արդեն ոչ մի բան չէր կարող կանգնեցնել կառավարող կուսակցության թուլացման պրոցեսը։

Այդ պրոցեսն ուղեկցվում էր օպոզիցիոն բուրժուական կուսակցությունների աճումով։ 1958 թվականի հոկտեմբերին հանրապետական-ազգային (նախկին ազգային) և գյուղացիական կուսակցությունների միացման հետևանքով ստեղծվեց հանրապետական-գյուղացիական ազգային կուսակցություն։ Միաժամանակ ժողովրդա-հանրապետական կուսակցության մեջ մտավ ազատության կուսակցությունը։

Իր կառավարման ժամանակամիջոցում դեմոկրատական կուսակցությունը վարում էր հակաազգային արտաքին քաղաքականություն, որը նրա հակաժողովրդական ներքին քաղաքականության շարունակությունն էր։

Մենդերեսի կառավարությունն իշխանության գլուխ անցնելուց հետո երկու ամիս էլ չէր անցել, երբ նա առանց Մեջլիսի գիտության ու համաձայնության որոշում ընդունեց մասնակցել Կորեայի Ժողովրդա-Դեմոկրատական Հանրապետության դեմ ԱՄՆ-ի սկսած ագրեսիային։ Թուրքիան Կորեա



ուղարկեց ընդամենը ավելի քան 20 հազար զինվոր, որոնցից շատերը սպանվեցին և վիրավորվեցին, ինչպես և գերի վերցվեցին։ Չնայած զինադադարի կնքմանը, Մենդերեսի կառավարությունը շարունակում էր ամեն տարի թարմացնել Հարավային Կորեայում իր մնացած զորքերի կազմը։

1950 թվականի աշնանը Թուրքիան ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի հետ միասին հանդես եկավ «միջինարևելյան հրամանատարության» ստեղծման պլանով, որն ուղղված էր Մերձավոր և Միջին արևելքի խաղաղության ու անվտանգության դեմ։ 1952 թվականի փետրվարի 18-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովը որոշում ընդունեց ՆԱՏՕ-ի մեջ Թուրքիայի մտնելու մասին։ Այնուհետև Թուրքիան ակտիվ մասնակցություն ցույց տվեց Մերձավոր ու Միջին արևելքում ագրեսիվ ռազմական բլոկ ստեղծելուն։ 1954 թվականի ապրիլի 2-ին Թուրքիան ռազմական դաշինք կնքեց Պակիստանի հետ։ 1955 թվականի փետրվարի 24-ին նա այդպիսի մի դաշինք էլ կնքեց Իրաքի հետ։ 1955 թվականի ապրիլին թուրք-իրաքյան բլոկի մեջ մտավ Անգլիան։ Նույն թվականի սեպտեմբերին դրան միացան Պակիստանն ու Իրանը։ Նոյեմբերին վերոհիշյալ պետությունների կառավարությունների ղեկավարները և արտաքին գործերի մինիստրները հրապարակեցին հայտարարություն Բաղդադի պակտի կազմակերպման մասին, որը ՆԱՏՕ-ի Մերձավորարևելյան ֆիլիալն էր[1]։

1956 թվականին թուրքական կառավարող շրջանները աջակցեցին անգլո-ֆրանս-իսրայելյան ագրեսորներին՝ Եգիպտոսի դեմ նրանց պատերազմում։ 1957 թվականի աշնանը Մենդերեսի կառավարությունը Սիրիայի սահմանագլխին կենտրոնացրեց թուրքական զորքեր, որպեսզի նրան ստիպի դառնալ Բաղդադի պակտի անդամ։ Նույնիսկ բուրժուական օպոզիցիոն մի քանի կուսակցություններ, որոնք առաջ ակտիվորեն աջակցում էին դեմոկրատական կուսակցության ար-

[1] Բաղդադի պակտից Իրաքի դուրս գալուց հետո (1959 թ. հունվար) այդ պակտը վերանվանվեց ՍԵՆՏՕ (կենտրոնական պայմանագրի կազմակերպություն)։

տաքին քաղաքականությանը, քննադատեցին Մենդերեսի կառավարության հակաազգային միջոցառումները։

1958 թվականի ամռանը Թուրքիան աջակցեց Լիբանանի և Հորդանանի դեմ անգլո-ամերիկյան ինտերվենցիային։ Ամերիկյան ռազմա-օդային ուժերն օգտագործեցին Ինջիրլիքի (Ադանա)[1] ռազմա-օդային բազան՝ Արևմտյան Գերմանիայից Բեյրութ զորք տեղափոխելու համար։ Թուրքիայի կառավարությունը նաև պատրաստվում էր ԱՄՆ-ին և Անգլիային օգնություն ցույց տալ Իրաքի Հանրապետության դեմ ինտերվենցիա կատարելու գործում։ Սակայն այդ պլանները ձախողվեցին սոցիալիզմի երկրների և մյուս խաղաղասեր պետությունների ջանքերով։

1959 թվականի հոկտեմբերին կնքվեց ամերիկա-թուրքական համաձայնագիր՝ Թուրքիայի տերիտորիայում ՆԱՏՕ-ի հրթիռային բազաներ տեղադրելու մասին։ Եվրոպայի հարավ-արևելյան գոտում ՆԱՏՕ-ի ցամաքային ուժերի շտաբի տրամադրության տակ դրվեց (շտաբը գտնվում էր Իզմիրում) թուրքական 12 դիվիզիա (մոտ 200 հազար զինվոր)։ Թուրքական կառավարությունը ամերիկյան կառավարության հետ կնքեց մի քանի պայմանագրեր, որոնք նախատեսում էին թուրքական բանակը սպառազինել ռազմական տեխնիկայով, ուժեղացնել նրա շարժունակությունը, կառուցել ռազմա-ծովային բազաներ, օդանավակայաններ, երկաթուղիներ և խճուղային ճանապարհներ, ինչպես նաև սովորեցնել ու վերապատրաստել սպայական կազմը։

Երկրի ռազմականացման վրա կատարվող հսկայական ծախսերը ծանր բեռի նման ընկած էին թուրքական հարկատուների վրա։ Դեմոկրատական կուսակցության կառավարման ժամանակաշրջանում հարկերի միջին տարեկան աճը կազմում էր մոտ 26 տոկոս։ Բյուջեի խրոնիկական դեֆիցիտի հետևանքով ավելանում էր պետական պարտքը։ 1960 թվականի սկզբին երկրի արտաքին պարտքը կազմում էր 12 մի-

[1] Ամերիկյան «Ու-2» լրտեսական ինքնաթիռը, որը 1960 թվականի մայիսի 1-ին խփվեց Սվերդլովսկի շրջանում, բարձրացել էր այդ բազայից։



լիարդ լիրա, իսկ ներքինը՝ 7 միլիարդ։ Մենդերեսի կառավարությունը հարկադրված էր նոր փոխառություններ խնդրել պարտքերի տոկոսները վճարելու համար։ Թուրքիան դաշնակից երկրներում գրավ էր դրել 102 տոննա ոսկի։

Փարիզի 1959 թվականի համաձայնագրին համապատասխան Թուրքիան պարտավորվել էր 12 տարվա ընթացքում իր վարկատուներին վճարել 440 միլիոն դոլլար, չհաշված տոկոսները։ Թուրքական տնտեսագետների հաշվումների համաձայն այդ պարտքը երկիրը կարող է մարել միայն 120 տարուց հետո։

Երկրի ֆինանսական վիճակի վատացման հետ միաժամանակ շարունակ աճում էին ապրանքների ու սննդամթերքների գները։ Բանվորների ամսական միջին աշխատավարձը 1957 թվականին կազմեց 206 լիրա, իսկ հինգ մարդուց բաղկացած ընտանիքի կիսաքաղց ապրուստի մինիմումի համար հարկավոր էր 635 լիրա։ Տարեցտարի աճում էր գործազրկությունը։ 1960 թվականի սկզբին գործազուրկների թիվը հասավ 600 հազարի։

Մենդերեսի կառավարությունը արտաքին քաղաքականության մեջ վարում էր հակասովետական կուրս։ Երկու երկրների հարաբերությունները լավացնելու վերաբերյալ Սովետական Միության բազմաթիվ առաջարկությունները հանդիպում էին թուրքական կառավարողների դիմադրությանը։

Դեմոկրատական կուսակցության արտաքին քաղաքականությունը չէր համապատասխանում Թուրքիայի ազգային շահերին, մի հանգամանք, որը իր հերթին ներքաղաքական իրադրության հետագա սրման պատճառներից մեկն էր։

1960 թվականի սկիզբը աչքի ընկավ բուռն իրադարձություններով, որ դեմոկրատական կուսակցության հակաժողովրդական քաղաքականության հետևանք էր։

Ռազմական ծախսերի անզուսպ աճի հետևանքով առաջացած տնտեսական դրության հետագա վատթարացումը առաջացրեց բնակչության գրեթե բոլոր խավերի սուր դժգո-

հությունը։ Թուրքական մամուլում լույս էին տեսնում կառավարող շրջանների քաղաքականությունը քննադատող հոդվածներ։ Իր գործունեությունն ակտիվացրեց նաև օպոզիցիոն ժողովրդա-հանրապետական կուսակցությունը։

Միաժամանակ մոտենում էին Մեջլիսի հերթական ընտրությունները։ Դեմոկրատական կուսակցության լիդերները պարզ գիտակցում էին, որ ստեղծված հանգամանքներում նրանք անպայման պարտություն կկրեն, ուստի և որոշեցին անցկացնել արտահերթ ընտրություններ։ Սակայն օպոզիցիային շփոթության մեջ գցելու համար նրանք չնշանակեցին ընտրությունների ճիշտ ժամանակը։ Կառավարությունը միաժամանակ ուժեղացրեց ռեպրեսիաները։ Մի քանի թերթեր և հանդեսներ փակվեցին, շատ ժուռնալիստներ նետվեցին բանտերը։ Ծառայողների, բանվորների, ուսանողների, ինչպես և սպաների մեջ կատարվեցին ձերբակալություններ։

1960 թվականի փետրվարին Մեջլիսում պետական բյուջեն քննարկելիս ժողովրդա-հանրապետական կուսակցության պատգամավորները ելույթներ ունեցան՝ խիստ քննադատելով կառավարության քաղաքականությունը։ Նրանք դեմոկրատական կուսակցության լիդերներին մեղադրեցին կաշառակերության, սահմանադրությունն ու մարդու իրավունքները խախտելու մեջ և Մենդերեսի կառավարությունից պահանջեցին հրաժարական տալ։ Այդ պահից սկսած խիստ սրվեց երկու կուսակցությունների միջև մղվող պայքարը իշխանության համար։

Մենդերեսի գրասենյակը Թուրքիայի ազգային մեծ ժողովի նախագահությանը հղեց երկու գրություն Իսմեթ Ինենյուին և ժողովրդա-հանրապետական կուսակցության անդամ ութից տասը պատգամավորների պառլամենտական անձեռնմխելիությունից զրկելու մասին։ Այդ ժամանակ ժողովրդա-հանրապետական կուսակցությունը պահանջեց, որ Մեջլիսը քննարկի Իսմեթ Ինենյուի դեմ Ուշակում և Ստամբուլում 1959 թվականին մահափորձ կազմակերպելուն Ա. Մենդերեսի և Ն. Գեդիկի (ներքին գործերի մինիստր) մասնակցության հարցը։ 1960 թվականի ապրիլին ժողովրդա-հանրապետական կու-



սակցությունը որոշեց Մեջլիսում հարց բարձրացնել պառլամենտական հետաքննություն կատարել դեմոկրատական կուսակցության և կառավարության անօրինական գործողությունների կապակցությամբ։ Ի պատասխան, կառավարող կուսակցության մի քանի անդամներ պառլամենտական ֆրակցիայի նիստում պահանջեցին մահապատժի ենթարկել Իսմեթ Ինենյուին։

Ապրիլի 15-ին դեմոկրատական կուսակցության ֆրակցիան Թուրքիայի ազգային մեծ ժողովում բանաձև մտցրեց ժողովրդա-հանրապետական կուսակցության «քայքայիչ գործունեությունը» հետաքննելու համար պառլամենտական հանձնաժողով ստեղծելու մասին։ Ապրիլի 17-ին ժողովրդա-հանրապետական կուսակցությունը Մեջլիսում հրապարակեց մի բանաձև, որը պահանջում էր հետաքննել Մենդերեսի անօրինական գործողությունները և դատի տալ նրան։ Սակայն Մեջլիսը մերժեց այդ բանաձևը։ Թուրքիայի ազգային մեծ ժողովը ապրիլի 18-ին օրինականացրեց վերը նշված հանձնաժողովի ստեղծումը, որին հետագայում տրվեցին արտակարգ լիազորություններ։ Հանձնաժողովը շուտով որոշեց երեք ամսով արգելել օպոզիցիոն կուսակցությունների ժողովներն ու կոնգրեսները, ինչպես նաև նրանց թերթերում որևէ ինֆորմացիայի հրապարակումը, բացի Մեջլիսի և նրա հանձնաժողովների գործունեության մասին հաղորդումներ տպագրելուց։

Օպոզիցիայի դեմ կառավարող կուսակցության կիրառած ռեպրեսիաները հակակառավարական ցույցերի ալիք առաջացրին երկրի խոշոր քաղաքներում։ Միջկուսակցական պայքարին խառնվեց երիտասարդությունը, առաջին հերթին այն ուսանողությունը, որը հարում էր օպոզիցիային։

Ապրիլի 27-ին Ստամբուլի համալսարանի ուսանողները, որպես մասսայական ռեպրեսիաների դեմ ուղղված բողոքի նշան, համալսարանի դրոսայգում կազմակերպեցին միտինգ, որն անցավ «Կեցցե ազատությունը», «Մենդերես՛ս, հրաժարական տուր» լոզունգներով։ Ապրիլի 28-ին ուսանողները ցույցի դուրս եկան և ուղևորվեցին Բայազիդի հրապարակը»

Նրանք տանում էին Աթաթյուրքի դիմանկարները և անկախության քայլերգ երգում: Ոստիկանությունը գործադրեց արտասվաբեր գազեր և կրակ բացեց: Ընդհարման հետևանքով եղան սպանվածներ ու վիրավորներ, այդ թվում՝ բնակչության շարքերից, որոնք դուրս էին եկել ողջունելու ուսանողներին:

Ստամբուլում խաղաղ ցույցի գնդակոծումը ընդհանուր վրդովմունք առաջացրեց: Պրեզիդենտի և կառավարության հասցեով երկրի բոլոր ծայրերից սկսեցին ստացվել բազմաթիվ հեռագրեր, որոնք պահանջում էին դատական պատասխանատվության ենթարկել չարագործությունների համար մեղավորներին: Շարժումը տեղափոխվեց Անկարա: Ապրիլի 29-ին Անկարայի ուսանողները, ի նշան Ստամբուլի համալսարանի ուսանողների հետ համերաշխության, ցույցի դուրս եկան և միտինգ գումարեցին Կըզըլայ հրապարակում՝ Աթաթյուրքի արձանի մոտ: Ուսանողական ցույցեր եղան նաև Իզմիրում ու Բուրսայում: Մենդերեսի կառավարությունը ռազմական դրություն հայտարարեց Ստամբուլում և Անկարայում, արգելեց ժողովները, ցույցերը, ինչպես և տեղի ունեցած իրադրությունների մասին մամուլում որևէ հաղորդում հրապարակելը:

Աստիճանաբար շարժման մեջ մտան բնակչության մյուս խավերը:

Մենդերեսի ռեժիմը հատկապես մեծ դժգոհություն առաջացրեց երիտասարդ սպաների մեջ, որոնք հեղաշրջումից դեռ շատ առաջ կազմակերպեցին գաղտնի կոմիտե: Սա ներկայացուցիչներ ուներ առաջին, երկրորդ և երրորդ բանակներում և անլեգալ աշխատանք էր կատարում, նախապատրաստելով կառավարության տապալումը: Կոմիտեի ղեկավարությամբ Անկարայի զինվորական ուսումնարանի կուրսանտները 1960 թվականի մայիսի 7-ին կազմակերպեցին մի ազդու ցույց ի նշան ուսանողների հետ իրենց համերաշխության:

Շարժմանը բանակի մասնակցությունը խիստ վախեցրեց կառավարությանը: Նա որոշում ընդունեց բանակում զտում անցկացնելու և զինվորական ուսումնարանի այն կուրսանտներին պատժելու մասին, որոնք ցույց էին կազմակերպել:



Սակայն կառավարությանը չհաջողվեց կատարել իր մտադրությունները: Սպառնացող վտանգի կապակցությամբ կոմիտեն որոշում ընդունեց արագացնել պետական հեղաշրջման իրագործումը: Կոմիտեի հրամանով մայիսի 27-ի լուսաբացին Անկարայի և Ստամբուլի կայազորների զորամասերն սկսեցին գրավել կառավարական շենքերը և ձերբակալել կառավարության անդամներին, դեմոկրատական կուսակցության ղեկավարներին, աչքի ընկնող պատգամավորներին՝ Բայարի և Մենդերեսի գլխավորությամբ: Ամբողջ գործողությունն ավարտվեց երկու-երեք ժամվա ընթացքում:

Պետական հեղաշրջման հետևանքով 1960 թվականի մայիսի 27-ին իշխանության գլուխ անցավ ազգային միաբանության կոմիտեն՝ գեներալ Ջեմալ Գյուրսելի գլխավորությամբ: Ազգային միաբանության կոմիտեն իշխանության գլուխ մնաց 18 ամիս: Այդ ժամանակամիջոցում նա ընդունեց ավելի քան երկու հարյուր օրենք, որոնք վերաբերում էին երկրի տնտեսական, պետական և հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներին:

Կոմիտեն ստեղծեց ժամանակավոր կառավարություն Գյուրսելի գլխավորությամբ, ցրեց Թուրքիայի ազգային մեծ ժողովը, ստեղծեց բարձրագույն իրավաբանական հանձնաժողով, որին հանձնարարվեց կազմել նոր սահմանադրության նախագիծ, ինչպես և նախապատրաստել ընտրությունները:

1960 թվականի հունիսին ազգային միաբանության կոմիտեն ընդունեց օրենք՝ 1924 թվականի սահմանադրության մի քանի կետերը փոփոխելու և ժամանակավոր սահմանադրություն մշակելու մասին: Ժամանակավոր սահմանադրությանը համապատասխան կոմիտեն ստեղծեց բարձրագույն հետաքննչական հանձնաժողով և գերագույն դատարան[1]՝ Թուրքիայի նախկին կառավարողների կատարած հանցագործությունները հետաքննելու և նրանց դատելու համար:

---

1 Թուրքական նախկին ղեկավարների դատավարությունը տեղի ունեցավ Յասսըադա կղզում (Մարմարի ծովում) 1960 թվականի հոկտեմբերից մինչև 1961 թվականի սեպտեմբերը: Դատի էր տրված մոտ 590 մարդ: Դրանցից

Այդ նույն տարվա հուլիսին ազգային միասնության կոմիտեն որոշում ընդունեց քաղաքական կուսակցություններին արգելել կրոնն օգտագործել իրենց նպատակների համար, իսկ պաշտամունքի սպասավորներին արգելեց ռեակցիոն պրոպագանդա մղել։ Ազգային միասնության կոմիտեի մամուլի խմբի հատուկ հայտարարության մեջ նշվում էր, որ նոր ղեկավարությունը չի դիմի կրոնական գործիչների ծառայություններին և կոնտակտ չի պահպանի նրանց հետ։ Դրա հետ միասին մի շարք զինվորական գործիչների (այդ թվում՝ Ջ. Գյուրսելի) հայտարարություններում ընդգծվում էր, որ ոչ մի բռնի միջոցառում չի գործադրվի կրոնի նկատմամբ։

Ժամանակի ընթացքում ազգային միասնության կոմիտեում հստակորեն սահմանազատվեցին երկու խմբավորումներ՝ չափավոր (բարձրաստիճան սպաներ) և ռադիկալ-նացիոնալիստական (հիմնականում երիտասարդ սպաներ)։ Առաջին խումբը գտնում էր, որ տապալելով Մենդերեսի կառավարությունը, ազգային միասնության կոմիտեն պետք է իշխանությունն իսկույն հանձնի քաղաքական կուսակցություններին։ Այդ խմբի քաղաքական հայացքներն արմատական հարցերում չէին տարբերվում տապալված ղեկավարների դիրքից։ Երկրորդ խումբը պնդում էր, որ անհրաժեշտ է առաջին հերթին անցկացնել այնպիսի միջոցառումներ, որոնք նպաստեն երկրի տնտեսական ու սոցիալական առաջադիմությանը, ինչպես և ամրապնդեն նրա միջազգային դիրքը։ Դրա հետ միասին, երկրորդ խմբի առանձին անդամներին պատկերանում էին պատրանքները մեծ Թուրքիայի, որը միավորեր աշխարհի բոլոր թյուրքախոս ժողովուրդներին։

Նացիոնալիստական խմբի դիրքի թուլություններից մեկը դա էր, որովհետև այդպիսի քաղաքական պլատֆորմը չէր նպաստում նրա սոցիալական բազայի ընդլայնմանը։

Խմբերի միջև եղած տարաձայնություններն այնքան ուժեղ էին, որ կազմալուծեցին ազգային միասնության կոմիտեի աշխատանքը։

ծրերը մահապատժի ենթարկվեցին, 461-ը բանտարկության դատապարտվեցին տարբեր ժամկետներով, մյուսներն արդարացվեցին։



Այդ պայմաններում, չափավորների պնդմամբ, 1960 թվականի նոյեմբերին պետության ու կառավարության ղեկավար Գյուրսելը կոմիտեի կազմից հանեց 14 անդամի՝ արմատական ռեֆորմների կողմնակիցներին։ Թեև ազգային միասնության կոմիտեի անդամները քանիցս հայտարարել էին, թե կոմիտեն նախապատվություն չի տա քաղաքական կուսակցություններից ոչ մեկին, բայց վերականգնումը ձեռնարկվեց ի հաճույս ժողովրդա-հանրապետական կուսակցության ղեկավարության, որը արտահայտում էր գլխավորապես խոշոր բուրժուազիայի և կալվածատերերի շահերը։

1960 թվականի դեկտեմբերին ազգային միասնության կոմիտեն օրենք ընդունեց սահմանադիր ժողովի ստեղծման մասին, որ կազմվեց ազգային միասնության կոմիտեից (ԱՄԿ) ու ներկայացուցիչների պալատից և իր աշխատանքներն սկսեց 1961 թվականի հունվարին։ Սահմանադիր ժողովի խնդիրն էր գլխավորապես սահմանադրության և ընտրական օրենքի մշակումը։

1961 թվականի սկզբին հասարակայնության ճնշման տակ թուրքական իշխանությունները թույլատրեցին ստեղծել քաղաքական նոր կուսակցություններ։ Մինչ այդ լեգալ պայմաններում գործում էին փաստորեն միայն երկու կուսակցություն՝ ժողովրդա-հանրապետական (ԺՀԿ) և հանրապետական գյուղացիական-ազգային (ՀԳԱԿ)։ Դեմոկրատական կուսակցությունն արգելվել էր 1960 թվականի սեպտեմբերին։ Կարճ ժամանակամիջոցում քաղաքական կուսակցությունների թիվը հասավ 20-ի։ Դրանց մեջ առավել ակտիվ էին արդարության կուսակցությունը (ԱԿ) և նոր Թուրքիայի կուսակցությունը (ՆԹԿ)[1]։

[1] Բոլոր բուրժուական կուսակցությունների ծրագրերը հիմնված էին «քեմալիզմի» սկզբունքների վրա, որոնք նկատի ունեն ստեղծել «ազգային միասնության և եղբայրության» վրա հենված պետություն։ Այդ կուսակցությունները տնտեսական զարգացման հիմքը համարում էին մասնավոր ձեռնարկատիրությունը։ Ամբողջովին չժխտելով էտատիզմի սկզբունքները, բուրժուական կուսակցություններն այն ենթարկում են մասնավոր ձեռնարկատիրության շահերի պաշտպանությանը։ Դրա հետ միասին այդ կուսակցու-

1961 թվականի մայիսի 27-ին ազգային միասնության կոմիտեն ընդունեց նոր սահմանադրություն, որը ուժի մեջ մտավ նույն թվականի հուլիսի 9-ի հանրաքվեից հետո։

1924 թվականի սահմանադրությունից այս սահմանադրության հիմնական տարբերությունն արտահայտվում էր գործադիր իշխանության ուժեղացման, Թուրքիայի ազգային մեծ ժողովի կառուցվածքի փոփոխման և սահմանադրական դատարանի ստեղծման մեջ։ Նոր սահմանադրությամբ ստեղծվում է երկպալատային ազգային մեծ ժողով, որը բաղկացած է ազգային պալատից ու սենատից։

1961 թվականի հոկտեմբերին տեղի ունեցան Թուրքիայի ազգային մեծ ժողովի ընտրությունները։ Ազգային պալատում ընտրվեց 450 պատգամավոր, իսկ սենատում՝ 150։ Բացի այդ, սենատում «ցմահ սենատորներ» մտան ազգային միասնության կոմիտեի 21 անդամ և 15 մարդ էլ՝ պրեզիդենտի նշանակմամբ։ Ըստ ընտրական օրենքի, ընտրություններին կարող էին մասնակցել միայն չորս կուսակցություն՝ ժողովրդա-հանրապետական, հանրապետական գյուղացիական-ազգային, արդարության և նոր Թուրքիայի։ Ընտրությունների վերջում արդարության կուսակցությունն ստացավ սենատում 70 տեղ, ազգային պալատում՝ 158, ժողովրդա-հանրապետական կուսակցությունը՝ համապատասխանաբար 36 և 173, նոր Թուրքիայինը՝ 28 և 65, հանրապետական գյուղացիական-ազգայինը՝ 16 և 54 տեղեր։ Իրագործելով խոստացած ընտրությունները և իր անդամների համար ապահովելով ցմահ տեղեր սենատում, ազգային միասնության կոմիտեն 1961 թվականի հոկտեմբերի 24-ին որոշում ընդունեց ինքնարձակման մասին։ Երկու օր անց Թուրքիայի ազգային

---

թյունները հանդես են գալիս օտարերկրյա կապիտալի ներդրման օգտին։ Էլ ավելի նման են բուրժուական կուսակցությունների արտաքին քաղաքական ծրագրերը։ Նրանք բոլորը կողմնակից են արևմտյան տերությունների հետ դաշնակցելուն, ՆԱՏՕ և ՍԵՆՏՕ ագրեսիվ բլոկներին մասնակցելուն։

Արդարության կուսակցության մեջ մտան արգելված դեմոկրատական կուսակցության շատ անդամներ։



մեծ ժողովը Ջեմալ Գյուրսելին ընտրեց հանրապետության պրեզիդենտ։

Քանի որ կուսակցություններից ոչ մեկը բացարձակ մեծամասնություն չստացավ Մեջլիսում, Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ ստեղծվեց կոալիցիոն կառավարություն։ Նրա մեջ հավասարության հիմունքներով մտան ժողովրդա-հանրապետական և արդարության կուսակցությունների ներկայացուցիչները։ Պրեմիեր-մինիստր դարձավ ժողովրդա-հանրապետական կուսակցության լիդեր Իսմեթ Ինենյուն։ Սակայն կառավարությունն անընդունակ գտնվեց լուծելու սոցիալ-տնտեսական անհետաձգելի շատ պրոբլեմներ։ Դրա հետևանքով քաղաքական դրությունը երկրում էլ ավելի լարվեց։

1962 թվականի փետրվարի 22-ի երեկոյան Անկարայի ռազմական ուսումնարանի կուրսանտները, որոնք ակտիվ դեր էին խաղացել Բայար-Մենդերեսի ռեժիմի տապալման գործում, ինչպես նաև տանկային ուսումնարանի և ժանդարմական սպաների դպրոցի կուրսանտները իրենց հրամանատարների հրամանով շրջապատեցին Մեջլիսի շենքը, պրեզիդենտի պալատը Չանկայայում և կառավարական ռադիոկայանը։ Ապստամբությանը մասնակցեց մոտ 8 հազար մարդ, այդ թվում՝ 500 սպա։ Դրանց ղեկավարն էր Անկարայի ռազմական ուսումնարանի պետ, գնդապետ Թալաթ Այդեմիրը։ Սակայն լուսաբացին Անկարա մտան կառավարությանը հավատարիմ զորքերը, և խռովարարները առանց մի կրակոցի հանձնվեցին։

Փետրվարի 22-ի շարժումը, որը հայրենասիրական ուժերի խիստ դժգոհության դրսևորման ձևերից մեկն էր, հետևանք էր այն բանի, որ թուրքական կառավարող շրջաններն անընդունակ էին զբաղվելու կարևորագույն պրոբլեմներով, որոնց լուծումը կնպաստեր երկրի սոցիալական առաջադիմությանը։

1962 թվականի մայիսի վերջին առաջին կոալիցիոն կառավարությունը հրաժարական տվեց և ժողովրդա-հանրապետական ու արդարության կուսակցությունների կոալիցիան

տապալվեց։ Մոտ մեկ ամիս շարունակվեց կառավարական ճգնաժամը։ Միայն բանակի բարձրագույն շրջանների եռանդուն միջամտության շնորհիվ, բանակ, որը ընտրություններից հետո էլ մնում էր երկրի ղեկավար ուժը, ստեղծվեց Իսմեթ Ինոնյուի երկրորդ կոալիցիոն կառավարությունը։ Նոր կաբինետի մեջ մտան ժողովրդա-հանրապետական կուսակցության 12, Նոր Թուրքիայի կուսակցության 6, Հանրապետական գյուղացիական-ազգային կուսակցության 4 և մեկ անկախ ներկայացուցիչներ։ Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը ղեկավար դիրք գրավեց կառավարության մեջ։

Երկրորդ կոալիցիոն կառավարության ծրագիրը պարունակում է երկրի հրատապ պրոբլեմների լուծման անորոշ խոստումներ։

Արտաքին քաղաքականության ասպարեզում կառավարությունը մտադիր էր լիովին հետևել նախկին կաբինետի կուրսին։ Չնայած ֆինանսների ծանր վիճակին, կառավարությունը ո՛չ միայն չէր պատրաստվում կրճատել վիթխարի ռազմական ծախսերը, այլ, ընդհակառակը, խոստացավ շարունակել բանակի վերակառուցումը՝ ժամանակակից պատերազմի պահանջների ոգով։

1962 թվականի հոկտեմբերին, հակառակ առաջացած հասարակայնության խիստ բողոքներին, սենատը արդարության կուսակցության ճնշման տակ հավանություն տվեց մենդերեսյան ռեժիմի գործիչներին մասնակի ներում շնորհելու կառավարական օրինագծին։ Ներման ենթակա էին ընդամենը 258 մարդ (461-ից), որոնք տարբեր ժամկետներով պատիժ էին կրել։ Հասնելով մասնակի ներման, արդարության կուսակցությունը 1963 թվականի սկզբին ուժեղացրեց Յասըադայում դատապարտվածների հերթական խմբի ազատագրման համար սկսված կամպանիան։ Սակայն բուռն վիճաբանություններից հետո, 1963 թվականի փետրվարի 20-ին, ազգային պալատը մերժեց արդարության կուսակցության ներկայացուցիչների առաջարկած օրինագիծը՝ մենդերեսականներին լիովին արդարացնելու մասին։

Դրան զուգընթաց Թուրքիայի կառավարող շրջանները



ձեռք առան միջոցներ, որոնք, նրանց կարծիքով, պետք է թուլացնեին երկրում եղած դժգոհությունը։ 1963 թվականի փետրվարի 24-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովը հավանություն տվեց ներման օրենքին։ Ենթադրվում էր ազատել մոտ 10 հազար մարդ։ Օրենքը տարածվում էր դեմոկրատական կուսակցության կառավարման ժամանակ «ավարական» հանցանք գործած և բանտարկության դատապարտված անձանց վրա, բայց դա չէր տարածվում այն մարդկանց վրա, ովքեր ձերբակալվել էին կոմունիստական գործունեության մեջ մեղադրանքով։

Դրա հետ միասին ռեակցիայի ճնշման տակ երկրորդ կոալիցիոն կառավարությունը փորձ արեց բանտից ազատել նախկին պրեզիդենտ Ջ. Բայարին։ Բժշկական հատուկ հանձնաժողովը ղեկուցագիր կազմեց Բայարի հիվանդության մասին, և նա մարտի 22-ին ժամանակավորապես (վեց ամսով) ազատ արձակվեց Կայսերիի բանտից։ Սակայն հասարակայնության, մանավանդ երիտասարդության ճնշման տակ, ինչպես նաև տապալված ռեժիմի կողմնակիցների գործունեության ակտիվացումից վախեցած, թուրքական իշխանությունները հարկադրված եղան նորից կալանքի վերցնել Բայարին (հետագայում Ջ. Բայարը վատառողջության պատճառով, այնուամենայնիվ, ազատվեց)։

1963 թվականի մայիսի կեսերին քաղաքական իրադրությունը Թուրքիայում նորից սկսեց սրվել։

Մայիսի 20-ի ուշ երեկոյան Անկարայում մի անգամ ևս զինվորական հեղաշրջման փորձ կատարվեց։ Խռովությանը մասնակցեցին Անկարայի ռազմական ուսումնարանի կուրսանտները և մի քանի զորամասեր։ Ապստամբների գլուխ նորից կանգնեց գնդապետ Թալաթ Այդեմիրը, որը պաշտոնաթող էր արվել 1962 թվականի փետրվարին՝ կառավարությունը տապալելու անհաջող փորձից հետո։ Գրավելով ռադիոկայանը, Այդեմիրը բնակչությանը դիմեց մի կոչով, որում հայտարարում էր, թե զինված ուժերը որոշեցին գործել, որովհետև ներկայիս ռեժիմը Թուրքիային շեղել է Աթաթյուրքի ուղուց։ Խռովարարները հայտարարեցին Ազգային մեծ ժո-

ղովի երկու պալատներն արձակելու և քաղաքական կուսակցությունները վերացնելու մասին։ Ապստամբների դեմ կառավարությունը դուրս բերեց տանկեր։ Մայիսի 21-ի ապստամբական դիմադրությունը կոտրվեց։ Խռովությունը ճնշելով, իշխանությունները ձերբակալեցին 1600 մարդ։ Դատական պրոցեսի հետևանքով դրանցից երկուսը (Այդեմիրը և Գյուրջանը) մահապատժի ենթարկվեցին, մի քանի հարյուր մարդ դատապարտվեցին տարբեր ժամկետներով բանտարկության։

1963 թվականի նոյեմբերի 17-ին կայացան մունիցիպալ ընտրություններ, որոնց ժամանակ հաղթանակ տարավ արդարության կուսակցությունը, որը ստացավ ձայների գրեթե կեսը։ Իշխանության գլուխ կանգնած կուսակցությունները (ԺՀԿ-ն, ՀԳԱԿ-ն, ՆԹԿ-ն) կորցրին ավելի քան 2 միլիոն ձայն։ Առանձնապես խոշոր պարտություն կրեցին Հանրապետական գյուղացիական-ազգային և Նոր Թուրքիայի կուսակցությունները, որը վկայում էր երկրում նրանց դիրքերի խիստ թուլացման մասին։ Ընտրություններից հետո այդ կուսակցությունների ներկայացուցիչները դուրս եկան կառավարությունից, մի բան, որը հանգեցրեց կառավարական ճգնաժամի։ 1963 թվականի դեկտեմբերին կազմվեց երրորդ կառավարությունը Իսմեթ Ինոնյուի գլխավորությամբ։ Նրա մեջ, ժողովրդա-հանրապետական կուսակցության անդամներից բացի, մտան մի քանի «անկախներ»։ Այսպիսով, 1961 թվականի ընտրություններից հետո առաջին անգամ ստեղծվեց ըստ էության միակուսակցական կառավարություն։

Նոր կառավարությունը պարտավորվեց հողաբաժին տալ հողազուրկ գյուղացիներին և չքավոր տնտեսությունների համար հնարավորություն ստեղծել հողը մշակելու համար։ Կառավարությունը խոստացավ մտցնել նոր, արդարացի հարկադրում և ազգային եկամտի բաշխում, ինչպես նաև փոփոխություններ մտցնել վարչական ապարատի կազմում, որը մեծ բողոքներ էր առաջացրել բնակչության մեջ։ Արտաքին քաղաքականության ասպարեզում կառավարությունը մտադիր էր շարունակել արևմուտքի տնտեսական, ռազմական և քաղաքական բլոկներին մասնակցելու հին քաղաքականությունը։



Կառավարության ծրագրում Թուրքիայի և Սովետական Միության հարաբերությունների մասին ասված էր, որ դրանք աստիճանաբար զարգանում են գոյություն ունեցող միջազգային պարտավորությունների և փոխադարձ հարգանքի ու բարիդրացիության շրջանակներում։

Կառավարությունը չկատարեց ներքին պրոբլեմներին վերաբերող իր խոստումներից և ոչ մեկը։

Կարևոր իրադարձություն էին սենատի մասնակի ընտրությունները, որ տեղի ունեցան 1964 թվականի հունիսի 7-ին։ Օրենքին համապատասխան, ընտրություններին կարողացան մասնակցել քաղաքական չորս կուսակցություններ (ԺՀԿ-ն, ԱԿ-ն, ՆԹԿ-ն, ՀԳԱԿ-ն)։ Ընտրությունները անցան ընտրողների չափազանց պասսիվության պայմաններում. դրանց մասնակցեց ընտրողների 60 տոկոսը։ Ընտրությունների հետևանքով արդարության կուսակցությունն ստացավ 31 տեղ, ժողովրդական-հանրապետականը՝ 19, «անկախները»՝ 1, Նոր Թուրքիայի և Հանրապետական գյուղացիական-ազգային կուսակցությունները ոչ մի տեղ չստացան։

1961 թվականի ընտրություններից հետո Հանրապետական գյուղացիական-ազգային կուսակցությունում կատարված պառակտման և 1962 թ. հունիսին ազգային կուսակցության (ԱԿ) առաջացման, «անկախ» սենատորների և պատգամավորների մի մասը զանազան կուսակցությունների մեջ անցնելու, ինչպես նաև սենատի մասնակի ընտրությունների (1964 թ. հունիսի 7) հետևանքով փոխվեց տեղերի բաշխումը Թուրքիայի ազգային մեծ ժողովում։ 1964 թվականի նոյեմբերի սկզբին տեղերը բաշխված էին հետևյալ կերպ։

| | ԺՀԿ | ԱԿ | ՆԹԿ | ՀԳԱԿ | ՆԿ | ԹԲԿ* | «Անկախներ» | Թափուր տեղեր |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ազգային պալատ . . | 191 | 168 | 29 | 20 | 13 | — | 17 | 12 |
| Սենատ . . | 45 | 77 | 9 | 3 | 3 | 1 | 56 | 1 |
| Ընդամենը . | 236 | 245 | 38 | 23 | 16 | 1 | 73 | 13 |

Ինչպես ցույց են տալիս բերված տվյալները, առաջին տեղը գրավում էր արդարության, երկրորդը՝ ժողովրդա-

* Թուրքիայի բանվորական կուսակցություն։

հանրապետական կուսակցությունը։ Այսպիսով, կառավարության դրությունը Մեջլիսում ամենևին էլ կայուն չէր։ Դրանով էլ մեծ չափով բացատրվում էր իրադրության սրումը երկրում, նորմալ կերպով աշխատելու համար կառավարության անընդունակությունը։

Երկրի առջև ծառացած սոցիալ-տնտեսական կարևորագույն պրոբլեմների լուծումը մեծ չափով կախված է Թուրքիայի կառավարող շրջանների արտաքին քաղաքական կուրսից։

1960 թվականին Թուրքիայում կատարված հեղաշրջումից հետո ռեալ պայմաններ կային նախկին արտասովոր արտաքին քաղաքական կուրսից հրաժարվելու համար։ Սակայն տեղական ռեակցիան, իմպերիալիստական արտաքին ուժերի աջակցությամբ, արգելք էր հանդիսանում դրան։

1960 թվականի հունիսի սկզբին Ջ. Գյուրսելը Անկարայում ընդունեց ՍԵՆՏՕ-ի մշտական ներկայացուցիչներին և հայտարարեց, որ Թուրքիան, հանդիսանալով ՍԵՆՏՕ-ի և ՆԱՏՕ-ի անդամներից մեկը, նոր ռեժիմի օրոք էլ ավելի օգտակար կլինի իր դաշնակիցներին։ Որոշ ժամանակ անց նա ընդգծեց, որ եթե պատշաճ կերպով խորամուխ լինենք այն դրությանը, ինչ գոյություն ուներ Թուրքիայում առաջ, ապա պարզ կլինի, որ մենք շատ բան ենք արել ՆԱՏՕ-ի համար։

Այդ քաղաքականության հետևանքով շարունակվեց երկրի ռազմականացումը, Թուրքիայի տերիտորիայում կառուցվեցին ամերիկյան հրթիռների արձակման հրապարակներ, ռազմական օդանավակայաններ, ռազմա-ծովային բազաներ և ռազմական այլ օբյեկտներ. բանակի թվաքանակը չկրճատվեց (արտասահմանյան մամուլի տվյալներով՝ Թուրքիան պահում է 500 հազարանոց բանակ)։ 1962 թվականին ԱՄՆ-ը ֆինանսավորում էր Թուրքիայում կառուցվող 54 ռազմական օբյեկտների շինարարությունը. դրանց կառուցմանը մասնակցում էին ամերիկյան 200 տեխնիկական մասնագետներ և խորհրդականներ։ Թուրքիայում 22 օբյեկտ էլ կառուցվեց ՍԵՆՏՕ-ի գծով։ 1963 թվականի սկզբին Թուրքիայի տերիտորիայում կառուցված էին 60 տարբեր օդանավակայաններ և



թռիչքային հրապարակներ։ Երկու օդանավակայան գտնվում էին անմիջականորեն ԱՄՆ-ի բանակի գլխավոր շտաբի տրամադրության տակ։ 1961—1964 թվականներին Թուրքիայի զինված ուժերը մասնակցեցին ՆԱՏՕ-ի մյուս անդամների հետ համատեղ կազմակերպված զորախաղերին։

Վերջին տարիներս միայն ուղղակի ռազմական ծախսերը կազմեցին Թուրքիայի բյուջեի բոլոր միջոցների ավելի քան քառորդ մասը։ Եթե 1961/62 թ. բյուջեի ծախսերը ազգային պաշտպանության մինիստրության գծով կազմում էին 2114 միլիոն լիրա, իսկ 1962/63 թ.՝ 2557 միլիոն, ապա 1963/64 թ. դրանք ավելացան, հասնելով 2804 միլիոն լիրայի։ Պատերազմի նպատակների համար զգալի գումարներ հատկացրին նաև մյուս մինիստրությունները։

Այդ բոլորը վկայում էին, որ Թուրքիան շարունակում էր մնալ ՆԱՏՕ-ի և ՍԵՆՏՕ-ի ակտիվ անդամ։

Մինչդեռ Թուրքիայի բնակչության ավելի ու ավելի մեծ մասն էր սկսում հասկանալ թուրքական կառավարող շրջանների անհեռատես քաղաքականության իսկական նշանակությունը։ Երկրում ավելի շատ մարդիկ արտահայտվեցին Թուրքիայի արտաքին քաղաքական կուրսը վերանայելու օգտին։ Այդ տրամադրությունները առանձնապես ուժեղացան Կարիբյան ծովի շրջանում սկսած ճգնաժամից հետո։ Այդպիսի տրամադրություններ սուր կերպով երևան եկան Թուրքիայի ազգային մեծ ժողովում 1963 թվականի սկզբին՝ երկրորդ կոալիցիոն կառավարության արտաքին քաղաքականությունը քննարկելիս։

Յոթ օրվա վիճաբանությունները չարդարացրին թուրքական հասարակայնության հույսերը։ Այնուամենայնիվ, չի կարելի չնշել, որ վիճաբանությունների ընթացքում պատգամավորները և սենատորները բաց էության առաջին անգամ բացահայտորեն կասկածի տակ էին դնում երկրի միակողմանի կողմնորոշման օգտավետությունը։ «Կոմունիստական վտանգից» ոչ մի վկայակոչում չկարողացավ խլացնել այդ ձայները։ Մի քանի սենատորներ ու պատգամավորներ, քննադատելով կառավարությանը, բացահայտորեն ընդունում էին,

որ երկրի համար իսկական վտանգը իրենց մեջ թաքցնում են 500 հազարանոց բանակի պահպանության համար կատարվող քայքայիչ ռազմական ծախսերը, այն բանակի, որի զգալի մասը դրված է ամերիկյան հրամանատարության տակ։

Թուրքական մամուլում երևան էին գալիս հոդվածներ, որոնցում քննադատվում էր երկրի արտաքին քաղաքական կուրսը։ Այդ հոդվածների հեղինակները կոչ էին անում վերանայել Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմունքները՝ հաշվի առնելով ազգային շահերը և միջազգային ասպարեզում կատարված փոփոխությունները։

1963 թվականին կատարվեցին իրադարձություններ, որոնք սովետա-թուրքական հարաբերությունների բարելավման հույս էին ներշնչում։ Այսպես, մարտին հաջողությամբ ավարտվեցին փոխըմբռնման և բարեկամական համագործակցության ոգով վարվող բանակցությունները սովետական և թուրքական առևտրական պատվիրակությունների միջև։ Մարտի 18-ին Մոսկվայում ստորագրված պայմանագիրը կանխատեսում էր ապրանքաշրջանառությունն զգալիորեն ավելացնելու և ապրանքների տեսականին ընդլայնելու հնարավորություններ։ Մայիսին Անկարայում նիստեր ունեցավ մի խառը հանձնաժողով, որը քննարկեց Ախուրյան գետի վրա ջրամբար կառուցելու հարցը՝ ՍՍՀՄ-ի և Թուրքիայի հողերը ոռոգելու և դրանց հարող շրջանների համար էլեկտրաէներգիա արտադրելու նպատակով։

ՍՍՀՄ Գերագույն սովետը հրավիրեց Թուրքիայի պառլամենտական պատվիրակությանը, որը, տարբեր քաղաքական կուսակցություններ ներկայացնող 15 սենատորների ու պատգամավորների կազմով, մայիսի 30-ից մինչև հունիսի 14-ը հյուր էր Սովետական Միությունում։ Երկրում ճանապարհորդելուց հետո պատվիրակության ղեկավարը, այն ժամանակ Թուրքիայի սենատի նախագահ Սուատ Խայրի Ուրգյուփլյուն նշեց, որ «այցը ՍՍՀՄ, անկասկած, կծառայի մեր երկրների բարեկամության ամրապնդմանը։ Մենք հայրենիք ենք վերադառնում ամենալավ զգացումներով ու տպավորություններով»։



Չնայած արտաքին քաղաքականության ընդհանուր գծի հարցում բուրժուա-կալվածատիրական կուսակցությունների համաձայնությանը, 1964 թվականի աշնանը կառավարության արտաքին քաղաքականության կուրսի առանձին ասպեկտներ սկսեցին նորից դատապարտման ենթարկվել մամուլի էջերում և Մեջլիսի պատգամավորների ելույթներում։ Դժգոհություն էր հայտնվում ՆԱՏՕ-ից Թուրքիայի կախվածությունից, քննադատության էր ենթարկվում Թուրքիայի անհեռատես դիրքը Ասիայի և Աֆրիկայի ազգային-ազատագրական շարժումների, ինչպես և չեզոք պետությունների նկատմամբ։ Ավելի հաճախակի էին ձայներ լսվում Սովետական Միության հետ հարաբերությունները բարելավելու, արտաքին քաղաքականության ինքնուրույն կուրս վարելու, ագրեսիվ բլոկներին չմասնակցելու քաղաքականության օգտին։

1964 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 6-ը ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստր Ա. Ա. Գրոմիկոյի հրավերով պաշտոնական այցով Սովետական Միությունում էր գտնվում Թուրքական Հանրապետության արտաքին գործերի մինիստր Ֆերիդուն Ջեմալ Էրքինը։ Բարեկամական իրադրության մեջ տեղի ունեցած բանակցությունների ժամանակ շոշափվեցին միջազգային դրության և սովետա-թուրքական հարաբերությունների հարցերը։ Կարծիքների փոխանակումը ցույց տվեց, որ սովետական կառավարության և Թուրքական Հանրապետության կառավարության հայացքները համընկնում են կայուն խաղաղության հաստատման և միջազգային լարվածության թուլացմանն ամեն կերպ նպաստելու անհրաժեշտության հարցում։

Քննարկվեցին սովետա-թուրքական հարաբերությունների վիճակը և հեռանկարները։ Երկու կողմերը գոհունակությամբ արձանագրեցին, որ ռեալ հնարավորություններ կան երկու պետությունների բարիդրացիական հարաբերությունները զարգացնելու, փոխադարձ վստահությունը և գործարար համագործակցությունն ամրապնդելու համար այն տրադիցիաների ոգով, որ ստեղծվել էին Վ. Ի. Լենինի և Քեմալ Աթա-

թյուրքի ժամանակ։ Քննարկվեցին նաև սովետա-թուրքական առևտրի հարցերը։ Երկու կողմերը ցանկություն արտահայտեցին եղած հնարավորություններն օգտագործել երկու երկրների շահերի օգտին առևտուրը զարգացնելու համար։

Արտաքին գործերի մինիստրները համաձայնագիր ստորագրեցին Սովետական Միության և Թուրքական Հանրապետության կուլտուրական ու գիտական կապերի մասին։

1965 թվականի հունվարի առաջին կեսին սովետական մի խումբ պառլամենտականներ, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության անդամ Ն. Վ. Պոդգոռնու գլխավորությամբ, Թուրքիայի ազգային մեծ ժողովի հրավերով, պաշտոնական այցով գտնվում էին Թուրքիայում։ ՍՍՀՄ Գերագույն սովետի պատվիրակությունը հանդիպում ունեցավ պրեզիդենտ Գյուրսելի, պրեմիեր-մինիստր Ինենյուի, պառլամենտի երկու պալատների ներկայացուցիչների և Թուրքական Հանրապետության պետական ու հասարակական ուրիշ գործիչների, ինչպես նաև երկրի հասարակ մարդկանց հետ։ Սովետական պառլամենտականներն ուղևորություն կատարեցին երկրում, ծանոթացան արդյունաբերական ձեռնարկությունների, հիդրոկառույցների, կուլտուրական հաստատությունների և պատմական հուշարձանների հետ։ Ամենուրեք նրանց դիմավորում էին սիրալիր ու սրտաբաց։

ՏԱՍՍ-ի թղթակցին տված իր հարցազրույցի մեջ Ն. Վ. Պոդգոռնին նշեց, որ «մեր հանդիպումներն օգտակար նպաստում էին Սովետական Միության և Թուրքիայի բարիդրացիական հարաբերությունների և փոխադարձ շահավետ համագործակցության զարգացման գործում, և դա կծառայի ընդհանուր խաղաղության շահերին»։

1965 թվականի փետրվարի 20-ին նախկին օպոզիցիոն կուսակցությունները (ԱԿ-ն, ՆԹԿ-ն, ՀԳԱԿ-ն և ԺԿ-ն) ստորագրեցին արձանագրություն նոր կոալիցիոն կառավարություն ստեղծելու սկզբունքների մասին։ Շատ թերթեր նշում էին, որ այդ արձանագրության դրույթներն իրենցից ներկայացնում էին կառավարությունների նախկին արձանագրությունների ու ծրագրերի բովանդակության կրկնությունը։ Այդ նույն օրը



կազմվեց չորրորդ կոալիցիոն կառավարությունը, որը գլխավորեց «անկախ» սենատոր Սուադ Խայրի Ուրգյուպլյուն։ Այդ կառավարության մեջ մտան արդարության կուսակցության 11 (այդ թվում երկու «անկախ»), նոր Թուրքիայի կուսակցությունից՝ 4, հանրապետական գյուղացիական-ազգայինից՝ 4, ժողովրդական կուսակցությունից՝ 4 (այդ թվում մեկ «անկախ») ներկայացուցիչներ։ Ինչպես տեղերի քանակով, այնպես էլ պաշտոնների կարևորությամբ արդարության կուսակցությունն առաջատար դիրք գրավեց կառավարության մեջ։ 1961 թվականի ընտրություններից հետո դա առաջին կառավարությունն էր, որին չմասնակցեցին ժողովրդա-հանրապետական կուսակցության ներկայացուցիչները։

Ուրգյուպլյուի կառավարության ծրագիրն ըստ էության չէր տարբերվում նախորդ կառավարությունների ծրագրերից։ Այնուամենայնիվ, արտաքին քաղաքականության ասպարեզում նա արտահայտում էր այն նոր տենդենցները, որ նկատվում էին Թուրքիայում վերջին ժամանակներս։ Այսպես, ծրագրում ընդգծվում է, որ կառավարությունը մտադիր է ընդլայնել Թուրքիայի արտաքին քաղաքականության ազդեցության ոլորտը, զարգացնել հարաբերությունները աշխարհի բոլոր երկրների հետ։

Շարունակելով բարիդրացիական հարաբերությունները բարելավելու քաղաքականությունը, ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստր Ա. Ա. Գրոմիկոն 1965 թվականի մայիսի 17-ից 22-ը, Թուրքական կառավարության հրավերով, պաշտոնական այցով գտնվում էր Թուրքիայում։ Ա. Ա. Գրոմիկոյին ընդունեցին պրեզիդենտ Գյուրսելը, պրեմիեր-մինիստր Ուրգյուպլյուն, ինչպես և Թուրքիայի ուրիշ ղեկավարներ։ Նա մի շարք զրույցներ ունեցավ Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Հասան Իշըքի հետ։ Այդ զրույցների ընթացքում կարծիքների փոխանակություն տեղի ունեցավ ՍՍՀՄ-ին և Թուրքիային հետաքրքրող միջազգային քաղաքականության պրոբլեմների, ինչպես նաև սովետա-թուրքական հարաբերությունների զարգացման մասին։

Արտաքին գործերի մինիստրները հաստատեցին, որ

ՍՍՀՄ-ի և Թուրքական Հանրապետության կառավարությունները, ղեկավարվելով Վ. Ի. Լենինի և Քեմալ Աթաթյուրքի ժամանակ ստեղծված տրադիցիաներով, ձգտում են շարունակել իրենց ջանքերը բարեկամական և բարիդրացիական հարաբերությունները զարգացնելու և փոխադարձ վստահությունն ամրապնդելու համար։

1965 թվականի օգոստոսի 9-ին ՍՍՀՄ կառավարության հրավերով, պաշտոնական այցով Մոսկվա ժամանեց Թուրքական Հանրապետության պրեմիեր-մինիստր Սուատ Խայրի Ուրգյուփլյուն։ Սովետական կառավարության ղեկավարների հետ պրեմիեր-մինիստրի ունեցած զրույցների ընթացքում, որոնք անցան անկեղծության ու փոխըմբռնման իրադրության մեջ, մտքերի օգտավետ փոխանակություն կայացավ միջազգային պրոբլեմների, ինչպես և սովետա-թուրքական հարաբերությունների հետագա զարգացման հարցերի շուրջը։

Այցն ավարտվելուց հետո հրապարակված սովետա-թուրքական կոմյունիկեում երկու կողմերը նշեցին, որ անհրաժեշտ է ջանքեր գործադրել միջազգային լարվածության թուլացմանը և կայուն խաղաղության ամրապնդմանը նպաստելու համար։ Նրանք համոզմունք հայտնեցին, որ տարբեր սոցիալական սիստեմ ունեցող պետությունները, հետևելով խաղաղ գոյակցության ու միմյանց ներքին գործերին չմիջամտելու և իրավահավասարության սկզբունքի հիման վրա համագործակցելու քաղաքականությանը, կնպաստեն միջազգային լարվածության թուլացմանը և կայուն խաղաղության հաստատմանը։

Ինչ վերաբերում է սովետա-թուրքական հարաբերություններին, ապա երկու կողմերը բավականությամբ նշեցին, որ իրենք անկեղծորեն ձգտում են զարգացնել բարիդրացիական հարաբերությունները միմյանց միջև։ Երկու կառավարությունների ղեկավարները, քննարկելով Թուրքիայի և Սովետական Միության միջև եղած տնտեսական հարաբերությունների վիճակը, գոհունակություն հայտնեցին վերջին տարում փոխադարձ ապրանքաշրջանառության զարգացումից։ Կողմերը համաձայնության եկան այն մասին, որ երկրների միջև եղած ապրանքաշրջանառության մակարդակը միշտ բարձր պահելու համար Թուրքական կողմը Սովետական Միությունից կգնի մեքենաներ ու սարքավորում՝ տարբեր արդյունաբերական օբյեկտների կառուցման համար, իսկ սովետական կողմը Թուրքիայից կգնի նրա ազգային արտադրության շատ ապրանքներ։



Թուրքիայի պրեմիեր-մինիստրը ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահ Ա. Ն. Կոսիգինին հրավիրեց պաշտոնական այցով գալ Թուրքիա։ ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահը շնորհակալությամբ ընդունեց այդ հրավերը։

Օգոստոսի 17-ին Սուատ Խայրի Ուրգյուփլյուն վերադարձավ հայրենիք։ Օդանավակայանում տված հայտարարության մեջ Թուրքիայի պրեմիեր-մինիստրը մասնավորապես ասաց. «Մեր այցը շատ օգտակար էր։ Բարեկամական վերաբերմունքը, որին մենք հանդիպեցինք Սովետական Միությունում, և հյուրասիրությունը վեր էին ամեն մի ենթադրությունից... Մենք խորապես հուզված ենք այն ուշադրությունից, որ ցույց տվեցին մեզ, և այն նշանակությունից, որ Սովետական Միության մեջ տրվում է մեր երկրների մերձեցմանը։ Ես ուզում եմ գոհունակությամբ նշել նաև սովետական ժողովրդի կողմից մեր նկատմամբ ցուցաբերած մեծ բարյացակամությունը... Բանակցությունների մեջ հիմնական տարրը,— եզրափակման մեջ ընդգծեց Սուատ Խայրի Ուրգյուփլյուն,— խաղաղությունը պահպանելու ցանկությունն էր»։

# ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

*Թուրքիան բուրժուական հանրապետություն է։ 1961 թվականի սահմանադրությունը նրան հռչակում է ազգային, դեմոկրատական, աշխարհիկ և սոցիալ-իրավական պետություն։ Սահմանադրության մեջ, որի դրույթները հանդիսանում են հիմնական իրավական նորմաներ, փոփոխություններ կարող են մտցվել Թուրքիայի պառլամենտի լրիվ կազմի երկու երրորդի համաձայնության դեպքում միայն, սակայն կառավարման հանրապետական ձևի մասին հոդվածը չի կարող վերանայվել և փոփոխվել։*

*Օ ր ե ն ս դ ի ր  ի շ խ ա ն ու թ յ ու ն ը։ Պետական իշխանության բարձրագույն օրգանը Թուրքիայի ազգային մեծ ժողովն է (ԹԱՄԺ)։ Նրա իրավասության մեջ մտնում է օրենքների հրատարակումը, փոփոխումը և վերացումը, բյուջեի հաստատումը, դրամ թողարկելը, ներում հայտարարելը, մահավճիռների հաստատումը, օտարերկրյա պետությունների հետ կնքված պայմանագրերի և համաձայնագրերի վավերացումը, պատերազմ հայտարարելը։*

*Ազգային մեծ ժողովը կազմված է երկու պալատից՝ ազգային պալատից և Հանրապետության սենատից։*

*Ազգային պալատը բաղկացած է 450 պատգամավորներից, որոնք ընտրվում են չորս տարի ժամկետով։*

*Հանրապետության սենատը բաղկացած է 150 ընտրովի անդամից և Հանրապետության պրեզիդենտի կողմից նշանակված 15 անդամից. սենատի կազմում որպես ցմահ անդամներ մտնում են ազգային միասնության կոմիտեի ամբողջ*



*կազմը և Թուրքական Հանրապետության բոլոր նախկին պրեզիդենտները։ Սենատորների լիազորությունների ժամկետը վեց տարի է, սակայն սենատորների մեկ երրորդը, որոնց մեջ չեն մտնում ցմահ անդամները, թարմացվում է երկու տարին մեկ։ Թուրքիայի ազգային մեծ ժողովի անդամները, որ ընտրվում են տարբեր ընտրական օկրուգների կողմից, հանդես են գալիս որպես ամբողջ ազգի, և ոչ թե նրանց ընտրող շրջանների ներկայացուցիչներ։*

*Նույն անձը չի կարող լինել ազգային պալատի անդամ և սենատոր։ Թուրքիայի ազգային մեծ ժողովի անդամները ձեռնահամբերն պատասխանատվություն չեն կրում Մեջլիսի աշխատանքի պրոցեսում քվեարկության, ճառի, դատողությունների համար և օգտվում են պառլամենտական անձեռնմխելիության իրավունքից։ Նրանց դեմ գործ հարուցելու համար անհրաժեշտ է պառլամենտի սանկցիան։ Պատգամավորի գործի առթիվ ընդունված դատավճռի կատարումը հետաձգվում է մինչև նրա լիազորությունների ժամկետի լրանալը՝ եթե Թուրքիայի ազգային մեծ ժողովը որոշում չի ընդունել այդ պատգամավորին պառլամենտական անձեռնմխելիությունից զրկելու մասին։ Այդպիսի որոշումը բեկանել կարող է միայն սահմանադրական դատարանը։*

*Թուրքիայի ազգային մեծ ժողովը գումարվում է ամեն տարի՝ նոյեմբերի 1-ին։*

*Պալատների նախագահներն ընտրվում են երկու տարի ժամանակով, իրենց պալատի լրիվ կազմի երկու երրորդի մեծամասնությամբ, գաղտնի քվեարկությամբ։ Թուրքիայի ազգային մեծ ժողովում ներկայացված քաղաքական կուսակցությունների ֆրակցիաներին արգելվում է իրենց անդամների թեկնածություններն առաջադրել նախագահների պոստի համար։*

*Թուրքիայի ազգային մեծ ժողովի պլենար նիստերում նախագահությունը հանդիսանում ազգային պալատի նախագահությունը։*

*Թուրքիայի ազգային մեծ ժողովի աշխատանքը կատարվում է հինգ պալատների միջակա ներքին կանոնադրու-*

թյունների դրույթներին համապատասխան, այն հաշվով, որ ապահովված լինի քաղաքական կուսակցությունների ֆրակցիաների համամասնական մասնակցությունը նրա ամբողջ գործունեությանը։ Կուսակցական ֆրակցիաները ստեղծվում են ոչ պակաս քան 10 պատգամավորներից։

Պալատները հարցումներ են անում, կատարում ընդհանուր քննարկումներ, պառլամենտական հետաքննություններ և քննություններ։

Հարցապնդումների իրավասությունը պատկանում է ազգային պալատին։ Անվստահության մասին փաստարկված առաջարկության հիման վրա Մինիստրների խորհրդի կամ առանձին մինիստրի հրաժարական տալու հնարավորությունը որոշվում է պալատի լրիվ կազմի ձայների բացարձակ մեծամասնությամբ։

Պրեմիեր-մինիստրի կամ մինիստրների նկատմամբ հետաքննություն կատարում է երկու պալատների կողմից հավասար անդամների կազմով ընտրված հանձնաժողովը։ Գործը գերագույն դատարանին հանձնելու մասին որոշումը ընդունվում է պլենար նիստում։

**Օրենքների նախապատրաստումը և անցկացումը:** *Օրինագծեր առաջարկել կարող են ինչպես Ազգային մեծ ժողովի անդամները, այնպես էլ Մինիստրների խորհուրդը։*

Օրենքների նախագծերն սկզբում քննարկում է ազգային պալատը, իսկ հետո՝ սենատը։ Այն օրինագիծը, որը մերժում է ազգային պալատը, բայց ընդունում է սենատը, նորից գալիս է ազգային պալատ և նայած սրա որոշմանը, հաստատվում է կամ մերժվում, կամ թե հանձնվում է խառը հանձնաժողովին։

Հանրապետության սենատը ըստ իրեն ներկայացված օրինագծի՝ որոշումներ է ընդունում այնպիսի ժամանակամիջոցում, որը չի գերազանցում նախընթաց ինստանցիաներում այդ օրինագծի քննարկման ժամանակին։ Եթե այդ ժամանակամիջոցում որոշում ընդունված չի լինում, ապա օրենքն ավտոմատիկորեն մտնում է ուժի մեջ։ Այնուհետև Ազգային մեծ ժողովի ընդունած օրենքները հաստատման համար



ուղարկվում են հանրապետության պրեզիդենտին։ Պրեզիդենտի մերժած օրենքը վերադարձվում է Ազգային մեծ ժողով՝ կրկնակի քննարկման համար, և նրա հրապարակումը կախված է արդեն Ազգային մեծ ժողովի որոշումից։ Այս կանոնի տակ չեն ընկնում բյուջեի և սահմանադրության մասին օրենքները։

**Բյուջեի քննարկման և ընդունման կարգը:** Նոր բյուջետային տարվա սկզբից երեք ամիս առաջ Մինիստրների խորհուրդը Ազգային մեծ ժողով է մտցնում բյուջեի մասին նախնական օրինագիծ։ Վերջինս երկու ամսվա ընթացքում ուսումնասիրվում է բյուջետային խառը հանձնաժողովի կողմից, որը բաղկացած է ազգային պալատի 35 պատգամավորից և 15 սենատորից։ Հանձնաժողովում 30 տեղ պետք է պատկանի կառավարող քաղաքական կուսակցություններին, մնացած տեղերը համամասնորեն բաշխվում են քաղաքական մյուս կուսակցությունների միջև։

Խառը հանձնաժողովի ընդունած օրինագծի տեքստը հանձնվում է սենատի քննությանը, որտեղից, 10 օր հետո, ուղղումներով վերադարձվում է խառը հանձնաժողովին, խառը հանձնաժողովում նորից քննարկված տեքստը մի շաբաթից հետո գնում է ազգային պալատ, ուր դրա մասին որոշումն ընդունվում է մինչև ֆինանսական տարվա սկիզբը։ Թուրքիայի ազգային մեծ ժողովի անդամներն ընդհանուր նիստերում բյուջեն քննարկելիս չեն կարող մտցնել ծախսերն ավելացնելու կամ եկամուտները նվազեցնելու վերաբերյալ առաջարկներ։

Թուրքիայի պառլամենտում ստեղծված են մի շարք հանձնաժողովներ, որոնց մեջ մտնում են իրավասու մասնագետներ դեպուտատների թվից։ Այդ հանձնաժողովները նախապատրաստում են օրինագծեր, որոնք այնուհետև ներկայացվում են պառլամենտի քննարկմանը։ Հանձնաժողովներն աշխատում են տարբեր ճյուղերում։ Ընդամենը կա 20 մշտական, 7 խառը և 43 ժամանակավոր հանձնաժողով։

Վերջին նորամուծություններից մեկը խառը կոնֆլիկտային հանձնաժողովն է (բողոքների բյուրոն)։ Նա քննում է

Ազգային մեծ ժողովի նախագահությունում առաջված նամակներն ու բողոքները: Հանձնաժողովը բաղկացած է 25 մարդուց, որոնց թվում՝ 7 սենատոր և ազգային պալատի 18 անդամ: Նա կոչված է կապող օղակ հանդիսանալ պառլամենտի և մինիստրությունների միջև՝ ծագող կոնֆլիկտների վերանալումն արագացնելու համար: Հանձնաժողովն ամեն շաբաթ Ազգային մեծ ժողովի անդամներին է հանձնում այս կամ այն հարցի առթիվ համապատասխան մինիստրությունների ընդունած որոշումները: Եթե Ազգային մեծ ժողովի անդամների կողմից տասը օրվա ընթացքում առարկություն չի առաջվում, ապա որոշումները հաղորդվում են խնդրատուին:

Գործադիր իշխանությունն իրականացնում են հանրապետության պրեզիդենտը և Մինիստրների խորհուրդը, որը գլխավորում է պրեմիեր-մինիստրը:

Պրեզիդենտը պետության ղեկավարն է: Նրա իրավունքներն ու լիազորությունները 1961 թվականի սահմանադրության համաձայն զգալիորեն ընդլայնվել են: Պրեզիդենտին Թուրքիայի ազգային մեծ ժողովն ընտրում է իր անդամներից, հաշվի առնելով այն նույն տարիքային և կրթական ցենզը, ինչ սենատի ընտրությունների ժամանակ (40 տարեկան և բարձրագույն կրթություն), երկու պալատների լրիվ կազմի ձայների երկու երրորդով: Նա ընտրվում է յոթ տարով և չի կարող վերընտրվել իրար հետևից երկրորդ ժամկետի համար: Նորընտիր պրեզիդենտը պետք է դուրս գա Ազգային մեծ ժողովից և հեռանա իր կուսակցությունից:

Պրեզիդենտը նախագահում է Մինիստրների խորհրդում (անհրաժեշտության դեպքում), նշանակում է դեսպաններ, ընդունում է արտասահմանյան պետությունների ներկայացուցիչներին, վավերացնում ու հրապարակում է միջազգային պայմանագրերը, իրավունք ունի մեղմացնել կամ բեկանել դատավճիռները՝ դատապարտվածի երկարատև հիվանդության, հաշմանդամության կամ ծերության պատճառով: Նա հրապարակում է օրենքներ և օգտվում է արգելք դնելու (վետոյի) իրավունքով՝ օրենքը պառլամենտի կողմից ընդունվելուց հետո տասը օրվա ընթացքում, եթե գտնում է, որ



տվյալ օրենքը չի համապատասխանում ազգային շահերին կամ հակասում է սահմանադրության տառին կամ ոգուն: Այս դրույթը չի տարածվում սահմանադրության և բյուջեի մասին օրենքների վրա: Պրեզիդենտը նշանակում է պրեմիեր-մինիստրին և նրան հանձնարարում կազմել Մինիստրների խորհուրդը: Նա հաստատում է պրեմիերի երաշխավորած մինիստրներին, ընդունում է կառավարության անդամների հրաժարականը և հաստատում նոր նշանակումները:

Պրեզիդենտի ընդունած որոշումների համար պատասխանատվությունը դրվում է պրեմիեր-մինիստրի և որոշման տակ իր վիզան դրած համապատասխան մինիստրի վրա:

**Մինիստրների խորհուրդը** պետական իշխանության գործադիր և կարգադրիչ օրգանն է: Նա բաղկացած է պրեմիեր-մինիստրից և մինիստրներից:

Մինիստրները կարող են չլինել Ազգային մեծ ժողովի դեպուտատներ: Կառավարության և պառլամենտի միջև եղած հարաբերությունները կարգավորելու, կաբինետի ներսում գործողությունների կոորդինացում ապահովելու և պրեմիեր-մինիստրի աշխատանքը հեշտացնելու համար հաստատված են պետական մինիստրներ, որոնցից մեկը կամ մի քանիսը (պրեմիեր-մինիստրի և պրեզիդենտի համաձայնությամբ) կատարում են պրեմիեր-մինիստրի տեղակալի ֆունկցիաներ: Մինիստրների խորհրդի թվական կազմը որոշում է պրեզիդենտը՝ պրեմիեր-մինիստրի առաջարկությամբ:

Եթե ազգային պալատը 18 ամսվա ընթացքում երկու անգամ մերժում է Մինիստրների խորհրդի վստահության քվեն, ապա պրեմիեր-մինիստրը կարող է պրեզիդենտին խնդրել արձակել պալատը: Այդ դեպքում կառավարությունը հրաժարական է տալիս, պրեմիեր-մինիստրը ստեղծում է ժամանակավոր կաբինետ, որը գործում է ընդհուպ մինչև նոր պալատի գումարումը:

Վստահության քվեն մերժելու համար անհրաժեշտ է Ազգային մեծ ժողովի լրիվ կազմի ձայների բացարձակ մեծամասնությունը:

Անձեռնմխելիության տեսակետից մինիստրները Ազգա-

յին մեծ ժողովի դեպուտատների հետ գտնվում են Համատար դրության մեջ։

Մինիստրների խորհրդի ընդունած և հանրապետության պրեզիդենտի ստորագրած որոշումներն օրենքի ուժ ունեն։

Մինիստրների տեղակալների իրավունքներն ու լիազորությունները սահմանում են պրեմիեր-մինիստրները և մինիստրները։ Եթե մինիստրը պաշտոնաթող է լինում, ապա իր պաշտոնը թողնում է նաև տեղակալը, բայց քանի դեռ նոր մինիստր չի նշանակված, նախկին տեղակալը ժամանակավորապես մնում է մինիստրության գլուխ։

**Պետական պլանավորման կազմակերպումը**։ Պետական կառավարման օրգանների մեջ առավել ակտիվ դեր է խաղում պետական պլանային կազմակերպությունը, որն ստեղծվել է 1960 թվականի սեպտեմբերի 30-ին։ Դա կազմված է պլանավորման բարձրագույն խորհրդից և պլանավորման կենտրոնական կազմակերպությունից։ Պլանավորման բարձրագույն խորհրդի մեջ մտնում են ութ անդամ՝ չորս մինիստր և չորս մասնագետ-պլանավիկ։

Պլանավորման կենտրոնական կազմակերպության գլուխ է կանգնած խորհրդականը։ Կազմակերպությունն ինքը բաղկացած է էկոնոմիկայի պլանավորման վարչությունից, սոցիալական պլանավորման վարչությունից և կոորդինացման վարչությունից։ Առաջին և երրորդ վարչությունների մեջ մտնում են երեքական բաժին, իսկ երկրորդի մեջ՝ երկու։ Վարչություններին կից աշխատում են մասնագետների մշտական ու ժամանակավոր հանձնաժողովներ։ Պլանավորման կենտրոնական կազմակերպությունը բաղկացած է 93 մարդուց, որոնցից 46-ը մասնագետներ են։ Բացի այդ, կազմակերպությանը կից ստեղծված 20 հանձնաժողովներում կան 250 մասնագետներ։

Պլանավորման բարձրագույն խորհուրդը օգնություն է ցույց տալիս Մինիստրների խորհրդին՝ տնտեսական և սոցիալական պրակտիկայի խնդիրները որոշելու գործում, ինչպես նաև պլանները Մինիստրների խորհրդում քննարկվելուց



առաջ ուսումնասիրում է դրանք այն տեսանկյունից, թե որքանով են համապատասխանում նշված նպատակներին։

Խորհրդականը պետք է սերտ կապ պահպանի պրեմիեր-մինիստրի տեղակալի հետ։

Էկոնոմիկայի պլանավորման վարչությունը կատարում է անհրաժեշտ հետազոտություններ, նախապատրաստում է պլաններ ու ծրագրեր (ինչպես երկարաժամկետ, այնպես էլ կարճաժամկետ)։

Սոցիալական պլանավորման վարչությունն ուսումնասիրում է երկրի սոցիալական պրոբլեմները և նախապատրաստում երկարաժամկետ ու կարճաժամկետ պլաններ ու ծրագրեր։ Կոորդինացման վարչությունը երաշխավորություններ է տալիս և միջոցներ է ձեռք առնում պլանի իրականացման համար, սահմանում է ծրագրի ու պլանի կատարման անհրաժեշտ հաջորդականություն, պլանների իրականացման մասին ամփոփված զեկուցումները համադրում է և պահանջվում անհրաժեշտ արդյունքների ժամանակին կատարումը այն մարզերում, որտեղ ետ է մնում պլանի իրականացումը։

**Վարչական բաժանումը և պետական իշխանության տեղական օրգանները**։ Թուրքիան բաժանված է 67 վիլայեթի (իլ)՝ նահանգի։ Վիլայեթներն իրենց հերթին բաժանված են գավառների (իլչե, առաջ՝ կազա), իսկ վերջիններս՝ վոլոստների (բուջակ, առաջ՝ նահիե)։

Վիլայեթները գլխավորում են նահանգապետները (վալի), որոնց նշանակում է Մինիստրների խորհուրդը՝ ներքին գործերի մինիստրության առաջարկությամբ։ Նահանգապետին կից գործում է հատուկ վարչություն, որը կազմված է հետևյալ բաժիններից՝ ֆինանսական, հասարակական աշխատանքների, պետական ունեցվածքի, առողջապահության, երկրագործության, կապի և այլն։ Նահանգապետը այդ վարչության օգնությամբ կենսագործում է կառավարության որոշումները, «հանգստություն» է պահպանում վիլայեթում, վերահսկում է առևտրի, արդյունաբերության, գյուղատնտեսության զարգացումը և այլն։

Տեղական ինքնավարության ներկայացուցչական օրգանը

վիլայեթում գլխավոր խորհուրդն է, որ ընտրում է վիլայեթի բնակչությունը։

Գլխավոր խորհուրդը հսկում է հասարակական կարգի պահպանությանը իր վիլայեթում, որոշում է տեղական հարկերը, տուրքերը և պարտհարկերը՝ օրենքով իրեն տրված իրավասությունների սահմաններում, հաստատում է տեղական բյուջեները և վերահսկում դրանց կատարմանը, հսկողություն է հաստատում առևտրական հիմնարկությունների ու շուկաների նկատմամբ, ղեկավարում առողջապահական և լուսավորության օրգանները և այլն։

Վիլայեթի գլխավոր խորհրդի նախագահը նահանգապետն է, որն օժտված է լայն իրավունքներով (նա իրավունք ունի խորհրդի աշխատանքն ընդհատել մի քանի շաբաթով և նույնիսկ պահանջել Մինիստրների խորհրդից արձակել գլխավոր խորհուրդը և նշանակել նոր ընտրություններ)։ Խորհրդի բոլոր որոշումներն ուժի մեջ են մտնում նահանգապետի հաստատումից հետո միայն։

Վիլայեթների գլխավոր խորհուրդները սեսիա են գումարում տարեկան մեկ անգամ՝ սկզբում նահանգապետի (ընտրություններից հետո՝ առաջին տարում), ապա խորհրդի մշտական հանձնաժողովի (էնջյումենի) կողմից։ Մշտական հանձնաժողովը, որ կատարում է գլխավոր խորհրդի աշխատող օրգանի ֆունկցիա, ընտրում են խորհրդի առաջին նիստում։ Այդ նույն նիստում էլ ընտրում են նախագահի տեղակալին։ Կենտրոնական վարչության և գլխավոր խորհրդի միջև կոնֆլիկտ առաջանալու դեպքում նահանգապետը հանդես է գալիս որպես իշխանության շահերի պաշտպան, իսկ նրա տեղակալը՝ իբրև վիլայեթի գլխավոր խորհրդի ներկայացուցիչ։ Նահանգապետի և գլխավոր խորհրդի միջև ծագած կոնֆլիկտները հանձնվում են պետական խորհրդի՝ բարձրագույն ինստանցիայի վարչական դատարանի քննությանը։

Գլխավոր խորհրդի մշտական հանձնաժողովը պատրաստում է նյութեր՝ խորհրդի նիստերում քննարկելու համար և եզրակացություններ է տալիս իր իրավասության մեջ մտնող բոլոր հարցերի վերաբերյալ։ Իր գործունեության մասին



ամենամյա սեսիայում նա հաշվետվություն է տալիս խորհրդի անդամների առաջ։

Գլխավոր խորհրդի ընտրությունները կատարվում են համամասնական ներկայացուցչական սիստեմով, չորս տարին մեկ անգամ։ Յուրաքանչյուր իլչե հանդիսանում է ընտրական օկրուգ։ Մինչև 25 հազար բնակիչ ունեցող ամեն մի իլչեից (ըստ վերջին մարդահամարի տվյալների) ընտրվում է մեկ դեպուտատ, 25-ից մինչև 40 հազարից՝ երկուսը, 40-ից մինչև 55 հազարից՝ երեքը, 55-ից մինչև 70-հազարից՝ չորսը, և այսպես ամեն մի 25 հազար մարդու դիմաց ավելացվում է մեկ դեպուտատ։ Վիլայեթի գլխավոր խորհրդի անդամ կարող են ընտրվել այն անձինք, որոնք կարողանում են գրել ու կարդալ։ Այն դեպքում, եթե խորհրդի անդամ է ընտրվում սենատոր, ազգային պալատի անդամ կամ մունիցիպալիտետի նախագահ, նա պետք է երեք օրվա ընթացքում (պաշտոնապես տեղեկացվելու օրվանից սկսած) հայտնի իր ընտրվելու մասին, քանի որ արգելված է այդ ընտրովի պաշտոններում նույն անձի համատեղումը։ Եթե այդ ժամկետի ընթացքում չհայտնի իր որոշումը, համարվում է, որ նա հրաժարվել է գլխավոր խորհրդի անդամությունից։

Քաղաքական կուսակցությունները կարող են իրենց թեկնածուներին առաջադրել գլխավոր խորհուրդների անդամ ընտրվելու համար։

Գավառը (իլչե) ղեկավարում է կայմակամը, որին նշանակում է ներքին գործերի մինիստրությունը։ Կայմակամն անմիջականորեն ենթարկվում է նահանգապետին և, ղեկավարվելով նրա ցուցումներով, կատարում է կառավարական որոշումներն ու կարգադրությունները։ Կայմակամը ապահովում է կարգի պահպանությունը գավառի տերիտորիայում, հսկում հասարակական աշխատանքներին, հոգ է տանում գյուղատնտեսության, առևտրի զարգացման մասին և այլն։ Կայմակամին կից վարչության ֆունկցիաների մեջ մտնում է, որպես կանոն, լուսավորության, առողջապահության, անվտանգության, բնակչության հաշվառման, ֆինանսների, կապի ղեկավարումը, կառավարական հիմնարկությունների

և տեղական ադմինիստրացիային օգնություն ցույց տալը։

Իլչեները չունեն իրենց ընտրովի հաստատությունները և որպես վարչական միավորումներ էական դեր չեն խաղում երկրի կյանքում։ Տեղական նշանակության բոլոր կարևոր հարցերը լուծում է նահանգապետը կամ վիլայեթի վարչությունը։

Վոլոստի գլուխ կանգնած է ավագը (մյուդյուր), որը վարում է տվյալ վարչական միավորի տերիտորիայում եղած բոլոր գործերը։ Վոլոստի կենտրոնում են գտնվում հաշտարար դատավորը, հարկահավաքը, ոստիկանական տեղամասը։ Վոլոստը ընդգրկում է մի քանի գյուղ և ավան։

Այն բնակավայրերը, որոնց բնակիչների թիվը 2 հազարից անցնում է, չեն մտնում վարչական կառավարման մեջ այն վոլոստի, օկրուգի կամ վիլայեթի, որտեղ գտնվում են նրանք, այլ համարվում են քաղաքներ և կառավարվում են մունիցիպալիտետների միջոցով։ Արագորեն աճում է մունիցիպալիտետների թիվը։ 1929 թվականին Թուրքիայում կար 467 մունիցիպալիտետ, 1947 թ.՝ 546, 1955 թ.՝ 858, 1963 թ.՝ 1023։

Մունիցիպալիտետները տնօրինում են տեղական նշանակություն ունեցող հարցեր՝ տեղական բյուջեն, հարկերը և տուրքերը, քաղաքի բարեկարգումը, առևտրական հիմնարկությունների և քաղաքային տրանսպորտի վերահսկելը, կանաչ տարածությունների պահպանմանը հսկելը և հակահրդեհային պահպանությունը, քաղաքացիական կացության ակտերի գրանցումը, ամեն տեսակի, այդ թվում՝ կոմունալ ձեռնարկությունների հսկելը, քաղաքի ոստիկանության գործունեությունը ղեկավարելը։

Մունիցիպալիտետներն ստեղծվում են Թուրքիայի ազգային մեծ ժողովի որոշմամբ։ Մունիցիպալիտետի անդամներին և նրա նախագահին ընտրում են քաղաքի բնակիչները։ Ընտրություններն ամբողջ երկրում անց են կացվում չորս տարին մեկ անգամ, նույն օրը։ Մունիցիպալիտետների անդամներին ընտրում են համամասնական-ներկայացուցչական սիստեմով, իսկ նախագահներին՝ մաժորիտար սիստեմով։ Քաղաքական կուսակցությունները կարող են մասնակցել ըն-



տրություններին՝ իրենց թեկնածություններն առաջադրելով բոլոր քաղաքացիներին հավասար։

Մունիցիպալիտետի անդամ կարող է ընտրվել միայն նա, ով տվյալ քաղաքում ապրել է վեց ամսից ոչ պակաս։ Նախագահի համար այդ պահանջը պարտադիր չէ։

Քիչ բնակչություն ունեցող քաղաքների մունիցիպալիտետներում ընտրվում են 12 հիմնական և 12 պահեստի անդամ։ Բնակչության ավելացման համեմատ աճում է նաև մունիցիպալիտետի անդամների թիվը։

Մունիցիպալիտետի նախագահը կարող է իր պաշտոնից հեռացվել միայն պետական խորհրդի որոշմամբ։ Դա ուժի մեջ է մտնում, եթե կա մունիցիպալիտետի ընդհանուր կազմի երկու երրորդի մեծամասնությամբ ընդունված որոշումը այն մասին, թե նախագահը անհամապատասխան է իր պաշտոնին։ Մունիցիպալիտետն արձակելու իրավունքը պատկանում է պետական խորհրդին։

Մունիցիպալիտետները սեսիա են գումարում տարեկան երեք անգամ։

Մեծ քաղաքները բաժանվում են շրջանների, որոնք ունեն իրենց ընտրական կոմիտեները, որոնք ենթարկվում են մունիցիպալիտետներին. կոմիտեների գլուխ են կանգնած շրջանային ավագները։

Թուրքիայում տեղական կառավարման ամենամանր վարչական միավորներն են շրջանը (քաղաքներում և գյուղաքաղաքներում) և գյուղը կամ ավանը։ Քաղաքներն ու գյուղաքաղաքները ղեկավարում են շրջանային ընտրովի ավագները (մուխտարները) և ավագների շրջանային կոմիտեները, իսկ գյուղերն ու ավանները՝ ավագները և ավագների խորհուրդները։

Ավագը պարտավոր է աջակցել կառավարության որոշումների ու կարգադրությունների կատարմանը, հետևել հասարակական կարգին, բաշխել շինարարության և բարեկարգման համար հատկացված միջոցները։ Եթե ավագը խուսափում է կատարել իր անմիջական պարտականությունները, նա կարող է հանվել պաշտոնից։

Ավագների խորհրդի անդամների և գյուղական ավագների ընտրությունները անց են կացվում մաժորիտար սիստեմով։ Հազարից պակաս բնակիչ ունեցող գյուղերում գյուղական ավագների խորհուրդ են ընտրում ութ մարդուց և հազարից ավելի բնակիչ ունեցողներում՝ տասներկու մարդուց։

Ավագների խորհրդի անդամ կամ գյուղական ավագ կարող է ընտրվել 25 տարին լրացած և թուրքերեն կարդալ ու գրել իմացող անձը։

Ավագների խորհրդի թեկնածությունների քվեարկությունը կատարվում է ընդհանուր ցուցակով։ Քաղաքական կուսակցությունները չեն կարող մասնակցել թեկնածությունների առաջադրմանը։

Ընտրական սիստեմը։ 1961 թվականի մայիսին ընդունված ընտրական նոր օրենքի համաձայն ընտրությունները Թուրքիայում ընդհանուր են, ազատ, հավասար, ուղղակի, գաղտնի, միաստիճան. դրանք անց են կացվում ձայների բաց հաշվումով։

Ակտիվ ընտրական իրավունքից օգտվում է ամեն մի թուրք և թրքուհի, որի 21 տարին լրացել է և կարողանում է կարդալ ու գրել։ Ձայնի իրավունքից զրկված են բանակի շարքայիններն ու կրտսեր հրամանատարները և ռազմական ուսումնարանների կուրսանտները, ինչպես նաև խնամքի տակ գտնվող և քաղաքական իրավունքներից զրկված անձինք։

Ազգային պալատում կարող է ընտրվել ամեն մի թուրք (կամ թրքուհի), որի 30 տարին լրացել է, սենատում կարող է ընտրվել նա, ում 40 տարին է լրացել և ունի բարձրագույն կրթություն։ Դեպուտատներ և սենատորներ չեն կարող ընտրվել թուրքերեն կարդալ և գրել չիմացողները, խնամքի տակ գտնվողները, զինվորական ծառայությունից խուսափածները, քաղաքական իրավունքներից զրկումով դատապարտվածները, բրեական հանցագործության համար հինգ տարուց ավելի դատապարտվածները, ինչպես նաև դատավորները, սպաները և ծառայությունը չթողած զինվորական աստիճանավորները։

Ազգային պալատի ընտրությունները կատարվում են համամասնական ներկայացուցչության, սենատի ընտրությունները՝ մաժորիտար սիստեմով։



Թուրքիայի ազգային մեծ ժողովի ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր վիլայեթ հանդիսանում է ընտրական օկրուգ։ Բացառություն են կազմում (սենատի ընտրությունների համար) Անկարա, Ստամբուլ և Իզմիր քաղաքները, որոնցում կազմված են երեքական ընտրական օկրուգներ։

№ 306 օրենքը նախատեսում է քաղաքական կուսակցությունների կողմից թեկնածուների առաջադրման զգալի սահմանափակումներ։ Դրանցից առավել էականը քաղաքական կուսակցությունների պահանջն է առնվազն տասնհինգ վիլայեթներում իրենց կազմակերպությունները ունենալու մասին։ Այդ կազմակերպությունները պետք է մինչև ընտրությունների սկսվելը գործեն առնվազն վեց ամիս։ Ընտրական օրենքը մի քանի քաղաքական կուսակցությունների արգելում է հանդես գալ թեկնածուների միասնական ցուցակով։ Կուսակցությունները իրավունք ունեն իրենց թեկնածուներն առաջադրել միայն այն օկրուգներում, որոնցում ունեն իրենց կազմակերպությունները, ըստ որում, ամեն մի կուսակցության առաջադրած թեկնածուների թիվը չպետք է անցնի տվյալ օկրուգում ընտրվող դեպուտատների թվից։ Հակառակ դեպքում կուսակցությունը կորցնում է պառլամենտի թեկնածուներ առաջադրելու իրավունքը։

Ընտրական օրենքը արգելում է միևնույն թեկնածուին առաջադրել երկու ընտրական օկրուգում։

Տեղական կառավարման բոլոր օրգանների ընտրությունները կատարվում են չորս տարին մեկ։

Օրենքով սահմանված է, որ իշխանության տեղական օրգանների ընտրական կամպանիայի սկիզբը համարվում է յուրաքանչյուր ժամանակաշրջանի վերջին տարվա հուլիսի 15-ը, իսկ քվեարկության օրը՝ նույն տարվա սեպտեմբերի երրորդ կիրակին։

Ընտրությունների հետ կապված ամբողջ աշխատանքը կատարում են դատավորները և ընտրական հանձնաժողովները։ Վարչական ապարատը որևէ մասնակցություն չի ունե-

նում ո՛չ ընտրողների ցուցակները կազմելուն, ո՛չ էլ ընտրությունների անցկացմանը։

Տեղական կառավարման օրգանների ընտրությունների ժամանակ ակտիվ ընտրական իրավունք ունեն 21 տարեկան քաղաքացիները, պասիվ՝ 25 տարեկանները։

Ընտրությունները ղեկավարելը, նրանց անցկացման ճշտության ու կարգի հսկողությունը, բոլոր չարաշահումները հետաքննելը, գանգատներն ու առարկությունները քննարկելը դրվում են բարձրագույն ընտրական հանձնաժողովի վրա, որը բաղկացած է յոթ հիմնական և չորս պահեստի անդամներից։ Դրանցից վեցը ընտրվում են սահմանադրական դատարանի, իսկ հինգը՝ պետական խորհրդի կողմից, ձայների բացարձակ մեծամասնությամբ, գաղտնի քվեարկությամբ։

Բարձրագույն ընտրական հանձնաժողովի անդամներն իրենց կազմից ընտրում են նախագահ և տեղակալներ։ Վիճակահանության միջոցով որոշվում են պահեստի չորս անդամները՝ երկուսը սահմանադրական դատարանի և երկուսը՝ պետական խորհրդի կողմից։

## ԴԱՏԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ

Թուրքիայի դատական սիստեմը խիստ բյուրոկրատական բնույթ ունի և բացառում է դատական օրգանների ձևավորմանը և գործունեությանը ժողովրդի մասնակցության հնարավորությունը, քանի որ այդ օրգանները նշանակվում են կառավարության կողմից և գտնվում են նրա լիակատար ենթակայության ներքո։

Թուրքիայում գոյություն ունի երեք կարգի դատարան՝ առաջին, երկրորդ և երրորդ ինստանցիաների։

Ա ռ ա ջ ի ն  ի ն ս տ ա ն ց ի ա յ ի  դ ա տ ա ր ա ն ն ե ր ը բաժանվում են հաշտարար և հիմնական դատարանների։ Յուրաքանչյուր օկրուգում և վիլայեթում հիմնվում են հաշտարար դատարաններ, որոնք քննում են աննշան քաղաքացիական, քրեական և առևտրական գործեր։ Հաշտարար դատարանները կատարում են նաև հաշտեցնողի դեր։ Նրանք գործերը քննում են միանձնյա՝ առանց ատենակալների մասնակցության։



Հիմնական դատարանները կազմվում են օկրուգների, վիլայեթների կենտրոններում և մեծ քաղաքներում։ Նրանք քննում են քաղաքացիական, քրեական և առևտրական այն գործերը, որոնք հաշտարար դատարանի իրավասության մեջ չեն մտնում։ Հիմնական դատարանը կազմված է նախագահից և երկու անդամից։

Հիմնական դատարաններում կան առևտրական և քրեական կոլեգիաներ։ Հիմնական դատարանների քրեական կոլեգիաները կազմված են նախագահից և չորս անդամից։

Ե ր կ ր ո ր դ  ի ն ս տ ա ն ց ի ա յ ի  դ ա տ ա ր ա ն ն ե ր ը վերաքննության դատարաններն են։ Դրանց թվին են պատկանում վարչական և հատուկ դատարանները։

Վարչական դատարանները հիմնվում են վիլայեթների կենտրոններում, արդարադատության մինիստրության ցուցմամբ։ Վարչական դատարանների իրավունքով են գործում պետական խորհրդի սեկցիաները՝ երրորդ ինստանցիայի վարչական դատարանները, և արբիտրաժային հանձնաժողովները։

Հատուկ դատարանների թվին են պատկանում առևտրական դատարանները և զինվորական տրիբունալները։

Առևտրական դատարանները կազմված են նախագահից, երկու հիմնական և երկու ժամանակավոր դատավորներից, որոնք կատարում են ատենակալների ֆունկցիա։ Առևտրական դատարանների իրավասությանը վերաբերում են այն գործերը, բաց որոնց ներկայացված հայցն անցնում է 200 լիրայից։ Առևտրական դատարանների վճիռները կարող է բողոքարկվել միայն վճռաբեկ դատարանում։

Զինվորական տրիբունալները քննում են զինծառայողների կատարած հանցանքները, ինչպես նաև պատերազմի ժամանակ կամ պաշարողական վիճակի պայմաններում կամ ռազմական գոտում քաղաքացիական անձանց կատարած հանցանքները։ Զինվորական տրիբունալները, որպես կանոն, ստեղծվում են ազգային պաշտպանության մինիստրության և զինված ուժերի հրամանատարության կողմից՝ դիվիզիաներին, կորպուսներին, բանակներին կից, ինչպես և ռազմա-ծովային և ռազմա-օդային ուժերում։ Դրանք կազմված են երկու

զինվորական դատավորից և մեկ սպայից։ Եթե գործը հարուցվում գեներալի կամ ծովակալի դեմ, ապա գլխավոր շտաբին կից զինվորական տրիբունալի մեջ մտցվում են դատավորներ և երկու գեներալ կամ ծովակալ, և տրիբունալի նախագահ է նշանակվում կոչումով ավագը։ Յուրաքանչյուր զինվորական տրիբունալում կա դատախազական վերահսկողություն՝ բաղկացած զինվորական դատախազից և նրա տեղակալից։ Այն դեպքում, եթե մի հրամանատարությանը կամ ծովակալությանը կից ստեղծվում է մեկից ավելի զինվորական տրիբունալ, դատախազական հսկողությունը դառնում է ընդհանուր։

Նշված դատարաններից բացի, մանր հանցանքների քննության համար Թուրքիայում ստեղծվում են արտակարգ դատարաններ։

*Երրորդ ինստանցիայի դատարանները* վճռաբեկ են։ Դրանց թվին են պատկանում վճռաբեկ դատարանը, պետական խորհուրդը, բարձրագույն դատական խորհուրդը, զինվորական վճռաբեկ դատարանը, արբիտրաժային դատարանը, սահմանադրական դատարանը։

Վճռաբեկ դատարանը այն վերջին ինստանցիան է, որը քննարկում է առաջին ինստանցիայի սովորական դատարանի ընդունած վճիռներն ու որոշումները։ Վճռաբեկ դատարանի անդամներն ընտրվում են բարձրագույն դատական խորհրդի կողմից։ Նախագահը, նրա երկու տեղակալը և հանրապետության գլխավոր դատախազն ընտրվում են վճռաբեկ դատարանի անդամների լրիվ կազմի ձայների բացարձակ մեծամասնությամբ, գաղտնի քվեարկությամբ։

Վճռաբեկ դատարանն ունի տասնութ վարչություն, այդ թվում՝ ինը իրավական, յոթը՝ քրեական, մեկը՝ առևտրական, մեկը՝ անվճարունակության և սնանկության գործերի։

Պետական խորհուրդը բարձրագույն վարչական դատարանն է։ Նա քննում է վարչական տարաձայնությունների վերաբերյալ գործերը, ուսումնասիրում է Մինիստրների խորհրդի ներկայացրած օրինագծերը, կանոնադրությունները, նախագծերը, կոնցեսիաների վերաբերյալ պայմանագրերն ու համաձայնագրերը և տալիս իր եզրակացությունը դրանց մասին։



Պետական խորհրդի նախագահը, նրա նախագահության անդամները և օրենքների գլխավոր մեկնաբանն ընտրվում են խորհրդի անդամների ձայների երկու երրորդով, գաղտնի քվեարկությամբ։

Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասնութ հիմնական և հինգ պահեստի անդամներից։ Վեցական հիմնական անդամներ ընտրում են վճռաբեկ դատարանը և առաջին կատեգորիայի դատարանները, երեքական անդամներ՝ ազգային պալատը և սենատը. երկու պահեստի անդամ ընտրում է վճռաբեկ դատարանը և մեկական անդամ՝ առաջին կատեգորիայի դատարանները, ազգային պալատը և սենատը։ Բարձրագույն դատական խորհրդի անդամների լիազորության ժամկետը չորս տարի է, ընդ որում, երկու տարին մեկ նորացվում է նրա կազմի կեսը։ Բարձրագույն դատական խորհրդի իրավասության մեջ մտնում է դատարանների բոլոր անձնական գործերի վերաբերյալ որոշում ընդունելը, ինչպես և դատարանների ու դատավորների աշխատանքին վերահսկելը (դա իրագործվում է բարձր կատեգորիայի դատարանների կողմից, բարձրագույն դատական խորհրդի հանձնարարությամբ)։

Զինվորական վճռաբեկ դատարանը այն վերջին ինստանցիան է, որը քննում է զինվորական դատարանների ընդունած որոշումներն ու վճիռները։ Զինվորական վճռաբեկ դատարանը, նաև հանդիսանալով ամենաբարձր ինստանցիաներից առաջինը, քննում է այն գործերը, որոնք վերաբերում են հատուկ օրենքով նախատեսված վիճելի ռազմական հարցերին։ Զինվորական վճռաբեկ դատարանի նախագահության անդամները և գլխավոր զինվորական դատախազը նշանակվում են հանրապետության պրեզիդենտի կողմից, այն թեկնածուների թվից, որոնք առաջարկվել են զինվորական վճռաբեկ դատարանի անդամների լրիվ կազմի ձայների բացարձակ մեծամասնությամբ, բոլորել են 40 տարին և առնվազն 10 տարի աշխատել են որպես զինվորական դատավորներ կամ զինվորական դատախազներ։

Արբիտրաժային դատարանը կարգավորում է իրավարա-

նական, վարչական և ռազմա-դատական ինստանցիաների միջև ծագած ֆունկցիոնալ տարաձայնությունները։ Արբիտրաժային դատարանում նախագահի պարտականությունը կատարում է սահմանադրական դատարանի անդամներից մեկը։

Սահմանադրական դատարանը նոր իրավական հաստատություն է, որ մտցրել է 1961 թվականի սահմանադրությունը՝ ֆրանսիական սահմանադրական դատարանի օրինակով։ Նրա իրավասության մեջ մտնում է՝ հսկել, որ Ազգային մեծ ժողովի ընդունած օրենքները և ներքին կանոնադրությունները համապատասխանեն սահմանադրությանը։ Սահմանադրական դատարանի իրավասության մեջ են մտնում նաև քաղաքական կուսակցությունների արգելման և նրանց ֆինանսական հաշվետվության վերաբերյալ հարցերը։

Սահմանադրական դատարանի, որպես բարձրագույն ինստանցիայի դատարանի, իրավասությանը ենթակա են հանրապետության պրեզիդենտը, Մինիստրների խորհրդի անդամները, սահմանադրական դատարանի, պետական խորհրդի, զինվորական վճռաբեկ դատարանի, բարձրագույն դատական խորհրդի, պետական վերահսկողության նախագահներն ու անդամները, հանրապետության գլխավոր դատախազը, օրենքների գլխավոր մեկնաբանը, զինվորական վճռաբեկ դատարանի գլխավոր դատախազը և այդ դատարանի անդամները՝ իրենց պարտականությունների կատարման հետ կապված հանցագործություններ թույլ տալու դեպքում։

Սահմանադրական դատարանը կազմված է տասնհինգ հիմնական և հինգ պահեստի անդամներից։ Ըստ որում, չորս հիմնական անդամներին ընտրում է վճռաբեկ դատարանի ընդհանուր ժողովը, երեքին՝ պետական խորհրդի ընդհանուր ժողովը, մեկին՝ պետական վերահսկողության ընդհանուր ժողովը, երեքին՝ ազգային պալատը, երկուսին՝ սենատը, երկուսին՝ պրեզիդենտը։ Սահմանադրական դատարանը գաղտնի քվեարկությամբ ընտրում է իր նախագահին և տեղակալին, որոնք կարող են վերընտրվել։

Օրենսդիր պալատները սահմանադրական դատարանի



անդամներ ընտրում են ո՛չ թե Ազգային մեծ ժողովի անդամներից, այլ այն թեկնածուներից, որ առաջ են քաշում համալսարանների դասախոսների (իրավաբանների, տնտեսագետների և սոցիոլոգների) ընդհանուր ժողովները։

Սահմանադրական դատարանի անդամ կարող են ընտրվել 40-ից ոչ պակաս տարիքի և իրավագիտության, էկոնոմիկայի ու սոցիոլոգիայի ասպարեզում մանկավարժական հնգամյա ստաժ կամ իրավաբանական աշխատանքի 15 տարվա պրակտիկա ունեցող անձինք։ Սահմանադրական դատարանի անդամին արգելված է ունենալ որևէ պաշտոնական կամ մասնավոր պարտականություններ։

Սահմանադրական դատարանում կարող են օրենքը անվավեր հայտարարելու մասին անմիջականորեն հարց հարուցել (ոչ ուշ, քան նրա հրապարակումից 90 օր հետո) պրեզիդենտը, այն քաղաքական կուսակցությունները, որոնք ընտրությունների ժամանակ ստացել են բոլոր ձայների առնվազն 10 տոկոսը, և Ազգային մեծ ժողովի մեջ մտնող կուսակցական ֆրակցիաները, օրենսդիր պալատներից յուրաքանչյուրի անդամների լրիվ կազմի մեկ վեցերորդը, բարձրագույն դատական խորհուրդը, վճռաբեկ դատարանը, պետական խորհուրդը, զինվորական վճռաբեկ դատարանը, համալսարանները, եթե տվյալ օրենքը կամ նրա դրույթներից որևէ մեկը հակասում է սահմանադրությանը։

Սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են և ենթակա չեն բողոքարկման։ Դրանք պարտավոր են կատարել օրենսդիր, գործադիր և դատական ինստանցիաները և վարչական օրգանները, ինչպես նաև առանձին անձինք։

## ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ

Թուրքիայի զինված ուժերում ընդունված են ԱՄՆ-ի զորամիավորումների և զորամասերի կազմակերպական ձևերը, ինչպես նաև զինվորական ղեկավարման կառուցվածքը։ Թուրքական զինվորական կանոնադրությունների ու

հրահանգների հիմքում դրված են ԱՄՆ-ի բանակի համապատասխան կանոնադրություններն ու հրահանգները։

Թուրքիայում է գտնվում ԱՄՆ-ի մշտական զինվորական միսիան, որը երկրի զինված ուժերի զինվորական միավորումներում և զինվորական կենտրոնական վարչություններում ունի իր խորհրդականները։ Թուրքիայի տերիտորիայում ամերիկյան զինծառայողների ընդհանուր թիվը հասնում է 8760 զինվորի ու սպայի։

Համաձայն սահմանադրության (հոդվ. 110), զինված ուժերի գերագույն հրամանատարությունը Թուրքիայի ազգային մեծ ժողովի բացառիկ իրավունքն է, և վերջինիս անունից իրագործում է հանրապետության պրեզիդենտը։ Մինիստրների խորհուրդը Ազգային մեծ ժողովի առջև պատասխանատու է ազգային պաշտպանության և անվտանգության, պատերազմին զինված ուժերի պատրաստ լինելու համար։

Սահմանադրության 66-րդ հոդվածին համապատասխան, միայն Ազգային մեծ ժողովն իրավունք ունի օգտագործել զինված ուժերը, դրանք ուղարկել երկրի սահմաններից դուրս, պատերազմ հայտարարել, ինչպես նաև թույլ տալ, որ օտարերկրյա զորքեր մտնեն Թուրքիայի տերիտորիան։ Այդ բոլոր հարցերի մասին որոշումն ընդունվում է երկու պալատների միացյալ նիստում։

Զինված ուժերի փաստական հրամանատարը գլխավոր շտաբի պետն է, որին նշանակում է պրեզիդենտը՝ Մինիստրների խորհրդի երաշխավորմամբ։ Գլխավոր շտաբի պետը պատասխանատվություն է կրում Մինիստրների խորհրդի նախագահի առաջ։

Գլխավոր շտաբը ղեկավարում է զորքերի մարտական պատրաստությունը, կառավարությանը խորհուրդներ է տալիս զինվորական հարցերի վերաբերյալ, մշակում է պլաններ՝ պատերազմի հանգամանքները հաշվի առնելով։

Գլխավոր շտաբում կա չորս վարչություն (անձնակազմի, հետախուզության, օպերատիվ և թիկունքի), զորատեսակների և ծառայությունների բաժիններ։

Ազգային պաշտպանության մինիստրության (ԱՊՄ)



պարտականության մեջ մտնում է զինված ուժերի նյութական ապահովումը։ Այս մինիստրությունն անց է կացնում նորակոչիկների զինակոչը, կազմակերպում է պահեստայինների հաշվառումը և պահեստի կադրերի վերապատրաստում, պատերազմի ժամանակ կատարում է զորահավաք։ Բացի այդ, մինիստրությունը ղեկավարում է զինվորական ուսումնարանների կազմակերպումն ու գործունեությունը, պատրաստում է պահեստի սպաներ։ Ազգային պաշտպանության մինիստրությունն ապահովում է մոբիլիզացիոն պաշարների ստեղծումը և մշակում ռազմական հարցերի վերաբերյալ օրենքների նախագծեր, դրանք դնում Մինիստրների խորհրդի քննարկմանը և Թուրքիայի ազգային մեծ ժողովի հաստատմանը։ Մինիստրության կազմում կան հետևյալ վարչությունները՝ իրավաբանական հարցերի գծով խորհրդականների, ֆինանսական գործերի, օրենսդրության և անձնակազմի։

Գլխավոր շտաբի, ազգային պաշտպանության մինիստրության, մինիստրությունների և ռազմական կառուցամների գերատեսչությունների գործունեությունը կոորդինացնելու համար սահմանադրության համապատասխան (հոդվ. 3) ստեղծված է ազգային անվտանգության խորհուրդ (ԱԱԽ), որի նախագահը հանրապետության պրեզիդենտն է, իսկ նրա բացակայության դեպքում՝ պրեմիեր-մինիստրը։ Ազգային անվտանգության խորհրդի մեջ մտնում են գլխավոր շտաբի պետը, զինված ուժերի զորատեսակների հրամանատարները, բանակների հրամանատարները, մինիստրներ (ազգային պաշտպանության, ներքին գործերի, տրանսպորտի, ֆինանսների և մի քանի ուրիշ)։ Ռազմական շինարարության ընդհանուր հարցերից բացի, այդ խորհուրդը քննում է սպայական կազմին հերթական զինվորական կոչումներ տալու հարցերը։

Թուրքիայի ռազմական ուժերի ընդհանուր թվաքանակն է 500 հազար մարդ. դրանցից ցամաքային զորքեր՝ 440 հազար, ռազմա-ծովային ուժեր՝ 31 հազար և ռազմա-օդային ուժեր՝ 29 հազար մարդ։ Բացի այդ, ժանդարմական զորքերի թիվը մոտ 27 հազար մարդ է։

Ց ա մ ա ք ա յ ի ն զ ո ր ք ե ր ը Թուրքիայի զինված ուժերի

հիմքն են։ Խաղաղ ժամանակ դրանք բաժանված են երեք բանակի (բանակային տեսչությունների), որոնցից յուրաքանչյուրը պարունակում է երկուսից չորս բանակային կորպուս, առանձին դիվիզիաներ և բանակային ենթակայության զորամասեր։ Կորպուսը խաղաղ ժամանակ կազմված է լինում երկու-երեք դիվիզիայից, պատերազմի ժամանակ՝ երեք-չորս դիվիզիայից, նա ունի նաև կորպուսային ենթակայության զորամասեր (հրետանային, ինժեներական, կապի և թիկունքային ծառայության)։

Առաջին բանակը (շտաբը՝ Ստամբուլում) միավորում է Չաթալջայի, Կիրկլարելի շրջանների և Բոսֆորի գոտու բանակային կորպուսները և ամրացված շրջանները։ Երկրորդ բանակը (շտաբը՝ Կոնիայում) միավորում է Չանաքկալեի, Իզմիրի ամրացված շրջանների բանակային կորպուսներն ու Դեմիր-Կափիի ամրացված դիրքերը։ Երրորդ բանակը (շտաբը՝ Էրզրումում), բանակային կորպուսներից բացի, ներառում է Ղարսի և Էրզրումի ամրացված շրջանները։

Թուրքիայի ցամաքային ուժերը կազմում են 23 հետևակային (դրանցից 12-ը հանձնված են ՆԱՏՕ-ի միավորված ուժերի կազմին) և 3 զրահատանկային դիվիզիա։

Հետևակային դիվիզիան բաղկացած է հետևակային մարտական հինգ խմբից, վեց հրետանային դիվիզիոնից, տանկային, սակրային, հետախուզական, տրանսպորտային և բժշկական, կապի գումարտակներից, մատակարարման և նորոգման օրգաններից։ Բացի այդ, դիվիզիայի կազմում պետք է լինի բանակային ավիացիայի վաշտ։ Դիվիզիայի կազմում կա ընդհանուր առմամբ ավելի քան 13 հազար մարդ։ Մարտական խմբի մեջ մտնում են հինգ հետևակ վաշտ և մեկ օժանդակման վաշտ (ականանետներ, հակատանկային կառավարվող հրթիռներ, ռադիոլոկատորներ)։ Հետևակային դիվիզիայի հրետանին կազմված է անմիջական աջակցության հինգ դիվիզիոնից և ընդհանուր աջակցության մեկ դիվիզիոնից։ Անմիջական աջակցության դիվիզիոնները զինված են 105 և 155 մմ տրամաչափի հաուբիցներով, իսկ ընդհանուր աջակցության դիվիզիոնը ունի հրթիռներ (վերերկրյա կառավարման ռեակտիվ արկերի մարտկոց, «Օնեստ Ջոն» հրթիռի արձակման երկու սարք) և 203,2 միլիմետրանոց հաուբիցներից (չորս հրանոթ) կազմված մարտկոց։



Հետևակը զինված է հրացաններով, կարաբիններով, ավտոմատներով, թեթև և ծանր գնդացիրներով, ականանետներով, անշարժ թնդանոթներով և «բազուկներով»։

Զրահատանկային դիվիզիան կազմված է չորս տանկային, չորս մոտոհետևակային գումարտակներից և 105 ու 155 մմ տրամաչափի ինքնագնաց հաուբիցներից բաղկացած չորս դիվիզիոնից։ Դիվիզիայում ընդամենը պետք է լինեն ավելի քան 300 տանկ և ինքնագնաց հրետանային սարք։ Ընդհանուր առմամբ դիվիզիայում կա ավելի քան 14 հազար մարդ։ Զրահատանկային դիվիզիաները զինված են հիմնականում տանկերով և ամերիկյան ինքնագնաց սարքերով («Մ-24» թեթև տանկ, «Մ-47» միջին տանկ, «Մ-7-Վ» ինքնագնաց հաուբից)։

Ռազմա-օդային ուժերն ամբողջովին մտցված են 6-րդ միացյալ տակտիկական ավիացիոն հրամանատարության մեջ, որը ենթակա է ՆԱՏՕ-ի Հարավ-եվրոպական ռազմական գործողությունների թատերաբեմի հրամանատարությանը։ Թուրքիայի ռազմա-օդային ուժերը բաժանված են երկու օդային բանակների. առաջին բանակի շտաբը գտնվում է Էսքիշեհիրում, երկրորդը՝ Դիարբեքիրում։ Թուրքիայի զինված ուժերը հագեցված են կործանիչներով, կործանիչ-ռմբակոծիչներով, հետախույզ և տրանսպորտային ինքնաթիռներով։ Դրանք հիմնականում ամերիկյան արտադրության մոդելներ են. «Ֆ-84», «Ֆ-86» և «Ֆ-100»։ 1963 թվականին ստացվել է գերձայնային «Ֆ—104» ինքնաթիռների առաջին պարտիան։

Յուրաքանչյուր օդային բանակում կան 3—5 կործանիչ-ռմբակոծիչ և կործանիչ ավիացիոն բազա (գունդ), հետախույզ էսկադրիլիա և սպասարկող զորամասեր։ Բազան կազմված է 18—25 ինքնաթիռից բաղկացած 1—3 էսկադրիլիայից։ Թուրքիայի ռազմա-օդային ուժերի կազմում կան 9 ավիացիոն բազա և տրանսպորտային ավիացիայի մեկ բազա։

Տրանսպորտային ավիացիան անմիջականորեն ենթակա

է ռազմա-օդային ուժերի հրամանատարությանը։ Նա ունի «Ս-47», «Ս-54» ինքնաթիռներ և «Ն-19» ուղղաթիռներ։ 1964 թվականի վերջում Թուրքիայի ռազմա-օդային ուժերը ԱՄՆ-ից առաջին անգամ ստացան «Ս-130» տրանսպորտային ռեակտիվ երկու ինքնաթիռ։

Ռազմա-օդային ուժերի համար սպայական կադրեր է բաց թողնում Իզմիրի ավիացիոն ուսումնարանը։ Թուրքիայի համար օդաչու-հրահանգիչներ են պատրաստվում ԱՄՆ-ի և Կանադայի ուսումնական կենտրոններում։

Թուրքիայի ռազմա-օդային ուժերն ունեն ամեն տիպի 770 ինքնաթիռ և ուղղաթիռ, որոնցից 320-ը ռեակտիվ ինքնաթիռներ են։

Թուրքիայի ավիացիոն արդյունաբերությունն արտադրում է միայն պլաներներ, վարժական ու տուրիստական ոչ մեծ ինքնաթիռներ, նորոգում մարտական ինքնաթիռները։ Բացի այդ, Թուրքիայում ներմուծովի մասերից և հանգույցներից հավաքվում են ինքնաթիռներ։

**Ռազմա-ծովային ուժերի** կազմում կա տարբեր նշանակության 120 նավ, այդ թվում՝ 9 ականակիր, 10 սուզանավ, 10 հակասուզանավային պաշտպանության նավ, 13 էսկադրային տրալեր, 16 բազային տրալեր, 6 ականադիր և զգալի թվով օժանդակ նավեր։

Կազմակերպական տեսակետից ռազմա-ծովային ուժերը բաժանված են հետևյալ կերպ. ռազմա-ծովային նավատորմ, նեղուցների և Մարմարի ծովի գոտու նավատորմ, ուսուցման հրամանատարություն, Գյոլջուկի գլխավոր ռազմա-ծովային բազա, Սև, էգեյան և Միջերկրական ծովերի ռազմա-ծովային բազաների հրամանատարություններ։ Ռազմա-ծովային ուժերի հիմքը կազմում է ռազմա-ծովային նավատորմը, որը բաղկացած է երեք նավատորմիղներից՝ վերջինս ռազմանավերից, սուզանավերից և ականակիրներից։ Ռազմա-ծովային ուժերի գլուխ է կանգնած հրամանատարը՝ համապատասխան շտաբով։

Որոշ չափով ամրապնդվել է Թուրքիայի ռազմա-ծովային ուժերի նյութական բազան։ Գյոլջուկի և Իսթենիի (Ստամբուլի վիլայեթ) նավաշինական գործարաններն ապահովում են բոլոր տեսակի նավերի նորոգումը և մինչև 4 հազար տոննա ջրատարողություն ունեցող նավերի կառուցումը։ Նախատեսված է 1963—1967 թվականներին կառուցել տարբեր նշանակության 78 ռազմանավ։



**Հակաօդային պաշտպանության զորքերը** (ՀՕՊ)։ Վերացվել են առաջներում եղած երկրի ներքին շրջանների հրամանատարությունները և դրանց փոխարեն ստեղծվել են ուղղությունների հրամանատարություններ. արևելյան ուղղության՝ կենտրոնը Սվազում, միջին ուղղության՝ կենտրոնը Զանգրում, արևմտյան ուղղության՝ կենտրոնը Աֆիոն-Կարահիսարում։ Բացի այդ, ստեղծված է բազայի հրամանատարություն (Անթալիա-Իսքենդերունի շրջան)։ Ուղղությունների հրամանատարությանը ենթարկվում են ռադիոլոկացիոն ցանցը, զենիթային հրթիռային զորամասերը, կործանիչ ավիացիան, զենիթային և լուսարձակային զորամասերը։

**Հատուկ նշանակության զորքերը**։ Երկրի ներքին անվտանգության ապահովման, բանդիտիզմի դեմ պայքարելու համար գոյություն ունեն ժանդարմական զորքեր։ Պատերազմի ժամանակ դրանք կատարում են զինվորական ոստիկանության ֆունկցիաներ։ Ժանդարմական զորքերը բաժանվում են ստացիոնար և շարժական զորքերի։ Վերջիններս գոյություն ունեն առանձին բրիգադների, գնդերի ու գումարտակների ձևով։

Պետական սահմանների պաշտպանության համար կան սահմանահսկիչ զորամասեր, որոնք ժանդարմերիայի նման բաժանված են գնդերից կազմված առանձին բրիգադների, գումարտակների. վերջիններս բաժանված են սահմանային ուղեկալների (պոստերի)։

Հատուկ նշանակության զորքերի թվաքանակը մոտ 100 հազար մարդ է։

**Զինված ուժերի կոմպլեկտավորման սիստեմը**։ Ընդհանուր զինապարտության օրենքի համաձայն 20—46 տարեկան յուրաքանչյուր տղամարդ համարվում է

զինապարտ։ Զինհաշվառման մեջ գտնվելու ժամկետը բաժանված է երեք ժամանակաշրջանի. նախապատրաստական, իսկական զինվորական ծառայության մեջ և պահեստում գտնվելու ժամանակաշրջանները։ Նախապատրաստական շրջանն իր հերթին բաժանվում է երկու էտապի. առաջին՝ երիտասարդության գրանցման էտապ, երբ տվյալ տարվա մինչև հունվարի մեկը դառնում է 20 տարեկան (հունվարից մինչև մարտը), երկրորդ էտապը՝ զորահավաք, որի ընթացքում զինակոչիկներն անցնում են բժշկական քննություն և բազմակողմանի ստուգման։ Պիտանի ճանաչվածները յուրաքանչյուր տարվա սեպտեմբերին ուղարկվում են զորամասեր։

Քանի որ զինակոչիկների 40 տոկոսը անգրագետ է, նրանց ուղարկում են ուսումնական հատուկ կենտրոններ, որտեղ նրանք երկու ամսվա ընթացքում կարդալ ու գրել են սովորում։ Դրանից հետո նորակոչիկներին ուղարկում են ուսումնական դիվիզիաներ ու կենտրոններ, որտեղ ռազմական ուսուցմանը զուգահեռ, երիտասարդ զինվորներն անցնում են հանրակրթական պատրաստություն։ Այն շարքային զինվորները, որոնց պատրաստում են տեխնիկական զորամասերի և ստորաբաժանումների համար, նախնական ուսուցում են անցնում հատուկ կենտրոններում և զանազան մասնագիտական դասընթացներում։

Իսկական զինվորական ծառայության ժամկետը բոլոր զորատեսակներում երկու տարի է։ Պահեստում եղած զինապարտները սիստեմատիկաբար, կարճատև ժամկետներով կանչվում են վերապատրաստման։ Աշխատունակ 46—50 տարեկան տղամարդիկ և 20—45 տարեկան կանայք զինվորական ծառայության մեջ են ընդգրկվում տեղական պաշտպանության զորամասերում և զանազան օժանդակ զորային ծառայություններում։

Սպայական կազմի պատրաստումն իրագործվում է ռազմական ուսումնարանների սիստեմի միջոցով։

Թուրքիայի ռազմա-ուսումնական հաստատությունները բաժանվում են երեք տիպի՝ լիցեյներ, ուսումնարաններ և ակադեմիաներ. բացի այդ, Անկարայում կա պահեստի



սպաների պատրաստման դպրոց։ Պահեստի սպաներ են պատրաստում նաև հատուկ դասընթացներում, որոնք, իբրև կանոն, գոյություն ունեն ռազմական ուսումնարաններին կից։

Զինվորական լիցեյներն ուսման երեքամյա ժամկետում սովորողներին պատրաստում են ռազմական ուսումնարաններ ընդունվելու համար։ Լիցեյները համալրվում են միջնակարգ դպրոցի յոթ դասարան ավարտած պատանիներով։ Լիցեյում նախասկզբնական զինվորական պատրաստության հետ միասին կուրսանտներն ստանում են լրիվ միջնակարգ կրթություն։ Լիցեյ ավարտողները, զորքերում փորձ ձեռք բերելուց հետո, բաշխվում են ռազմական ուսումնարանների վրա։

Ռազմական ուսումնարաններ կան բոլոր զորատեսակների համար։ Դրանցում սովորելու ժամկետը երկու տարի է։ Ռազմական ուսումնարան ավարտողները սպայի պաշտոնով նշանակվում են զորքերում։

Կրտսեր հրամանատարական կազմ պատրաստելու համար կա դպրոցների ցանց (Մերզիֆոնում, Կոնիայում, Մերսինում, Էդիրնեում, Դենիզլիում, Չորումում, Սամսունում, Հեյբելիադայում)։ Այս դպրոցներն ամեն տարի տալիս են 4—4,5 հազար ենթասպաներ։

Ռազմական ուսումնարաններին և դպրոցներին զուգընթաց գոյություն ունի ըստ զորատեսակների կատարելագործման դասընթացների ցանց, որտեղ վերապատրաստվում են զորամասերից գործուղված սպաները և Անկարայի «Հարբիե» ռազմական ուսումնարանն ավարտած սպաները (զորքերում փորձ ձեռք բերելուց հետո)։

Սպաների մի զգալի մասն էլ վերապատրաստվում է արտասահմանում, գլխավորապես ԱՄՆ-ում։ Հրթիռաձիգները սովորում են ԱՄՆ-ում։ ԱՄՆ-ի հրթիռազենիթային զորամասերի ուսումնա-վարժական հավաքներին մասնակցում են թուրքական զումարտակները, որոնց սպառազինության մեջ կան «Նայկի» հրթիռներ։

Մինչև 1961 թվականը ավագ և բարձր հրամանատարական կազմի պատրաստումն իրագործվում էր ռազմական ա-

կացնեմիջայում։ 1961 թվականին այն վերակառուցվեց և նրա բազայի վրա ստեղծվեցին ցամաքային ուժերի, ռազմա-օդային ուժերի և ռազմա-ծովային ուժերի ակադեմիաներ։ Դրանց խնդիրն է պատրաստել շտաբային հրամանատարներ՝ զինված ուժերի նշված զորատեսակների համար։ Այդ նույն տարում էլ կազմակերպվեցին բարձրագույն հրամանատարության ակադեմիա և ազգային պաշտպանության ակադեմիա. առաջինը պատրաստում է զորամիավորումների հրամանատարներ, երկրորդը՝ պետական ապարատի հրամանատարներ և աշխատողներ։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1963 թվականին Թուրքիայում կար 25 լեգալ քաղաքական կուսակցություն։ Պառլամենտում վճռական դեր են խաղում բուրժուա-կալվածատիրական երկու կուսակցություն՝ ժողովրդա-հանրապետական և արդարության կուսակցությունները. բացի դրանցից, այնտեղ ներկայացված են նոր Թուրքիայի կուսակցությունը, հանրապետական գյուղացիական-ազգային կուսակցությունը և ազգային կուսակցությունը։

Բուրժուական և բուրժուա-կալվածատիրական բոլոր կուսակցությունների ծրագրերը հիմնվում են այն սկզբունքների վրա, որոնց նպատակն է ստեղծել «ազգային միասնության և ըն-եղբայրության» վրա հենվող պետություն։ Ձևականորեն ընդունելով էթաթիզմը, այդ կուսակցությունները հանդես են գալիս օտարերկրյա կապիտալը Թուրքականին հավասար պայմաններում ներգրավելու օգտին։ Բոլորովին չեն տարբերվում նրանց արտաքին քաղաքական ծրագրերը։ Նրանք բոլորն էլ կողմնակից են արևմտյան տերությունների հետ դաշինքին, ՆԱՏՕ և ՍԵՆՏՕ ռազմական բլոկներին մասնակցելուն։

Թուրքիայի կոմունիստական կուսակցությունը, որ արդեն ավելի քան 40 տարի է, ինչ գտնվում է անլեգալ դրության



մեջ, չի կարող արդյունավետ կերպով ազդել երկրի քաղաքական կյանքի վրա։ Թուրքիայում կոմկուսակցության պատկանելը դիտվում է որպես ծանրագույն հանցագործություն, որի մեջ մեղադրվողները ենթակա են դաժան դատաստանի, ընդհուպ մինչև մահապատիժ։

Ներկա էտապում կուսակցության հիմնական ծրագրային լոզունգն է՝ ազգային, դեմոկրատական, հակաիմպերիալիստական ճակատի ստեղծում, որը պրոլետարիատի ղեկավարությամբ միավորի ամենատարբեր դասակարգերը, խավերը, և խմբավորումները, որոնք պայքարում են ազգային անկախության համար, իմպերիալիստների և երկրի ներսում նրանց գործակալների դեմ։ Ազգային ճակատի առաջատար ուժը կոմունիստները համարում են բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հետ. կուսակցության ծրագրային փաստաթղթերի մեջ կենտրոնական տեղերից մեկը գրավում է բանվոր դասակարգի գլխավորությամբ պայքարը անկախ, դեմոկրատական, խաղաղասեր և չեզոք Թուրքիա ստեղծելու համար։

1961 թվականին ստեղծվեց Թուրքիայի բանվորական կուսակցությունը, որի ծրագրի հիմքում դրված էին Անգլիայի լեյբորիստական կուսակցության գաղափարական դրույթները։

Երկրի մարզային և գավառային կենտրոններում իրենց կազմակերպություններն ունեցող քաղաքական կուսակցությունների շարքին են պատկանում (վերը նշվածներից բացի) նաև ազատ ազգային կուսակցությունը, միասնության կուսակցությունը, քեմալական երիտասարդական կուսակցությունը, «Վաթան» կուսակցությունը և նոր դեմոկրատական կուսակցությունը։ Մնացած 14 քաղաքական կուսակցությունները Թուրքիայի վարչական կենտրոններում ոչ մի ստորին կազմակերպություն չունեն։

Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը (ԺՀԿ) ստեղծվել է 1923 թվականին՝ իրավունքների պաշտպանության բուրժուա-հայրենասիրական ընկերությունների բազայի վրա, որոնք առաջացել էին 1918—1923 թվականներին թուրք ժողովրդի մղած հակաիմպերիալիստա-

կան պայքարի ժամանակաշրջանում: Կուսակցության լիդերը և անփոփոխ նախագահը Քեմալ Աթաթյուրքն էր: Նրա մահից հետո (1938 թ.) կուսակցությունը գլխավորեց Իսմեթ Ինենյուն:

Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը 1923-ից մինչև 1950 թվականը անփոփոխ կերպով գտնվում էր իշխանության գլուխ: 1950 թվականի ընտրությունների ժամանակ պարտություն կրելուց հետո նրա անդամների մի մասը մտավ իշխանության գլուխ անցած դեմոկրատական կուսակցության (ԴԿ) մեջ, որին գլխավորում էին Ջելալ Բայարը և Ադնան Մենդերեսը:

Օպոզիցիայում եղած ժամանակամիջոցում (1950—1960 թթ.) ժողովրդա-հանրապետական կուսակցությունը իշխանության համար լարված պայքար էր մղում իր գլխավոր մրցակից դեմոկրատական կուսակցության դեմ, որն արտահայտում էր տարբերկրյա մոնոպոլիստական կապիտալի հետ սերտորեն կապված կալվածատերերի և խոշոր բուրժուազիայի շահերը:

1960 թվականի մայիսի 27-ի պետական հեղաշրջման հետևանքով, որը հանգեցրեց Բայար-Մենդերեսի ռեժիմի տապալմանը, և 1961 թվականի հոկտեմբերին կայացած ընտրություններից հետո, ժողովրդա-հանրապետական կուսակցությանը նորից հաջողվեց վերադառնալ երկրի կառավարմանը:

1963 թվականի նոյեմբերի 17-ին անցկացված մունիցիպալ ընտրությունների ժամանակ այդ կուսակցությունը կորցրեց ընտրողների մոտ 10 տոկոսը, նրան հաջողվեց հաղթանակ տանել միայն 18 վիլայեթում: Երկրում ժողովրդա-հանրապետական կուսակցության հեղինակության անկումն իր արտացոլումը գտավ կուսակցության ներսում սկսված սուր պայքարում, որ ծագեց ազդեցիկ օպոզիցիոն «չորսի» խմբի (Գյուլեկ, Էրիմ, Դողան, Գեյե) և Իսմեթ Ինենյուի միջև: Ժողովրդա-հանրապետական կուսակցությանը մեծ դժվարությամբ հաջողվեց հաղթահարել ներկուսակցական



ճգնաժամը, որն ավարտվեց օպոզիցիոն խմբը կուսակցությունից վտարելով:

1964 թվականի մարտին կուսակցությունը 42 տեղ ուներ սենատում և 180 տեղ՝ ազգային պալատում: 1965 թվականի փետրվարին նա դարձավ օպոզիցիոն կուսակցություն:

1963 թվականի փետրվարին այդ կուսակցության բաժանմունքներ էին գործում բոլոր վիլայեթներում ու իլչեներում: Նա վերահսկում է երիտասարդական 268 և կանանց 83 ստորին կազմակերպությունների:

Կուսակցության գլխավոր նախագահը Իսմեթ Ինենյուն է, գլխավոր քարտուղարը՝ Քեմալ Սաթիրը. 1963 թվականին գլխավոր քարտուղարի տեղակալներն էին Թուրխան Ֆեյզիօղլուն և Խյուրեմ Մյուֆթյուօղլուն:

Կուսակցության կենտրոնական օրգանը ամենօրյա «Ուլուս» թերթն է, որը լույս է տեսնում Անկարայում:

Արդարության կուսակցությունը (ԱԿ) ծայրահեղ աջ ռեակցիոն կուսակցություն է, որն արտահայտում է տարբերկրյա մոնոպոլիստական կապիտալի հետ սերտորեն կապված խոշոր կալվածատերերի և կոմպրադորական բուրժուազիայի շահերը: Արդարության կուսակցությունն ստեղծվել է 1961 թվականին: Նրա մեջ է մտել 1960 թվականի սեպտեմբերին արձակված դեմոկրատական կուսակցության զգալի մասը:

Կուսակցության գլխավոր նախագահ ընտրվեց պաշտոնաթող գեներալ Ռագիփ Գյումյուշփալան:

1961 թվականի հոկտեմբերի 15-ին կայացած պառլամենտական ընտրություններում այդ կուսակցությունը, խելացիորեն օգտագործելով նախընտրական կամպանիայում ստեղծված դժվարությունները և ազգային միասնության կոմիտեի կառավարության թույլ տված սխալները, լուրջ հաղթանակի հասավ՝ ստանալով բոլոր ձայների մոտ 34 տոկոսը: Ընտրությունների հետևանքով նա նվաճեց 70 տեղ սենատում և 158 տեղ՝ ազգային պալատում:

Արդարության կուսակցությունը 11 մինիստրական

պորտֆել ուներ Իսմեթ Ինենյուի առաջին կոալիցիոն կառավարությունում, որ կազմվեց 1961 թվականի նոյեմբերին։

Թուրքական դատապարտված ղեկավարներին ներում շնորհելու հարցի մասին ժողովրդա-հանրապետական և արդարության կուսակցությունների միջև ծագած սուր տարաձայնությունները 1962 թվականի մայիսին հանգեցրին առաջին կոալիցիոն կառավարության հրաժարականին։ Ընդհուպ մինչև 1965 թվականը արդարության կուսակցությունը հիմնական օպոզիցիոն կուսակցությունն էր Թուրքիայի ազգային մեծ ժողովում։ 1965 թվականի փետրվարին նա մինիստրական պոստեր ստացավ Սուաթ Խայրի Ուրգյուփլյուի կոալիցիոն կառավարության մեջ։

Արդարության կուսակցության քաղաքական պլատֆորմը քիչ բանով է տարբերվում դեմոկրատական կուսակցության ծրագրից։ Ներքին քաղաքականության հարցերում կուսակցությունը հանդես է գալիս Բայար-Մենդերեսի կողմնակիցներին լիովին ներում շնորհելու, երկրում ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա կապիտալը խրախուսելու օգտին։ Նա պահանջում է այդ կապիտալին ցույց տալ «ամեն տեսակի աջակցություն» և հովանավորություն։ Պայքարում է հակակոմունիզմի քաղաքականությունն ակտիվացնելու համար։

Արդարության կուսակցության արտաքին քաղաքական կուրսը, որ հիմնված է ՆԱՏՕ և ՍԵՆՏՕ ռազմական պակտերին Թուրքիայի մասնակցության վրա, ըստ էության կանխատեսում է հրաժարվել սովետա-թուրքական բարիդրացիական հարաբերությունները ամրապնդելու քաղաքականությունից։

Օգտագործելով աշխատավորական մասսաների և միջնախավերի դժգոհության աճումը, որ առաջացել է Թուրքիայի տնտեսական դրության հետագա վատթարացումից, այդ կուսակցությունը ձգտում է երկրի քաղաքական կյանքում դուրս գալ առաջին տեղը։ 1963 թվականի նոյեմբերին տեղի ունեցած մունիցիպալ ընտրությունները նրան որոշակի հաջողություն բերեցին. 67 վիլայեթներից 47-ում հաղթանակեց այդ կուսակցությունը։



1964 թվականի մայիսին նա սենատում ուներ 72 տեղ, իսկ ազգային պալատում՝ 165։

1963 թվականին արդարության կուսակցությունն իր բաժանմունքներն ուներ 64 վիլայեթներում, ինչպես նաև 513 գավառային կենտրոններում։ Նրա ղեկավարությամբ գործում էին 155 երիտասարդական և 3 կանանց սորին կազմակերպություններ։

Գեներալ Ռ. Գյումյուշփալայի մահվանից (1964 թվականի հունիս) հետո կուսակցության գլխավոր նախագահի պարտականությունները դրվեցին Սաադեթտին Բիլգիչի վրա։ 1964 թվականի դեկտեմբերին արդարության կուսակցության գլխավոր նախագահ ընտրվեց Սուլեյման Դեմիրելը։

Նոր Թուրքիայի կուսակցությունը (ՆԹԿ) ստեղծվել է 1961 թվականին։ Նա կազմված է գլխավորապես դեմոկրատական և ժողովրդա-հանրապետական կուսակցությունների նախկին անդամներից, որոնք այդ կուսակցություններից դուրս են եկել քաղաքական տարաձայնությունների հետևանքով, նախքան 1960 թվականի պետական հեղաշրջումը։

Նոր Թուրքիայի կուսակցությունն արտահայտում է թուրքական բուրժուազիայի, գլխավորապես միջնախավերի շահերը։ Տնտեսական քաղաքականության մեջ նա հանդես է գալիս մասնավոր սեկտորի ամրապնդման օգտին։ Սկզբունքորեն պաշտպանելով Թուրքիայի տնտեսական զարգացման հնգամյա պլանը, այդ կուսակցությունն այնուամենայնիվ ձգտում է այն փոփոխել մասնավոր կապիտալի դիրքերն ամրապնդելու համար։

1961 թվականի պառլամենտական ընտրություններում նոր Թուրքիայի կուսակցությունը ձայների թվով գրավեց երրորդ տեղը և ստացավ 28 մանդատ սենատում և 65-ը՝ ազգային պալատում։

Իսմեթ Ինենյուի երկրորդ կոալիցիոն կառավարության մեջ նա ուներ վեց տեղ։

Նոր Թուրքիայի կուսակցության պառլամենտական ֆրակցիան պաշտպանում էր տապալված Բայար-Մենդերեսի

դատապարտված կողմնակիցներին ժամանակի ներում շնորհելու վերաբերյալ պահանջը։

Ներկուսակցական ճգնաժամը հասցրեց Նոր Թուրքիայի կուսակցության դիրքերի թուլացմանը։ 1963 թվականի մունիցիպալ ընտրությունների ժամանակ կուսակցությունը կորցրեց ձայների մոտ երկու երրորդը։ Նրա պառլամենտական ֆրակցիան զգալիորեն կրճատվեց նաև այն բանի հետևանքով, որ շատ սենատորներ ու դեպուտատներ անցան Մեջլիսում ներկայացված մյուս կուսակցությունների մեջ։ 1964 թվականի մայիսին կուսակցության պառլամենտական ֆրակցիան կազմված էր 12 սենատորից և ազգային պալատի 36 պատգամավորից։

Նոր Թուրքիայի կուսակցությունը Ուրգյուփլյուի կառավարությունում ստացավ չորս մինիստրական պոստ։

1963 թվականին այդ կուսակցությունը երկրում ուներ 53 վիլայեթային, 352 գավառային, 82 երիտասարդական և 4 կանանց կազմակերպություններ։

Կուսակցության գլխավոր նախագահն է Էքրեմ Ալիջանը։ 1964 թվականին ՆԹԿ-ի գլխավոր նախագահի տեղակալի ֆունկցիաները կատարում էին Յուսուֆ Ազիզօղլուն, Ռաիֆ Այբարը և Ֆահրետտին Քերիմ Հեկայը։

Կուսակցության պաշտոնական օրգանն է «Օնչյու» («Ավանգարդ») թերթը, որը լույս է տեսնում Անկարայում։

Հանրապետական գյուղացիական-ազգային կուսակցությունը (ՀԳԱԿ) բուրժուա-կալվածատիրական կուսակցություն է, որ ստեղծվել է 1958 թվականին։ Բայար-Մենդերեսի ռեժիմի ժամանակաշրջանում գտնվում էր օպոզիցիայի մեջ։ Թուրքիայի ազգային մեծ ժողովի 1961 թվականի ընտրությունների ժամանակ այդ կուսակցությունն ստացավ 16 տեղ սենատում և 54-ը՝ ազգային պալատում։

Իսմեթ Ինենյուի երկրորդ կոալիցիոն կառավարությունում Հանրապետական գյուղացիական-ազգային կուսակցությունն ուներ չորս մինիստրական պորտֆել։

Ներկուսակցական սուր տարաձայնությունները հանգեցրին այդ կուսակցության լուրջ ճգնաժամին։ 1962 թվականի



հունիսին կուսակցության պառլամենտական ֆրակցիայի մի խումբ անդամներ կուսակցության գլխավոր նախագահ Օսման Բյոլյուքբաշիի գլխավորությամբ որոշեցին ստեղծել նոր կուսակցություն։

1964 թվականի սկզբին կուսակցության գլխավոր նախագահի պոստում ընտրվեց կուսակցության կենտրոնական ղեկավար խորհրդի անդամ Ահմեդ Օգուզը։

1963 թվականի նոյեմբերին անցկացված մունիցիպալ ընտրությունների ժամանակ կուսակցությունը խոշոր պարտություն կրեց՝ կորցնելով ընտրողների ձայների մոտ չորս հինգերորդը։

Ներկուսակցական ճգնաժամի հետևանքը եղավ նրա պառլամենտական ֆրակցիայի զգալի կրճատումը։ 1964 թվականի մայիսին այդ ֆրակցիան կազմված էր 6 սենատորից և ստորին պալատի 20 դեպուտատից։

Ուրգյուփլյուի կառավարության կազմում կուսակցությունն ստացավ չորս մինիստրական պոստ։

1965 թվականին կուսակցության մեջ մտան «14-ի խմբի» 10 կողմնակիցներ՝ ազգային միասնության կոմիտեի նախկին անդամներ, որոնք խմբից վտարվել էին 1960 թվականի նոյեմբերին։ 1960 թվականի մայիսի 27-ի պետական հեղաշրջման աչքի ընկնող մասնակից և «14-ի խմբի» ղեկավար Ա. Թյուրքեշը Հանրապետական գյուղացիական-ազգային կուսակցության 1965 թվականի օգոստոսին կայացած արտակարգ համագումարում ընտրվեց կուսակցության գլխավոր նախագահ։

Ազգային կուսակցությունը (ԱԿ) ստեղծվեց 1962 թվականին Հանրապետական գյուղացիական-ազգային կուսակցության և Թուրքիայի ազգային մեծ ժողովի մի խումբ դեպուտատների անջատվելու հետևանքով, որոնք հրաժարվեցին կոալիցիայի մեջ մտնել ժողովրդա-հանրապետական և Նոր Թուրքիայի կուսակցությունների հետ։ Կուսակցության գլխավոր նախագահն է Օսման Բյոլյուքբաշին։ 1964 թվականին ազգային կուսակցությունը պառլամենտում ուներ 5 սենատոր և 10 դեպուտատ։

*Արդյունքում կաբինետի մեջ մտան կուսակցության չորս ներկայացուցիչներ։*

*1963 թվականին Թուրքիայում կային այդ կուսակցության 29 վիլայեթային, 55 գավառային և 3 երիտասարդական կազմակերպություններ։*

*Թուրքիայի բանվորական կուսակցությունը (ԹԲԿ) առեղծվել է 1961 թվականի փետրվարին, Ստամբուլում՝ բանվորական արհմիությունների Ստամբուլի միավորման ակտիվիստական թևի կողմից։ 1961 թվականի հոկտեմբերին կայացած պառլամենտական ընտրություններին կուսակցությունը չմասնակցեց, որովհետև այդ ժամանակ նա փաստորեն ցրված էր։ 1962 թվականի սկզբին կուսակցության ղեկավարության գլուխ կանգնեցին նոր մարդիկ։*

*Այս կուսակցության մեջ մտնում են բանվորներ, գյուղացիներ, աշխատավոր ինտելիգենցիա, ինչպես նաև մանր ու միջին բուրժուազիայի ներկայացուցիչներ։ 1963 թվականին երկրում կային 7 վիլայեթային, 12 գավառային կուսակցական և 3 երիտասարդական կազմակերպություններ։*

*1963 թվականի նոյեմբերին կայացած մունիցիպալ ընտրություններին կուսակցության օգտին տրվեց 5 հազար ձայն։ 1965 թվականին կուսակցության տարրին կազմակերպություններ գոյություն ունեին 52 վիլայեթներում։*

*1964 թվականի փետրվարի սկզբին Իզմիրում կայացած կուսակցության I համագումարում ընդունվեց կուսակցության նոր ծրագիր։ Կուսակցության ծրագրային գլխավոր լոզունգն է՝ պայքար Թուրքիայի զարգացման ոչ կապիտալիստական ուղու համար։ Այդ նպատակին հասնելու հիմնական միջոցներ են համարվում էտատիզմը և պլանային քաղաքականությունը, որը հենվում է պետական և մասնավոր սեկտորների համագործակցության վրա։ Կուսակցությունը հանդես է գալիս արմատական հողային ռեֆորմի, խոշոր հողատերերի ձեռքին եղած հողն օտարելու և հողազուրկ ու սակավահող գյուղացիներին բաժանելու օգտին։*

*Կուսակցության գլխավոր նախագահն է Մահմեդ Ալի Այբարը։ Գլխավոր քարտուղարներն են Ջեմալ Հակկի Սելեկը և Ռզա Կուասը։*

*Կուսակցության գործունեության մասին ինֆորմացիոն նյութ է հրապարակվում «Սոսյալ ադալեթ» («Սոցիալական արդարություն») ամսագրում և «էմեկչի» («Աշխատավոր») թերթում։*



## ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ԵՎ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Թուրքիայում կա մոտավորապես 2,6 միլիոն բանվոր, այդ թվում՝ 900 հազարը՝ վերամշակող, լեռնարդյունահանող արդյունաբերության և շինարարության մեջ, 200 հազարը՝ տրանսպորտում, 600 հազարը՝ առևտրի ու սպասարկման ոլորտում, մոտ 900 հազարը՝ գյուղատնտեսության մեջ։ Պրոլետարիատի թվաքանակով Թուրքիան առաջին տեղերից մեկն է գրավում Մերձավոր և Միջին արևելքի երկրներում։ Արդյունաբերական բանվորների հիմնական զանգվածը կենտրոնացված է Ստամբուլում և նրա արվարձաններում (20 տոկոս), Իզմիրում (մոտ 12 տոկոս), Զոնգուլդակում (8 տոկոս), Ադանայում (6 տոկոս), Անկարայում (5 տոկոս)։ Արդյունաբերական պրոլետարիատի ավելի քան 20 տոկոսը կազմում են կանայք և երեխաները։*

*Բանվոր դասակարգի շարքերի համալրման կարևորագույն աղբյուր են քայքայվող արհեստավորները և, դրանց հետ միասին, արտագնաց գյուղացիները, որոնք իրենց կապը վերջնականապես չեն խզում գյուղից։ Քաղաքային պրոլետարիատի մինչև 40 տոկոսը ձեռնարկություններում աշխատում է չորս-հինգ ամսից ոչ ավելի։ Գյուղատնտեսական բոլոր բանվորների 10 տոկոսից քիչ ավելին մշտական աշխատանք ունի պետական ֆերմաներում և կալվածատիրական տնտեսություններում։ Գյուղատնտեսական մյուս բանվորները վարձով աշխատում են տարեկան երեքից հինգ ամիս։*

*Մինչև 1963 թվականի ամառը թուրքական բանվորների աշխատանքի պայմանները կարգավորվում էին 1936 թվակա-*

նի «Աշխատանքի օրենքով», որի գործողությունը տարածվում էր ոչ պակաս քան չորս բանվոր ունեցող ձեռնարկությունների վրա։ 1936 թվականի «Աշխատանքի օրենքը» թուրքական բանվորներին զրկում էր տարրական քաղաքական իրավունքներից. արգելում էր գործադուլ անել, ինչպես պետական, այնպես էլ մասնավոր սեկտորի ձեռնարկություններում, սահմանում էր գործադուլավորներին պատժելու խիստ միջոցներ՝ տուգանքներ (մեծ գումարի) և երկարատև բանտարկություն։

Երկրորդ համաշխարհային պատերազմում Սովետական Միության տարած համաշխարհային-պատմական հաղթանակները, սոցիալիստական լագերի կազմվելը, գաղութային և կախյալ երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի ուժեղանալը մեծ ազդեցություն գործեցին հետպատերազմյան Թուրքիայի դեմոկրատական շարժման վրա։

1946 թվականի սկզբին Ստամբուլում, Իզմիրում, Անկարայում, Ադանայում, Զոնգուլդակում և ուրիշ քաղաքներում առաջացան արհմիություններ, որոնք շուտով հանդես եկան բանվորների աշխատանքի ու կյանքի պայմաններն արմատապես բարելավելու, պրոլետարիատին քաղաքական իրավունքներ տալու պահանջներով։

Հատկապես ակտիվ էին գործում Ստամբուլի արհմիությունները, որոնք գտնվում էին Թուրքիայի սոցիալիստական բանվորա-գյուղացիական կուսակցության ազդեցության տակ։ Նրանք սկսեցին հրատարակել «Սենդիկա» («Արհմիություններ») թերթը և շուտով ստեղծեցին Ստամբուլի բանվորների արհմիությունների միավորում։ Անեց ու ամրապնդվեց համաթուրքական արհմիութենական կենտրոն ստեղծելու համար սկսված շարժումը։ Ստամբուլում բացվեց բանվորական ակումբ, որտեղ անց էին կացվում դասախոսություններ ու զրույցներ։ 1946 թվականի դեկտեմբերին դեմոկրատական մամուլը հաղորդեց Թուրքիայի բանվորական արհմիությունների ֆեդերացիայի ստեղծման մասին։

Պրոլետարիատի ակտիվացումից անհանգստացած կառավարությունը դիմեց ռեպրեսիաների։ Նա 1946 թվականի



դեկտեմբերի 16-ին արգելեց Թուրքիայի սոցիալիստական բանվորա-գյուղացիական կուսակցության, Թուրքիայի սոցիալիստական կուսակցության, Ստամբուլի բանվորական ակումբի, Ստամբուլի բանվորական արհմիությունների միավորման գործունեությունը և փակեց դեմոկրատական թերթերը։ Արգելված կուսակցությունների և արհմիությունների ղեկավարներն, ինչպես նաև առաջադիմական թերթերի աշխատակիցները, բանտ նետվեցին։

Միևնույն ժամանակ, կառավարող շրջանները միջոցներ գործադրեցին բանվոր դասակարգի շարքերը թուլացնելու, կազմալուծելու և փոշիացնելու համար։ Այսպես, 1947 թվականի փետրվարի 20-ին Ազգային մեծ ժողովն ընդունեց «Օրենք բանվորների և աշխատանք տվողների արհմիությունների և արհմիութենական միավորումների մասին»։ Օրենքը նախատեսում էր արհմիությունների կազմակերպում ո՛չ թե արտադրական սկզբունքով, այլ ըստ պրոֆեսիաների, ըստ որում, բանվորները կարող էին լինել միաժամանակ մի քանի արհմիութենական միավորման անդամ։ Արհմիությունները պարտավոր էին իշխանություններին հայտնել բանվորների ու ձեռնարկատերերի միջև ծագած աշխատանքային կոնֆլիկտների մասին, կարծիք հայտնել այդ կոնֆլիկտները լուծելու մասին, մասնակցել արբիտրաժային հանձնաժողովներին. նյութական օգնություն ցույց տալ արհմիության անդամներին, ինչպես նաև իրագործել կուլտուր-լուսավորական միջոցառումներ։ Օրենքը արհմիություններին արգելում էր զբաղվել քաղաքական պրոպագանդայով և հրատարակչական գործունեությամբ։ Գործադուլ կազմակերպելու փորձ անելու համար նախատեսվում էին խիստ սանկցիաներ՝ արհմիությունների գործունեության արգելում, նրանց ղեկավարների բանտարկություն և այլն։ 1947 թվականին ընդունված արհմիությունների մասին օրենքը Թուրքիայի բանվոր դասակարգին փաստորեն զրկում էր զբաղվելու որևէ քաղաքական գործունեությամբ։ Նա նպատակ ուներ բանվորական միությունները վերածել թուրքական բուրժուազիայի նացիոնալիստական կաղ-

մակերպությունների ֆիլիալների, որոնք գործում են կառավարական օրգանների վերահսկողության տակ։

Այնուամենայնիվ, նկատվում էր արհմիութենական շարքերի անշեղ աճ։ Այսպես, 1948 թվականին արհմիություններում կային 52 հազար բանվորներ, 1949 թ.՝ 72 հազար, 1958 թ.՝ ավելի քան 260 հազար։ 1960 թվականին Թուրքիայում գործում էր 333 արհմիութենական կազմակերպություն, որոնցում միավորված էր մոտ 400 հազար բանվոր։ Այսպիսով, 12 տարվա ընթացքում կազմակերպված պրոլետարիատի ընդհանուր թիվն ավելացավ մոտավորապես ութ անգամ։

Թուրքական արհմիությունները բաղկացած են առանձին արհմիութենական կազմակերպություններից, միավորումներից, ֆեդերացիաներից և կոնֆեդերացիաներից։

Արհմիությունները կառուցված են խիստ պրոֆեսիոնալ սկզբունքով։ Նրանք միավորում են աշխատանքի մի ճյուղում զբաղված կամ այդ ճյուղի հետ կապված նույնանման պրոֆեսիայի անձանց։

Աշխատանքի գրեթե յուրաքանչյուր ճյուղում կան զգալի թվով մանր արհմիություններ, մի բան, որ վկայում է թուրքական արհշարժման թուլության մասին։ Բացառություն է կազմում Զոնգուլդակի լեռնագործների արհմիությունը, որը միավորում է մոտ 30 հազար հանքագործ։ Այն արհմիությունները, որոնք զանազան շրջաններում ունեն մի քանի բաժանմունք, կոչվում են «գլխավոր արհմիություններ» (օրինակ, նավթագործ բանվորների արհմիությունը, սումերբանկի ձեռնարկությունների բանվորների արհմիությունը)։

Արհմիութենական միավորումներն ընդգրկում են յուրաքանչյուր արդյունաբերական խոշոր կենտրոնում եղած աշխատանքի տարբեր ճյուղերի արհմիությունները (օրինակ, Անկարայի բանվորական արհմիությունների միավորումը, Իզմիրի բանվորական արհմիությունների միավորումը)։

Ֆեդերացիան աշխատանքի մի ճյուղի (կամ մոտ ճյուղերի) բանվորական արհմիությունների միավորումն է տնտեսական շրջանի կամ ամբողջ երկրի մասշտաբով (օրինակ, Թուրքիայի տեքստիլ արդյունաբերության բանվորների ֆեդերացիան, Էգեյան շրջանի արհմիությունների ֆեդերացիան, Թուրքիայի լեռնագործ բանվորների ֆեդերացիան)։



Թուրքիայի բանվորական արհմիությունների կոնֆեդերացիան (կրճատ՝ «Թուրք-իշ») երկրում եղած ամենախոշոր արհմիութենական միավորումն է, որն ստեղծվել է 1952 թվականի հուլիսին։ 1962 թվականին «Թուրք-իշ»-ի մեջ մտնում էին 293 արհմիություններ, որոնց շարքերում կար մոտ 205 հազար բանվոր։

1963 թվականին «Թուրք-իշ»-ի շրջանակներում ստեղծվեցին յոթ տերիտորիալ միավորումներ, այսպես կոչված շրջանային ներկայացուցչություններ, որոնք ընդգրկում են ճյուղային արհմիությունները, միավորումները և երկրի տարբեր շրջանների ֆեդերացիաները։

Առաջին շրջանային ներկայացուցչությունն ընդգրկում է Ստամբուլի (կենտրոն), Թեքիրդաղի, Էդիրնեի, Կըրկլարելիի, Իզմիթի, Սաքարիայի, Բոլուի, Բուրսայի, Զոնգուլդակի վիլայեթները. երկրորդը՝ Էսքիշեհիրի (կենտրոն) Բիլեջիկի, Քյութահիայի, Աֆիոն-Կարահիսարի, Ուշակի, Իսպարտայի, Բուրդուրի, Կոնիայի, Զանղըրի վիլայեթները. երրորդը՝ Իզմիրի (կենտրոն), Մանիսայի, Բալըքեսիրի, Չանաքկալեի, Այդընի, Դենիզլիի, Մուղլայի վիլայեթները. չորրորդը՝ Ադանայի (կենտրոն), Մերսինի, Անթալիայի, Մարաշի, Հաթայի, Ղազիանթեպի, Ադըյամանի, Նիղդեի վիլայեթները. հինգերորդը՝ Սվազի (կենտրոն), Կայսերիի, Յոզգաթի, Չորումի, Տոկաթի, Երզինջանի, Էրզրումի, Ղարսի, Աղրիի, Բիթլիսի, Մալաթիայի, Բինգյոլի, Կիրշեհիրի, Նևշեհիրի վիլայեթները. վեցերորդը՝ Սամսունի (կենտրոն), Տրապիզոնի, Գյումյուշանեի, Ռիզեի, Արդվինի, Գիրեսունի, Օրդուի, Ամասիայի, Սինոպի, Քաստամոնուի վիլայեթները. յոթերորդը՝ Դիարբեքիրի (կենտրոն), Ուրֆայի, Մարդինի, Սիիրտի, Հաքքյարիի, Վանի, Մուշի, Տունջելիի, Էլյազըղի վիլայեթները։

Արհմիություններում կազմակերպված թուրքական պրոլետարիատը համառ պայքար է մղում իր կենսական շահերի համար։

Զգալի թիվ կազմող աշխատանքային պահեստի բանակը

(մոտ 4 միլիոն գործազուրկներ՝ հաշվի առնելով գյուղի թաքնված գործազրկությունը) բացասաբար է ազդում զբաղված բանվորների վրա։

Այն ժամանակ, երբ թուրքական տնտեսագետների հաշվումներով չորս մարդուց բաղկացած ընտանիքի ապրուստի մինիմումը կազմում է մոտ 2300 լիրա, պետական ձեռնարկությունների բանվորների 87 տոկոսը 1961 թվականին ամսական ստանում էր 130—323 լիրա և միայն 13 տոկոսը՝ 400 և ավելի լիրա։

Աշխատավորական զանգվածների ծանր դրությունն ավելի է խորանում առաջին անհրաժեշտության առարկաների գների անընդհատ աճի հետևանքով։ Բնակարանային բարձր վարձը (երկուսենյականոց բնակարանի համար ամսական 400 լիրա) հարյուր հազարավոր աշխատավորների ստիպում է պատսպարվել գետնախորշերում, այսպես կոչված գեջեկոնդուներում։ Պաշտոնական տվյալներով 1961 թվականին Թուրքիայում կար 240 հազար գեջեկոնդու, որոնցում ապրում էր մոտ 4 միլիոն մարդ։

Թուրքիայում բացակայում է գործազրկության դեպքում սոցիալական ապահովագրության սիստեմը, իսկ հիվանդության դեպքում ապահովագրությունը տարածվում է ամբողջ պրոլետարիատի մեկ հինգերորդից էլ պակասի վրա։

1960 թվականի մայիսի 27-ի պետական հեղաշրջումից հետո ճյուղային արհմիությունների և միավորումների ճնշող մեծամասնությունը հանդես եկավ ազգային միասնության կոմիտեի կառավարության պաշտպանությամբ, հույս ունենալով, թե նոր կառավարությունը կարձագանքի բանվոր դասակարգի սոցիալ-տնտեսական պահանջներին։ Նկատելիորեն ակտիվացան արհմիությունները, սկսեցին վերածնվել այն արհմիությունները և միավորումները, որոնց արգելել էր Մենդերեսի կառավարությունը։

Փոխվեց մինչև 1960 թվականի մայիսի 27-ը հիմնականում դեմոկրատական կուսակցությանը կողմնակից արհմիությունների ու միավորումների ղեկավարությունը։ «Թուրք-իշ»-ի չորրորդ կոնգրեսը, որը տեղի ունեցավ 1960 թվականի



նոյեմբերին, ամբողջովին նորացրեց կոնֆեդերացիայի ղեկավար օրգանները։ «Թուրք-իշ»-ի գործկոմի նախագահ ընտրվեց Սեյֆի Դեմիրսոյը, որը սերտորեն կապված էր ժողովրդա-դեմոկրատական կուսակցության ղեկավարության հետ։

Բանվոր դասակարգը առաջ քաշեց քաղաքական ու տնտեսական մի շարք պահանջներ՝ վերացնել հակաբանվորական ու հակադեմոկրատական օրենսդրությունները, պրոլետարիատին տալ գործադուլի իրավունք, կազմակերպել անկախ արհմիություններ և կնքել կոլեկտիվ պայմանագրեր արհմիությունների ու ձեռնարկատերերի միջև։

Թեև Թուրքիայի նոր սահմանադրությունն արհմիություններին տալիս էր գործադուլների և կոլեկտիվ պայմանագրեր կնքելու իրավունք, բայց անհապաղ չվերացրեց հակաբանվորական և հակադեմոկրատական օրենսդրությունները (1936 թվականի «Աշխատանքի օրենքը», 1938 թվականի՝ «Ընկերությունների մասին օրենքը», 1947 թվականի՝ «Արհմիությունների մասին օրենքը», 1956 թվականի՝ «Ժողովների ու ցույցերի մասին օրենքը» ռեակցիոն հոդվածները)։ Այս բոլորն առաջացրեց պրոլետարիատի և արհմիութենական ստորին կազմակերպությունների բացահայտ դժգոհությունը։ Այսպես, 1961 թվականի երկրորդ կեսին բողոքի ցույցեր ու միտինգներ կայացան Իզմիրում, Անկարայում, Զոնգուլդակում, Ամասրայում, Էսքիշեհիրում, Իզմիթում և ուրիշ քաղաքներում։ Դրանց մասնակցեց ավելի քան 300 հազար բանվոր։

1961 թվականի դեկտեմբերի 31-ին Ստամբուլում կայացած միտինգին մասնակցեց ավելի քան 100 հազար մարդ, այդ թվում՝ արհմիությունների պատվիրակություններ երկրի 29 վիլայեթներից՝ Անկարայի և Իզմիրի մետաղագործներից, Ադանայի և Կայսերիի տեքստիլագործներից, Սամսունի ծխախոտագործներից, Էսքիշեհիրի և Ադափազարի երկաթուղայիններից, Զոնգուլդակի հանքագործներից, Կարաբյուքի մետաղագործներից և ուրիշ շատ քաղաքների ու ավանների բանվորներից։ Միտինգը վերածվեց խոշոր ցույցի, որը ամրապնդեց Թուրքիայի բանվոր դասակարգի միասնությունը։

Մեծ չափերի հասան բանվորների ելույթները 1962 և 1963 թվականներին։

1962 թվականի մայիսի 3-ին Անկարայում կայացավ շինարարների բողոքի ցույց՝ ուղղված գործազրկության աճի դեմ. ցուցարարների ներկայացուցիչները հասան այն բանին, որ նրանց ընդունեց Ազգային մեծ ժողովը, որտեղ բանակցություններ վարեցին երկու պալատների ներկայացուցիչների հետ։

Ամերիկյան «Մորիսոն-Նադսեն» ընկերության ադմինիստրացիայի ճնշման դեմ Էրեգլիի բանվորների 1962 թվականի օգոստոսի միտինգը, «Կավելկարլո» (ամերիկա-թուրքական կապիտալ) գործարանի բանվորների 36-օրյա գործադուլը Ստամբուլում 1963 թվականի սկզբին և մի քանի ուրիշ ելույթներ ցայտուն արտահայտված հակաիմպերիալիստական բնույթ ունեին և կենդանի արձագանք առաջացրին թուրքական հասարակայնության զանազան խավերի մեջ։

Պրոլետարիատի ելույթների պատկառելի մասշտաբները կառավարող շրջաններին հարկադրեցին արագացնել բանվորական նոր օրենսդրության նախապատրաստումը։

Ազգային մեծ ժողովը 1963 թվականի հուլիսի 15-ին հաստատեց «Արհմիությունների մասին օրենքը» և «Կոլեկտիվ պայմանագրերի, գործադուլների և լոկաուտների մասին օրենքը»։ Թեև այդ օրենքների մի քանի հոդվածներ վկայում են կառավարող բուրժուա-կալվածատիրական բլոկի կողմից բանվոր դասակարգին արված մասնակի զիջումների մասին (ցույցերը կտրականապես արգելելուց անցում դեպի այսպես կոչված օրինական գործադուլների), այնուամենայնիվ, դրանց դրույթներից շատերը ուղղված են պրոլետարիատի շահերի դեմ։ Այսպես, ձեռնարկատերերն ստացան լոկաուտի իրավունք, որը նույնիսկ 1931 թվականի «Աշխատանքի օրենքով» արգելված էր Թուրքիայում։

1963 թվականի «Արհմիությունների մասին օրենքը» բանվորներին իրավունք է տալիս կազմակերպել արհմիություններ, արհմիութենական միավորումներ, ֆեդերացիաներ և կոնֆեդերացիաներ՝ նպատակ ունենալով պաշտպանել



«Ընդհանուր տնտեսական, սոցիալական և կուլտուրական շահերը», ընդունվել արհմիության անդամ և ընտրվել պաշտոնում «կամավոր սկզբունքներով», առանց սեռի, ընտանեկան դրության, ռասայի, մաշկի գույնի, լեզվի, կրոնի, քաղաքական համոզմունքների և քաղաքական կուսակցության պատկանելու խտրության» (հոդ. 1)։ Արհմիությունների անդամ չեն կարող լինել զինծառայողները, վարչական անձնակազմի զգալի մասը և պաշտամունքի սպասավորները (հոդ. 4)։ 16 տարեկան չդարձած անձինք զրկված են արհմիութենական ընդհանուր ժողովներում ձայնի իրավունքից (հոդ. 5)։

Օրենքը հռչակում է, որ բանվորական արհմիություններն ազատ են մտնելու միջազգային այնպիսի կազմակերպությունների մեջ, որոնց գործունեությունը «չի հակասում թուրքական օրենսդրության սկզբունքներին» (հոդ. 10)։ Դրա հետ միասին Մինիստրների խորհուրդն իրավունք ունի չեղյալ համարել ամեն մի արհմիութենական կազմակերպության ընդունած որոշում։

Օրենքը արհմիութենական կազմակերպություններին արգելում է մասնակցել որևէ քաղաքական կուսակցության գործունեության, ինչպես և նյութական օգնություն ցույց տալ կուսակցություններին (հոդ. 16)։ Այդ հոդվածը խախտելու համար նախատեսվում է բանտարկություն մեկ տարի ժամանակով։ Եթե տեղական դատարանը գտնի, որ կազմակերպության կանոնադրությունը «հակասում է օրենքին», ապա նա կարող է արգելել արհմիության գործունեությունը։ Դատախազն իրավունք ունի արգելել արհմիության գործունեությունը «հետաքննության ամեն մի ստադիայում, նախքան դատարանի որոշումը» (հոդ. 30)։ Դատական իշխանությունները իրավազոր են վերացնելու արհմիությունների ղեկավար օրգանների ընտրությունները, եթե նրանք գտնեն, որ ընտրությունների կարգը հակասում է օրենքի դրույթներին։ Օրենքի այն հոդվածները, որոնք արհմիություններին պարտավորեցնում են պատժի սպառնալիքի տակ (խոշոր գումարի տուգանքներ և բանտարկություն) իշխանություններին ներ-

կայացնել ուզած տեղեկությունների ու փաստաթղթերը, կառավարող շրջաններին թույլ են տալիս առաջվա պես վերահսկել արհմիությունների գործունեությունը։

«Աշխատանքային կոլեկտիվ պայմանագրերի, գործադուլների ու լոկաուտների մասին օրենքը» հաստատեց բանվորների և աշխատանք տվողների միջև կարճատև ու երկարատև (մեկից մինչև երեք տարով) աշխատանքային կոլեկտիվ պայմանագրեր կնքելու պրակտիկան։

Աշխատանքային համաձայնագիր կնքելու հարցի շուրջը նախնական բանակցություններ վարելու պրոցեսում որևէ բարդություն ծագելու դեպքում նախատեսվում է աշխատանքի շրջանային վարչությունների, ինչպես նաև աշխատանքի մինիստրության միջամտությունը։ Իսկ եթե տարբեր ինստանցիաներում (աշխատանքի շրջանային վարչություն, հաշտարար հանձնաժողովներ, աշխատանքի մինիստրություն, տեղական և հատուկ դատական օրգաններ և այլն) բազում ու երկարատև բանակցություններից հետո այնուամենայնիվ համաձայնություն չի ձեռք բերվում, ապա արհմիություններին իրավունք է տրվում գործադուլ հայտարարել։

Օրենքի մի քանի հոդվածները, որոնք պատճենահանված են տխրահռչակ Տաֆտ-Հարթլիի ամերիկյան օրենքից, գործադիր օրգաններին ըստ էության իրավունք են տալիս խիստ երկար ժամանակով դադարեցնել ամեն մի գործադուլ։ Այսպես, Մինիստրների խորհուրդը իրավասու է գործադուլը հետաձգել 30 օրով, եթե գտնում է, որ նա կարող է վնաս հասցնել «երկրի ազգային շահերին» (հոդ. 21)։ Դրան զուգընթաց, Մինիստրների խորհուրդը «հարցն ուսումնասիրելու համար» կարող է դիմել բարձրագույն արբիտրաժային հանձնաժողովին, որի հետևանքը կլինի գործադուլը ևս 30 օրով հետաձգելը։ Բայց բարձրագույն արբիտրաժային հանձնաժողովի հեղինակավոր եզրակացությունից հետո էլ Մինիստրների խորհրդին ևս 60 օր ժամանակ է տրվում որոշում ընդունելու համար, որը իր հերթին կարող է բողոքարկվել բարձրագույն դատական ինստանցիաներին։ Կոնֆլիկտը հատուկ դատարա-



նում քննելուց հետո միայն բանվորներն իրավունք ունեն գործադուլ սկսել։

Այսպիսով, օրենքը հիմնականում պահպանել է արբիտրաժի նախկին սիստեմը, որը տխուր հռչակ է ձեռք բերել Թուրքիայի աշխատավոր մասսաների մեջ։

Օրենքը խիստ միջոցներ է նախատեսում (երկարատև բանտարկություն և տուգանքներ) այն անձանց նկատմամբ, ովքեր մեղավոր են այսպես կոչված անօրինական գործադուլներ կազմակերպելու մեջ։

Չնայած նոր օրենսդրության մի շարք բացասական կողմերին, նրա ընդունումը գործադուլային շարժման զգալի խթան ծառայեց։ Հատկապես սուր ու լարված բնույթ կրեցին Ստամբուլի տեքստիլագործների, Մերսինի ու Բաթմանի նավթագործների և երկրի մյուս արդյունաբերական շրջանների բանվորների գործադուլները։

Մի շարք դեպքերում իշխանությունները, վկայակոչելով օրենքի դրույթը, արգելում էին գործադուլները։ Ըստ որում, կառավարող շրջանները հաճախ ստանում են Թուրքիայի բանվորական արհմիությունների կոնֆեդերացիայի աջ թևի աջակցությունը։ Այսպես, 1964 թվականի օգոստոսին «Թուրք-իշ»-ի գործկոմը Թուրքիայի պառլամենտին կոչ արեց Կիպրոսի ճգնաժամի հետևանքով արևելյան Միջերկրածովի շրջանում դրության սրվելու կապակցությամբ դադարեցնել գործադուլային պայքարը։ Կոնֆեդերացիայի գործկոմի այսպիսի դիրքը բացահայտ դժգոհություն առաջացրեց ո՛չ միայն արհմիությունների շարքային անդամների, այլև մի քանի ճյուղային արհմիությունների ղեկավարների մեջ։

Թուրքիայի բանվորական շարժումն աճում և ամրապնդվում է, որի մասին վկայում է արհմիություններում կազմակերպված բանվորների ընդհանուր թիվը, որը, ըստ մի քանի տվյալների, 1964 թվականին հասավ 700 հազարի։

Դրա հետ միասին ցայտուն կերպով երևան են գալիս թուրքական բանվորական շարժման թույլ կողմերը, որոնց պատճառները թաքնված են բանվոր դասակարգի կառուցվածքում, նրա կազմակերպական և քաղաքական մասնատ-

վածության մեջ, ցածր կուլտուրական մակարդակում, միասնական արհմիութենական կենտրոնի բացակայության, կառավարող շրջանների կողմից անցկացվող հակակոմունիզմի քաղաքականության, ռեֆորմիստական գաղափարների պրոպագանդման մեջ։

Թուրքական պրոլետարիատի մարքս-լենինյան ավանգարդը՝ Թուրքիայի կոմունիստական կուսակցությունը, երկար տարիների ընթացքում հարկադրված է գործել խոր ընդհատակում, մի հանգամանք, որը, անկասկած, թուլացնում է երկրի բանվորական շարժումը։

Ազատ արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի ղեկավարությունը (ԱԱՄԿ) քիչ ջանքեր չի գործադրում թուրքական արհմիություններն իր ազդեցությանը ենթարկելու համար։ Տարվելով օգնության մասին խոստումներով, թուրքական մի քանի արհմիութենական լիդերներ ցանկություն հայտնեցին մտնել կոնֆեդերացիային հարող միջազգային կազմակերպությունների մեջ։ Կոնֆեդերացիայի ներկայացուցիչները շարունակ, որպես «Հյուրեր», ներկա են լինում արհմիութենական խոշոր կազմակերպությունների բոլոր կոնգրեսներին և նրանց ամբիոնն օգտագործում դասակարգային «համագործակցության» գաղափարներ քարոզելու, ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների, ինչպես նաև միջազգային բանվորական հեղափոխական շարժման դեմ զրպարտություններ տարածելու համար։

«Թուրք-իշ»-ի հինգերորդ կոնգրեսը, որը կայացավ 1964 թվականի փետրվարին, դարձավ ազդեցիկ բուրժուա-կալվածատիրական երկու կուսակցությունների՝ ժողովրդա-հանրապետական և արդարության կուսակցությունների միջև մղվող կատաղի պայքարի ասպարեզ։ Թուրքական պրոլետարիատի արհմիությունների պառակտման լուրջ սպառնալիք ստեղծվեց։



# ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թուրքիայի երիտասարդական կազմակերպությունները հիմնականում միավորում են սովորող երիտասարդությանը։ Բանվորական և գյուղացիական երիտասարդությունը գրեթե չունի իր սեփական կազմակերպությունները։ Աշխատավոր երիտասարդների մի մասը խմբավորվում է բուրժուական կուսակցությունների երիտասարդական բաժանմունքների ու ֆիլիալների շուրջը։

Ուսանողության հիմնական զանգվածը կազմում են քաղաքային մանր ու միջին բուրժուազիայի, կուլակների, արհեստավորների, ինտելիգենցիայի ներկայացուցիչները։ Թուրքիայի ամենախոշոր ուսանողական կազմակերպությունը **Թուրքիայի ուսանողների ազգային ֆեդերացիան է** (ԹՈՒԱՖ) **և Թուրքական ուսանողների ազգային միությունը** (ԹՈՒԱՄ)։ Վերջինս ստեղծվել է 1919 թվականին։ Ամենամեծաթիվ ուսանողական կազմակերպությունը՝ ուսանողական ազգային ֆեդերացիան, ստեղծվել է 1950 թվականին։

Ուսանողական երկու կազմակերպությունն էլ ֆեդերատիվ սկզբունքներով միավորում են համալսարանների և մյուս բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողական միությունները։ Այսպես, ուսանողների ազգային միությունը միավորում է Անկարայի և Ստամբուլի համալսարանների ուսանողներին։ Իրենց հերթին համալսարանների ուսանողների միությունները բաղկացած են ֆակուլտետային կազմակերպություններից։ Խոշոր բուհերում, օրինակ, Ստամբուլի համալսարանում, ֆակուլտետային ուսանողական կազմակերպությունները բաժանվում են կուրսայինների։

Ո՛չ ֆեդերացիան, ո՛չ էլ միությունը չունեն իրենց պարբերական հրատարակությունները։ Սակայն առանձին ստորին ուսանողական կազմակերպություններ լույս են ընծայում առանձին հրատարակություններ։ Այսպես, Ստամբուլի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ուսանողական ընկերությունը լույս է ընծայել մի շարք նյութեր՝ նվիրված ուսանողների մասնակցությանը 1960 թվականի ապրիլ-մայի-

ռի հակահամավարական ցույցին և մայիսի 27-ի կառավարական հեղաշրջմանը։ Ստամբուլի համալսարանին կից ժուռնալիստիկայի ինստիտուտի ուսանողական ընկերությունը հրատարակում է իր ամսագիրը։

Միությունը և ֆեդերացիան ձևականորեն ինքնուրույն կազմակերպություններ են, որոնք իրենց գործունեությունը կառուցում են այն շրջանակներում, որ նախատեսված է Թուրքական Հանրապետության օրենքներով, ուսանողական ինքնավարությունների համար։ Ուսանողական երկու կազմակերպությունների բարձրագույն օրգանները պարբերաբար հրավիրվող կոնգրեսներն են, որոնք ընտրում են ղեկավար խորհուրդներ՝ նախագահի գլխավորությամբ։ Տեղական կազմակերպությունները նմանապես անց են կացնում իրենց կոնգրեսները, որոնցում ընտրվում են պատվիրակություններ ուսանողների ազգային միության և ազգային ֆեդերացիայի համաթուրքական կոնգրեսներին մասնակցելու համար։

Չնայած ձևական անկախությանը, Թուրքիայի ուսանողական կազմակերպություններն իրենց վրա կրում են խոշորագույն բուրժուական քաղաքական կուսակցությունների ազդեցությունը։ Այսպես, մինչև 1950 թվականը Թուրքիայի ուսանողների ազգային միության վրա ամենամեծ ազդեցություն էր գործում ժողովրդա-հանրապետական կուսակցությունը (ԺՀԿ)։ Միության շատ անդամներ միաժամանակ ժողովրդա-հանրապետական կուսակցության անդամներ էին։ 1950 թվականին իշխանության գլուխ անցնելուց հետո, դեմոկրատական կուսակցությունը, ստեղծելով Թուրքիայի ազգային ուսանողական ֆեդերացիան, հույս ուներ սահմանափակել ժողովրդա-հանրապետական կուսակցության ազդեցությունը ուսանողության վրա և միաժամանակ իր կողմը գրավել ուսանող երիտասարդության համակրանքը։

Բուրժուական կառավարող կուսակցությունները հնարավորություն ունեն ուսանողական կազմակերպությունների վրա գործադրել նաև ֆինանսական ճնշում, կարգավորելով նրանց մեջ այն գումարների բաշխումը, որ ամեն տարի հատկացնում



են պետական մի շարք օրգաններ՝ ուսանողական կազմակերպություններին նյութապես օգնելու համար։ Դա ցայտուն կերպով երևան եկավ դեմոկրատական կուսակցության կառավարման ժամանակաշրջանում, երբ վերջինս նշված գումարները հանձնեց կուսակցության ղեկավարությանը կից 1960 թվականին հատկապես ստեղծված երիտասարդական բյուրոյին։

Թուրքիայի ուսանողական կազմակերպությունները, չնայած խոշոր քաղաքական կուսակցություններից նրանց կախվածության, վերջին տարիներս իրենց դրսևորեցին որպես մի ուժ, որն ընդունակ է ինքնուրույն հանդես գալ քաղաքական ասպարեզում։

1950—1960 թվականներին ազգային միությունը և ազգային ֆեդերացիան սիստեմատիկաբար հանդես էին գալիս դեմոկրատական ազատությունները նեղացնելու, համալսարանական ինքնավարությունները լիկվիդացնելու, խոշորագույն երիտասարդական կազմակերպությունները դեմոկրատական կուսակցության ֆիլիալի վերածելու դեմ։ 1952—1953 թվականներին տեղի ունեցան միության և ֆեդերացիայի մեջ մտնող ուսանողական ընկերությունների ելույթներ ընդդեմ համալսարանների նկատմամբ կառավարության կիրառած խտրական միջոցառումների։ 1956—1957 թվականներին Անկարայի և Ստամբուլի համալսարանների ուսանողական կազմակերպությունները բողոքեցին առաջադիմական տրամադրությամբ համակված արհմիությունների նկատմամբ կառավարության հալածանքների դեմ։ Ուսանող երիտասարդությունն ակտիվ մասնակցություն ցույց տվեց 1957 թվականի պառլամենտական ընտրություններին, որի ընթացքում գերակշռող մեծամասնությունը հանդես եկավ դեմոկրատական կուսակցության հակադեմոկրատական քաղաքականության դեմ։

1959 թվականին այդ կուսակցության ղեկավարությունը Ստամբուլում ցրեց ուսանողների ազգային հերթական կոնգրեսը և իր դրածոներից Բալըքեսիրում կազմակերպեց նոր կոնգրես, որը Թուրքիայի ուսանողության մեջ ստացավ «խա-

դատիկնիկների կոնգրես անունը. այդ կոնգրեսն ընտրեց կառավարությանը դիմանի ֆեդերացիայի ղեկավարությունը։ Սակայն ուսանողության պայքարը կառավարության հակադեմոկրատական քաղաքականության դեմ ո՛չ միայն չդադարեց, այլ, ընդհակառակը, ուժեղացավ։ Նա առանձնակի սրության հասավ 1960 թվականին։ Ստամբուլի և Անկարայի համալսարանների ուսանողների ապրիլյան ցույցերը սկիզբ դրեցին հակակառավարական մի շարք այնպիսի ելույթների, որոնք ի վերջո հանգեցրին Բայար-Մենդերեսի հակաժողովրդական ռեժիմի տապալմանը։

Չինվորական հեղաշրջումից հետո ուսանողական կազմակերպությունները բազմիցս ելույթներ ունեցան նախկին ռեժիմի ղեկավարներին ներում շնորհելու դեմ, հանուն սոցիալական և տնտեսական կյանքի արմատական վերափոխման։ Այդպիսի ելույթներ տեղի ունեցան, օրինակ, 1963 թվականի մարտին, երբ ուսանողների ազգային միությունը և ֆեդերացիան կազմակերպեցին բողոքի ցույցեր ընդդեմ ռեակցիայի ուժերի ակտիվացման։

Հասարակական կյանքի դեմոկրատացման, սոցիալ-տնտեսական առաջադիմության համար ուսանողների ելույթները թիչ դեր չխաղացին ռեակցիայի դեմ մղվող պայքարում։ Սակայն ուսանողական կազմակերպությունները միշտ չէ, որ գրավում են հետևողական դիրք և հանդես գալիս առաջադիմական ուժերի կողմում։ Օրինակ, 1950 թվականին ուսանողների ազգային միությունը պաշտպանեց կորեական ժողովրդի դեմ ագրեսիվ պատերազմին մասնակցելու համար Կորեա թուրքական զորքեր ուղարկելու ձեռնարկումը։ 1955 թվականին ուսանողական մի քանի կազմակերպություններ հանդես եկան Կիպրոսի հույն բնակչության նկատմամբ տեռոր գործադրելու կողմում։ Ուսանողական մի քանի կազմակերպություններ և նրանց ղեկավարներ հանդես եկան հակակոմունիստական հայտարարություններով։

Ուսանողական կազմակերպությունների գործունեության երկակի բնույթը երևան եկավ նաև 60-ական թվականներին։ 1964 թվականի օգոստոսին միության և ֆեդերացիայի ղեկա-



վարները հանդես եկան ՆԱՏՕ-ի դեմ և Թուրքիայի նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականության դեմ, իրենց երկրի անկախ արտաքին քաղաքականության օգտին հայտարարություններով։ Միաժամանակ նրանք կանգնեցին Կիպրոսի հարցի լուծման նացիոնալիստական պահանջների ուղու վրա։

Յուցանշական է, որ ուսանողների ազգային ֆեդերացիան՝ այդ խոշորագույն ուսանողական կազմակերպությունը, անդամ է այսպես կոչված ազգային ուսանողական միությունների կոորդինացիոն քարտուղարության՝ ԱՈՒՄԿՈՔ երիտասարդական կազմակերպության, որը փաստորեն վարում է արևմուտքի իմպերիալիստական շրջանների քաղաքականությունը։

Վերջին տարիներս երկու հիմնական ուսանողական կազմակերպությունները՝ ազգային միությունը և ազգային ֆեդերացիան, ձեռնարկել են միավորվելու քայլեր, որը դեռ արդյունք չի տվել։ 1960 թվականի օգոստոսի վերջին կայացավ թուրք ուսանողների համագումար, որը խնդիր դրեց ավելի սերտ համագործակցություն հաստատել Թուրքիայի բոլոր ուսանողական կազմակերպությունների հետ, ակտիվացնել նրանց ընդհանուր ջանքերը ուսանողության կենսապայմանները և ուսուցումը բարվաքելու համար։

*Կանանց շարժումը*։ Ներկայումս Թուրքիայում կան կանանց մի քանի կազմակերպություններ, որոնք գտնվում են գերազանցապես Անկարայում և Ստամբուլում։

**Թուրք կանանց միությունը** հիմնադրել է Աթաթյուրքը 1930 թվականին Անկարայում։ 1934 թվականի դեկտեմբերի 5-ին Թուրքիայի կանայք ստացան ընտրելու և ընտրվելու իրավունք։ 1935 թվականի մարտի 1-ին պատմության մեջ առաջին անգամ պառլամենտում ընտրվեց 17 կին։ Այդ նույն թվականին միության ղեկավարները հրավիրեցին կանանց միջազգային կոնֆերանս. դրանից քիչ անց միությունը ցրվեց։ 1941 թվականին թուրք կանանց միությունը վերսկսեց իր գործունեությունը, բայց միայն 1949 թվականի ապրիլի 13-ին միության աշխատանքը լիովին վերականգնեցվեց։ Ներկա-

*յում նա միավորում է ավելի քան 40 վիլայեթային բաժանմունքներ։*

*Միությունը գլխավորում է ղեկավար խորհուրդը, որ բաղկացած է 15 մարդուց։ Միության գլխավոր նախագահն է Գյունսելի Օզկայան, տեղակալները՝ Նյուհեթ Պերկը և Նեդիմե Ուչելըն։ Միությունն ունի մի քանի բաժին՝ կանանց և երեխաների մեջ կատարվող աշխատանքի, որբերին և բազմազավակ մայրերին օգնություն ցույց տվող։*

*Վերջին տարիներս Թուրք կանանց միությունն ավելի հաճախակի է իր կոնգրեսներում ու կոնֆերանսներում քննարկում սոցիալ-տնտեսական հարցեր՝ աշխատելու իրավունքի, պրոֆեսիոնալ կրթություն ստանալու, հավասար աշխատանքի դիմաց հավասարապես վարձատրվելու, մայրության պաշտպանության, սոցիալական ապահովության։*

*Թուրք կանանց միության XI կոնգրեսում, որը կայացավ 1964 թվականի մայիսի 25-ին, քննարկվեց բազմակնության հարցը, որը երկրում գոյություն ունի մինչև այժմ, չնայած պաշտոնապես արգելված է. ստեղծվեց մայրության պաշտպանության և անօրինական ամուսնության հետևանքով երեխա ունենալու հետ կապված հարցերի հանձնաժողով։*

*1964 թվականին ընդունվեց միության նոր կանոնադրությունը։ Նրա կազմակերպական կառուցվածքը, գործունեության ոլորտը, ֆինանսավորման աղբյուրները դրվեցին պետության խիստ վերահսկողության տակ։ Միությանն արգելված է մասնակցել քաղաքական գործունեությանը։*

*1949 թվականից Թուրք կանանց միությունը հավասար իրավունքներով և պարտականություններով անդամ է կանանց միջազգային միության. այդ նույն տարվանից էլ նա ունի իր թղթակից-անդամը Կանանց միջազգային խորհրդում։*

*Վերջին տարիներին միությունը սերտ կապեր է հաստատել Իրանի, Պակիստանի, Հնդկաստանի, Աֆղանստանի և մյուս երկրների կանանց կազմակերպությունների հետ։ 1962 թվականից ի վեր նա կանոնավոր նամակագրություն է պահպանում սովետական կանանց կոմիտեի հետ։ 1965 թվականի մայիսին սովետական կանանց կոմիտեի հրավերով հինգ*



*մարդուց բաղկացած Թուրք կանանց պատվիրակությունը, Գյունսելի Օզկայայի գլխավորությամբ, այցելեց Սովետական Միություն։*

*1964 թվականի ապրիլից սկսեց լույս տեսնել «Բիրլիկ» («Միություն») երկշաբաթաթերթը։*

**Օգնություն ցույց տվող ընկերությունն** *ստեղծվել է 1928 թվականին։ Նա 44 վիլայեթներում միավորում է ավելի քան 100 բաժանմունք։*

*Ընկերությունն իր առջև խնդիրներ է դնում՝ օգնել ուսանողներին և ապահովել նրանց հանրակացարաններով, օժանդակություն ցույց տալ կարիքավորներին, ինչպես նաև ձրի բժշկական օգնություն՝ ծերերին ու հիվանդներին, կանանց համար աշխատանք ճարել։ Ընկերությունը բաղկացած է մի քանի բաժնից՝ պրոպագանդայի, բազմազավակներին օգնող, արդյունաբերական։ Առանձին նշանակություն է տրվում արդյունաբերական բաժնի աշխատանքին, որը հետևում է այն արհեստանոցներին, ուր աշխատում են գլխավորապես որբ աղջիկներ և այդտեղ էլ պրոֆեսիոնալ կրթություն են ստանում։*

*Ընկերության բյուջեն կազմում են այն միջոցները, որ նվիրաբերում են ղեկավար խորհրդի այն անդամները, որոնք ունեն պետական բարձր պաշտոններ, և զանազան կարի արհեստանոցների արտադրանքի վաճառքից գոյացած մուտքը։*

*Ընկերության բարձրագույն օրգանը՝ կոնգրեսը, գումարվում է երկու տարին մեկ։ Այնտեղ ընտրվում է ղեկավար խորհուրդ, որի մեջ մտնում են գլխավորապես պետական խոշոր հիմնարկների ներկայացուցիչները։ Ընկերության անդամ է համարվում ամեն ոք, ով տարեկան վճարում է մեկ լիրա։ Գլխավոր նախագահն է Մեդիհա Էլգեմը։*

**Աղքատներին օգնող ընկերությունն** *ստեղծվել է 1951 թվականին, Անկարայում։ Նա իր նպատակն է համարում բարելավել աշխատող կանանց դրությունը, բնակարան տրամադրել նրանց և օգնություն ցույց տալ, ինչպես նաև օգնել ուսանողուհիներին։*

**Թուրք-ամերիկյան կանանց ընկերությունն** *ստեղծվել է*

Անկարայում 1951 թվականին։ Նրա մեջ մտնում է ավելի քան 400 մարդ։ Ընկերության խնդիրն է՝ աջակցել ամերիկյան և թուրք կանանց կուլտուրական կապերին։ Ընկերությունն զբաղվում է ընտանիքի փոխհարաբերությունների բարելավման հարցերով, երիտասարդ սերնդի դաստիարակության պրոբլեմներով։

**Կանանց սոցիալական ստատուսի ուսումնասիրման ընկերությունն** ստեղծվել է 1950 թվականին, Անկարայում։ Միավորում է մոտ 100 մարդ։ Ընկերության բարձրագույն օրգանը կոնգրեսն է, որը գումարվում է երկու տարին մեկ։ Նա ընտրում է ղեկավար կոմիտե։ Ընկերության հիմնադիրը և պրեզիդենտը Աթաթյուրքի որդեգրած դուստր Ա. Աֆետինանն է։

**Երեխաների պաշտպանության թուրքական ընկերությունը** հիմնվել է 1910 թվականին, Անկարայում։ Ընկերությունը երեխաներին գործնական օգնություն է ցույց տալիս աղքատների դեպքում։ Վերջին ժամանակներս նիստերում, կոնֆերանսներում և սեմինարներում ավելի հաճախ են քննարկվում երեխաների հանցագործությունները կանխելու, ապօրինածին երեխաների դրության հարցերը։ 1920 թվականից ընկերությունը մտնում է Երեխաների մասին հոգացող միջազգային միության մեջ։ Դա հնարավորություն է տալիս օգտվել միջազգային կազմակերպություններից և մասնավոր ֆոնդերից։

**Բժշկական քույրերի ասոցիացիան** հիմնվել է Անկարայում, 1934 թվականին. 1943 թվականին վերակառուցվել է։ Միավորում է ավելի քան 300 մարդ։ Ասոցիացիան իր նպատակն է համարում՝ ընդլայնել տարբեր քաղաքների և վիլայեթների բժշկական քույրերի համագործակցությունը։ 1949 թվականից մտնում է Բժշկական քույրերի միջազգային ասոցիացիայի մեջ։

*Ժուռնալիստների կազմակերպությունը։* 1908 թվականին հիմնվել էր ժուռնալիստների առաջին թուրքական կազմակերպությունը՝ **Օսմանյան մամուլի ընկերությունը**, որը գոյություն ունեցավ մինչև առաջին համաշխարհային պատերազմի վերջը։

1935 թվականին մամուլի աշխատողների կոնգրեսում



հիմնվեց մամուլի միությունը։ Միությունը բաժանմունքներ ուներ երկրի մի քանի քաղաքներում։ Նա առաջին անգամ ժուռնալիստներին հնարավորություն տվեց համատեղ պայքարել իրենց պրոֆեսիոնալ շահերի համար։ Միության մեջ մտնում էին ինչպես թերթերի տերերը, այնպես էլ ժուռնալիստները։ Կառավարությունը հույս ուներ նրա օգնությամբ ուժեղացնել վերահսկողությունը մամուլի վրա և այն օգտագործել հօգուտ իր շահերի։ Իսկ երբ տեսավ, որ միությունն սկսեց հանդես գալ ժուռնալիստների շահերի պաշտպանության օգտին, ապա անհապաղ որոշում ընդունեց այն ցրելու մասին (1946 թ.)։

1946 թվականին, գրեթե մամուլի միությունը լիկվիդացնելուց անմիջապես հետո, նրա անդամների մի խումբ Ստամբուլում կազմակերպեց ժուռնալիստների ասոցիացիա։ Ասոցիացիան մասնավոր կազմակերպություն է. նա ունի մոտ 600 անդամ, որոնց մեծ մասն աշխատում է Ստամբուլում։ Ներկայումս այդ ասոցիացիան խոշորագույնն է Թուրքիայում։ Նման ասոցիացիաներ գոյություն ունեն Անկարայում, Իզմիրում, Էսքիշեհիրում, Բուրսայում։

Ժուռնալիստների ասոցիացիաները պետությունից ոչ մի ֆինանսական օժանդակություն չեն ստանում, որը որոշակի չափով երաշխավորում է նրանց ինքնուրույնությունը։ Նրանց եկամուտների հիմնական աղբյուրը այն գումարներն են, որ ստանում են այն տոն օրերին իրենց հրատարակած և վաճառած թերթերից, երբ սովորական թերթերը, օրենքի համաձայն, լույս չեն տեսնում։ Ասոցիացիաները կապ են պահպանում ժուռնալիստների արհմիությունների հետ և նրանց տրամադրության տակ են դնում իրենց միջոցների մի մասը։

1960 թվականի մայիսի 27-ի պետական հեղաշրջումից հետո Ստամբուլում կայացավ հրատարակիչների, ժուռնալիստների և մամուլի աշխատողների արհմիությունների ներկայացուցիչների կոնգրես, որը քննարկեց և ընդունեց այսպես կոչված թուրքական ժուռնալիստների բարոյական կոդեքսը։ 1960 թվականի օգոստոսին ընտրվեց ժուռնալիստների պատվի խորհուրդ՝ բաղկացած տասը մարդուց (յոթ ժուռնալիստ,

երեք պրոֆեսոր և իրավաբան)։ Պատվի խորհրդի նախագահ ընտրվեց Ստամբուլի համալսարանի պրոֆեսոր Նաջի Շենսոյը։ Խորհուրդը իրավունք ստացավ հրապարակով դատապարտել մամուլի այն օրգաններին, որոնք խախտում են բարոյական կոդեքսը և հրապարակում սխալ կամ զրպարտիչ հաղորդումներ։ Այն կապակցությամբ, որ այդ միջոցառումը անբավարար եղավ, խորհրդին իրավունք տրվեց, մամուլի և ռեկլամի ընկերության հետ համաձայնեցնելով, կոդեքսը խախտողներին զրկել պաշտոնական հայտարարություններից ու ռեկլամներից, որոնք եկամուտների շատ կարևոր աղբյուր են։ 1960 թվականի օգոստոսից մինչև 1964 թվականի մարտը պատվի խորհուրդը քննության առավ ժուռնալիստների բարոյական կոդեքսի խախտման 116 դեպք։

1961 թվականի հունվարի 2-ի օրենքով հիմնվեց մամուլի և ռեկլամի ընկերություն։ Նրա խնդիրների մեջ մտնում են՝ հետևել պաշտոնական հայտարարությունների և ռեկլամների կանոնավոր տարածմանը, վարկերով ու փոխատվություններով օգնել ժուռնալիստների ասոցիացիաներին և արհմիություններին, ինչպես նաև մամուլի առանձին աշխատողներին, ժամանակին ձեռք բերելու կահավորում, թուղթ, ներկ և այլն, միանվագ նպաստ տրամադրել կարիքավոր ժուռնալիստներին և նրանց ընտանիքներին։

Ընկերության ղեկավար օրգանները գտնվում են Ստամբուլում, նրա ֆիլիալները՝ Անկարայում և Իզմիրում։ Հարկ եղած դեպքում այդպիսի ֆիլիալներ կարող են բացվել նաև ուրիշ քաղաքներում։

Ընկերության բարձրագույն օրգանը գլխավոր խորհուրդն է, որի կազմի մեջ մտնում են վեց թերթերի ու ժուռնալների տերեր, երեք ժուռնալիստ, որոնց ընտրում են ժուռնալիստների ասոցիացիաները, ժուռնալիստների արհմիությունների կողմից ընտրված չորս մարդ, Ստամբուլի առևտրական շրջանների երկու ներկայացուցիչ, կառավարության նշանակած յոթ մարդ, Ստամբուլի համալսարանի հումանիտար ֆակուլտետների մեկ ներկայացուցիչ, Ստամբուլի համալսարանի ժուռնալիստիկայի ինստիտուտի մեկ ներկայացուցիչ և Անկարայի համալսարանի քաղաքական գիտությունների ֆակուլտետի մեկ ներկայացուցիչ, մեկական ներկայացուցիչ Ստամբուլի փաստաբանների կոլեգիայից և առևտրական ու արդյունաբերական պալատներից։



Ընկերության դրամական միջոցները կազմվում են պետական հատկացումներից, ապահովագրական ընկերությունների, ինչպես նաև թերթերի ու հանդեսների մուծումներից։

Լուսավորության ազգային ասոցիացիան հիմնվել է 1948 թվականին, Անկարայում։ Միավորում է քաղաքային ու գյուղական բոլոր դպրոցների 80 հազար ուսուցիչներին (50 հազար կին և 30 հազար տղամարդ)։

Ասոցիացիան ուսումնասիրում է կրթության և դասավանդման գործունեության պրոբլեմները, անց է կացնում զանազան կոնֆերանսներ, աշխատանք է տանում դասատուների հետ։ Ասոցիացիան նպատակ է դնում ընդլայնել համագործակցությունը դասատուների միջև և նպաստել կրթության զարգացմանը Թուրքիայում։ Ասոցիացիան մտնում է Լուսավորության միջազգային ասոցիացիայի մեջ։

Հասարակական կազմակերպությունները առողջապահության ասպարեզում։ Ներկայումս Թուրքիայում գործում են՝ տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ասոցիացիան (ունի 64 բաժանմունք, ինչպես և 41 տուբդիսպանսեր), երեխաներին հովանավորող ազգային ասոցիացիան (ունի մանկական 21 պատսպարան), կարմիր կիսալուսնի թուրքական ասոցիացիան, հակաքաղցկեղային հետազոտությունների թուրքական ասոցիացիան, թուրքական բարեգործական ընկերությունը։ Նշված բոլոր կազմակերպությունների հիմնական նպատակն է՝ նպաստել առողջապահությանը և սոցիալական ու բժշկական օգնություն ցույց տալ բնակչությանը. դրանք բոլորն էլ գործում են առողջապահության մինիստրության հետ կապված։

Թուրքական սոցիոլոգների ընկերությունը ստեղծվել է 1963 թվականին։ Նրա մեջ մտնում են քաղաքական գործիչներ, ժուռնալիստներ, բիզնեսմեններ, համալսարանների պրոֆեսորներ, արհմիութենական գործիչ-

ներ, ծառայողներ։ Ընկերությունն իր խնդիրն է համարում սոցիալական տեսանկյունից ուսումնասիրել երկրի առջև կանգնած հիմնական պրոբլեմները և պայմաններ ստեղծել բաց դիսկուսիաներ կազմակերպելու այդ պրոբլեմների շուրջը։

Ժողովրդական տները կառավարության կողմից աջակցություն ստացող հասարակական կազմակերպություններ են. նրանց առջև խնդիր է դրված մարմնավորել «ժողովրդականության» սկզբունքը, կապ պահպանել թուրքական ինտելիգենցիայի և մասսաների միջև, կուլտուր-լուսավորական աշխատանք կատարել։

Ժողովրդական տներին նախորդել են «Թուրքական օջախները», որոնք հիմնվել են 1911 թվականին՝ այն ժամանակ իշխանության գլուխ կանգնած «Միություն և հառաջադիմություն» կուսակցության կողմից։ Այդ օջախները պրոպագանդում էին նացիոնալիստական և պանթյուրքիստական գաղափարներ։

Ազգային-ազատագրական շարժման հաղթանակից և Թուրքական Հանրապետության ստեղծումից հետո «Թուրքական օջախները» պահպանվեցին որպես մասնավոր կազմակերպություններ։ 1930 թվականին դրանց քանակը հասնում էր 255-ի։ Այդ ժամանակ դրանց ֆունկցիաները սահմանափակվում էին բնակչության մեջ լուսավորական աշխատանք կատարելով։ Այնուամենայնիվ, կառավարող ժողովրդա-հանրապետական կուսակցությունը, Ք. Աթաթյուրքի գլխավորությամբ, վախենում էր թուրքական երիտասարդության վրա այդ կազմակերպությունների ազդեցությունից, ինչպես նաև նրանց բազայի վրա օպոզիցիոն կուսակցության հնարավոր առաջացումից։ Դրա հետևանքով 1931 թվականի ապրիլին լիկվիդացվեցին «Թուրքական օջախները», իսկ նրանց սեփականությունը հանձնվեց ժողովրդա-հանրապետական կուսակցությանը։

Կառավարության որոշմամբ 1932 թվականի փետրվարի 19-ին հիմնվեցին ժողովրդական տներ, որոնք պետք է մասսայականացնեին քեմալիզմի վեց սկզբունքները։ Ժողովրդա-



կան տների գլուխ կանգնեց Անկարայի ժողովրդական տունը, որը անմիջականորեն ենթարկվում էր ժողովրդա-հանրապետական կուսակցությանը։

Ժողովրդական տների գործունեությունը կոորդինացնելու համար կազմվեց կենտրոնական կոմիտե։ 1940 թվականին երկրում կար 379 ժողովրդական տուն, 1950 թվականին՝ 478։ 1932—1950 թվականներին ժողովրդական տների կարիքների համար բաց թողնվեց 27,4 միլիոն լիրա։ Ժողովրդական տների մեծ մասը գտնվում էր քաղաքներում (1943 թվականին 394 ժողովրդական տներից միայն 31-ն էր գտնվում գյուղերում)։ 1939 թվականի սեպտեմբերին որոշվել էր գյուղերում սկսել «ժողովրդական սենյակների» ստեղծումը։ 1940 թվականին դրանց թիվը հասավ 141-ի, 1950 թվականին՝ 4322-ի։

1950 թվականի ընտրություններում պարտվելուց հետո ժողովրդա-հանրապետական կուսակցությունը շարունակում էր պահպանել ժողովրդական տների և սենյակների ինստիտուտը որպես բազմակուսակցական սիստեմի անհրաժեշտ ատրիբուտ և Աթաթյուրքի սկզբունքների պրոպագանդման ու պաշտպանության միջոց։ Սակայն իշխանության գլուխ անցած դեմոկրատական կուսակցությունը չհամաձայնեց այդ առաջարկությանը, և 1951 թվականին ժողովրդական տները դադարեցին գործելուց, նրանց սեփականությունը բռնագրավվեց։

1960 թվականի մայիսի 27-ի պետական հեղաշրջումից հետո ստեղծվեց կուլտուրայի թուրքական ընկերություն։ 1963 թվականին ընկերության տեղական բաժանմունքները նորից վերանվանվեցին ժողովրդական տներ։ Ներկայումս դրանց թիվը հասնում է մոտ 100-ի։

# ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

## ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքիայում հանրապետական կարգ հաստատվելուց հետո հռչակվեց ընդհանուր պարտադիր տարրական կրթություն։ Սակայն բնակչության ցածր կենսամակարդակը, դասատուական կադրերի, դպրոցական շենքերի, կահավորման և գրենական պիտույքների պակասը խոչընդոտում են ժողովրդական կրթության պրոբլեմի հաջող լուծմանը։

Ազգային լուսավորության մինիստրությունն իրագործում է լուսավորության ու կուլտուրայի բոլոր մարզերի ընդհանուր ղեկավարությունը, կազմում է տարրական, միջնակարգ և բարձրագույն դպրոցների ուսումնական ծրագրեր, տպագրության համար հաստատում և երաշխավորում է դասագրքերը և ուսումնական ձեռնարկները։ Տարբեր գերատեսչությունների ուսումնական հաստատությունների ծրագրերը նույնպես հաստատվում են մինիստրության ակտիվ մասնակցությամբ։

Թուրքիայում լուսավորության սիստեմն ընդգրկում է տարրական և միջնակարգ դպրոցները, լիցեյները, պրոֆեսիոնալ և տեխնիկական դպրոցները, բարձրագույն ուսումնական հաստատությունները։

*Տարրական ուսուցումն* իրագործվում է առաջին և երկրորդ աստիճանի տարրական դպրոցներում։ Առաջին աստիճանը ուսման երեք տարի է, երկրորդ աստիճանը՝ երկու տարի։ Առաջին աստիճանի դպրոցների ուսումնական ծրագրերի մեջ մտցված են՝ գրել, կարդալ, թվաբանություն, նկարչություն, ձեռքի աշխատանք։ Երկրորդ աստիճանի դպրոցներում, թվարկված առարկաներից բացի, ավանդվում են՝ պատ-



մություն, աշխարհագրություն, բնագիտություն, պետական կառուցվածք, ինչպես նաև ֆիզկուլտուրա և երգեցողություն։

Տարրական դպրոցի ավարտական վկայականն իրավունք է տալիս ընդունվելու միջնակարգ դպրոց և մի քանի պրոֆեսիոնալ ուսումնական հաստատություններ։

Գյուղական տարրական դպրոցների ուսման ծրագրերը նախատեսված են երեք տարվա համար։ Պետական դպրոցներում մտցված առարկաներին զուգընթաց այստեղ ավանդվում են գյուղատնտեսությունը վարելու տարրական հիմունքներ։

**1963** թվականին Թուրքիայում կար **26139** տարրական դպրոց **3399606** աշակերտներով։

*Միջնակարգ կրթությունն* իրագործվում է եռամյա միջնակարգ դպրոցներում ու լիցեյներում, որտեղ ուսուցման տևողությունը երկուսից չորս տարի է։

Միջնակարգ դպրոց ընդունվում են երկրորդ աստիճանի տարրական դպրոց ավարտած աշակերտները։ Այնտեղ ուսուցումն սկսվում է հանրակրթական առարկաներից, օտար լեզուներից և նախնական պրոֆեսիոնալ ունակություններից։ Ամեն մի դպրոց ունի որոշակի պրոֆեսիոնալ թեքում. այդ դպրոցները պատրաստում են կրտսեր բուժանձնակազմ, վաճառողներ, առևտրական ֆիրմաների և ձեռնարկությունների գործակալներ, տրանսպորտի ծառայողներ։

Միջնակարգ դպրոցների շրջանավարտները քննություն հանձնելուց հետո ստանում են լիցեյ ընդունվելու իրավունք։

**1963** թվականին Թուրքիայում կար **725** միջնակարգ դըպրոց **337893** սովորողներով։

Ազգային փոքրամասնությունների (հունական, հայկական և այլն) դպրոցներ (տարրական ու միջնակարգ) կան միայն Ստամբուլում։ Ուսուցումը իրագործվում է ազգային լուսավորության մինիստրության հաստատած ծրագրերով և նրա անմիջական վերահսկողությամբ։

**1963** թվականի սեպտեմբերի **1**-ի դրությամբ ավելի քան մեկ միլիոն դպրոցահասակ երեխաներ սովորելու հնարավորություն չունեին։ **16** հազար գյուղում դպրոց չկա։ **1961/62**

ուսումնական տարում նորմալ պարապմունքների համար 745 միջնակարգ դպրոցների միայն 85 տոկոսն ունեին դասասենյակներ։

Պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթությունն իրագործվում է տարրական և միջնակարգ դպրոցների բազայի վրա ստեղծված հատուկ դպրոցներում. բացի մասնագիտական առարկաներից, այստեղ ավանդվում են հանրակրթական առարկաներ։ Ուսման տևողությունը կախված է ուսումնական հաստատության նպատակային ուղղությունից և տատանվում է մի քանի ամսվանից մինչև երեքից հինգ տարվա միջև։ Գյուղատնտեսական շրջաններում ստեղծված են գյուղացիների երեխաների շրջիկ դասընթացներ, որտեղ նրանք ձեռք են բերում դարբնի, թամբագործի, շինարարի, անտառագործի արհեստ։ Խոշոր քաղաքներում կա դասընթացների ու դպրոցների լայն ցանց, որը պատրաստում է քարտուղարներ, հյուրանոցի ծառայողներ, բուժքույրեր, մանկաբարձուհիներ, վարորդներ, բանկերի և առևտրական գրասենյակների ծառայողներ։

1963 թվականին Թուրքիայում կար 165 տարրական պրոֆեսիոնալ դպրոց 59319 աշակերտով, 96 միջնակարգ պրոֆեսիոնալ դպրոց՝ 18897 աշակերտով, 81 ուսումնական հաստատություն, որը գիտելիքների և պրոֆեսիոնալ պատրաստության մակարդակով հավասարեցված էր լիցեյին (վերջիններում սովորում էր 12130 մարդ), ինչպես նաև 4 բարձրագույն դպրոց՝ 1323 ուսանողով։

Լիցեյներում հանրակրթական առարկաներին զուգընթաց հատուկ ուշադրություն է դարձվում օտար լեզուների ուսումնասիրությանը. մասնավորապես անգլերենը դասավանդվում է որպես հիմնական առարկա։ Լիցեյների վերջին դասարանները բաղկացած են երկու բաժանմունքից՝ լեզվի և բնա-մաթեմատիկական, որոնց ունկնդիրներն իրավունք ունեն ընտրելու ապագա մասնագիտությունը։

Լիցեյները պատրաստում են տարրական և միջնակարգ դպրոցների դասատուներ, ինչպես նաև էլեկտրիկներ և ռադիոտեխնիկներ, տեքստիլային հաստոցների կարգավորողներ, քիմիկոս-լաբորանտներ և այլն։



Թուրքիայում կա 147 լիցեյ 96847 սովորողով և 38 առևտրական լիցեյ՝ 18664 սովորողով։

*Բարձրագույն կրթությունը։* Թուրքիայի բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու իրավունք ունեն միայն լիցեյ ավարտածները։

Թուրքիայում կա վեց համալսարան, որոնցում սովորում է ընդամենը 61839 մարդ։

**Ստամբուլի տեխնիկական համալսարանը**, որ հիմնադրվել է 1773 թվականին, երկրի ամենահին ուսումնական հաստատությունն է։ Նրա հինգ ֆակուլտետներում 1963 թվականին սովորում էր 2218 ուսանող, և զբաղված էին 51 պրոֆեսոր ու 239 դասատու։ Ռեկտորի պաշտոնը զբաղեցնում է պրոֆեսոր Ֆիքրեթ Նարտենը։

Համալսարանը պատրաստում է լեռնարդյունահանության և մետալուրգիական արդյունաբերության ինժեներներ, ինչպես նաև քաղաքաշինության մասնագետներ։ Համալսարանում ավանդում են հետևյալ առարկաները. ճարտարապետություն, պատմություն, գծագրական երկրաչափություն, քաղաքաշինություն, տեղագրություն, գեոդեզիա, երկաթուղային և ջրային կառուցվածքների շինարարություն։

**Ստամբուլի համալսարանը**, որ վերակառուցվել է 1927 և 1933 թվականներին, երկրի ամենախոշոր բարձրագույն ուսումնական հաստատությունն է։ Նրա յոթ ֆակուլտետներում (բանասիրական, տնտեսագիտական, իրավաբանական, բժշկական, գյուղատնտեսական, ֆիզիկո-մաթեմատիկական, անտառագիտական) 1963 թվականին սովորում էր 23052 ուսանող և աշխատում էր 157 պրոֆեսոր ու 574 դասատու։ 1964 թվականին համալսարանի ռեկտոր ընտրվեց Օմեր Սարչը։

Բանասիրական ֆակուլտետում թուրքերենից բացի դասավանդվում է Մերձավոր ու Միջին արևելքի երկրների գրականություն, անգլիական գրականություն, արաբական ֆիլոլոգիա, մարդաբանություն և հնագիտություն։ Ֆակուլտետին կից բացված է թուրքագիտության ինստիտուտ, որը հրապարակում է ուսումնական ձեռնարկներ, հետազոտու-

թյուններ, լույս է ընծայում Թուրքական իրավունքի և էկոնոմիկայի հանդես և Թուրքագիտության հանդես։

1958 թվականին համալսարանում բացվեց Թատերական ինստիտուտ, որտեղ սովորում է 220 մարդ։

**Անկարայի համալսարանը** հիմնվել է 1946 թվականին։ Նրա ութ ֆակուլտետներում (բանասիրական, պատմության և աշխարհագրական, բնագիտական, իրավաբանական, բժշկական, անասնաբուժական, գյուղատնտեսական, աստվածաբանական և քաղաքական գիտությունների) 1963 թվականին սովորում էր 14728 ուսանող և աշխատում էր 333 պրոֆեսոր ու դասատու։ Համալսարանի ռեկտորը պրոֆեսոր Սուաթ Քեմալ Եթկինն էր։

Բանասիրական, պատմության և աշխարհագրական ֆակուլտետին կից աշխատում են մի քանի գիտա-հետազոտական ինստիտուտներ, այդ թվում Թուրքական հեղափոխության ինստիտուտը։ Ֆակուլտետն ունի իր հրատարակչությունը, լույս է ընծայում ամսագիր և տարեգիրք. որոշ գրքեր տպագրվում են ԱՄՆ-ում։

Քաղաքական գիտությունների ֆակուլտետին կից ստեղծվել են էկոնոմիկայի և միջազգային հարաբերությունների ինստիտուտներ։

**Անկարայի միջինարևելյան տեխնիկական համալսարանը** հիմնվել է 1956 թվականին՝ ՄԱԿ-ի հատուկ ֆոնդի միջոցներով։ Համալսարանի վարկավորմանը մասնակցում են ԱՄՆ-ը, Անգլիան և Հոլանդիան. Թուրքիայի կառավարությունը տրամադրում է միջոցների միայն մի մասը։ Համալսարանի չորս ֆակուլտետներում (վարչական, ճարտարապետական, տեխնիկական և բանասիրական) սովորում են Մերձավոր ու Միջին արևելքի երկրներից ընդունված ուսանողներ։ Դասավանդումը անգլերեն է։

**Էգեյան համալսարանը**, որ գտնվում է Իզմիրում (հիմնվել է 1955 թվականին), ունի ընդամենը երկու ֆակուլտետ (գյուղատնտեսական և բժշկական)։ 1963 թվականին համալսարանում կար 1200 ուսանող և աշխատում էին 30 պրոֆեսոր ու դասատու։ Համալսարանի ռեկտորը Մուստաֆա Ուլուսոյն է։



**Աթաթյուրքի համալսարանն** ստեղծվել է Էրզրումում, 1957 թվականին՝ գյուղատնտեսական ֆակուլտետի և նրան կից գործող գիտա-հետազոտական ինստիտուտի բազայի վրա։ Ունի բանասիրական, ֆիզիկո-մաթեմատիկական և գյուղատնտեսական ֆակուլտետներ։ 1962/63 թվականին համալսարանում կար 566 ուսանող և 92 պրոֆեսոր ու դասատու։

**Ստամբուլի բարձրագույն տեխնիկական դպրոցը**, որ հիմնվել է 1937 թվականին, պատկանում է ամենախոշոր բարձրագույն ուսումնական հաստատությունների թվին։ Ունի հինգ ֆակուլտետ (մեխանիկական, էլեկտրա-տեխնիկական, ճարտարապետական, գեոդեզիական և կոմունալ տնտեսության)։ Պատրաստում է քաղաքացիական շինարարության ինժեներներ, ինժեներ-էլեկտրիկներ, մեխանիկներ, գեոդեզիստներ և ճարտարապետներ։ 1963 թվականին դպրոցում սովորում էր 1250 ուսանող։

**Ստամբուլի էկոնոմիկայի և առևտրի բարձրագույն դպրոցը** հիմնվել է 1883 թվականին, պատրաստում է կադրեր պետական ապարատի, կառավարական և մասնավոր ֆինանսական ու տնտեսական կազմակերպությունների համար։ Դպրոցում սովորում է 1713 ուսանող, աշխատում է 29 պրոֆեսոր ու դասատու։

Զոնգուլդակի **լեռնային ինստիտուտը** պատրաստում է լեռնային ինժեներների կադրեր։

Մանկավարժական կադրերի պատրաստումն իրագործվում է մանկավարժական չորս ինստիտուտներում՝ Անկարայում, Ստամբուլում, Բալըքեսիրում և Բուրսայում։ Դրանց մեջ ամենամեծը Անկարայի Քեմալ Աթաթյուրքի անվան մանկավարժական ինստիտուտն է, որ հիմնվել է 1926 թվականին։ Ինստիտուտում սովորում է 765 ուսանող, աշխատում է 110 պրոֆեսոր ու դասատու։ 1934 թվականին Անկարայում հիմնված երկու **բարձրագույն տեխնիկական արական դպրոցները**, ինչպես նաև **բարձրագույն տեխնիկական դպրոցը**, դասատուներ են պատրաստում պրոֆեսիոնալ ու տեխնիկական

միջնակարգ դպրոցների համար։ Այդ դպրոցներում 1963 թվականին սովորում էր 1499 ուսանող։

Բժշկական կադրեր են պատրաստում գլխավորապես համալսարանների բժշկական ֆակուլտետները և **առողջապահության բարձրագույն դպրոցը**։

**Նուրբ արվեստների ակադեմիան**, որ գտնվում է Անկարայում, չորս ֆակուլտետներում (կենդանագրական, թուրքական արվեստի պատմության, ճարտարապետական և կիրառական արվեստի) պատրաստում է նկարիչներ ու արվեստագետներ։

Բարձրագույն երաժշտական կրթություն են տալիս երեք կոնսերվատորիաներ։ Դրանցից ամենամեծը **Ստամբուլի պետական կոնսերվատորիան** է, որը հիմնվել է 1923 թվականին։ Դասավանդումը կոնսերվատորիայում տարվում է դաշնամուրի, ջութակի, թավջութակի և երաժշտության տեսության դասարաններում։ Կոնսերվատորիայում սովորում է 756 ուսանող։

**Անկարայի կոնսերվատորիայում**, որ հիմնվել է 1946 թվականին, նույնպես դասավանդում են օպերային երգեցողություն և պար։

**Իզմիրի կոնսերվատորիան** ստեղծվել է 1951 թվականին։

Ուսումը արտասահմանում։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նկատելիորեն ավելացավ արտասահմանում սովորող թուրք պատանիների ու աղջիկների թիվը։ Դրանց գերակշռող մասը մեկնեց ԳՖՀ, ԱՄՆ, Անգլիա և Իտալիա։

1959/60 թ. արևմուտքի երկրներում իրենց սեփական միջոցներով սովորում էին թուրքական 3017 պատանիներ ու աղջիկներ, որոնցից 1543-ը՝ ԳՖՀ-ում և 815-ը՝ ԱՄՆ-ում։

1961/62 թ. պետական թոշակների հաշվին արտասահմանում սովորում էր 715 մարդ, որոնցից 250-ը՝ ԳՖՀ-ում, 149-ը՝ ԱՄՆ-ում և 148-ը՝ Անգլիայում։

Օտարերկրյա ուսումնական հաստատությունները Թուրքիայում։ 1958 թվականին երկրում



կար օտարերկրյա 10 միջնակարգ ուսումնական հաստատություն, ուր հաճախում էր 3279 մարդ։

Հատուկ տեղ էր գրավում Ստամբուլում գտնվող «Ռոբերտ-կոլեջ»-ը (հիմնվել է 1863 թ.)։ Նա մտնում է Նյու-Յորքի նահանգի ուսումնական հաստատությունների ցուցակի մեջ և ենթարկվում է ամերիկյան համալսարանական վերահսկողությանը։ «Ռոբերտ-կոլեջի» ավարտողներն իրավունք են ստանում մտնելու ԱՄՆ-ի բարձրագույն ուսումնական հաստատությունները։ Ամերիկյան երկրորդ խոշոր ուսումնական հաստատությունը Ստամբուլի իգական կոլեջն է։ 1931 թվականից իգական կոլեջի ընդհանուր ղեկավարությունն իրագործում է «Ռոբերտ-կոլեջի» դիրեկտորը։

Ամերիկյան կոլեջներ կան նաև Իզմիրում և Տարսուսում։ Կա նաև ամերիկյան երկու դպրոց. արական միջնակարգ դպրոցը Տալասում (Կայսերիի վիլայեթ) և արական դպրոցը Ուսկյուդարում (Ստամբուլի վիլայեթ)։

Լուսավորության մասին տվյալները բերված են 10-րդ աղյուսակում։

## ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ

Թուրքիայում կա մոտ 80 գրադարան։ Հիմնականում դրանք փոքրիկ գրադարաններ են, որոնց ֆոնդերը 2—3 հազար գրքից չեն անցնում։ Առավել մեծ գրադարանները կենտրոնացված են Թուրքիայի կուլտուրական ու գիտական հիմնական կենտրոններում՝ Անկարայում և Ստամբուլում։

Ազգային գրադարանը գտնվում է Անկարայում։ Դա երկրի ամենախոշոր ունիվերսալ գրադարանն է։ Հիմնվել է 1946 թվականին։ Օրենքի համաձայն նա ստանում է Թուրքիայում լույս տեսնող բոլոր հրատարակությունների պարտադիր օրինակները։ Գրադարանը լրացվում է նաև գնումների, փոխանակման և նվիրատվությունների միջոցով։ Պետական նպաստները կազմում են տարեկան 100 հազար լիրա։ Գրադարանը կրկնակի ավելի գումար է ստանում իրեն կից

Աղյուսակ 10

Սովորողների թիվը լուսավորության մինիստրության սիստեմի դպրոցներում և համալսարաններում

| Ուսումնական հաստատություններ | Ուսումնական հաստատությունների թիվը | Սովորողների թիվը | | |
|---|---|---|---|---|
| | | իգական սեռ | արական սեռ | ընդամենը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Տարրական դպրոցներ | 26139 | 1310399 | 2089207 | 3399606 |
| Միջնակարգ դպրոցներ | 725 | 77227 | 260666 | 337893 |
| Լիցեյներ | 185 | 25601 | 89910 | 115511 |
| Մանկավարժական ուսումնարաններ | 70 | 14950 | 26986 | 41936 |
| Հոգևոր դպրոցներ | 26 | — | 7344 | 7344 |
| Պետական կոնսերվատորիաներ | 3 | 222 | 178 | 400 |
| Նուրբ արվեստների ակադեմիա | 1 | 278 | 5888 | 6166 |
| Կիրառական արվեստի դպրոց | 1 | 104 | 256 | 360 |
| Քաղաքատնտեսության և առևտրի ակադեմիաներ | 4 | 1835 | 14086 | 15921 |
| Մանկավարժական ինստիտուտներ | 9 | 1540 | 2895 | 443 |
| Բարձրագույն ուսուցչական դպրոցներ | 2 | 221 | 419 | 649 |
| Բարձրագույն իգական տեխնիկական դպրոց | 1 | 714 | — | 714 |
| Բարձրագույն արական տեխնիկական դպրոցներ | 2 | — | 785 | 785 |
| Բարձրագույն առևտրական դպրոց | 1 | 64 | 65 | 129 |
| Իսլամագիտության բարձրագույն ինստիտուտ | 2 | — | 513 | 513 |
| Հյուրանոցների սպասավորների դպրոց | 1 | — | 156 | 156 |
| Գործավար-քարտուղարների դասընթացներ | 9 | 535 | — | 535 |
| Իգական պրոֆեսիոնալ ուսուցչական դպրոց | 1 | 67 | — | 67 |
| Տեխնիկական դպրոցներ | 3 | 4045 | 83 | 4128 |
| Իգական պրոֆեսիոնալ դպրոցներ | 106 | 38949 | — | 38949 |
| Արական պրոֆեսիոնալ դպրոցներ | 89 | — | 45631 | 45631 |
| Շինարարական պրոֆեսիոնալ դպրոցներ | 8 | — | 2525 | 2525 |
| Մեխանիկների դասընթացներ | 4 | — | 637 | 637 |
| Ռադիոտեխնիկական ուսումնարաններ | 2 | — | 566 | 566 |
| Անտառատեխնիկական պրոֆեսիոնալ ուսումնարան | 1 | — | 21 | 21 |
| Քիմիա-տեխնիկական դպրոց | 1 | — | 167 | 167 |
| Տեքստիլային պրոֆեսիոնալ դպրոց | 1 | — | 101 | 101 |
| Պոլիգրաֆիական դպրոց | 1 | — | 109 | 109 |
| Դերձակների դպրոց | 1 | 78 | 87 | 165 |
| Տեխնիկական դպրոցներ | 26 | — | 4836 | 4836 |
| Պրոֆեսիոնալ դպրոցներ | 2 | 403 | 479 | 882 |
| Համալսարաններ | 4 | 13630 | 43834 | 57464 |
| Տեխնիկական համալսարաններ | 2 | 3957 | 422 | 4379 |



կազմակերպված՝ գրադարանին օժանդակող ընկերությունից։

Նրա ֆոնդերում կա ավելի քան 400 հազար պահպանության միավոր՝ գիտության բոլոր ճյուղերի գծով։ Բացի թուրքերեն (արաբատառ և լատինատառ) և օտար լեզվով գրքերից, գրադարանում կան պարբերական հրատարակությունների, աշխարհագրական քարտեզների, միկրոֆիլմերի, ձեռագրերի ֆոնդեր։ Դրա հետ միասին գրադարանում ստեղծված է գեղարվեստական պատկերասրահ, որտեղ հավաքված են թուրք նկարիչների ու քանդակագործների ստեղծագործությունները։

1955 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ֆրանսիական մասնագետների օգնությամբ գրադարանին կից հիմնվեց բիբլիոգրաֆիայի ինստիտուտ։ Սա բիբլիոգրաֆիական ինֆորմացիայի աշխատանքը կատարում է բյուլետենների հրատարակման միջոցով («Թուրքիայի բիբլիոգրաֆիա»՝ տարեկան չորս պրակ, «Թուրքիայի ժուռնալային հոդվածների բիբլիոգրաֆիա»՝ տարեկան վեց պրակ և այլն)։ Նյութերի սիստեմավորման սխեման, որ ընդունված է ազգային գրադարանում, հրատարակվում է յուրաքանչյուր պրակի սկզբում։

*Բարձրագույն ուսումնական հաստատությունների գրադարանները*։ 1948 թվականից համալսարանի կազմի մեջ մտնող բարձրագույն գյուղատնտեսական ինստիտուտի գրադարանի բազայի վրա 1950 թվա-

կանին հիմնվեց Անկարայի համալսարանի գրադարանը: Նրա ֆոնդը կազմում է 64 հազար հատոր: Բացի այդ, ավելի քան 350 հազար հատոր ունեն ֆակուլտետներին կից գրադարանները: Դրանցից առավել նշանակալին բանասիրական, պատմության և աշխարհագրական ֆակուլտետին կից գրադարանն է, որն ունի 180 հազար գիրք և 24 հազար ձեռագիր՝ թուրքերեն, արաբերեն և պարսկերեն լեզուներով:

**Ստամբուլի համալսարանի գրադարանը** հիմնվել է 1925 թվականին՝ սուլթանական «Յըլդըզ» պալատի գրադարանի (սուլթան Աբդուլ Համիդ II-ի անձնական հավաքածուն՝ բաղկացած մոտ 30 հազար հատորից), մի քանի մասնավոր հավաքածուների և գրական-իրավական գրադարանի ֆոնդերի մի մասի բազայի վրա: Համալսարանի կենտրոնական գրադարանում կա 170 հազար գիրք, 17 հազար ձեռագիր՝ թուրքերեն, արաբերեն և պարսկերեն լեզուներով: Համալսարանի բոլոր ֆակուլտետներն ունեն իրենց գրադարանները: Այսպես, բանասիրական ֆակուլտետին կից թուրքագիտության ինստիտուտի գրադարանն իր ֆոնդերում պահպանում է ավելի քան 41 հազար հատոր:

Թուրքիայի առավել խոշոր հինգ գրադարանների թվում Ստամբուլի համալսարանի գրադարանը, սկսած 1934 թվականից, ստանում է երկրում լույս տեսնող բոլոր հրատարակությունների պարտադիր օրինակները: Հրատարակված են նրա ֆոնդերի հետևյալ ցանկերը. 1) թուրքերեն գրքերի այբբենական ցանկ, 2) արաբերեն գրքերի այբբենական ցանկ, 3) պարսկերեն գրքերի այբբենական ցանկ, 4) արաբերեն ձեռագրերի ցանկ և այլն:

**Ստամբուլի տեխնիկական համալսարանի գրադարանը** (հիմնվել է 1944 թվականին) ներառում է հին տեխնիկական դպրոցների և ուսումնարանների գրադարանները, որոնց հիման վրա էլ հենց ստեղծվել է համալսարանը: Նրա ֆոնդը կազմում է մոտ 55 հազար հատոր, որոնցից մոտավորապես 26 հազարը բաշխված են ֆակուլտետներին կից եղած մի քանի գրադարաններին:

Ոչ մեծ գրադարաններ (մինչև 10 հազար միավորից



կազմված ֆոնդերով) կան Անկարայի միջինարևելյան տեխնիկական համալսարանում (հիմնվել է 1957 թվականին) և Իզմիրի Էգեյան համալսարանում (հիմնվել է 1955 թվականին):

Մյուս բարձրագույն ուսումնական հաստատություններից առավել նշանակալի գրադարաններ ունեն Անկարայի Ղազիի (Աթաթյուրքի) անվան դաստիարակության ինստիտուտը (մոտ 40 հազար հատոր), Ստամբուլի նուրբ արվեստների ակադեմիան (մոտ 20 հազար հատոր):

Թուրքիայի մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն գ ր ա դ ա ր ա ն ն ե ր ը (ավելի քան 150) կարելի է բաժանել երեք խմբի. ա) մինիստրությունների ու գերատեսչությունների պաշտոնական գրադարաններ, բ) գիտական հաստատությունների ու ընկերությունների գրադարաններ, գ) հուշագրային և թանգարանային գրադարաններ:

Մինիստրությունների և գերատեսչությունների գրադարանների ֆոնդերը սովորաբար տատանվում են 3 հազարից մինչև 10 հազար միավորների միջև: Դրանք մատչելի են միայն տվյալ հաստատության աշխատողներին: Դրանց մեծ մասը կենտրոնացած է Անկարայում:

Գերատեսչական գրադարաններից ամենախոշորը **Թուրքիայի ազգային մեծ ժողովի գրադարանն** է (հիմնվել է 1920 թվականին): Նրա ֆոնդը հաշվվում է ավելի քան 90 հազար հատոր:

Գիտական հաստատությունների և ընկերությունների գրադարանները կոմպլեկտավորում են տվյալ կազմակերպության գիտական հետազոտությունների պրոֆիլին համապատասխան հատուկ գրականություն և սպասարկում գիտական աշխատողներին: Ֆոնդերը համալրվում են գլխավորապես գրքերի փոխանակման և զանազան գիտական հաստատությունների հրատարակությունները որպես նվեր ստանալու հաշվին: Նշենք դրանցից առավել նշանակալիները:

**Թուրքիայի պատմական ընկերության Անկարայի գրադարանը** (ստեղծվել է 1931 թվականին) իր ֆոնդերում ունի

ավելի քան 50 հազար հատոր։ Գրադարանի ստացած գրքերի ցուցակները սիստեմատիկաբար հրապարակվում են ընկերության «Բյուլետեն» ժուռնալում։

**Անկարայի երկրաբանական ուսումների ու հետախուզությունների գրադարանը** *(հիմնվել է 1955 թ.)*, որն ունի 55 հազար հատորից բաղկացած գրականության ֆոնդ, սպասարկում է տվյալ ասպարեզում աշխատող բոլոր մասնագետներին։

**Անկարայի թուրքերեն լեզվի ընկերության գրադարանն** *(հիմնվել է 1932 թ.)* ունի 11 հազար հատոր գրքերից բաղկացած ֆոնդ։

Հուշագրային և թանգարանային գրադարանները չափազանց հետաքրքիր են գրքերի և, մանավանդ, ձեռագրերի կոլեկցիաներով։ Դրանց մեծ մասը գտնվում է Ստամբուլում։ Այդ գրադարանների մեջ մտնում են թուրքական սուլթանների, պետական խոշոր գործիչների, գիտնականների կողմից վաղուց ի վեր կազմված կոլեկցիաները։ Կոլեկցիաները պահվում են իրենց սկզբնական տեսքով, պահպանելով նախկին տերերի անունները։ Ֆոնդերում կենտրոնացված է աշխարհում թուրքերեն, արաբերեն, պարսկերեն լեզուներով եղած կարևորագույն ձեռագրերի մինչև 80 տոկոսը, ինչպես նաև զգալի թվով արժեքավոր ձեռագրեր լատինական, հունական և այլ լեզուներով։ Այդ գրադարանները իրականում գրքեր չեն լրացվում, պահպանելով գրադարան-թանգարանի բնույթ։ Թվարկենք կարևորագույն մասնագիտական գրադարանները։

**Սուլեյմանիե մզկիթին կից գրադարանն** *(Ստամբուլ)* իրենից ներկայացնում է Թուրքիայի ամենահետաքրքիր ձեռագրային հավաքածուներից մեկը։ Նրա առաջին կոլեկցիաները կազմվել են XVIII դարում։ Ժամանակի ընթացքում նրա ֆոնդերը համալրվել են 79 նոր կոլեկցիաներով, որոնք պատկանելիս են եղել մասնավոր անձանց ու հաստատությունների, այդ թվում՝ սուլթանների, նրանց կանանց, թագաժառանգների, բարձրաստիճան գործիչների, գիտնականների, հոգևորականների, մզկիթների։ 1956 թվականին նրան միացվեց Ստամբուլի հնագույն՝ Ֆաթիհա մզկիթին կից գրադարանը (հիմնվել է XV



դարում), որտեղ պահվում է սուլթան Մահմեդ II-ին (1451—1481) և զանազան բարձրաստիճան գործիչների պատկանող ձեռագրերի զգալի մասը (մոտ 6 հազար ձեռագիր և 4 հազար հնատիպ հրատարակություններ)։ 1957 թվականին այդ նույն գրադարանին հանձնվեց Խուսրև փաշայի գրադարանը, ուր կար 7 հազար հնատիպ գիրք և մոտ 3 հազար թուրքերեն, արաբերեն ու պարսկերեն ձեռագիր։ Չհաշված այդ երկու գրադարանը, Սուլեյմանիե գրադարանի ֆոնդերում կան թուրքերեն, արաբերեն, պարսկերեն մոտ 40 հազար ձեռագիր և ավելի քան 35 հազար հին հրատարակություններ։

**Թոփկափի պալատի թանգարանին կից գրադարանը** *(Ստամբուլ)* բաղկացած է պալատական և մասնավոր կոլեկցիաներից։ Նրանում կա թուրքերեն, արաբերեն և պարսկերեն մոտ 17 հազար ձեռագիր։ Թանգարանը հրատարակել է այդ գրադարանի թուրքերեն ձեռագրերի ցանկերի երկու հատոր։

**Ազգերի գրադարանը** *(Ստամբուլ)* հիմնվել է 1916 թվականին, մեծ վեզիր Ֆեյզուլլահի (XVIII դարի սկիզբ) ձեռագրերի ու գրքերի հավաքածուի, ինչպես նաև ուրիշ մի շարք կոլեկցիաների բազայի վրա։ Գրադարանում հավաքված են ավելի քան 18 հազար հին հրատարակության գրքեր և մոտավորապես 13 հազար ձեռագիր։

**Այա-Սոֆյա մզկիթին կից գրադարանը** *(Ստամբուլ)* հիմնվել է XVIII դարում։ Ներկայում նրա մեջ մտցվել է մի քանի վակուֆային և մասնավոր գրադարան։ Այդ գրադարանը հետաքրքիր է գլխավորապես թուրքերեն, արաբերեն և պարսկերեն ձեռագրերի հավաքածուով (մոտ 10 հազար)։

Թանգարանային տիպի մյուս գրադարաններից հայտնի են **Նուրոսմանիե մզկիթին կից գրադարանը** (5 հազար ձեռագիր և 9 հազար հին տպագրության գիրք), **Քյոփրյուլյուի գրադարանը**, որը հիմնել է մեծ վեզիր Մահմեդ Քյոփրյուլյուն XVII դարում և լրացրել են նրա ժառանգորդները հաջորդ դարում (մոտ 3 հազար ձեռագիր), **Ռաղիբ փաշայի գրադարանը** (2 հազար ձեռագիր)։

Հ ա ն ր ա յ ի ն  գ ր ա դ ա ր ա ն ն ե ր ը  գտնվում են ազ-

դային լուսավորության մինիստրության գրադարանային վարչության կամ քաղաքային մունիցիպալիտետների տնօրինության տակ։ Ընդհանուր թիվը հասնում է 130-ի։ Դրանց գերակշռող մասը քաղաքային փոքր գրադարաններ են՝ ստեղծված վակուֆային կամ մասնավոր հավաքածուների վրա։ Դրանցից շատերը պատկանում էին Աթաթյուրքի ժամանակ կազմակերպված ժողովրդական տներին։ Ֆոնդերը սովորաբար տատանվում են 2 հազարից մինչև 10 հազար հատորի միջև։ Դրանք բոլորն էլ ունեն թուրքերեն, արաբերեն և պարսկերեն ձեռագրերի ոչ մեծ հավաքածուներ։

**Անկարայի հանրային գրադարանը** (*հիմնվել է 1928 թվականին*)։ Նրա ֆոնդը բաղկացած է 350 հազար գրքերից և ոչ մեծաթիվ ձեռագրերից։ 1934 թվականի օրենքի հիման վրա գրադարանն ստանում է թուրքերեն բոլոր հրատարակությունների պարտադիր օրինակները։

**Բայազիդի մզկիթին կից հանրային գրադարանը** (*կազմակերպվել է 1882 թվականին*) Ստամբուլի ամենամեծ գրադարաններից է։ Գրադարանից լայնորեն օգտվում են Ստամբուլի համալսարանի ուսանողները։ Նրա ֆոնդերում պահվում են Օսմանյան կայսրության նշանավոր բարձրաստիճան անձանց գրքերի և ձեռագրերի մոտ 30 հավաքածուներ։ Ընդամենը գրադարանում կա 120 հազար հատոր տպագիր գիրք և ավելի քան 11 հազար թուրքերեն, արաբերեն և պարսկերեն ձեռագիր։ Բացի այդ, կա պարբերական հրատարակությունների զգալի ֆոնդ։

Գրադարանն ստանում է Թուրքիայում լույս տեսնող բոլոր տպագիր հրատարակությունների պարտադիր օրինակները։

**Ստամբուլի մունիցիպալիտետի գրադարանը** հիմնվել է 1929 թվականին՝ հայտնի թուրք պատմաբան Ահմեդ Ջևդեթի գրադարանի և մի քանի մասնավոր հավաքածուների բազայի վրա։ Մինչև 1945 թվականը այնտեղ կոմպլեկտավորվում էին քեմալական հեղափոխության պատմության վերաբերյալ նյութերը, որոնք հետո անցան նորաստեղծ հեղափոխության թանգարանին։ Գրադարանի հիմնական ֆոնդը կազմում են



թուրքերեն և եվրոպական լեզուներով այն գրքերը, որոնք վերաբերում են Օսմանյան կայսրության XIX դարի պատմությանը։ Գրադարանում կա ավելի քան 60 հազար հատոր գիրք, մոտ 1,5 հազար ձեռագիր և 9 հազար հատոր պարբերական հրատարակություն։ 1953—1954 թվականներին հրատարակվեց գրադարանի այբբենական ցանկը։

**Իզմիրի ազգային գրադարանը** (*հիմնվել է 1911 թվականին*) գավառական գրադարաններից միակն է, որն ստանում է Թուրքիայում հրատարակված բոլոր գրքերի պարտադիր օրինակները։ Նրա ֆոնդերում կա 55 հազար գիրք և 2 հազար ձեռագիր։

**Բուրսայի հանրային գրադարանը** կազմակերպվել է 1948 թվականին փոքրիկ գրադարանների և մզկիթներին ու մեդրեսեներին կից հուշագրային հավաքածուների բազայի վրա։ Նրա ֆոնդերը պարունակում են 30 հազար գիրք ու ավելի քան 7 հազար ձեռագիր։

* * *

Գրադարանային գործի մեթոդիկայի ասպարեզում զգալի աշխատանք է կատարում Անկարայի ազգային գրադարանը։ Նրա դիրեկտոր Ադնան Օթյուկենը (բիբլիոգրաֆիայի ու գրադարանային գործի աչքի ընկնող մասնագետ) հրատարակել է «Գրադարանավարների սեղանի գիրք», իսկ ավագ գրադարանավար Էնվեր Կարալը՝ 1829-ից 1950 թվականներին լույս տեսած թուրքերեն պատմական հրատարակությունների բիբլիոգրաֆիա և ուրիշ մի շարք բիբլիոգրաֆիաներ ու գրադարանային գործի ձեռնարկներ։

Գրադարանագիտական հատուկ կրթություն է տալիս գրադարանագիտական ամբիոնը, որ բացվել է 1946 թվականին Անկարայի համալսարանի բանասիրական ֆակուլտետին կից։ Գրադարաններում մասնագետների աշխատելուց հետո սկսեցին հրատարակվել գրքային ու ձեռագրային ֆոնդերի ցանկեր։

1950 թվականին Անկարայում հիմնվեց թուրքական

գրադարանավարների ասոցիացիա, որը 1952 թվականից սկսած հրատարակում է «Թուրքական գրադարանավարների ընկերության բյուլետենը»: Այս ասոցիացիան Գրադարանային ասոցիացիաների միջազգային ֆեդերացիայի անդամ է:

## ԱՐԽԻՎՆԵՐԸ

Թուրքիայի ամենամեծ արխիվը **Մինիստրների խորհրդի** արխիվն է, որը գտնվում է Անկարայում (մինչև հարյուր միլիոն պահպանական միավոր): Ստեղծվել է 1936 թվականին: Այստեղ կենտրոնացված են օսմանյան պետական ադմինիստրացիայի (դիվանի, գրասենյակի, մեծ վեզիրի, գանձարանի վարչության, վակուֆային և մյուս գերատեսչությունների, շարիաթի դատարանի, պրովինցիալ ադմինիստրացիայի) դարավոր գործունեությունն արտացոլող նյութեր՝ հրամանագրերի, կարգադրությունների, նշանակումների, շնորհագրերի, մուլք-եյրի ծախսերի և գրանցման գրքերի ու այլ փաստաթղթերի ձևով:

Նշանակությամբ երկրորդը **հարկամատյանների և հողային փաստաթղթերի պետական արխիվն** է Անկարայում. Հիմնվել է 1930 թվականին: Փաստաթղթային նյութերի զգալի ֆոնդ ունի նաև Ստամբուլի **Թոփկափի պալատին կից թանգարանի արխիվը**, որտեղ հնագիտական աշխատանքը սկսվել է 1936 թվականին:

Նշված երեք խոշոր արխիվներից բացի Անկարայում և Ստամբուլում կան ևս 15 արխիվային կոլեկցիաներ: Դրանցից առավել նշանակալիներն են՝ Անկարայի վակուֆների գլխավոր վարչությանը կից հին փաստաթղթերը և գրանցման գրքերը. Անկարայում, արդարադատության մինիստրության նկուղներում պահպանվող փաստաթղթերը. ազգային լուսավորության մինիստրության տնօրինության տակ գտնվող շարիաթային դատարանի արձանագրությունները. ֆինանսների մինիստրության արխիվը, որը պահպանվում է Ստամբուլում գտնվող Բայազիդի գրադարանում.



Ստամբուլի մունիցիպալիտետի արխիվը. ռազմական մինիստրության և զինարանի արխիվը, որ գտնվում է Ստամբուլի սուլթան Ահմեդի մզկիթում:

Արխիվային փաստաթղթերի հավաքածուներ կան Թուրքիայի գրեթե բոլոր մեծ քաղաքներում: Դրանք կենտրոնացված են քաղաքային գավառագիտական և ազգագրական թանգարաններում: Այդ հավաքածուների մեջ առավել արժեքավորը դատական արձանագրությունների (այսպես կոչված սիջիլլների) հավաքածուներն են: Այդպիսի փաստաթղթերի ամենանշանակալի հավաքածուները կենտրոնացված են Անկարայի, Բուրսայի, Կոնիայի, Իզմիրի, Դիարբեքիրի, Ադանայի ազգագրական թանգարաններում:

## ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ

Թանգարանների մեծ մասը կենտրոնացված է Ստամբուլում: Դրանցից մի քանիսն ստեղծվել են պալատային հավաքածուների բազայի վրա դեռ XIX դարում:

**Թոփկափի պալատի թանգարանը** ամենահինն է Թուրքիայում: Այնտեղ են կենտրոնացված թուրքական զենքի, գործվածքների, ձեռագործերի, հախճապակու, ապակու, ճենապակու, մետաղագործության, արծաթի, թանկարժեք իրերի, դիմանկարների, մանրանկարների, պատկերազարդ ձեռագրերի, սուլթանական կառքերի ամենահարուստ հավաքածուները: Թանգարանը տեղավորված է պալատական շենքերում, որոնք իրենցից ներկայացնում են Օսմանյան կայսրության տարբեր ժամանակաշրջանների ճարտարապետության հուշարձաններ: Դրանցից առանձնապես աչքի է ընկնում նշանավոր «Հախճապակյա կրպակը», որը մինչև օրս պահպանել է ողորկված հախճապակու զարմանալի գույները. որմնանկարները և Մահմեդ II-ի (XV դ.) ժամանակաշրջանի ճարտարապետական և գեղարվեստական կահավորումը:

Ստամբուլի հնագիտական թանգարանների վարչությունն իր սիստեմում միավորում է երեք թանգարան. **Անտիկ** աշ-

**խարհի հուշարձանների թանգարանը**, որտեղ կենտրոնացված են հին Հունաստանի, Հռոմի և Բյուզանդիայի նյութական կուլտուրայի հուշարձանների հավաքածուները։ **Հին Արևելքի հուշարձանների թանգարանը**, որը բովանդակում է շումերական, ասորական, խեթական, փռյուգիական, եգիպտական և ուրիշ նյութական կուլտուրաների հուշարձաններ. **Յոթաշտարականի** ամրոցը, որ միջնադարյան Թուրքիայի պատմական հուշարձանն է։

Ստամբուլի հնագիտական թանգարանների վարչությունը լույս է ընծայում տարեգիրք, որի մեջ կանոնավոր կերպով հրապարակվում են հաղորդումներ հավաքածուների, նոր ստացված նյութերի մասին և հաշվետվություններ թանգարանների գործունեության մասին։

**Թուրքական և իսլամական կուլտուրայի հուշարձանների թանգարանը**, որ գտնվում է Սուլեյմանիե մզկիթում, հավաքում և ցուցադրում է թուրքերի, պարսիկների, արաբների և մուսուլմանական աշխարհի մյուս ժողովուրդների նյութական կուլտուրայի առարկաներ։ Այդ թանգարանում առանձնակի ուշադրություն են գրավում հազվագյուտ գրքերի, ձեռագիր գրքերի մանրանկարների, վայելչագրության նմուշների հարուստ հավաքածուները։

**Այա-Սոֆյա մզկիթի** թանգարանը հիմնադրվել է 1933 թվականին, որպես բյուզանդական և օսմանա-թուրքական հին հուշարձան։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում այստեղ հետագա նստվածքներից մաքրված մոզաիկ նկարները։

**Թուրքիայի ռազմական թանգարանում** պահպանվում են Օսմանյան կայսրության զենքի ու հանդերձանքի հարուստ հավաքածուներ՝ սկսած XIV դարից։

Կահրիե մզկիթի **մոզաիկ թանգարանը** ցուցադրում է բյուզանդական ժամանակաշրջանի հիանալի մոզաիկա։

Բյուզանդական դարաշրջանի ճարտարապետական կառուցվածքների բազմաթիվ մնացորդները, պալատները, մզկիթները, մեդրեսեները (կառուցված Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում)՝ այդ բոլորը Ստամբուլը դարձնում են մի հսկայական թանգարան։



Անկարայի **հնագիտական թանգարանը** միավորում է երեք մեծ կոմպլեքս. Ջանկիրիկափի բլրակի վրա գտնվող բաց թանգարանը, որտեղ կենտրոնացված են Փոքր Ասիայի տերիտորիայում հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված փռյուգիական, հռոմեական, հելլենական, բյուզանդական և թուրքական կուլտուրաների բազմաթիվ հուշարձաններ. Բեդեստեն կամ խեթական թանգարանը, որտեղ հավաքված են խեթական ժամանակաշրջանի Փոքր Ասիայի պատմությանը վերաբերող հնագիտական իրեր. Օգոստոսի տաճարը և Հաջիբայրամ մզկիթն իրենցից ներկայացնում են տարբեր դարաշրջանների ճարտարապետական կոմպլեքսներ։

Անկարայի **ազգագրական թանգարանում** պահպանվում են Թուրքիայի և Մերձավոր Արևելքի ժողովուրդների նյութական ու հոգևոր կուլտուրայի առարկաների հավաքածուներ։ Այստեղ հավաքված են կենցաղի առարկաներ, հագուստներ, նկարներ, ձեռագրեր։

Ընդարձակ բացօթյա թանգարանների են վերածվել Իզմիրում, Էֆեսում, Բերգամում կատարված պեղումների վայրերը, որտեղ հայտնաբերվել են տարբեր դարաշրջանների հնագիտական բազմաթիվ հուշարձաններ։

Միջնադարյան Օսմանյան կայսրության՝ թանգարանների վերածված ճարտարապետական կառուցվածքներ կան Բուրսայում, Կոնիայում, Էդիրնեում։ Նոր պեղումների միջոցով շարունակ հարստացող հնագիտական թանգարաններ կան Մանիսայում, Ադանայում, Կայսերիում և ուրիշ քաղաքներում։

## ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թուրքիայում գիտական գործունեությունը կենտրոնացված է առավելապես Անկարայում և Ստամբուլում գտնվող համալսարաններում և գիտական կամավոր ընկերություններում։

Համալսարանների ֆակուլտետներին կից կազմակերպված են գիտահետազոտական ինստիտուտներ։ Ֆակուլտետների սերիական հրատարակություններում ու հանդեսներում հրապարակվում են գիտական աշխատություններ։ Այսպես, Անկարայի համալսարանում բանասիրական, պատմության և աշխարհագրական ֆակուլտետը հրատարակում է մի ընդհանուր հանդես, դոկտորական դիսերտացիաների և ֆակուլտետի աշխատությունների մատենաշար։ Քաղաքական գիտությունների ֆակուլտետը հրատարակում է «Քաղաքական գիտությունների հանդես», իրավաբանական ֆակուլտետը՝ «Իրավաբանական ֆակուլտետի տեղեկագիրը»։ Բացի այդ, լույս է տեսնում համալսարանական տարեգիրք, որտեղ հրապարակվում են ամբողջ համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող առավել կարևոր աշխատությունները։

Ստամբուլի համալսարանի կողմից կատարվող գիտական հետազոտությունները լուսաբանվում են հրատարակություններում՝ «Իրավաբանական ֆակուլտետի տեղեկագրերում», «Տնտեսագիտական ֆակուլտետի տեղեկագրերում» և այլն։ Գիտական գործունեությունն առանձնապես համակողմանի է կազմակերպված բանասիրական ֆակուլտետում, որը հրատարակում է «Թուրքերեն լեզվի ու գրականության հանդես», «Պատմական հանդես», «Արևելագիտական հանդես» (ֆակուլտետին կից արևելագիտական ինստիտուտ), «Թյուրքագիտական հանդես» (Թյուրքագիտական ինստիտուտ) և ի լրացումն դրա՝ ֆակուլտետի աշխատությունների ընդհանուր մատենաշար։

Թուրքիայում շատ կան այնպիսի գիտական ընկերություններ, որոնք գործում են ինքնուրույն կերպով կամ համալսարանների ֆակուլտետներին կից։

**Թուրքական պատմական ընկերությունը** (կազմակերպվել է 1931 թվականին) առավել հիմնավոր գիտական միավորումն է։

Ընկերությունն ունի հրատարակչություն և գրադարան։ Նրա աշխատությունները տպագրվում են 16 սերիաներով, որոնցից յուրաքանչյուրը նվիրված է մի որոշակի գիտական



պրոբլեմի։ Ընկերության պարբերական «Բելլետեն» հանդեսը լույս է տեսնում տարեկան չորս անգամ։ Ընկերությունը գումարում է պատմական կոնգրեսներ, որոնց մասնակցելու համար հրավիրվում են նաև արտասահմանյան գիտնականներ։ Ընդամենը եղել է վեց կոնգրես։ Կոնգրեսների արձանագրությունները և գիտական զեկուցումները հրապարակվում են առանձին գրքերով։ Ընկերության եկամուտները կազմում են անդամավճարները, նվիրատվությունները և հրատարակությունների վաճառքից և վճարովի դասախոսություններից գոյացած գումարները։

**Թուրքական լեզվագիտական ընկերությունը** (հիմնվել է 1932 թ.) բացի մատենաշար աշխատություններից և հրապարակվող այլ նյութերից, լույս է ընծայում ամենամյա «Թուրքերեն լեզու» հանդես և «Թուրքերենի հետազոտությունների ժողովածու» տարեգիրք։

**Թուրքական տնտեսագիտական ընկերությունը** (հիմնվել է 1939 թվականին) հրատարակում է աշխատությունների մատենաշար և «Թուրքական էկոնոմիկա» պարբերական օրգանը։

**Թուրքական իրավաբանական ընկերությունը** (ստեղծվել է 1934 թվականին) հրատարակում է աշխատությունների մատենաշար, «Նյա Թյուրքի» պարբերական օրգանը (Փարիզում) և Թուրքական իրավաբանական բառարան (Անկարայում)։

**Թուրքիայի երկրաբանական ընկերությունը** (կազմակերպվել է 1946 թվականին) տպագրում է ամենամյա բյուլետեն։

**Հանքերի հետախուզության և ուսումնասիրման թուրքական ընկերությունը** (հիմնվել է 1935 թ.) հրատարակում է ամենամյա բյուլետեն, մենագրությունների մատենաշար և ամենամյա հաշվետվություններ։

Վերը նշված բոլոր ընկերությունները գտնվում են Անկարայում։

Ստամբուլում գործում են՝ **թուրքական բժշկական ընկերությունը** (1856), **թուրքական կենսաբանական ընկերությունը** (1949), **բժշկական պատմության թուրքական ընկերությունը** (1938), որը կից է Ստամբուլի համալսարանի

բժշկության պատմության ինստիտուտին, Քիմիական ընկերություն (1919), որը հրատարակում է «Քիմիան և արդյունաբերությունը» հանդեսը, ֆիզիկոսների թուրքական ընկերությունը, որը կից է Ստամբուլի համալսարանին, թուրքական վիրաբուժական ընկերություն (1931), նոր փիլիսոփայության ընկերություն (1943) և այլն։ Բացի այդ, երկրում կան օտարերկրյա մի քանի, գլխավորապես հնագիտական, գիտական ինստիտուտներ՝ Անկարայի հնագիտական ինստիտուտը, Ստամբուլի գերմանական (ԳՖՀ) հնագիտական ինստիտուտը, կուլտուրայի իտալական ինստիտուտը Անկարայում, Ստամբուլի նիդեռլանդական պատմական և հնագիտական ինստիտուտը։

Հնագիտության ասպարեզում գիտական նշանակալի աշխատանք են կատարում նաև Ստամբուլի հնագիտական ինստիտուտում միավորված և Ստամբուլի, Անկարայի, Իզմիրի և մյուս քաղաքների հնագիտական թանգարաններում աշխատող թուրք գիտնականները։

## ՄԱՄՈՒԼԸ ԵՎ ՌԱԴԻՈՆ

Մ ա մ ու լ ը։ Թուրքիայում 1962 թվականի դեկտեմբերի դրությամբ գրանցված էր 942 թերթ (այդ թվում՝ 825-ը ամենօրյա) և 716 հանդես։ Թերթերի ու հանդեսների գերակշռող մասը (638 անուն) հրատարակվում է Անկարայում (295) և Իզմիրում (75)։ Մյուս քաղաքներում լույս տեսնող տպագիր օրգանները տեղական բնույթ են կրում, նրանց տիրաժը մեծ չէ, և նրանք, ի տարբերություն Ստամբուլի, Անկարայի և Իզմիրի մի քանի հրատարակությունների, երկրում լայն տարածում չունեն։

Ամենօրյա թերթերի ընդհանուր տիրաժը 1,3 միլիոն օրինակ է։ Ընդամենը չորս-հինգ ամենօրյա թերթ և երկու-երեք հանդես ունեն 100 հազար օրինակից ավելի տիրաժ։ Մյուսները բավարարվում են 10 հազարից մինչև 500 օրինակ տիրաժներով։

Թուրքիայում հրատարակվում է 72 տպագիր օրգան՝



արևմտա-եվրոպական և ազգային փոքրամասնությունների լեզուներով (ֆրանսերեն՝ 26, անգլերեն՝ 10, գերմաներեն՝ 6, իտալերեն՝ 2, հայերեն՝ 15, հունարեն՝ 8, հրեերեն՝ 3, ալբաներեն՝ 1)։ Բոլոր տպագիր օրգանները, բացառությամբ «Ռեսմի գազեթեսի» («Պաշտոնական թերթ») պատկանում են մասնավոր հրատարակիչների կամ բաժնետիրական ընկերությունների։

Շատ թերթեր, մանավանդ Ստամբուլինը և Անկարայինը, լույս են տեսնում առավոտյան։ Մեծ տոներին լույս է ընծայվում «Բայրամ գազեթեսի» («Տոնական թերթ») միացյալ թերթը՝ ժուռնալիստների միության հրատարակությամբ։

Մամուլում նշանակալի տեղ են գրավում հայտարարությունները ու ռեկլամները, որոնք թերթերի եկամտի հիմնական աղբյուրն են։ Գրեթե բոլոր խոշոր թերթերը կառավարությունից ստանում են դոտացիա՝ որպես հայտարարությունների ու ռեկլամի վարձ։

Շատ տեղ է հատկացվում կինոաստղերի, թագակիր անձանց կյանքի մասին ակնարկներին, պատմվածքներին, հոդվածներին և այլն։ Թերթերը զետեղում են արևմտյան կոմիքսներ, մոդայական ոստիկանական վեպեր, ամեն տեսակի մենամարտներ։ Գրեթե բոլոր թերթերը մշտապես հատուկ էջեր են նվիրում սպորտին։

Միջազգային կյանքի իրադարձությունները թուրքական թերթերում լուսաբանվում են արևմտյան բուրժուական մամուլին հատուկ սենսացիա առաջացնելու ձգտումով։

Ինֆորմացիաների հիմնական աղբյուրը Անատոլիական գործակալությունն է։ Դա իրենից ներկայացնում է բաժնետիրական ընկերություն, որի բաժնետոմսերի մեծ մասը պատկանում է կառավարությանը։ Անատոլիական գործակալությունը թղթակցական ցանց ունի միայն երկրի ներսում։ Արտասահմանում տեղի ունեցող իրադարձությունները լուսաբանելիս նա օգտվում է Ասոշիեյտեդ պրես, Ռեյտեր, Ֆրանս պրես, Յունայթեդ պրես և այլ գործակալությունների ծառայություններից։ Անատոլիական գործակալությունը ամեն օր

չորս բյուլետեն է հրատարակում Անկարայում և Ստամ-բուլում։

Գոյություն ունի նաև «Թուրքական ինֆորմացիոն գործա-կալություն» բաժնետիրական ընկերությունը, որը հիմնվել է 1950 թվականին։ Նա ամեն օր հրատարակում է երեք բյուլե-տեն՝ թուրքերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով։ Բյուլե-տեններում հրապարակվում են ինֆորմացիաներ ներքին ու արտաքին քաղաքականության մասին և արտասահմանյան հաղորդագրություններ։

Թուրքական թերթերը արտասահմանյան մշտական թղթ-ակիցներ չունեն։ Միայն բացառիկ դեպքերում, երբ տեղի են ունենում հատկապես կարևոր միջազգային իրադարձու-թյուններ, խոշոր թերթերն արտասահման են ուղարկում իրենց թղթակիցներին ու մեկնաբաններին։ Ստամբուլի ու Անկարայի մի քանի ազդեցիկ թերթեր ունեն ռադիոունկնդր-ման սեփական ծառայություն։

Թուրքական մամուլի համար կադրեր են պատրաստում Ստամբուլի ժուռնալիստիկայի ինստիտուտը և Անկարայի, Ստամբուլի և Իզմիրի համալսարանները։

1962 թվականին ստեղծվեց «Մամուլի թուրքական ինս-տիտուտ» ընկերությունը, որի կանոնադրության մեջ ասվում է, թե ինստիտուտի նպատակն է՝ «պահպանել և զարգացնել մամուլի ազատությունը Թուրքիայում, փոխըմբռնում հաս-տատել ժուռնալիստների միջև, համակողմանի կապ ստեղծել ժուռնալիստների միջազգային կազմակերպությունների հետ»։

Ստորև մեջ է բերվում թուրքական խոշորագույն թերթերի ու հանդեսների ցանկը։

«Հյուրիեթը» («Ազատություն») ամենօրյա առավոտյան թերթ է։ Լույս է տեսնում Ստամբուլում 1948 թվականից։ Ունի Թուրքիայում ամենամեծ տիրաժը՝ 350 հազար օրինակ։ Թերթը ձևականորեն անկուսակցական է։ Նրա բնորոշ առանձ-նահատկությունն է՝ երկրում և արտասահմանում կատարված իրադարձությունների շարադրման համառոտությունը։ Սիս-տեմատիկաբար տպագրում է արևմտյան հեղինակների վե-պեր և մոդաների նկարներ։ Մեծ ուշադրություն է դարձնում



ռազմական թեմային, մասնավորապես ամերիկյան հրթիռա-յին տեխնիկայի գովաբանությանը։ Տնօրենը Խալդուն Էրոլ Սիմավին է։

«Միլլիեթը» («Ազգ») ամենօրյա առավոտյան թերթ է։ Լույս է տեսնում Ստամբուլում 1950 թվականից։ Տիրաժն է 180 հազար օրինակ։ Հիմնադրել է Ալի Նաջի Կարաջանը։ Գլխավոր խմբագիրն է Աբդի Իփեքչին, որը հոդվածներ է գրում երկրի ներքին քաղաքական կյանքին վերաբերող թեմաներով։ Թերթում ամեն օր ելույթ է ունենում անվանի ժուռնալիստ Ջեթին Ալթանը։ Նրա հոդվածները հաճախ ճըշ-մարտացիորեն պատկերում են Թուրքիայում տիրող սոցիա-լական անարդարությունը։ Միջազգային հարցերի վերաբերյալ հոդվածների հեղինակն է Սամի Կոհենը։ Հիմնական ինֆոր-մացիան զետեղվում է թերթի առաջին էջում։ Մյուս հինգ էջերի մեծ մասը զբաղվում են հայտարարությունները, զանա-զան ռեպորտաժները, կինոաստղերի կյանքի նկարագրու-թյունները, սպորտային նորությունները և այլն։

«Աքշամը» («Երեկո») օրաթերթ է։ Լույս է տեսնում Ստամ-բուլում՝ սկսած 1918 թվականից։ Ձևականորեն անկախ է։ Տի-րաժը՝ 130 հազար օրինակ։ Տնօրենն է Մալիկ Յոլաչը։ Թերթի գերակշիռ մասը զբաղված է ռեկլամներով, հայտարարու-թյուններով, թարգմանված վեպերով և կոմիքսներով։ Ներքին քաղաքական ինֆորմացիան շատ համառոտակի է տրվում և զբաղեցնում է առաջին և հինգերորդ էջերի միայն մի մասը։

«Թերջյումանը» («Խոսափող») ամենօրյա առավոտյան թերթ է։ Լույս է տեսնում Ստամբուլում։ Տիրաժը՝ 105 հազար օրինակ։ Առավել ռեակցիոն թերթերից մեկն է։ Թերթում հրա-պարակվող միջազգային հարցերին նվիրված շատ հոդված-ներ ուղղված են միջազգային իրադրության առողջացման, մասնավորապես սովետա-թուրքական հարաբերությունների բարելավման դեմ։

«Ջումհուրիեթը» («Հանրապետություն») ամենօրյա առավոտյան թերթ է։ Տիրաժն է 90—110 հազար օրինակ։ Հիմնվել է 1925 թվականին՝ գրող և ժուռնալիստ Յունուս Նադիի կողմից։ Թերթի տնօրենը Յունուս Նադիի կին Նադիմե

Նադին է։ Ձևականորեն անկախ է, բայց փաստորեն արտացոլում է ժողովրդա-հանրապետական կուսակցության շահերը։ Առաջնորդողները գրում է թերթի հիմնադրի որդին՝ Նադիր Նադին։ Նա հանդես է գալիս ՆԱՏՕ-ին Թուրքիայի մասնակցության օգտին։ Օրվա թեմայի մեկնաբանություններով հանդես է գալիս թերթի մշտական աշխատակից Իլհան Սելչուկը։ Արտաքին քաղաքական մեկնաբան Կայհան Սագլամերը մասնագիտանում է պրոամերիկյան և հակասովետական հոդվածներ թխելու մեջ։ «Ջումհուրիեթին» աշխատակցում են հայտնի դրամատուրգ Ջևաթ Ֆեհմի Բաշկուտը, բանաստեղծ Մելիհ Ջևդեթ Անդայը, նշանավոր ժուռնալիստներ Բալըսար և Բուրհան Ֆելեքը։

«Վաթանը» («Հայրենիքը») ամենօրյա առավոտյան թերթ է։ Լույս է տեսնում Ստամբուլում։ Հիմնվել է 1923 թվականին։ 1926 թվականին փակվել է։ Կրկին սկսել է հրատարակվել 1940 թվականի օգոստոսին։ 1961 թվականին, երբ խմբագրությունից հեռացավ հրատարակիչ Ահմեդ Էմին Յալմանը, թերթի տնօրեն և գլխավոր խմբագիր դարձավ գրող և ժուռնալիստ Նաիմ Թիրալին։ Նա թերթը կառավարում էր բաժնետիրական ընկերության անունից։ «Վաթանը» պարբերաբար զետեղում է Օքթայ Աքբալի և Բուրհան Արփադի հոդվածները, որոնցում քննադատության են ենթարկվում կառավարության գործունեության որոշ ասպեկտները։

«Հյուր վաթանը» («Ազատ հայրենիք») ամենօրյա առավոտյան թերթ է։ Հրատարակվում է Ստամբուլում։ Հիմնադրել է Յալմանը «Վաթան» թերթից հեռանալուց հետո, 1961 թվականին։ «Հյուր վաթանում» տպագրվող արտաքին քաղաքականության պրոբլեմներին նվիրված հոդվածները լի են Սովետական Միության հասցեին զրպարտություններով և «ազատ աշխարհի» գովաբանություններով։ Թերթը եռանդագին պաշտպանում է ՆԱՏՕ ռազմական բլոկը։ Մեծ տեղ են գրավում ռեկլամները, որոնք զգալի շահույթ են բերում թերթի տնօրեններին։

«Ենի սաբահը» («Նոր առավոտ») ամենօրյա առավոտյան անկախ թերթ է։ Սկսել է լույս տեսնել Ստամբուլում 1933



թվականից։ Պատկանում է Սաֆա Կըլըչլըօղլուի գլխավորած բաժնետիրական ընկերությանը։ Գլխավոր խմբագիրն է Օրխան Կոլօղլուն, որը պրոամերիկյան կողմնորոշման թունդ պաշտպան է։ Արտաքին քաղաքական բաժինը վարում է Ստամբուլի համալսարանի պրոֆեսոր Շյուքրյու Բարանը։

«Ենի Իստանբուլը» («Նոր Ստամբուլ») ծայրահեղ աջ ուղղության ամենօրյա առավոտյան թերթ է։ Հիմնվել է 1949 թվականին։ 1962 թվականից թերթը հրատարակում են Գյոքխան Էվլիյաօղլուն և Կամիլ Թեզկանը, որոնք այն դարձրել են հակակոմունիստական և հակասովետական խոսափող։ Առաջնորդող հոդվածների հեղինակը Էվլիյաօղլուն է։ Նրա հոդվածները նվիրված են կոմունիզմի դեմ պայքարին և ժողովրդա-հանրապետական կուսակցության քննադատությանը։ Թերթն արտացոլում է նախկին դեմոկրատական կուսակցության աջ թևի տեսակետը. այդ կուսակցությունը այժմ մտնում է արդարության կուսակցության մեջ։

«Սոն հավադիսը» («Վերջին նորությունները») ամենօրյա առավոտյան թերթ է։ Հրատարակվում է Ստամբուլում։ Տիրաժն է 80 հազար օրինակ։ 1961 թվականին նրա տնօրեն Բալըմանը, ֆինանսական դժվարությունների պատճառով, հարկադրված եղավ վաճառել այն։ 1961 թվականից ի վեր «Սոն հավադիսը» փաստորեն հանդիսանում է արդարության կուսակցության օրգանը։ Խմբագիրն է Ջունդուրեյօղլուն։ Թերթը թշնամական դիրք է գրավում ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների նկատմամբ։

«Դունյան» («Աշխարհը») ամենօրյա առավոտյան թերթ է։ Հրատարակվում է Ստամբուլում 1952 թվականից։ Ժողովրդա-հանրապետական կուսակցության ոչ պաշտոնական օրգանն է։ Տիրաժն է 20 հազար օրինակ։ Տնօրենն է Բեդիի Ֆայիկը, համատնօրենը և գլխավոր խմբագիրը՝ հայտնի ժուռնալիստ Ֆալիհ Ռըֆքը Աթայը. դրանք երկուսն էլ ժողովրդա-հանրապետական կուսակցության թունդ կողմնակիցներն են։ Արտաքին քաղաքական բաժինը երկար տարիներ վարում էր հնագույն թուրք ժուռնալիստներից մեկը՝ Ալի Իհսան Բալլարը, որը բավական օբյեկտիվորեն էր լուսաբանում աշ-

խարհում կատարվող իրադարձությունները։ ՍՍՀՄ-ի նկատմամբ թերթը գրավում է չափավոր դիրք։

«Ուլուսը» («Ազգ») ամենօրյա առավոտյան թերթ է։ Լույս է տեսնում Անկարայում 1920 թվականից։ 1953 թվականին վերանվանվեց «Ենի ուլուս» («Նոր ազգ»), իսկ 1954 թվականին՝ «Խալկչը» («Ժողովրդական»)։ 1955 թվականից կրկին լույս է տեսնում «Ուլուս» անունով։ Ժողովրդա-հանրապետական կուսակցության պաշտոնական օրգանն է։ Տպաքանակն է 15 հազար օրինակ։ Թերթին աշխատակցում են հայտնի ժուռնալիստներ Ահմեդ Շյուքրյու Էսմերը, Յակուբ Կադրի Կարաօսմանօղլուն և ուրիշներ։ Արտաքին քաղաքական հոդվածները գրում է Էսմերը։

«Էմեկչին» («Աշխատավոր») ամենօրյա առավոտյան թերթ է։ Լույս է տեսնում Ստամբուլում 1964 թվականի հուլիսի 1-ից։ Տնօրենն է Շաքան Էրիկը, խմբագիրը՝ Իլհան Հալկաչին։ Թերթը մեծ ուշադրություն է հատկացնում բանվորական հարցին և Թուրքիայի բանվորական կուսակցության գործունեությանը։

«Ենի տանինը» («Նոր արձագանք») ամենօրյա առավոտյան թերթ է։ Լույս է տեսնում Ստամբուլում (միաժամանակ Անկարայում) 1964 թվականի մայիսի 20-ից։ Տնօրենն է Քեմալ Կիրիկօղլուն, գլխավոր խմբագիրը՝ Իհսան Ակյոն։ Թերթին աշխատակցում են նշանավոր թուրք գրողներ և ժուռնալիստներ Յակուբ Կադրին, Ազիզ Նեսինը, պրոֆեսոր Սիյավուշգիլը։

Թուրքիայում հրատարակվում են նաև մեծաթիվ երեկոյան թերթեր։ Ստամբուլի թերթերի մեջ ամենից ավելի տարածված են «Սոն սաաթը» («Վերջին ժամ»), «Գեջե փոստասը» («Երեկոյան փոստ»), «Իստանբուլ հաքիքաթը» («Ստամբուլյան ճշմարտություն»), «Հերգյունը» («Ամեն օր») «Էքսպրեսը», իսկ Անկարայի թերթերի մեջ՝ «Ռեսմի փոստան» («Պաշտոնական փոստ»), «Կարարը» («Կայունություն») և «Մեդենիեթը» («Կուլտուրա»)։ Դրանց բնորոշ առանձնահատկությունը սենսացիա անելու մղումն է։ Այդ թերթերը շատ տեղ են հատկացնում սկանդալային և քրեական խրո-



նիկային, հանցագործների ու կինոաստղերի կյանքի նկարագրությանը։ Դրանցում տպագրվում են նաև թուրքական ու արտասահմանյան հեղինակների վեպեր։

Գրեթե յուրաքանչյուր խոշոր պրովինցիալ քաղաք ունի իր թերթը. այսպես, Իզմիրում հրատարակվում են «Ենի Իզմիրը» («Նոր Իզմիր»), «Դեմոկրատ Իզմիրը», «Դեմոկրատ գերչեքը» («Դեմոկրատական հայացքներ»), Ամասիայում՝ «Ամասիա սեսին» («Ամասիայի ձայն»), Ակհիսարում՝ «Դեմոկրատ Ակհիսարը», Ղարսում՝ «Դեմոկրատ Կարսը», Էդիրնեում՝ «Էդիրնեն», Գիրեսունում՝ «Հյուր սեսը» («Ազատ ձայն»)։

Թուրքիայում հրատարակվող հանդեսներից 250-ը լույս են տեսնում ամիսը մեկ անգամ, 30-ը՝ ամիսը երկու անգամ և մոտ 100-ը՝ շաբաթը մեկ անգամ։ Ստորև մեջ է բերվում առավել ազդեցիկ և տարածված հանդեսների ցուցակը։

«Ակբաբան» («Գրիֆ») հումորիստական շաբաթաթերթ է։ Հրատարակվում է Ստամբուլում։ Ունի Թուրքիայում ամենաբարձր տիրաժը՝ 30 հազար օրինակ։ Տպագրում է ֆելիետոններ, երգիծական և հումորիստական պատմվածքներ, անեկդոտներ, բեմական մենախոսություններ։ Հանդեսին մասնակցում են տաղանդավոր գրողներ և ծաղրանկարիչներ։

«Ակիս» («Արձագանք») հասարակական-քաղաքական շաբաթաթերթ է։ Հրատարակվում է Անկարայում 1953 թվականից։ Տիրաժը՝ 5 հազար օրինակ։ Տնօրենն է Մյուրին Տոկերը, գլխավոր խմբագիրը՝ Մետին Տոկերը։ Հանդեսը գտնվում է ժողովրդա-հանրապետական կուսակցության ազդեցության տակ։ Ունի ներքին և արտաքին կյանքի, բիբլիոգրաֆիայի, արվեստի և սպորտի բաժիններ։

«Յոնը» (Ուղղություն») հասարակական-քաղաքական շաբաթաթերթ է։ Հրատարակվում է Անկարայում 1962 թվականից։ Տիրաժն է 6—7 հազար օրինակ։ Հիմնադիրներն են Ջեմալ Ռեշիտ Էյուբօղլուն, Մյումթազ Սոյսալը և Դողան Ավչիօղլուն, տնօրենը և խմբագիրն է Դողան Ավչիօղլուն։ Հանդեսն արտահայտում է թուրքական ինտելիգենցիայի առաջադեմ մասի հայացքները։ Համարձակորեն հանդես է

գալիս կառավարության ներքին ու արտաքին քաղաքականության քննադատությամբ, պայքարում Թուրքիայի ինքնուրույն արտաքին քաղաքականության անցկացման համար։ Շատ նյութեր է տպագրում նվիրված սոցիալիզմի պրոբլեմներին, անց է կացնում դիսկուսիաներ ու վիճաբանություններ հրատապ հարցերի շուրջը։

«Քիմը» («Ով») «ինֆորմացիոն» շաբաթաթերթ է։ Հրատարակվում է Ստամբուլում 1957 թվականից։ Տիրաժն է 1,5 հազար օրինակ։ Տնօրենն է Օրխան Բիրգիթը, գլխավոր խմբագիրը՝ Օգչան Էրգյուդերը։ Ինֆորմացիան մատուցվում է սենսացիոն պլանով (ունեցվում են պետական գործիչների կյանքի մասին ինտիմ մանրամասնությունները և այլն)։ Հանդեսը նաև շատ տեղ է հատկացնում արվեստի աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին։

«Սոսյալ ադալեթը» («Սոցիալական արդարություն») շաբաթաթերթ է։ Թուրքիայի բանվորական կուսակցության օրգանն է։ Հրատարակվում է Ստամբուլում 1963 թվականի մարտից։ Հանդեսի խնդիրն է՝ կուսակցության քաղաքականությունն անցկացնել մասսաների մեջ և բանվորներին ուղի ցանել պայքարելու իրենց իրավունքները պաշտպանելու համար։ Շաբաթաթերթը նպատակ է դնում հասնել այն բանին, որ կատարվեն սահմանադրության պահանջները սոցիալական հարցերի ուղղությամբ, հանդես գալ ի պաշտպանություն քաղաքի ու գյուղի աշխատավորների։

«Վարլըկը» («Կեցություն») գրականության ու արվեստի երկշաբաթաթերթ է։ Հրատարակվում է Ստամբուլում 1926 թվականից։ Տիրաժն է 3 հազար օրինակ։ Հիմնադիրը, տնօրենը և գլխավոր խմբագիրն է հայտնի գրող Յաշար Նաբի Նայըրը։ Հանդեսը հրապարակում է թուրք գրողների բանաստեղծություններ ու պատմվածքներ, գրականության թեմաներով ու կուլտուրայի հարցերին նվիրված հոդվածներ, ինչպես նաև արդի եվրոպական գրականությունից թարգմանություններ։

«Ֆորումը» հասարակական-քաղաքական և գրականապատմական երկշաբաթաթերթ է։ Հիմնվել է Անկարայում



1954 թվականին։ Հանդեսը երբեմն քննադատում է կառավարության արտաքին ու ներքին քաղաքականությունը, պահանջում մեծ ինքնուրույնություն Ատլանտյան բլոկի շրջանակներում։ Շատ ուշադրություն է հատկացնում սոցիալիստական շարժման մեջ եղած զանազան հոսանքների լուսաբանությանը։

Թուրքիայի ռ ա դ ի ո հ ա ղ ո ր դ ու մ ը գտնվում է մամուլի, ռադիոյի և տուրիզմի գլխավոր դիրեկցիայի տնօրինության տակ, որը անմիջականորեն ենթարկվում է կառավարությանը։

Թուրքիայում աշխատում են երեք խոշոր ռադիոկայաններ՝ Անկարայում (երկար ու կարճ ալիք), Ստամբուլում (միջին ալիք) և Իզմիրում (կարճ ալիք)։ Էրզրումի, Ղարսի և Ադանայի կայաններն աշխատում են երկար ալիքների վրա և օրական տալիս են 1—2-ժամյա հաղորդումներ։

Անկարայի ռադիոն կարճ ալիքներով հաղորդումներ է տալիս նաև օտար լեզուներով։ Նա օրական տալիս է վերջին լուրերի վեց թողարկում, միջազգային թեմաների և ներքին քաղաքականության հարցերի շուրջը զրույցներ ու հոդվածներ։ Զգալի տեղ են գրավում երաժշտական հաղորդումները։

Կառավարությունը պրոպագանդայի նպատակով շատ լայնորեն է օգտագործում ռադիոհաղորդումները։ Ռադիոյով տրանսլյացիայի են ենթարկվում կառավարության ձեռնարկումներն ու ժողովները։ Ռադիոն նախընտրական կամպանիաների ժամանակ ագիտացիա մղելու զորեղ միջոց է։

Ո՛չ արտասահմանում, ո՛չ էլ երկրի ներսում ռադիոհաղորդումը սեփական թղթակիցներ չունի։ Ռադիոկայանները ներքին ինֆորմացիան ստանում են Անատոլիական գործակալությունից, միջազգային ինֆորմացիան՝ արևմտյան տեղեկագրընկերությունների միջոցով, որոնց հետ գլխավոր դիրեկցիան մշտական կապ է պահպանում։

Մինչև այժմ Թուրքիայում չկա քաղաքացիական հեռուստատեսություն։ Առաջին հեռուստահաղորդիչ կայանը սկսել է կառուցվել 1965 թվականին։

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ազգային-ազատագրական պատերազմի ժամանակների թուրքական գրականությունը որոշ ուշացումով արձագանքեց երկրի համար առաջնակարգ նշանակություն ունեցող իրադարձություններին։ Անատոլիայում վճռվում էր Թուրքիայի ճակատագիրը, վճռվում էր նրա, որպես ինքնուրույն պետության, գոյության հարցը, իսկ օկուպացված Ստամբուլում՝ Թուրքիայի գրական կենտրոնում, վեճեր էին գնում մի բանաստեղծական չափի նկատմամբ մյուսի առավելությունների մասին։

Կանգ էր առել երկրի գրական կյանքը։ Գրքեր չէին հրատարակվում, թերթերը գտնվում էին օկուպանտների վերահսկողության տակ։ Լույս էին տեսնում հանդեսներ, որտեղ տպագրվում էին սալոնային ստեղծագործություններ։ Ծաղկում էր բուլվարային-մելոդրամատիկ և բրեակյան գրականությունը։

Ազգային գրականությունը վերստեղծելու և այն երեսով դեպի տագնապալի իրականությունը դարձնելու առաջին լուրջ փորձն արվեց 1918 թվականին, երբ «Վերահաս արշալույս» գրական դպրոցի նախկին ղեկավար, բանաստեղծ Ջելյալ Սահիրը, իր շուրջը համախմբելով տաղանդավոր երիտասարդների, սկսեց հրատարակել գրական հանդեսի նման մի բան։ Բայց այդ միավորման նեղ ստեղծագործական պլատֆորմը, որ սահմանափակված էր գրական նեղ պրոբլեմներով, նրան թույլ չավեց որևէ չափով զգալի դեր խաղալ թուրքական գրականության վերածննդման գործում. այդ միավորման միակ գրական նշանակությունն այն էր, որ նրա շարքերից դուրս եկավ ժամանակակից Թուրքիայի խոշորագույն բանաստեղծ Նազիմ Հիքմեթը։ Հենց նրա ստեղծագործություններում էլ առաջին անգամ նկատվեցին հակաիմպերիալիստական տրամադրությունները։

Ժամանակի ընթացքում հայրենիքի ճակատագրի նկատմամբ հետաքրքրություն երևան եկավ նաև այնպիսի բանաստեղծների ու գրողների երկերում, ինչպես Ֆարուկ Նաֆիզը



(Զամլիբել), Հալիդե Նուսրեթ Զորլութունան, Քեմալեդդին Կամուն, Նեջմեդդին Խալիլը, Յուսուֆ Զիյան։

Երբ 1921 թվականի աշնանը թուրքական բանակը, Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ, կանգնեցրեց հույների հարձակումը, և բեկում տեղի ունեցավ ազգային-ազատագրական պատերազմի ընթացքի մեջ, ապա այդ բեկումը ցրեց գրականության մեջ եղած պեսիմիստական տրամադրությունները, հիասթափության և անելանելիության այն ոգին, որ իշխում էր նրանում առաջին համաշխարհային պատերազմի վերջում։ Գրեթե բոլոր թուրք գրողները այդ պահից սկսեցին գրել նույն թեմայով՝ ազգային-ազատագրական պատերազմի մասին։

Երևան եկան Հալիդե Էդիբի «Հրե վերնաշապիկ» և «Սպանեցե՛ք պոռնիկին» վեպերը, Յակուբ Կադրիի «Մենատունը հանձնվում է» վեպը և «Պատմվածքներ ազգային-ազատագրական պայքարի մասին» ժողովածուն, Ռեշադ Նուրիի «Խորհրդավոր ձեռքը» վեպը, Քեմալեդդին Կամուի «Դոմլուպինարի ճանապարհներին», «Ազատագրական բանակի զոհված մարտիկներին» և այլ բանաստեղծություններ, որոնք ուղղված էին օտարերկրյա օկուպանտների դեմ և գովերգում էին հայրենիքի համար կատարված հերոսությունն ու արիությունը։ Ճշմարիտ է, որ այդ ստեղծագործություններում որպես ազգային-ազատագրական պայքարի հերոսներ պատկերված են մեծ մասամբ սպաներ, ինտելիգենտներ, իսկ ժողովուրդը ցույց է տրված որպես անդեմ պասսիվ մասսա։

Պատերազմն ավարտվելուց և հանրապետություն հաստատվելուց հետո էլ երկար ժամանակ ազգային-ազատագրական պայքարի թեման շարունակում էր մնալ որպես թուրքական գրականության կենտրոնական թեմա։

Արձակի առավել աչքի ընկնող ստեղծագործությունները նվիրված են այդ թեմայի մշակմանը։ Դրանց թվում են Ռեֆիկ Խալիդի «Լուսինը որոնելիս» վեպ-հեքիաթը, Հալիդե Էդիբի «Լեռներ բարձրացած գայլը», Մեհմեդ Ռաուֆի «Փըրկություն», Յակուբ Կադրիի «Անկարա» վեպերը և այլն։

Նույնն էլ տեղի էր ունենում դրամատուրգիայում։ Վեր-

ցինս աշխատում էր բեմի վրա ցույց տալ թուրք զինվորի հե-րոսական գործերը, գովերգել թուրքի «անհաղթ ոգին», ժո-ղովրդի հիշողության մեջ վերականգնել թուրքական կայսրու-թյան «փառավոր» պատմությունը։ Այդ ժամանակաշրջանի բազմաթիվ պիեսների թվում աչքի էին ընկնում Ակ Գյունդուզի «Կապույտ կայծակը», Ֆարուկ Նաֆիզի «Խաբերը», «Հերոսը» և «Հայրենիքը», Բեհչեթ Քեմալի «Հովիվը» և «Աթիլլան», Խալիդ Ֆահրիի «10 տարվա էպոպեան»։

Պոեզիան ամբողջովին նվիրված էր ազգային-ազատա-գրական պատերազմին։ Նաֆիզի «Հովվի աղբյուրը» և «Սպա-նեցին Հուսեյինի կույս աղջկան» պատմվածքներում, նրա «Անատոլիական բանաստեղծություններում» և «Հրեշ» չափա-ծո պիեսում արտացոլվում են գոնե վերջին պատերազմի մա-սին հիշողությունները, ռազմաճակատից վերադարձած և իրենց կալվածատերերի («Հրեշ») դեմ ելույթ ունեցող գյուղա-ցիների տրամադրությունները։

«Ազգային ոգու» վերածնությանն են նվիրել իրենց բա-նաստեղծությունները բանաստեղծներ Նեջմեդդին Խալիլը, Սամիխ Րիֆաթը, Օմեր Բեդրեդդինը և ուրիշներ։

30-ական թվականներին գրականության մեջ տեղի ունե-ցավ մի վերելք, որը պայմանավորված էր Թուրքիան կիսա-ֆեոդալական և կիսագաղութային երկրից ինքնուրույն բուր-ժուական-ազգային պետության վերածելու պրոցեսով։ Իշ-խանության գլուխ անցած ազգային բուրժուազիան պետական կարգի վերակառուցման, ֆեոդալական արխաիկայի ազդեցության թուլացման, Եվրոպայի բուրժուական քաղաքա-կրթությանը Թուրքիային հաղորդակից դարձնելու, ազգային արդյունաբերություն ստեղծելու կարիք էր զգում։

Գրողների մի մասը իր ստեղծագործությունը նվիրեց նոր ռեժիմի ամրապնդմանը։ Դրանց թվին են պատկանում գրողներ Բուրհան Ջահիդը («Փամփուշտ» վեպ), Յակուբ Կադրին («Անկարա» վեպ), Հալիդե Էդիբը («Թաթարուհին» վեպ), բանաստեղծներ Ֆազիլ Ահմեդը, Հասան Ալի Յուջելը, Բեհչեթ Քեմալ Չաղլարը։ Նրանց ստեղծագործությունների հերոսներն էին նոր, ազգային բուրժուազիայի շրջաններից



ելած ինտելիգենտները, որոնց վիճակված էր կառուցել նոր Թուրքիա։ Ճիշտ է, այդ գրողների ստեղծագործություններում հնչում էին նաև քննադատական նոտաներ, բայց դրանք հիմ-նականում վերաբերում էին բարքերին, արևմուտքով անչափ տարվելուն և ֆեոդալա-մուսուլմանական տրադիցիաների դեմ պայքարին։

«Մաքուր արվեստի» կողմնակից մի խումբ բանաս-տեղծներ կրկնում էին սիրո և գեղեցկության մաշված թեմա-ները։ Դրանք էին Յահիա Քեմալը, Ահմեդ Հաշիմը, Ջենապ Շեհաբեդդինը, Նեջիբ Ֆազիլին և դրանց հարող երիտասար-դությունը (օրինակ, Նեջմեդդին Խալիլը)։

Սիրո մասին վեպերով հանդես եկան Բուրհան Ջահիդը («Սիրո այգի», «Սիրո քաղաքականությունը»), Էսադ Մահմուդ Կարակուրտը («Սիրեցի մի վայրենի աղջկա», «Սեր կինը սի-րում է»), Էթհեմ Իզզեթ Բենիջեն («Խելքը թողած կինը», «Սիրո արևը»), Ֆիքրեթ Ադիլը, որը իր վեպերը նվիրեց բոհե-մայի կյանքին. կին գրող Հալիդե Նյուսրեթ Զորլութունան («Մոխիր», «Ամպոտ գիշերներ» վեպերը) և այլն։

Սիրո թեման լայնորեն մշակվեց նաև Ֆարուկ Նաֆիզի, Օրխան Սեյֆիի բանաստեղծություններում և «Յոթ ջահ» գրա-կան ժողովածուի շուրջը համախմբված բանաստեղծների (Վասֆի Մահիր Կոջաթյուրք, Յաշար Նաբի, Ջևդեթ Կուդրեթ Սոլոկ, Սաբրի Էսադ Սիյավուշգիլ և ուրիշներ) գործերում։

20-ական թվականների վերջերին և 30-ական թվական-ների սկզբներին Թուրքիայի գրականության մեջ առաջացավ մի առաջադեմ հոսանք, որը հետագա զարգացում ստացավ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։

Դեռ 1923 թվականին Ստամբուլում լույս տեսնող Թուր-քիայի սոցիալիստական բանվորա-գյուղացիական կուսակ-ցության «Լույս» և «Մանգաղ ու մուրճ» օրգաններն իրենց շուրջն էին համախմբել հեղափոխական երիտասարդների, որոնք ձգտում էին ստեղծել իսկական ժողովրդական, հեղա-փոխական գրականություն։ Այդ գիծը շարունակեց առաջա-դեմ «Ռեսիմլի այ» հանդեսը, որը 1928 թվականից հրատա-րակում էին ժուռնալիստ ամուսիններ Սերթելները Սաբի-

բուլում։ Այստեղ տպագրվում էին Նազիմ Հիքմեթի բանաստեղծությունները ու հոդվածները, ուրիշ թուրք երիտասարդ բանաստեղծներ, այստեղ առաջին անգամ ելույթ ունեցավ Սաբահադդին Ալին։

1929—1939 թվականներին լույս տեսան Նազիմ Հիքմեթի բանաստեղծությունների ու պոեմների մի քանի գրքեր, որոնք մեծ տպավորություն գործեցին Թուրքիայի գրական աշխարհում. Ստամբուլի քաղաքային թատրոնը բեմադրեց նրա «Գանգը», «Հանգուցյալի տունը» և «Բոլորից մոռացվածը» պիեսները։ Թերթերի ու հանդեսների էջերում տպագրվում էին Սաբահադդին Ալիի պատմվածքները, հրատարակվեց նրա «Լեռները և քամին» բանաստեղծությունների գիրքը, «Կույուջակլի Յուսուֆը» վեպը. սկսեց տպագրվել երիտասարդ բանաստեղծ Ռիֆաթ Իլգազը։

30-ական թվականները թուրքական գրականության մեջ կարելի է համարել քննադատական ռեալիզմի գրականության առաջացման և ամենամեծ բարգավաճման ժամանակաշրջան։ Հենց այդ ժամանակ լույս տեսան Ռեշադ Էնիսի «Կոչնազանգը հնչեց», Սադրի Էրթեմի «Երբ կանգ են առնում ճախարակները», Հուսեին Ռահմիի «Անամոթ մարդը» վեպերը, Ռեշադ Էնիսի «Ես մերկացնում եմ սուտերը», Սադրի Էրթեմի «Ցիլինդր ծածկած գյուղացին» պատմվածքների ժողովածուները, որոնցում պատկերված են ժողովրդի ծանր վիճակը, մանր ծառայողների կյանքը, աղքատությունը, իրավազրկությունը, իշխանությունների կամայականությունը, պաշտոնյաների կաշառակերությունը։

1931 թվականին հիմնադրվեցին ժողովրդական տները, որոնց հանձնարարված էր կուլտուրա տարածել մասսաների մեջ։ Ժողովրդական տներն օգտագործվեցին որպես գլխավոր միջոց՝ հանրապետության հիմնական սկզբունքներից մեկի՝ «ժողովրդայնության» պրոպագանդման համար։

Ժողովրդական տների համար ստեղծված գրական երկերն ու պիեսները պետք է առաջացնեին ազգի ու հայրենիքի սեր, ուժեղացնեին ռեֆորմներ կատարելու նպատակին ուղղված էնտուզիազմը, կենդանացնեին թուրքական պատմության



փառավոր անցյալը, ցույց տային ազատագրական պատերազմում գրանցված հաղթությունը, նկարագրեին քաղաքների, ավանների ու գյուղերի՝ երկրի ամեն մի անկյան գեղեցկությունը, որպեսզի հետաքրքրություն առաջացնեին դրանց նկատմամբ, ուշադրությունը կենտրոնացնեին այլանդակ և ծիծաղելի տրադիցիաների վրա, ընդգծեին յուրաքանչյուր բնագավառի բարոյականությունը, մարդկանց նախատրամադրեին դեպի «ժողովրդայնությունը»։

Աթաթյուրքն այսպես է բնորոշել գրականության նպատակները. գրականությունը պետք է սովորեցնի այն, ինչ համաշխարհային, համամարդկային նշանակություն ունի, ունակություն զարգացնի դեպի անալիզն ու սինթեզը, մարդուն դաստիարակի այնպես, որ նա իր բոլոր գիտելիքները և ընդունակությունները տա հասարակության բարօրության օգտին։

Միաժամանակ դիսկուսիաներ էին գնում նոր գրականության բովանդակության ու լեզվի մասին։ Ազգային գրականության ստեղծման պրոբլեմը հուզում էր ստեղծագործական ինտելիգենցիային։ Մեծ մասը համաձայնում էր այն բանի հետ, որ ազգային նոր գրականությունը պետք է սնունդ վերցնի թուրք հասարակության բոլոր խավերի կյանքից և այն նկարագրի սոցիալական, տնտեսական և կուլտուրական բոլոր տեսակետներով։

Դիսկուսիաները մարդկանց ուշադրությունը կենտրոնացնում էին գրականության սոցիալական խնդիրների վրա։

Գրողներն ապացուցում էին, թե գրականությունը չի կարող չնկատել, որ ժողովրդի լայն խավերը դեռ անգրագետ են, ապրում են սարսափելի պայմաններում և հասարակությունը պետք է փորձի նրանց դուրս բերել այդ վիճակից։

«Կադրո» («Կադրեր») հանդեսը, որ լույս էր տեսնում 1932—1934 թվականներին գրող Յակուբ Կադրիի տնօրինությամբ, փորձում էր ձևակերպել հանրապետության սոցիալ-քաղաքական փիլիսոփայությունը և որոշել գրականության նպատակն ու խնդիրը քեմալական Թուրքիայում։

30-ական թվականների վերջերին Թուրքիայի գրականու-

թյան մեջ ուժեղացավ ռեակցիոն հոսանքը, որը պաշտպանում էր «մաքուր արվեստը»։ Երևան եկան նեղ, սուբյեկտիվ ապրումներին նվիրված ստեղծագործություններ (կին գրող Հալիդե Նուսրեթի վեպերը, կին գրող Սանիհա Աչվերցիի «Ահա այն՝ սերը» վեպը և այլն)։

Վերահաս երկրորդ համաշխարհային պատերազմի կապակցությամբ առաջացած խուճապը, որով համակվել էր բուրժուա-կալվածատիրական ինտելիգենցիան, բնական է, չէր կարող չարտացոլվել գրականության մեջ։ Նշված ժամանակաշրջանում գրականության մեջ տիրապետում էին պեսիմիզմի ոգին, մահվանից վախենալը, միայնության, վշտի թեմաները։

Սպասվող իրադարձությունների առջև բանաստեղծներն ու գրողները փրկություն էին որոնում իրականությունից փախուստ տալու մեջ։ Բնությունը և «մաքուր արվեստը», մարդու ներքնաշխարհը, մահվան ու անդրշիրիմյան կյանքի մասին սևեռուն մտքերը փոխարինել էին ռեալ իրականությանը։ Նրանք բնության մեջ էին որոնում ապաստան, կյանքի տագնապների մոռացում, վերահաս փորձանքներից հեռացում։ Դեպի կյանքը պասսիվ հայեցողական վերաբերմունքով, ներքաշված ինքնամփոփությամբ, ինդիվիդուալիզմի քարոզով էին ներծծված լսեռացող բանաստեղծների ստեղծագործությունները։ Նրանք իդեալականացնում էին իրենց անցումը դեպի երազանք, միստիկա, հոգեբանական թավալումները։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին երկրի գրական կյանքը գրեթե լիովին ընդարմացավ։ Թղթի պակասը և որպես դրա հետևանք՝ գրքի թանկացումը, ընթերցող հասարակության գնողունակության խիստ նվազումը հարկադրեցին մինիմումի հասցնել գրքերի հրատարակումը։ Փակվեց գրական-գեղարվեստական հանդեսների մեծ մասը։ Իսկ քաղաքական հանդեսների ու թերթերի էջերում տպվում էին միայն բանաստեղծություններ, բայց որում՝ գլխավորապես պատերազմի մասին։ Պանթյուրքական հանդեսներին աշխատակցող բանաստեղծները գովերգում էին



պատերազմը։ Մյուսները լռությամբ էին մատնում այդ հարցը կամ պատերազմի դեմ հանդես էին գալիս պացիֆիստական դիրքերից։

Հիտլերյան Գերմանիայի ջախջախումից և բալկանյան երկրներում ժողովրդական դեմոկրատիայի պետությունների ստեղծվելուց հետո Թուրքիայում սկսվեց դեմոկրատական շարժման վերելքը, որը նպաստեց գրականության առողջացմանը։ Սկսեցին լույս տեսնել առաջադիմական հանդեսներ՝ «Գյունը» («Օրը») և «Մարկո-փաշան», որոնք դրական դեր խաղացին թուրքական գրականության առաջադիմական հոսանքի հետագա զարգացման գործում։ Այդ հրատարակությունների շուրջը խմբվեցին Սաբահադդին Ալին, Օրխան Քեմալը, Օրխան Վելին, Սուադ Թաշերը, Ռիֆաթ Իլգազը և ուրիշ գրողներ ու բանաստեղծներ։

Այդ հրատարակությունների մասնակիցներից երեքը՝ Օրխան Վելին, Օքթայ Ռիֆաթը և Մելիհ Ջևդեթ Անդայը թուրքական պոեզիայի նորացման հեղինակներ էին։ Դրանից հետո գրականությունը դառնում է քաղաքական պայքարի կարևորագույն միջոցներից մեկը։ Գրականության մեջ իշխող տեղ է գրավում նոր հերոսը՝ աշխատավոր մարդը։

Պոեզիայի մեջ պահանջ է առաջանում հրաժարվել բոլոր «գեղեցկություններից», չափի երաժշտականությունից, ծավալուն փոխաբերություններից, բարդ պատկերավորությունից, նկարագրայնությունից, ռիթմից՝ որպես պարտադիր բաղադրիչի։ Մերժվում է հատուկ «բանաստեղծական լեզուն», կիրառվում է ներքնախավերի լեզուն։

Գեղարվեստական արձակում ժամանակակից գյուղի թեման դարձավ տիրապետող։ «Գյուղական գրականության» զարգացման գործում շատ կարևոր դեր խաղացին 1940 թվականին ստեղծված գյուղական ինստիտուտները։ Դրանցում սովորում էին գյուղացիների զավակները, ավարտելուց հետո նրանք պետք է վերադառնային իրենց գյուղը և աշխատեին իբրև ուսուցիչներ ու բժիշկներ։ Ուսուցումը ինստիտուտներում յուրատեսակ էր. տեսական դասընթացը զուգակցվում էր դաշտային աշխատանքների հետ, որի նպատակն

էր դաստիարակել դիտողականություն, նախաձեռնություն, ներարկել գյուղական ծանր պայմաններում աշխատելու ընդունակություն։ Ուսման գործում շեշտը դրվում էր գրականության, այդ թվում՝ եվրոպական գրականության ուսումնասիրության վրա։ Առանձնակի ուշադրություն էր դարձվում ֆոլկլորին և ժողովրդական երաժշտությանը։ Ուսանողներին սովորեցնում էին թուրքերեն գրել պարզ՝ այնպես, ինչպես իրենք զգում և խոսում են։

1945 թվականին գյուղական ինստիտուտները լույս էին ընծայում գրական հանդես, որում հրապարակվում էին գյուղական կյանքին նվիրված ստեղծագործություններ։

Գյուղական ինստիտուտի շրջանավարտներից մեկը՝ Մահմուդ Մաքալը, 1948 թվականին հրատարակեց մի ռեպորտաժ՝ «Մեր գյուղը», որով էլ սկսվեց թուրքական գյուղի մասին գրքերի մատենաշարը։ Շուտով երևան եկան գյուղական ինստիտուտների ուրիշ շրջանավարտների՝ Ֆաքիր Բայկուրթի, Թալիփ Ապայդինի, Մեհմեդ Բաշարանի և ուրիշների ստեղծագործությունները. Նրանց գրական աշխատանքները սկսեցին որոշել ժամանակակից թուրքական արձակի, մասնավորապես վեպի բնույթն ու մակարդակը։

Մի խումբ նշանավոր գրողներ՝ Յաշար Քեմալը, Օրհան Քեմալը, Թահիր Քեմալը, Սահիմ Կոչագյոզը, Իլհան Թարուսը, Օրհան Խանչերլիօղլուն, Խալդուն Թանները գրեցին պատմվածքներ ու վեպեր գյուղի մասին, քաղաքի ու գյուղի կապի մասին, քաղաքի փոքր մարդու մասին։ Նրանց ստեղծագործությունների բնորոշ կողմն են՝ ռեալիստականությունը, օբյեկտիվությունը, անձնական կենսափորձը, բարձր գեղարվեստականությունը։

Մեր օրերում թուրքական գրականությունը, փոքր բացառությամբ, զբաղվում է երկրի կենսական պրոբլեմներով։ Գյուղի աղքատացումն ու քայքայումը, քաղաքում գործազրկության աճը, կրոնական ֆանատիզմը, ժողովրդի անգրագիտությունը գրողներն ընկալում են որպես ամբողջ ազգի ապրած սոցիալական դժբախտություն։

Ռեալիստական գրականության համար մղած պայքարում



թուրք գրողները հանդիպում են զգալի դժվարությունների։ Նրանց մեղադրում են «ձախության», «սադրանքի» մեջ, նրանց վերագրում են այն, թե իբր ընդունում են միայն այն երկասիրությունները, որտեղ նկարագրվում են լոկ բացասական երևույթներ։ Նրանց խորհուրդ են տալիս չխառնվել քաղաքականությանը և զբաղվել «մաքուր» արվեստով։

Ռեալիստական գրականության կողքին Թուրքիայում գոյություն ունի մասսայական սենտիմենտալ գրականություն, ուր նկարագրվում են ընտանեկան դրամաներ, կործանված սեր, լուսնազարդ գիշերով միայնակ երազելը և այլն։ Այդ գործերը հրատարակվում են մեծ տպաքանակով և էկրանացվում (Քերիմ Նադիրի, Մահմուդ Կարակուրտի, Մուազեզ Թահսինի, Էթհեմ Իզզեթի և ուրիշների վեպերը)։ Հրատարակվում են հանդեսներ, որոնցում գլխավոր թեման պոռնոգրաֆիան է։ «Պերի», «Սես» («Ձայն»), «Սինյալ» («Ազդանշան»), «Հայաթ» («Կյանք») և ուրիշ հանդեսներում բացված են հատուկ բաժինները՝ «Կրքի գիշերներ», «Երբ մարում են մոմերը», «Հեշտասիրության փոթորիկը», «Վճարովի սիրահարները», «Սիրո ֆաբրիկանտը» և այլն։ Այդ հանդեսները լույս են տեսնում հսկայական տպաքանակներով։

Բայց այդ կարգի գրականությունը, չնայած լայնորեն տարածված լինելուն, որևէ նշանակալի դեր չի խաղում երկրի հասարակական կյանքում։ Թուրքիայում ոչ ոք լրջորեն չի խոսում նրա մասին։

Այսօրվա թուրքական գրականության դեմքը որոշողը այն գրողներն են, որոնց մասին համառոտ տեղեկություններ են տրվում ստորև։

Ազիզ Նեսին (1915 թ. ծնված) աչքի ընկնող հումորիստ-երգիծաբան, դրամատուրգ, հրապարակախոս է։ Ավարտել է ռազմա-տեխնիկական ուսումնարանը, ծառայել է բանակում որպես սպա, թողել է պաշտոնը, եղել է գրախանութի տեր, աշխատել է որպես լուսանկարիչ։

1946 թվականին հայտնի գրող Սաբահաթթին Ալիի հետ միասին հրատարակում էր «Մարկո-փաշա» երգիծական

հանդեսը, որտեղ տպագրեց իր առաջին ֆելիետոններն ու պատմվածքները։ 1949 թվականին հրատարակում էր «Նոյի տապանը» երգիծական հանդեսը, 1960 թվականին՝ «Զյուբլուկ» հանդեսը։ Այդ հրատարակություններում նա հանդես էր գալիս կեղծանվան տակ։

Ազիզ Նեսինը գրականության մեջ անուն վաստակեց միայն 1956 թվականին, երբ Իտալիայում անցկացված հումորիստ-գրողների միջազգային կոնկուրսում ստացավ առաջին մրցանակը։ 1956-ից մինչև 1964 թվականը Ազիզ Նեսինը հրատարակել է պատմվածքների 35 ժողովածու և չորս վեպ։ Նա ժամանակակից Թուրքիայի ամենաշատ ընթերցվող գրողն է։ Նրա ստեղծագործությունները լայնորեն հայտնի են արտասահմանում։

**Ակա Գյունդյուզը** (Ավնի) բազմաթիվ վեպերի, պատմվածքների, բանաստեղծությունների հեղինակ է։ Ծնվել է 1885 թվականին։ Գրական ասպարեզ է մտել լիրիկական բանաստեղծություններով։ 1908 թվականի հեղափոխությունից հետո սկսել է հետաքրքրվել հասարակական թեմատիկայով, պայքարել գրական լեզուն օտար բառերից մաքրելու համար (1912 թվականին հրատարակված «Ջախջախում» բանաստեղծությունների ժողովածուն և 1913 թվականին՝ «Լուսաստղը» ժողովածուն և այլն)։ Այդ գործերում պատմվում է հիմնականում անատոլիական գյուղերի և բալկանյան ու տրիպոլիտանյան կռիվներին թուրք զինվորների մասնակցության մասին։ Ազգային-ազատագրական պատերազմին Ակա Գյունդյուզը նվիրել է «Դիկմենի աստղը» (1928) և «Միջուրաս» (1930) վեպերը։ Գրողը մեծ տեղ է հատկացրել թուրքական հասարակության բարքերի նկարագրությանը։ Նրան առանձնապես հուզել է կնոջ ճակատագիրը («Այս հողի աղջիկը»՝ 1928 թ., «Երկու սվինի միջև»՝ 1929 թ. վեպերը և այլն)։ Երիտասարդության դաստիարակության պրոբլեմը առաջ է քաշվում «Երեք ընկերուհի» վեպում (1941)։

**Անդայ Մելիխ Ջևդեթ** (1915 թ. ծնված), բանաստեղծ է, թարգմանիչ, քննադատ, հեղինակներից մեկը «Ղարիբ» գրական մանիֆեստի, որը կարևոր դեր խաղաց թուրք առաջավոր



պոեզիայի զարգացման գործում։ Տարրական կրթությունն ստացել է Ստամբուլում, դրանից հետո ավարտել է «Ղալաթի լիցեյը»։ Սովորել է Անկարայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում և միաժամանակ աշխատել երկաթուղիների վարչությունում։ 1938 թվականին մեկնել է Բելգիա՝ սոցիոլոգիա ուսումնասիրելու համար, բայց շուտով, դրամական կարիքի մեջ ընկնելու պատճառով, հարկադրված վերադարձել է հայրենիք։ 1939—1940 թվականներին ծառայել է բանակում, արձակվել է պահեստ՝ սպայի աստիճանով։ Մինչև 1951 թվականը աշխատել է լուսավորության մինիստրության սիստեմում (Անկարայում), ապա փոխադրվել է Ստամբուլ, զբաղվել ժուռնալիստիկայով։

Առաջին բանաստեղծությունները Անդայը գրել է դեռ լիցեյում եղած ժամանակ. դրանք հրապարակվել են ուսանողական «Սեսիմիզ» («Մեր ձայնը») հանդեսում, որը հրատարակում էին մի խումբ երիտասարդ բանաստեղծներ՝ Անդայի, Օրխան Վելիի և Օքթայ Ռիֆաթի գլխավորությամբ։

Լույս է տեսել Անդայի բանաստեղծությունների հինգ ժողովածու՝ «Տարօրինակը» (1941), «Հանգիստը կորցրած ծառը» (1946), «Հեռագրատուն» (1951), «Կողք-կողքի» (1956), «Ողջունված Ոդիսևսը» (1962)։

Անդայը տարվեց նաև դրամատուրգիայով ու թատրոնով։ Որպես սիրող դերասան, մասնակցում էր Անկարայի ժողովրդական տան ինքնագործ թատրոնի ներկայացումներին, գրում ոչ մեծ պիեսներ այդ կոլեկտիվի համար։ Օքթայ Ռիֆաթի հետ միասին գրեց «Խանդոտները», որը բեմադրվեց Անկարայի քաղաքային թատրոնի բեմում։

Անդայը թուրքերենի է թարգմանում ռուս, ֆրանսիական, անգլիական և ամերիկյան գրողների ստեղծագործությունները։ Մասնավորապես նա թարգմանել է Ն. Վ. Գոգոլի «Միրգորոդը» և «Ամուսնությունը»։ Անդայը «Եզիթեփե», «Վարլիկ» («Կեցություն») և «Ֆորում» հանդեսներում հոդվածներ է գրում լեզվի, գրականության և արվեստի հարցերի շուրջը։

**Ահմեդ Հաշիմը** (1885—1933) սիմվոլիզմի հիմնադիրն է

թուրքական պոեզիայում։ Բանաստեղծություններ սկսեց գրել, երբ 1908 թվականին մտավ «Ֆեջրի աթի» գրական խմբակի մեջ։ Օգտագործում էր բացառապես պարսկական արուզ բանաստեղծական չափը։ Իր ստեղծագործության մեջ («Լճի վրա անցկացրած ժամերը»՝ 1920 թ., «Գավաթը»՝ 1926 թ., ժողովածուներ) Ահմեդ Հաշիմը պաշտպանում էր «արվեստն արվեստի համար» սկզբունքը։ Այդ բանաստեղծի համար բնորոշ է իրական կյանքից, հասարակական թեմատիկայից կատարյալ խորթացած լինելը։ Նրա համար հիմնականը սեփական տպավորություններն են, զգացումները և ֆանտազիան։ Բանաստեղծի գրական հավատամքը հետևյալն է. «Բանաստեղծությունները պետք է հասկանալի լինեն ոչ բոլորին և պարունակեն մի քանի նշանակություն»։ Ահմեդ Հաշիմի լեզուն, որ առատ է արաբերեն ու պարսկերեն բառերով, հնարովի, բարդ համեմատություններով, դժվարհասկանալի է։ Միևնույն ժամանակ, նրա արձակ գործերը գրված են պարզ, կենդանի լեզվով։ Հիմնականում դրանք փոքրիկ ակնարկներ են («Մեր կարծիքով», «Ճանապարհորդական հիշատակարաններ Ֆրանկֆուրտից» և այլն)։

**Բայկուրտ Ֆաքիր** (իսկական անունը՝ Թահիր) գրող է ու գրականագետ։ Ծնվել է 1929 թվականին, միջակ գյուղացու ընտանիքում։ Տարրական դպրոցը, ապա գյուղական ինստիտուտն ավարտելուց հետո հինգ տարի աշխատել է տարբեր գյուղերում որպես ուսուցիչ։ 1955 թվականին ավարտել է մանկավարժական ինստիտուտը, որից հետո Անատոլիայի դպրոցներում դասավանդել թուրքերեն լեզու։

Բայկուրտը սկսեց գրականությամբ զբաղվել դեռ ուսանող ժամանակ։ Նրա բանաստեղծությունների առաջին գիրքը՝ «Պեպինոտը» վերնագրով, լույս տեսավ 1955 թվականին։ Բայկուրտի անունը լայնորեն տարածեց նրա «Օձերի վրեժը» առաջին վեպը, որը Թուրքիայում համարվեց 1958 թվականի լավագույն արձակ գործը։ Իբր թե այդ գրքում պարունակված «կոմունիստական պրոպագանդայի» համար Բայկուրտը հեռացվեց աշխատանքից։ Վերականգնեցվեց 1960 թվականի մայիսի 27-ի իրադարձությունից հետո։



Վեպի երկրորդ մասի հետ միասին, որ կրում է «Իրազջիի վարքը» անունը, Բայկուրտի այդ երկը նշանավոր երևույթ է արդի թուրքական արձակի մեջ որպես քննադատական ռեալիզմի օրինակ և ժողովրդական կյանքի վառ մարմնացում։ Իր հաջորդ վեպում («Տասներորդ գյուղը», 1961 թ.), Բայկուրտը բարձրանում է մինչև հասարակական չարիքի դեմ պայքարի համար կոչ անելու աստիճանը։

Բայկուրտը գրում է գյուղական ակնարկներ, ֆոլկլորի մասին հետազոտություններ և կարճ պատմվածքներ. Նրա 12 պատմվածք մտնում են 1962 թվականին լույս տեսած «Ստամոքսի ցավը» ժողովածուի մեջ։

Թուրքական գրաքննադատությունը Բայկուրտին համարում է արդի առավել տաղանդավոր գրողներից մեկը։

**Բաշկուտ Ջևաթ Ֆեհմին** (1904 թ. ծնված) դրամատուրգ է և հրապարակախոս։ «Մեծ քաղաքը», «Փոքրիկ քաղաքը», «Վերարթնություն» «Հաջի-կապիտան», «Ընդմիջում», «Ես քվեարկում եմ քո օգտին», «Կլեոպատրայի գերեզմանը», «Կողոպուտ», «Ամերիկացին Հարպուտում» և ուրիշ պիեսներում Բաշկուտը ռեալիստորեն է պատկերում ժամանակակից Թուրքիայի կյանքը, դնում է բարոյական պրոբլեմներ, խարազանում կաշառակերությունը, Ամերիկայի առջև խոնարհվելը։

Բաշկուտի պիեսները բեմադրվում են Թուրքիայի շատ թատրոններում։ 1964 թվականին Բաքվի ադրբեջանական դրամատիկ թատրոնը բեմադրեց նրա «Վերարթնություն» պիեսը։

**Բեհչեթ Քեմալ Չագլարը** (1908 թվականի ծնված) բանաստեղծ է։ Պաշտոնապես ճանաչվել է «հանրապետության և հեղափոխության լավագույն բանաստեղծ»։ Նրա առաջին բանաստեղծությունները երևան եկան ազգային-ազատագրական պատերազմի ժամանակաշրջանում. հետագայում դրանք մտան «Այստեղ մի սիրտ է բաբախում» ժողովածուի մեջ (1932)։ Բեհչեթ Քեմալի գրչին են պատկանում նաև «Աթիլլա» պիեսը, որտեղ գովերգում է Թուրքիայի անցյալը, «Հովվի դաստանը» և «Կաղ Թիմուրը» պոեմները, որոնք հա-

գեցված են շովինիզմի ոգով։ «Թուրք դիլի» («Թուրք լեզու») և «Վարլըկ» հանդեսներում Բեհչեթ Քեմալը հանդես է գալիս բանաստեղծության մեջ տրադիցիոն ձևերի օգտին, պաշտպանում թուրքական բուրժուական հասարակության հիմքերը։

**Դաղլարջա Ֆազիլ Հյուսնյուն** *(1919 թ. ծնված)* բանաստեղծ է։ Ավարտել է ռազմական ուսումնարանը։ Ծառայել է բանակում որպես սպա։ Զբաղվել է ժուռնալիստիկայով։ Բանաստեղծությունների առաջին ժողովածուն կոչվում է «Երկնքում նախորոշված աշխարհը» (1935)։ Այնուհետ և հաջորդ ժողովածուներում՝ «Մանուկն ու աստվածը» (1940), «Պոեմ երեք զոհվածների մասին» (1949), «Մայր հողը» (1950), «Սվազից բերած մրջյունը» (1951), «Դեստան հաղթանակի մասին» (1953), «Բզեզիկ» (1957), Դաղլարջան երգում է իր հոգեկան ապրումները, մելամաղձոտությունը և պեսիմիզմը։ Նրա լիրիկական բանաստեղծությունները ձևով գեղեցիկ են և լեզվական առումով՝ հղկված, երիտասարդության մեջ տարածված։

**Կարայ Ռեֆիկ Հալիթը** *(1888 թվականի ծնված)* գրող է։ «Եզդիի աղջիկը», «Մի կում ջուր», «Երեք սերունդ՝ երեք կյանք», «Երկրի տակ աշխարհ կա», «Նիլգյուն», «2000 թվականի սիրեցյալը», «Կուսանոց», «Այսօրվա պալատականները» վեպերում նա նկարագրում է երկրի քաղաքական կյանքի պատկերը, դնում բարոյականության պրոբլեմները, դրանք լուծելով բուրժուական գաղափարախոսության պլանով։ Ռեֆիկ Հալիթի առաջին ժողովածուն՝ «Պատմվածք երկրի մասին», որ նվիրված է Անատոլիայի գյուղացիությանը, այդպես էլ մնաց նրա լավագույն ստեղծագործությունը։

**Քեմալ Թահիրը** *(1910 թվականի ծնված)* աչքի ընկնող թուրք վիպագիր է։ Ծնվել է տնայնագործի ընտանիքում։ Սովորել է լիցեյում։ Աշխատել է որպես հաշվապահի օգնական, փաստաբանի քարտուղար, զբաղվել է ժուռնալիստիկայով։

Իր գրական գործունեության սկզբին Քեմալ Թահիրը հրապարակվեց պոեզիայով։ Նրա բանաստեղծություններին բնորոշ էին մարտական հարձակողական ոգին, հրապարակայնությունն ու քաղաքական սրությունը։



Իր քաղաքական համոզմունքների համար Քեմալ Թահիրը երկար ժամանակ նստել է բանտում. Նրա բազմաթիվ վեպերը չէին հրատարակվում։ Դրանով է բացատրվում, որ հինգ տարվա ընթացքում լույս տեսան գրողի մոտ տասը խոշոր ստեղծագործությունները։ «Խուլ հովիտը», «Թխագորշ ծուխը», «Գյուղական աստվածները», «Անձրևները փակեցին ճանապարհը», «Յոթ չինարիների արոտավայրը» վեպերում Քեմալ Թահիրը պատկերում է Անատոլիայի իրականությունը երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում։ «Գերված քաղաքի մարդիկ», «Խաղաղ թաղամաս», «Խաղաղ քաղաք», «Խաղաղ երկիր», «Գայլի օրենք», «Մերկ մարդիկ», «Հոգնած մարտիկը» վեպերում գրողը տալիս է Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքի լայն պատկերը 1908-ից մինչև 1940 թվականները։

Քեմալ Թահիրն իր հերոսների կյանքը նկարագրում է քաղաքական իրադարձությունների ֆոնի վրա, ձգտում է հասկանալ մարդկանց արարքների պատճառները, ճշմարտացիորեն պատկերել ներքնախավերի կյանքը։ Նրա արվեստին հատուկ է սոցիալական սուր նպատակասլացությունը։

Քեմալ Թահիրի ստեղծագործությունները հայտնի են արտասահմանում։

**Մահմուդ Եսարին** *(1895 թվականին ծնված)* վիպասան է և ժուռնալիստ։ Նրա բազմաթիվ երկերի մեջ առավել նշանավորը «Մի օրվա ճանճեր» (1936) վեպն է, որը սուր երգիծանք է պարունակում Ստամբուլի հասարակության կոսմոպոլիտական բարքերի հասցեին, ցույց է տալիս թուրք երիտասարդության վրա արևմուտքի ռեակցիոն կուլտուրայի կործանարար ազդեցությունը։

**Մահմուդ Մաքալը** *(1925 թվականին ծնված)* ակնարկագիր և հրապարակախոս է։ Ավարտել է գյուղական ինստիտուտ։ Գրական ասպարեզ է իջել «Մեր գյուղը» (1948) աղմուկ հանած ռեպորտաժով, որի մեջ ճշմարտացիորեն ցույց են տրված անատոլիական գյուղի կյանքի սարսափելի պայմանները։ Մահմուդ Մաքալը նշանակալի տեղ է գրավում ժամանակակից թուրքական գրականության մեջ իբրև մի հե-

վիպակ, որը գյուղի մասին գրում է ըստ իր անմիջական դիտումների ու տպավորությունների։ Թուրքական գրաքննադատությունը նրան համարում է «գյուղի ժողովուրդ շարժման» ձախաձեռնող, մի երևույթ, որ նկատվեց թուրք գրողների մեջ հետպատերազմյան տարիներին։

**Նազիմ Հիքմեթ Ռանը** *(1902—1963) խոշորագույն կոմունիստ-բանաստեղծ է, գրող և դրամատուրգ, թուրքական հեղափոխական պոեզիայի հիմնադիրը։ Նա աչքի ընկնող հասարակական գործիչ էր, խաղաղության համաշխարհային խորհրդի անդամ, խաղաղության միջազգային մրցանակի լաուրեատ։*

*Ծնվել է արիստոկրատական ընտանիքում։ Նախնական կրթությունն ստացել է Ստամբուլի լիցեյում։ Ընդունվել է ռազմա-ծովային ուսումնարան, բայց վտարվել է նավաստիների հեղափոխական շարժմանը մասնակցելու համար։ 1920 թվականին հրապարակվեց «Կապտավուն ավազակների դերին» բանաստեղծությունը, ուղղված Թուրքիայի օկուպացման դեմ, որի համար հալածանքների ենթարկվեց անգլիական օկուպացիոն իշխանությունների և սուլթանական կառավարության կողմից։ 1921 թվականին ժամանեց Սովետական Միություն, սովորեց արևելքի աշխատավորների կոմունիստական համալսարանում։*

*1924 թվականին վերադարձավ Թուրքիա, մտավ Թուրքիայի կոմունիստական կուսակցության մեջ, աշխատակցեց հեղափոխական թերթերին ու հանդեսներին։ Հալածանքների պատճառով 1925 թվականին թողեց հայրենիքը և նորից եկավ Սովետական Միություն։ Թուրքական դատարանը հեռակա կարգով նրան դատապարտեց 15 տարվա բանտարկության։*

*1928 թվականին Բաքվում լույս տեսավ Նազիմ Հիքմեթի բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Արև խմողների երգը» վերնագրով։ Այդ տարիներին բանաստեղծին գրավում են քաջարի, ներքին միասնություն ունեցող, մեծ կամքի տեր մարդկանց կերպարները։ Հանդիսավոր, հռետորական ձևով գրած իր բանաստեղծություններում նա հաճախ է դիմում հիպերբոլիկ կերպարների, արտասովոր համեմատությունների, ծավալուն փոխաբերությունների։ Հետագայում երևան եկան կոնկրետ մարդկային բնավորությունների ուրվանկարներ, կենցաղային պատկերներ, սկսեցին հնչել անկեղծ, լիրիկական նոտաներ։*



*1928 թվականին Նազիմ Հիքմեթը վերադարձավ Թուրքիա։ Նա այնտեղ աշխատում էր թերթերում, զբաղվում կինոֆիլմերի կինոօրինակներ հանելով, թարգմանություններ էր կատարում ռուսերենից (Լ. Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» վեպի առաջին մասը, Մ. Զոշչենկոյի պատմվածքները) և ֆրանսերենից։*

*1928 թվականին Նազիմ Հիքմեթն սկսեց աշխատակցել Սեբահեթ ամուսինների կողմից հրատարակվող «Ռեսիմլի այ» («Պատկերազարդ ամսագիր») հանդեսին, որն այն ժամանակ թուրք առաջադիմական գրականության կենտրոնն էր։ Այստեղ նա հանդես եկավ գրականության ու արվեստի հարցերին նվիրված մի շարք հոդվածներով, որոնցում դրեց հասարակական կյանքում գրողի դերի, դասակարգային պայքարի մեջ գրականության տեղի պրոբլեմները։*

*«835 տող» (1929), «Գնացողը՝ 3» (1930), «1+1=1» (1930) և «Ձայնը կորցրած քաղաքը» (1931) բանաստեղծությունների ժողովածուներում բանաստեղծը գրել է թուրք ժողովրդի ծանր վիճակի մասին, պայքարի է կոչել հանուն լավ կյանքի և գովերգել է հեղափոխությունը։ «Ջիոկոնդան և Սի-Յա-ու»-ն պոեմում (1929) և «Ինչո՞ւ էր Բեներջին ուզում ինքնասպանություն գործել» չափածո վեպում (1932) Նազիմ Հիքմեթը հանդես է գալիս Ասիայում և Աֆրիկայում իմպերիալիստների գաղութային քաղաքականության դեմ։*

*«Գանգը» (1932), «Հանգուցյալի տունը» (1932), «Բոլորից մոռացվածը» (1935) պիեսներում Նազիմ Հիքմեթը ամենայն սրությամբ դնում էր կապիտալիստական պայմաններում անձի պրոբլեմները, խարազանում մարդուն այլանդակող հասարակարգը։*

*«Գիշերը եկած հեռագիրը» բանաստեղծությունների ժողովածուի (1932) համար, որտեղ բանաստեղծը թուրք կոմունիստներին կոչ էր անում կայուն լինել դեմոկրատիայի*

համար մղած պայքարում, նա դատապարտվեց հինգ տարվա՝ բանտարկության, բայց մեկ տարի հետո ազատվեց ներման տակ ընկնելու պատճառով։ Հետագայում նրա ստեղծագործությունների գրեթե յուրաքանչյուր հրատարակությունից հետո բանաստեղծին բանտ էին նստեցնում։ «Դիմապատկերներ» բանաստեղծությունների ժողովածուում (1935), «Նամակներ Տարանտա-Բաբուին» պոեմում (1935) և «Գերմանական ֆաշիզմը և ռասայական տեսությունը» հրապարակախոսական աշխատությունում (1936) Նազիմ Հիքմեթը մերկացրել է գերմանական ֆաշիզմը և նրա թուրքական երկրպագուներին։ Հեղինակի մյուս հրապարակախոսական աշխատությունը՝ «Սովետական դեմոկրատիան» (1963), նվիրված էր ռեակցիոն հարձակումներից ՍՍՀՄ սահմանադրությունը պաշտպանելուն։ 1936 թվականին լույս է տեսնում Նազիմ Հիքմեթի Թուրքիայում հրատարակված վերջին գիրքը՝ «Պոեմ շեյխ Բեդրեդդին Սիմավիի մասին» և որպես դրա հավելված՝ «Ազգային հպարտությունը», որը ըստ էության իրենից ներկայացնում է Վ.Ի. Լենինի «Վելիկոռուսների ազգային հպարտության մասին» հայտնի աշխատության թարգմանությունը։

Նազիմ Հիքմեթը թուրքական բանտերում նստել է ընդհանուր առմամբ 17 տարի։ Այնտեղ նա ստեղծել է վիթխարի էպոպեա՝ «Մարդկային համապատկերը», որը XX դարի բանաստեղծական պատմությունն է, «Նամակներ բանտից» բանաստեղծությունների շարքը, «Լեգենդ սիրո մասին», «Իոսիֆ Գեղեցիկը» պիեսները։ 1950 թվականին, համաշխարհային հասարակական կարծիքի ներգործության տակ, թուրքական կառավարությունը հարկադրված եղավ ազատել Նազիմ Հիքմեթին։ Հաջորդ տարին նա եկավ ՍՍՀՄ, որտեղ գրեց «Պատմվածքներ Թուրքիայի մասին» (1951), «Տարօրինակ մարդը» (1955), «Բայց եղե՞լ է արդյոք Իվան Իվանովիչ» (1956), «Երկու համառ մարդ» (Վ. Տուլյակովայի հետ միասին, 1960), «Դամոկլյան սուր» (1960), «Տարտյուֆ-59» (1960), «Կայարանը» (1961), «Կովը» (1962) պիեսները, ինչպես և շատ բանաստեղծություններ ու պոեմներ։ Սովետական Միությունում նա գրեց կինոսցենարներ, քննադատական հոդվածներ և տեսական աշխատություններ դրամատուրգիայի ու պոեզիայի մասին։



**Օքթայ Աքբալը** (1922 թվականի ծնված) գրող և հրապարակախոս է։ Կրթությունն է ստացել Ստամբուլի լիցեյում, ապա սովորել է Ֆրանսիայում։ Վերադառնալուց հետո որոշ ժամանակ հաճախել է Ստամբուլի համալսարանը։ Զբաղվել է ժուռնալիստիկայով, լուսավորության մինիստրությունում աշխատել է որպես թարգմանիչ։

Օքթայ Աքբալը գրել սկսել է 15 տարեկանից, առաջին պատմվածքները հրապարակվել են թերթերում ու հանդեսներում։ 1946 թվականին նա լույս ընծայեց «Սկզբում փչացան հացերը» պատմվածքների ժողովածուն, իսկ 1949 թվականին՝ «Անսեր մարդիկ» ժողովածուն։ Գրողի այդ առաջին փորձերը վերաբերում են պատմվածքների այն կարգին, որոնք այսօր հայտնի են «անսյուժե» անունով։ Դրանք կառուցված են հայտնի եռանկյան սկզբունքով՝ տրտմություն-միայնություն-անիմաստ կյանք։ Գրողը գտնվում էր, ասենք հիմա էլ գտնվում է, Սարտրի և Քամյուի ուժեղ ազդեցության տակ։

Հաջորդ ստեղծագործություններում՝ «Բյուզանդական գանձ» (1953), «Ամպի դույլը» (1954), «Նրանցից երկուսը» (1955) պատմվածքների ժողովածուներում և «Պանդուխտների փողոցը» (1954) և «Մենք մարդ ենք՝ ահա մեր մեղքը» (1957) վեպերում Օքթայ Աքբալը հանդես է գալիս հանուն մարդկային համերաշխության։ Նա հավատում է, որ մարդիկ փրկություն կգտնեն միայն միմյանց հետ շփվելով։

Քննադատությունը նշում է Օքթայ Աքբալի ունակությունը՝ թափանցելու իր հերոսների հոգեկան աշխարհը, նրա ստեղծագործություններում նկատվող հոգեկան նուրբ վերլուծությունը և դրա հետ միասին նրան հատուկ պեսիմիզմը, սենտիմենտալ ռոմանտիզմը և այն համոզմունքը, թե մարդն անզոր է բնության հանդեպ։

Նրա երկերում եղած տրտմությունն ու միայնությունը մի բողոք է շրջապատող հասարակության դեմ։

Օքթայ Աքբալը նաև զբաղվում է գեղարվեստական թարգմանությամբ և գրականագիտությամբ։ Ուշագրության

արժանի է, օրինակ, նրա հոդվածը Չեխովի մասին՝ տպագրըված «Թուրք դիլի» հանդեսում (1953 թ., սեպտեմբերի 1)։

**Օքթայ Ռիֆաթը** (1914 թվականի ծնված) բանաստեղծ է։ Նրա հայրը, Սամիխ Ռիֆաթը, նույնպես բանաստեղծ էր։ Օքթայ Ռիֆաթը նախնական կրթությունն ստացել է Սամսունում։ Ապա ավարտել Անկարայի լիցեյը, որտեղ մտերմության մեջ էր բանաստեղծներ Օրխան Վելիի և Մելիխ Ջևդեթ Անդայի հետ։ Նրանք երեքով հրատարակում էին մի գրական հանդես, որտեղ հրապարակվեցին Օքթայ Ռիֆաթի առաջին բանաստեղծությունները։ Լիցեյից հետո Օքթայ Ռիֆաթը սովորեց Անկարայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, ապա մեկնեց Փարիզ՝ սոցիալական գիտություններ ուսումնասիրելու։ Վերադառնալուց հետո աշխատեց մամուլի, ռադիոյի և տուրիզմի վարչությունում։ Ներկայումս զբաղվում է փաստաբանությամբ։

Օքթայ Ռիֆաթը գրականության մեջ առաջին ելույթն ունեցավ (Օրխան Վելիի և Անդայի հետ միասին) «Տարօրինակը» բանաստեղծությունների ժողովածուով (1941)։ Նա նաև «Ղարիբ» գրական մանիֆեստի հեղինակներից մեկն է։

Բանաստեղծի ստեղծագործությունները, որոնք լույս են տեսել «Բանաստեղծություններ կյանքի և մահու, սիրո և թափառաշրջիկության մասին» (1945), «Զոհեր գեղեցկությանը» (1945), «Ներքև, վերև» (1952), «Ագռավն ու աղվեսը» (1954), «Ցցունքով փողոցը» (1956), «Աշուղի աստիճանը» (1958) ժողովածուներում, միանման չեն ո՛չ բնույթով, ո՛չ էլ ձևով ու ոճով։ Սկզբում դրանք լիրիկական ոտանավորներ էին սիրո մասին, երբեմն գրված ժողովրդական երգերի ոճով. հետո նրա պոեզիայում սկսեց գերակշռել քաղաքական սատիրան։

1956 թվականին Օքթայ Ռիֆաթը հանդես եկավ «Ցցունքով փողոցը» գրքով, որում պաշտպանում էր բանաստեղծության ապատրամաբանականության, ստեղծագործության պրոցեսում ենթագիտակցության վճռական դերի մասին թեզը։ Այդ ժողովածուի բանաստեղծությունները բնորոշվում են դիտավորյալ մանվածապատությամբ, լեզվի բարդությամբ։

**Օրխան Վելին** (1914—1950) դեմոկրատական ուղղության բանաստեղծ ու ժուռնալիստ է և թուրքական պոեզիայի վերափոխողներից մեկը։ 40-ական թվականներին լույս տեսան նրա բանաստեղծությունների ժողովածուները՝ «Տարօրինակը» վերնագրով (Օքթայ Ռիֆաթի և Մելիխ Ջևդեթ Անդայի հետ միասին, 1941), «Այն, ինչից ես չհրաժարվեցի» (1945), «Նմանություն դաստանին» (1946), «Նորը» (1947) և «Ընդդեմ» (1949)։ Բանաստեղծությունների հիմնական թեման մոռացված մանր մարդու ճակատագիրն է։ 1949 թվականին հրատարակվեց «Նասրեդդին-խոջայի պատմվածքները» արձակ բանաստեղծությունների ժողովածուն։ Օրխան Վելիի բանաստեղծություններն ըստ իրենց մտքի խորության, բովանդակության սրության, վարպետության նշանակալի իրադարձություն են թուրքական գրականության մեջ։ Եթե բանաստեղծը սկզբում գտնվում էր ֆրանսիական սյուրռեալիստների որոշ ազդեցության տակ, ապա հետագայում դարձավ ռեալիզմի առաջատար ներկայացուցիչներից մեկը թուրքական գրականության մեջ։



Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Օրխան Վելին զբաղվում էր ժուռնալիստական գործունեությամբ։ 1949 թվականին նրա հրատարակած «Տերև» հանդեսը կարևոր դեր խաղաց դեմոկրատական գրականության զարգացման գործում։

**Օրխան Քեմալը** (իսկական անունը՝ Մեհմեդ Ռաշիդ) գրող, ժուռնալիստ է։ Ծնվել է 1914 թվականին։ Հեղինակ է անատոլիական գյուղացիների և քաղաքային չքավորության կյանքից վերցրած բազմաթիվ վեպերի ու պատմվածքների։ Պատանի ժամանակ գրել է բանաստեղծություններ։ Իր պատմվածքների առաջին ժողովածուները և երկու վեպը անվանեց «Մանր մարդու հիշատակարան» և այդ «մանր մարդը» դարձավ նրա հետագա բոլոր ստեղծագործությունների հիմնական հերոսը։ Օրխան Քեմալը լայնորեն հայտնի է Թուրքիայի սահմաններից դուրս։ Սովետական Միությունում լույս են տեսել նրա մի շարք գրքերը՝ «Հանցագործը», «Պայքար հացի համար», «Պատահար» և այլն։

**Ռեշադ Նուրին (Գյունթեքին)** (1892—1956) վեպերի

պատմվածքների ու պիեսների հեղինակ է։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հանդես եկավ պիեսներով, քննադատական հոդվածներով և թատերական հոդվածներով։ 1922 թվականին լույս տեսավ նրա առաջին վեպը՝ «Խորհրդավոր ձեռքը»։ Ռեշադ Նուրիին մեծ ժողովրդականություն բերեց նրա «Երգող թռչնակը» վեպը (1922), որի մեջ պատմվում է մի երիտասարդ ուսուցչուհու ճակատագրի մասին։ Այդ երկում գավառական կյանքի, թուրքական գավառական հիմնարկություններում եղած բյուրոկրատական բարքերի երգիծական հետաքրքիր նկարագրություններ կան։ Ռեշադ Նուրին մեծ ջերմությամբ է նկարագրում հասարակ ժողովրդի կյանքը։ Թուրք աշխատավորների ծանր դրությունը արտացոլվել է նրա այնպիսի լավագույն վեպերում, ինչպես «Խարան» (1925), «Ախոռացեք» (1928), «Տերևաթափ» (1930)։ Մի քանի պատմվածքներում և պիեսներում երգիծական ձևով պատկերվում են հոգևորականությունը, ֆեոդալա-մուսուլմանական սովորույթներին հետևող թուրք բնակիչների քարացած բարքերը («Աստծո հյուրը», «Խանչալը»)։ Ռեշադ Նուրիի մի շարք երկեր նվիրված են ազգային-ազատագրական պատերազմին («Մի գիշերվա ողբերգություն» պիեսը՝ 1924 թ., «Կանաչ գիշեր»՝ 1926 թ. և «Հին հիվանդություն»՝ 1938 թ. վեպերը)։

Գրողի վերջին վեպերն են «Ջրաղացը» (1944) և «Թշվառների օթևանը» (1946)։ Դրանցից առաջինը սուր երգիծանք է Օսմանյան կայսրության գավառական իշխանությունների բթության և ստոր բարքերի հասցեին։ Ռեշադ Նուրիի մյուս գործերից առավել հայտնի են «Երեկոյան արևը» (1926), «Կնատյացը» (1932), «Երկնակամար» (1935), «Հոնի ճյուղեր» (1932), «Շուրթերից դեպի սիրտը» (1925) վեպերը և «Քարի կտորը» պիեսը (1926)։

Ռեշադ Նուրին գրավիչ ֆաբուլայի վարպետ է։ Նրա ստեղծագործության լեզուն կատարյալ է, աչքի է ընկնում նուրբ հումորով և թախծալի հեգնանքով, հարուստ է և արտահայտիչ։ Ռեշադ Նուրին լայն ժողովրդականություն ունի, նրա վեպերը քանիցս հրատարակվել են մեծ տպաքանակով.



«Երգող թռչնակը» վեպը մոտ տասը հրատարակություն է ունեցել։

**Ռեշադ Էնիս (Այգեն)** դեմոկրատական ուղղության գրող է, ծնվել է 1909 թվականին։ Նրա առաջին պատմվածքները, որոնք մտնում են «Ես հանում եմ սուսերս» ժողովածուի մեջ, հիմնականում նվիրված են ազգային-ազատագրական պատերազմին։ Այդ պատմվածքների հերոսները գյուղացիներ են, բանվորներ, անատոլիացի քաջարի կանայք։ «Գիշերն սկսեց խոսել» վեպում (1932) գրողը պատմում է քաղաքի աղքատ մարդկանց կյանքի մասին։ 1933 թվականին հրատարակված «Գոնգը հնչեց» վեպում ցույց է տրված թուրքական ինտելիգենցիան ազգային-ազատագրական պատերազմից հետո։ 1940 թվականին լույս տեսավ «Հողի բուրմունքը» վեպը՝ Ռեշադ Էնիսի առավել խոշոր երկը, որում նկարագրվում է թուրք գյուղացիության ծանր կյանքը։

**Սաբահադդին Ալին** (1907—1948) ականավոր դեմոկրատական գրող է։ Նրա առաջին գիրքը՝ «Լեռներ և քամին» վերնագրով (1934), բանաստեղծությունների ժողովածու է՝ գրված հերոսական ռոմանտիզմի ոգով։ Գիրքն իսկույն ուշադրություն գրավեց։ «Ջրաղացը» (1935), «Սայլը» (1936), «Ձայնը» (1937), «Նոր աշխարհ» (1943), «Ապակյա պալատը» պատմվածքների ժողովածուները հռչակեցին Սաբահադդին Ալու անունը, դրանցում ճշմարտացիորեն են պատկերվում թուրքական գյուղի իրավազրկությունն ու աղքատությունը։ Մանր արհեստավորների և ինտելիգենցիայի կյանքին են նվիրված «Կույուջակցի Յուսուֆը» (1937), «Մեր ներսի հրեշը» (1940), «Աստվածամայրը մորթե մանտոյով» (1943) վեպերը։ Դրանց մեջ առավել հետաքրքիր է «Մեր ներսի հրեշը» վեպը, որը ցույց է տալիս թուրքական երիտասարդության մտավոր տարրնթացությունը և անկումային տրամադրությունը։ Սաբահադդին Ալու ստեղծագործության վրա զգացվում է սովետական գրողների, հատկապես Մաքսիմ Գորկու ազդեցությունը։

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում Սաբահադդին Ալին հանդես էր գալիս պանթյուր-

րիզմի և ֆաշիզմի դեմ։ Սաբահադդին Ալու ստեղծագործության քաղաքական սուր նպատակասլացությունը, ճնշման ու կամայականության խիզախ քննադատությունը նրա դեմ առաջացրին ռեակցիոն շրջանների ատելությունը։ Թուրքական իշխանությունները շարունակ հետապնդում էին Սաբահադդին Ալուն, իսկ 1948 թվականին նա զոհվեց վարձու մարդասպանների ձեռքով։

**Սադրի Էրթեմը** *(1900 թվականի ծնված)* նշանավոր ռեալիստ գրող է։ Նրա ստեղծագործության մեջ մեծ տեղ են գրավում սոցիալական հարցերը։ «Երբ կանգ են առնում ճախարակները» վեպում (1931) նա պատմում է գյուղական ջուլհակ-արհեստավորների աղքատացման մասին իրենց սնանկացնող օտարերկրացիների և տեղական ֆեոդալ-վաշխառուների դեմ։ Մի շարք գործեր նվիրված են թուրք գյուղացիների ու բանվորների կյանքին («Բարձրացրեք խողովակը, իջեցրեք խողովակը» պատմվածքների ժողովածու, 1933 թ., «Ցիլինդրավոր գյուղացին», 1933 թ. և այլն)։ Սադրի Էրթեմի գրչին են պատկանում նաև այնպիսի պատմվածքներ, որոնցում երգիծական ձևով պատկերված են թուրքական բուրժուազիայի կոսմոպոլիտական մասի ներկայացուցիչները («Պարոն ստորակետը», 1935 թ.), ցույց է տրված այլասերված տարրերի կյանքը («Ընկածները», 1936 թ. և այլն)։ 30—40-ական թվականներին գրած հոդվածներում Սադրի Էրթեմը հանդես էր գալիս որպես գրականության հասարակական դերի ջերմեռանդ պաշտպան, պայքարում «մաքուր արվեստի» կողմնակիցների դեմ։

**Սաիթ Ֆաիկը** *(1907—1954)* խոշոր գրող-ռեալիստ է։ Նրա առաջին պատմվածքը տպագրվել է «Վարլըք» հանդեսում, որի աշխատակիցն էր գրողը մինչև իր կյանքի վերջը։ 1936 թվականին լույս տեսավ «Սեմավեր» վերնագրով պատմվածքների ժողովածուն, իսկ 1939 թվականին՝ «Ջրավազանը» ժողովածուն։ Քննադատները նշում էին գրողի մեծ տաղանդը և գեղարվեստական վարպետությունը։ Սաիթ Ֆաիկի պատմվածքների և վեպերի հիմնական թեման հասարակ մարդու կյանքն է կապիտալիստական հասարակարգում։



Այդ պատմվածքներն են՝ «Հրհրոց» (1951), «Ավելորդ մարդը» (1948), «Սրճարան» (1950), «Ամպը երկնքում» (1953), «Ընկերությունը» (1951), «Ջրավազանի մոտ» (1952), «Վերջին թռչունները» (1953), «Ոչ խիստ քաղցր» (1954), իսկ վեպերն են՝ «Որոշ մարդիկ» (1952), «Որոնվում է» (1954), «Օձը Ալեմդաղ լեռան վրա» (1951)։

Սաիթ Ֆաիկը լայն մասսայականություն է վայելում։ Նա հետևորդներ ու ընդօրինակողներ ունի։ Թուրքիայում սահմանված են Սաիթ Ֆաիկի անվան գրական մրցանակներ, նրա անունով կոչվում են փողոցներ ու գրադարաններ։

**Սերտել Մեհմեդ Զեքերիան** *(ծնվել է 1892 թվականին)* դեմոկրատական ուղղության ականավոր ժուռնալիստ է և հասարակական գործիչ է։ Ժուռնալիստիկայով սկսել է զբաղվել 1908 թվականից հետո, հրատարակում էր «Յենի ֆելսեֆե» («Նոր փիլիսոփայություն») հանդեսը, պահանջում էր դեմոկրատական վերափոխություններ։

Անգլիական օկուպանտների դեմ ելույթ ունենալու համար ձերբակալվեց և մինչև 1920 թվականը գտնվում էր բանտում։ Ազգային-ազատագրական պատերազմից հետո կրկին սկսեց զբաղվել ժուռնալիստիկայով։ Նրա հրատարակած հանդեսների մեջ դեմոկրատական գաղափարների տարածման գործում հսկայական դեր խաղաց «Ռեսիմլի այը», որը հիմնադրել էր 1928 թվականին։ Հանդեսը համարձակորեն հանդես էր գալիս սոցիալական անարդարության, կառավարության հակաժողովրդական միջոցառումների դեմ և այլն։ Հանդեսին աշխատակցում էին Թուրքիայի առաջավոր դեմոկրատական գործիչներ և գրողներ, որոնց թվում՝ Սաբիհա Սերտելը (Մ. Զ. Սերտելի կինը) և Նազիմ Հիքմեթը։

1935 թվականին Մ. Զ. Սերտելը և Ս. Սերտելը սկսեցին հրատարակել դեմոկրատական «Տան» («Արշալույս») թերթը, որը մեծ դեր խաղաց Թուրքիայի հասարակական կյանքում։ Աշխատավորների իրավունքները պաշտպանելու, կառավարության հակաժողովրդական քաղաքականությունը մերկացնելու, երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ֆաշիզմն ու պանթյուրքիզմը խիստ դատապարտելու համար այդ թերթը

անվերջ ենթարկվում էր հալածանքների։ 1945 թվականին թերթը փակվեց, իսկ Սերթելի ամուսինները դատի տրվեցին։

Պատերազմն ավարտվելուց հետո Մ. Զ. Սերթելը և Ս. Սերթելը ակտիվ մասնակցություն ցույց տվեցին խաղաղության պայքարին, որը առաջացրեց նոր հետապնդումներ, և նրանք հարկադրված եղան հեռանալ Թուրքիայից։ Մ. Զ. Սերթելը խաղաղության համաշխարհային խորհրդի անդամ է։ Նրա գրչին են պատկանում էկոնոմիկային ու պատմությանը վերաբերվող շատ հոդվածներ։

Սաբիհա Սերթելը ժուռնալիստիկային զուգընթաց զբաղվում է գրականագիտությամբ։ Նրա ամենանշանավոր աշխատությունը XIX դարի դեմոկրատ բանաստեղծ Թևֆիկ Ֆիքրեթի մասին գիրքն է։

**Սուաթ Դերվիշը** (ծնվել է 1903 թվականին) կին գրող է։ Դեռ առաջին համաշխարհային պատերազմի վերջերին տպագրվեցին նրա ակնարկներն ու պատմվածքները։ 193? թվականին Սուաթ Դերվիշն այցելեց ՍՍՀՄ։ Թուրքիա վերադառնալուց հետո «Տան» թերթում տպագրեց մի քանի թղթակցություն, որոնք ներծծված էին խոր համակրանքով Սովետական Միության նկատմամբ։

«Ինչպես հոգին» (1928), «Էմինե» (1931), «Ոչինչ» (1941), «Ոչ մի լուր չկա» (1946) վեպերում Սուաթ Դերվիշը գրում է թուրք կանանց ծանր վիճակի մասին։ «Էմինե» վեպում գրողը պատմում է անապաստանների ողբալի ճակատագրի մասին երկրում, որտեղ «Ոչ մի կազմակերպություն հոգ չի տանում անապաստան երեխաների մասին»։

1944 թվականին հրապարակվեց Սուաթ Դերվիշի «Ինչու՞ ես բարեկամ եմ Սովետական Միությանը» ակնարկը, որտեղ նա ջերմ համակրանք էր արտահայտում ֆաշիզմի դեմ մարտնչող սովետական հերոս ժողովրդի նկատմամբ։ Այդ գրքի համար նա դատի տրվեց կոմունիստական պրոպագանդա մղելու մեղադրանքով և երկարատև բանտարկության դատապարտվեց։ 1948 թվականին լույս տեսավ նրա «Ֆոսֆորային Ջերիե» վեպը Ստամբուլի աղքատների մասին։

**Թարանչի Ջահիդ Սիթքին** (1910—1957) բանաստեղծ է։



Նրա շատ գեղեցիկ, երաժշտական բանաստեղծությունները, որ ներթափանցված են մելամաղձոտ տրամության զգացումով («Հիասթափություն իմ կյանքում» ժողովածուն և այլն), մի քանի անգամ առաջին տեղն են գրավել գրական կոնկուրսներում։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին բանաստեղծը հանդես եկավ «Խաղաղությունը դարձավ հույս» և «Թերինդոն» բանաստեղծություններով, որոնցում ողբում էր պատերազմի զոհերին։

**Ֆարուկ Նաֆիզը** (Չամլիբել) բանաստեղծ և դրամատուրգ է։ Ծնվել է 1898 թվականին։ Նրա վաղ շրջանի բանաստեղծություններում զգալի է բանաստեղծներ Ջենաբ Շեհաբեդդինի, Յահյա Քեմալի («Երգչանակներ ջրի վրա» բանաստեղծությունների ժողովածու, 1928 թ.) ազդեցությունը։ Ֆարուկ Նաֆիզի «Հրեշը» (1924), «Հերոսը» (1926) բանաստեղծական դրամաները, ինչպես և մի շարք պոեմներ ու բանաստեղծություններ նվիրված են ազատությանը, հայրենիքին և ազգային-ազատագրական պատերազմի հերոսականությանը։ Հետագայում նա գրում էր լիրիկական բանաստեղծություններ։

**Ֆահրի Էրդինչը** (ծնվել է 1917 թվականին) դեմոկրատ գրող է և ժուռնալիստ։ Գրական ասպարեզ իջավ 1946 թվականին «Խոսունք», «Զրպարտություն» և այլ բանաստեղծություններով։ Ապա երևան եկան «Կարիճներ», «Ոջիլ», «Ալլահի անասունները», «Ազգային աղետ» պատմվածքները։ Նրա պատմվածքները սուր երգիծանք են պարունակում ներքին ու արտաքին քաղաքականության իրադարձությունների վերաբերյալ, ցույց են տալիս ժողովրդի ծանր ճակատագիրը։

**Հալիդե Էդիբը** (Ադիվար), 1894—1964, նշանավոր կին գրող է։ 1908 թվականից հետո սկսեց գրական գործունեությունը։ Իր ստեղծագործության առաջին շրջանի վեպերի («Խանդան», «Սևիե Թալիբ», «Ռեֆիկի մայրը», «Վերջին ստեղծագործությունը», «Խոստման կատարումը» և այլն) թեմատիկան թուրք կնոջ դրությունն է ընտանիքում և հասարակության մեջ, սիրո ու ամուսնության հարցերը։ Հալիդե Էդիբը մեծ ուշադրություն է նվիրում իր արտասովոր և ուժեղ

հերոսուհիների ներքնաշխարհի վերլուծությանը։ Սակայն նա այդ հերոսուհիների շրջանակը սահմանափակում է արևմտյան կուլտուրայի ազդեցության տակ գտնվող ինտելիգենցիայի և աշխարհիկ հասարակության ներկայացուցիչներով։

1908 թվականից հետո Հալիդե Էդիբը դարձավ պանթյուրքիստական շարժման ակտիվ գործիչ։ 1912 թվականին լույս տեսավ նրա «Նոր Թուրան» շովինիստական վեպը։ Լայնորեն հայտնի են Հալիդե Էդիբի «Հրե վերնաշապիկ» (1922) և «Սպանեցեք պոռնիկին» (1926) հակաիմպերիալիստական ստեղծագործությունները, որոնք նվիրված են ազգային-ազատագրական պատերազմին։ Գեղարվեստական վարպետության տեսակետից միանգամայն հասուն «Սինեկլի Բակկալ» վեպում հնչում են միստիկ մոտիվներ, քարոզվում է հրաժարում հասարակական կյանքից։ «Խորհրդավոր քաղաք» (1928) և «Թաթարուհին» (1939) վեպերը բացահայտ թշնամությամբ են ներծծված դեպի հեղափոխական-դեմոկրատական շարժումը։ «Թաթարուհին» վեպում Հալիդե Էդիբը ձգտում է ապացուցել թուրքական հասարակության անդասակարգային լինելը։

Յակուբ Կադրին (Կարաօսմանօղլու) խոշոր գրող է և ժուռնալիստ։ Ծնվել է 1888 թվականին։ Առաջին ստեղծագործությունները լույս են տեսել 1908 թվականի հեղափոխությունից հետո։ Նրան բնորոշ է սուբյեկտիվիզմը և միստիցիզմը («Արկած» պատմվածքների ժողովածուն)։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո Յակուբ Կադրին իր գործերում արտացոլում է երկրի կյանքի կարևորագույն իրադարձությունները։ «Մենատունը հանձնվում է», «Սոդոմ և Գոմոր» վեպերում և «Գթասրտություն» վիպակում (1922) ցույց են տրված պատերազմի և օկուպացիայի ժամանակաշրջանի Ստամբուլը, իշխանությունների ծախվածությունը, Ստամբուլի վերնախավի բարքերի անկումը։ «Ազգային-ազատագրական պայքարի մասին պատմվածքները» (1922) ներծծված են հակաիմպերիալիստական տրամադրություններով և հայրենիքի ճակատագրի նկատմամբ տագնապով։



«Օտարականը» վեպում, որ գրվել է հանրապետության հաստատվելուց հետո, գրողը գյուղացուն հակադրում է ինտելիգենտին, այդ հարցը լուծելով ռեակցիոն դիրքերից։ «Անկարա» վեպում (1935) Յակուբ Կադրին նկարագրում է երկրի անկախության համար վտանգավոր կոմպրադորական բուրժուազիայի հետ ազգային բուրժուազիայի մի մասի սերտաճումը։

Յակուբ Կադրիի հետագա ամենախոշոր վեպերն են՝ «Աքսորը» (1939), որ նվիրված է XIX դարի Թուրքիայի պատմությանը, «Համայնապատկեր» (1950) և «Ակամա դիվանագետը» (1956)։ Վերջին երկուսը ինքնակենսագրական բնույթ ունեն։

Յահիա Քեմալը (Բեյաթլի) խոշոր դեկադենտ բանաստեղծ է։ Ծնվել է 1880 թվականին։ Հրապարակված առաջին իսկ բանաստեղծությունները (1908 թվականից հետո) հայտնի դարձրին նրան։ Մի քանի բանաստեղծություններ բանավոր տարածում գտան։ 1921 թվականին նա սկսեց հրատարակել «Դերգյահ» («Օթևան») հանդեսը։ Յահիա Քեմալի բանաստեղծությունները տպագրվել են «Ենի մեջմուա» («Նոր հանդես»), «Թավլա» («Մրցամարգ»), «Դերգյահ» («Օթևան»), «Ինսան» («Մարդ»), «Լուսանկարչական խանութ», «Իստանբուլ», «Ակադեմի», «Աիլե» («Ընտանիք»), «Սալոն» հանդեսներում և «Ակշամ» («Երեկո»), «Ջումհուրիեթ» («Հանրապետություն») թերթերում։ Յահիա Քեմալի շատ բանաստեղծություններ նվիրված են բնությանը, կենաց ու մահու պրոբլեմներին։ Դրանցում բանաստեղծը տրամություն է արտահայտում, որ անմահություն և մշտնջենական ազատություն չկա երկրի վրա («Բաց ծով», «Ծովի երգը», «Բլրի վրայից»)։ Նա նաև դիմում է Թուրքիայի անցյալին, իդեալականացնում այն («1140-րդ տարին», «Նվաճողը», «Հրաման», «Նետը» և այլն)։ Բանաստեղծի ստեղծագործության մեջ, որը, ըստ նրա խոսքերի, ձգտում է «բանալ թուրքական պոեզիայի նոր ուղին», զգացվում է ֆրանսիական սիմվոլիստների և Բերգսոնի իդեալիստական տեսության ազդեցությունը։ Քննադատները Յահիա Քեմալին անվանում են «թուրքական պոեզիայի լա-

վաղույն վարպետ»՝ նրա բանաստեղծությունների գեղեցիկ գեղարվեստական ձևի, նրբերանգության ու երաժշտականության համար։

Յաշար Քեմալը (իսկական անունը՝ Քեմալ Գյոքչելի) գրող և ժուռնալիստ է։ Ծնվել է 1922 թվականին։ Հայտնի դարձավ Անատոլիայից գրած իր ռեպորտաժներով, «Տապ» (1952), «Թիթեղագործուհին» (1955) պատմվածքների ժողովածուներով։ Այդ բոլոր ստեղծագործությունների թեման է Անատոլիայի գյուղացիների կյանքը և նրանց ծանր պայքարը կուլակների, ժանդարմների դեմ՝ հողի, ջրի համար։ Մեծ հաջողություն բաժին ընկավ «Հյուծված Մեմեդը» վեպին, որը հրատարակվել է Եվրոպայում և Ամերիկայում (ռուսերեն թարգմանվել է 1957 թ.)։ «Հենարան», «Հողը երկաթ է, երկինքը՝ պղինձ» և «Պարոն Ակչասազանները» վեպերում գրողը նկարագրում է հետպատերազմյան տարիների թուրքական գյուղի լայն պատկերը։

## ԹԱՏՐՈՆԸ

Թուրքիայի բոլոր թատրոնները բաժանվում են երեք խմբի՝ պետական, մունիցիպալային և մասնավոր։ Պետական թատրոնները կենտրոնացված են Անկարայում։ Դրանք են՝ «Մեծ թատրոնը» (օպերային-դրամատիկ), «Փոքր թատրոնը», «Կամերային թատրոնը», «Երրորդ թատրոնը», «Հինգերորդ թատրոնը» և Անկարայի պետական կոնսերվատորիան։ Այս թատրոնների բոլոր ծախսերը վճարվում են պետական բյուջեից։

Ստամբուլում կա ավելի քան 17 թատրոն, որոնցից հինգը պատկանում է Ստամբուլի մունիցիպալիտետին (դրամատիկական թատրոնը, դրամայի և կոմեդիայի թատրոնը, «Կադիկյոյ թիատրոսու», փոքր օպերային թատրոնը, նոր թատրոնը), իսկ մյուսները պատկանում են մասնավոր մարդկանց։ Մունիցիպալային թատրոնների ծախսերը վճարվում են մունիցիպալիտետի հատկացրած միջոցներից։ Սակայն,



ինչպես բազմիցս նշել է թուրքական մամուլը, այդ միջոցները անբավարար են[1]։

Բացի այդ, թատերական սիրողական խմբեր կան բարձրագույն ուսումնական հաստատություններին և հասարակական ու կուլտուրական հաստատություններին կից։ Անկարայի և Ստամբուլի մի քանի թատերախմբեր ներկայացումներ են տալիս երեխաների համար։ Հասարակական հիմունքներով ստեղծված են հատուկ կազմակերպություններ, որոնք զբաղվում են «Կարագյոզ» ստվերային թատրոնի և «Օրթա Օյունու» ժողովրդական թատրոնի տրադիցիաները մասսայականացնելով։

Մյուս խոշոր քաղաքներում նույնպես գոյություն ունեն մունիցիպալ և մասնավոր թատրոններ, սիրողական խմբեր և թատերական խմբակներ։ Գավառներում ներկայացումներ են տալիս Անկարայի, Ստամբուլի, Իզմիրի թատրոնները, ինչպես նաև շրջիկ թատերախմբերը։

Մասնավոր ու պետական թատրոնների համար կադրեր են պատրաստում Անկարայի պետական կոնսերվատորիան, Ստամբուլի և Իզմիրի մունիցիպալ կոնսերվատորիաները, Անկարայի համալսարանին կից թատերական ինստիտուտը։

Թուրքիայում գոյություն ունի «Զառամյալ դերասաններին օգնող ընկերություն» (ստեղծվել է 1942 թվականին)։ Ընկերության հիմնադիրներից են Մուհսին Էրթուղրուլը, Էմին Բելլին, Նիրե Նիրը, Բահզաթ Բուդաքը, Վասֆի Ռզա Զոբուն և թատերական այլ գործիչներ։

***

40—50-ական թվականներին երկրի կուլտուրական կյանքում մեծ իրադարձություն էր Սոֆոկլեսի և Էվրիպիդեսի

[1] Այդ պատճառով էլ պատահական չէր, որ 1962—1964 թվականներին ընդհատվեց մի քանի մունիցիպալային թատրոնների աշխատանքը։ Հարցը 1964 թվականին լուսավորության մինիստր Իբրահիմ Օկտեմը հայտարարեց, որ որոշում է ընդունված մոտ ապագայում աշխատեցնել Ստամբուլի օպերային թատրոնը և կոնսերվատորիան։

պիեսների բեմադրությունը։ Անկարայում և Ստամբուլում բեմադրվեցին «Էդիպը», «Անտիգոնեն» և «Էլեկտրան»։

Դեմոկրատական կուսակցության կառավարման տարիներին հալածանքների ենթարկվեցին Թուրքիայի հասարակական ու թատերական առաջադեմ գործիչները։ Նրանցից ոմանք հարկադրված եղան հեռանալ հայրենիքից և աշխատել արտասահմանում։ Նազըմ Հիքմեթը 1951—1963 թվականներին ապրում ու աշխատում էր ՍՍՀՄ-ում։

Այդ տարիներին Թուրքիայի թատրոններում բեմադրվում էին գլխավորապես ամերիկյան, անգլիական ու ֆրանսիական ժամանակակից հեղինակների վոդևիլներ ու մելոդրամաներ։ Դրա հետ միասին մեծ ժողովրդականություն էին վայելում ժամանակակից կրտսեր սերնդի թուրք դրամատուրգների՝ Սուադ Թաշերի (1919 թ. ծնված), Սաբահադդին Կուդրեթ Աքսալայի (1920 թ. ծնված), Նիջաթ Ջումալի (1921 թ. ծնված), Օրհան Ասենի (1921 թ. ծնված) պիեսները։

Թուրք հանդիսականների մոտ մշտական հաջողություն են վայելում ռուս գրողների պիեսները՝ Լ. Ն. Տոլստոյի «Կենդանի դիակը» և «Աննա Կարենինայի» բեմականացումը, Մ. Գորկու «Հատակում», Ն. Վ. Գոգոլի «Ռևիզորը», «Ամուսնությունը», Ա. Ն. Օստրովսկու «Գայլերը և ոչխարները», Ա. Պ. Չեխովի մի քանի պիեսները, Ֆ. Մ. Դոստոևսկու «Ապուշը» և «Կարամազով եղբայրները» վեպերի բեմականացումները։

1960 թվականի մայիսի 27-ի պետական հեղաշրջումից հետո Թուրքիայում նկատելիորեն աշխուժացավ թատերական կյանքը։ 1961 թվականին Թուրքիայի ազգային թատրոնի պատմության մեջ առաջին անգամ ստեղծվեց պետական, մունիցիպալային և մասնավոր թատրոնների գործունեությունը կոորդինացնող հատուկ հանձնաժողով։ Այդ հանձնաժողովի կազմի մեջ մտան պետական թատրոնների գլխավոր դիրեկտոր, հայտնի դրամատուրգ և ռեժիսոր Ջյունեյթ Գեքչերը, Ստամբուլի մունիցիպալային թատրոնների գլխավոր ռեժիսոր Մուհսին Էրթուղրուլը, հայտնի թատերագետներ Լյութֆի Այը և Մեթին Անդը, թատերական խոշոր գործիչ-



ներ Շահար Արալին, Մահիր Ջանովան, Ջիա Դեմիրելը և ուրիշներ։ Այդ հանձնաժողովն զբաղվեց թուրքական թատրոնների ռեպերտուարի քննությամբ, կադրերի պատրաստման հետ կապված հարցերի ուսումնասիրությամբ և այլն։

Բայց թուրքական թատրոնների ռեպերտուարի մեջ էական փոփոխություններ չկատարվեցին։ Հայտնի բանաստեղծ և դրամատուրգ Նեջաթ Ջեմալիի խոստովանությամբ, թատրոնների ռեպերտուարում բոլոր պիեսների կեսից ավելին կազմում են սնամեջ վոդևիլները և մելոդրամաները՝ արդի արևմտյան դրամատուրգների պիեսների ձևափոխությունները ու անհաջող թարգմանությունները։ Իսկ համաշխարհային և հայրենական կլասիկ գրականության նմուշները բոլոր պիեսների մեկ քառորդն էլ չեն կազմում։

Այնուհանդերձ, 1961—1964 թվականներին բեմադրվեցին Վ. Շեքսպիրի «Համլետը», «Օթելլոն», «Մակբեթը», «Ռոմեո և Ջուլիետը», Բ. Շոուի «Պիգմալիոնը», Ժ. Բ. Մոլիերի մի քանի պիեսները, Ջ. Վերդիի «Տրավիատան» և «Ռիգոլետտոն», Ժ. Բիզեի «Մարգարիտ որսորդները», Ռ. Վագների «Տոսկան», Վ. Մոցարտի «Հափշտակություն Սերալից», Ռոսինիի «Սևիլյան սափրիչը», Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգինը» և «Քնած գեղեցկուհին»։ Բեմադրվեցին Աբդուլհակ Համիդի «Թարիկը»՝ Բեհչեթ Քեմալ Չագլարի և Սաղի Իրմակի մշակմամբ, Ռեշադ Նուրի Գյունթեքինի «Ջալիկուշու» («Երգող թռչնակը»)՝ Նեջաթ Ջումալիի բեմադրությամբ։

60-ական թվականներին նկատելիորեն ամրապնդվեցին սովետա-թուրքական կուլտուրական կապերը։ 1961 թվականի մայիսին Սովետական Միություն այցելեց թուրքական թատերական գործիչների պատվիրակությունը, որի կազմում էին պետական թատրոնների գլխավոր դիրեկտոր Ջյունեյթ Գեքչերը և նշանավոր դերասան ու ռեժիսոր Էրթուղրուլ Իլգինը։ Նրանք եղան Մոսկվայում, Լենինգրադում և Բաքվում, հանդիպեցին սովետական պետական, հասարակական և թատերական գործիչների հետ, ծանոթացան թատերական

համար ուսումնական հաստատություններում և կոնսերվատորիաներում կադրերի պատրաստման փորձին:

1960—1963 թվականներին Սովետական Միությունում մեծ հաջողությամբ անցան թուրքական արտիստների ելույթները: Բաքվում, Երևանում և Թբիլիսիում ելույթ ունեցավ Սեդա Այդանը, Մոսկվայում և Լենինգրադում՝ Լեյլա Գենչերը: Մեծ հետաքրքրություն առաջացրին թուրք թատերագետ Մեթին Անդի դասախոսությունները:

1960—1964 թվականներին Թուրքիայում հաջողությամբ իրենց արվեստը ցուցադրեցին Մոսկվայի, Լենինգրադի և սովետական ուրիշ թատրոնների արտիստները: Թուրք հանդիսատեսների մոտ մեծ և արժանի հաջողություն ունեցան սովետական օպերայի և բալետի արտիստների ելույթները:

Թուրքիան միջազգային թատերական ինստիտուտի (ՅՈՒՆԵՍԿՕ) անդամ է: Ամեն տարի երկրում մարտի 27-ին, որպես կանոն, նշվում է թատրոնի միջազգային օրը: Այդ օրը երկրի խոշոր քաղաքներում կազմակերպվում են հատուկ զրույցներ, կարդացվում են մասնագիտական դասախոսություններ թուրքական թատրոնի պատմության վերաբերյալ:

## ԿԻՆՈ

1963 թվականին Թուրքիայում ստեղծվեց 139 լիամետրաժ գեղարվեստական կինոնկար:

Ինչպես բազմիցս նշել է թուրքական հասարակայնությունը, տեղական կինոստուդիաների թողարկած կինոնկարների մեծամասնության որակը ցածր է: Դա բացատրվում է, ամենից առաջ, թուրքական կինոարդյունաբերության հետամնացությամբ: Թույլ տեխնիկական հագեցվածությունը, միջոցների պակասը, կինոյի համար կադրեր պատրաստող ազգային ուսումնական հաստատությունների բացակայությունը, այս բոլորը խոչընդոտ են հանդիսանում թուրքական կինոարվեստի զարգացմանը:

Թուրքական շատ նկարների սյուժեն երիտասարդ մարդ-



կանց սիրային պատմությունն է, մարդիկ, որոնք մի շարք պատճառներով (ծնողների կամքը, անբարյացակամների բանսարկությունները, ունեցվածքային անհավասարությունը) չեն կարողանում իրենց բախտը կապել միմյանց հետ: Մինչև երջանիկ ամուսնության վրա հասնելը հերոսները հաղթահարում են շատ արգելքներ: Իսկ թուրքական նկարները, որպես կանոն, ունենում են երջանիկ վախճան: Շատ նկարների համար սովորական են հերոսների չափազանցված սենտիմենտալությունը, ծեծկռտուքները և հետապնդումները, որոնք փոխ են առնված արևմտյան կինոնկարներից, եզակի չեն սեքսուալ տեսարանները: Սակայն թուրքական նկարների մեծ մասը, նույնիսկ ամենավատները, արևմտյան կինոնկարներից տարբերվում է մի առանձնահատկությամբ. թեև սյուժեները հաճախ մտացածին են, իրական չեն, բայց դրանց զարգացման ֆոնը բուն թուրքական իրականությունն է: Կենցաղային տեսարանները, որպես կանոն, վերցված են կյանքից, շատ նկարահանումներ արվում են բնականից. ուստի հաճախ, չնայած ամբողջությամբ վերցրած, սյուժեի հնարովիությանը, չնայած տրադիցիոն երջանիկ վախճանին, հանդիսատեսի առջև հանդես է գալիս թուրք աշխատավորի իրական կյանքը իր փոքր ուրախություններով և ամենօրյա հոգսերով:

1961 թվականին Իզմիրում անցկացվեց թուրքական կինոնկարների ֆեստիվալ: Առաջին մրցանակը սցենարի համար ստացավ «Դեպի ծով իջնող փողոցը» նկարը: Այդ նկարում տղամարդու լավագույն դերակատար ճանաչվեց Ուլվի Ուրազը, կանացի դերակատար՝ Նուրհան Նուրը:

1963 թվականին թողարկված նկարների մեջ կարելի է նշել, չնայած նրանց բոլոր թերություններին, «Դառը կյանքը», «Օտարականը քաղաքում», «Վաղը մեզ է պատկանում», «Անջուր ամառ»: «Անջուր ամառ» նկարը, որի ռեժիսորն է Մեթին Էրքսանը, 1964 թվականին Արևմտյան Բեռլինում կայացած ֆեստիվալում նվաճեց «Ոսկյա արմավենու ճյուղ» մրցանակը:

Կինեմատոգրաֆիան ամբողջովին գտնվում է մասնավոր ձեռնարկատերերի տրամադրության տակ, որոնք շահույթի

Հետևից ընկած, էական նշանակություն չեն տալիս թողարկվող նկարների որակին։ Պետությունը գրեթե չի մասնակցում կինոնկարների արտադրությանը։ Ավելին, տարբեր մինիստրություններ և վարչություններ գերադասում են հատուկ նկարներ պատվիրել օտարերկրյա ֆիրմաներին։

1964 թվականին Թուրքիայում գործում էին ավելի քան տասը կինոստուդիաներ և 200-ից ավելի զանազան կինոֆիրմաներ։ Դրանք գրեթե բոլորն էլ պատկանում են մասնավոր անձանց. ֆիրմաների ղեկավարները և նրանց ընկերակիցները սովորաբար ռեժիսորներ են, օպերատորներ, երբեմն էլ՝ դերասաններ։ Կինոֆիրմայի դրամագլուխը սովորաբար կազմում է 300—500 հազար լիրա։ Թուրքիայի առավել խոշոր կինոստուդիաներն են՝ «Քեմալ ֆիլմը», «Իպեք ֆիլմը», «Խալկ ֆիլմը», «Էրման ֆիլմը», «Սեն ֆիլմը», «Խալիլ ֆիլմը» «Լյալե ֆիլմը»։ Կինոֆիրմաների մեծ մասը Ստամբուլում տեղավորված է Եշիլ Չամ Սոկակում, որը թուրքական մամուլում հաճախ անվանվում է «Թուրքական Հոլիվուդ»։

1964 թվականին յոթ մասնավոր կինոընկերություններ որոշեցին կազմակերպել «Պրոդյուսերների արհմիություն» («Ֆիլմ իշվերենլեր սենդիկասը»)։ Նախաձեռնողն էր երկրի ամենախոշոր կինոֆիրմաներից մեկի՝ «Էրման ֆիլմի» ղեկավար Խյուրրեմ Էրմանը։ Այդ նույն թվականին էլ ստեղծվեց թուրքական կինոռեժիսորների միությունը։

1964 թվականին Թուրքիայում կար ավելի քան 1200 կինովարձութային ֆիրմա։ Դրանցից մի քանիսը զբաղվում են բացառապես միայն տեղական, մյուսները՝ գլխավորապես արտասահմանյան նկարներ վարձով վերցնելով։

1963 թվականին երկրում ցուցադրվել է 230 արտասահմանյան նկար, այսինքն՝ գրեթե երկու անգամ ավելի շատ, քան թողարկել են Թուրքիայի կինոստուդիաները։ Դրա ավելի քան մեկ երրորդը՝ 84 կինոնկար, ամերիկյան էին։

Թուրքական կինոթատրոնները լցված են արևմտյան նկարներով։ Օրինակ, Ստամբուլի Իսթիքլյալ ջադդեսի կոչվող կենտրոնական փողոցի մի փոքր հատվածի վրա, Գալաթասարայ հրապարակի և Տակսիմի, ինչպես նաև դրանց հարող



նրբանցքների միջև ընկած շրջանում տեղավորված է ութ կինոթատրոն։ Դրանցից միայն երեքում են ցուցադրվում թուրքական կինոնկարներ, մյուս հինգում շարունակ ցուցադրվում են ամերիկյան, ֆրանսիական, արևմտա-գերմանական, իտալական կինոնկարներ։ Նույնպիսի դրություն է նաև Անկարայում. քաղաքի կենտրոնում, Կըզըլայ և Լողայմեյդանի հրապարակների միջև, կա երեք կինոթատրոն, և թուրքական նկարներ երբեմն ցուցադրվում են դրանցից մեկում։

Կինոնկարների մեջ հազվադեպ են լինում իսկական արվեստի ստեղծագործություններ. դրանք հիմնականում կովբոյական և գանգստերական նկարներ են, մարդասպանների ու վամպիրների և նմանների արարքներ ցույց տվող նկարներ։

Սովետական նկարները հազվադեպ են հանվում թուրքական էկրան։ 1963 թվականին նկարահանվեց սովետաթուրքական համատեղ «Անկարան Թուրքիայի սիրտն է» վավերագրական նկարը։ Մինչ երկրորդ համաշխարհային պատերազմը թուրք հանդիսատեսը ծանոթացել էր «Պյոտր առաջին», «Մայիսյան գիշեր», «Չկան հրամանով», «Երաժշտական պատմություն», «Նասրեդդինը Բուխարայում», «Եմելյան Պուգաչով» կինոնկարներին։ 60-ական թվականներին Թուրքիայում հաջողությամբ ցուցադրվեցին «Ռոմեո և Ջուլիետը», «Սպիտակ գիշերներ» նկար-բալետը, ինչպես նաև «Ալի-բաբան և 40 ավազակները», «Ռուսկյա փետուրներ» մուլտիպլիկացիոն նկարները և այլն։ Իզմիրի միջազգային տոնավաճառի ժամանակ սովետական տաղավարում ցուցադրվում էին կարճամետրաժ գեղարվեստական և վավերագրական նկարներ։

1963 թվականին Մոսկվայում կայացած կինոփառատոնին ներկա էր թուրքական կինեմատոգրաֆիստների պատվիրակությունը, որի կազմում էին հայտնի կինոռեժիսոր Խալիլ Ռեֆիկը, նշանավոր դերասանուհիներ Նիլուֆեր Այդանը և պրոդյուսեր Նուսրեթ Իքվալը։ Ցուցադրվեց «Օտարականը քաղաքում» նկարը, որը ջերմորեն ընդունվեց սովետական հանդիսականի կողմից։

Թուրքիան ամեն տարի արտահանում է տասը կինոնկարից ոչ ավելի։ Որպես կանոն, դրանք արտահանվում են Կիպրոս, Սիրիա, Իսրայել և Հունաստան։ Վերջին նկարներից մեկը վաճառվեց Ֆրանսիայում և Իտալիայում։

1964 թվականի սկզբում երկրում կար ավելի քան 650 փակ և 150 ամառային կինոթատրոն։ Դրանցից ամենախոշորները գտնվում են Ստամբուլում, Անկարայում, Իզմիրում, Բուրսայում, Ադանայում, Զոնգուլդակում և Սամսունում։

Թուրքական կինոյի առավել մասսայականություն վայելող արտիստներն են Սադրի Ալիշիքը, Այհան Իշիքը, Հերսել Արսոյը, Մուհթերեմ Նուրը, Ներիման Կյոքսալը, Լեյլա Սայարը, Թուրքան Շորայը, Օզթյուրք Սերենգիլը, Օրխան Գյունշիրայը։

## ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքական ազգային երաժշտությունը բազմադարյան պատմություն և տրադիցիաներ ունի։ Թուրքերի երաժշտական ստեղծագործության հիմք են կազմել անասնապահական և երկրագործական աշխատանքային երգերը, որոնք աչքի են ընկնում մեղեդիների, լադերի և ռիթմերի հարստությամբ։ Թուրքերի երգային ստեղծագործության մշտական և ամուր կապը նրանց հասարակական կենցաղի հետ նպաստել է բանաստեղծական և երաժշտական կերպարների բնույթով տարբեր երգային ժանրերի ձևավորմանը։

Թուրքական ժողովրդական երգի եղանակներն իրենց հիմքում դիատոնիկ են, թեմատիկան՝ բազմազան։ Սովորական, ամենից հաճախ զույգ ռիթմերի ($\frac{2}{4}$; $\frac{4}{4}$) կողքին, թուրքական ժողովրդական երգի մեջ հանդիպում են նաև խառը ռիթմեր ($\frac{5}{8}$; $\frac{9}{8}$)։ Ժողովրդական երգերը հաճախ կատարվում են գործիքի նվագակցությամբ։ Թուրքական երաժշտական գործիքներն են՝ քամանչան, ռեբաբը (լարավոր աղեղնավոր), տամբուրը և ուդը (լարավոր կամերավոր), կավալը (ֆլեյտայի մի տեսակը), դուդուկը, զուռնան, դափը, դհոլը (թմբուկ) և այլն։



Ժողովրդական երաժշտության հողի վրա, Իրանի և Արաբիայի երաժշտության զգալի ազդեցության տակ, զարգացել է այսպես կոչված կլասիկ ոճը։ Դա ներկայացված է հիմնականում մեծածավալ ստեղծագործություններով, թուրք բանաստեղծների խոսքերի վրա գրված գործիքային բազմամաս սյուիտներով։ Այդ երաժշտությանը հատուկ է միաձայն մելոդիկ ոճը՝ հարուստ ինտոնացիոն-ներդաշնակ և ռիթմիկ հիմքի վրա։ Թուրքական երաժշտության այսպես կոչված կլասիկ ոճը իր զարգացմամբ, բովանդակությամբ ու կառուցվածքով ընդհանուր շատ բան ունի իրանցիների, ադրբեջանցիների, տաջիկների և ուզբեկների պրոֆեսիոնալ ոճի հետ։

Առաջին թուրք երաժիշտ-կատարողներն են եղել Արնավուր Ալի Ռզան, Մեհմեդ Ալին, Ահմեդ Ջավին, Վելի Կանիկը, Ջեմալ Սաբրին, Իզզեթ Էմինը։ XIX դարի կեսերին երևան եկան անվանի կոմպոզիտոր Տիգրան Չուխաջյանի (մեռ. 1898 թ.) «Լեբլեբեջի Հորհոր աղա», «Արիֆ», «Քյոսե Կյատիբ» և այլ օպերետները։ Թուրք առաջին կոմպոզիտորներից էր Սաֆրեթ Աթաբինեն (1858—1939), որը ժողովրդական պարերի մոտիվներով ստեղծել է թուրքական առաջին բալետը, ինչպես և «Էրթողրուլ» օպերան։

Քեմալական հեղափոխությունից հետո հիմնվեց Ստամբուլի մունիցիպալ կոնսերվատորիան, որն աշխատում է առ այսօր։

1925 թվականին Անկարայում ստեղծվեց երաժշտական մանկավարժական ուսումնարան։ Նրա կազմակերպիչների թվում էր հայտնի երաժշտական գործիչ Ջեքի Ունգերը, որը 1928 և 1934 թվականներին ելույթներ ունեցավ սովետական ունկնդիրների առջև։

1935 թվականին այդ ուսումնարանի բազայի վրա բացվեց պետական կոնսերվատորիա։ Նրա հիմնադիրներից և առաջին մանկավարժներից էին աչքի ընկնող հասարակական գործիչներ Մուհսին Էրթուղրուլը, Բեդրեդդին Թունչելը, Ջևադ Մեմդուհ Ալթարը։ Թուրքական երաժշտության զար-

ցացման գործում մեծ ներդրում են կատարել Անկարայի կոնսերվատորիայի դասատուներ Ալի Սեզգինը, Էնվեր Կապելմանը, Բեդիա Դելեները, Էդիպ Սեզենը, Ֆերհունդե Էրկինը և Մուհիդդին Սադակը։

1951 թվականին կոնսերվատորիա բացվեց Իզմիրում։

Նշանավոր իրադարձություն էր 1933 թվականին Անկարայում պետական սիմֆոնիկ նվագախմբի ստեղծումը։

Նվագախմբի ղեկավարն է Գ. Լեսինգը, գլխավոր դիրիժորը՝ Հիքմեթ Շիմշեկը։ Նվագախմբի ծրագրի մեջ մտնում են Բախի, Մոցարտի, Բեթհովենի, Չայկովսկու, Ռիմսկի-Կորսակովի, Մուսորգսկու, Ռախմանինովի, Դեբյուսիի, Ռավելի, Ստրավինսկու և այլոց սիմֆոնիկ ստեղծագործությունները։ Նվագախմբի մենակատար ջութակահարներն են Իլհան Օզսոյը, Էրսան Ալպերը, դաշնակահարներ Վեհբի Թյումենը, Նեջիթ Թեքերաշը և ուրիշներ։

1963 թվականին նվագախումբը լրիվ կազմով գաստրոլներ ունեցավ Արևմտյան Եվրոպայում։ Այդ ելույթներից հավաքված միջոցներով 1964 թվականին Անկարայում կառուցվեց համերգային դահլիճ։

Արևմտյան և ռուսական կլասիկ սիմֆոնիկ երաժշտությունը մասսայականացնելու համար 1953 թվականին Անկարայում ստեղծվեց ֆիլհարմոնիական ընկերություն։

Թուրքիայում երևան է եկել վարպետ կատարողների մի ամբողջ սերունդ։ Դրանց թվում են դաշնակահար Միթհադ Ֆենմենը, ջութակահարուհիներ Սունա Կանը և Այլա Էրդուրանը, դաշնակահարուհի Իդիլ Բիրեթը։

Թուրք կոմպոզիտորներն իրենց ստեղծագործությամբ մեծամասամբ կանգնած են ռեալիստական դիրքերում և սերտորեն կապված են Թուրքիայի երաժշտական տրադիցիաների հետ։ Թվարկենք թուրքական առավել նշանավոր կոմպոզիտորներին։

**Ադնան Սայգունը** (ծնվ. 1907-ին) երաժշտական կրթություն է ստացել Թուրքիայում։ Ներկայումս դասավանդում է Անկարայի կոնսերվատորիայում։ Գրում է սիմֆոնիկ և կամերային երաժշտություն։



**Ջեմալ Ռեշիդը** (ծնվ. 1907-ին) հայտնի դաշնակահար է։ Երաժշտական կրթություն է ստացել Ժնևում և Փարիզում։ Ստամբուլի կոնսերվատորիայում ղեկավարում է դաշնամուրի դասարանը։

**Ուլվի Ջեմալ Էրկինը** (ծնվ. 1906-ին) երաժշտական կրթություն է ստացել Փարիզում։ Անկարայի համալսարանում դասավանդում է երաժշտության տեսություն, պետական սիմֆոնիկ նվագախմբի դիրիժորն է։

**Մահմուդ Ռաճիպ Գազիմիխալը** (ծնվ. 1900-ին) ջութակահար է։ Անկարայի կոնսերվատորիայում դասավանդում է երաժշտության պատմություն։ Երաժշտական բառարանի հեղինակ է։

**Ջևդեթ Չագլան** (ծնվ. 1902-ին) ջութակահար է, Անկարայի ռադիոյի երաժշտական խմբագրության վարիչ։ Ավարտել է ռազմա-երաժշտական դպրոց, երաժշտական կրթությունը ավարտել է Գերմանիայում։ Երաժշտություն է գրում կինոֆիլմերի և էստրադայի համար։

**Յավուզ ԵՒրիմբան** (ծնվ. 1930-ին) Անկարայի համալսարանի շրջանավարտ է, գերազանց ֆլեյտահար։ Գրում է երաժշտություն ջազ-նվագախմբի համար, ժողովրդական գործիքների նվագակցությամբ։

**Նեջիլ Քազիմ Աքսեսը** երաժշտական կրթություն է ստացել Վիեննայում և Պրագայում։ Հայտնի է իբրև մոդայիկ երաժշտության հեղինակ։

**Ֆահրի Կոփուզը** (ծնվ. 1885-ին) ժողովրդական երգերի կատարող է՝ ուդի նվագակցությամբ։

**Սաբի Ազիմ Արսոյը** (ծնվ. 1898-ին) ժողովրդական երգերի կատարող է՝ սազի նվագակցությամբ։ Նրա երգերը հաճախ են հաղորդվում ռադիոյով։

Անկարայի և Ստամբուլի օպերային թատրոններում բեմադրվել են Ադնան Սայգունի «Քերեմը», Նևիթ Կոդալլիի «Վան Գոգը» և «Գյուլգամեշը», բացի դրանից, այնտեղ բեմադրվել են Բելլինիի «Նորման» և «Պուրիտանները», Օբերի «Ֆրա-Դյավոլոն», Բիզեի «Մարգարիտ որսորդները», Վերդիի «Ռիգոլետտոն», «Տրավիատան», «Ֆալստաֆը», Պուչինիի

«Մանոն Լեսկո», «Մադամ Բատերֆլայը», «Տոսկան», Լեոնկավալոյի «Պայացները», ցուցադրվել է Պ. Ի. Չայկովսկու «Քնած գեղեցկուհին» բալետը և բեմադրվել են նրա «Պիկովայա դամա» ու «Եվգենի Օնեգին» օպերաները։

Ժողովրդական երաժշտությունը հաճախ կատարվում է Անկարայի, Ստամբուլի և Իզմիրի ռադիոյով։

Թուրքական ժողովրդական երգերի ուսումնասիրությամբ զբաղվում են կամավոր ընկերությունները։ Սակայն, ինչպես բազմիցս նշել է թուրք հասարակայնությունը, թուրքական ժողովրդական երգերի ուսումնասիրությունը շատ դանդաղ է գնում։ Դա բացատրվում է նյութական միջոցների խիստ սղությամբ։

Վերջին տարիներին մեծ տարածում է ստացել ջազը։

Թուրք կոմպոզիտորները հաճախ ջազի համար հարմարեցնում են ժողովրդական մասսայական երգերը։ Մեծ քաղաքներում, հատկապես Ստամբուլում և Իզմիրում, հաճախ են ելույթ ունենում արտասահմանյան ջազերը։

Նկատելիորեն ամրապնդվել են Թուրքիայի և ՍՍՀՄ-ի կուլտուրական կապերը։ Թուրքիայում եղել են Մոսկվայի Մեծ թատրոնի, ինչպես և Մոսկվայի, Լենինգրադի, Բաքվի տարբեր թատրոնների արտիստներ։ Թուրքիայում հաջողությամբ ելույթներ են ունեցել Դավիթ Օյստրախը, Յակով Զակը, Իգոր Բեզրոդնին, Ալեքսանդր Օգնիվցևը, Ռաշիդ Բեյբութովը, Նիյազի Հուսեյնովը։

Սովետական Միությունում հաջողությամբ հանդես են եկել ջութակահարներ Սունա Կանը, Այլա Էրդուրանը, երգիչներ Սևդա Այդանը, Լեյլա Գենչերը, կոմպոզիտոր Ուլվի Ջեմալ Էրկինը, դաշնակահարուհի Իդիլ Բիրեթը։

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

1961 թվականի սահմանադրությունը բժշկական ծառայությունը համարում է պետության կարևորագույն պարտականություններից մեկը։



1962 թվականին Թուրքիայում կար 613 պետական ու մասնավոր բուժական հաստատություն 50135 մահճակալով։ Այդ նույն տարում երկրում կար 12418 բժիշկ, 2095 ստոմատոլոգ, 1345 դեղագործ, 2095 մանկաբարձ, 1696 բուժքույր։

Չնայած առողջապահության զարգացման գործում ձեռք բերած որոշակի հաջողություններին, երկրում, մանավանդ գավառներում, չեն բավականացնում բժիշկները, հիվանդանոցները։ Բնակչության բուժսպասարկման գործը վատ է դրված Թուրքիայի հատկապես հեռավոր շրջաններում։ Այսպես, Հակյարիի վիլայեթում 1962 թվականին կար ընդամենը 2 հիվանդանոց 30 մահճակալով, 5 բժիշկ և 1 մանկաբարձուհի։

Թույլ է դրված մայրության և մանկության պահպանությունը։ Դրա հետևանքով երեխաների մահացությունը Թուրքիայում մեծ չափերի է հասնում։ Ըստ վերջին վիճակագրական տվյալների, 1000 նորածնից մեռնում է 165-ը։

Շատ կյանքեր է տանում տուբերկուլյոզը։ Ինչպես 1963 թվականին հայտարարեց առողջապահության և սոցիալական ապահովության մինիստրը, 1,5 միլիոն մարդ հիվանդ է տուբերկուլյոզով, երկրում չեն բավականացնում որակյալ բժշկական կադրերը և դիսպանսերները։ 1963 թվականին Թուրքիայում կար 114 տուբերկուլյոզային դիսպանսեր՝ 14 հազար մահճակալով։

Տուբերկուլյոզից բացի, Թուրքիայում տարածված են մալարիան, սիֆիլիսը, տրախոման։ 1962 թվականին երկրում ցուցակագրված էր տրախոմայով հիվանդ 2 միլիոն մարդ, սիֆիլիսով հիվանդ՝ 31 հազար։ 1962 թվականին ծաղկի դեմ կատարվել է 11 միլիոն պատվաստում, դիֆտերիայի դեմ՝ 415 հազար պատվաստում։

Եզակի չեն ծաղիկով, սիբիրախտով, ժանտախտով, խոլերայով և բորոտությամբ հիվանդները։ 1963 թվականին երկրում ցուցակագրված էր ավելի քան 20 հազար բորոտ, որոն-
տարում երկրում ցուցակագրված էր նյարդային սիստեմի
ցից 3 հազար մարդ գտնվում էր հսկողության տակ։ Այդ նույն
խախտում ունեցող 4 միլիոն մարդ։

*1962 թվականին առողջապահության մինիստրության կարիքներին հատկացվել էր 493 հազար լիրա։*

*Տնտեսության զարգացման 1963—1967 թվականի հնգամյա պլանով նախատեսված է առողջապահության կարիքներին հատկացնել 1347 միլիոն լիրա կամ ամբողջ կապիտալ ներդրումների 2,3 տոկոսը։*

*1925 թվականից ի վեր Թուրքիայում երկու տարին մեկ անգամ տեղի է ունենում ազգային բժշկական կոնգրես։*

*Թուրքիայում գոյություն ունեն որոշակի մասնագիտության բժիշկների ընկերություններ, օրինակ, վիրաբույժների, ուրոլոգների, գինեկոլոգների, հոգեբույժների, օրթոպեդների, միկրոբիոլոգների և այլն։ Այդ ընկերություններից շատերը լույս են ընծայում հատուկ պարբերական գրականություն։*

*Բժիշկներ են պատրաստում բարձրագույն բժշկական դպրոցը, բարձրագույն ռազմա-բժշկական դպրոցը և Ստամբուլի, Անկարայի ու Իզմիրի համալսարանների բժշկական ֆակուլտետները։ Բժշկական աշխատողների որոշ մասը կրթություն է ստանում կամ ուսումն ավարտում է արտասահմանում։ Մանկաբարձուհիներ, բուժքույրեր, դեղագործներ ու ստոմատոլոգներ պատրաստելու համար կան հատուկ դպրոցներ։*

*Անկարայի կենտրոնական ինստիտուտում արտադրվում են վակցինաներ և բուժշիճուկներ՝ դիֆտերիայի, սկառլատինայի, տիֆի, ծաղկի, տուբերկուլյոզի, տետանուսի (սառըքնյակ), ժանտախտի, խոլերայի դեմ պայքարելու համար։ Թուրքիան զգալի քանակությամբ դեղորայք, այդ թվում՝ անտիբիոտիկներ է ներմուծում արտասահմանից։*

*Սանիտարական ծառայությունը ղեկավարում է գլխավոր տեսուչը։ Առողջապահության մինիստրությանը կից կա բարձրագույն սանիտարական խորհուրդ։*



# ՍՊՈՐՏ

*Թուրքիայում սպորտի զարգացումը ղեկավարում է ֆիզիկական կուլտուրայի գլխավոր վարչությունը։ Վարչությանը կից գոյություն ունեն հատուկ հանձնաժողովներ (ազատ և կլասիկ ըմբշամարտի, ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի, թենիսի, հրաձգության, հեծելակային, բռնցքամարտի, ծանր ու թեթև ատլետիկայի, լողի, ջրացատկորդների, առագաստային սպորտի, թիավարության և այլն) ինչպես նաև կենտրոնական գործադիր հանձնաժողով, որի կազմի մեջ մտնում են տարբեր մինիստրությունների հինգ ներկայացուցիչներ և լուսավորության մինիստրության հինգ ներկայացուցիչ։*

*Երկրի ամեն մի վարչական շրջանում սպորտային աշխատանքի պատասխանատվությունը դրված է տվյալ շրջանի ղեկավարի վրա՝ սկսած նահանգապետից մինչև ավագը, որը պարտավոր է շրջանի բյուջեի եկամուտների մի մասը հատկացնել սպորտի կարիքներին, հետևել սպորտային կառուցվածքներին և հսկել սպորտային ակումբներում և դպրոցներում կատարվող աշխատանքներին։*

*1962 թվականին Թուրքիայում գործում էր 1723 սպորտային ակումբ, այդ թվում՝ 1335-ը երիտասարդական։ Սպորտսմենների թիվը դրանցում կազմում էր 127605 մարդ։ Սպորտային ակումբները միավորում են սպորտի զանազան ձևերի և խաղերի սպորտսմեններին։ Ակումբները իրենց կազմով հաճախ փոքրաթիվ են և ֆինանսական լուրջ դժվարություններ են կրում։ Նայած թիմերի և սպորտսմենների հաջողություններին, ակումբները մտնում են սպորտային լիգաների այս կամ այն խմբի մեջ։*

*Ստորև թվարկված են Թուրքիայի սպորտային հիմնական ակումբները։*

«Գալաթասարայ» *(Ստամբուլ). Հիմնվել է 1908 թվականին։ Ակումբում աշխատում են ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի, լողի, թիավարության և առագաստային սպորտի սեկցիաներ։ Ակումբն ունի իր սեփական ստադիոնը «Մեջիդիեկեյ» անունով։*

«Ֆեներբախչե» (Ստամբուլ). ստեղծվել է 1907 թվականին։ Ակումբում գործում են ֆուտբոլի, բասկետբոլի, թեթև ատլետիկայի, վոլեյբոլի, բռնցքամարտի, ըմբշամարտի, լողի, թիավարության, առագաստային սպորտի սեկցիաներ։ Ակումբին է պատկանում «Կադիկեյ» ստադիոնը։

Բեշիկթաշի մարմնամարզական ակումբը (Ստամբուլ) ստեղծվել է 1909 թվականին։ Մարմնամարզականից բացի, բացված են ֆուտբոլի, բռնցքամարտի, ըմբշամարտի, թեթև ատլետիկայի և բասկետբոլի սեկցիաներ։

Ակումբի ստադիոնը գտնվում է Բեշիկթաշում։

Բեյկոզի երիտասարդական սպորտային ակումբը (Ստամբուլ) հիմնվել է 1908 թվականին։ Աշխատում են ֆուտբոլի, ըմբշամարտի, լողի և բասկետբոլի սեկցիաներ։

Ստամբուլի երիտասարդական ակումբը ստեղծվել է 1925 թվականին։ Ակումբի անդամ կարող են լինել միայն Ստամբուլի լիցեյի սովորողները։ Աշխատում է միայն ֆուտբոլային սեկցիան։

«Կասիմփաշա» երիտասարդական ակումբը (Ստամբուլ) ունի միայն երկու սեկցիա՝ ֆուտբոլի և ըմբշամարտի։

«Ֆերիկեյ» երիտասարդական ակումբը (Ստամբուլ) հիմնվել է 1947 թվականին։ Աշխատում է միայն ֆուտբոլային սեկցիան։

«Անկարագյուջու» երիտասարդական ֆուտբոլային ակումբը (Անկարա) հիմնվել է 1910 թվականին։

«Դեմիրսպոր» երիտասարդական ակումբը (Անկարա) հիմնվել է 1932 թվականին։ Միավորում է երկաթուղայիններին։ Ակումբում գործում են ֆուտբոլի, ըմբշամարտի, թեթև ատլետիկայի, ձիասպորտի սեկցիաներ։

«Գենչլերբիրլիկ» երիտասարդական սպորտային ակումբը (Անկարա) հիմնվել է 1923 թվականին։ Աշխատում են ֆուտբոլի, սեղանի թենիսի, վոլեյբոլի, բասկետբոլի, թենիսի, բռնցքամարտի, լողի, թեթև ատլետիկայի, հեծանվային սպորտի սեկցիաները։

«Ալթայ» երիտասարդական ակումբը (Իզմիր) հիմնվել է 1914 թվականին։



Իզմիրի երիտասարդական ակումբն ստեղծվել է 1923 թվականին։ 1930 թվականին միացավ «Ալթինորդու» սպորտային ակումբին։ Աշխատում են ֆուտբոլի, բռնցքամարտի, բասկետբոլի, ձիասպորտի և ջրային սպորտի բոլոր ձևերի սեկցիաները։

«Կարշիյակա» սպորտային ակումբը Իզմիրի հնագույն ակումբն է, հիմնվել է 1912 թվականին։ Գործում են ֆուտբոլի և ջրային սպորտի սեկցիաները։

Ամեն տարի սպորտի բոլոր ձևերից անցկացվում են լիգաների, օկրուգների և սպորտային ֆեդերացիաների առաջնության մրցություններ։

Թուրքիայում ստեղծված են սպորտային լիգաներ, որոնց ընդգրկված են զանազան ուսումնական հաստատությունների սպորտսմենները։ Այդ լիգաները կանոնավոր կերպով մրցություններ են անցկացնում լիցեյների, կոլեջների և բարձրագույն ուսումնական հաստատությունների սովորողների միջև, կազմակերպում սպորտային առաջնություններ։

Ամեն տարի մայիսի 19-ին երկրում հանդիսավորությամբ նշվում է «Երիտասարդության և սպորտի տոնը» («Գենչլիկ վե սպոր բայրամը»)։

Թուրքիայի սպորտսմեններն զբաղվում են սպորտի ավելի քան 20 ձևով։ Սակայն առավել տարածվածներն են ըմբշամարտը, բռնցքամարտը, թեթև ատլետիկան, ֆուտբոլը, բասկետբոլը, վոլեյբոլը և թենիսը։

Թուրքական ըմբիշները դեռ երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ բավականին հաջողությամբ էին հանդես գալիս միջազգային մրցություններում։ Այսպես, դեռ Բեռլինի XI օլիմպիական խաղերում (1936 թ.) նրանք նվաճեցին ոսկե և բրոնզե մեդալներ։ Նրանք լուրջ հաջողությունների հասան նաև 1946 թվականին՝ ըմբշամարտի Եվրոպայի չեմպիոնատում (Ստոկհոլմում), 1962 թվականին՝ կլասիկ և ազատ ըմբշամարտի համաշխարհային վեցերորդ չեմպիոնատում, որը տեղի ունեցավ Տոլիդոյում (ԱՄՆ), և Տոկիոյի օլիմպիադայում՝ 1964 թվականին։

Թուրքիայում մեծ մասսայականություն ունի ֆուտբոլը։ Ֆուտբոլի ֆեդերացիան հիմնվել է 1923 թվականին։

Թուրքիայի առաջատար ֆուտբոլային թիմերն են «Ֆեներբախչեն» և «Գալաթասարայը»։ Ֆուտբոլի գծով Թուրքիայի առաջնության մրցումներին 1961 թվականին չեմպիոն դարձավ «Ֆեներբախչեն», իսկ 1962 և 1963 թվականներին՝ «Գալաթասարայը»։

Թուրքական ֆուտբոլիստները բազմիցս հանդիպել են սովետական ֆուտբոլիստների հետ։ Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը նրանք հանդիպել են 7 անգամ, պատերազմից հետո, հատկապես 50—60-ական թվականներին՝ 19 անգամ։ Թուրքական ֆուտբոլը ներկայացնում են «Գալաթասարայը», «Ֆեներբախչեն», «Բեշիկթաշը», «Գյունեշսպորը»։

Ամեն տարի Թուրքիայում անց են կացվում երկրի բռնցքամարտի առաջնության մրցություններ։

Թուրքիայում ամեն տարի անց են կացվում «Գյոլ կուպասի» գավաթի թեթևատլետիկական մրցություններ, որոնց մասնակցում են երկրի ամենաուժեղ թեթև ատլետները։ Աթաթյուրքի անվան վազքի մրցումներ և թեթև ատլետիկայի առաջնության մրցումներ։ Թեթև ատլետիկայի ասպարեզում ազգային գրեթե բոլոր ռեկորդները սահմանել են «Ֆեներբախչեի» ակումբի անդամները։

Գնալով ավելի լայն տարածում է ստանում բասկետբոլը։ Երկրի լավագույն բասկետբոլային թիմերն են՝ «Ֆեներբախչեն», «Գալաթասարայը», «Դարյուշշաֆական» և Ստամբուլի տեխնիկական համալսարանի թիմը։ 1961 թվականին երկրի բասկետբոլի առաջնության չեմպիոն դարձավ «Դարյուշշաֆակա» թիմը։

Վերջին տարիներին թուրքական բասկետբոլիստները ավելի հաճախակի են ելույթ ունենում միջազգային ասպարեզում։

Թուրքիայի երիտասարդությունը հետաքրքրություն է ցուցաբերում վոլեյբոլի նկատմամբ։ 1962 թվականին վոլեյբոլի գծով երկրի չեմպիոններ դարձան «Գալաթասարայի» տղա-



մարդկանց ու կանանց թիմերը։ 1962 թվականի մայիսին Անկարայում անցկացվեցին բռնցքամարտի միջազգային մրցություններ, որոնց մասնակցեցին թուրքական, սովետական, ֆրանսիական, իրանական, դանիական և իսրայելական սպորտսմենները։

Տրադիցիոն է ձիասպորտը։ 1963 թվականին Թուրքիայում ձիասպորտի մրցություններ անցկացվեցին Ստամբուլում, Անկարայում և Սիիրտում։

Որոշ զարգացում են ստացել թենիսը, հեծանվային և լեռնադահուկային սպորտը։

# ՕՐԱՑՈՒՅՑՆԵՐԸ

Ժամանակակից Թուրքիայում ամենից ավելի օգտագործվում է Գրիգորյան («Միլադի») օրացույցը։ Բացի դրանից, այնտեղ երբեմն օգտվում են լուսնային հիջրայի («Կամերի»), արևային հիջրայի («Շեմսի») և լուսնաարևային («Ռումի») օրացույցներից։

Գրիգորյան օրացույցը Թուրքիայում պաշտոնապես ընդունվել է կառավարության կողմից 1925 թվականի դեկտեմբերի 16-ին և գործածության մեջ է մտել 1926 թվականի հունվարի 1-ից։

Լուսնային հիջրայի օրացույցը։ Այդ օրացույցի հիմքում դրված է լուսնային 12 ամսվանից բաղկացած տարին։ Լուսնային տարվա տևողությունը կազմում է մոտավորապես 354 օր։ Այսպիսով, դա արևային օրից կարճ է գրեթե 11 օրով։ Լուսնային ամսվա երկարության համար վերցված է երկու նորալուսնով սահմանափակված ժամանակաշրջան, այսինքն՝ 29,5306 օր։ Քանի որ լուսնային օրացույցի ամսվա միջին տևողությունը, որ ընդունված է 29,5 օր[1], նրա փաստական տևողությունից պակաս է 0,0306 օրով, ամսվա աղյուսակային սկիզբը, որ պետք է համընկնի նորալուսնին, սկսում է աստիճանաբար ետ մնալ։ Ութ տարվա ընթացքում տարբերությունը կազմում է մոտավորապես երեք օր։ Դրա վերացման համար արաբական ժամանակաբանները մտցրին երեսնամյա ցիկլ՝ 11 նահանջ տարիներով

[1] Որպեսզի ամիսները պարունակեին ամբողջական օրեր, պայմանավորվեցին մտցնել օրերի թվի փոփոխական հերթափոխություն ամսվա մեջ՝ 29 և 30։



(355-ական օրերով), որոնք ընկնում են 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ, 13-րդ, 16-րդ, 18-րդ, 21-րդ, 24-րդ, 26-րդ և 29-րդ տարիներին։

Այսպիսով, որպեսզի որոշել, թե հիջրայի լուսնային տարին նահա՞նջ է արդյոք, պետք է տվյալ տարվա հերթական թիվը բաժանել 30-ի, և եթե բաժանելուց հետո մնացորդը հավասար լինի վերը նշված 11 թվերից որևէ մեկին, ապա այդ տարին նահանջ է։

Լուսնային հիջրայի թուրքական օրացույցում կիրառվում էր ութամյա ցիկլ, որում սահմանված էին երեք նահանջ տարիներ՝ յուրաքանչյուր ցիկլի 2-րդ, 5-րդ և 7-րդ տարիները։ Որոշելու համար, թե թուրքական օրացույցի տվյալ տարին նահանջ է, թե ոչ, պետք է տվյալ տարվա հերթական համարը բաժանել 8-ի, և եթե բաժանումից հետո մնացորդը հավասար է 2-ի, 5-ի կամ 7-ի, ապա այդ տարին նահանջ է։

Թուրքիայում ամենից ավելի տարածված էր արաբական հիջրայի օրացույցը՝ երեսնամյա ցիկլով։

Մուսուլմանական դարաշրջանի սկզբնաթիվը ընդունված է մ. թ. 622 թվականի հուլիսի 16-ը։

Լուսնային հիջրայի օրացույցի տարիները մեր թվականության վերածելու համար (և ընդհակառակը) կարելի է օգտվել հետևյալ բանաձևերից՝

$$\Gamma = X - \frac{X}{33} + 622;$$

$$X = \Gamma - 622 + \frac{\Gamma - 622}{32},$$

որտեղ Γ-ն մեր թվականության տարին է,

X-ը լուսնային հիջրայի օրացույցի տարին է։

Այդ բանաձևերից օգտվելիս հնարավոր է անճշտություն ±1 տարի։

Թվականների ավելի ճշգրիտ փոխադրման անհրաժեշտության դեպքում պետք է օգտվել հատուկ սինխրոնիկ աղ-

ցուցակներից[1], որոնք ապահովում են մինչև ±1 օրվա ճշտություն։

Մի քանի թվականների համար մեկ օրվա տարբերությունը տեղի է ունենում այն պատճառով, որ լուսնային հիջրայի թուրքական օրացույցը, ինչպես և մուսուլմանական մյուս երկրների նման օրացույցները, ունեն իրենց սիստեմը։

Բանն այն է, որ լուսնային առաջին ամիսը (մուհարրամ) և լուսնային հիջրայի արաբական օրացույցի մնացած մյուս կենտ ամիսներն ունեն 30-ական օր, իսկ զույգերը՝ 29-ական. բացառություն է կազմում 12-րդ ամիսը (զու-լ-հիջ-ջա), որը նահանջ տարիներին ունի 30 օր, իսկ հասարակ տարիներին՝ 29 օր։ Իսկ լուսնային հիջրայի թուրքական օրացույցում օրերի թիվը մուհարրամում, ինչպես և մյուս ամիսներին, կարող է լինել և 29, և 30 օր։ Ուստի թվականները բացարձակապես ճիշտ փոխադրելու համար պետք է օգտվել այն աղյուսակներից, որոնք կազմված են ըստ թուրքական տարեկան օրացույցների։

*Արևային հիջրայի օրացույց։* Այս օրացույցում նույնպես թվականության սկիզբը ընդունված է մ. թ. 622 թվականը։ Հետագայում թվականների հաշիվը սկսեցին տանել ոչ թե ըստ լուսնային, այլ ըստ արևային տարվա։ Այդ պատճառով, եթե արևային հիջրայի առաջին տարիների հերթական համարները չէին տարբերվում լուսնային հիջրայի տարիների հերթական համարներից, ապա արդեն 28 թվականին ստեղծվեց 1 տարվա տարբերություն, որը յուրաքանչյուր 33 տարին մեկ ավելանում է մեկ տարով։ Մ. թ. 1965 թվականին արևային (1343/44 թ.) և լուսնային հիջրայի (1384/85 թ.) տարբերությունը կազմեց 41 տարի։

*Լուսնա-արևային օրացույց։* Լուսնային հիջրայի 1088 թվականի թեմուզի 20-ին (մ. թ. 1677 թվականի հուլիս) Թուրքիայում մտցվեց ֆինանսական լուսնա-արևային օրացույց, որը հայտնի է «Մալիե» անունով։ Դրա էությունն

[1] Տե՛ս **В. В. Цыбульский.** Современные календари стран Ближнего и Среднего Востока. Синхронистические таблицы и пояснения. М., 1964.



այն է, որ արաբական լուսնային հիջրայի 1088 թվականին սկսեցին ավելացնել այն տարիները, որոնք հաշված էին հուլիոսյան արևային օրացույցով։ Քանի որ արաբական լուսնային հիջրայի և նոր օրացույցի միջև ստեղծվել էր տարեկան մոտավորապես 11 օրվա տարբերություն, ապա տարիների հաշիվը հավասարեցնելու համար թուրքերը իրենց օրացույցում ամեն մի 33 տարուց հետո սկսեցին բաց թողնել մեկ տարի, այսինքն՝ երբ ամեն տարի 11 օր տարբերություն լինելուց հետո գոյանում էր մոտ մեկ տարի։ Ուստի «Մալիե» օրացույցում բաց էին թողել 1121-րդ, 1154-րդ, 1188-րդ, 1221-րդ և 1255-րդ տարիները։

1740 թվականի մարտի 29-ին սուլթան Մահմուդը որոշեց, որ «Մալիե» օրացույցի 1152 թվականից սկսած (դա համապատասխանում էր լուսնային հիջրայի 1153 թվականի սկզբին) ֆինանսական տարվա սկիզբը համարվում է ոչ թե մուհարրամի 1-ը, այլ մարտի 1-ը։

Ինչպես նշեցինք, թուրքերը, ընդհուպ մինչև 1256 թվականը, լուսնա-արևային հիջրայի ցիկլի ամեն 33 տարուց բաց էին թողել մեկ տարին։ Հերթական տարին, որ նույն պատճառով պետք է բաց թողնեին՝ 1289-րդ տարին էր, բայց քանի որ այդ տարին արդեն նախատեսված էր որպես Օտտոմանյան պետական պարտքի տոկոսների վճարման տարի, ուստի թուրքական կառավարությունը որոշեց արևային և լուսնային հիջրայի տարիների հավասարեցում չկատարել. այդ պատճառով լուսնային հիջրայի 1256 թվականից (մ. թ. 1840 թ.) սկսած սկսեց առաջանալ տարբերությունը։ Ըստ էության, Թուրքիայում մտցվեց ֆինանսական նոր (արևային) օրացույց, որը հայտնի է «Ռումի» անունով։ Բնական է, որ «Ռումի» օրացույցի տարիների հերթական համարները սկսեցին արաբական լուսնային հիջրայի տարիների հերթական համարներից և որ յուրաքանչյուր 33 տարվա մեջ տարբերությունը ավելացավ մեկ տարով։

Այսպիսով, մ. թ. 1965 թվականը համապատասխանում էր լուսնային հիջրայի 1384/85 թ., արևային հիջրայի 1343/44 թ., «Ռումի» օրացույցի 1380/81 թվականին։

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### Չափերի հին սիստեմը Թուրքիայում*

*Երկարության չափերը*

| | |
|---|---|
| Մարհալա | 45480 մ |
| Ֆարսախ | 5685 » |
| Կուլաչ | 1,89 » |
| Բինա արշին | 0,758 » |
| Չարշը արշին | 0,680 » |
| Էնդազա | 0,650 » |
| Ֆուտ | 0,316 » |

1 մ=1,319 բինա արշինի
1 մ=1,461 չարշը արշինի
1 մ=1,538 էնդազայի

*Մակերեսի չափերը*

| | |
|---|---|
| Բյույուկ դյոնյում | 2720 քառ. մ |
| Էսկի դյոնյում | 919,3 քառ. մ |
| Էվլեք | 0,5 էսկի դյոնյում |
| Էկրա | 0, 10878 հեկտար |

1 հեկտարը=10,779 էսկի դյոնյումի

*Կշռի չափերը*

| | |
|---|---|
| Չեքի | 225,798 կգ |
| Կանթար=44 օկկայի | 56,449 » |
| Ֆարդ=2 յուկենի | 16 » |
| Յուկեկ | 8 » |
| Բաթման=6 օկկայի | 7,697 » |
| Դիրհամ | 3,207 գ |

1 կգ=0,799 օկկայի

*Ծավալի չափերը*

| | |
|---|---|
| Խորանարդ արշին | 0,3432 խոր. մ |
| Քիլա | 37 լիտր |
| Շինիկ | 9,25 » |

* 1931 թվականի մարտին թուրքական կառավարությունը օրենք ընդունեց, որի համաձայն 1934 թվականից սկսած երկրում մտցվեց չափերի մետրական սիստեմ.



### 100 հազար մարդուց ավելի բնակիչ ունեցող քաղաքներ

| Քաղաքները | Բնակչությունը | Քաղաքները | Բնակչությունը |
|---|---|---|---|
| Ստամբուլ | 1719922 | Էսքիշեհիր | 153190 |
| Անկարա | 646151 | Ղազիայնթափ | 125386 |
| Իզմիր | 370923 | Կոնիա | 122704 |
| Ադանա | 230024 | Կայսերի | 102795 |
| Բուրսա | 153939 | | |

### 50 հազարից ավելի բնակիչ ունեցող քաղաքներ*

| Քաղաքները | Բնակչությունը | Քաղաքները | Բնակչությունը |
|---|---|---|---|
| Սվազ | 93849 | Բալըքեսիր | 61012 |
| Էրզրում | 91196 | Էլյազըգ | 60438 |
| Սամսուն | 87311 | Ուրֆա | 59910 |
| Մալաթիա | 84162 | Մանիսա | 59223 |
| Դիարբեքիր | 80645 | Մարաշ | 54646 |
| Ադափազարի | 80160 | Զոնգուլդակ | 54026 |
| Իզմիթ | 73705 | Տրապիզոն | 52680 |
| Մերսին | 68574 | Թարսուս | 51310 |
| Իսքենդերուն | 63736 | Անթալիա | 50963 |

* 1960 թվականի մարդահամարի տվյալներով

## Վարչա-տերիտորիալ բաժանումը

| Վիլայեթները | Վիլայեթի կենտրոնը | Բնակչությունը հազար մարդ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| Ադանա | Ադանա | 763 |
| Աղրի | Կարաքյոսե | 215 |
| Ամասիա | Ամասիա | 257 |
| Այդըն | Այդըն | 470 |
| Անթալիա | Անթալիա | 418 |
| Անկարա | Անկարա | 1317 |
| Արտվին | Արտվին | 134 |
| Աֆիոն-Կարահիսար | Աֆիոն-Կարահիսար | 461 |
| Բալըքեսիր | Բալըքեսիր | 671 |
| Բիթլիս | Բիթլիս | 129 |
| Բիլեջիկ | Բիլեջիկ | 146 |
| Բինգյոլ | Բինգյոլ | 131 |
| Բոլու | Բոլու | 354 |
| Բուրդուր | Բուրդուր | 130 |
| Բուրսա | Բուրսա | 695 |
| Գյումյուշանե | Գյումյուշանե | 243 |
| Դենիզլի | Դենիզլի | 420 |
| Դիարբեքիր | Դիարբեքիր | 401 |
| Երզնկա | Երզնկա | 246 |
| Զոնգուլդակ | Զոնգուլդակ | 570 |
| Էդիրնե | Էդիրնե | 270 |
| Էլյազըղ | Էլյազըղ | 278 |



| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| Էսքիշեհիր | Էսքիշեհիր | 389 |
| Էրզրում | Էրզրում | 575 |
| Թեքիրդաղ | Թեքիրդաղ | 275 |
| Թունջելի | Ղալան | 139 |
| Իզմիր | Իզմիր | 1066 |
| Իչել | Մերսին | 444 |
| Իսպարտա | Իսպարտա | 243 |
| Խաթայ | Անթաքիա | 441 |
| Խաքյարի | Չյոլեմերիկ | 68 |
| Կայսերի | Կայսերի | 482 |
| Կըրքլարելի | Կըրքլարելի | 242 |
| Կըրշեհիր | Կըրշեհիր | 185 |
| Կիրեսուն | Կիրեսուն | 333 |
| Կոնիա | Կոնիա | 987 |
| Կոջաելի | Իզմիթ | 297 |
| Հադըյաման | Հադըյաման | 235 |
| Ղազիանթեփ | Ղազիանթեփ | 438 |
| Ղարս | Ղարս | 545 |
| Մալաթիա | Մալաթիա | 396 |
| Մանիսա | Մանիսա | 657 |
| Մարաշ | Մարաշ | 390 |
| Մարդին | Մարդին | 354 |
| Մուղլա | Մուղլա | 300 |
| Մուշ | Մուշ | 167 |
| Յոզղաթ | Յոզղաթ | 402 |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| Նևշեհիր | Նևշեհիր | 187 |
| Նիգդե | Նիգդե | 324 |
| Չանաքքալե | Չանաքքալե | 338 |
| Չանքըրը | Չանքըրը | 242 |
| Չորում | Չորում | 448 |
| Ռիզե | Ռիզե | 250 |
| Սամսուն | Սամսուն | 652 |
| Սաքարիա | Ադապազարի | 362 |
| Սվազ | Սվազ | 674 |
| Սիիրթ | Սիիրթ | 233 |
| Սինոպ | Սինոպ | 250 |
| Ստամբուլ | Ստամբուլ | 1932 |
| Վան | Վան | 211 |
| Տոկաթ | Տոկաթ | 438 |
| Տրապիզոն | Տրապիզոն | 523 |
| Ուշակ | Ուշակ | 185 |
| Ուրֆա | Ուրֆա | 401 |
| Քաստամոնու | Քաստամոնու | 435 |
| Քյութահիա | Քյութահիա | 369 |
| Օրդու | Օրդու | 470 |



## Հողերի բաշխումն ըստ հանդակների

| Հանդակները | 1950 | | 1963 | |
|---|---|---|---|---|
| | հազար հեկտար | % | հազար հեկտար | % |
| Ցանքատարածություններ | 9868 | 12,7 | 15276 | 19,5 |
| Ցելեր | 4674 | 6,0 | 8637 | 11,1 |
| Պտղատու և խաղողի այգիներ, ձիթենու անտառներ | 1466 | 1,9 | 2207 | 2,6 |
| Մարգագետիններ և արոտավայրեր | 37806 | 48,7 | 28257 | 36,2 |
| Անտառներ և թփուտներ | 10418 | 13,4 | 10584 | 13,5 |
| Անօգտագործելի հողեր | 13466 | 17,3 | 13097 | 17,1 |

## Գյուղատնտեսական կուլտուրաների ցանքատարածությունները և բերքը

| Կուլտուրաները | Ցանքատարածությունները, հազար հեկտար | | | Բերքը, հազար տոննա | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 1948—1950 միջ-ինը | 1961 թվական | 1963 թվական | 1948—1950 թվական. | 1961 թվական | 1963 թվական |
| Հացահատիկային | 7735 | 12900 | 13146 | 7069 | 12691 | 17400 |
| Այդ թվում՝ | | | | | | |
| ցորեն | 4206 | 7717 | 7850 | 3630 | 7000 | 10000 |
| գարի | 1806 | 2786 | 2850 | 1725 | 2970 | 4288 |
| եգիպտացորեն | 566 | 705 | 670 | 635 | 1060 | 990 |
| տարեկան | — | 652 | 693 | — | 800 | 900 |
| բրինձ | 24 | 59 | 55 | 54 | 140 | 130 |
| Լոբազգիներ | 397 | 576 | 574 | 330 | 574 | 573 |
| Տեխնիկական կուլտուրաներ | 743 | 1442 | 1504 | — | — | — |
| Այդ թվում՝ | | | | | | |
| բամբակ | 301 | 649 | 628 | 78 | 200 | 246 |
| ծխախոտ | 124 | 141 | 150 | 95 | 110 | 140 |
| շաքարի ճակնդեղ | 46 | 134 | 126 | 718 | 2860 | 2830 |
| կարտոֆիլ | 75 | 160 | 140 | — | 1400 | 1600 |

## Գյուղատնտեսական մեքենաների պարկը

| Մեքենաները | 1948 թվական | 1958 թվական | 1963 թվական |
|---|---|---|---|
| Տրակտորներ | 1756 | 42527 | 49366 |
| Տրակտորային գութաններ | 1472 | 45774 | 52062 |
| Շարքացաններ | 14688 | 38669 | 56779 |
| Կալսիչներ | 430 | 2180 | 3080 |
| Կոմբայններ | 268 | 6592 | 5931 |
| Սեպարատորներ (կաթի) | 33080 | 71900 | 85842 |
| Պոմպեր (ոռոգման համար) | 1291 | 28500 | 51614 |

## Արդյունաբերական արտադրանքի հիմնական տեսակների թողարկումը

| Արտադրանքի տեսակը | Չափման միավորները | 1938 թվական | 1950 թվական | 1955 թվական | 1960 թվական | 1963 թվական |
|---|---|---|---|---|---|---|
| Էլեկտրաէներգիա | միլիոն կվտ-ժամ | 312,0 | 790,0 | 1453,0 | 2815,0 | 3784,0 |
| Քարածուխ | միլիոն տոննա | 2,6 | 4,4 | 5,5 | 6,3 | 6,8 |
| Գորշածուխ (լիգնիտ) | —»— —»— | 0,16 | 1,2 | 2,4 | 3,7 | 4,8 |
| Նավթ | հազար տոննա | — | 17,0 | 202,0 | 362,0 | 745,0 |
| Երկաթի հանքաքար | —»— —»— | 73,0 | 234,0 | 874,0 | 796,0 | 749,0 |
| Քրոմի հանքաքար | —»— —»— | 211,0 | 442,0 | 649,0 | 552,0 | 444,0 |
| Մանգանի հանքաքար | —»— —»— | — | 32,0 | 50,0 | 42,0 | 20,0 |
| Չուգուն և ֆերրոձուլվածքներ | —»— —»— | — | 111,0 | 201,0 | 248,0 | 210,0 |
| Պողպատ բոլվանկաներով | —»— —»— | — | 91,0 | 188,0 | 266,0 | 331,0 |
| Պղինձ սև | —»— —»— | 2,0 | 12,0 | 24,0 | 26,0 | 25,0 |
| Ցեմենտ | —»— —»— | 275,0 | 395,0 | 816,0 | 2040,0 | 2723,0 |
| Ծծումբ | —»— —»— | — | 6,0 | 12,0 | 17,0 | 19,0 |
| Թուղթ | —»— —»— | 9,0 | 18,0 | 47,0 | 56,0 | 108,0 |
| Շաքար | —»— —»— | 43,0 | 137,0 | 255,0 | 568,0 | 473,0 |
| Բամբակյա գործվածքներ | միլիոն մետր | — | 152,0 | 370,0 | 517,0 | 543,0 |
| Բրդյա գործվածքներ | —»— —»— | — | 9,0 | 19,0 | 22,0 | 24,0 |



## Գյուղատնտեսական գործիքների և մեքենաների թիվը

| Գործիքների և մեքենաների տեսակները | 1938 թվական | 1960 թվական | 1962 թվական | 1963 թվական |
|---|---|---|---|---|
| Կարասապաններ | 2046417 | 1991259 | 2087025 | 1963632 |
| Գութաններ (տարբեր տեսակների) | 1060854 | 1159332 | 1210033 | 1237298 |
| Կուլտիվատորներ | 13473 | 20088 | 23660 | 17869 |
| Ցաքաններ | 430495 | 463461 | 513346 | 505591 |
| Տրակտորներ | 42527 | 42136 | 43747 | 50844 |
| Տրակտորային գութաններ | 45774 | 47080 | 47143 | 42062 |
| Տրակտորային կուլտիվատորներ | 5248 | 6134 | 5928 | 5852 |
| Տրակտորային ցաքաններ | 24919 | 25395 | 27483 | 31421 |
| Հնձիչներ | 24918 | 24245 | 26044 | 27451 |
| Դոլեններ (հարմարանք կալսելու համար) | 2007828 | 2202453 | 2375824 | 2262209 |
| Կոմբայններ | 6592 | 5554 | 6072 | 5931 |
| Կալսիչներ | 2180 | 2536 | 2549 | 3080 |
| Խուրձկապներ | 23605 | 28498 | 36795 | 41468 |
| Շարքացաններ հացահատիկային (ձիաքարշ) | 19857 | 26624 | 30610 | 30884 |
| Շարքացաններ հացահատիկային (տրակտորային) | 8169 | 8343 | 9264 | 8724 |
| Ջոկիչ մեքենաներ (հացահատիկի համար) | 1286 | 1415 | 1541 | 1681 |
| Ինկուբատորներ | 558 | 1259 | 882 | 904 |
| Կենտրոնախույս պոմպեր | 10478 | 11814 | 14966 | 13775 |
| Ջիպեր | 811 | 934 | 1225 | 1593 |
| Բեռնատար ավտոմեքենաներ | 745 | 710 | 1068 | 1168 |

## Արտահանության կառուցվածքը

| Հոդվածները | 1950 թվական | | | 1957 թվական | | | 1960 թվական | | | 1961 թվական | | | 1962 թվական | | | 1963 թվական | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հազար տոննա | միլիոն թուրքական լիրա | % | հազար տոննա | միլիոն թուրքական լիրա | % | հազար տոննա | միլիոն թուրքական լիրա | % | հազար տոննա | միլիոն թուրքական լիրա | % | հազար տոննա | միլիոն թուրքական լիրա | % | հազար տոննա | միլիոն թուրքական լիրա | % |
| Ընդամենը | 985,3 | 737,6 | 100,0 | 1741,5 | 966,7 | 100,0 | 2158,5 | 1721,2 | 100,0 | 2057,7 | 3120,7 | 100,0 | 2317,9 | 3430,7 | 100,0 | 2131,0 | 3312,8 | 100,0 |
| Այդ թվում ծխախոտ | 50,8 | 170,8 | 23,1 | 88,5 | 388,8 | 40,2 | 58,0 | 316,2 | 18,4 | 88,4 | 784,7 | 25,1 | 90,7 | 865,6 | 25,2 | 44,6 | 600,8 | 19,2 |
| մրգեր և ընկույզներ | 146,6 | 141,9 | 19,2 | 127,4 | 198,5 | 20,5 | 190,6 | 467,7 | 27,2 | 218,7 | 722,1 | 23,1 | 212,0 | 851,7 | 24,8 | 208,2 | 804,8 | 25,7 |
| բամբակ—թել | 77,9 | 195,6 | 26,6 | 61,3 | 116,3 | 12,0 | 87,8 | 285,6 | 16,6 | 99,1 | 520,6 | 16,7 | 115,6 | 580,7 | 16,9 | 148,2 | 730,5 | 23,3 |
| հացահատիկ | 65,1 | 18,2 | 2,5 | 12,3 | 6,5 | 0,7 | 91,1 | 27,3 | 1,6 | 89,0 | 53,9 | 1,7 | 10,7 | 12,3 | 0,4 | 71,4 | 40,4 | 1,3 |
| կենդանի անասուն (հազար գլուխ) | 558,5 | 23,9 | 3,2 | 67,7 | 6,3 | 0,6 | 387,8 | 41,2 | 2,4 | 731,0 | 133,1 | 4,3 | 1099,2 | 170,6 | 4,9 | 955,1 | 154,7 | 4,9 |
| բուրդ, փետուր, մազ | 9,7 | 31,7 | 4,3 | 3,5 | 40,8 | 4,2 | 10,7 | 71,9 | 4,2 | 12,0 | 151,2 | 4,8 | 9,9 | 107,8 | 3,1 | 13,0 | 156,7 | 5,0 |
| կաշի և նրանից պատրաստված ապրանքներ | 6,5 | 16,8 | 2,3 | 2,0 | 6,0 | 0,6 | 8,4 | 35,3 | 2,0 | 8,0 | 65,9 | 2,1 | 6,3 | 54,8 | 1,6 | 6,9 | 57,9 | 1,8 |
| ձուկ և ձկնամթերք | 4,0 | 2,8 | 9,4 | 19,6 | 12,7 | 1,3 | 11,1 | 16,4 | 0,9 | 12,5 | 27,9 | 0,9 | 10,5 | 25,4 | 0,7 | 8,8 | 25,3 | 0,8 |
| յուղատու սերմեր | 19,6 | 59,7 | 8,1 | 6,4 | 7,7 | 0,8 | 49,2 | 37,3 | 1,6 | 44,1 | 47,8 | 1,5 | 25,7 | 35,1 | 1,0 | 24,2 | 25,4 | 0,8 |
| շաքար և շաքարամթերքներ | 0,09 | 0,08 | 0,0 | 27,3 | 10,2 | 1,0 | 226,7 | 73,3 | 4,3 | 256,1 | 157,0 | 5,0 | 163,5 | 75,1 | 2,2 | 74,8 | 104,0 | 3,3 |
| հանքաքարեր | 384,9 | 34,3 | 4,6 | 1122,6 | 82,9 | 8,6 | 732,1 | 81,3 | 4,7 | 686,2 | 130,5 | 4,2 | 558,5 | 105,8 | 3,1 | 249,9 | 52,4 | 1,7 |
| գունավոր մետաղներ (պղինձ) | 6,3 | 7,1 | 0,9 | 14,6 | 24,2 | 2,5 | 18,0 | 48,3 | 2,8 | 8,4 | 43,2 | 1,4 | 14,4 | 79,2 | 2,3 | 10,1 | 53,6 | 1,7 |

## Ներմուծության կառուցվածքը

| Ապրանքները | 1950 թվականին | | | 1957 թվականին | | | 1960 թվականին | | | 1961 թվականին | | | 1962 թվականին | | | 1963 թվականին | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հազար մետր. տոննա | միլիոն արտ. ռուբլի | % | հազար մետր. տոննա | միլիոն արտ. ռուբլի | % | հազար մետր. տոննա | միլիոն արտ. ռուբլի | % | հազար մետր. տոննա | միլիոն արտ. ռուբլի | % | հազար մետր. տոննա | միլիոն արտ. ռուբլի | % | հազար մետր. տոննա | միլիոն արտ. ռուբլի | % |
| Ընդամենը | 148,3 | 799,8 | 100,0 | 2342,5 | 1111,9 | 100,0 | 2161,9 | 2213,7 | 100,0 | 3120,9 | 4585,1 | 100,0 | 4483,1 | 5599,8 | 100,0 | 5455,4 | 6216,1 | 100,0 |
| Այդ թվում | | | | | | | | | | | | | | | | | | |
| մեքենաներ և սարքավորում | 102,5 | 273,4 | 34,2 | 89,5 | 350,5 | 31,5 | 279,2 | 986,5 | 44,5 | 113,4 | 1793,6 | 39,1 | 182,8 | 2252,9 | 40,2 | 177,5 | 2469,6 | 39,7 |
| սև մետաղներ | 215,9 | 97,8 | 12,2 | 111,1 | 84,2 | 7,6 | 280,4 | 241,5 | 10,9 | 217,3 | 359,8 | 7,8 | 262,1 | 430,7 | 7,7 | 432,0 | 583,9 | 9,4 |
| նավթ և նավթամթերք | 506,7 | 58,7 | 7,3 | 1052,0 | 149,1 | 13,4 | 1271,4 | 256,0 | 11,6 | 1447,2 | 468,7 | 10,2 | 3092,9 | 694,5 | 12,4 | 3224,0 | 599,0 | 9,6 |
| կաուչուկ և իրեր (կաուչուկից) | 6,9 | 19,2 | 2,4 | 13,4 | 44,8 | 4,0 | 22,5 | 146,0 | 6,6 | 17,3 | 196,6 | 4,3 | 22,9 | 245,6 | 4,4 | 26,1 | 249,4 | 4,0 |
| քիմիական նյութեր և ներկեր | 33,9 | 22,9 | 2,9 | 92,2 | 37,8 | 3,4 | 94,9 | 126,7 | 5,7 | 86,2 | 211,1 | 4,6 | 117,9 | 272,1 | 4,9 | 152,6 | 226,2 | 3,6 |
| գեղորայք | 0,9 | 16,7 | 2,1 | 0,9 | 24,7 | 2,2 | 0,5 | 23,9 | 1,1 | 0,7 | 43,5 | 0,9 | 0,4 | 22,3 | 0,4 | 0,4 | 30,4 | 0,5 |
| թուղթ, ստվարաթուղթ, ցելյուլոզ | 25,5 | 2,8 | 0,3 | 29,0 | 24,3 | 2,2 | 26,8 | 33,0 | 1,5 | 37,4 | 80,1 | 1,7 | 47,6 | 86,6 | 1,5 | 59,2 | 103,3 | 1,7 |
| բուրդ, բրդյա գործվածքներ և թել | 3,3 | 27,1 | 3,4 | 2,9 | 19,5 | 1,7 | 7,3 | 69,5 | 3,1 | 8,9 | 144,7 | 3,1 | 11,1 | 179,2 | 3,2 | 11,6 | 196,8 | 3,2 |
| սուրճ, թեյ | 8,5 | 22,5 | 2,8 | 4,6 | 17,8 | 1,6 | 5,7 | 28,1 | 1,3 | 6,8 | 70,7 | 1,5 | 5,2 | 49,3 | 0,9 | 3,0 | 28,2 | 0,4 |
| լուցկի, կերամիկա, ապակի, նրանցից պատրաստված իրեր | 19,3 | 14,0 | 1,7 | 31,2 | 28,5 | 2,5 | 21,6 | 19,8 | 0,9 | 42,5 | 64,1 | 1,4 | 36,7 | 77,7 | 1,4 | 21,9 | 48,2 | 0,8 |
| պարարտանյութեր | 25,1 | 5,0 | 0,6 | 42,8 | 8,0 | 0,7 | 42,8 | 5,3 | 0,2 | 178,9 | 60,5 | 1,3 | 203,9 | 76,6 | 1,3 | 89,2 | 50,2 | 0,8 |
| գունավոր մետաղներ և նրանցից պատրաստված իրեր | 12,8 | 21,6 | 2,7 | 5,1 | 12,9 | 1,1 | 13,8 | 46,5 | 2,1 | 10,9 | 61,3 | 1,3 | 14,8 | 93,0 | 1,6 | 15,1 | 83,5 | 1,3 |
| փայտ, փայտանյութ | 128,4 | 18,7 | 2,3 | 39,9 | 36,5 | 3,3 | 12,8 | 4,1 | 0,2 | 8,5 | 27,0 | 0,6 | 41,3 | 23,2 | 0,4 | 18,9 | 13,9 | 0,2 |
| Հացահատիկ | 224,5 | 57,7 | 7,2 | 481,7 | 113,5 | 10,2 | 92,2 | 24,9 | 1,1 | 876,2 | 580,4 | 12,7 | 690,3 | 457,5 | 8,2 | 821,8 | 542,0 | 8,7 |

## Արտահանությունն ըստ երկրների

| Երկրները | 1950 թվական միլիոն թուր-քական լիրա | 1950 թվական % | 1957 թվական միլիոն թուր-քական լիրա | 1957 թվական % | 1960 թվական միլիոն թուր-քական լիրա | 1960 թվական % | 1961 թվական միլիոն թուր-քական լիրա | 1961 թվական % | 1962 թվական միլիոն թուր-քական լիրա | 1962 թվական % | 1963 թվական միլիոն թուր-քական լիրա | 1963 թվական % |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը | 737,6 | 100,0 | 966,6 | 100,0 | 1721,2 | 100,0 | 3120,7 | 100,0 | 3430,7 | 100,0 | 3312,8 | 100,0 |
| Այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| ԱՄՆ | 124,6 | 16,9 | 251,0 | 26,0 | 293,3 | 17,0 | 586,8 | 18,8 | 674,1 | 19,6 | 448,0 | 13,5 |
| ԳՖՀ | 155,9 | 21,1 | 124,9 | 12,9 | 262,7 | 16,4 | 459,7 | 14,7 | 606,7 | 17,7 | 556,7 | 16,8 |
| Անգլիա | 98,0 | 13,3 | 89,0 | 9,2 | 166,2 | 9,6 | 267,7 | 8,6 | 322,2 | 9,4 | 423,9 | 12,8 |
| Իտալիա | 40,6 | 5,5 | 87,2 | 9,0 | 159,8 | 9,3 | 307,7 | 9,8 | 463,5 | 13,5 | 390,7 | 11,8 |
| Ֆրանսիա | 31,8 | 4,3 | 65,6 | 6,8 | 98,4 | 5,7 | 214,7 | 6,9 | 126,4 | 3,7 | 144,9 | 4,4 |
| Հոլանդիա | 20,5 | 2,8 | 14,2 | 1,5 | 33,4 | 1,9 | 52,3 | 1,7 | 65,5 | 1,9 | 68,0 | 2,0 |
| Իսրայել | 0,3 | 0,0 | 17,3 | 1,8 | 31,3 | 1,8 | 60,5 | 1,9 | 48,5 | 1,4 | 54,6 | 1,6 |
| Ավստրիա | 29,7 | 4,0 | 14,7 | 1,5 | 27,3 | 1,6 | 44,0 | 1,4 | 30,7 | 0,9 | 23,2 | 0,7 |
| Բելգիա | 7,3 | 0,9 | 10,3 | 1,1 | 60,2 | 3,5 | 122,2 | 3,9 | 125,5 | 3,6 | 98,3 | 2,9 |
| Շվեդիա | 21,1 | 2,9 | 8,2 | 0,8 | 14,7 | 0,8 | 28,4 | 0,9 | 39,2 | 1,1 | 34,0 | 1,0 |
| Շվեյցարիա | 8,1 | 1,1 | 28,4 | 2,9 | 65,9 | 3,8 | 139,1 | 4,4 | 168,3 | 4,9 | 189,9 | 5,7 |
| Ճապոնիա | 5,8 | 0,8 | 4,6 | 0,5 | 6,8 | 0,4 | 19,0 | 0,6 | 15,0 | 0,4 | 27,3 | 0,8 |
| Սոցիալիստական երկրները | 53,2 | 7,2 | 191,9 | 19,8 | 200,6 | 11,6 | 290,1 | 9,3 | 267,1 | 7,8 | 334,7 | 10,1 |
| Չեխոսլովակիա | 28,3 | 3,8 | 54,4 | 5,6 | 64,6 | 3,7 | 91,1 | 2,9 | 82,7 | 2,4 | 87,1 | 2,6 |
| Հունգարիա | 10,6 | 1,5 | 13,7 | 1,4 | 35,1 | 2,0 | 34,7 | 1,1 | 35,2 | 1,0 | 24,4 | 0,7 |
| Լեհաստան | 6,8 | 0,9 | 31,0 | 3,2 | 9,6 | 0,5 | 35,2 | 1,1 | 41,8 | 1,2 | 65,7 | 2,0 |
| ԳԴՀ | 0,0 | 0,0 | 54,8 | 5,6 | 29,6 | 1,7 | 42,4 | 1,3 | 11,7 | 0,3 | 51,2 | 1,5 |
| ՍՍՀՄ | 1,2 | 0,1 | 15,4 | 1,6 | 25,9 | 1,5 | 40,2 | 1,3 | 49,2 | 1,4 | 63,8 | 2,0 |
| Ռումինիա | 0,9 | 0,1 | 4,6 | 0,5 | 6,5 | 0,4 | 16,8 | 0,5 | 12,4 | 0,3 | 7,3 | 0,2 |
| Բուլղարիա | 2,7 | 0,4 | 3,8 | 0,4 | 8,8 | 0,5 | 8,9 | 0,3 | 12,4 | 0,3 | 19,0 | 0,6 |
| Հարավսլավիա | 2,7 | 0,4 | 14,2 | 1,5 | 20,5 | 1,2 | 20,8 | 0,6 | 21,7 | 0,6 | 16,2 | 0,5 |



## Ներմուծումն ըստ երկրների

| Երկրները | 1950 թվական միլիոն թուր-քական լիրա | 1950 թվական % | 1957 թվական միլիոն թուր-քական լիրա | 1957 թվական % | 1960 թվական միլիոն թուր-քական լիրա | 1960 թվական % | 1961 թվական միլիոն թուր-քական լիրա | 1961 թվական % | 1962 թվական միլիոն թուր-քական լիրա | 1962 թվական % | 1963 թվական միլիոն թուր-քական լիրա | 1963 թվական % |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը | 799,8 | 100,0 | 1111,9 | 100,0 | 2213,7 | 100,0 | 4585,1 | 100,0 | 5599,8 | 100,0 | 6216,1 | 100,0 |
| Այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| ԱՄՆ | 196,2 | 24,5 | 341,0 | 30,7 | 545,5 | 24,6 | 1260,8 | 27,5 | 1631,1 | 29,1 | 1904,6 | 30,6 |
| ԳՖՀ | 140,6 | 17,6 | 151,2 | 13,6 | 449,5 | 20,3 | 365,8 | 7,9 | 957,4 | 17,1 | 939,9 | 15,1 |
| Անգլիա | 83,4 | 10,4 | 85,7 | 7,7 | 254,0 | 11,5 | 605,3 | 13,2 | 630,9 | 11,2 | 693,7 | 11,2 |
| Իտալիա | 37,6 | 4,7 | 102,4 | 9,2 | 142,1 | 6,4 | 385,9 | 8,4 | 300,6 | 5,3 | 315,1 | 5,1 |
| Ֆրանսիա | 40,0 | 5,0 | 35,7 | 3,2 | 83,1 | 3,7 | 159,3 | 3,5 | 259,2 | 4,6 | 308,3 | 4,9 |
| Հոլանդիա | 23,0 | 2,9 | 13,6 | 1,2 | 55,8 | 2,5 | 108,8 | 2,4 | 108,1 | 1,9 | 120,4 | 1,9 |
| Իսրայել | 0,3 | 0,0 | 26,9 | 2,4 | 44,2 | 2,1 | 74,6 | 1,6 | 79,0 | 1,4 | 79,3 | 1,3 |
| Ավստրիա | 18,4 | 2,3 | 11,6 | 1,0 | 42,5 | 1,9 | 71,3 | 1,5 | 95,4 | 1,7 | 73,8 | 1,2 |
| Բելգիա | 21,1 | 2,6 | 10,9 | 0,9 | 40,4 | 1,9 | 72,0 | 1,5 | 67,5 | 1,2 | 88,6 | 1,4 |
| Շվեդիա | 15,2 | 1,9 | 12,9 | 1,1 | 36,0 | 1,6 | 59,9 | 1,3 | 83,3 | 1,5 | 102,2 | 1,6 |
| Շվեյցարիա | 11,1 | 1,4 | 11,5 | 1,0 | 30,2 | 1,4 | 67,3 | 1,4 | 64,0 | 1,1 | 76,8 | 1,2 |
| Ճապոնիա | 0,0 | 0,0 | 3,9 | 0,3 | 24,7 | 1,1 | 118,5 | 2,6 | 150,6 | 2,7 | 144,2 | 2,3 |
| Սոցիալիստական երկրները | 63,8 | 7,9 | 188,4 | 16,7 | 256,8 | 11,6 | 388,3 | 8,3 | 377,8 | 5,7 | 491,2 | 7,9 |
| Չեխոսլովակիա | 37,4 | 4,7 | 55,3 | 4,9 | 55,7 | 2,5 | 104,9 | 2,3 | 105,5 | 1,9 | 127,0 | 2,0 |
| Հունգարիա | 16,0 | 2,0 | 16,3 | 1,5 | 47,0 | 2,1 | 38,9 | 0,8 | 40,5 | 0,7 | 66,6 | 1,1 |
| Լեհաստան | 6,9 | 0,9 | 21,5 | 1,9 | 45,3 | 2,0 | 50,6 | 1,1 | 66,8 | 1,2 | 71,6 | 1,2 |
| ԳԴՀ | — | — | 41,6 | 3,7 | 34,5 | 1,6 | 55,8 | 1,2 | 38,5 | 0,7 | 51,3 | 0,8 |
| ՍՍՀՄ | — | — | 31,4 | 2,8 | 28,2 | 1,3 | 75,5 | 1,6 | 57,9 | 1,0 | 79,9 | 1,3 |
| Ռումինիա | 0,4 | 0,0 | 4,1 | 0,3 | 11,3 | 0,5 | 13,3 | 0,3 | 6,8 | 0,1 | 23,2 | 0,4 |
| Բուլղարիա | 2,1 | 0,2 | 4,4 | 0,4 | 8,2 | 0,4 | 16,1 | 0,3 | 22,4 | 0,4 | 31,8 | 0,5 |
| Հարավսլավիա | 1,0 | 0,1 | 13,8 | 1,2 | 26,6 | 1,2 | 33,2 | 0,7 | 39,4 | 0,7 | 39,7 | 0,6 |

## Թուրքական հանրապետության կենտրոնական բանկի բալանսը, միլիոն լիրա

| Պասիվները | 1960 թվական | 1961 թվական | 1962 թվական |
|---|---|---|---|
| Հիմնական կապիտալը | 15 | 15 | 15 |
| Ռեզերվային կապիտալը | 72 | 96 | 110 |
| Թղթադրամային էմիսիա | 4252 | 4783 | 5122 |
| Ավանդները | 1719 | 2067 | 2285 |
| Ոսկու վարկավորողները | 160 | 137 | 128 |
| Վալյուտայի վարկավորողները | 1954 | 1136 | 1251 |
| Այլ | 929 | 662 | 606 |
| Գումարը | 9101 | 8896 | 9517 |

| Ակտիվները | 1960 թվական | 1961 թվական | 1962 թվական |
|---|---|---|---|
| Ոսկի | 1204 | 1255 | 1259 |
| Դեբիտորներ վալյուտայի գծով | 1065 | 742 | 703 |
| Մուրհակներ՝ | | | |
| գանձատան բոներ | 2439 | 265 | 1005 |
| առևտրական և գյուղատնտեսական մուրհակներ | 2338 | 793 | 316 |
| Փոխատվություններ | 42 | 38 | 33 |
| Ավանսներ | 1284 | 132 | 473 |
| Այլ | 869 | 5573 | 5718 |
| Գումարը | 9241 | 8728 | 9507 |



## Լուսավորության սիստեմի զարգացումը

| Ուսումնական տարին | Ուսումնական հաստատությունները | Սովորողները | | | Դասատուները | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | արական սեռ | իգական սեռ | ընդամենը | արական սեռ | իգական սեռ | ընդամենը |
| **Տարրական դպրոցներ** | | | | | | | |
| 1923—24 | 4894 | 273107 | 62954 | 336061 | 9021 | 1217 | 10238 |
| 1945—46 | 14010 | 865860 | 491880 | 1357740 | 19726 | 7581 | 27317 |
| 1953—54 | 17957 | 1119769 | 681855 | 1801624 | 27310 | 10491 | 37801 |
| 1960—61 | 24398 | 1800026 | 1066475 | 2866501 | 48494 | 14032 | 62526 |
| 1962—63 | 26307 | 2104024 | 1322958 | 3426982 | 56002 | 19682 | 75684 |
| **Միջնակարգ դպրոցներ** | | | | | | | |
| 1923—24 | 72 | — | — | 5905 | — | — | 796 |
| 1945—46 | 252 | 46074 | 19534 | 65608 | 2145 | 1786 | 3931 |
| 1953—54 | 504 | 71016 | 24983 | 95999 | 2771 | 2372 | 5143 |
| 1960—61 | 744 | 220490 | 70780 | 291270 | 8130 | 3950 | 12080 |
| 1962—63 | 813 | 269411 | 85495 | 354906 | 10984 | 4496 | 15480 |
| **Լիցեյներ** | | | | | | | |
| 1923—24 | 23 | — | — | 1241 | — | — | 513 |
| 1945—46 | 83 | 20411 | 5104 | 25515 | 1136 | 681 | 1817 |
| 1953—54 | 103 | 25792 | 5986 | 32778 | 1163 | 998 | 2161 |

### Թուրքիայում ներկայացուցչություն ունեցող միջազգային կազմակերպություններ

Միավորված ազգերի կազմակերպության՝ լուսավորության, գիտության և կուլտուրայի հարցերով (ՅՈՒՆԵՍԿՕ),
Երեխաների օգնության ֆոնդ (ՄԱԿ),
ՄԱԿ-ի գլխավոր կոմիսարիատ փախստականների գործերով,
ՄԱԿ-ին կից տեխնիկական օգնության խորհուրդ և հատուկ ֆոնդ Թուրքիայի գծով,
Եկեղեցիների միջազգային խորհուրդ: Փախստականների օգնության դեպարտամենտ,
Առողջապահության համաշխարհային կազմակերպություն,
ՄԱԿ-ի սննդամթերքի և գյուղատնտեսության կազմակերպություն,
Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն,
Աշխատանքի միջազգային բյուրո: Մերձավոր և Միջին արևելքի բաժին,
Թանգարանների միջազգային խորհուրդ,
Ուսանողների՝ տեխնիկական ստաժյորների փոխանակության միջազգային խորհուրդ,
Տնտեսական և առևտրական գիտությունների գծով ուսանողների միջազգային ասոցիացիա,
Միջազգային թատերական ինստիտուտ,

### Ամերիկյան կազմակերպությունները Թուրքիայում

«Խաղաղության կորպուս»,
Օգնության ամերիկյան կաթոլիկական կազմակերպություն,
Ատլանտյան պայմանագրի ասոցիացիա,
Ֆորդի ֆոնդը,
Թուրք-ամերիկյան համաձայնագրով կուլտուրական փոխանակությունների գծով,
Միջազգային զարգացման գործակալություն,

Отделение Общественных
Библиотека
Наук ... Арм. ССР

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան . . . 3
Երկիրը և բնակչությունը . . . 5
Ֆիզիկա-աշխարհագրական ակնարկ . . . 5
Բնակչությունը . . . 28
Թուրքերեն լեզուն . . . 39
Կրոնը . . . 43
Տնտեսությունը . . . 55
Ընդհանուր բնութագիր . . . 55
Ագրարային հարցը և գյուղատնտեսությունը . . . 69
Արդյունաբերությունը . . . 93
Տրանսպորտ և կապ . . . 120
Ներքին առևտուրը . . . 133
Արտաքին առևտուրը . . . 148
Ֆինանսները . . . 169
Նորագույն պատմության ակնարկ . . . 193
Պետական կարգը և հասարակական կազմակերպությունները . . . 261
Պետական կարգը . . . 261
Դատական սիստեմը . . . 278
Զինված ուժերը . . . 283
Քաղաքական կուսակցությունները . . . 292
Բանվոր դասակարգը և արհմիությունները . . . 301
Հասարակական կազմակերպությունները . . .
Կուլտուրան . . . 327
Լուսավորությունը . . . 327
Գրադարանները . . . 333
Արխիվները . . . 342
Թանգարանները . . . 343
Գրական կազմակերպությունները և ընկերությունները . . . 345
Մամուլը և ռադիոն . . . 348
Գրականությունը . . . 355
Թատրոնը . . . 383
Կինոն . . . 392
Երաժշտությունը . . . 395
Առողջապահությունը . . . 400
Սպորտ . . . 403
Օրացույցներ . . . 410
Հավելվածներ . . . 417

Ժամանակակից Թուրքիան

Թարգմանիչներ՝ Ա. Ս. ԼՅՈՒԼԻԿՅԱՆ էջ 1—191, 412—430
Վ. Հ. ԳՈՂՈՍՅԱՆ 192—411

Խմբագիր՝ Ս. Գ. Մարգարյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Ա. Խուդիկյան
Նկարիչ՝ Հ. Հ. Մանասերյան
Տեխ. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Հ. Վ. Վարդանյան

Հանձնված է արտադրության 4/XI—1966 թ., ստորագրված է տպագրության 20/VI—1967 թ.: Թուղթ՝ տպագրական № 2, $84 \times 108^1/_{32}$, հրատ. 20,0 մամ.+1 ներդիր, տպագր. 27,0 մամ.=22,14 պայմ. մամ.: Պատվեր 1986, տիրաժ 15 000:
Գինը՝ 90 կոպ.:
«Հայաստան» Հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:
ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր մամուլի կոմիտեի պոլիգրաֆ արդյունաբերության գլխավոր վարչության № 1 տպարան, Երևան, Ալավերդյան № 65:

32(56)
Ә-21